Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1784

9(47)925)
Ч-31

9(47·925)
Ա-31

ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՀԱՏՈՐ Բ·

24

9(47.925)
Ա-31


ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՅՕՐԻՆԵԱՑ

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

ՀԱՏՈՐ Բ.



ՎԵՆԵՏԻԿ – Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ


1901

ՅԻՇԱՏԱԿ ՅՈՒԲԵԼԻՆԻ
ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
8 ՍԵՊՏ. 1701–1901 ՍԵՊՏ. 8

55877-ա հ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясн...
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

1092-69



ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

Մ

ՅՈՎՀԱՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ ԵՒ ԹԱԼԻՓԱՅՆ

(ՅՈՎՀ. ԿԱՓ. ԻԲ.)

ԱՋՈՐԴԻ զաթոռն սուրբ մեծ իմաստասէրն Յովհաննէս. որ հմուտ և տեղեակ գոլով բոլոր քերթողական չափարտածաց, մասանց բանի և մասնակացնաց, այլ և վարժից սեռից, և որք ընդդոյացութեամբն են, սեռական տեսակարարողութիւնք, մինչ ց՝անհատ վայրը, և պարբերութեանցն եւս հանգամանացն և պատահմանց, անձատից և անանձատից ոչ անտեղեակ[1]: Դարձեալ և կրթական վարժից

1. Յովհաննուս իմաստասիրի փիլիսոփայութեան վերայ մասանց գիտութիւնները բացատրէ՝ իմաստակ սեամ:

թէոնականաց, որ զարուեստին ծառայ պատուա առոգանապէս ներադրէ յարուեստասէրն, յաւէտ իմն հմտագունագրով զրոյմեալ, տայ եկեղեցւոյ Քրիստոսի զբովանդակ կարգաւորութիւնս պաշտաման ժամուց. զեղեցիկ իմն յօրինուածով ճախացուցեալ, և բացայայտեալ եւս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնն ի միխիթարութիւն կղերց եկեղեցւոյ: Այլ և հառս եւս ինքնախօսս բանաստեղծս յարդարեալ զղջացուցիչս չար գործոց և յորդորականս ի պէտս ապաշխարողական սակի: Այս ամենայն առաքինի քաջողջութեամբ զանձն տուեալ՝ աշխատասիրաբար կրթական չանիւ զինքն զիներ յերկս հոգեւորս, պահօք և աղօթիւք և ամենագիշեր տքնութեամբ. և ի ներքոյ ոչ յօդեաց ասր, այլ յայծեաց՝ ցիսխս դժոխըմբերս զգեստաւորէր. իսկ զարտաքոյսն[1] ի պատուական երանգէ նիւթիւ զգեստաւորեալ պճնազարդէր, և ոսկի մանր խարտիւ[2] ազացեալ և իւզովք անուշիւք յոյն ընդխառնեալ, փչէր ընդ ծալկեալ ալեօք մօրուսն, որ ինանէր մինչեւ ցգրապանս զգեստու նորա[3]: Եւ այնպէս ապա առեան կազմեալ, զի տեսողացն բարեխորհաց՝ բարի պատճառք խրախուսեան լիցի, և չարացն խակաց՝ ընդոստուցանող պակուցուածն՝ ի չարէն ի բարի:...

Եւ վասն զի տեսեալ էր զայրն Աստուծոյ ոստիկան ումն Հայոց՝ Վչիր անուն, և եղեւ գնալ նմա առ ամիրապետն, և պատմէր նմա զվայելչութիւնն Յովհաննու: Իսկ նորա զնա տեսանել ըղձացեալ, վաղվաղակի զմի ի ծառայից իւրոց առաքէր, առ ինքն զայրն Աստուծոյ ածել: Եւ իբրեւ ածաւ, բազում պատուով յարքունական քաղաքն, պատգամ առ նա ամիրապետն յղէր, զի ըստ սովորականին

1. Վրայի կամ գրսի հագուստն:
2. Խարտոց գործիքով մանրելով իբր և ալալով գոսկին:
3. Սաղմոսի մէջ Ահարոնի համար ըսուածը կրկնէ:

զարդու զինքն զգեստաւորեալ՝ այնպէս զնա տեսցէ: Իսկ նորա զաւարտահասակ դիտակն իւր եւս առաւել փայլուն և պաղպաջուն զգեստուք պճնաւորեալ, և զազէրեկ ծաղկեալ[1] մօրուսն՝ ոսկեփունջ կազմեալ, և զոսկիանկար գաւազանն՝ որ ի փայտից ոսպնիպոից՝ ի ձեռն առեալ, այնպէս ապա գուներան[2] այրն և թիկնաւէտ՝ առ ամիրապետն մտանէր: Զոր տեսեալ՝ հիացեալ զարմացեալ ընդ գեղեցկութիւն նորա բարեհամբոյր հասակին և չքեղաշուք դիտակին[3]. ապա եղեւ աթոռ նստել նմա: Եւ սկսաւ հարցանել զնա ամիրապետն. Ընդէ՞ր, ասէ, այդպէս պճնապատեայ լինիս. վասնզի Քրիստոսն ձեր զպարկեշտ և զչնչին զգեստ պատուեաց, և զնոյն արարին աշակերտաք նորա: Իսկ նա պատասխանեալ ասէ. Թէպէտ և Քրիստոսի Աստուծոյ մերոյ առ ի մէնջ առեալ մարմնոյն զաստուածական փառն ծածկեալ լինէր, իբրեւ վարագուրաւ, սակայն աստուածային զօրութեան քանչելիք նշանացն ոչ ծածկեցաւ, այլ յամենեսին հեղաւ. զնոյն չնորհ նշանաց և արուեստից՝ տալով ի ձեռս իւրոց աշակերտացն, որ բաւական բերէր զմիտս մարդկան զարթուցանել յերկիւղն Աստուծոյ, և ոչինչ պիտոյացան զգեստուց ահարկողաց: Իսկ արդ՝ վասնզի փակեալ է ի մէնջ բազում նշանաց նոցա չնորհ, վասն այնորիկ ահարկու իմն զգեստուք հնարիմք զպարզամիտ խակութիւն մարդկան՝ ընդոստուցանել յերկիւղն Աստուծոյ: Զայս ապա և ի մարմնաւոր թագաւորսդ ի ձեզ է տեսանել, ծիրանեփառ և ոսկեճամուկ զգեստուք և գեղեցիկ զարդուք և զինուք՝ առ ի յահարկութիւն բազմաց բերել. զի թէ խարազնազգեաց զձեզ ի մարդկանէ ոք տեսանիցէ և գծուծս

1. Դեռ քիչ մի սեւ մազով խառնուած ճերմակ մօրուք:
2. Գեղեցիկ գունով կամ երեսով:
3. Դէմք, կերպարանք, նայուածք:

և խոչոբս, ոչ ոք պակուցեալ զարհուրեացի ի փա-
ռաց ձերոց՝ որ ոչն երեւի: Բայց եթէ զրովանդակն
զիմ գտանել խուզես, հրամայեսցէ սէրութիւնդ
քո արտաքս սակաւիկ մի գնալ արանցդ: Իսկ ապա
ի միայնանալն՝ մերկացաւ առ ի զգեստէն ար-
տաքնոյ, ցուցանելով նմա զցփսիան այծեայս, ա-
սելով. Մերկութեան անդամոցս այս է զգեստ, իսկ
արտաքոյքդ՝ միայն են ի տեսիլ արտաքնոց: Եւ
իրրեւ զձեռն ի ցփսիան արկեալ լինէր ամիրա-
պետն, դժգոհեալ, խոժոռեալ՝ քաշմեալով ասէ.
Չիաճդ արդեօք կարէ մարմին մարդոյ տեւել ժուժ-
կալել այսպիսի դժոխըմբերելի փըրձի, եթէ ոչ
յԱստուծոյ տուեալ լինի նմա համբերութիւն: Եւ
ապա բազմահարկի պատուով զնա մեծարեալ, և
եօթն անգամ զնա պճնաւորեալ զեղեցիկ իմն ար-
քունական զգեստուք, և զանձս եւս ոսկւոյ և ար-
ծաթոյ նմա պարգեւեալ, յուզարկէ յիւրական աշ-
խարհն:

ՄԱ.

ԵՂԵՐԱԿԱՆ ՎԱԽՃԱՆ
ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

(ՍՏԵՓ. ՕՐՊԵԼԵԱՆ՝ Ա. Լ Ա.)

Էր յայնմ ժամանակի վախճանեալ եպիսկոպոսն
Սիւնեաց Ցովհաննէս. և էր իշխան Սիւնեաց՝ Բաբգէն
և Ֆռոյդ. որք եկեալ առ կաթողիկոսն Դաւիթ՝
խնդրեն ի նմանէ զմեծ խմաստասէրն, զերանելին
Ստեփաննոս, որ էր սուրբ հրեղէն ի ձեռին Աս-
ծառաւքը Հոգւոյն: Եւ ձեռնադրեալ կաթողիկոսին
զնա յաթոռ մետրապօլտութեան Սիւնեաց, և զնան
մեծի երախտեացն առաւել պատուէ զնա և կացու-
ցանէ գլուխ եպիսկոպոսաց, և զաթոռն Սիւնեաց՝

գլուխ ամենայն աթոռոց: Այեն ոմանք, եթէ Սիւ-
նեացն յեօթնեերորդ դասուն էր եպիսկոպոսաց Հա-
յոց, այժմ յերրորդ դասուն կարգեցին. բայց մի՛
հաւանիր[1]. զի Աղուանիցն միայն էր ի վեր քան
զՍիւնեաց, վասն արքեպիսկոպոսութեանն. իսկ
Սիւնեացն վասն մետրապօլտութեան դեր ի վերոյ
էր քան զամենայն եպիսկոպոսքն Հայոց. զի այլ
ոչ ոք ունէր զմետրապօլտութեան պատիւն. և ո՛ր-
քան պատրիարքն քան զարքեպիսկոպոսն է դեր ի
վերոյ, և արքեպիսկոպոսն՝ քան զմետրապօլիտն,
այնքան մետրապօլիտն քան զեպիսկոպոսն, զի նա
ձեռնադրէ զեպիսկոպոսն:

Այհա առեալ զմետրապօլտութիւնն՝ Ստեփան-
նոսի, գնաց ի վիճակն. և աստուածային օրինօք
խրատէր և ուսուցանէր. որպէս սուրբ Հաւանէր
պախտացեալն. որպէս բժիշկ իմաստուն բժշկէր
զվիրաւորսն. որպէս աղ ընտիր համեմէր զանհա-
մեալսն. որպէս արեգակն պայծառ լուսաւորէր ըզ-
խաւարեալսն. տղայոցն ի Քրիստոս կաթն չամբե-
ցուցանէր որպէս ծնող. կատարելոցն՝ զկատարեալ
կերակուրն մատուցանէր, որպէս անառես հաւա-
տարիմ: Մեկնեաց և զբեանս բազումս, զԱբրահա-
քըն[2], զՑոբն, զԵզեկիէլն, և այլ բազումս. որոյ
բանքն նշանաւոր ի մէջ այլոց մեկնըչացն՝ փայլին
որպէս չահ պայծառ: Այրար և Ճառս բազումս.
բաժանեաց և զութ ձայնսն[3] և կարգեաց. չարեաց
զՑարուրեան օրինուրիւնսն. երգեաց և կցուրդս[4]

1. Քան ըստ այլ աթոռոյդ համար՝ շատ հաւա-
նելի չէ, ա՛վ Պատմիչ:

2. Աստուածաշունչ գրոց առաջինն, Ծննդոց գիրքն:
Քիչ քան գտաւ հիմայ իր գրածներէն:

3. Եղանակաց եկեղեցական երգոց, Շարականաց,
որք իրմէ առաջ այլ երգուէին:

4. Կարճ երգեր նման շարականաց, իբրեւ առանց
կցուրդելու համար:

քաղցրահամս, յարմարեաց և զՄտողոգին[1] ՚ի նոսա՝ եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր, և զՊահոցն և որ յաղուհացան երգի. մեկնեաց և զխորհուրդ Գիւչերային պաշտամանն։

Էր սորա և քոյր մի՝ ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան, և առանձնացեալ ի ձորակին Գառնւոյ յայրի միոջ, և անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին. որոյ անուն Ամաւկդուխտ։ Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին. որ և ի ներքոյ վարագուրի նստեալ՝ ուսուցանէր զերաժուհս։ Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցրեղացնակս, յորոց մին Սրբուհի Մարիամ[2], որ իւրով անուամբն է յօրինեալ։ Եւ անդէն ի նմին վախճանեալ գնի ի հանգըստի, յորմէ բազում բժշկութիւնք լինին։

Իսկ երանելին Ստեփաննոս կացեալ յեպիսկոպոսութեան ամ մի, զոր ումանք ութ ամ ասեն, չքէր յամարայնի ի մէջ երկոտասան գաւառաց մեծաւիճակ գաւազանի իւրոյ. և քարոզէր զբանն ճշմարտութեան։ Որ և հանդիպեալ սորա սակս հոգեւոր հարկին՝ ի գաւառս բարկիից ի Զորն Եղեգեաց[3], յաւանն Մոզան, յորում բնակեալ էր կին մի սեղեխ[4], արբեալ յիմարութեան ախտիւն. զոր յառաջ քան զայն երիցս անգամ զգուշացուցեալ էր զնա, ըստ Տեառն հրամանի. և ոչ էր զղջացեալ։

1. Մտողոգի յունական ստոխոլոգիա բառէն, ուն ուն սաղմոսի երգեր են։ Վանական վարդապետ մեր ուզեր է յայն բառը սուղաբանել հայերէն բառից նմանութեամբ՝ ստոյգ ոդի։

2. Մինչեւ « Սրբուհի Մարիամ Սափոր ոսկի », ուն մի ծանօթ շարականն. որոյ վայրէին նախակարգիլ կամ յետակարգիլ սուն եւս ուն, ըստ թուոյ սուից Ամաւկդուխտ անուանն։

3. Որ է Եղեգնաձոր, լաւ եւս հինն Վայոց Ձոր։

4. Հրէշ կին մի, ոչ այնքան կոյր սերուիլ, որքան կրօս սրսուիլ. բարեբաղդաբար՝ թէ և ուշ, բայց նուաճեր է զայն ապաշխարութեամբ։

ցեալ։ Վասն որոյ այն անգամ սաստիկ ցասուցեալ սրբոյն՝ և վճիռ հատեալ մեծ պատուհասի՝ եկանէ ի գեղջէն։ Եւ վասն տօթաժամուն գնայ յայն քաղցրահամ աղբերն՝ զոր Աւազակին կոչէին, զոր վանալ ի նմա. և հրամայէ հարուլ զխորանն իւր. և ինքն ի վերայ ուռոյ միոյ[1] գնէ զմահիճան հանգըստեան։ Եւ ելեալ առանձինն աղօթէ ժամս յոլով. և ննջէ ի վերայ նորա։

Իսկ կինն հերատուկ չարժեալ ի կատաղի բոցոյ ցանկութեանն՝ առնու ընդ իւր զհոմանին իւր և գայ սպանանել զսուրբն, զի համարձակ լիցին ի գործն։ Եւ մերձեալ ի ծառն՝ հանէ ի վեր զայրն, եդեալ զսուրն ի ձեռն՝ զի սպանցէ զսուրբն։ Ելեալ առանն՝ տեսանէր զսուրբն ննջեալ, և իրր զբոց ցոլանայր չունչն ի վեր և ճախր առեալ դառնայր անդրէն. և հրեշտակ մի կացեալ ի մնարան՝ հովանի ունէր նմա թեւօքն։ Տեսեալ զայն առանն՝ կարկեալ թուլանայր. և ամենայն յօդուածքն խաղայր, չարժէր, դողայր մեծաւ սոսկմամբ. և այնչափ ուշաբերէր՝ մինչ անդրէն իջանէր ի ծառոյն և պատմէր կնոջն։ Այգ կրկին յորդորէր կինն և սադրէր քաղցր բանիւք պռանկութեան, և քաջալերեալ անդրէն յուզարկէր։ Եւ նորա հրաշափառագոյն իմն տեսեալ տեսիլ քան զառաջինն՝ սաստկապէս եւս թուլանայր. և անդգայ մարմնով իրր մեռեալ անկանէր ի ծառոյն։ Այգ կինն մինչ եւս յանհնարին պատուհաս ըմբռնեալ զայրն, փոխանակ զըղճման՝ առաւել եւս զչարեալ, և սրեալ ի բանսարկուէն, առեալ զսուրն՝ հոլանեալ[2] ելանէր ի ծառն. և հարեալ զսուրն ի փոզն սրբոյն, հեզոյր զարիւնն ամբիծ ի վերայ փայտեղէն մահճին, որպէս գՏեառն իւրոյ՝ ի վերայ փայտեղէն գործարանին մահու, սակս սաստիկ նախանձուն սատուածային

1. Ուռի կամ ուռենի ծառ, Saule. չատ մեծ ծառ պէտք է եղած ըլլայ, կամ ոչ մեր ճանչցած տեսակին։

2. Գլեսաները ամիսփիլով, սոթիուելով։

օրինացն, որպէս զՀեղիսան և զՅովհաննէսն. յորոց մին քառասուն օր փախստական լինէր յԵդեսէէ կնոջէն Աբգարու, և միւսն՝ գլխատեալ ի դասերէ Հերովդիադայ:

Այսպա յառաւօտուն իմացեալ պաշտօնէիցն՝ բազում ոգւովք բարձին զնչխարս սրբոյն, տանէին ի սուրբ մենաստանն ի լեառնն կոչեցեալ Միռն, որ պայծառանայր ճգնաւոր արամբք յայնմ ժամանակի՝ քան զՄինայն և զԿիւթիայն[1] յԵգիպտոս: Զոր լուեալ Արկազան գեօղն[2] տեսոմբն իւրեանց ելին ընդ առաջ, և հաւանեցուցին զպատասուրսն հանգուցանել ի սենեակն՝ որ յանուն Սրբոյն Քրիստափորի անյաղթ զօրավարին չինեալ էր. զոր տեսեալ անդէն հանգուցին ի սենեկին: Իսկ երանեալ ճգնաւորն Աստուծոյ Նուռ՝ որ էր բազում ամաւք բնակեալ ի սուրբ լեառն Միռն, և հրեշտակացեալ ամենայն վարուք, տեսանէր ի տեսլեան յայնմ առաւօտու՝ զերկինս բացեալ և զհոյլս հրեշտակաց՝ զի ելանէին գունդ գունդ ընդ առաջ Սրբոյն Սահմանեսի. և փարեալ զմաքուր և արիւնաներկ ոգւով նորա՝ գոչէին ձեծաձայն. «Ծառայ բարի և հաւատարիմ, եկ, մո՛ւտ յուրախութիւն Տեառն քո». և այնպէս ձեծամեծ գովաբանութեամբ տանեալ հաստացանէին առաջի ահեղ աթոռոյ Աստուածութեանն, յորոյ վերայ մարմնաւոր տեսլեամբ նստէր Քրիստոս՝ որդին Աստուածոյ: Այսպա երկրպագեալ Սրբոյն, և սպիտակ նախորսամբն զոր ունէր՝ ծրարեալ զգոգն՝ լի արեամբ, զոր մատուցեալ առաջի Տեառն՝ ասէր. «Քո է վրէժխընդրութիւն և արդար իրաւունք». և այնպէս համբուրեալ առաքելոցն և հայրապետացն, տարեալ հանգուցին ի կայանս իւրեանց՝ մինչեւ յօրն հատուցման[1]: Տեսեալ զայն սրբոյն Նուռ և իմացեալ զվճռեան, ժողովեալ զմիաձայնցն հոյլս՝ դիմեաց ի լեռնէն առ Սուրբն, և մեծամեծ ոգւովք և կանոնալիր ազաղակաւ պատմէր զտեսիլն և զգալ բարկութեանն Աստուծոյ ի վերայ գաւառին, և հայցէր զգուչանալ և հնարել ազօթիւք զհաշտութիւնն Աստուծոյ:

Այսպա յանկարծակի եհաս ի վերուստ պատուհաս Տեառն. և կալաւ խաւար չջափելի զգաւառն այնոյն՝ զաւուրս քառասուն. և շարժումն և դղրդումն սաստիկ. զի եռայր երկիրն ահեղ գոլացմամբ յանդընդոց, և բարձրանայր մինչեւ ի վեր. և անդէն իբր զալիս ծովու փլուզանիւր. լերինք տապալէին, վէմք ի հիմանց քակտէին, տունք և ապարանք գեղեցիկք՝ լինէին գերեզմանք բնակչաց. աղբիւրք խցէին, գետք կորնչէին. և ամենայն տեղի երերէր տատանմամբ. և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի ներքուստ յանդընդոց, և ի վերուստ յօդոց, «վա՜յ ձեր, վա՜յ ձեր». և կէնդանեացն ընկղմեցան ոգիք իբրեւ 10,000, զորս գիտէին և ի թիւ արկին, և զանձանօթիցն ոչ ոք գիտէր զհամարն. յաղագս որոյ կոչեցաւ անուն գաւառին վայոց ձոր[2]:

Իսկ յետ քառասուն աւուր պատուհասին՝ դադարեցաւ բարկութիւնն Աստուծոյ ի վերուստ. և ժողովեալ մնացորդք գաւառին՝ կոչեն զկաթողիկոսն, և առնեն ժողով վանականաց. և բազում աւուրս ցայգապաշտօն կատարեալ՝ փոխեն զնչխարս սրբոյն ի միաբանակեցաց վանսն Թաւնահատի վանից[3], որք էին մշտապաշտօնք, հեռացեալք յամե-

1. Պէտք էր գրել և կարդալ Սկիտէ:
2. Ծանօթ է և հիմայ գիւղս՝ Արկազ կամ Էրգազ կաշմամբ և Ս. Խաչ եկեղեցեաւն:

1. Արդէն հատուցումն եղած էր ըստ արժանաւորութեան նորա, և Հարկ չկար անծանօթի կայանից:
2. Սակայն ի Ե դարու եւս ծանօթ էր այդ անուանդ. ի վայոց ձորոյ վկայուած է Ս. Յովսէփ՝ ընտրեալ կաթողիկոսն նահատակեալ ընդ Վեռնդեանց:
3. Ճգնաւորք տեղւոյն՝ տաք կերակուր կամ թան

նայն փափուկ կերակրոց, վասն որոյ և Թանահատք կոչեցան: Եւ չինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի, զոր յետոյ յեօթն հարիւր քսան և ութ թուականին[1] չինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի՝ գմբեթայարկ գեղեցիկ յօրինուածովք. և եդին զտապան սրբոյն ի հիմն նորա:

Եւ էր կատարումն սրբոյն Ստեփաննոսի ի թուականութեանն Հայոց ՃՀԴ (735), ի հրոտից ի 15 և յուլիսի 21, յաւուր յիշատակի Սրբուհւոյն Մարգարտայ և Միքայելի Ագռաւաձիի:

Իսկ կինն տիրասպան անագան ուրեմն եկեալ ի սգաւորութիւն[2], մերկացեալ զհանդերձն և առեալ քարինս՝ ծեծէր զկուրծսն. և այնքան բաղխէր՝ զի իջանէր վտակ արեանց. և մեծ ողբովք և դառն ազազակաւ ճչէր և խայտառակէր զչար գործսն իւր: Եւ եկեալ հանդէպ վանացն յարեւմուտս կոյս, յայնկոյս ձորակին, փորեալ գետին և թաղեալ զանձն մինչ յոտիսն, զամառն և զձմեռն տապալեզ և ցրտահար լինելով, վայէր և ողբայր զցայգ և զգերեկ. և զմեզս իւր խոստովանէր: Յաղագս որոյ չարժեալ ի գութ Հայրապետին՝ խնդրէր ի Տեառնէ ողորմութիւն նմա: Եւ յաւուր միում ի ժամ պատարագին ելանէր գոչիւն ահեղ ի տապանէ սրբոյն. «Թողեալ լիցին քեզ մեզք քո, ո՛վ կին դու»: Եւ լուեալ ամենեցուն՝ փառս և գոհութիւն Աստուծոյ մեծի մարգասիրութեանն և անչիշաչար բարերարութեանն՝ մատուցանէին: Բայց կինն թէպէտ էառ զթողութիւնն, ոչ էլ ի տեղւոյն. այլ կացեալ ի նմին՝ վախճանեցաւ, և թաղեցաւ յապաշխարութեան գրին իւր. և կայ հանդէպ վանացն:

(ապուր) յաւելնուն Համար՝ թանէ կտրուած կոչուեր են: Տես Ախտկան, 124:

1. Պատմագ հեղինակին, Սա. Օրպելեանի ժամանակն է, 1279 տարին:

2. Թերևս գրուած էր ի զգաստութիւն:

ՄԲ

ՎԱՀԱՆ ԳՕՂԹՆԱՑԻ

(ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ)

Յայնմ վայրի ի ժողով անկելոցն[1] գտանէր մանուկ մի ի Գողթն գաւառէ, Վահան անուն նորա, որդի Թոսրովայ Գողթեան տեառն, սակաւամեայ իբրեւ չորից տարեաց. առաւելաչնորհ երեւեալ, հրամայեցաւ զնա յարքունուստ՝ ի մեր ի մեծ խորհրդոցս ճշմարտութենէ՝ ի սուտ թիւն դարձուցանել, ուրանալով զմեր ճշմարտութեանն զյոյսն: Եւ իբրեւ արարին զայն՝ կոչեցին զնա Վահապ: Եւ երթայր և խմաստանայր, և ամենայն խորհրդոց կըցացն վերագոյն գտանէր, և իւր հասակակցացն վարդապետ, և դիւանադպիր արքունի: Եւ ապա յետ փոխելոյ ժամանակին Աբդիմելքեայ և վըրթի որդւոյ նորա, և Սուխիմանի եղբօր նորա, ընտանի էր զրոյցս այս Տաճկաց, որ ի մեզ եղեւ սատութիւն:

Եւ իբրեւ նստաւ Ամաւ (717–20) ի գլխաւորութիւն Տաճկաց, արկ ի սիրտ նորա Աստուած յիշել զանիրաւութիւնն որ առ Հայս. հրաման տայր ժողովել զգերեալսն՝ մեծաւ պնդութեամբ. և ի ժողովելն՝ արձակեաց զամենեսեան: Եկին և Վահանն այն որ անուանեցաւ Վահապ. և նոցա ուսմանցն և օրինացն քաջ տեղեկացեալ էր, և խօսիւք քաջ և կորովի, և ծանուցանէր զիւր դժուարութիւնն[2]: Եւ դժուարին թուէին բանքն այն մեծին Ամաւայ, զի տեսանէր ոչ զոք նման նմա իմաստութեամբ. խնդրեաց վկայս, և չկամէր թէ ոք վըկայեսցէ զնմանէ. և որք ի Հայոց եկին վկայք՝ ոչ

1. ՅԱրաբացւոց գերի առած Հայ աղայոց մէջ:

2. Իր հայրենիքէն զրկուելն:

ընկալաւ: Այս պնդութիւն վասն պիտանութեան առնն եղեւ. բայց զիւր հրամանն հաստատուն պահէր ի բարոյական բնութեան իւր զոր ունէր, և ոչ փոփոխէր:

Ապա դեսպանս ձիով արձակէր առ քննող գրոցն ի Միջագետս, և (յետ) բազում խնդրոյ պնդութեանն, որ թէ Աստուծոյ տեսչութիւնն ոչ հեռի արգել լինէր[1]: Եւ անդ գտանէին արք տան և հինգ Տածիկք. որ ըստ ժամանակին քաջ տեղեակք էին և երանելի մանկանն ծանօթք. և զայս ամենայն զբոյցս առ Ոմառ հաստուցանէին՝ վկայութեամբ: Իսկ Ոմառ տեսեալ զժամանակն՝ ոչ կամեցաւ բանութեամբ առնել, այլ յողոք անկեալ ընդ պատանեկին՝ հեշտալի բանիւք. թէ, Մի՛ թողուր զմեզ, որդեակ. և եթէ պակասութիւն ինչ կարծես զքո կենացդ, երեւելի՝ թագաւորութեանս իմում առնեմ զքեզ, փառաւոր իշխանութեամբ և գանձիւք: Եւ այն որ աստուածային եռայր հոգւով, ոչ ինչ մարմնական ցանկութիւն խոցէր զնա, ի խորինս հայեւով. այլ իմաստանայր ի պատասխանին. եթէ, Հարց իմոց որ Պարսից իշխանութեան երթալոյ, և նիզակի և աղեղն վաստակք, յորով գանձիւք մեծացան քան զբազում ազատս որ յերկրին իմում էին[2]. արդ, եթէ ամենայն առ իս կրկնապատիկ գառնայր, իմ գերութիւնս որ ի ձեր քաջութեան էր, և սիրեցէք զիս, և այլ խոստանայք մեծութիւնս, սակայն և այժմ ոչ կարէ հաստնել տեղեաց: Արդ, որպէս քաղցրացոյց Աստուած զձեր

1. Շարաբանութիւնն մութ կամ խանդարած է. թուի ըսել, թէ որչափ այլ չանքով քննեցին գրքերը, չկարցան խափանել Աստուծոյ խնամքը:

2. Իմ նախնիքս, կ'ըսէ, Պարսից տէրութեան առեն անոնց ծառայութեամբ և քաջութեամբ՝ շատ բան վաստկեր հարըստացեր էին. բայց եթէ անոնց կըրկինն այլ ինձ տրուի հիմայ, ոչ ինչ կ'երեւի աչքիս՝ որ կարօտ է տեսնել զՀայրենիս:

գութ առ իս ողորմութեամբ, արձակեցէք որ տեսանեմ զորչափուրիւն աւերածոյ երկրին իմոյ հայրենեացս[1]. և ձեր հրամանաւ գործակալ արարեալ՝ առ ձեզ հասանեմ:

Եւ յետ իմաստութեան բանիցն այն՝ լուծեալ լինէր պնդութիւնն (Ոմառայ), գրեալ հրամանաւ հաստատուն և անփոփոխելի իրօք: Ետ հասանէր ի գաւառն իւր Գաղմն, և (առնէր) կարգաւորութիւն վերակացուացն, ըստ հրամանին: Բայց՝ որպէս մեզ թուեցաւ նմանութիւն իրացն, հառագայթ՝ որ առ միտսն էին լուսոյ հաւատոցն, որ արդեօք եթէ խնդրեաց յԱստուծոյ զերծանել ի նոցանէ: Վասն զի ատկ լաւ առ նա հասանէր, եթէ մեռաւ Ոմառ. և նորա ոչ կամեցեալ երթալ՝ ըստ ամուր հրամանին իւր հեշտութեանն՝ որ ի Տանկաստանի, ողբայր զայն վերջգարձութիւն[2] ի տիս տգայութեանն. և վերստին աւազան զարտասուսն առնէր:...

Եւ իրրեւ տեսին իւրաքանչիւր զայն ամենայն, զաներկրաբեր մտացն զբաս, կամեցան զնա ընդ աչխարհիս սիրով կապել. բռնադատէին զնա յամուսնութիւն, զի մի առժամայն գնասցէ պակասելով ազգին. և իւրեանց կամացն ի գլուխ եղեալ, արարին յազգականութենէ Աբէնեաց տեառնն: Բայց նա յիւրմէն ոչ փոխեցաւ յաստուածսիրութենէն, զի մի ըմբռնեսցեն զնա աչխարհիս մեծութիւնք, և ի ծածուկ կացցէ աստուածպաշտութեամբ, այլ յայնապէս խոստովանեսցի զՔրիստոս, և մի ուրացօրէն երկիւղիւ կեալ:

Ապա յանցաւոր կենցաղականացս զմիտս ի վեր ամբարձեալ՝ թողոյր զիւր զամենայն մեծութիւն,

1. Ինչպիսի՛ զրով կամ դոյնով գրելու էր անշնջելի հայրենեաց սիրով բղխած այս տողերս. ասկա՛ւ, կրակո՛վ թէ արիւնո՛վ:

2. Կու լար ուրացութիւնը, թէ և անգիտաբար չորս տարեկան տղայ ըլլալով:

առեալ ընդ իւր թոյակ և հեծեալ քսան, և դէմ եդեալ գնայր յայխարհն Ցունաց[1]: Եւ իրրեւ դառնայր ի Վայոց ձորոյ, զիւր ծածուկն յայտնի առնէր աներոյն. օգնական խրատու ունէր զնոսա իւր առաջարկութեան ճանապարհին: Անդ ապա տիրաշարժ[2] կանացիքն՝ զողթս մատցն արտասուօք ցուցանէին, ասելով, թէ, Ի չխանութեամբ առեալ զՀայրենիս[3], մեծ յոյս և մեզ լինէիր. արդ, զայդ տեսեալ խորհուրդ՝ օտարանամք. և դու մեզ ոչ կենդանի լինիս և ոչ մեռեալ: Իրրեւ չուրջ նստեալ արտասուօք յողոք անկեալ ասէին. Հայեաց ի մեզ՝ յանշնարութիւն կենացս, գուցէ դու ի մէնջ խընդրեսցիս. ընդ քեզ գամք ի կեալ և ի մեռանել յօտար երկիրն. քեզ ողբակցեալ անկցուք անցս մաքելի արտասուօք:

Իրրեւ զայն լսէր երանելին, աղբայր[4] պատասդաւոր իրան և զանլինելի, և զթոյակին ծախումնն. և յանդէպս վառեալ իրրեւ Հոգւոյն զինու, վազվազակի հասանէր յայխարհն Վրաց՝ հաւատոյ թոչակաւն, որպէս զի որ անդն էին յաղատաց նորա մերձաւորք[5], ի ձեռն նոցա հնարեսցի յառաջ եդեալ ճանապարհն: Եւ անդ աւելի եւս լինէր ապաշաւանք, և զիչերական աղօթք անհանգիստ, հանդերձ

1. Ցունաց աերութեան ներքեւ եղած Հայաստանի մասն:

2. Մանաւանդ թէ արտաշարժ: Վահան կ'ուզէր յայտնել իր քրիստոնէութիւնը. անոնք վախցընէին որ իր պատճառաւ իրենք այլ պիտի վտանգէին. յորդորէին որ փախչին յօտար երկիր: Վահան կ'ուզէր իր խոստման համեմատ դառնալ առ ամիրապետն:

3. Արդեօք այս կանացեաց և կանանց տիրաշարժ և սիրաշարժ խօսքերը կ'ակնարկէ Վահանայ վրայ երգուած սրտառուչ Շարականն:

4. Լաւ եւս գրե ուրիչ Օր. թողոյր այն սիրտը միթքը զբաղեցընող հոգերը:

5. Կարծեցընէ թէ մայրն ի Վրաց կողմերէն եղած ըլլայ:

պահօք զԱստուած յօդնութիւն կոչել: Եւ զտարւոյ միոյ (չափ) աւելի կամ պակաս՝ անդ անցուցեալ, դարձեալ եկն ի Հայս, յԱրագածոտն, իրրեւ օգնական հեծեալքն ի բաց կային ի նմանէ՝ ձանձրութեամբ լքեալք: Էր և անդ իչխանաց գաւառին՝ որ մօտաւոր ազատքն էին՝ խորհուրդ առեալ, զի ընդ ամուր աչխարհն Տայոց յօդարկեալք, ելանիցեն ի թագաւորանոց քաղաքն[1]: Զոր ոչ բաւական համարեալ իւրայոցն, զիչխանն և զկաթողիկոսն խորհրդակից առնէին. որպէս կարծեմ դեւն այն որ յամենայնի լինէր քաջավատակ, չարախորհուրդ մտածութեամբ վազվազակի հասեալ՝ ահ արկանելով զօրապետաց և քրիստոնէից վերակացուին, միմեանս ասել, եթէ, Երթիցէ գնասցէ ի բաց, զի մի մեզ և անձին կորուստ լինիցի. զի թերեւս զերանելի այրն՝ յուրացութիւն կարիցէ ածել մերոյն Քրիստոսի:...

Իրրեւ ոչ գտանէր ելս իրացն կատարմանն, անկանէր առաջի Աստուծոյ խնդրելով. որ և գրով իսկ գտաք զնորա աղօթս[2], այսպէս ասելով. Միածին որդի Աստուծոյ, որ մոլորելոյ ոչխարին հովիւ կոչեցար, և գտեալ զնա՝ ուսով քո բարձեր, և տարածեալ զբազուկս՝ ի քեզ ժողովեցեր զիւրեսն, մի անօգնական թողուր զիս զօտարս. լուա՛ զյանցանս իմ քոյով արեամբդ և կենդանարար մարմնովդ, որ մանանայդ ես անմահութեանց, յերկնից իջեալ հաց մեզ պարգեւեցար: Ի՛մ Յիսուս, փրկութիւնարեր աչխարհի, որ Հօր և Հոգւոյդ Սրբոյ և քո իսկ կամաւորութեամբ՝ մեզ եղեր զերնուելն, և առաջնորդ կենաց ճանապարհին. Հայր

1. Կարծեմ Կստանդնուպոլիս է քաղաքդ:

2. Ինչ զղջաստութիւն մտաց՝ արիական Հոգւոյ հետ. ո՞ զիտէ ինչ սրտառուչ բաներ այլ գրած է՝ իբր իր առանձնակ օրագրութեան մէջ. երբեմն վարժ ըլլալով ամիրապետին զիւանաց մէջ արաբերէն գրել՝ անոր առեւտուրը:

2004

Սուրբ, և Որդի Սուրբ և Հոգիդ Սուրբ, որ մեր խոստովանութիւնս (է), Երրորդութիւն և մի աստուածութիւն, մի գէմս, երեք անձնաւորութիւն, հեռի յամենեցունց, և մօտ առ ամենեսեան. որում փառք յաւիտեանս. ամէն:

Եւ յետ գոհութեան աղօթիցն՝ երթայր առ դահճապետ ոմն, որում անուն էր Քարչ որ Հիմաց ոչ իշխան էր. և ծանուցեալ նմա, յօժարագոյն եղեւ նմա պատմել. և առեալ տանէր զնա առ բանաւորն: Եւ իբրեւ զգիրն ընթերցաւ, զարմացաւ ընդ գեղեցկագիծ և ընդ ճշմարտաբան դիրս բանիցն. եւ հրաման ածել առաջի իւր, և հայեցեալ ի նա՝ հեչտալի բանս խօսեցաւ. եթէ, Ընդէ՞ր, Վահապ, աղքատահանդերձ երեւիս ի քո փառաւորութենէն. ուրեմն երկիրն Հայոց լիոյց զքեզ յայդ: Պատասխանի եւս Սուրբն և ասէ. Եթէ Տէրն իմ զանձն ունայնացոյց՝ կերպարանօք ծառայի իջեալ յաղքատութիւն՝ յաղագս մեր, և հնազանդեալ մահու խաչի, արդ, զոր նա վասն իմ համբերէր, յայնմանէ և ես ոչ վերջանամ: Ասէ բանաւորն. Սառնապատ լերանցն Հայոց չար դեւքն՝ զքեզ պատրեալ մոլեգնեցուցին՝ ընդ վայր խօսել: Ասէ վկայն. Զոր յառաջն ունէի՝ ըստ ձեր օրինացդ՝ հալածեցի յինէն. զի խաւար՝ ի լուսոյ փախչի, որպէս ձերդ յինէն: Ասէ դատաւորն. Աստն ձեր մոլար օրինացն խմաստուն՝ եթէ դիւացն ի վայր անկեալ՝ այլոց չարք եղեն. և առյդ է, զձեզ նեղեն աստ և ուր յուսացեալ էք երթալ: Բարիատեաց այր, ընդ մոլեկանաց նմանեալ քեզ ի բաց ի բաց ձգես զփառաւորութիւն կենաց քոց:...

... Յայնժամ մխարանութիւն եղեւ ամենեցուն որ առաջի նորա նստէին, ազազակէին ամենեքեան՝ որպէս զի անյապաղ վտեղով զրաւեսցի նա ի կենցաղոյս. և չնչեալ այսոյն չարի առ հասարակ յամենեսեան. և չրջեաց զգոյն երեսացն ամիրապետն, և հրամայեաց հանել զնա արտաքս և սպանանել: Եւ նա երթայր հեզաբար անտրտում երեսօք, սաղմոսէր ասելով. «Ա քեզ, Տէր, համբարձի զհոգւոյս ակն. որպէս աչք ծառայի ի ձեռն տերանց, նոյնպէս և իմ մտաց տեսութիւն առ քեզ հայի». և որ զկնի սորին սաղմոս:... Հասեալ ի տեղի կատարմանն, ցնծալից ուրախութեամբ, և զձեռս յերկինս համբարձեալ, ասէ. Գոհանամ ըզքէն, որ հանապազորդ հառաչմանս իմոյ լուար և զփափաքմունս լցեր, և զլուծումն կապակցութեանն՝ հասուցեր մահու սրբոց քոց վկայից. և արժանի արարեր մեռանել վասն մեծի անուանդ քո. արդ, յիչեա զմեզ, Տէր, զի վասն քո մեռանիմք զօրհնեալդ. և արա յամօթ զպերձացեալսն յինքեանս երկրաթաւալ, անաստամիտ, դատողական, մարմնասէր դեգերմանց՝ ձախոյ կողմանն. և զմանկունս եկեղեցւոյ քում սրբոյ անարատ պահեա, անչարժ որպէս ի վերայ վիմիդ հաստատց. և ի միւսանգամ գալըստեան քո արժանի արա յերկնաչուք պողոտայն, ընդ առաջ ելանել քեզ՝ յերկնային խորանսըդ, որպէս զորդիս լուսոյ, փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Յայնժամ դահճապետն զայրագին ցասմամբ ասէ ցնա. Ոչ կամեցար հաւանիլ բանից իմոց, արդ եղեալ կատարեցից զհրամայեալսն ի վերայ քո: Եւ Սրբոյն պատասխանեալ ասէ. Եթէ արդեօք ձեր սովորութիւն է արհամարհել զհրամանս վերակացուին ձերոյ, իսկ ինձ անհնար է անցանել զպատուիրանաւ երկնաւոր թագաւորին իմոյ: Յայնժամ դահճապետն հանեալ զսուսերն փայլեցոյց, հարկանելով սակաւ մի, ըստ հրամանի արքունի, դարիւնացայթեան ցուցանելով. նա ոչինչ զարհուրեցաւ: Ասէ դարձեալ ցնա. Զի՞նչ կամիս. Սուրբն ասէ. Արա զինչ կամք է քո: Եւ այնուհետեւ այլ ոչ եւս խօսեցաւ: Ասէ դարձեալ սպանողն. Այ տառապեալ, ահա եկն եհաս քեզ դառնութեան օր, և դարձեալ՝ կենաց, եթէ կամիս. արդ ընդէ՞ր ոչ ընտրեցեր զկեանս քո, այլ զմահ ախրեցեր: Ասէ

1092-69

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՐՍՏ Եւ Ցեղ... ՀԱՍՌ

Սուրբն. Ընտրեցի զմահ վասն Քրիստոսի, քան զկեանս անցաւոր:

Եւ ապա ապանողն՝ յառաջ ասաց ունել զպատանոյն. և վերացուցեալ զսուրն՝ եհատ զգլուխն. և ինքն նոյնժամայն անցեալ գնաց:

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի երանելին և մեծն վահան, որ օր ութեւտասներորդ[1] էր մարտի ամսոյ, ի չարաթթու զատկի պահոցն երկուշաբաթու, յիններորդ ժամու, և ի քսան եւթն մարելի ամսոյ[2]:

Զարմանալի է իմն՝ քան զկրգա՝ երաժըշտակաւնաց ձայնիւ՝ ողբոց քոց հնչմունիք. ով երանելի տէր վահան, ընտրեալ յԱստուծոյ:

Աչառիլ յորդորէ այս զհոգեղէս մասունիս[3], յօրինել քեզ երգս, ոչ զրղչականս, այլ հոգեւորս և ոչ բախտարար, յորդորականս և ներբողեանս. ով երանելի տէր վահան, ծառայ Քրիստոսի:

Զարհուրելոցդ զանէ քո ձգնութիւնդ՝ գնարժանիդ բնութիւն. իսկ դուն առաւել գտար, ով երանելի տէր վահան, սիրող Քրիստոսի:

Աղտաքինդ զգաստքն[4], առեղծիչ բանիդ անուանացն՝

1. Օրինակն եօթնեւտասներորդ էր գրած:

2. Կարժէ գեղեցիկ վկայաբանութեանն հետեւեցընել գեղեցկագոյն շարականն այլ ի պատիւ Սրբոյն, զոր աւանդութիւնն կ'ընծայէ անոր քրոջ, գուցէ ըլլայ կիներ. որն և ըլլայ՝ յայտնաւոր որ վահանայ Սիւնեցւոյն էր:

3. Հոգիդ մասունք հաւնի, բայց չատ նուրբ գեղեցիկ ազնիւ զգացմունք. անոր մեայ քո առջեւ՝ ի հնոց և նորոց համբաւեալ լեռնցին Սափիով:

4. Աղտաքինն զգաստքն՝ բանաստեղծք և վիպասանքն են, և իրենց առեղծած բանքն՝ խաբեբայք. իսկ Սիրայնոյն հոգեշահ և աստուածարեալ բանքն՝ թուի թէ ոչ այս հինգ տունքն միայն էին, այլ երկարք և ցանկալիք, Դաղիմեանց քնարաց հետ լռեալ խոպան:

ի պատուհասիւն. իսկ քոյդ Սիրայնոյ՝ աստուածատեալ և ոգեշահ. ով երանելի տէր վահան, ընտրեալ յազգատոհմ:

Որպէս զքաջ նահատակ պատրաստեալ ի պատերազմ՝ կատարեցեր զընթացս քո արիաբար, յազգացն հարուածոյդ, դասաւորեալ ընդ անմարմնականսն. ով երանելի տէր վահան, Գողթնեցւոյ իշխեցող[1]:

ՄԳ.

ՍԱՀԱԿ ԵՒ ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՐԱԶԱՏՔ ՍԻՐԵԼԻՔ ԵՒ ԱՐԻՈՒԹԵԱՄԲ ՆԱՀԱՏԱԿԱԿԻՑՔ

(Գ ԵՒ ՈՆԴ. Ը.)

Ոչ դադարէր ամբոխ ազմկի հեռութեան[2] անօրէն ազգին՝ յաչխարհէս. քանզի ամենայն ուրեք զբնական իւրեանց չարաշնորհութիւնն ոչ լքին յանձանց՝ որդիքն Բելիարայ. այլ իժաբար դիմեալ... ումն՝ որում անուն էր Սուրխայան, և ընդ նմա որդիք յանցանաց, ի կողմանցն Պարսից, ասպատակէին ի կողմանս վասպուրականի, գործելով զանարժան բարս անընդակից չար սերմանցն: Որոց ի դիմի հարեալ նախարարքն ի տանէն Աղթրունեաց, Սահակ և Համազասպ, սակաւ արամբք, անկան ի մէջ թշնամեացն: Իսկ նոքա իրրեւ տեսին զի նուաղունէր էին՝ ի մէջ արկեալք կամէին սպանանել: Իրրեւ տեսին Սահակ և Համազասպ զկէնն զարթուցեալ ի վերայ, և զի ոչ ուստեք փախուստ

1. Այսպէս յետ անմարմնոց դասակից ընելու իր Սիրայինը՝ յիշեցընէ որ երկրէս վրայ նա իշխեցող էր Դաղիմեանց գինեւէնա գաւառին Հայոց:

2. Հեռ, աստելութիւն, ոխ:

գտանէր՝ սուր ի գործ արարեալ զբազմութիւն թըշնամեացն խողխողէին, և ինքեանք դիմեալ ընդ տեղի մի ամբոխին՝ վերծանել ջանային։

Այնդ կարեվէր խոցեալ Հաւազասպ՝ անկանէր յերիվարէն. և պատեալ գնային թշնամեացն՝ սպանին։ Եւ Սահակ իբրեւ հասեալ զպանուճն եղբօրն, յաղագս յաճախ սիրոյն զոր ունէր առ եղբայրն, մատնէր զանձն ի մահ. և ի խոնարհ անկեալ յերիվարէն՝ կարթակոտոր[1] առնէր. և ինքն զայրագին անձամբ մենամարտէր և զբազումս դիմաթափեալ կացուցանէր, մինչեւ խնդրել զվերժ արեան եղբօր իւրոյ։ Եւ ապա պարտեալ ի մարտին՝ վախճանէր։ Եւ այնպէս վճարէին ի կենաց ընտիր նախարարքն, որք էին որդիք Վահանայ Աբծրունւոյ։

Իսկ ապա յետոյ ազդ եղեալ եղբօր նոցա Գագկայ և այլոց նախարարացն որ ընդ նոսա, եկանէին ի տեղի մարտին՝ վայելուք և ճչօք. այլ ոչ կարացին հասանել թշնամեացն. զարձան ողբովք և աշխարհաւանօք թաղել զմեռեալսն։ Իսկ թշնամիքն զարձան ընդ նոյն ճանապարհ. որ ապա յետոյ սակաւ մի անկաւ ի ձեռս Գագկայ Աբծրունւոյ, և սպանաւ Սուլէյմանն և բազումք ընդ նմա։

1. Ինքն իր ձիոյն սրունքը կտրէր կտրէր. թուի թէ գիտնալով որ այնքան բազմութենէ թշնամեաց ազատիլ անհնար է, չուզեց իր հաւատարիմ ձին այլ անոնց գերի թողուլ, կամ չուզեց փախչիլ փսրձել։

ՄԻ

ԹՐԱՏ ԱՇՈՏՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՑ ԱՌ ՆԱԽԱՐԱՐՍ

(Ղ. ԻՆՁ.)

Իսկ Աշոտ ի տանէ Բագրատունեաց, որդի իշխանին Սահակայ, զի էր այր խոհական հանճարով՝ ոչ միայնանեաց ի գործ վիճաբանական աղէտին[1]. այլ և գնացեալ եւս խրատէր՝ ի բաց թողուլ զվիճաբանական կարծիսն՝ զոր ունէին ի վիճաբանական խրատուէ մոլեկան մենոգոնին[2], և անձնապահ լինել անձանց և ընտանեաց նոցին, զի ասէր. «Մանկունք էք և կրտսերագոյնք հասակաւ. և գիտեմ եթէ ոչ կարէք զդէմ ունել զօրութեան բազմապլուխ վիշապին. զի հզօր է զօրութիւն նորա և անթիւ բազմութիւն ընդ ձեռամբ նորա, և այնչափ պատրաստութիւն գինուց ի գանձս նորա. և ամենայն թագաւորութիւնք որ հակառակ կացին իշխանութեան նորա՝ փշրեցան որպէս զանօթ բրտի. զի թէ Հռովմայեցւոց թագաւորութիւնն[3] ոչ կարացաւ համբառնալ զձեռս ի վեր, այլ սարսեալ զոզայ յերեսաց նորա, և ոչ յանդրզնել ընդդէմ տէրունեան հրամանին. զի և դուք չէք անտեղեակ ամենայն զօրութեան արքային Յունաց, քաջութեան անձին նորա և բազմութեան և պատրաստութեան զօրաց նորա, զի ամենեւին ընդ միտ անգամ ոչ էաւ ածել զմտաւ, առնուլ զաշխարհս Հայոց ի ձեռաց նորա, կոստանդին որդի Լեւոնի. որ մենամարտեալ ի միում աւուր ընդդէմ ահաւոր գազանացն, սպան զառիւծն իբրեւ զուլս այծեաց.

1. ՅԱրաբացւոց սպասամբիլ սուզողներուն։
2. Անխոհեմ կրօնաւոր մի որ զրդռեր զՀայս։
3. Յոյնք, Բիւզանդացի կայսերք։

արդ, որ գայս ուժ զօրութեան ունէր՝ այնպէս ընթացեալ է յահէ չարաթոյն գազանին որ ապականէ զերկիր. իսկ դուք յո՛վ արդեօք ապաւինեալ, և կամ որո՛վ զօրութեամբ և որո՛վ ուժով կարէք զդէմ ունել անյազթելի իշխանութեան նորա: Այլ արդ, եթէ հաճոյ թուի անձանց ձերոց՝ ընկալարուք զխրատ իմ, քանզի զօգուտն ձեր և զպիտոյն և զանդորրութիւն աշխարհիս տեսանեմ ես. զի այս լինի եթէ գործոյդ. կամ զառնալ ձեզ և մտանել ընդ հնազանդութեամբ նոցա, և հանդարտել և կեալ խաղաղութեամբ յերկրիս ձեր. և կամ մերժել փախստեամբ համօրէն ընտանեօք՝ յերկրէս ձերմէ, և լքանել թողուլ զժառանգութիւն հարցն ձերոց, զբնակութիւնս ձեր, և զանտառս և զանդաստանս, և զգերեզմանս հարց ձերոց, և երթալ բնակիլ նժդեհութեամբ ընդ արքային Ցուն նոց: Եւ կամ թէ ոչ՝ անկանիցիք ի ձեռս նեզուայ ձերոց ի մխում աւուր, և անախորժելի մահուամբ բառնայցեն զձեզ ի կենաց. զի գիտեմ ես զբարս իշխանին Խամայելի, զի ոչ դադարէ մինչեւ կատարէ զկամս անձին իւրոյ »[1]:

Իսկ նոքա ոչ ընկալան զոր լուան՝ զբանս խրատու օգտութեանն, յընչաց քերէին, իբրեւ զխրատ նենգութեան. քանզի յոյժ հաւանեալք էին ատապատում առն մոլորելոյ[2], որ սր ըստ օրէ յորդորէր զնոսա կալ պնդակազմ ի գործն առաջարկեալ, և մի ինչ երկմտութեամբ ըստգտանել զանձինս. որոյ անուղղայ կամակորութիւն ջախջախուն խորհըրդին՝ անդէն ընդ հուպ երեւէր. զի քակեալ ի միմեանց՝ անմիաբանք լինէին:

1. Կարեւոր խրատ՝ հասկացողաց:
2. Վերոյիշեալ ապգլուխ կրօնաւորն:

Մե

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՀԱԳԱՐԱՑԻՍ Ի ՊԱՇԱՐՄԱՆ ԿԱՐՆՈՑ ՔԱՂԱՔԻ

(ՂԵՒՈՆԴ)

Իբրեւ եհաս զրոյց պարտութեան գնդին ի քաղաքն Կարնոյ, յայնժամ լքաւ սիրտ արանց պատերազմողաց զօրացն Հայոց. և թոյլ եառուն պաշարման քաղաքին. և թէպէտ կարող էին մեկնել ի կողմն Ցունաց, և ապրեցուցանել զանձինս ի չարաչար սպիրտութենէ զրպարտողացն, սակայն լաւ համարեցան զմահ անձանց՝ քան տեսանել ըզկորուստ աշխարհիս և զանպատուութիւն եկեղեցեաց Քրիստոսի: Եւ գայս զմտաւ ածեալ, թէպէտ և նուազագունք էին քան զթիւ թշնամեացն, ինքնակամ յօժարութեամբ դիմեցին ի վիշտն. և ժողովեալ զգունդս իւրեանց՝ իբրեւ արս հինդ հազար՝ գնացին ի քաղաքն Կարնոյ. անցանէին ընդ սահմանս Բասենոյ ի գաւառն Բագրեւանդ: Իսկ և իսկ անցեալ ընդ գետն Արածանի[1] յարձակէին արիութեամբ սրտի՝ ի վերայ թշնամեացն. և բացագոյն երկու վտաւանօք[2] զատուցանէին զպատն իւրեանց և վերիվարս. և ի հետիոտս գայլայլեալ պատրաստէին ի մարտ պատերազմի թշնամեացն: Ելանէին ապա և գունդք թշնամեացն ի վերայ նոցա՝ բազում պատրաստութեամբ:

Եւ ընդ ծագել արեգականն խմբեցաւ պատերազմն. և իբրեւ բախեցին ընդ միմեանս, նախ զո-

1. Հիմայ Մուրատ-սու, իւր գիշխեի կողմերն:
2. Անկայտ է բառիս ծագումն և չափն, բայց թուի հաւասար չատ անգամ յիշուած Ասպարէզի, որ է իբր 240 չափ (մեռը):

բացեալ գունդն Հայոց՝ հարկանէին բազում հարուածս, և ի փախուստ դարձուցեալ զթշնամիսն սատակէին զբազումս: Եւ դարձեալ զօրացեալ[1] դարձան ի փախստենէ, և դիմագարձեալ զայրագին ցասմամբ՝ լնուին արհաւրօք զբազմութիւն ռամիկ ժողովոյն. և ի փախուստ դարձուցեալ զոմանս ի նախարարացն և ի նոցին հեծելոցն, և զռամիկսն որք ընդ նոսա, զի զբազումս ի նոցանէն հարեալ սատպատ դաշտացն արկանէին:

Իսկ քաջայաղթ նահատակքն Քրիստոս և նուաղունք էին ի մէջ չարաչուք որոտացն, սակայն ոչինչ զանգիտեցին ի գառնաչունչ օրհասէն. այլ մինչ ի սպառ գումարեալք ոգւով չափ՝ մարդկին[2] զմիմեանս բանիւք, ասելով. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մերոյ և ի վերայ ազգիս, և մի տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից ազգացն զորբարանս մեր և կաեղի փառատրութեան Աստուծոյ մերոյ. այլ նախ՝ ընդդէմ մեր լիցի սուր թշնամեացն, և ապա լիցի զոր կամիցին. փոխանակեսցին անձինք մեր ընդ ճշմարտութեան հաւատոյս, և մի ընդ երկրաւոր զբաղմանս. զի այս մահ՝ ժամանակեան և կեանքն՝ յաւիտենական»: Եւ զայս քաջալերութիւն առեալ միմեանց՝ ի բարձունսն կարկառեալ զաչս՝ օգնութիւն ի Քրիստոսէ լոյն հայցէին, ասելով. «Աստուած, յօգնութիւն մեզ հայեաց, և յընկերել մեզ փութա. Ամաչեսցեն զամօթ մեծ՝ որք խնդրեն զանձինս մեր, և մեք զանուն քո, Տէր, կարդասցուք ի նեղութեանս մեր. և զանուն քո, Տէր, փառաւորեսցուք ի նեղութեանս յոր պաշարեալս եմք. զի ահա չրջապատեալ պահեն զմեզ չարք՝ որոց ոչ գոյ թիւ, և ժամանեցին մեզ երկունք մահու»:

Զայս և առաւել եւս քան զայն մատուցանէին խնդրուածս ազերսականս և մաղթանս փափաքե-

1. Ալլազգիքն:
2. Մեկդմեկ քաջալերէին:

լիս: Եւ յետ այսորիկ զարձեալ զօրացեալք յօգնականութենէ վերնոյն, ոչ ինչ կասեցին յառաջի արկեալ խորհրդոյն, քանզի չէին աւելի քան զհազար մի արանց՝ ի մէջ երեսուն հազարացն: Զի որպէս ուսաք ի նոյն ինքն ի թշնամեացն՝ ունէին, ասէ, ընդ ինքեանս՝ մարտակից՝ զհրեչտակական բազմութիւնս, որ մարմնական տեսլեամբ երեւէին թշնամեացն. զի տեսանէին երիցունս և պատպատ[1] աւետարանօք և մոժեղինօք և խնկօք առաջի նոցա երթալով՝ զօրացուցանէին զնոսա: Եւ անխնայ կոտորմամբ խնդրեցին զվրէժ անձանց, մինչեւ պարտեցան ձեռք նոցա ի ծանրութենէ կինուցն. միանդամայն, զի ոմանք թափուր մնացեալք ի կինուցն՝ անկան ի ձեռս նոցա և իսկոյն առեալք զհրաժեշտ մեզանչական կենցաղոյս՝ փոխեցան ի հանգերձեալ յուսոյն ակնկալութիւնն, երանելի և քաջ նահատակքն: Որոց զօրագլխացն անուանքն են այսքիկ. ի տանէն Բագրատունեաց սպարապետն Արմբատ, և Ահակ՝ բարձակից և նիզակակից նորին. և ի տանէն Մամիկոնեանց՝ Մուշեղ զօրավար և Սահուկ տէր Մամիկոնէից, որ էր արդի մատաղ և առոյգ զեղեցկութեամբ, աներ սպարապետին մեծի. և ի տանէն Գնունեաց Վահան դաշնակ[2]: Եւ այլք բազումք ի նախարարացն և յոստկաց, զորս ոչ բաւեմ մի ըստ միոջէ յանուանէ թուել. որք անկանէին իրրեւ արք երեք հազար. որոց ոգորմելի կատարածն, և վախճանն՝ անարգապէս. զի և ոչ հող նոցա բաւէր թաղել զդիակունսն թշուառացելոցն ի պատերազմէն. այլ բացընկեցիկ օթագայեալ ի վայրի, յարեւու և ի փուչոլ և յանձրեւի և ի մրըրիկս հողմոց:

Եւ յայնժամ սատակապէս յաճախէին ազգք և աշխարանք աշխարհիս Հայոց. վասն զի առաջնորդք մեծք և զօրագլուխք պատուականք՝ բարձան

1. Յայն անուն, երեց քահանայ նշանակելով:
2. Մականուն մի թուի, անյայտ մեզ պատճառն:

ի միջոյ ի միում վայրկենի ժամու. և երկիրս առ-
հասարակ ի խոր սխրութեան ըմբռնեալ՝ կոծէին
կոծ մեծ, և աւաղէին զվախճան նախամարտիկացն
հզօրաց և քաջաց. քանզի մնացին թափուր յօգ-
նականութենէ նոցա, և մատնեցան ի ձեռս գա-
զանաբարոյ և անհամբոյր թշնամեացն:

ՄՋ

ԲԱԳՐԵՒԱՆԴԱՅ ԿՌԻՒՆ

(ՂԵՒՈՆԴ)

Ելեալ[1] նոյնժամայն ի գաւառն Բագրեւանդ, և
ընդ նմա արք երկերիւր և վաթսուն, և ըմբռնեալ
զպահանջոցն հարկին[2], որում անունն էր Ապու-
մրձուռ և գոյս ընդ նմա, հարեալ սատակէր ի սուր
սուսերի իւրոյ. և լռեցուցանէր զպահանջուն հար-
կին յերկրէս: Եւ իբրեւ այս այսպէս վճարէր՝ ժո-
ղովին առ նա ամենայն վշտահարք և վանգեալք
հոգւով. և յայնմհետէ զարթեան յամենայն կող-
մանց թշնամիք ի վերայ նորա: Եւ նախ քան զայս՝
յորդւոցն Իսմայելի ի քաղաքէն Կարնոյ հասանէին
ի վերայ նորա, որք էին իբրեւ արք երկերիւր,
վառեալք կուռ սպառազինութեամբ. յորոց վերայ
հասեալ ի գիշերի՝ ի գիւղն Խարա[3] սակաւ արամբք,
զի էին բնակեալ ի մէջ այգեստանեացն, չուրջ
կացեալ զնոքօք՝ փլուզին զզուշնաքեայ պատուար
այգեստանեացն, զի էր կարկառակոյտ քարանց
առանց հողոյ[4]. և յանչափ դղրդմանէ քարանցն

1. Մուշեղ Մամիկոնեան որդի Հրահատայ:
2. Արաբացւոց տէրութեան կողմանէ հարկ ժողովող:
3. Ծանօթ է և հիմայ գիւղս ի գաշտին Կարնոյ:
4. Այգենորուն չորս կողմը քար քարի վրայ դնե-

բախեալ երիվարացն՝ զգազումս առաքուր հարեալ
սատակէին. և առեալ զգէնս և զկապուտ անկելոցն՝
տայր զօրաց իւր, և զերիվարս և զամենայն կազ-
մած զինուց. և ինքն խաղացեալ գնայր ի կողմն
ամրոցի իւրոյ:

Եւ իբրեւ այս լուր աղէտի հասանէր ի քաղաքն
Դուին՝ առ զօրավարն Իսմայելի՝ Մահմետ, յամե-
նայն կողմանց ագնապ մեծ յառնէր ի վերայ նո-
րա. և գումարեալ զզօրս քաղաքին Դուինայ՝ տայր
ի ձեռս զօրագլխի միում, որում անուն էր Ապու-
ևրձիկ, ելանել ի խնդիր վրիժու արեան սպանե-
լոցն: Եւ առեալ զօրավարին այնմիկ զընտիրսն
հեծելոց՝ իբրեւ արս չորս հազար, ուշ եդեալ ընդ
պղպտային արքունի՝ հասանէր ի գաւառն Բագրեւ-
անդ, ի գիւղն Բագաւան: Անդ ի վերայ հասանէր
նոցա Մուշեղ, և ընդ նմա արք իբրեւ երկերիւր. և
մարտուցեալք ընդ միմեանս՝ օգնութիւն ի Տեառնէ
վաղվաղակի հասանէր ի թիկունս գնդին Մուշե-
ղայ. և բազում հարուածս հարեալ սատակէին ի
զօրացն Իսմայելի, և զմնացեալսն ի փախուստ դար-
ձուցեալ՝ հետամուտ լինէին մինչեւ յաւանն Ապռձ.
և զբազումս ճգաբաղ առնէին, մինչեւ գնոյն ինքն
զզօրագլուխն հարեալ սատակէին: Եւ մեծաւ յաղ-
թութեամբ դարձեալ ի հետոյ նոցա՝ լնուին բա-
զում աւարաւ յաւարէ թշնամեացն:

Եւ փախստեայքն անկան ի քաղաքն Դուին, սա-
կաւք ի բազմաց. որոց ընդ առաջ լինէին համազ-
գիքն՝ արք և կանայք, վայիւք և ճչօք, հող ի գլուխ
լինելով, զճակատ հարկանէին և զօձիս պատա-
ռէին, և ազբուք և աչխարանօք լնուին ամենայն
փողոցք յայնանիստ քաղաքին: Եւ ահ մեծ անկա-
նէր ի վերայ սարակինոս գնդին. և ոչ լինէր նոցա
համարձակ՝ ելանել քան զքաղաքն, այլ անձնապահ
լինէին յամրութեան քաղաքին:

լով՝ առանց հողով կամ կրով իրարս հեւսելու՝
պատ քաշեր են:

Ապա իբրեւ զայս յաղողուած գործոյ տեսանէին նախարարք Հայոց՝ ամենեքեան միամտեալ ընթանային զհետ անմիտ խորհըրդին. զի կարծէին լցեալ ժամանակ իշխանութեանն Իսմայելի, և մանաւանդ պատրեալք առաւել ի կարծիս առն միոյ մոնոզոնի, որ մոլորութեան հոգւովն չարժեալ՝ մարգարէանայր անոտիս և ընդունայն, ասելով. «Ահա մերձեալ է ժամանակ փրկութեան ձերոյ. զի այժմ ընդ հուպ գարնոյ գաւազան թագաւորութեանն միւսանգամ ի տուն Թորգոմայ, առնուլ ձեօք զվրէժ յազգէն Իսմայելի. և դուք մի զանգիտէք յերեսաց նոցա, թէ նուազունք իցէք. զի մի այր ի ձենջ հալածեսցէ զհազարան, և երկուքն զբիւրսն. զի զպատերազմն ձեր Տէր պատերազմեսցի. զօրացարուք, մի զանգիտէք»: Եւ այսպէս սեպիլ սուտ և ըզձանս ի սրտից որ ըստ օրէ պատմէր նոցա. որում առհասարակ հաւատացեալ՝ տեսանող զնա կոչէին: Եւ յայսմ բանէ ամենեքեան պատրեալք՝ զրգռեցուցանէին զմեծ սպարապետն Սմբատ որդի Աշոտոյ՝ հաւանել այնմ խորհըրդի: Իսկ նա իբրեւ յականջ կամաց չարժեալ յիւրմէ հաւատառուն և յանխոնարհելի խորհրդոցն՝ չոգաւ զկնի խաբեբայ և մոլեկան առնն այնորիկ:

Եւ ժողովեալ ամենայն նախարարք Հայոց ի մի վայր՝ առնէին առ միմեանս երդմունս և դաշինս ուխտի՝ կեալ և մեռանել ընդ միմեանս: Եւ այսպէս միախուռն ժողովեալք առ միմեանս՝ արք իբրեւ հինգ հազար. զի բազումք ի նոսին ժողովոց եկեալ խառնէին ի գունդն նոցա. և համբարձեալ գնացին ի կոմմանցն այնոցիկ՝ պաշարել զքաղաքն Թէոդուպոլիս որ է Կարնոյ քաղաք. և պաշարէին զնա պատնիշօք, և զամենայն ժամանակս ձմերայնոյն մարտ եղեալ կռուէին ընդ նմա, կանգնեալ զնովաւ մահաբձան, և հատանէին վէմս ծակուց արտաքուստ ի քաղաքն. այլ ոչ ինչ կարացին սանսանել, բայց որչափ սակաւ ինչ ի քարէ մեքենայիցն, որովք սատակէին ի քաղաքէն:

ՄԻ

ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆԻ
Ի ՆԿԱՆ ԲԵՐԴԻ ՊԱՇԱՐԵԱԼ Ի ԲՈՒՂԱՑԻ[1]

(ԹՈՓՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ, Գ. բ.)

Ինքն իսկ զլխովին զօրավարն Բռնհա, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ՝ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն[2], և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատ՝ և զայլս ազգի ազգի զինու. զրաւ ունէին վազերք և սակարք, սուսերք և սուինք, տապարք և վիրգահանք[3], մեքենայք և ամրաքարք, վահանք և նիզակք: Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնս յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ[4], եդեալ ի պարսատիկ մեքենայից. և զհուրն առ ընթեր նմին հնարաւորեալ, արկանել զամրոցսն: Եւ որք մերձ առ պարսպօքն զճակատն վառէին[5] և զմարտն գրգռէին, զգեստն ինքեանց յատուկից կապեալ, զոր ի զօրութիւն թիկանց ուժոյ բազկաց ճնշեալ և մածուցեալ ընդ միմեանց գնրբութիւն մազոյն՝ թաղ[6] կոչեցին. զոր ի ջուր եդեալ՝ ծանր իբրեւ

1. Ծանօթ մի յանգրիթագոյն նեղչաց Հայոց. երբ պաշարեց Նկան բերդն Արծրունեաց, Աշոտ պարըսպաց վրայէն գիտեր զպաշարողսն:
2. Պարսից, ըստ Ս. Գրոց:
3. Մեծ քարեր նետող զորձիք, ինչպես Catapulte. իսկ ազրաքարերն, փոքր քարեր:
4. Շուտ բռնկող իւղային նիւթիք, որ սովորաբար Յունական հուր կոչուի, չիշխուս մէջ դրուած:
5. Ամենայն չանքով և հնարքով բերդը պաշարէին:
6. Թաւրքերէն Քէչէ, Feutre.

զպաւնդ. զայն գինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանեն զպատերազմն. աներկիւղ մնալով ի հրոյն սաչորմանէ. և զերիվարսն և զհեծեալս նոցա՝ գինեալ սպառազինօք չանչապահս[1] ձիոցն, և տաչաս[2] գաւակացն, և զանգապանս[3] ի չորս կողմանս ձգեալ, և լանջացն զէն. և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնաւորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս[4], և մահիկս լուսնաձեւս ի մէջ ճակատուն կապեալ, և գնիւս երիվարացն երկաթապատ պնդեալ. այլ և սատի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գոգեալ[5] ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձեւ վահանի, զգործ արուեստի գինուն ցուցանեն: Եւ ինքեանք արկեալ զրահ զանձամբ, և սաղաւարտ ի գլուխ եդեալ, բազպանս ի ձեռն արկեալ, զանգապանս ի վերայ բարձին պընդեալ, օդ ոսիկն կօշկաձեւ արուեստաւորեալ. վահան ի թիկունս եդեալ, սուսեր ընդ մէջ ածեալ, նիզակ ի ձեռին ունելով, կապարճս և աղեղունս պատրաստականս՝ զառաջեաւ ի նիւսն ունելով[6], և զարդս ոսկեզարդս, արծաթագործս, և կամարս ընդ մէջ ածեալ. դրօշս և վերջաւորս փողփողեալս, սաւառնաձայն հնչմամբ զլեառն թնդեցուցանէին. նշանս կանգնեալ, և փողք և քնարք հնչէին և թմբուկքն դափէին. և արեւն ի վերայ հասեալ լուսազարդէն զարդուն, և մերկ սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգակնայինս յինքեանց ձգէին չուրջ

1–2–3. Ձիոց կզակին պահպանակ, նոյնպէս կրծանակի վարի կողմին այլ՝ տաչտի (թ. թէքնէ, Bassin) ձեւով զրահք. ծանկերէն վեր վար ալ չորս կողմէն ծածկոց:

4. Ձիոց տակ այլ (որոց գոփրատալով գեհինը զարնելուն փըընկալ կ'ըսէ), զանգակատարդ մանեակ անցուցած:

5. Ձիոյն փորն այլ պատեր են վահանի ձեւով երկու կողմէն մէջը փորուած տախտակներով:

6. Նետերու կապարճը կռնակնին կախած:

պերամբն: Քաջքն խիզախէին, սաղարքն կանչէին, նահատակքն գոչէին. զառամս ճակատուն կարգեցին պատրաստեցին: Զայս ասաց Եսայի միով բանիւ[1]. «Ելեմացիք, ասէ, առեալ վկապարձս, հեծեալ յերիվարս»: Եւ գունդք ճակատելոցն ելին կացին մօտ առ քաջն մեր Աշոտ և ընտիր զօրավարն Հայոց, առ մեծն իշխանաց. և յայնչափ և առաւել քան զայն կազմութեան սպառազէն պատրաստութեանն, սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասբոյր իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ, և որք ընդ նմա էին գունդք ազգաց, և նոցին զօրաց, ըստ առնմս ազգաց ի բնիկ նախարարացն Վասպուրական տէրութեանս:

Իսկ իշխանն ելեալ կայր ի վերայ պարսպին, նագելով և սիգալով, իբրեւ զկորիւն առիւծու ձեռն, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փակեալ չուրջ զնովաւ. զի կարծէր եւս համախորհ և միագործ զնիզակակիցսն իւր զօրսն և զօրագլուխս, զգունդ ազատացն՝ որ մտեալ էին ընդ նմա յանձաւն[2] Եկաւնի. բայց նոքա եւս քան զեւս սաստկացուցանէին զմարտն:

1. Ուրեմն Եսայեայ մէկ խօսքը՝ Թովմաս այսչափ ընդարձակեց, ձիոյն և ձիաւորին զրահն ու զէնքերը վայելչապես նկարագրելով. և գրեթէ վախ ձգելով, ինչ որ անշուշտ ինքն այլ երբեմն զգացեր է, այդպիսի սպառազինեալ արթացի գունդ մի տեսնելով: Բայց իր մեծագոյն ճարտարութիւնն այն է՝ որ այնպիսի ահել զինուած զօրքերն՝ ոչ այնքան ահարկու՝ արքան ահաբեկ ցուցընէ՝ իր համազգի քաջ իշխանին՝ Աշոտի առջեւ:

2. Վասպուրականի Թոռնաւան գաւառի մէջ քարաբերդ մի, հիմայ անծանօթ:

ՄԸ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՏՈՎՄԵԱՆՑ[1]

(ՅՈՎՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍ)

Էին ի նոցանէ այլ եւս արք եօթն, որոյ անուն գլխաւորի նոցա՝ Աւտոմ Ճանաչիւր, ի գաւառէ Աղբակայ՝ յԱրմիրանս գեղէ: Եւ վասն զի զուարթագին երեսօք էին և գեղեցկադիտակք, և աչքն զակաւ ի գէն չարժել, ոչ գնոսա ընդ այլսն սրով կատարէին, զի գեռ եւս ակն ունէին գոնեայ գնոսա յիւրեանցն թերեւս արկանել խորխորատ կորստեան: Եւ բազում պարգեւս բարեաց նոցա և գանձս ոսկւոյ և արծաթոյ առաքի արկանէին. այլ և գիւղս և գերդաստանս տալ խոստանային, և երեւելի և փառաւորս ի զրան արքունի առնել:

Իսկ երանելիքն ամենեւին բնաւին իսկ անհաւան միտս նոցա յայնմիկ ցուցեալ, իբրեւ նահատակք քաջք՝ նորոգեալ լինէին ի խոստովանութեան իւրեանց, զՔրիստոս՝ ըստ պրեցելուին՝ համարեալ իւրեանց կեանս, և զմեռանելն՝ չահ: Ապա յայնմ հետէ եւս առաւել սաստկացեալ լինէր բարկութիւն բռնաւորին ի վերայ նոցա. զանն տանջանարանս զնոքօք հրամայէր հեղուլ, և արկանել զնոսա յամենայն չարչարանս և բախմունս կտրանաց, զոր ոչ լեզու բաւական լինի պատմել, և ոչ գրով բովանդակել: Սակայն յոյն աւետեաց և սէրն Քրիստոսի, և ուրախութիւն վկայութեանն՝ թեթեւացուցանէր նոցա զանհնարին ծանրութիւն բեռանցն: Վասն որոյ ծանուցեալ բռնաւորին զանհրապոյր միտս սրբոցն, հրամայէ զնոսա զփայտէ կախել:

1. Առնք նահատակուած են նախընթաց Յօգուածին մէջ յիշեալ Բուղայի առեն:

Եւ մինչդեռ ըստ կերպարանաց խաչի կախեալ կային, ուժգին պաղատանօք սուրբն Աւտոմ քաջալերութիւն ընկերացն մատուցանէր. Մի, ասէ, զարհուրիք, եղբարք, յառաժամանակեայ մահուանէս, զի թէպէտ և չարչարիմք վասն Քրիստոսի, հաղորդութիւն ունիմք ընդ Աստուծոյ կենդանւոյ: Եւ ապա յերկինս՝ փոխանակ աչացն զերկրէորդս իւր ամբարձեալ՝ ասէ. Յիսուս Քրիստոս, յոյս իմ, ուխտաւոր գոլով իմ յայսմիկ ուրբն տարեկանի մեծի նահատակին Գէորգայ՝ նոխազ պատարագ[1] և վասն փառաց անուան քո, և արդ՝ այսուհետեւ զիս ինքն քեզ փոխանակ նոխազի մատուցանեմ. ընկալ զողջակիզութիւն անձին իմոյ՝ որ ընդունիչ ես պատարագաց, և խառնեա զիս և որք ընդ իս են՝ ի թիւ վկայից քոց սրբոց, որք սիրեցին զօր երեւելոյ գալստեան քո: Եւ այսպէս առհասարակ նոքա ըմբերեալ մեծի պատերազմին՝ բազում երկայնմտութեամբ, և յաղթեալ ամենայնի՝ աւանդեցին զհոգիս իւրեանց, և ընկալան ի Քրիստոսէ զպսակն անեղծութեան: Իսկ ժողովք քրիստոնէից թէպէտ և վշտանային սակս սաստիկ սրոյն կոտորման զսուրբսն Աստուծոյ, սակայն գովեստ մեծ կատարէր նոցա Քրիստոս ի ձեռն վկայիցն:

Կատարեցան ամենայն սուրբքս որ առաքի և զկնի՝ յերիք հարիւրորդի երկրորդի թուականութեանս Փորգոմայ (853), ընդ ամենայն աւելի քան զհարիւր յիսուն այր. թող զայնոսիկ որք յայլ գաւառս և ի քաղաքս եղեն վկայք. որոց և անուանք նոցա գրեալ են ի դպրութիւն կենաց: Բայց մեծ հայրապետն Յովհաննէս[2] օր առհմանեալ յիշատակի ամենայն Սրբոցս այսօրիկ, տարեւորական

1. Անչուշտ մատաղ մ'ընել փափագեր էր ի տօնէ Ս. Գէորգայ Զօրավարին:
2. Յովհաննէս Ե կաթողիկոսն, 852–54:

պատուով տօնէին զսուրբ կատարումն, ի մեհեկի ամենան՝ որ օր քան և հինգ էր ամսոյն, ի փառս ամենակալին Աստուծոյ:

ՄԹ

ՍՄԲԱՏ ԻՇԽԱՆ
ՄՈԿԱՑ ԱԶԱՏԻ ԶԳԵՐԵԱԼՍՆ Ի ԲՈՒԴԱՅԻ

(ԹՈՎՄ. ԱՐԾՐՈՒՆԻ, Գ. ք.)

Սմբատ բագրատունի՝ զոր վերագոյնն յիշեցաք, Մոկաց իշխեցող, քանզի յոյժ սիրեցեալ եղեւ ի զօրավարէն[1], և առաւել քան զամենայն մեծամեծս ընդունէր պարգեւս և պատիւս, անհանդուրժելի լեալ անցիցն անցելոց, և մեծաւ տրտմութեամբ հաչէր և հառաչէր յոգի իւր. և ելեալ արտաքոյ բանակին յորդառատ հեղոյր արտասուս ի վերայ բեկման իշխանին (Աշոտոյ) և այլոց նախարարացն. բայց ոչ ինչ ձեռնհաս լինէր օգնել նոցա, վասն դառն հրամանի ամբարիշտ թագաւորին. այրէր և խորովէր ի սիրտ իւր՝ ի ծածուկ՝ ընդ աւեր աշխարհին, և ընդ անողորմ չարչարանս զերելոցն ի թշնամեացն:

Յայնժամ համարձակեալ եմուտ յատեան բռնաւորին. և եկաց առաջի զօրավարին՝ աներկիւղ համարձակութեամբ՝ առանց պատկառանաց, և ասէ. Որովհետեւ գոլ չնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի՝ զիս նախամեծար և մեծարգի ցուցեր, և լուան ամենեքեան զառնելն քո ընդ իս, մի ընդունայն և դատարկ լիցի սիրելութիւն քո առ իս.

1. Ի Բուղայէ:

զի և որք յոյժ ատեցողքն են մեր և թշնամիքն, տեսցեն և յամօթ լիցին. և բարեկամքն և սիրելիքն յոյժ ուրախ եղիցին:

Իսկ զօրավարն խոստացաւ երդմամբ տալ նմա զինչ և խնդրիցէ, մինչեւ հաւաստար իւրոյ տէրութեանն բարձակից և պատուակից կացուսցէ: Ինքն նա անփոյթ արարեալ զերկրաւոր մեծութիւնս՝ զի անցաւոր է, անապատ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոյ՝ խընդրեաց՝ պարգեւաց առիթ լինել. Տո՛ւր ինձ, ասէ, ի գերելոց այսի՝ որչափ և կամք քո հրամայեացեն: Անդէն փութիով և անյապաղ երագութեամբ հրամանեաւ, զի որ ոք և հաճոյ թուիցի Սմբատայ, մի ոք իշխեսցէ արգել լինել: Եւ ետ նմա սուրհանդակս, և մեկնաղէնս և սակրաւորս և կափաւորս[1]. զի ըստ կամաց նորա հանցէ ի բանակէ անտի զգերիս վաստուրականի: Եւ առեալ զնոսա անցուցանէր յիւրաքանչիւր սահմանս բնակութեան, ինքնին ընդհետ նոցա ելանելով, որպէս կիւրեղ արքայ Պարսից զհետ գաթձելոցն ի գերութենէն Բաբելոնի՝ ած եհան զժողովուրդն յերկիր իւր:

ՄԺ

ԱՊՈՒՄԿԴԻՄԻ
ՏԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՌ ԳՈՒՐԳԷՆ ԱՐԾՐՈՒՆԻ[2]

(ԹՈՎՄԱ. ԱՐԾՐՈՒՆԻ, Գ. դ.)

Տէր Ապումկդեմ և որք ընդ նմա պահէին ընդպահպանութիւն գիշերոյն, և դիտէին զդիտաւո-

1. Կափել նայն ինչ է որ կոփել, ուժով զարնել. կափաւոր ուժով զարնելու զէնք կամ գործիք ունող:
2. Արծրունեաց ցեղին պայազատ կամ զլխաւոր

թիւն զօրացն, և զեռ եւս հեծեալ կայր ի նիւս երիվարին, փութացան ի բանակն. և հրաման ետ զինել վառել ի գէն և ի զարդ և ի սուր. և զընտիրս երիվարացն յիւրեանց գէնսն պատրաստել: Եւ ինքն շտապէր տագնապէր փութացուցանէր ռազմ բոլորել, կարգել կազմել զճակատն, պատրաստել ի պատերազմ. և նժոյգսն[1] իւր մատոյց նմա զընտիր երիվարն. և հեծեալ փութացաւ պնդեցաւ գհետ Գուրգինի: Եւ մօտ եղեալ՝ մերկեաց զսուսերն և զասղաւարտն և զվրայհան՝ զոր արկեալ էր զանձամբ[2]. և ազդակեալ գկնի նորա, զի թերեւս ի լուր ձայնին և ի փայլուման պինուցն և ի չոզալ սուսերին, և ի խնդիւն քաջ երիվարին, և ի վազս երագութեանն ուժոյ, ազդ լինիցի, և դարձցի ի կորստական ճանապարհէն, յոր դիմեալ երթայր անկանել ի ժանիս արիւնարբու գազանացն: Եւ եղեւ զի ամբարձ զաչս իւր և ետես[3] զի պնդեալ գայր հեծեալն գկնի նորա, և ծանեաւ թէ գուժկան ոք է, զի սուսեր մերկ ի ձեռին ունի, և միայն առանձին գայ գհետ մեր. և դարձեալ գերեսանակ երիվարին ընդդէմ նորա. և հասեալ ընդդէմ միմեանց՝ դարձան հասին ի բանակն իւրեանց: Եւ զօրացն քաջալերեալ՝ ընթացան յիւրաքանչիւր գէնսն. և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոյ. և հանդիսացան դումարեցան ի մի վայր, և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս. և եղեն իբրեւ զմի այր, և թէ իբրեւ զվէմ մի բլրաձեւ արձանացան կարծրացան

իշխանն, միամտութեամբ կ'երթար առ Բուղա, որ խոստմամբ խաբեր և բռներ Հայոց իշխանները: Ապուժկդեմ յետ դարձընէ զնա:

1. Նժոյգ (սուրբընթաց) ձին հոգացող և հեծցընողն:
2. Զրահները վրայէն հանելն նշանակէր՝ թէ ինքն թշնամի չէ, այլ բարեկամ:
3. Գուրգէն է նայող և տեսնողն զԱպուժկդեմ:

պնդութեամբ, անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի, և իբրեւ զպարիսպ անդամանդեայ, այնպէս եդին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աչխարհակոյտ ամբոխին, իբրեւ զքաջ հովիւ՝ ի վերայ խաչանց մեռանել յանձն առին:

Բայց ոչ միայն քաջքն Հայոց նահատակեցան ի մեծ պատերազմին, այլ և անմարմին զօրք երկնաւորք մարտակից եղեն գնդին Հայոց. զի մինչ խըռնեցաւ պատերազմն, և դէմ առ դէմ ճակատէին, յանկարծակի այր մի ի նմանութիւն լուսոյ երկն եկաց ի մէջ ռազմի ճակատուն, արկեալ զիւրեւ պատմուճան լուսակիզն՝ փայլեալ իբրեւ զարուսեակ. և յաջոյ ձեռինն ունէր սուսեր, և ի ձախոյն՝ բռնբուառ լի խնկով. և ինքն կայր հեծեալ ի վերայ սպիտակ ձիոյ, և յանէր գծուխն ընդդէմ թշնամեացն, և օդ քաղցր՝ որ արկանէր գծուխն զերեսաք նոցա. և ի սաստկանալ ծխոյն՝ զօրանային գունդքն Հայոց, և ի նուազելն՝ փոքր մի ոգի առնուին ի թշնամեացն[1]:

ՄԺԱ.

ՆԵՏԱՀԱՐ
ՍՊԱՆՈՒՄՆ ԱՇԽԵԹԻ[2] Ի ՊԱՇԱՐՄԱՆ ՏՓՂԵԱՑ

(ԹՈՎՄԱ ԱՐՏՐ. Գ. Բ.)

Հասեալ Բուղայ՝ անց ընդ մեծ գետն զոր Կուրն կոչեն. և յորձնեաւտ չարժման գարնային հոսանացն տեղի տուեալ՝ ելանել զօրուն, և բնակել

1. Պատմիչն գուցէ ոչ միայն եղածը պատմէ, այլ և ինչ որ փափագեր ըլլալ:
2. Բուղայի զօրաց կամ զօրավարաց մէկն էր, վրաց Տփղիս մայրաքաղաքը պաշարելուն առեն:

չուրջ զքաղաքաւն, և ոչ միով ուժեք կորնչել, բայց ի միոջէ ուժեմէ, որում անուն Աչխեք ճանաչէր. այլ պերճ և անուանի ի զօրուն, քաջամարտիկ. ունելով ընդ ինքեան զունդ հարուստ՝ իբրեւ յիսուն վառելոց[1] զօրաւորաց: Եւ ինքն Աչխէթ զինեալ զինքն ի գէն և յասպազէն, զոր կարծեալ ոմանց երկաթեղէն պատկեր[2] զոզես՝ զերիվարն և զհեծեալն, աչացն միայն ոչ գոլով ծածկոյթ: Եւ իբրեւ մօտ եղեւ յափն գետոյն, քարչեալ ոմն զլայնալիճն՝ նետելով ընդ դարիւն, և հարեալ նետիւ ընդ բացատն. և երասանակալ ձեռնն թուլացեալ, կրկնեալ այլ ոմն ճօճ նիզակաւն ընդ նոյն ակն, գետաւէժ արարին[3] զԱչխէթն. մինչեւ զդի նորա՝ գտելոցն յետ աւուրց ինչ, ետ Բուզա տասն հազար արծաթ. զի այնչափ պատուական էր այրն նմա:

ՄԺԲ

ԱՊՈՒ-ՄՈՒՍԷ ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆ ԵՒ ԲՈՒԶԱ

(ԹՈՎՄԱ ԱՐՏՐՈՒՆԻ, Գ. Ժ.)

Մուսէ վառեալ և զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով, խաղաց էջ ի վերայ նոցա[4], և եհար ի հարուածս մեծամեծս, և առ աւար բա-

1. Տպագիրն (Կ. Պոլսոյ, 1852), «իբրեւ ծոլ առե-» լոց »», կարդացեր է:
2. Ամէն կողմէն ըսրոլովին ծածկուած էր Աչխէթ՝ բաց ի աչքերէն, որոց վրայ զսրկաւ նետը:
3. Պաշարուելոց մէկն ծածկուած տեղ մի նստած, կ'արձակէ պղեղան նետը Աչխէթի աչքին. երբ ասոր ձեռքն թուլնալով չի կրցնար բռնել երասանակը, ուրիշ մի նիզակով զարնէ նոյն աչքին, և կուր գետոյն մէջ զլորէ Բուզայի սիրելի քաջը:
4. Ի վերայ զօրացն Բուզայի:

զում, և դարձաւ ի տեղի իւր ի բանակն իւրեանց: Ապա այնուհետեւ ոչ կարաց կալ համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր[1], այլ ետ զկէս զօրուն յոմն գլխաւոր. և նոտոյց զնա ի կողմանէ, ի հիւսիսի կողմն. և ինքն բազմութեամբ զօրաց նստաւ յարեւելից կուսէ: Եւ չինեցին ապարանս ամուրս և պարսպեցին մեծաւ զգուշութեամբ. և կանգնեցին պատնէշս, և կուտեցին քարինս, և կանգնեցին մեքենայս, և կացին ի պատրաստութեան: Եւ յետ փոքր ինչ աւուրց հրաման ետ Բուզա ելանել ի պատերազմ. և կարգեցին ճակատս, և բոլորեցին ռազմ, և գունդս գունդս յընտրելոց զօրացն՝ ըստ ազգս ազգս՝ չուրջանակի ի նեղքս փակեցին զքաղաքն. և դրօշս և նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին. կարգեցին ըստ գունդս գունդս՝ առ հինգ հարիւր այր՝ նշանակ մի: Եւ զի՞նչ մի մի թուիցեմ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպատազէն կազմութեանցն, զձիոցն և զհեծելոցն նոցա. գիտակ են այդմ արք քաջք, և որ միշտ ի պատերազմունս զդէզերումն առնեն. գումար արարեալ են, ամենայն զինուոր ի դանձարանս, ի տունս գանձուց թագաւորին, զոր բարձեալ ուղտիւք կրէին ընդ ինքեանս: Ելին ի պատերազմ, և պատերազմէցան. ըստ որում սաստկացաւ պատերազմն, և խուռն յարձակմամբ զիմեցին ի վերայ իւրեանց. և հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս, և դարձան փախստական ի բանակն իւրեանց, և մտին յապարանսն զոր չինեալ էին: Եւ լեռնային զօրքն Ապու-Մուսէի՝ զհետ մտեալ փախստէին՝ խլուցին ի լեռնէ անտի. և դարձան առնել դիակապուտ. և չոգան ի բանակատեղ իւրեանց մեծաւ յաղթութեամբ, ուրախացեալ անտրտում խնդութեամբ. և նստան պահել զպահպանութիւն:

Եւ զինի այսորիկ որ է երկրորդ հարուածք այլ-

1. Չհամարձակեցաւ թշնամւոյն զիմացը բանակիլ:

ազգեացն, դարձեալ հրաման ետ ելանել ի պա-
տերազմ. և հետամուտ հասեալ առ նոսա. և ահա
իբրեւ արք հազարք ի յընտրելոցն Աղուանից՝ պա-
տահեալ նոցա՝ հարին զնոսա, և ածին փախստեայ
ի բանակն. և ինքեանք դարձան ողջանդամ, և ոչ
մի ոք վիրաւորեցաւ, և հասեալ առ զօրավարն իւ-
րեանց մեծաւ յաղթութեամբ և բազում ասպրաւ:

Իսկ զօրավարն Բուզա կայր ի կոր կոթծանման,
ի տարակուսանս ըմբռնեալ, փղձկէր ի միտս իւր,
ցնորակոծ լինէր, հնարէր եթէ իրացն գտանել, ի
վրանայարկին փակեալ. և ոչ առնոյր զուլ և գա-
դար. և հատաւ քուն յաչաց նորա. և ոչ ոք մատ-
նէր և ելանէր առ նա զաւուրս տասն. զի եմուտ
ի սենեակն ամթաղի երեսոք. այլ և երկիւղ ոչ
սակաւ ունէր զնա. զի բազում գունդք սուսերա-
մերկաց չուրջանակի պահէին զնա:

Յայնժամ հրաման ետուն ամենայն զօրացն ելա-
նել ի պատերազմ. և ահա աղաղակ, և փողք և
քնարք, և ջնարք. և վառեալ զինու և սրոյ, ա-
մենայն պատրաստութեամբ անհուն զօրացն, մինչ
գրէ թէ ի հիմանց զետանն տապալել. և եհան
զզօրսն մինչ մերձ ի գլուխ լերինն. և ընդ նոսա
նշանս բազում, իբրեւ հազար արանց ընտրելոց,
քաջ երիվարօք. և գրէ թէ ոչ ամենեւին ուրեք
երեւեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպա-
ռազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց որ
կացեալ էին ընդ ծագս տիեզերաց: Զօրոյ սաստիկ
և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլումն
զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ
պատրաստեցան զօրքն Տաճկաց. և ելանէին գունդք
գունդք չտապով և ճեպով մի զմիոյ կնի, և ամե-
նայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ նե-
րքադրեալ լինէր. և նոսքա[1] անդ ի բացեայ ի

1. Այս ահաւոր պատրաստութիւնը և Տաճկաց գունդագունդ զօրօք ի պատերազմ ելնելը՝ տեսնալով Մուշեղ՝ որ բլրի մի վրայ նստած դիտէր, և այլն:

վերայ բլրի միոջ՝ տէր Մուշեղ, որդի սպարապե-
տին[1], և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ.
և ամբարձ զմիտս իւր ի հանդերձեալ գալուստն
Քրիստոսի, և որ յայնժամ լինին ահեղ սրտա-
մուխք և թնդիւնք և հրձգութիւնք, և արհաւիրք
մեծամեծք յերկնից և յերկրէ. և թէ գիարդ գունդք
գունդք հրեշտակաց մի զմիոյ կընի ելեւէս առնեն.
և գիարդ փայլեալ նշանն սէրուբեական ահաւոր
ճառագայթիւք, և որ ինչ այդմ հետեւին ի հան-
դերձեալ գալստեանն Քրիստոսի՝ ի վերջնում ա-
ւուրն: Յայնժամ մերկացեալ և ի բաց եղեալ զաշ-
խարհական պատրանաց զրաղումն, և էանց գնաց
ի վեր քան զերեւելիսս. և զի էր վարժեալ Ա-
ստուածաշունչ գրոց, և ընդել և ծանօթ էր ճար-
տասանական հրաշանդիցն, եդ առ այն ժամու
իմացական տեսութիւնն՝ գերգս, որոյ սկիզբն է.
«Անզրադարձի ակն սրտի նայեցող անձն իմ»; ի
միւսանգամ գալուստն, հինգ տուն ի յութերորդ
վանդէ 2:

Եւ եղեւ իբրեւ դադարեցան ի մի վայր ամե-
նայն բազմութիւն զօրացն, աւելի քան զերկու
հարիւր հազարաց. և կազմեցին ռազմ, և կարգե-
ցին ճակատ, և եռուն ձայն՝ այր առն ախոյեան
ելանել. և ահա Ապու–Մուսէ՝ որ ճանաչէր Երիցու
որդի[3], հանդէպ նոցա ել ի պատերազմ, և հան-
դիպացաւ ընդդէմ նոցա. և եղեւ իբրեւ զլուր մի
մեծ երկաթի, կամ զվէմ անդամանդեայ. և խուռն
բազմութեամբ գունդն կային մածեալ իբրեւ զմի այր:
Եւ զօրքն Տաճկաց պնդեցան և փակեցին չուրջա-

1. Սմբատայ Բագրատունեայ:

2. Բերդապահական կամ բանաստեղծական՝ քան թէ ճարտասանական, հինգ տուն ոտանաւոր 16 վանդ ասղով. ափսոս, որ չէ օրինակած Թովմաս, թերեւս այն տանն չատերուս ծանօթ ըլլալուն համար, ինչպէս Սահակաղբատայ Արբուհի Մարիամն. տես Յօդուած 201:

3. Սովորաբար այս մականունովը կոչէին զնա:

նակի ի ներքս զգունդն Աղուանից, և դիմեցին յանգուգն ի վերայ նոցա. և նոքա կային անշարժ, և ոչ եկ այլ քան զընկերս յառաջ։ Եւ մինչ նոքա կարծեցին թէ ի ձեռն նոցա մատնեցան, և նոքա կային յաղօթս, և զԱստուած կարդային օգնել նոցա. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին. և բաժեցին զճակատն և պատառեցին զաւգին, և դարձուցին ընդ զառիվայրն, և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս, որպէս յարդ ի հոզմոյ վարեալ կամ ծուխ հարեալ ի մրրկէ, այնպէս կորեան գնացին յերեսաց զօրացն Աղուանից։ Եւ դարձան կուտեցին աւար, որոց ոչ գոյր թիւ։ Բայց զի՞ մի մի իւրաքանչիւր հանդէս պատերազմաց նոցա գրեցից յականէ անուանէ. ասացից կարճառօտ և համառօտեցից զբանս. յերկարեցաւ գործ պատերազմաց սոցա իբրեւ մօտ ի ընուլ ամի միոյ. և ոչ ի միում ճակատու դարձոյց Աւպու–Մուսէ զերեսս իւր յերեսաց Ռուխայի. և որպէս պատմի՝ եղեւ թիւ պատերազմաց նոցա քսան և ութ անգամ. և հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս և ի կռիւ։

ՄԺԳ

ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԵՒ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

(ՃԱՌԸՆՏԻՐ)

Ի ժամանակին յորում Հայոց թուականն երեքհարիւր քսան և հինգ էր, առաքեալ լինի ներքինի ումն՝ անուն նորա Նիկոդեմոս, ի վաղճ կայսերէն[1] Յունաց՝ հրեշտակութեամբ՝ առ Աւոտա իշ-

1. Ա. Վասիլէն է, Մակեդոնիացի կոչուածն։

խանաց իշխան[1] ի Հայս, հանդերձ պատուոյ ընծայիւք և վայելչական պարգեւօք ազգի ազգի, բերեալս ի թագաւորէն։ Եւ հանդիպեալ լինի իշխանաց իշխանին ի գաւառին Արշարունեաց, ի Զարեհաւանի գեղջ։ Եւ կացուցեալ առաջի նորա զընծայսն՝ յայնքանուոյ մեծէ արքայէն, պատմէ միանգամայն և զհրամայեալսն բանս հանճարեղս և ախորժելիս։ Զոր ընկալեալ իշխանացն իշխանին գյոգնական պարգեւսն, զակնախտիսն և զերեւելիս, մեծարէ և զառաքեալ ներքինին՝ իբրեւ զմբաւերիմ և սպասաւոր թագաւորին. վասն զի էր այրն այն խոհեմագոյն և հանճարեղ և հաւատարիմ թագաւորին։

Եւ ի գլխաւորելն իրում զհրամանն արքունի՝ բանիւ իրագործութեամբ, սկիզբն արար պատմել իրս ինչ զարմանալիս և աքանչելիս. Ընդէմ, ասէ, պատմել քոյոյդ մեծանձնութեան՝ աստուածային իմն հրաշագործ ներգործական յայտնութիւնս, ոչ ի զրոյց նախկին ինչ գծագրելոյց, կամ ի համբաւուց ոմանց անդէն եղելոյց, այլ ինձէն եղեալ ականատես և ականջալուր նորաբանիւ հրաշից, որոյմ բոլորն այն ծովահայեաց քաղաքն թագաւորական[2] պիտաւէ[3] Հռովմայեցւոց նահանգին, սակս հաստատակաց գոլով յայտնի ի նմանէ եղեալ ի վերին տեսչութեանցն։ Եւ սկսեալ պատմեաց զաքանչելիսն եղեալս. զոր յօրինեալ ի մատենի՝ առաքէ վաղվաղակի առ ժամանակին կացեալ վարդապետն Հայոց, զոր յետոյ նշանակեցից զանունն։ Իսկ նորա յոյժ ուրախացեալ ընդ աստուածային տեսչութեանցն յայտնութիւնս, ըստ արժանի հօրն[4]

1. Որ յետոյ եղաւ առաջին թագաւոր Հայոց Բագրատունեաց։

2. Որ է աշխարհածանօթ մայրաքաղաքն Կ. Պոլիս։

3. Բուղար քաղաքն վկայէ, կամ քաղաքացիքն։

4. Վարի տողին մէջ յիշուած Հայր սեր Ս. Գր. Լուսաւորիչն։

դրուատի՝ սուղ ինչ յինքենէ կարգէ բանս գովա-
սանականս՝ մեծի մերոյ Լուսաւորչին, ոչ յինքենէ
առաւելեալ ի պատմութեանն և ոչ նուազեալ յա-
սացելոցն ի ներքինւոյն, բաց ի դոյզն ինչ բանից
յորդորակաց, զոր կարգեաց ի սկզբան պատմու-
թեանն. և է սկիզբն բանիցն այս:

«Յերկուց պատուեալ լինի խնամոյից խորհուրդք
անճառութեանն, որոց սկսանն զպատմութիւնս ինչ
իրացն եղելոց արտադրել գծագրական չարագրու-
թեամբ. ումանք գՀնագունիցն և զվաղնջուց վեր-
ծանելով զպատմողական ճառս, իսկ այլքն գներ-
կայացեալ իրս ճառելով վերակայութիւնս՝ նորոգեալ
առաւգարանին պատմութիւնս[1]: Ըստ որում և մեզ
առաջի կայ հատուցանել՝ ըստ ներկայացեալ բանի
վերակութիւնս՝ հրաշակերտս և քաւիճելիս[2]. ոչ
ըստ հեթանոսական բանաստեղծիցն պերճաբանեալ,
որոց նիւթ բաւականութեան է առաքիւն, թէ-
պէտեւ պճնայարմար բանիւք քաղցունս ճարակեն
լսողացս. իսկ մերոցս՝ սուրբ որ ի Քրիստոս հաւա-
տացելոց՝ ճշմարտութիւն՝ ամենայն ուրեք յայտնէ
զինքն սիրողաց, զանխլանալի բազմանուաճ խընդ-
դրոց, ոչ արժանաւորս գոլ խաւարեալ միտս նոցա
նկատել զիւրոյ պայծառութեանն լուսազարդու-
թիւն: Աղդ, նորոգեցէք զմիտս և զլսելիս ձեր առ
ի լսել զպարտանս աքանչելագործութեան պատմու-
թեանս, յորում վերստին փայլեն մերոյ Լուսաւոր-
չին և նախաշար վարդապետին՝ սխրագործութեան
ճառագայթք:

Ի ժամանակս Մխիթարի կայսեր[3] որդւոյ Թէո-

1. Այսչափ երկարաբանութեամբ ըսել ուզածն է,
թէ՝ պատմութիւնն մէկ մի անցելոց մէկ մ՚այլ ներ-
կայ դիպուածոց յիշատակութիւն է:

2. Քաւմնիլ սովորաբար վախնալ քաշուիլ նշա-
նակէ, բայց այս տեղ՝ չատ զարմանալ, ափշիլ:

3. Մխիթարէ Գ, Գինով կաթուածն, 842–67 ամաց
միջոց թագաւորած:

փիլէ, և մօր իւրոյ Թէոդորայի աստուածասիրի և
բարեպաշտուհւոյ, ներքինապետ ումն անուն նորա
Նիկոդիմոս, որ զմեծագոյն ստացեալ ունէր պա-
տիւ[1] պռոպռոուբեանին, գոլով իրրեւ զհայր և զա-
ռաջնորդ բոլոր սպասաւորացն՝ որք ի տան թա-
գաւորին սպասաւորէին, և ընդ ձեռամբ նորա էին
նուաճեալ առհասարակ որք ի ներքինեացն թա-
գուհւոյն. և աքանչելիս ընկալեալ պատիւս ճոխու-
թեան, առ որում և ես իսկ բնակեալ՝ սպասա-
ւորէի նորա անզուգական մեծութեան, ի մէջ ըս-
պասաւորական նահանգին[2]. որում մտերմաբար
իմն յորդորէի ի սպասաւորութեանն, ցանկացեալ
խոհեմական և հանճարեղ նորայն վարուց և կար-
գաւորութեան, առ ի գաստիարակել զչքնաղ փա-
ռաւորութիւնս ի նորայն կորովութենէն: Էր նորա
պատանեակ մի ընդոծին, ի նահանգին կոչեցեալ
Ակղաւիք[3], յորում էր այս պիղծ. ոչ փոքր ինչ
տաժանեալ, միշտ ուխտից և Սրբոց պարապեալ,
առ ի լուծումն իւրոյ վտանգաւոր պատահմանն, և
ոչ ուստեք գտեալ բժշկութիւն. հանդոյն կնոջն
այն՝ որ վատնեալ ի բազում ժամանակաց և վատ-
նեալ զինչս իւր, և ոչինչ հանդիպեալ անդորրու-
թեան, ըստ որում յաւետարանականն պատմի
ճառ: Գոլով նորա ի տեղի մի թագաւորական քա-
զաքին՝ որում անուանեալ էր Դափնի[4], յորում
եկեղեցիք երիք էին ձեռակերտեալք. անուանեալ
մին՝ Միսանական Սուրբ Երրորդութեանն, և եր-
կրորդն՝ յանուն Նախատարփաւագին և վկային
Քրիստոսի (Ստեփանոսի), և երրորդն՝ յանուն ա-
ռնենայազթ կենսաբեր քրիստոսընկալ Սուրբ Խաչին:

1. Անշուշտ Պռոպռոպերատորութեան պէտք էր
գրել:

2. Նահանգ՝ այս տեղ նշանակէ, դաս, խումբ
(ծառայից):

3. Սկլաւանիա:

4. Ծանօթ թաղ մի էր Կոստանդնուպոլսի:

Եւ ժամանեալ ներքինապետն այն զոր վերագոյն ասացաք՝ Նիկոդիմոս, և մտեալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի, յորոյ վերայ Սուրբ Երրորդութեանն կոչիւր անուն, յորում էր դիրք մի[1] մարմարիոն, պատեալ արծաթով ի հիմանէ եկեղեցւոյն, առ որմն սուրբ տաճարին. ի բազում ժամանակաց պնդեալ և աղխեալ. զոր՝ միայն նշխարս գոլ խորհրդածէին Սրբոց ոմանց, և (ոչ) ծանուցեալ անուամբ և ժամանակաւ: Եւ ի մտանելն նորա անդ և պատանին ընդ իւր, և իմ առընթեր տեառն իմոյ, իսկոյն յանկարծակի գոչեաց պատանին՝ ուժգին ազաղակելով, և չարժելեալ սաստկապէս և դողացաւ, և ի ձայն մեծ բողոք բարձեալ, ասէ. Ո՞վ մեծդ Գրիգորիոս, եկեալ ի Հայոց աշխարհէն՝ դատել զիս, հանելով ի բնակութենէս յայսմանէ. և դուն Հռիփսիմեա, եկիր ի Հայոց աշխարհէն, նեղել զիս. և դու և եւս Գայիանէ, և որ ընդ ձեզ սուրբք են, հանդերձ Սարգսիւ և Բագոսիւ, եկեալ կշտամբեք զիս: Եւ ասացեալ զայս ի լսելիս ժողովրդեանն, դիմեալ զարկաւ ի վերայ տապանին. և ժայռաքուսն[2] յոյժ լինէր ի պատանւոյն. զոր ոչ գիտացաք զինչ ոք էր[3]. և փութացեալ քահանայիցն ի բաց մաքրելոյն զոր արտաքս երեր պատանին: Եւ եկեալ ի միտս իւր պատանւոյն և եղեալ ի գթասութեան մեծի, աննկանէր առ ոտս տեառն իւրոյ Նիկոդիմոսի, ասելով. Ո՞վ աեր իմ, յաղթեցին Սուրբքն ընդդունակ աղօթիւք քո. և վկայեմ որ կան ի տապանի սոսա բժշկեցին զիս, ազատեալով ի չար այսոյն պղծոյ: Ցայնժամ առաքեաց Նիկոդիմոս զեկուցանել Ակեդիոսի պապիսային[4], որ էր վերակացու եկեղեցեացն, և իշխանութիւն ունէր բանալ և փակել զդրունս արքունի, և ասէ.

1. Տապան, դերեզման:
2. Փխրեր է, և անով այսն այլ դուրս եղեր է:
3. Պակաս բան մի կայ այս տեղ գրուածին մէջ:
4. Ակեդիոսն Պապաս, փափազ, երեց, քահանայ:

Բեր այսր զբանալիս տապանիս այսորիկ, զի ծանիցուք զինչ իցեն որ ի սմայս կայցեն: Իսկ նորա հրաժարեալ և ոչ իշխեր համարձակել, առանց հրամանի կայսերն. զեկուցանէր արքային, և ընկալեալ հրաման յարքայէն՝ բերէր զբանալին, և չան ոչ փոքր էր բանալոյ յարկեղն, և ոչ կարացին բանալ զտապանն: Ցայնժամ մատուցեալ Նիկոդիմոս՝ ըմբռնեալ խորտակէր զփականն. և բացեալ զտապանն՝ գտաք արկեղս չորս. մին էր մեծագոյն մարմարիոն, և երեքն արծաթեղէն պատկերս քանդեալս. և մատեան մի, յորում գրեալ էր. Ի մարմարիոն յարկեղն՝ այդ նշխարք Սրբոյն Գրիգորի է, Լուսաւորչին Հայոց Մեծաց. և էր բարձր[1] նորա իրրեւ զկայլ: Եւ յերկրորդում յարկեղն կային նշխարք Սրբոյն Հռիփսիմեայ, ձեռն իւր հատեալ ի յօգուտ ածոյն, և այնքան ունէր զմօրթ ձեռինն՝ հանդերձ եղնգամբքն և մազովքն, որպէս առժամայն ի բաց հատելոյ ի բոլոր անդամոց, բայց ի թխութենէ[2] բնական մարմնոյն. և մատեան այսմ գրոյ առընթեր եդեալ ի տապանին: Եւ յերրորդում արկեղն գտաք զնշխարս Սրբոյն Գայիանեայ, և ի միւսումն այլ Սրբոցն՝ զՍարգսի և զԲագոսի, հանդերձ այլ Սրբովքն, զորս գյիշատակս նոցունց ոչ գտաք ի մատենի անդ: Եւ հանեալ արտաքս, հանդերձ բազմութեամբ ժողովելոցն, և ի ծուներ իջեալ մատուցաք երկրպագութիւն: Եւ իսկոյն ազդ արարեալ մեծի թագուհւոյն, դայ մեծաւ ուրախութեամբ յերկրպագութիւն, հանդերձ Միքայէլիս որդւով իւրով, և այլ պատուաւորօք քաղաքին: Առեալ և պատրիարքին Փոտայ[3] ընդ իւր՝ զուխտ

1. Ծունկէն վերի մասն, զոր չատ մեծահասակ մարդս յարմար գտեր են, և զոր Հակայ կոչէ:
2. Ձեռքը՝ գաստակէն վար ամբողջ գեր են, իբրեւ նոր կարուածք, բայց սեւացած:
3. Շատ ծանօթ խարտամանկ պաշտօնեայ, հեղինակ, յետոյ պատրիարք, թղթակից մեր նախապարապ հեռ:

սրբոյ եկեղեցւոյն Սոփեայ, և զօրաց չուրջանակի· հպատրագոյնս. և դիմեալ առհասարակ ամենեցուն ի հրաշալի նշխարս Սրբոցն գտելոցն, հրաշափառ նշանօք և երեւելի յայտնութեամբք. և հանդիպեալ աստուածային դանձուն մեծին մերոյ Լուսաւորչին նշխարացն և այլ Սրբոցն, զոր վերագոյն ասացաք. և ամենեքեան օրհնէին զԱմենասուրբ Երրորդութիւնն: Եւ ըստ արժանաւորութեան Սրբոցն՝ փոխեցին մեծաւ պատուով առ ի նոյն հանդիստ, ուրախութեամբ մեծաւ, ջահիւք լուցեալովք և զամպարօք բորբոքելովք, և բազում անուշահոտ բուրմամբք խնկոց. և սահմանեցին զօրն զայն ամ ըստ ամէ գյիշատակս առ ի տօնախմբել, ի նմին աւուր հաւաքեալք առ հասարակ, զի հոգեւորապէս տօնեացեն զյիշատակն նոցա »:

Եւ իրագործեցան ասացեալքս ի քառասնորդն մեծի պասեքին, ի հինգերորդումն չաբաթուն: Ի ժամանակս Տեառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի[1], և Աշոտոյ բարեպաշտի՝ կարգեցաւ տօն Սրբոցն Գրիգորի, ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն. այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Եւ ի ժամէն յայնմանէ ապաքինեալ պատանին՝ բժշկեցաւ ի ձեռն Սրբոցն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և այլ Սրբոցն՝ որք էին ընդ նմա: Վասն որոյ և մեք կատարելով զյիշատակս սրբոյ Հայրապետին մերոյ, փառաւորեցուք զմի Աստուածութիւնն և զերրեակ անձնաւորութիւնն, զի զկատարեալ բարիսն ընկալցուք. ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում վայելէ փառք և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1. Գէորգ Գ կաթողիկոս՝ թ զարու վերջին քառորդին յաջորդած է, և թուի թէ նա է՝ զայս զրուղեն այն ժամանակին վարդապետն կոչուածն, որ և սահմանած կ'ըսուի այս պիտակութիւս համար՝ Լուսաւորչի տօն մի, Մեծ պահոց հինգերորդ չաբաթի օրն:

ՄԱԴ

ԱՇՈՏ Ա· ՆԱԽՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱՒՈՐԱՑ

(ՅՈՎՀԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ)

Ինձ ասասանօր ոչ արդեօք այլ ինչ է բանս սիրելի, քան թէ դեգերիլ ի բանս գովեստից՝ որ վասն Աշոտոյ իշխանաց իշխանին են հետեւմունք: Վասն զի ի տիս հասեալ միջակութեան՝ քաջահասակ էր նա, և անձնեայ և թիկնաւէտ, և զուարթերես և մրրայօն. նկարէն իմն և նիշ արեան յաչսն ունելով, որպէս զակինթի կարմիր ի մէջ մարգարտի ծագեալ, և վայելչացեալ գեղեցկութեան ալեօք: Մեծխմաստ և քաղցրաբան, և առ կերակուրս խրախճանաց օրինաւոր: Ոչ խանդացեալ նորա ընդ լուսագոյնն, և ոչ արհամարհեալ զնըւասատագոյնն, այլ հասարակաց ի վերայ տարածէր զգեստ խնամոց իւրոց. և լծակօք իմն կշռէր՝ նախ զիւր և ապա զամենեցուն կենցաղս. միանգամայն իսկ ասել, եթէ որ ինչ մարդկութեանս է պիտանի՝ ոչ ինչ կասեցուցանէր[1]:

Զայսպիսի ապա տեսեալ քաջատհմիկ պերճութիւն՝ իշխանացն և նախարարացն Հայոց, խորհուրդ միաբանական առեալ՝ թագաւորեցուցանել զնա ի վերայ ինքեանց. զեկուցանեն ամիրապարսին՝ ի ձեռն ոստիկանին Ցիսէի՝ որդւոյն Շեհայ. զոր և սիրալիր սրտիւ զարժանահայց խնդիրն ընկալեալ, առաքէ ապա Աշոտոյ՝ թագ թագաւորական. զոր և բերեալ իսկ ոստիկանին Ցիսէի, ընդ

1. Այս ամենայն քնաղնական նկարագիր և գովեստք՝ քաղուած են Թոբճեանցեայ ըսածներէն՝ հին Հայոց քանի մի նշանաւոր անձանց վերայ, որոց մէջ վիպասանիկ զրուցոյ հեռք կան:

նմին և այլ եւս զգեստս թագաւորականս, և պարգեւս և պատիւս, և երիվարս օդապարիկս, դինուք և զարդուք, մատուցանէին առաջի նորա: Կոչեցաւ ապա անդ և մեծ հայրապետն Գէորգ, և զհոգեւոր օրհնութեանցն գովութիւնս ստուածային ի վերայ կատարեալ, փոխանակ օծման սրուակի իւղոյն[1], պսակեն զնա թագաւոր ի վերայ Աղթամարայ աղին:

Եւ այնուհետեւ բազում և երեւելի կարգս յարդարէր յաչխարհն տէրութեան իւրոյ, յօրինուածս տանց, ագռաց, քաղաքաց, չինից, դաստակերտաց, և հարթ հաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր կարգս՝ լեռնականաց և ջերմահովիտ բարեխառն դաշտականաց: Եւ զամենայն ատփարակ տեղիս՝ ագարակս և դումս դնէր, և զմարմանդս՝ յայգիս և ի բուրաստանս զարդարէր. և զամենայն որ ինչ օրէն է թագաւորութեան, և որ ինչ ի թագաւորութեան և որ չուրջ զթագաւորութեամբ, ոչ ինչ իւիք կասեցուցանէր. և զրեթէ հարստագոյն և խոհեմագոյն քան զամենայն թագաւորութիւնս գտաներ: Եւ այսպէս ի նորոգատուր թագաւորութեանն բարձրացուցանէր զազգս Թորգոմեան:

Եւ ապա ձեռն գհիւսիսական կողմամբք արկեալ՝ ի ծործորս մեծի լերինն Կովկասու, որ ի հովիտս և ի ձորս երկայնագոգս բնակեալք էին ազգք՝ ընդ իւրեաւ հնազանդեցուցանէր: Աւյլ և զաղխատոյզ բնակիչսն Գուգարաց[2], և զերկուզակուտ մարդիկ Ոյտի գաւառի՝ առ հասարակ ընդ ձեռամբ նուաճէր, ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն

1. Այս տեղ այլ յիշեցընէ Դաւթի թագաւոր օծուիլը Սամուէլ մարգարէի ձեռամբ:

2. Վրաց և Հայոց միջեւ ըլլալով՝ հաւանական չէր կարծուեր որ ինչուան այն ատեն աղխատոյզ, կապիտ, անկիրթ ճեպազած ըլլային Գուգարացիք. նոյնպէս կըրնան կարծուիլ և Ոտիացիք՝ միանգամայն ահմանակիցք Հայոց, Վրաց և Աղուանից:

մարդադաւութեան. և իբրեւ օրինաւորս և հլուս զամենեսեան կազմէր, և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր: Աւյլ և զթագաւորն եւս Եգեբացւոց[1] ի սէր միաբանութեան ընդ իւր կապակըցեալ՝ այնպէս նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդիութեան սակի գոլով, մտերմաբար պարտաւորեաց միշտ նմա ի ծառայութիւն բերել: Աւյլ և մեծ կայսրն Յունաց Բարսեղ[2] ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան և հաճութեան և սիրոյ հաստատէր ընդ արքային մերոյ Աշոտոյ, որպի սիրելի զնա անուանելով, և հազուագիւտ կացուցանելով յամենայն թագաւորութիւնս թագաւորութեան իւրոյ: Եւ այսպէս ապա լցեալ և կատարեալ լինէր բովանդակաբար բոլոր կարգս առաքինի գործոց, ըստ կարգի այնց պարծանաց՝ զորս ընկալեալն էր[3]:

ՄԺԵ

ՄԱՐԻԱՄ ՍԻՒՆԵԱՑ ՏԻԿԻՆ ԵՒ ՆԱՆԱ ՄԵԿՆԻՋ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ[4]

Աւյր ումն սարկաւագապետ գոլով՝ Ղեւոնդ[5] անուանեալ, յոյժ հմուտ և վարժ ասորի դպրութեան, ատացող բոլորիցն առաքինութեան, պարկեշտ վարուք, մաքուր առ ամենայն մարմնական հեշտութիւնս, աղբիւրաբար ընկալեալ զչնորհս վարդապետութեան ի Հոգւոյն Սրբոյ, ուղղափառ

1. Այժմու Ջերքէզաց նախնիքն:

2. Վասիլ Ա. 869–886:

3. Թէ և հայերէն լեզուն լաւ, բայց բոլոր գրուածն ուռած մեծաբանութիւն է:

4. Այս գլոց թարգմանչին և գրողին Յիշատակարանն է Յօդուածս:

5. Որ է Յովհաննէս:

հաւատոյն որ ի Քրիստոս. որ և յանդիմանեալ զոմն եռեփիկոս, զայր պերճաբան և իմաստասէր, վանեալ հալածական առնէր յաշխարհէս Հայաստանեայց, որ երբեմն խոտորնակս ուսուցանէր, յերկուս բաժանելով զՔրիստոսի զանբաժանելի միաւորութիւնն, որ յետ անքակ և անշփոթ միաւորութեանն: Եւ հաստատէ վերստին զնոյն ուղղափառ որ ի Քրիստոս գաւանութիւնն, մի յերկուց բնութեանց խոստովանել, զաստուածականն՝ բնութեամբ, իսկ զնուաստականն՝ կամաւոր յանձնառութեամբ: Զսա թախանձեալ մեծին Բագարատոյ, որ ի տանէն Բագրատունեաց, որ յոյժ բարձրագոյն ստացաւ զանուն, որ և Պետ իշխանաց երբեմն ի բարբարոս ազգէն Հագարացւոց անուանեալ, որպէս թէ այնու զնա առաւել պատուի արժանաւոր վարկուցեալ, զորոյ և զանցս անցիցն՝ յիւրում տեղոջ փոքր ինչ յիշատակեսցուք:

Եւ զինչ իցէ արդեօք օրինակ խնդրոյն. — Ստանալ նմա զՄեկնութիւն սրբոյ աւետարանին Յովհաննու. որոյ փոյթ ի մտի եդեալ՝ վաղվաղակի ի ձեռն ուժգին պահոց և աղօթից, չան ոչ փոքր յանձին բերէ՝ շրջագայութեամբ երից ամաց, յածեալ ընդ անապատս երկրին Միջագետաց, ուր և յատայր իսկ զգիւտ գրոց ուղղափառ վարդապետացն. և հանդիպեալ խնդրոյն առաջնորդութեամբ վերին խնամոցն, չարագրէ համառօտաբար ի բազմաց հաւաքելով՝ մի ըստ միոջէ ոճով զմեկնութիւն Յոհաննեան սրբոյ աւետարանին. փոխաբերելով յատորի լեզուէն ի հագարական լեզուն:

Իսկ յորժամ ըմբռնեալ լինէր ի հագարական ազգէն՝ մեծն և երեւելին այն իշխանն Հայոց՝[1] վեհամիտն, որ և զբովանդակ յանձին բերէր ուսանել զգիտութիւն որ ի Քրիստոս հաւատոցն. որ և նախանձ ոչ փոքրագոյն վառն Քրիստոսի միշտ յանձին կրէր՝ կշտամբել և յանդիմանել զհերձուածո-

1. Բագարատն վերոյիշեալ:

զացն գաստ. ոչ ինչ արուեստիւն քաջութեան այնուհետեւ իւրոյ մեծութեանն երեւեցոյց, այլ երագապէս ի վայր հոլովեալ յաստուածային հաւատոցն՝ զոր ունէր, զլորեցաւ ի վիհ անկանգնելի կորըստեան. և ի բաց ընկենուլ զդրոշմ ուխտի հնմանրիտ հաւատոցն՝ սուգ անհնարին բոլոր աշխարհիս Հայաստանեայց հասուցանէր. թէպէտ և հրեշտակացաւ ի լսելիս մեր՝, ի խորութեան սրտին հաստատուն պահելով զհնմարիտ հաւատոցս գաւանութիւնն[2]:

Յայնմ ժամանակի ի ձեռն պատահման իմն՝ գանձ գրոյս հասեալ լինի առ տէր Յովբատ Բագրատունի. զոր ընկալեալ խնդութեամբ մեծաւ՝ հրամայէ փութով ի հագարացւոցն[3] ի հայկական վերարերել լեզու, ոչինչ ներելով իմոյ տկարութեանս: Այլ զոր մեծն այն հաւատարն կատարեալ յարհեստս և ի մակացութիւնս՝ այնքան չան յանձին բերելով տարժանեցաւ, ո՛վ ոք ոչ գիմս աղարտեցէ յանդգնութիւն, մտաբերել անգամ յայսքան բարձրագոյն խորհուրդ. զորոյ և ոչ զաւաքինութիւն առնն՝ պարտ է որ յետ այնորիկ գործեցաւ՝ անյիշատակ թողուլ. այլ իբր ի նկարագրի փոքր ինչ ցուցանել զնորայն ճգնութիւն. ոչ իբրեւ ներբողելով զրուտել, զի և ոչ բազմութիւն յոյժ իմաստասիրաց ի մի վայր գումարելոց՝ կարող են բան ըստ նորա արժանաւորութեան հատուցանել հանդիսի. այլ միայն գոյն ինչ բանիւք պատմութեանս թելադրել առ ի գիտութիւն լսողացդ:

1. Թէպէտ և մեր ակընկիլն աւետիս տուին, կամ հաճոյ եղաւ լսել՝ թէ, և այլն:

2. Բագարատ Արաբացւոց ամիրապետէն սահպուած հաւանի դրօքւանց անոր կրօնից, բայց ի սրտին պահէ զքրիստոնէութիւն: Սակայն այդ բաւական չէ հաւատարիմ քրիստոնեի:

3. Այսինքն, յ'արաբերէն լեզուէ. փափագելի էր որ թարգմանիչս՝ յայտներ իր անունը:

Սա ըմբռնեալ եղեւ ի մերում իսկ ժամանակի՝ ի հագարական ազգացն, վասն նախանձու որ ի նմանէ բազմափայլ վարդապետութեանն և ներհակս միշտ առագրելոյն, դնի ի բանդ, հանդերձ որդւովք իւրովք. որովք բազում անգամ բանս հրապուրականս առաջի արկեալ՝ հանդերձ յոգնաձան պարգեւօք, ոչինչ խոնարհեցոյց զանխոնարհելի խորհուրդս մտացն որ ի Քրիստոս: Դարձեալ յայլ տեսակ հնարից բերեալք լինէին, սպառնմամբ բանիից և կապանաց և պէսպէս տանջանաց, այլ ոչ զանգիտեալ երբէք զիջանէր ի բարձրագոյն հաւատոցն որ ի Քրիստոս. և մնացեալ ի բանդի անդ բազում ժամանակս, ոչ միայն զինքն ամրողջ պահելով յամբիծ հաւատսն, այլ և բազմաց լինի առիթ փրկութեան, անդրկեզաբար միշտ պահելով զարգելանաւորսն ի բանդին, ուսուցանելով և հաստատելով ի հաւատս Աւետաւորը Երրորդութեանն:

Եւ յետ այսորիկ այսպէս եղելոյ, հասեալ լինի դանձ զրոյս այսորիկ առ Մարեմ բագրատունի Սիւնեաց տիկին, ի ձեռն Աչոտոյ Հօր իւրոյ[1] մեծ և երեւելի տեառն Բագրատունւոյ՝ իշխանաց իշխանի: Իսկ երանուհւոյս Սիւնեաց տիկնոջ փոյթ ի մտի եդեալ՝ վաղվաղակի հրամայեաց երկիցս անգամ փոխադրել ի հայկական լեզու, առաջնորդութեամբ վերին խնամոց. յարդարել համառօտաբար զաստուածային բարձրագոյն հաւատս, վերագոյն ունելով ըստ իւրում քաղցր և յոյժ գովելի բարոյիցն. որ հաստատակաբար ունէր առ ամենայն մարդիկ՝ զինամ սիրոյ սիրելի սուրբ մտացն, մանաւանդ թէ միամիտ հաւատոցն որ ի Քրիստոս, պահպանեալ լինի ի վերին խնամոյն անվրդով առ

1. Որ յետոյ առաջին թագաւոր Հայոց՝ ի ցեղէ Բագրատունեաց, ըստ նախասրդ Յովսէփայ: Սա յառաջ քան զթագաւորելն փեսայացեալ եր իր զբաւերաց՝ Սիւնեաց և Աբծրունեաց պայազատաները:

ի յոգնականութիւն չորից ուսմերաց: Զոր ոչ պատկառիմ սիրոյ Քրիստոսի անուանել, և կենդանի վկայ, որ այնքան ժամանակս երեք յանձին ժուժկալութիւն հաւատոցն: Եւ սորա այսպիսի եղելոյ՝ մի ոք զմեզ յայսմ վայրի բամբասիցէ, իբրեւ աւելագործ ինչ, խառնելով զմերս ընդ նոցայն չան, կամեցեալ օտարացուցանել կամ ազարտել ինչ:...

Եւ վասն զի ձիւթ Հոգւոյն Սրբոյ աւարտեալ դլխաւորեցաք զաստուածախօս ճառիցս բացատրութիւն, ժամ է այսուհետեւ լուսաւորագոյնս չուրջ փայլեցուցանել զաւետաւորութեան բանս՝ առ սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի:...

Վարձատրեա[1] (ո՜վ Սուրբ եկեղեցի), և զիմոյ փանաքի չքաւորութեանս տաժանմունս՝ առ փոխարերութիւն աստուածային ճառիցս, ի խորթ բառիցն՝ ի քոց որդւոց չնորհակ փոխաբերելով լեզու. վասն որոյ ամապարեալ անհնգիտ վհերագութեամբ ընթացիւք ի մտից ասպարիսի[2] աւարտեալ զլխաւորեցի զաստուածազարդ բանիցս հանգամանս, յաւուր եկաւորութեան փեսային քո և հաստարակաց կեցուցչին՝ ի Բեթանիա[3]:... Զի ես յետին ուսումնասիրաց՝ մանաւանդ թարգմանչաց, ի ձեռն աստուածային սիրոյն ազաչեմ զքհայրապետս և զքահանայս, զձգնաւորս և զվարդապետս, միանգամայն և զբոլոր ուխտ սուրբ եկեղեցւոյ, ի վերծանել զզեղեցկազան աստուածաբանական ճառիցս բացատրութիւն, յիշեալք զիս ի դպրութիւն կենաց: Այլ և որ յօրինակ

1. Զրոցս առաջին մասը թարգմանէին եռաւ՝ երկար գովեստ մի կ'ընծէ Եկեղեցւոյ, և այսպէս վերջացընէ:

2. Իբրեւ չատ չուտ չուտ վազելով թարգմաններ է զիրքս:

3. Ծաղկազարդի առնէն քանի մ'օր առաջ գրեր է զայս:

գծագրութեան առնուցուք զաստուածախօս ճառիցս մեկնութիւն, մաղթեալիք յողորմածէն Աստուծոյ՝ ապրեցուցանել զիս ի հրահասան գեառցն ահեղ աւուրն[1] արդար հատուցմանն, յորում ըստպառնայ հուրն անշէջ՝ գունակ ինձ մեղաւորաց: Աւգ առընթեր գրեսցեն գիւիչատակս բանիցս այսոցիկ, առ ի գիշատակ իմոյ յոգնամեղ անձինս: Իսկ եթէ ոք արհամարհելով անփոյթ արասցէ, ընդ ամենեցուն նա տացէ համար ի դատաստանին, յորոց չահաւոր գիշատակաց զրկեաց զտառապամերժեալ անձն իմ ի հանդերձեալ կենացն:

Աւգ և Սմբատ բագրատունի և Մարեմ Սիւնեաց տիկին, որ զգիրս սուրբս թարգմանել հրամայեցին՝ զնոյն հայցեն, յիշել:

ՄԻՋ

ԴՈԻՆԱՑ ՍԱՍԱՆՈՒՄՆ[2]

(ՅՈՎՀԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ)

Զայսու ժամանակաւ աշագին իմն յեղակարծում ժամու սաստիկ չարժմանց եղելոց ի գիշերի՝ Դուռին քաղաքի, բազում սասանումն և սարսափումն և դղրդումն և կործանումն՝ զընակչօք քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տապալէր. վանն գի առհասարակ ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն և զապարանս գլխաւորացն, և գտունս ամ-

1. Խնդրէ թարգմանիչն որ չմոռնան իրեն համար աղօթել, որպէս զի զաստաստանին օրն ազատի զժոխոց կրակէն:

2. Ծանօթ մայրաքաղաք Հայոց՝ Դ դարուն կիսաւեր հաստատուած, զեռ անունը կրէ զեղ մի անոր աւերակաց մօտ:

կացն, իբրեւ զերիզուտ վայրս առապարաց՝[1] յայկան թօթափել տեսանիւր: Աւգ և զաստուածաչէն եկեղեցիս կաթողիկոսարանին, և զայլ եւս հաստահեղոյս վկայարանս՝ զդրդեալ քանդեալ աւերեալ ի վայր հոսէին. որ գրեթէ իբրեւ զփայտս վիմուտս զերկրակաց՝ սարսափելի տեսողացն երեւիւր: Աւգ և հեզձամղձուկ յարկածածուկ հողմաշաւալ հաղաշեղձոյց սաստկութիւն զիակոյս[2] բազմութեանն, որ կարծրագոյն քարեղէն և անկարեկիր միտս էր ստացեալ՝ յորդորէր զնա ի բազում ողբս և յարտօսրաթոր կականմունս[3]: Թողում ասել զազգակիցս և զկարեկիցս և զլծակից հարազատութիւն մարդկան, որոց կականումն և ողբումն և աշխարումն զուժից ճչոյ և կանչոյ և կառանչոյ, ազիողորմ ձայնք երգեցիկ կուսանաց և սեւազգեաց կանանց և արանց վշտահար հեծութեամբ ազացելոց, մինչեւ յերկինս բարձրացեալ հասանէր: Իսկ զրազմութիւն զիականցն՝ ոչ բաւեալ տալ զերեզմանացն, զրազումն ի վիհս և ի խորափիտս և ի դարափլակս ընկեցեալ լինէին: Եւ այսպէս ահ բարկութեանն աւհասիկ զամենեսեան առնէր, պաշարմամբ[4] զգաձեալ զմեացեալսն:

Զայսպիսի լուեալ զաստուածաստաստ բարկութիւն՝ սրբոյ առն Աստուծոյ Մաշտոցի[5], որ բնակեալն էր ի Սեւան կղզւոջ՝ բազմահանգէս ճգնութեամբ, զրեալ թուղթ առ գանեալսն[6] մեացականն, օրինակ զայս.

1. Զոր ցամաք անբոյս երկիր:

2. Հողերն վրանին թափուելով՝ խղդուէին շատ մարդիկ:

3. Եթէ մէկն քարեղէն սիրտ այլ ունենար, այս դիպուածին չէր կրնար չի լալ և չողբալ:

4. Պակուցմամբ ըսել վայէր:

5. Որ քիչ յետոյ կաթողիկոս եղաւ՝ կարճ ժամանակ մի:

6. Մահուընէ ազատած՝ բայց ծեծուածներ, վտանգուածներ, վշտացեալ և տարակուսեալ մարդիկ:

« Զհամաչխարհականդ խորտակումն՝ զոր բուռն զօրութեամբ մանրեալ ճմլեաց առաւածայինն հընձանահար՝[1] ի բարկութիւն մեզաց մերոց բազմացեալոց, գիտացի, հաւատացեալ և սիրուն տեառրք իմ և սիրելի եղբարք. զյանկարծակի հասեալդ ի վերայ զհնձանահարութիւն դառն արտասուաց, և զօրհաս անտանելի աւազանաց մահու, որ դարձոյց յողբ զխնդութիւն ձեր: Վասն զի հաւր եկեր միանգամայն, և փչրեաց զմայր[2] մարդկեղէն անտառաց. և ահա լայնութիւն ծովու և բարձրութիւնք լերանց ոչ կարացին արգելուլ զարագաթեւ հրամանն: Աւաղ դառն լուսոյ աւուրն կործանման. որ մինչդեռ ի սեղանս վայելչութեան իւրեանց՝ կեբակուրք ի բերանս էին, բերանսեացս[3] ի բարկ բաղխման անչափ աղէտիցն: Վասն զի քրին ծնողք զծնունդս իւրեանց, և տղայք աղէտիւք հրաժարեցան ի ծնողաց. գերեզմանք նոցա տունք նոցա եղեն, և ի յարկս իւրեանց իրրեւ ի դամբարանի՝ թաղեցան: Աւաղ ի վերայ չարչարեցելոցդ և ի հնձեցելոցդ առ հասարակ, հարցդ և եղբարցդ. զի թակարդսիակաց[4] Տէր զթազմութիւն ազգաց ժողովրդեան իւրոյ՝ աներեւոյթ սուսերաւ, ի միում վայրկենի ժամու վանեալ, և իրրեւ զքաւր հեղեալ ցամաքեցոյց, կամ իրրեւ զծուխ սպառեաց և աչախիլ խաւարաւ[5] զամենեսեան զմեզ ծածկեաց:

1. Իբրեւ թէ ինչպէս հնձուած քաղուած խաղող՝ ները կոխկրտուին (գինի շինելու համար), այնպէս կոխկրտուեցան ընակիչք քաղքին:

2. Մայր, անտառային ծառեր, որոց նմանցընէ մեռելոց բազմութիւնը:

3. Ուտելու առեն՝ կերակուրն բերաններէն թափեցաւ, կամ բերնի վրայ ընկան ի գետին:

4. Իբրեւ թակարդի՝ որս բռնելու գործիքի մէջ՝ բռնուեցան, և այլն:

5. Աչաց տեսութիւնը խլող, արգելող, կուրացընող:

Երանի՛ աչաց՝ որք ոչ տեսին զնոր և զանլուր դառնապարտութիւնն՝ զոր ընկալաք և հաստացաւ մեզ. զի որ երբեմն ի միասին սիրալիր խնդութեամբ խրախմոտեալք բերկրէիք ծնողօք և եղբարբք և զարմիւք և զաւակօք, հնչեցուցանել Տեառն զբարբառս օրհնութեան, այժմ անտանելի տարակուսանօք յանկարծահաս խաւարազգեաց մթութեամբք տառչորեալ, և առաւեր անդամ ոչ թողաւ մխիթարութեան, և ոչ յոյս ինչ ելից զեզ՝ փոխանորդութեան և լուծման՝ ըստ կենացս, բայց միայն Աստուծոյ եւեթ մարդասիրութիւնն: Ըստ որում և գիտէք իսկ, զի ոչ ինչ կայ հզգ Աստուծոյ՝ քան թէ զմարդկան ուղղութիւն և փրկութիւն. վասն զի մեզ մոռանամք զԱստուած և զմեզ ինքեան. այսպէս ապա ընդոստուցանէ՝ ըստ իւրում ողորմութեան և մարդասիրութեանն: Քանզի այսպէս հաւանիմ զասելն Աստուծոյ, ասեն գիրք, որով խրատէ զչարացեալ անզգամութիւնս մեր:

Դարձեալ, մի՛ զարմանայք վասն անքննելի նոցայն դատաստանաց, թէ զիա՞րդ կորուսանիցէ զարգարն ընդ ամբարշտին: Նախ և առաջին, զի ո՛չ է արդար և ոչ մի. վասն զի « Ամենեքեան խոտորեցաք ի միասին և անպիտանացաք ». ապա[1], չէ ինչ կարի չար, եթէ մահն՝ որում պարտական եմք՝ այն մեզ վրիժառար հասանիցէ[2]: Յետ այնորիկ ապա, որպէս զարեւն և զանձրեւն և զամենայն բարութիւնս՝ ի միասին վայելեն արդարք և մեղաւորք, այսպէս և զբաժակ պատուհասին ի միասին ըմպեն. իսկ իւրաքանչիւրոցն պատիւն և պատուհասն՝ առ հանդերձեալ օրն պահի:

« Արդ, վասն զի այսպէս մինչեւ ցմեզ հաստատեալ են իրաւունք Արարչին, անհաւատ վարելով առ ամենեսեան, ընկալարուք զհամայսդ որպէս

1. Սաղմոսի խօսքն է:

2. Եթէ հարկ է որ մեռնիմք, մեծ չարիք մի չէ այս կամ այն կերպով հասած մահն:

կամաւոր, որով յայտնի լիցի իմաստութեան և գիւտութեան և հաւատոյ ձերոյ հանդէս. և զպարտական գոհաբանութիւնդ ձեր մատուսջիք նմա, որ մխիթարիչն է վհատութեան սրտից, որով և բնականդ իսկ էք նորա ընտանութեամբ՝ ըստ քրիստոնական հաւատոցն, և ուղիղ վարուք և առաքինասէր և ուղղափառ կարգաւ՝ յերկիւղ Տեառն հաստատեալք: Եւ նա տացէ ձեզ հոգի մխիթարութեան և յոյս բարեաց ի սիրտ սուրբ, և բնական սիրոյնաւք լցուսցէ զձեզ զմեացեալսդ ամենայն՝ գհօտ և գհովիւ, մօտացումն առնելով ծանր և մեծ վշտացդ. և ըստ չարչարանաց ելից նոցա ի հովտէս արտմութեան, հաւասար չարչարելոց վկայիցն Քրիստոսի՝ հաչտեացի, հանգուցեալ գհոգիս նոցա ի յարկս լուսոյ. եղծանելով զձեր պարտեաց նոցա՝ զյանից և զգործոց և զմտածութեանց, և դասաւորելով ի խոստացեալ բարին, որ պահի սիրողաց իւրոց՝ որ յաւիտենից »:

ՄԺԻ

ՇԻՆՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՒ ՎԱՆԱՑ ՏԱԹԵՒՈՑ

(ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐՊԵԼԵԱՆ, խա.)

Տեսանէր ապա երանելիս այս[1] զեկեղեցին՝ նեղ և խրթին և հնացեալ ի բազում ժամանակաց, նա և ի չարժամանէ իսկ խարխալեալ. և զի անպատչաճ էր այնպիսի մեծի մայրաքաղաքի[2] և աշխարհագումար ժողովարանի սուրբ հայրապետաց նոցին՝ առանց մեծ կաթողիկէ եկեղեցւոյ լինել, վասն որոյ հանապազ մտախոհ լինէր ի սրտին և ոչինչ գտանէր հնարս. մի, զի ոչ իշխէր քակել զառաջինն սրբոցն հիմնարկեալ տաճարն. և մի՝ զի անձեռնհաս թուէր յանհուն ծախս պիտոյիցն: Ապա ի տեսլեան հրամանն առնու ի հրեշտակէ՝ զհինն ի բաց դնել և նոր առնել սկիզբն շինուածոյ եկեղեցւոյն. և այն ինչ երկրորդէր և երրորդէր տեսիլն, մինչ բնաւին հաւաստեցուցանէր հրեշտակն՝ զիրն, զի մի՛ երեւոյթ երազական ինչ կարծիցի. և իւրով մականաւ ծրագրէր[1] զտեղին, հրամայէր շինել յանուն սուրբ և գլխաւոր Աւետեացն, վիմին Պետրոսի և առաքելոյն Պօղոսի. և քալաերէր ի գործն, ասելով. Ոչ ի մարդոյ կատարի գա, այլ Տէր կամի կանգնել զդա տուն փառաց իւրոց:

Զարհուրեալ եպիսկոպոսին, ապա և զարթուցեալ ի քնոյն՝ յոլով ժամս ափշեալ լինէր: Յարուցեալ եկն ի տեղին, և ցուցանէր եղբայրութեանն՝ գծրեալն ի հրեշտակէն. ապդէ և զայս մեծի և գահերէց իշխանին Սիւնեաց՝ Աշոտոյ, եղբօր Վասակայ, որդւոյ փիլիպպէի և հօր Սմբատայ և Յահակայ և Բաբգենի, և ամուսնոյ նորա երանելի և մեծահաւատ տիկնոջն Շուշանայ. և միւս իշխանին որ ի Գեղամ[2] գաւառի լինէր, Գրիգորի Առիւծանայ՝ որդւոյ Գաբռուռայ, և Յահակայ և միւս իշխանին որ ի Բաղս՝ Զագիկ կոչեցելոյ, հօր Զեհրաւշերի. որք մեծապէս խրախուցեալ՝ աստուածային

1. Ցամէնանէս եպիսկոպոսն Սիւնեաց, որոյ ոթոռն էր ի Տաթեւ:

2. Երբեմն մեծ վանքերն մայրաքաղաք կ՚անուանին, մանաւանդ ուր որ եպիսկոպոս նստէր:

1. Հրեշտակն իր ձեռքի գաւազանով գծեր է շինուելու եկեղեցւոյն ձեւը:

2. Հիմայ Գառնի–պազար կոչուած գաւառն՝ Սեւանայ լճին արեւմտակողմը. որոյ ինքնագլուխ իշխան էր Վրիդորդ. հետեւեալ գաւառաց այլ առանձին իշխանները յիշէ. Յուխաւն, Գաբռուռ, փաղաքշական կամ դգուելու մականուններ են՝ զոր տղայոց դնեն ծնողքն:

իմն տեսչութեամբ անդր փութապէս բերեալք լինէին. և հիացեալք ընդ աքանչելի տեսիլն՝ միաբան միախորհուրդ ձեռն ի գործ արկանէին, և չանային փութապէս կատարել: Բացեալ լինէին այնուհետեւ գանձարանք նոցա, և առատապէս ծախեալ ի գործ ծննեայս չինուածոյն. բայց զվխովին իսկ մեծ իշխանն Աշոտ և եպիսկոպոսն Տէր Յովհաննէս մեծամեծ ծախիւք և աշխատութեամբ կային ի վերայ գործոյն. և ատաւածային կամակցութեամբն սկիզբն առնեն չինուածոյն, և արկանեն հիմն՝ յերեք հարիւր քառասուն և չորս թուականին Հայոց (895), ի թագաւորութեան Մվրատայ բազրատունեոյ Խոստովանողի՝ որդւոյ Աշոտայ թագաւորի, յիշխանութեան Սիւնեաց՝ Աշոտայ, որդւոյ Փիլիպպէի, ի կաթողիկոսութեանն Հայոց Տեառն Գէորգեայ Գանձեցւոյ, հրամանաւ և կամաւք Աշոտայ, ձեռամբ Տեառն Յովհաննիսի, զոր և իւր իսկ գրեալ էր ի վերայ եկեղեցւոյն այսպէս.

ՅԱՄԻՆ ՅՈՐՈՒՄ ԹՈՒԱԿԱՆՆ ՀԱՅՈՑ ՅԻԳ ԷՐ, ԵՒ ՉԱՏԻԿՆ Ի ՆԱԻԱՍԱՐԴԻ Ի ՁՈՐՍ, ԵՍ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԵՑԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ ՉԿՆԻ ՏԵԱՌՆ ՍՈՂՈՄՈՆԻ, ԱՌԱՐԻ ՍԿԻԶԲՆ ՇԻՆՈՒԱԾՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ.

Եւ այսպէս կատարեալ զեկեղեցին՝ կամար երկնանման գմբէթայարկ, ճեմարան իմն հրեշտակաց և քաւարան մարդկան, ի տաչածոյ վիմաց և ի քերածոյ քարանց, գաղատոսաչէն իմն յարմարեալ՝ ակնախտիղ տեսողաց. ի հարիւր կանգնոյ բարձրութիւն նորա[2] և ի քառասուն և ութ կանգնոյ երկայնութիւն նորա և ի քսան և չորս կանգնոյ լայնութիւն նորա. ունելով չինքեան չորս խորանս՝ բաց յաւագ խորանէն: Եւ ըստ Սաղոմոնեան յարկին և կամ Զօրաթաղեանին՝ կառուցեալ ի մէջ տանն երկուս սիւնս հրաշակերտս, զԲոոս և զՅա-

1. Աքսեսուաչէն, հարաւային գործ:
2. Գմբէթին բարձր է, բայց եկեղեցին փոքրիկ:

քոզմ[1], որք հաստահեղոյս խարսխօք և գեղեցկադիր և բարձրարձր թակարակօք[2] պարարարձեալ ունին զահագին թանձրութիւն երկնաձեղուն քարակարկառ յարկին. և այս ի խորհուրդ երկուց պետուց Աւաքելոցն՝ Պետրոսի և Պօղոսի, յորոց նշխարացս եդան ի ներքոյ սեանցս, և բազմաթիւք որոց նշխարաց անդ գումարելոց՝ առաքելոց, հայրապետաց, մարտիրոսաց, եդան ի հիմունս և յանկիւնս եկեղեցւոյն: Ահա զայս իսկ աւարտեալ զամս մեռասան, կանգնէ և մերձ եկեղեցւոյն հանդէպ դրանն հարաւոյ՝ սիւն մի զարմանալի՝ յանուն Սրբոյ Երրորդութեանն, ի մանր քարանց պատուածեալ ի չափ երեսուն կանգնոյ[3]. պարսպէ՛ և զեկեղեցին սրբաքարով. և ապա գվանան՝ կոփածոյ քարամբք: Եւ զի էր նիստ տեղւոյն անյարմար, հարթէ զթանձրութիւն գետնոյն, և գխոռութեան վայրն բարձրացուցանէ կրաչաղախ սրմովք. չինէ և գաղատանոցս գետնափոռս ի ներքոյ վանից՝ ծածուկ երկրաւ, բազում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն. և հարթեալ հաւասարեալ գվայրն՝ չինէ և սրբաչէն տրապէզս և գործատներս, համբարանոցս[4] և սրբատունս[5] և դրատունս. և ի դրան եկեղեցւոյն՝ տուն աղօթից և տեղի դամբանի իշխանաց և եպիսկոպոսաց Սիւնեաց:

Ահա զայս ամենայն կազմուած յօրինուած մեծի տանն հայրապետութեան՝ հոգացեալ և աւարտեալ, արար ցանկալի հեռաւորաց և մերձաւորաց բոլոր

1. Սաղոմոն Իմաստնոյն իր չինած տաճարին մէջ կանգնած երկու սեանց անուանքն են. մին նշանակէ Զօրաւթիւն, միւսն՝ Ուղղութիւն:
2. Սեանց գլուխն պէսպէս զարդարուն քանդակօք:
3. Աղգարիւս զարմանալի սիւն, որ հրելով չարժի և չի կարծանիր:
4. Սեղանատուն կամ սեղանի տախտակներ:
5. Սրբազան մատաններ, նշխարներ, զգեստներ պահելու տեղ:

Հայաստանս աշխարհիս. և ջահաւորեալ իբրեւ զա-
բեգակն ի մէջ ատեղաց՝ երեւելի էր ի մէջ ամե-
նայնի. ոչ միայն շինուածովք, այլ և պայծառա-
նայր քահանայական և կրօնաւորական դասուք ի
չափ հինգ հարիւր եղբարց. լի էր և ծովամտոյց
փիլիսոփայիւք[1] երաժշտական երգոց. ճոխ էր և
վարժարանն վարդապետական կրթութեամբն. նա
և արհեստաւորքն նկարչացն և գրողաց՝ անհամե-
մատք: Վասն որոյ յայսպիսի համբաւոյ հրաշա-
գեալ թագաւորք և իշխանք և եպիսկոպոսունք՝
գային ի տեսութիւն և ընծայաբերք լինէին սուրբ
և երկնահանգէտ աթոռոյն: Բայց յորժամ աւար-
տէր զշինուածն եկեղեցւոյն և այլ ձեռակերտացն՝
եպիսկոպոսն Տէր Յովհաննէս, ապա ի խնդիր լի-
նէր աշխարհախառնմամբ հանգիսի, առ ի կատարել
զնաւակատիս մեծի և ատուածաշէնի տաճարին.
կոչեն զթագաւորն Հայոց Սմբատ՝ այլովք իշխա-
նօքն, և զկաթողիկոսն Տէր Յովհաննէս[2] որ գկնի
Մաշտոցի ի Սեւան կղզւոյն յաջորդեցաւ, այլովք
եպիսկոպոսօք Հայոց. գայ և Գագիկ Վասպուրա-
կանի[3], որ և թագաւորեացն իսկ՝ իւրով եպիսկո-
պոսօք և իշխանօք և ազատօք: Գայ և Աղուանից
կաթողիկոսն Տէր Միհռն՝ իւրոյ աշխարհին եպիս-
կոպոսօք և մեծամեծ իշխանօք. ժողովին և համ-
ազգի Հայկազունն[4] իշխանքն Սիւնեաց՝ զորս յի-
շեցաք, և այլ վանականք և աշխարհականք Սի-
սական աշխարհիս. յորոց մէջի՝ արդարեւ էր ան-
սանել՝ ըստ իւրումն անսուտ հրամանին՝ զՔրիստոս,

1. Փիլիսոփայ կ՚անուանեն մեր պատմիչք վարպետ
երգեցողներ և երաժիշտներ. Ծովամտոյցն նշանակէ
այնպիսի տեղ՝ ուր բազմութիւն մարդկան մտնէ:

2. Այն է Պատմիչն, վեցերորդ ի կարգի Յովհաննէս
անուանեալ կաթողիկոսաց:

3. Կամ Աբծրունեաց, որ Սմբատայ քեռայրն էր:

4. Երկու գլխաւոր իշխանական ցեղ կար Սիւնեաց
նահանգին, որոց մէկն ընդհ Հայկազուն կոչուէր:

Հարր և Աստուածն Հոգւովն, և ամենայն երկ-
նային զօրաքն. նա և առաքելական և մարգարէ-
ական գնդիւք. և հայրապետախառնմամբ և մարգա-
բէական և մարտիրոսաշէն երամօքն. զորս և տե-
սանէր ի ցայգապաշտամանն սուրբ եպիսկոպոսն
Յովհաննէս զՊետրոս՝ և ի ձեռին բանալի երկա-
թի, և զՊօղոս՝ և ի գիրկն իւր Առաքելական գիր-
քըն. որ մտեալ յեկեղեցին պատրաստէին աթոռ
երկնաւոր թագաւորին, և տային զբանալին և զգ-
գիրքն ցեպիսկոպոսն, և ասէին. Հաճեցաւ Տէր
բնակել ի սմա. և մեք պատրաստեմք տեղի հան-
գըստեան նմա. և մեզ իսկ հրամայեցաւ ատել
մնալ մինչ ի միւսանգամ գալուստն թագաւորին
մեր. այդ բանալի արքայութեանն է, կացցէ յե-
կեղեցւոջս. զի ատ բանալոյ է դուռն գրախտին
ամենայն մեղուցելոց՝ հաւատով դիմելոցն ի սա. և
այս գիրք կացցէ ի սմին, զի ատի բղխելոց է չնորհ
վարդապետական, և ողջմիտ քարոզութիւն սուրբ
գրելեացս՝ առատ միալոց է անապակ և անխառնուրդ:

Զայս տեսեալ և զարթուցեալ մեծաւ գոհու-
թեամբ փառս ի վեր առաքէր, և ոչ ինչ յայտնէր
ումեք: Այսպ ընդ լուսանալ առաւօտուն զգեստա-
ւորեալ սուրբ հայրապետացն և ամենայն եպիսկո-
պոսացն՝ ելին ի բեմն. և կատարեալ զՀոգեւորա-
կան օրհնութիւնն՝ օծանէին աստուածազործ իւ-
ղովն. և ի յաւելն՝ «Օրհնեսցի, օծցի», ամենայն
բազմութիւնն այնքան հնչեցուցանէին զԱմէնն՝
մինչ թուէր լսողացն ահագին որոտմունք և հայթ-
մունք ամպոց հրեղինաց եկեալ. և զղրդէր երկիրն
և չարժէր վայրն. որ և այսպէս կարծեցեալ թուի
ինձ, եթէ անմարմին ձայնք խառն լինէին նոցա,
որ այնպէս ահարկու թուէր, և ոչ միայն սոսկ
մարգոյ: Եւ այսպէս կատարեալ զօրհնութիւնն՝
ութ օր նաւակատիս առնեն, ի փառս Աստուծոյ:
Եւ իւրաքանչիւր ոք զառնայ ի տեղի իւր. բայց
թագաւորն և իշխանքն Սիւնեաց՝ տեսեալ զայն-
պիսի հանդէս և զայնքան չքնազագոյն յօրինուած,

առաւելապէս սիրեն և պատուեն զեղջին, և մեծ տրօք փարթամացուցանեն, և յոյժ ընդարձակեն զսահման տեղւոյն[1]։

ՄԺԸ.

ՀԱՍԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ԴԱՒԱՃԱՆԵԼ, ԽՈՐՀԻ ԶԱՇՏՈՑ ԻՇԽԱՆ ԵՒ ԻՆՔՆ ԸՄԲՌՆԻ

(ՅՈՎՀԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ.)

Ջայսու ժամանակաւ մեծ իշխանն Արծրունեաց Աշոտ[2], որ ի բազմոցէ բուսոյ Սենեքերիմայ արքայի, եղեալ զգնայր չրջեր զկողմանքն իւրոյ տէրութեանն՝ փոքր ինչ գնդով. և հասեալ ի ձորակ մի, զոր փորակ Լաւրայ[3] անուանեն, երեկոյթս անդ առնէին յապարակի միոջ, յորում բնակէին Գաբաւոնացիք՝[4] ընդ յարկաւ չինուածի տանցն մտեալ զետեղեալ, սակս ձմերային ժամանակին։ Իսկ Հասանն Արծրունի՝ որդի Վասակայ ուրացելոյ զՔրիստոս, և հօրաքեռ որդի նոյն իշխանին Աշոտոյ, բնակութիւն կայանի իւրոյ ունէր զամրոցն անուանեալ Սևհան։ Իսկ իրրեւ լուաւ զիշխանէն յայնմիկ ձորակի[1] գոլ յիջեւանս, գաւաճանեալ ի չար դիւէ անտի, և կամաւոր կուրութիւն յինքն կրեալ, զօր ի գազանիս իմն կազմէր, սրիկայս պատրաստէր, ազեղնաւորս չերտաւորս օտեսերաւորս վահանաւաս կօրովիս, զէնս չարժեալ, և ինքն իսկ հուպ ընդ նոսին տրեխաւորեալ[2], և յեզակարծ դիմեալ չուեալ՝ ի գիշերի հասանէին ի վերայ իշխանին։ Եւ պարայածեալ պատեալ չրջափակեալ, պաշարեալ պահէին զդրունսն տանցն՝ յորում օթագայացեալն լինէր իշխանն Աշոտ իւրայովքն, ի դիպահոյ իմն զնոսա բերեալ, և ի ձեռս կարծեցեալ ըմբռնեալ։ Իսկ ապա Հասանն՝ յեգեալ ի նիզակն զօր ունէր՝ և կիցս իրրեւ զայծեամն ընկեցեալ ի տանիսն՝ յորում իշխանն կայր, վազէր. և ի սրտփական զոփմանէ ոտիցն՝ թնդեալ տանիքն և ի վայր փլուզեալ հոսեալ, անկանէր զկնի փլուզմանն Հասանն ի տուն անդ։ Իսկ ապա ի հագագաւիւռ ձայնէ խօսիցն Հասանայ՝ զնա ծանուցեալ[3], և վազվազակի ըմբռնեալ՝ ածէին զնա առ իշխանն։ Իսկ ազխատարոյզ չփոթմանն իրազգած եղեալ զօրացն Հասանայ, իրրեւ զծուխ ի մրրկէ հալածեալ և փախստեայք անհետ կորնչէին. և այսպէս զգուշն զօր և փորեաց և պեղեաց Հասանն, ի նոյն ընկղուզաւ՝ զօր և գօրծեաց[4]։

Իսկ իշխանն Աշոտ ի չղթայս կապարանի զնա արկեալ, և առեալ տարեալ զնա յամրոցն Սեւան[5], ի գուռս առ ինքն զամրոցն տալ հայցէր։ Իսկ մայրն

1. Կամ փորակի։
2. Տրեխ՝ անարգ առից ամանի է։ Թուի թէ հասարամուր կօշիկ հագած ըսել կ՚ուզէր, ինչպէս կարծել տայ և ուժով առքով զարնելով՝ տանիքը փլցընելն։
3. Թուի թէ Հասանայ ձայնն այլ՝ առից հնացած ձայնին նման՝ այլանդակ էր։
4. Սարմանի խօսքն է։
5. Սեւան կղզւոյ և ծովու մօտ չէ սա, այլ ուրիշ բերդ մի Վանայ երկրին մօտերն։

Հաստանայ և եղբայր նորուն՝ որ առ ի մօրէ և ոչ ի հօրէ, բանադրօսեալ՝ ոչ կամեցան տալ զբերդն, ոչ կարացեալ վստահ լինել ի խոստացեալ բանս իշխանին՝ վասն ողջանդամ զկապեալն Հաստան թողոյ: Ապա զգացուցեալ արքայի Սմբատայ՝ հարկ առնէր ինձ[1] երթալ յամրակ գործոյն, թերեւս կարողութիւն լիցի փակել զկորստական դուռնն՝ զոր անձամբ անձին երաց Հաստան: Իսկ իմ երթեալ չուեալ և համոզեալ զտիկինն՝ վասն զամրոցն տալոյ, և փրկելոյ զՀաստան ի մահու յերկիւղէ, և ողջանդամ զնա լուծանելէ ի կապարանէն, ընկալաւ ապա և յիշխանէն յեակար ասստիկ երդմանց, լուծանել թողուլ ողջանդամ և անվնաս զՀաստան: Իսկ ես իբրեւ առեալ եաւս զամրոցն ի ձեռն իշխանին, ապա ի նահապետական չար խորհրդոց ազատաց ումանց հրապուրեալ, փորէ (Աշոտ) զաչսն Հաստանայ, կուրացուցեալ զնա ոգիտարար՝ ի կոծոտ անձին իւրոյ. վասն զի որք երդմանց օրինաց և միջնորդաց հեռանալք և դիւրափոխիք գտանին՝ ի հակամիտութիւն հակառակացն բերեալ, այնպիսիքն մահու անձանց առիթ գտեալք, ոչ կարեն հաստատուն կեանս իւրեանց ստանալ: Իսկ իմ զաւեսարանական իշխանութիւն ի զործ արկեալ, և բանիւ սահմանականաւ կապեալ զիշխանն[2], արագաւ թախծանօք անցեալ գնացի: Ապա յետ ամի միոյ անցելոյ՝ ոգիտութիւն յանդգնութեան արկաւ իբրեւ զօձոց զբարեվայելուչ և զպատկառող և զչքնաղատեսակ գիտակաւն Աշոտոյ. և այսպէս զվախճան կենաց ընկալեալ ի սոս երիտասարդութեան, ասստիկ սուգ արտմութեան զմեօք զեղեալ յարդարէր:

1. Յովհաննէս Պատմիչ կաթողիկոսն է հաշտութեան միջնորդ գացողն:

2. Կաթողիկոսն բանադրեր է զԱշոտ՝ ըրած երդմանքին հակառակ՝ զՀաստան պատժելուն և կուրացընելուն համար:

ՄԻԹ

ՆԱՀԱՏԱԿԵԱԼՔՆ Ի ԴՈՒԻՆ ՅՈՍՏԻԿԱՆԷՆ ՅՈՒՍՓԱՅ

(ՅՈՎՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍ)

Արք ոմանք ի թշնամեացն յայնցանէ որ չուրջն կային, տեսեալ ի սրբոց անտի՝ մանուկ մի զբաթաւեսիլ և գեղեցիկ երեսօք, Միքայէլ անուն, յաշխարհէն Գուգարաց, որոյ չեւ եւս էր փաղփեալ բաղբոջեալ մրագիր բոյսք մօրուացն ընդ ծնօտսն. և իբրեւ մարդասիրել ի նա խոկացեալ՝ և բուռն հարեալ զնմանէն՝ յինքեանս կորզեալ ձգելին, զի մի ընդ այլսն և նա կորիցէ: Իսկ նա արտօսրաթոր կականմամբ զաչսն յերկինս համբարձեալ, և զօրացեալ վերին օգնականութեամբն՝ ի բաց զինքն ի նոցանէն չոպեալ ճողոպրէր. և հապճեպ առեալ և զիմագրաւ զիմեալ առ ընկերս իւր, առաջի սրոյն զգլուխն համաւորապէս մատուցանէր. և այսպէս ի բանաւոր ողջակիզումն զինքն Քրիստոսի նուիրէր, ընդ այլ եւս անարատ պատարագսն և զենմանց, ի հոտ անուշիւ Հօրն երկնաւորի:...

Էին եւս յայնժամ եղբարք երկուք ի նախնեացն Գնունեաց, որոց անուանքն միւսոն Գաւիթ և միւսոն Գուրգեն ճանաչիւր. որք և ըմբռնեալք ի գերչացն՝ ածան առաջի բռնադատի ոստիկանին: Եւ իբրեւ հարցափորձ ընդ նոսա լեալ, և զրեթէ զկնի սէրբութեանն իւրոյ տալ նոցա խոստանայր, այլ և բազում զգեստս և զարդս ոսկեճամուկս, և Ծիրանիս և երեւելի լակոնացի և բեհեզս նոցա մատուցանէր, և կամաբս և մանեակս ոսկեղէնս և նժոյգս սրափարս ձախապահոյճս՝ ի գինս և ի զարդս. և ապա զնեռս իւր ի նոսա կարկառեալ և գիրկս

զպարանոցաքն արկեալ և հուպ ընդ հուպ ի համբոյր մերձեցուցեալ զնոսա, այնպէս չոգմոգէր շոգմութեամբ բանիւ՝ հնազանդել նորայն բանի, և խնայել յարբունս մանկութեան իւրեանց, և դառնալ յօրէնս, զոր ինքն պաշտէր: Իսկ նոցա զեղեցիկ իմն մոլութեամբ ի զէն գինուորութեանն Քրիստոսի զինեալ վառեալ, համարձակաձայն բարբառով զբարւոք դաւանութիւնն քարոզէին առաջի ամենեցուն, թէ, Քրիստոնեայք եմք, և գնըշմարտութիւն Աստուծոյ՝ որ յինքն զանմահութիւն ունի և ի լոյս անմատոյց է բնակեալ՝ ոչ կամիմք փոխանակել:... Իսկ իրրեւ այսպէս զխորհուրդ նոցա ի սէր նահատակդրին Քրիստոսի արձանացեալ տեսանէր թշնամին, հրամայէր այնուհետեւ սրով զնոսա սպանանել: Իրրեւ ածան ի թէատրոնն[1] իրրեւ զոչխար ի սպանումն, ազօթս մխանձենամուխս և պաղատանս աղերսալից անդր առ Աստուած մատուցանէին, զրել զնոսա ի թիւ վկայից սրբոց, որք սիրեցին զօր երեւելոյ գալըստեան նորա: Եւ հանդերձեալ դահճացն զերէց եղբայրն կատարել սրով, նա աղաչանս նոցա մատուցանէր՝ նախ զկրտսերն քան զինքն տալ կենդանւոյ սրոյն. ի մտի եդեալ, եթէ գուցէ ի վերջ քան զնա մեալով՝ ըստ մանուկ սիրոյն՝ զարհուրեսցի ինչ յիմայէլեան սրոյն սպառնալեացն, — վասնզի մրագարդ մօրուքն ի ծնօտան դեռ եւս էր տիգեալ[2] և ընձիւղեալ. — և գարձեալ յեղբայրն կոյս՝ ասէր. « Եղբայր սիրելի, նախ դու ընծայաբերեցիր Քրիստոսի յուսոյն մերոյ, մատուցանելով զքեզ ինքն բանաւոր ողջակէզ և զենումն նուիրական նմա՝ որ վասն մեր եղեւ մեռեալ և վերագրեաց զմեզ ի կեանս »: Իսկ նորա ոչինչ գրեալ զվիշաս և ոչ ի մտի եդեալ զանհնարին մահուն տա-

1. Հրապարակ, բազմութեան առջեւ:
2. Տեսի նեաի նմանցընէ՝ երեսներէն դուրս ցըցուած նոր եւած մազերը:

գանս, յօժարութեամբ դիմեալ ի սուրն, այսպէս հատաւ գլուխ նորա, պսակեալ ի Քրիստոսէ անթառամ պսակաւն: Զկնի ապա և երէց եղբայրն՝ յետ բարւոք պատերազմին և կատարման ընթացից և պահպանութեան հաւատոյն, ի նոյն միտս զինքն վառեալ, յանդգնեալ սրոյ անաի սպանանի ի կենացս, և կենդանանալ յանտի երանութիւնս անվախճան ուրախութեանցն վերին արքայութեան: Այսպէս ամենեքեան սոքա սուրբք՝ որ առ ի յինէն պատմեցան, յիրաւի տարեւորական տօնախմբութեամբ պատուին միշտ յեկեղեցիս սրբոց. օր յիշատակի սոցա սահմանեալ մարերի ամսոյ՝ որ օր քսան և եօթն[1]:

Մի

ՆՈՅՆ ԲԱՆ ԸՍՏ ԱՍՈՂԿԱՅ

Զբազումս վասն առ Քրիստոս խոստովանութեան՝ ի հարց և ի փորձ տանջանաց արկեալ[2], Յանայր դարձուցանել ի կուրանն Մահմետի. այլ Քրիստոս՝ որ զանձինս նոցա զարձոյց ի կամս կենարարս, նոյն ինքն աստուածային հրով ջեռոյց զմիտս նոցա ի սէր սուրբ և ի հաւատս քաջութեան. որք կոխեցին զխայթոց մահու, և կատարեալք սիրով՝ առին զպսակն լուսոյ: Եւ զայլս յայլում ժամու ըմբռնեալ և մատնեալ տանջանաց. և տեսեալ զի դիմեցին վասն Քրիստոսի՝ որպէս զոչխար ի սպանդ, զմի ոմն միաբ մանկութեան ծաղկեալ՝ Միքայէլ անուն՝ յաչխարհէն Վրաստանայ, յինքեանս կորզին, զի մի ընդ այլս մեռցի, թերեւս կարասցեն պատրել խաղտանաբ[3] մեծութեան: Իսկ

1. Յայսմաւորք այլ ի մայիսի 27 նշանակեն:
2. Ոսոխականն Յունաստան:
3. Շահկալ և հարըստութիւն տալ խոստանալով՝ խաբել կ'ուզեն:

Նա արտասուալից կականամամբ զաչս իւր առ Աստուած ամբարձեալ, և զօրացուցեալ զինքն վերին օգնականութեամբ՝ զինքն ի նոցանէ ճողոպրեալ որոշէր. և դիմեալ առ ընկերսն՝ մխիթարանէր սրոյն զպարանոցն. և այսպէս կատարեցան միաբան ի հոս անուչից Աստուծոյ Հօրն։

Էին յայնժամ երկու եղբարք Գնուճիք ազգաւ՝ մեծք և պատուականք, Գուրգեն և Գաւիթ, որք ըմբռնեալք ի գահճացն՝ ածան առաջի Յուսուփայ. որոց մեծապէս երգմամբ խոստանայր տալ զկէս աէրութեան իւրոյ, այլ և զգեստս պայծառս գունակս գունակս, և մանեակս ոսկի, և նժոյգս արավարս[1] ճոխապաճոյճս. և ձեռն զպարանոցաւ արկեալ՝ համբուրէր և չոգմոգ չողոմութեամբ հրապուրէր ուրանալ զՔրիստոս։ Իսկ նոքա վառեալք աստուածային սիրով՝ համարձակ պատասխանեալ ըզքարբոք դաւանութիւնն, «թէ, Քրիստոնեայ եմք. և զլոյսն Աստուածգիտութեան՝ որ յինքն ունի զանմահութիւն, ո՛չ փոխանակեմք։ Զոր տեսեալ չարին զնոսա արձանացեալ ի սէրն Քրիստոսի, հրամայեաց սրով սպանանել։ Իսկ նոքա արտասուալից պաղատանս առ Աստուած մատուցանէին՝ խառնել զնոսա ի թիւ վկայիցն՝ որք խաչակիցեան նմա։ Եւ իրրեւ եհաս գահիճն՝ ուղղէր երէց եղբայրն նախ զկրտսեր եղբայրն զենուլ, զանգիտեալ ի մանկական տիոցն. և ասէր. «Եղբայր ցանկալի, նախ դու պատարագեա Քրիստոսի յուսոյն մերոյ՝ զենումն բանաւոր. զի նա վասն մեր եղեւ մեռեալ, և վերադրեաց զմեզ ի կեանս»։ Եւ այսպէս յաւուրեալ նորա, զկնի սպա և երէցն, պսակեցան արեամբ։ Այսպէս վկայեցան բազում վկայք ի Դուին քաղաքի, ի ձեռն անօրէնն ոսոխականին Յուսուփայ. որ զանուն իւրաքանչիւր ուրուք զրեալ է ի գպրութեան կենաց. որոց տարեւոր յոնախըմբ քառթեամբ կատարի յիշատակն ի 20 նոյեմբերի[2].

1. Վազուկ ձիեր։
2. Տես զ՚3 ծանոթութիւն 274 երեսի։

զի անխէթ հաւատով յաղթեցին խորամանկ չարին, և հաւին զոսոս մահաբեր պղտոց նորա. զի չիք ահաւոր՝ ուր սէրն հարեալ է[1]. որով վառեալ կոխեցին զմահ. և առեալ զպսակն լուսոյ՝ գոսոկարգեցան յորդիս լուսոյ վերին Երուսաղեմի։ Իսկ ոմանք խաբեալ պատրեցան ի խոստմունս չարին՝ և վրիպեալ գոսան. զի և ի մարմնի անարգեցան ի սուվ և յանարգանս, և զրկեցան ի յաւիտենական լուսոյն։

Այս է խաւարաբեր ժամանակն Հայոց։ Եւ այս Յուսուփ՝ երկրորդ Թեւդոս[2] և առաջին ապստամբ յԱմիրամուխեանցն Տաճկաց։ Յորում ժամանակի անապատ և աւերակ եղեւ երկիրս Հայոց. քաղաքաց քակել, և աւանաց աւերիլ, ցիր և ցան յայլազգեաս և յօտար ազգս բնակչաց աշխարհիս. ամայանալ եկեղեցեաց և թափուր մնալ յուխտէ պաշտօնէից և ժողովրդոց, և յամենայն բարեզարդ զարդոց անզարդացեալ եղեն։ Եւ նոյն ինքն կաթողիկոսն Տէր Յովհաննէս փախստեայ երթայ[3] յերկիրն Յունաց, ի հանգստարան և ի մենաստան Սրբոյ Լուսաւորչին մերոյ, ի լեառն որ Մանեայ այրք ասեն, ի Գարանդաղեաց գաւառին՝ ի վանս Գառնիրկայ[4]։

Զայս ամենայն տեսեալ Գագկայ Արծրունեայ[5] որ էր առաջնորդ Յուսուփի, ի գիշերի միում փախուցեալ անկանի յաչխարհն Կորդուաց. և զաչ-

1. Արդ սիրան Աստուծոյ սիրով վառուած է՝ անոր վախնալու բան չկայ։
2. Յիշեալն ի Գործս առաքելոց, Ե. 36։
3. Վերոյիշեալ Պատմիչն, որ ինքնին իսկ յիշէ զայս։
4. Անյիշ՝ Գառնոյ կ՚ըսեն, Գառնիկ ճգնաւորն է, որոյ յայտնեցաւ Լուսաւորչի մարմինն։
5. Մեծագի մեծաչէն իշխան. բայց կերպով մի մատնիչ քեռւոյն, Ա Սմբատ թագաւորի Բագրատունեոյ, որոյ սպանչէն Յուսուփայ՝ առաւ թագ առանձին Արծրունեաց թագաւոր ըլլալու։

խարհս Վասպուրականի գաղթէ յԱսորեստան, մինչեւ անցանել չար ամպրոպին. և ապա չինէ դարձեալ զաշխարհն, թագաւորեալ մասին Հայոց Վասպուրականի: Աայլ և եղբօրորդին Սմբատայ Աշոտ՝ խորհրդակից եղեալ նմին չարախորհ վիշապին՝ թագակապի ի նմանէ ի տեղի հօրեղբօր իւրոյ: Եւ այսպէս ամիրայն Յուսուփ հինգ ամ՝ յամեալ ի Հայս՝ սրով և սովով և գերութեամբ վանեաց զաշխարհս:

ՄԻԱ.

ՍՈՎ ԵՒ ՍՐԱՍՏՈՒԹԻՒՆ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱԼԱՍԱՆԱՑ ՅՈՒՍՓԱՅ

(ՅՈՎՀԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ)

Ի յափշտակութենէ թշնամեաց և յանարգիւն անպատուութեանց, ապա և սովիւ եւս ի վերայ սաստկացեալ զօրանայ ուժգնապէս: Վասն զի հուրն կայծակնացայտ որ տեղեացն ի մեզ, և սուրն անողորմ պատերազմողացն որ միշտ ի մեզ բղխէր ըզհոտ մահու, մինչեւ յեօթն ամ ձգեալ ընդերկարեցաւ. և վասն այսորիկ ՚ՌՀացեալք պանդխտեցաք ի վրանս Կեդարու[2], և թափթփեալք և ունայնացաք ի սատյուածոց և ի բոլոր պարենէ առձկաց և ի չգոյէ կերակրոց: Աապա այնուհետեւ սկիզբն առնայր սովիւ կոտորածն, և ապականէին առհասարակ Աւրարտեան աշխարհիս ծնունդք՝ ի քաղաքս և ի գիւղս և յագարակս, իբրեւ զդիակունս գունատեալս և լքեալս գանդաչէին: Եւ այլք ի փարթամաց՝ առ սակաւ սակաւ զիւրեանց սատացուածս վատնեալք ընդ աւուրն պարենի, ի վերջին անանկութիւն հասանէին և յաւէտ յաղքատութիւն և ի կարօտութիւն: Եւ կէաք՝ ի խոտաբուտ կեանս ի հարկէ սովոյն բերեալք, զմոլեխինդն և կամ զայլս ոմանս ՚ՌՀատակար բանջարս՝ ըստ դիպաց իմն ճարակեալ՝ յապականութիւն մահու հասանէին. զի վտանգ սովոյն հասարակ չարժէր ի կարօտութիւն, զամենեսեան ինչ ի կերակուր նոցա բերել: Իսկ ոմանք զսիրելի որդեակս իւրեանց՝ ընդ սակաւիկ ինչ առձկաց՝ թշնամեացն վաճառեալ ի տապնապէ վտանգին, ոչ յիշեցան նոցա ազէկոտոր խնամք ծնողականաց: Եւ կանայք պատուականք ի հարկէ կարօտութեանն՝ զքօղումն ի գլխոց մերկացեալ և զհանդերձս յանդամոց, առանց ամօթոյ ի հրապարակս ելեալ, առ տագնապին մուրացիկ շըրջէին: Եւ ոմանք ծիւրեալք և ծնգեալք և ցամաքեալք՝ ի տարակուսանս սովոյն՝ իբրեւ զմեռեալ պատկերս գանդաչէին, և թօթափեալք այր անդր սակս ՚ՌՀքորմանն և ընդ միմեանս հարեալք՝ կոտծանէին զիրեարս: Եւ այլք իբրեւ զդիակունս բազմակոյս ի հրապարակս անկեալք և լքուցեալք՝ մինչ չունէր նոցա մերձ էր յերանել, ազաչէին զանցաւորս ոմանս, զի կարկառեսցեն նոցա նչխար ինչ կոտորոյ հացի, և այնպէս զրաւէին ի կենացս: Իսկ եթէ ի մեծատանց ոք տալով ինչ տային նոցա ողորմութիւն, յետոյ յանողորմ բարս խաւարեան ընդ մուրացիկան դառնային, զի խղճէին եթէ գուցէ լինիցին և նոքա իբրեւ զնոսա: Բարձեալ էր ապա յամենեցունց ի նոցանէ սեզան ուղղել. զի ոմանք առ սաստիկ կարօտութեանն՝ զցորեանն իբրեւ չէր ազացեալ կամ թրեալ՝ ուտէին. և այլք՝ ի կրակս բանաց զազահումն յափշտակեալ ուտէին: Զարչարանաց էր կերակուրն՝ զոր թէ գտանէին երբէք, և արտասուաց արժանի՝ տարժանական և ողորմելի ճաշակքն: Գողումն և սոսկումն և սարսափումն առատանօր զիս պատեալ պաշարէ ի բանէս, որ

1. Մեկայն մեկ գրավ նշանակած ըլլալով թիւն՝ և կամ է, ոմանք հինգ ոմանք եօթն տարի համարին:
2. Ս. Գրոց խօսքը յարմարցընէ իր ազգին:

առաջի կայ ասել. զի մարդք հաւատարիմք սուրգեցին մեզ զբանս ճշմարիտս, եթէ մարք ոմանք զսովամահ որդւոց իւրեանց մարմինս՝ ի կերակուր իւրեանց պատրաստեցին. և այլք զընկերակիցս իւրեանց զաղտակծութեամբ իմն իրրեւ զոչխար ի սպանդ վարեալ՝ կերակուրս իւրեանց պատրաստէին:

Եւ այս անդր եւս քան զվրէժխնդրութիւն եբրայեցւոյն, արժանի անհնարին ողորց գործս ինձ տեսեալ լինի. վասն զի ձեռքն կանանց ողորմածաց եփեցին զմանկունս իւրեանց, և եղեւ նոցա ի կերակուր: Եւ որ ի գիրկս գրգեալք և գգուեալք էին՝ գիրկս արկեալ աղբեւաց՝ թարթափեալք թաւալէին՝ և ուտէին իրրեւ զկերակուր: Կցեցան լեզուք գիացիկ մանկանց ի քիմս իւրեանց ի ծարաւս իւրեանց, զի ոչ գոյր նոցա դիեցումն ի մարց: Ցղայք չորաբեկ հացիկ խնդրէին՝ և արտասուք ընդ ծնօտս նոցա թորէին, և ոչ ոք էր որ տայր նոցա. և այնպէս ապա պակասեալ թափեալ հանեալ զոգիս ի ծոցս մարցն իւրեանց, ընկեցեալ ցրեալ ցնդեալ կային՝ առհասարակ ծնեալքն և ծնողքն ի մէջ քաղաքաց: Այսպէս մատնեցան աճա սրդիք ժողովրդեան մերոյ յապականութիւն՝ ի յանօրէնութեանց մերոց, և ճառաքաղ եղեն ի վայրկեան ժամանակի:

ՄԻՒ

ՈՂՔՔ ՅՈՎՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԱՂԷՏՍ ԱՇԽԱՐՀԻՆ ԱՌ ՅՈՒՍՓԱԻ

Սիրա իմ տանջեալ տագնապի տարակուսանօք, և հաչեալ մաչի փոր իմ ի լալոյ. զի յանօրէնութեանց մերոց՝ այցելութիւն Տեառն անտես արար զմեզ, և ի սեւաթոյր տխրութենէ գործոց մերոց՝

խեթիւ հայեցաւ ի մեզ արեգակն ճշմարիտ, և մատնեցաք ի ձեռս ծանրասարսափ երկրորդն Փարաւոնի և դառն գործավարաց նորա, որք առաւել եւս քան զնուր կաւափաղաղ աղիւ[1] աղիւսագործութեանն՝ վերս ի վերայ եդեալ՝ կործանեցին զմեզ անհնարին հարուածովք ի վերայ հարուածոց: Վասն զի իրրեւ զմրրիկ հողմոյ չնչեալ ի մեզ մահաւէտ իմայչելեան օդն դառնաշունչ, և ըստ նմանութեան փոչւոյ պատուտաբար ցնդեալ՝ ի բաց զմեզ տարաբերեաց ի մեր բնակութենէն. և ըստ սաստկութեան ուղխից յորձանաց հեզեղեալ ողողեալ՝ արբոյց ըզհոգի յիմարութեան, առհասարակ իրրեւ զոչխար ի սպանդ զմեզ վարատեալ: Եւ արդ, սակս այսրիկ որ յիմումս չտեմարանի մտացս է տեսութիւն չարժութեան, չլացեալ և ունայնացեալ՝ ոչ բաւէ բանիւ լնուլ զնպաստս խորհրդոցն՝ ըստ զգալի ազէտից հասելոյ կալելոյ զմեզ: Սակայն զհամարձակախաօսն Եսայիա յօժանդակութիւն ինձ բերեալ, զի իմաստասիրել և ողբալ ուսուցէ զկորստեալս մերձաւոր հարուածոց բարկութեան և խրատու ողորմութեան Տեառն. «Զարթիր, ասէ, զարթիր, և արի կաց. և դիտեա ինձ ասա, Երուսաղէմ, զոր արբերն՝ զբաժակն կործանման, զբաժակն սրտմտութեան, զոր արբերն և թափեցեր, և ոչ ոք է յորդւոցն քոց՝ որ զքեզ մխիթարէ»: Եւ ըստ միւսումն, «Ակնկալեալ՝ թէ ո՞ընդ իս տրբատեսցի, և ոչ ոք գտաւ մխիթարիչ ինձ: Եւ ըստ այլումն, թէ, Ո՞վ եղիցի տրտմակից ինձ. մի թէ բեկո՞ւմն քո, կամ սաստո՞ւթիւն սուրբ և սրոյ»: Զի արդարեւ իսկ, ըստ նախագուշակ տեսողին, ոչ կարեն մխիթարել զմեզ սրդիքն մեր տարակուսեալք և զարհուրեալք և ապանդեալք, և ննջեալք ի կիրճս ամենայն ճանապարհաց: Եւ յիրաւի, ի մեզ բղխեաց այսպիսի մահաչշուկ հոտ

1. Շաղուած կաւը աղիւս չինելու համար, ինչպէս կ'ընէին Հրեայք յԵգիպտոս, Փարաւոնի բռնութեամբ:

դառնութեան. զի որովք պատուեցաքն և վայելեցաք յօրհնութիւն քաղցրութեան կամացն Աստուծոյ, ոչ ծանեաք զնա արժանապէս՝ յորմէ զբարին կթեցաք, և ոչ զոհացաք զտուողէն մխիթարութեան, որով զպարտն պահանջէր. և սակս այսորիկ ապա նաքիմք և խրատեցաք. և ապա եօթնապատիկ հատուցան մեզք մեր ի ծոցս մեր:

Սուգ առնու և ընդ մեզ մարգարէութիւնն, ասելով. Հրէաստան կոթծանեցաւ, և խոնարհեցաւ փառքն Սիոնի. վասն զի թողան միանգամայն իսկ ի խնամակալութենէ Բարձրելոյն՝ ատաուածաչէն եկեղեցիքն Քրիստոսի, իբրեւ զառագաստ յայգւոջ, և իբրեւ զհովանի մրգապահաց ի մէջ սերմանեաց. և փայտատաք և մրճաք կոթծանեցին զդրունս նորա, և հրկէզ արարին զսրբութիւն նորա, և պղծեցին զխորան անուան նորա. և ժառանգութիւն Տեառն կոխեցաւ ի գարշապարաց պղծոց, և ի խռովական երկրպիղ անցաւորաց ճանապարհի. և անբիծ արիւն կղերց եկեղեցւոյ տարապարտ հեղաւ իբրեւ զջուր՝ չուրջ զԵրուսաղէմայ. և ի տանէ առաւել քան յօտարաց բուսաւ արմատ դառնութեան: Զի կարծեցեալ սիւնք ոմանք ապստամբեցան ի Տեառնէ, և զինեալք զկռուս իւրեանց՝ նանրութեամբ և անօրէնութեամբ՝ խօսեցան խոտորնակ և թիւրս առաջի իշխանաց մերոց. և խաբեբայք և պատրիչք փոխաբերեցան ընդ արանց արդարոց և ստուգաբանից. և յաչս զօրավարաց մերոց և գլխաւոր իշխանաց՝ անարգեցան ստոյգ հաւիւք հօտի Տեառն, և ստացան հաւիւս բազումս ի գայթակղութիւն իւրեանց: Եւ սակս այսորիկ ստացաք նախատինս յարանց ստոց և անզգամաց, և եղաք ի կատականս ծաղու ազգաց՝ որք չուրջ են զմեօք. և հօտք հանդերձ հովուաւք յափշտակեցաք ի խստաց ապստամբողաց, ի գերութիւն մատնեալք և վաճառակուր լեալք: Իսկ այլք ոմանք՝ սուրբ ձեռաւք և ամբիծ սրտիւք՝ բազում՝ գանից և գելարանաց և կապանաց և խոշտանգանաց և բան-

տից և անշնարին նեղութեանց զփորձ առին. և բարձան յերեսաց անիրաւութեանց այնոցիկ՝ որք բարձրացուցին իսկ զանարգանս մոլորութեան յանձինս իւրեանց: Եւ զիակունք ծառայից Աստուծոյ՝ գէշ թռչնոց երկնից արկան, և մարմինք սրբոց Բարձրելոյն՝ ի կերակուր գազանաց առան. և ոչ ոք գտաւ որ յինքեան բերէր զնախանձ Տեառն ամենակալի, և ի բաց տարեալ տրտհէր ի տանէ Տեառն զմշական անիրաւութեան. և կամեցողք այսպիսեացս ապա յիրաւի զանարգութիւն մոլորութեան յանձինս իւրեանց կրեցին:

ՄԻԳ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ԲԱՐՁՐ ՀԱՅՍ

Իսկ իմ չուեալ գնացի ի գաւառն Դերջան. և ամսօրեայ աւուրս ինչ ի նմա գեռեղուել, թէպէտ և առ սակաւ սակաւ հրաւիրակն կոչէր սիրալիր կամօք՝ երթալ ի պալատն առ կայսր, սակայն ես ոչ կամեցայ. զմտաւ ածեալ, թէ՝ գուցէ գտցի ոք և ընդ ակամբ հայեացի, զ'անդ երթալն իմ՝ ի քաղկեդոնիտան յարակցել ինձ համարեալ. և ապա այսպէս ոչ կամեցայ գնալ ի գայթակղութիւն մտաց տկարաց[1]: Ապա ըստ ըղձակերտ իմոյ կամաց՝ չոգայ Ամյոն սուրբ, յորում և նախ իսկ սուրբ կինն Մանի[2], և ապա գնի՝ երիցս երանեալ Աւետարչին մերոյ ի նմա բնակեալ. ուր և տակաւ մարմնոյն զանմարմնոցն բերեալ յինքեան զվարս՝ յաղթեցին

1. Եւ քո միաքդ չեն ազատ ի տկարութենէ, ա՛լ բարեմոյն հայրապետ:
2. Հռիփսիմեանց ընկերն. որոյ բնակութեանն համար՝ Մանեայ այրք կոչեցաւ տեղն:

բանութեան կարեաց. և անդր քան զերամանն՝ զհանդէս առաքինութեան լցին, սրբափայլ կրօնիւք կենսականօք, և անհամեմատ երանութեանցն արժանացեալք փառաց, պարծանօք պսակեցան ի Քրիստոսէ: Ետես և անդ փոքր ինչ փորուած այրի ի ծործորս քարանձաւի միոյ, գժուարամուտ դրամբք, և անհամբոյր առ ի բնակել, սակս քարաժեռ խոշորութեանն, յորում և ահեղութեան սեղան ի նմա կանգնեալ միշտ, Քրիստոսի բնակիչոցն ի նմա նուիրականաց պատարագաց:

Զկնի ապա ահիւ սրտի չոգայ կացի ընդ քարաժեռ վիմին, յորում և լուսաւորութեանն մերոյ առիթն՝ երկօրեայ ի նմա առկացեալ՝ սպասէր կատարման Սրբոյն Գրեգորի. և անդ ամենազօր տէրութեանն Քրիստոսի երկրպագեալ՝ չոգայ ի բաբեհամ Աղբերիկին, յորմէ զովացեալ Սուրբքն լինէին ի տապոյ քրանահար երկոցն և հոգեւոր մշակութեանցն. որ և երասոյ[1] վիմօք պարփակեալ չուրջանակի և գրամբք պատեալ. և յորոյ տեղւոյ մատուռակեալն իսկ էր յարբերեալն իւր սուրբ և ամբիծ ձեռն Գրիգորի: Ի նմին տեղւոյ և ես թշուառականս՝ ասիով[2] կամօք իմովք արժանի գտայ ճաշակել ջուր՝ յաղերբէ փրկութեան նորոգողին զմեզ[3]. զորոյ և զաթոռն իսկ ընկալայ, երանի թէ և զօրինակն:

Աւուր հոգ օրհնութեան և ի փղուգեալ դարակէն, յորում պատուական զանձն հոգեւոր ի հովուաց էր ծածկեալ. յորոյ վերայ չէինեալ էր եկեղեցի՝ նախ քան զայս՝ իմով հրամանաւ, ի մահարձանաց ինչ կրով ձուլածոյ[4]: Ետես անդ ի ծործորս և յա-

1. Կարծր քարերով պատեր էին հաւատացեալք՝ զԱղբիւրը, աւսկից խմէր և Լուսաւորիչն մեր:
2. Յօրինակին ասից գրուած է:
3. Լուսաւորիչ՝ քրիստոնէութեամբ նորոգող Հայոց:
4. Այն լեռնակին զոգը՝ ուր նախ թագաւեր է Ս. Լուսաւորիչ. այն ինքն Յովհ. կաթող. եկեղեցի մի չինել աւուրս է՝ մեծ մեծ հին քարերով և կիրով հիւսած:

մուրս քարանձաւաց՝ բնակեալ արս կուսակրօնս, խարազնագգեաց, գետնախչախս, բոկագնացս, խոշորաձաչակս, մշտամաուննչ յաղօթս և յաղերսալի պաղատանս. աշակերտք արդար վաստակոց և ծնունդք առաքինութեան: Եւ սոքա ոչ թերեւս միախուռն ի միասին բնակեալք, այլ ցան և ցիր առ ատորատով լերինն կալեալ կայանս, որք և բազմաշխատ քրտամբք երկոց իւրաքանչիւր ոք զհարկաւոր պէտս մարմնոց վճարէին:

Եւ իմ ապա այսպէս ի նոցանէն օրհնեալ՝ չոգայ ի գիւղն Թորդան, ի տեղի զրօսանաց Պարտիզկաւին սրբոյն Գրիգորի, յորում գանձք իմաստութեան և անմահութեան ծածկեալ կան Աստուծոյ, կենդանի ոսկերք Սրբոցն. որք անցին ընդ կարգս աշխարհիս՝ ամենայն ճշմարտութեամբ, և յանմատոյց լուսոյն փայլեցին իրրեւ զարեգական, և հրով Հոգւոյն վառեալք ջահազարդեցան զամպատրփայլ անչէջ լուսով ի փառս Աստուծոյ: Եւ անդ երկոթթ արարեալ, և երկրպագութիւն տէրունեան հաստուցեալ. հատի նշխար ի ծառոյ անտի Հացոյ[1], զոր Սրբոյ Լուսաւորչին էր անկեալ իւրովք ձեռօքն: Եւ ապա ընդ կրունկն անդրէն ի լեռնակոզմն ի մենաստանան դարձեալ, և ամիսս իրրեւ ինն ընդ նոսին ազօթակցեալ, հրաժարեցայ ի չոզմապար չոզմագեալ բանից մերոց թագաւորացն, և դաւանանեալ[2] ի խոստմանց նոցա բարեաց՝ որ ըստ Աստուծոյ, դարձայ յերկիրս Հայոց:

1. Հացի կամ Հացենի վայրենի ծառ, Frêne ըստ Փռանկաց. բայց գեր քան զընտանի համարելի, և արգարեւ սրբենի, յորմէ՝ իբրեւ սրբազան նշխար կարեր և առեր է Պատմող կաթողիկոսն: Նիւթական նշխարեն ոչքան աւելի հնանալի է այն Մեծ անձին՝ յեւ աշխարհք մի և ազգ մի լուսաւորելոյս, զՏրդատ մկրտող և հարիւրաւոր եպիսկոպոս օծող ձեռաք՝ ծառ ու ծաղիկ դարմանելն՝ իր կենաց վերջի օրերումն:
2. Բագրատունեաց և Արծրունեաց թագաւորաց հրաւի-

ՄԻՊ

ՇԻՆՈՒԱԾՔ
ԳԱԳԿԱՅ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՐՇՐՈՒՆԻՈՑ ՅՈՍՏԱՆ[4]

(ԹՈՎՄԱ ԱՐՇՐՈՒՆԻՈՑ)

Այր արծաթասէր՝ սրով գերուլ զպարանոցն լա-
ւագոյն համարի, քան երթէ գանգ մի տուժել յար-
ծաթոյն[2]. և երթէ զարհուրելի տեսանիցէ արձակե-
լով զճառագայթսն ի խնամս ոսկեզարս, ըստ հրա-
մանի խնամողին Աստուծոյ, ընդդէմ նորա ասէ.
Ընդէ՞ր փոխանակ լուսոյդ ինձ ոսկի ոչ բղխես. և
երթէ աղբիւր անկաւճիտ տեսանիցէ, ասէ, Չեմ
ծարաւի, և ոչ երբէք արբից ի քէն ջուր. մատ՛
ինձ արծաթ[3]: Իսկ բարք անարծաթասէր գոլով
թագաւորին, զուտ և մաքուր մնալով յայսպիսի
մեծամէրս ախտէ, խնամ ածէ ոչ միայն անձին ըզ-
բօսանաց, այլ և բնաւ աշխարհիս Հայոց. տայ
զմիթերս գանձուց ի ձեռս գործավարաց և արուես-
տաւորաց, պարապաւորել ամրութեամբ զրուբս գա-
գաթնաւորս, և զանառիկ ամրոցս բերդից, ի գա-
ւառս և ի միջոցս երկրի, ի պէտս սպասուանի
փախուցելոց ի հինից և ի խռովութեանց օտար
ազգաց: Յորոց ի բազում ամրոցաց պարապելոց

բանօք և խոստմամբք՝ կամայ ակամայ յեռս գառնոյ
ուխտաշրջիկ կաթողիկոսն:

1. Ինչուան հիմայ ծանօթ աւան մ՛է վանայ ծո-
վու հարաւային եղերքը. անունն յայտնէ՝ որ չատ
հնուց այն կողմերու տիրող իշխանութեան քաղաքն
է եղած, նախ քան Արծրունեաց թագաւորելն:

2. Աւելի կ՛ընծաբէ գլխաւորել քան տասակ մի տալ:

3. Գերեզիկի իմաստաք ազահութեան դէմ, անշուշտ
հին իմաստասիրի մի խօսք է:

յիւր անուն, յերկուս տեղիս կարի իմն յայժ հա-
ճեալ նուաճէ, ակնակատոյց լինելով. մինն առ եղերք
ծովուն, որ է աւանն Ղատաւ, ի գաւառն Ալտուս-
նեաց, որ է յայժ բարեխառն, ի չորից ծագաց
երկրի օդոց առ հասարակ ի նա չնչելով. նա և
ծառովք պտղաբերովք ազարթեալ, և այգեվէտ
բազմութեամբք՝ յայժ վայելչացեալ զարդարի. բըղ-
խեն և աղբիւրք բարեխառնք չուրջ զքաղաքսն,
օգնականութիւն մատուցանելով մարդկան ի բա-
զում պէտս: Այլ և ի հարաւակողմն կուսէ ամրո-
ցին մերձ կայ բարձրաբերձ լեառնն Ղրտոս, որ ի
գարնանայինն հասարակաւորութենէն մինչեւ ցաշ-
նանայինն եղանակ՝ ամբարեալ պահէ յինքեան ըղ-
գալարութիւն արմատոց և ծաղկանց, և զձիւնա-
հօրս ամբարձեալ[1] ի պէտս թագաւորաց, և ամե-
նայնի որ ցանկացուի ոք առնուլ: Նա և ի գլխոյ
լերինն հոսեալ իջանեն գեաք սահանակարկաղք յոր-
դահոսք, որով ոռոգանի երկիրն առհասարակ. որք
և ի ծով անկանելով՝ ըղխեն ձկունս մանունս առ
ի պէտս վայելչութեան բնակչաց աշխարհին, և
ամբարեն ինչս բազումս ի գանձս թագաւորաց. զոր
և ալքայի առեալ նաւիբք ի գարմանս աղքատաց:
Եւ ինքն գագաթն ամրոցին է ծովահայեաց և յայժ
վայելուչ. երթէ չարժեսցի ծով յուզեալ ի հողմոց,
ծաղկաձեւ ալիքն զբօսացուցանողք և վայելուչք
երեւին. և երթէ մաքուր յօդոյ լինիցի, զամենեցուն
աչս գրաւէ՝ զիւրն տեսանել ծաւալումն. վասն որոյ
և արքայի ձեռն արկեալ չինէ ի նմա տաճարս և
սենեակս և փողոցս հրաշալիս, պատկերակերպս,
և ազգի ազգի յօրինուածս. զոր ոչ բաւեմ պատ-
մել: Պարապէ և զծովակողմն՝ զօրաւոր վիմօք դնե-
լով զհիմունսն յանհնարին խորութեան. չինէ և ի
գլուխ պարսպին ընդդէմ ծովուն՝ տաճար մի ճե-
մարանոց ոսկեզարդ և պէսպէս պաճուճեալ գե-
ղովք, արեգակնահրաչ ճառագայթաճեւս ի խաղը-

1. Աւելի յարմար էր ամբարեալ կարգալ:

տանս աչաց և յուրախութիւն սրտի ինքեան և իւրոց արժանեացն: Իսկ զդրունս կազմեալ կամաքաձեւս, օդաբերս, զովացուցիչս, միանգամայն և լուսանցոյցս չողախաղացս. որք ի ծագել և ի մտանել արեգականն՝ փայլատակելով ի վերայ ծովուն, չող գործեն ի սիրտս տեսարին, և յերին յերին ՀՀՀ

և պարիսպն է հրաշակերտ, աշեղակերպ բարձրաբերձ լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակաք զարգարեալ, անկիւնաւոր, խորանանման տախտակաձեւ յինքեան ունելով գահոյք զբօսանաց. յորում հանդերձ որդւովք և ազատակոյտ զօրօք՝ միշտ ուրախանայր արքայ: Իսկ և զղլուխս պարըսպին ածեալ ի կերպս գժուարամուծս քարանձաւին, ի համբոյրս միմեանց մերձեցուցանէ. ի չըրթունս խորայատակ հիմանց ծովուն՝ դնէ զբունս ահաւորատես հաստահեղոյս բեւեռապինդս. որով և զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով[1], հրաշալիս իմն ներգործեաց[2]. բազում նաւաց յո-

1. Կղզիին մէկ կողմը փորելով՝ զոգ մի բացեր և նաւահանգիստ ձեւացուցեր է:

2. Որչափ և պատմիչս մեծաբանութեամբ ստորագրած ըլլայ Գագկայ շինածները, անտարակոյս է և այն գոռող թագաւորին մեծագործութիւնն. և թերեւս ոչ պակաս քան ի ցամաքի՝ Վանայ ծովուն մէջ ըրածն, և զծովն առջինէն աւելի նաւարկելի ընելն. նշանակութեան և քննութեան արժանի է այս. վասն զի ինչուան հիմայ ծովուն հանդարտութեան առեն՝ մէջն երեւան ձեռագործք: Այս բանիս յանկարծագիւտ նշան մի կըլնայ համարուիլ՝ Գագկայ կնոջ (որ արաբերէն թագուհի բառով Մըլքէ կոչուի), զրել և կողքերը ագնիւ նիւթերով զարդարել տուած՝ հազարամեայ Աշտարաքն մի. որոյ սկզբան համաքարբառից կամարաձեւ խորանաց մէջ՝ կան նկարք նաւակաց, նաւավարաց և ծովային ձկանց և ժամակաց. մէկ կամարի մի մէջ այլ կայ արքունի նշան, Ցուղիկ մի ի մէջի երկու առիւծուց: Թողլով յարմարագոյն տեղւոյ և ժամանակի այս պատուական Աւետարանի կատարեալ ստորագրութիւնն և լուսաւորութիւնը, կ'ուզեմք միայն այդ յիշեալ նշանակաւոր խորանաց մին կամ միւսն եւս՝ ճշդիւր նմանութեամբ ներկայացընել այս գործոյս մէջ. որ և կըրնայ ճաշակ մի ընծայել՝ մեր Թ դարու վերջի կամ Ժին սկզբան ազգայնոց արուեստագիտութեան. վասն զի այդ նկարքն հայկական քնաւթիլ ունին և ոչ յունական, որ և աւելի յայտնուի Աւետարանչաց պատկերներէն և սրբիչէ մի:

բինեալ խազազ և անքոյթ նաւահանգիստ, բարձրագոյն հրաշակերտեաց քան զԱղթամարին ի Մակեդոնիա քաղաքի: Եւ որպէս ինձ թուի՝ զանցոյց գարմանալեօք զՇամիրամեան փորուածոյ սենեկաքն, և զամբարտակաւ[1] գետոյն՝ որ առ ստորոտաւ լերինն Վարագայ. զի նորայն գոնեա ի վերայ ցամաքի, իսկ սա ի մեծ[2] խորոց ծովուս առուեստակեալ, հարստահարէ զամենայն միտս և զդործս իմաստնոցն յաւազ քան զինքն եղելոց:

Եւ այնուհետեւ ժողովեալ ի դուռն արքային իշխանաց և տերանց, ազատաց և ռամկաց, եպիսկոպոսաց և կրօնաւորաց, զի ամենեքեան, օ՜ն անգր, փութապէս չինուածս և ձեռակերտս հաստատեցեն, հրաման տայցէ զի լինիցի տեղի ապաստանի ամենայն հինից ի թշնամեաց եկելոց: Եւ թագաւորն գթացեալ՝ ոչ արգելու զինդրեալ պարգեւսն. և զինի հնգից ամաց յորմէ հետէ սկսաւ շինել, պայծառացեալ բարձրացաւ շինութիւն քաղաքին առաւել քան զառաւել:

Յայնժամ և իւր իսկ արքայի ամենիմաստ հասողութեամբն, հանդերձ բազում արուեստաւորօք զլար ձարտարութեան ի ձեռն առեալ գծել, միանգամայն և գծագրել նշանակել առ ստորոտով լերինն, որ է գագաթն կղզոյն, զտեղիս զբօսանացանօղս վայելչաւորս, ըստ արժանի կայենից արքայական իւրոցն հանգստեան՝ ձգելով պարապուսս, յարդարելով զփողոցս և դարս դարս զարաստանաց, և գահս ըստ գահից տէրութեանց, և բուրաստանս և պարտէզս բուրաստանաց և ծաղկոցաց որոշեալ հովիտս. զորս վազվազակի ածեալ ի կա-

1. Խորհնացին այլ յիշէ զառանձ. բայց Թովմաս աւելի առուգապէս, ականատես անկասկած. աւելի զարմանալին է՝ որ մեր օրերում և այս իմ գրածիս առեն այլ, հետաքրքին եւրոպացիք կու գանեն այդ չէնքերու հետքեր, ով այլ ըլլայ շինողն:

2. Թերեւս ի մէջ կարդալու է:

տարումն հաստուցանէ զամենայնն. եւս և ծառայ տունկ բազում, զոր ոռոգեալ արբուցանեն ի բարեխամ և անապատ աղբերէն, որ ակնարկելովն խըն-նամողին Աստուծոյ՝ կայ ի մէջ քաղաքին։

Եւ քանզի էին ի դրան արքունի զումարեալք արուեստաւորք բազումք, արք պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրէ, որք ոչ վրիպէին առնել զոր խորհէր արքայ, այլ ըստ հրամանին վաղվաղակի և գործն առնոյր զկատարումն, ուժգնի ի նոցանէ ճարտարապետի առն իմաստնոյ և հանճարեղի՝ հրամայէ թագաւորն չինել տաճար մի քառանկիւն, քառասուն կանգնաւ ունելով զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և ի բարձրութիւնն. որոյ որմոյն լայնութիւնն երիւք մեծաքայլութեամբ չափով ունի զպարզուածսն, գունդ անապակ կրոյ և քարի, իրրեւ զվալուածս կապարի և պղնձոյ ընդ միմեանս խառնեալ. և չինեաց տաճարին ի հիմանց անտի մինչեւ ցկըլունս նորին՝ թռիչս կազմեալ, առանց սեան ունի զհաստատութիւն. և որ արդարեւ արժանի զարմանալոյ ի վեր քան զմիտս, ունի և խորանս կամարակիցս և անկիւնս և շրջապատս գեղապաճոյճս, անթիւ մատաց և անզննելի աչաց։ Ունի և զմբեթս երկնահարթս ոսկեզարդս և լուսաճաճանչս. յոր թէ նայել ոք կամիցի՝ իբր թագաւորի իմն պատիւ առնելով, նախ ի բաց առցէ զխոյր գլխոյն, և ապա տանջեալ զպարանոցն[1] հազիւ թէ նշմարել կարիցէ զզանազան գեղոցն կերպագրութիւնս։

Եւ է կարգ չինուածոյ տաճարին ահեղ իմն և զարմանալի, և այնքան բարձրագոյն և անհաս է մտաց, զոր օրինակ թէ իմաստուն ոք այր ընդ մի կարգ խորանի միոջ զբազում ժամս նայեսցի, արտաքս ելեալ՝ ոչինչ յոցոց նայիցաւն պատմել ուշ-

1. Շէնքին բարձրութիւնը նշանակել ուզէ՝ գլխոյն խոյրը վար առնել տալով, որ չընկնի և վիզը շատ չյոգնեցընէ։

մեք կարասցէ։ Վասն զի են ի նմա ոսկեզարդ գահոյք, յորս բազմեալ երեւի արքայ նազելի ճոխութեամբ, չուրջ զիւրեաւ ունելով պատանեակս լուսատեսակ՝ սպասաւորս ուրախութեան. ընդ նմին և դասս գուսանաց, և խաղս աղկանց, զարմանալոյ արժանիս. անդ են սուսերամերկաց հոյլք, և ըմբշամարտաց պատերազմունք, անդ և դասք առիւծուց և այլոց գազանաց. և անդ երամք հաւուց զարդարեալք ի պէսպէս պաճուճանս. զոր եթէ զամենայնն որ ի նմա գործք՝ ի թիւ ոք կամիցի արկանել, բազում աշխատութեան պէտք են անձինն և լռոզաց։ Եւ է փառք տաճարին ահեղ իմն և զարմանալի. եղեալ են ի նմա դրունք հաստատաձոյք մանր յօրինուածով և հրաչալի գեղեղմամբ. ի բանալն իւրեանց երկբագիկ են, օգաբերք զովացուցիչք, իսկ հուպ առ միմեանս գոլով՝ երեւին իբրեւ զմի պատկեր։

Պատմեցաւ մեզ և հաւատարիմ ասիկան մի ի գործաւորաց քաղաքին, եթէ եմուտ ի չինուած տաճարին՝ երկաթ լտերս իբրեւ երկերիւր հազար. և հաւատապէս ճշմարտութեամբ նուազեաց պատմէն՝ քան թէ առատութեամբն յաւելեաց ի բազումս։ Իսկ և նիստ փառաց տաճարին՝ յամենայն կողմանց գաւառին՝ ի մէջ քաղաքին երեւի իբրեւ զմեծ մի բլուր, ոչ ինչ նուազեալ բարձրութեամբ քան զքարանձաւ ծայր կղզոյն։ Պարսպէ անմերձենալի ամրութեամբ և գծայրս ամրոցին. և չինեալ ի նմա չտեմարանս մեծամեծս և համբարանոցս, միանգամայն և տունս գանձուց և զինուց և առպազինաց անհուն բազմութեանց։

Այլ եթէ զամենայն զգարդ չինուածոյն, զոսկեզարդ փողոցան և զգեստեղէնս թագաւորական, և զգանազան տեղիս գահոյիցն, որք առաւել այլակերպութեամբ մի քան զմի գերահրաշապէս փայլեն, և ըստ արժանեացն մանրամասնաբար գովաբանել ոք կամիցի, կարծեմ թէ յանհաւատութիւն ձկտեալ տատանի, որ և հաւանելոյ չէ կարողու-

թիւն: Բայց մեր զդիպողն և զպատչաճաւորն՝ որքան է կարողութիւն՝ ի լրումն ընծայիցաք զեղեցիկ քոյոցդ ախորժակաց, ո՛վ քաջազգի և տան մեծի արգասաւոր և նախնական մեծ:...

Քանզի ճարտարապետ արուեստիւ էր Մաւնուհէին[1], զոր ի վեր անդր ցուցաք. այր լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր, հրաշակերտէ զեկեղեցին զարմանագործ արուեստիւ. և զոր վերագոյնն ցուցաք կրօնաւորն՝ ձեռն տայ նկարագրել զքարինան ճշգրտագործ նմանահանութեամբ, սկըսեալ յԱբրահամայ և ի Գաւթէ, և մինչեւ ցՏէր մեր Յիսուս Քրիստոս, զգաստ մարգարէից և առաքելոց, յօրինեալ ըստ իւրաքանչիւր հանդիսի, զարմանագործ տեսլեամբ: Ստեղծագործեալ չոկագրէ և ի կարգս եկեղեցւոյն՝ զյոլովս երէից և զերամս հաւուց, միանգամայն և զգաստ գազանաց, խոզից և առիւծուց, ցլուց և արջոց, ընդ դէմ միմեանց զարդարեալս. զկենդանականսն նոցա յուշ առնելով զմարտ, որ է յոյժ ըղձալի իմաստնոց: Աւծեալ զմիկամբք եկեղեցւոյն և շրջապատ պարունակ մի պանծալի մանրամասն հաստատուածովք յօրինեալ, կերպագրեալ որթս խազողարերս այգեգործովք և գազանօք և սողնովք հանդերձ համակեալք. որոց և կերպարանքն այլ և այլ զանազանութեամբք ըստ

1. Մանուէլի առաջին յիշատակն չեմ գտներ ի Թովմա, բայց Աղթամարայ դիւանագիրն յիշէ այսպէս. «Հրամայեաց թագաւորն՝ ամենայն վարպետացն և կռնակաց գնասա ի գարպատն մօտ յինքն, և խոստ մեծագործաց գնասա. և գլուխ ամենայն ճարտարապետացն արուեստին՝ էր Մանուէլ կրօնաւորն, այր լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր, զարմանալի ի պատկերհանութիւն, նման Ագռէլի պատկերահանին. զոր Աբգար յուշարկեաց մօտ ի Քրիստոս. զա կարծեմ թէ աւելի էր քան զնա»: Այս քանզակաց մասն մի՝ թէ և մաշուած՝ յայտնապէս երեւի հիմայ, և հաստատէ պատմըչին ըսածները՝ Գագկայ տաճարին նկատմամբ եւս:

իւրաքանչիւր մասին առքերեն զտեսակս: Իսկ ի չորից կողմանց ի վերայ գագաթան սրբութեանցն՝ ճշգրտագործեալ զչորից աւետարանչացն պատկերս. որք և արժանաւորապէս իսկ են պսակ ուրախութեան սրբոյ եկեղեցւոյ, և վերագոյն քան զամենայն սուրբս:

Նկարագրեալ է տեառնագրելով և զիրկչական պատկերս, որ վասն մեր զգեցաւ մարմին՝ երեւելով մարդ, և է ի կամարս արեւմտական խորանին. նմանահան ճշգրտութեամբ յօրինեալ է ընդդէմ Փրկչին և զփառազարդ պատկեր արքային Գագկայ. որ մեծապարծ հաւատով բարձեալ ունի զեկեղեցին ի վերայ բազկացն, իբրեւ զսափորն ոսկի լի մանանայիւն, և իբրեւ զտուփ մի ոսկի անուշահոտութեամբ լցեալ. կայ առաջի Տեառն կերպագրեալ այնպէս, որպէս թէ զիաղութիւն խընդրեսցէ մեզայ[1]: Որ թէպէտ և մերս պատմութեանցդ իցեն բանք, սակայն թագաւորն ոչ վրիպի ի խնդրեալ պարգեւացն, յուսացեալ առ հանդերձեալ հատուցմունն:

Գարձեալ, և ի հարաւակողմ կուսէ խորանին՝ ի վերայ դրան եկեղեցւոյն յօրինեալ է տեղի գահոյից, ի բարձանց ի խոնարհ կամարաձեւ աստիճանօք զէջան ունելով, որպէս զի իցէ տեղի աղօթից թագաւորին, զուսպ և զերծ ի մարգկանէ, որով ի միտս իւր եկեալ՝ անգրաղապէս ընդ Աստուծոյ խօսեսցի:

Իսկ ի ներքուստ կողմանէ՝ զսրբութիւն սրբութեանցն հրաշալիս իմն յօրինէ նկարապատոյն գեղով, զրամբք արծաթապատօք և լի ոսկեհուռն զարդիւք, ոսկեպատ պատկերօք, և ակամբք պատուականօք, և մարգարտահիւս զարդիւք, և պէս պէս երեւելի և պայծառ սպասիւք. զոր հրաշա-

1. Այսպիսի են Բիւզանդական եկեղեցեաց մէջ՝ Փրկչին և կայսերաց պատկերքն, որոց հետեւեր են Գագկայ ճարտարապետքն եւս:

փառապէս եցոյց մեզ երկրորդ Երուսաղէմ, միանգամայն և գուռն վերին Սիոնի։

Աստանօր կատարին մարգարէութեանն նուագք, թէ, Ուրախ լեր անապատ ծարաւի. և գարձեալ, եթէ, Ցնծասցէ երկիր, և ուրախ եղիցին կղզիք բազում։

Իսկ զօր նաւակատեաց սորա դասիւք եպիսկոպոսաց և իշխանաց չքեղացուցանելով, ոչն մեծ ուրախութեան կատարէ մեծապարծ պարծանօք, յիշատակ սղգայ յազգս։ Ահա ասացաք որ ինչ յազգս սրբոյ եկեղեցւոյն։

ՄԻՋ

ՆԱԽԱԿԱՏԻՔ

ԵՒ ԹԵՄՔ Ս. ԽԱՉԻՆ ԱՂԹԱՄԱՐԱՑ[1]

Արդ ի վերոյգրեալ թուին (իբր 914 Քրիստոսի) զօր արարին նաւակատիս տաճարին, յամենայն նահանգաց Հայոց եկին ի տեսանել զհրաշագործ տաճարն. նոյնպէս եւս այլազգիք գային և զարմանային ընդ նորաքանչ արքայն՝ որ այնպէս ամրոց կառուցեալ էր։ Իսկ հայրապետ Հայոցն էր տէր Գէորգ, որ ազգակից էր Մաշտոց կաթուղիկոսին՝ որ նաեր յԱյծմիածին[2]։ Սա լուաւ գկատարած զարմանալի գործոյ արքային, և պատուեցին նմա զհրաշալի չինուածն Արրոյ Խաչին և զամրութիւն գահին Գագկայ, որ յամենայն կողմանց ծո-

1. Կարեւոր գրուած քայց համիկ, և ոչ միշտ ըստոյգ· այդ եկեղեցւոյ կոնդակն է, այսինքն, անոր չինութեանց և սպասուց յիշատակներն՝ տարեթուոց կարգաւ գրուած։

2. Այն տեն ոչ յԱյծմիածին այլ ի Դուին էր աթոռ կաթողիկոսին։

վով չրջապատեալ էր, և զբարեգործութիւն արքային։ Յայնժամ պատրաստեաց ընծայս հոգեւորապէս, եկն փութով Տէր Գէորգ կաթուղիկոս հանդերձ եպիսկոպոսօք և բազում վարդապետօք՝ ի նաւակատիս տաճարին և տեսութիւն արքային։ Իրրեւ ժամանեաց կաթուղիկոսի գունդն ի կապանն ամրոցին Ոստանայ, յառաջեաց մի ոմն յէշխանաց, եւս աւետիս արքային՝ թէ աւանիկ Սրբազան եկեալ է ի գուռն կապանին, կամի տեսանել զզարմանալի տաճարն։ Իրրեւ լուաւ արքայն՝ զարդարեաց զամենայն փողոցս ի պատիւ հայրապետին, մանաւանդ զինքն և զզօրս իւր, և վարդապետքն օրք անդ էին, նոյնպէս Տէր Եղիշէ արքեպիսկոպոսն. ապա նստան ի նաւ. և նաեւ ժամանեաց ի յամրոցն։ Ելեալ արքայն յոսկիակազմ կառսն և նստաւ ի վերայ նորա, ընդ վարդապետաց և բազմամբոխ զօրաց և ամկաց։ Յորժամ յանդիման եղեն միմեանց գունդք հայրապետին և թագաւորին, ահ ընթերցողդ և լսողդ, գու տես զբազում խոնարհութիւն արքային՝ զարմանալի և հիանալի. ի տեսանել նորա ի հեռաստանէ զգունդն հայրապետին՝ իսկոյն ի վայր իջեալ յարքայական կառացն՝ հետիոտս քայլէր. իրրեւ մերձեցան առ միմեանս՝ կալեալ արքային զերջանիկ գաշլապարն հայրապետին համբուրէր առէպ առեալ։ Ապա առեալ ընդ իւր զՀայրապետն՝ ելեալ ի կառս արքունական. իսկ գումարք վարդապետաց նուագէին զերգս շարականաց, մինչ ի յաին ծովուն՝ ի նաւն։ Դարձեալ, յորժամ մերձեցաւ նաւն՝ անառիկ կղզւոյն Աղթամարայ, իսկոյն հնչեցուցին զղանգական. զօրքն թագաւորին առեալ զսուր ի ձեռն իւրեանց՝ փայլեցուցանէին, նոյնպէս շառաչեցուցանէին զազեզունս. ճչումն և որոտումն կալաւ զերկիրն, շառաչումն, փայլատակումն. ձայնք մարդկան, նուագումն պարուց և երգոցն հիացուցանէր զմարդճային բնութիւն. այնպէս էր որ ձայնն մի աւուր կանապարհ հասանէր։ Եւ յառաձեանալ հայրա-

պետին և թագաւորին՝ հանեալ կաթուղիկոսին զգանձն անգին՝ եդ առաջի արքային. եղեւ երկրորդ ուրախութիւն. այս է գանձն անապական. զԱՆ Լուսաւորչին, զԳաւազանն և զՄիթր... Եւ զկնի սորա ազաչեաց (զ)հայրապետն՝ հանդերձ ամենայն իշխանօք, զի աստ արասցեն կաթուղիկոսարան: Եւ ապա ժողովեալ իշխանք և ամենայն ազատորդիք, և առեալ ընդ իւրեանս զՀայրապետն՝ գնացին ի պալատն արքային. զի խնդիր իշխանացն այն էր, զի զԱղթամար արասցեն գահ ամենայն Հայոց. ուստի հաւանեցուցին զարքայն Գագիկ, և հաստատեցին զՍուրբ Խաչն Աղթամարայ՝ աթոռ Լուսաւորչին[1]:

Հայրապետն և իշխանքն և թագաւորն նստան, դատաստանաւ բաժանեցին գիրկիրն. երկու մայրաքաղաք հաստուցին Աղթամարայ, Վանայ քաղաքին, Բաղէշու քաղաքին, յետ օծելոյն Տէր Եղիշէ կաթողիկոս. և ասացին. Ցետ մերոյ անցման՝ եթէ Տէր կամեսցի՝ յԷջմիածին վերստին հաստատութիւն լիցի, մի մարանչեսցին ընդ միմեանս Աղթամարցիք և Էջմիածինցիք[2]: Քանզի թագաւորն յոյժ իմաստուն էր, զամենայն բանս քննէր, գներկայն, զանցեալն և զապառնին, զամենայն խորհէր. քանզի յայնմ ժամանակի խիստ նեղէին զԷջմիածնի աթոռն՝ ազգն Պարսից: Եւ ապա հրամայեաց արքայն՝ նախ Տէր Գէորգ կաթողիկոսին. Դու բաժանեա, նոյնպէս իշխանաց: Եւ Տէր Գէորգ կաթողիկոսն սկսաւ ասել. Այս լիցի թեմ Սուրբ Խաչ աթոռին. նախ՝ Ճոռաւարկ, Նօտրզ, Աղբակ՝ մինչ ի Ճարայու բերդն, Մահնդան[3], Վանայ քաղաքն իւր նահանգով, երկու անապատներ[4], Բերկրոյ

1. Փափագ և աւանդութիւն Աղթամարեցւոց, ոչ առաւգութիւն:

2. Ցետին ժամանակի հնարուած զրոյց, երբ կայր Էջմիածնի աթոռն, և ոչ Գագկայ ժամանակ:

3. Ամենքն այլ Վանայ ծովուն հարաւակողմն են:

4. Թերեւս Լիմն և Կաուց:

գաշան իւր աթոռով, Քաջբերունեաց գաւառն՝ որ է Արձէշ իւր աթոռովն՝ որ է Մնձոփ, մինչ ի Ջիւանիձորն, Բգնուն երկիրն որ է Արծկէ, իւր աթոռովն (որ է) Սբանչելագործ, խոտոր նահանգն իւր աթոռով մինչ ի Ջրիսոր գիւղն, Գատվան մինչ հասանի ի քաղաքն Բաղէշ, Մշու երկիր մինչեւ ի Ճապաղջուր, Բազէշ իւր նահանգովն, գաւառն Աղձնեաց որ է փայտի աշխարհն, այսինքն Գատվանայ մինչ ի գայ Բերուր Աղձնիք կոչի. Հաւկոզ երկիրն, Հայոց ձորն, Ոստան, Գաւաշ, կառկառ, Եղեգիս, կեցան, Հոչրանց, Խիզան, Յերուզն, Շիրվան, Սպարկերտ, Պօհտան մինչեւ Մուսուլ, Բաղդատայի, Բարեդարեան, Շատախ, Մոկս[1]: Այսքան բաժին չնորհեցին Աղթամարայ ամենագով չնորհաւոր աթոռին: Այս է գաւառաստան մեծ հայրապետին մերոյ, տէր Գէորգ կաթողիկոսին, Գագիկ թագաւորին և ամենայն իշխանաց որք անդ կային. ամենեցունն հրաման զայս բան արարին. ուխտ և պայման դրեցին, թէ, Որ այս ուխտէն և կանոնէն վերայ անցնի, թէ Աղթամարայ կաթողիկոս թէ Էջմիածնայ՝ մէկզմէկու թեմն ըմբռնել, նզովեալ լինի, և մի մնասցէ ի կարգի կաթողիկոսութեան: Քանզի Վանայ քաղաքն և Բաղէշու քաղաքն, այս երկու քաղաքն հանդերձ գաւառօքն զոր ասացաք, Աղթամարայ լիցի, միւս ընդհանուր Հայաստան Էջմիածնայ լիցի: Եւ իրրեւ լուան հոյլք վարդապետացն, գունդք ժողովրդոցն, ասացին զԱմէնն. և արքայն յոյժ հաւանեցաւ: Անդ կային բազում եպիսկոպոսք, վարդապետք, իշխանք, յոյժ չնորհակալ լինէին զարքայէն և զՀայրապետէն, քանզի իմաստութեամբ զաստաստան արարին: Զի ի վերջին ժամանակին ի նաւազել և ի ճոխանալ երկուց աթոռոց, մի լիցի մին զմիւսն յաղթահա-

1. Բաց ի մէկ երկուքէն՝ թէ գաւառք թէ վանքեր թէ գիւղերն՝ ամենն այլ ծանօթ են հիմայ:

բիցէ, մին միւսին թեմ գաւթէ[1]. վասն այն կանուխ նիւ և դատաստանաւ փակեցին և նզովք ի վերայ դրին, զի մի ոք իշխեսցէ լուծցէ զսա, մինչեւ յաւիտեան: Եւ յետոյ ողջունեցին զմիմեանս և եղեալ գնացին ի տեղի զբօսանաց, զոր արքայն Գագիկ արարեալ էր:

ՄԻԼ

ԱԲԱՍ ԵՒ ԲԵՐ

(ԱՍՈՂԻԿ, Գ, Ի.)

Աբաս[2] թագաւորեաց և չինուեցաւ պատճառ եղեալ աւերման Հայոց՝ ըստ քաղցր բարուց իւրոց, և ըստ քաջազօր զօրութեան իւրոյ որով յաղթող եղեւ չարչանակի, և զՎրաց և զԱրմատացւոց[3] ասպատակն զադարեցոյց յաչխարհէս Հայոց: Որ ի միում աւուր բազմախուռն բանակօք բիւրաւոր զօրօք ելանէր բելապէս[4] ամբարտաւանութեամբ իշխանն Ախխազաց ի Արմատացւոց աշխարհէն՝ որ յայնկոյս քան զԿովկասեան լերինսն, թագաւոր՝ գայ անթիւ բազմութեամբ առ ափն գետոյն որ Կուրն կոչի, անապատացուցանել կամելով զաշխարհս Հայոց: Դեսպան առաքէ առ թագաւորն

1. Թուրք բառ, զապթ, նշանակէ նուաճել, ուրիշի ինչը վիճակը գրաւել:

2. Որդի Ա. Սմբատայ Նահատակի Բագրատունեաց, թագաւորի:

3. Հանաց կամ Թագրաց ցեղէն ասպատակողք, եթէ արդարեւ Արմատացի էին, յորոց համարի մեր հեղինակն և զԱխխազս, որ չէ առօդ. զի սոքա Սեւ Ծովու եզերք ծանօթ բնակողք են:

4. Ինչպէս Բել եղաւ ընդդէմ Հայկին, թերեւս ակնարկէ և անուանց նմանութեանն՝ Բել–Բեր:

Հայոց, մի օրհնել նմա զեկեղեցին՝[1] ըստ ուղղադաւան հաւատոյ Սրբոյն Գրիգորի. վասն զի, ասէր, իւր գալ կատարել քաղկեդոնական սահմանաւն[2]. զի էր չինեալ թագաւորին զկաթողիկէն սուրբ ի քաղաքին Կարուց վիմարգեան արձանօք, որձաքար պողովատաչ վիմօք՝ բոլորապէս գմբէթաւորեալ պայծառ զարդուք երկնանման խորան:

Եւ զայս պատգամ լուեալ թագաւորին Աբասայ՝ գումարտակ արարեալ զօրաց այրուձիոյն Հայոց, հասանէ ի գետն Կուր. բանակի ընդդէմ բանակին Բերայ: Իսկ ասպատակ զօրացն յամենայն աւուրս արշաւանս առնէին յայսկոյս յայնկոյս զափամբ գետոյն. և ի միում աւուր ասպատակն Ախխազաց անցեալ ընդ գետն Կուր, հասանէին ի բանակն Հայոց. և ձայն չփոթին առ թագաւորն հասանէր: Որոյ արագապէս զերիվարն խնդրեալ, զզարդ զինուցն զանձամբ առեալ, զերկասպրի սուսերն ի ձեռին ունելով, ընթանայր զկնի ասպատակին. և ի մէջ գետոյն հասեալ՝ հարկանէր հարուածովք ձեռին քաջի. կիսախաղողով յերիվարացն ի վայր կործանէր, յուզարկաւոր նոցա զՀուրն տալով. և ինքն զափամբ գետոյն ելեալ՝ ուժգնապէս ձայնիւ զԱստուած օգնական կարգայր, և զանուն իւր ասէր. յորմէ ահարեկ եղեալ հիւսխական ազգին՝ ի փախուստ դառնային:

Եւ Հայոց զօրացն քաջապինդ զօրութեամբ հետամուտ եղեալ՝ սրոյ ճարակ տային զամենեսեան, առեալ յաւարի զբանակս նոցա. և ձերբակալ արարեալ զամբարտաւանն Բէր՝ ածին ի քաղաքն Կարուց, ասելով ցնա թագաւորին. «Տեսցես զգեղեցկաչէն եկեղեցիդ, զի այլ ոչ տեսանելոց ես»: Եւ հրամայեաց փորել զաչս նորա. իսկ զխաւա-

1. Ինչուան հիմայ կանգուն կայ այս գրեթէ հազարամեայ եկեղեցին, յանուն Մ. Աստուածոյ, ի ձեռս Խուսոց:

2. Այս սահմանն օտար չէր Ս. Գրիգորի հաւատոց:

թեալ պատկերն՝[1] արծաթով գնեցին ազգ նորա. և ուխտ խաղաղութեան ընդ Հայաստանեացս հաստատեցին երդմամբ, մի՛ այլ լինել պատերազմ ի մէջ նոցա:

ՄԻՐ

ՇԻՆՈՒԹԻՒՆՔ ՎԱՆՈՐԷԻՑ ԵՒ ՀԱՐՔ ԳԻՏՆԱԿԱՆՔ

(ԱՍՈՂԻԿ, Գ, ԺԸ.)

Յայսմ ժամանակի[2] ծագկեալ պայծառանայր կարգ կրօնաւորական հանդիսից յաչխարհս Հայոց, և ի յոլով տեղիս չինեցան եղբայրանոցք. և ժողովեցան միաբանակեացք, հաւատարականք սիրովն Քրիստոսի: Նախ առաջին՝ մեծահռչակ ուխտն կարմրջաձորոյ ի գաւառին Աղբարունեաց, որոյ առաջնորդ՝ Հայր Յովհաննէս, որ հալածեալ յարեւմտեայ աշխարհէն, յԵգերացւոց գաւառէն... բերեալ ընդ իւր գՀրաշէն նշանն տէրունական[3]. և ընդ որ անցանէր՝ բազում աքանչելիք և նշանք և բժշկութիւնք լինէին ի ձեռն պատուական խաչին. որպէս և ի մերում ժամանակիս աչօք մերովք տեսանեմք, զի բազում հիւանդք և ախտաժէտք բժշկեցան. և հանապազ կայ և կատարէ զիւր հրաշագործութիւն: Այդ, եկեալ բնակեցաւ յ'առաջասացեալ տեղին Կամրջաձոր, կանոն կարգի ունե-

1. Ճարտար և կակծալի նմանութիւն երեսաց՝ կուբացեալ անձին:

2. Ի կէս և յետ կիսոյ ԺԴ դարուս:

3. Թաչ մի՝ հաւանօրէն ազնիւ մետաղէ. Հրազեհն կոչուի այլ կըրնայ իրեն յատուկ ըլլալ, ինչպէս Հայոց շատ խաչեր՝ ունին պէսպէս անուններ:

լով զահմանադրութիւն Սրբոյն Բարսղի հայրապետին մեծի, ի վերայ առաքելական հիմանն. թէ, «Էր նոցա ամենայն ինչ հասարակաց»: Ցոր ժողովեալ արք ճգնազգեացք թուով 300. և զկնի նորա նոյն ուխտի առաջնորդ եղեալ և հաւաստի կրօնիցն պահապան՝ այրն Աստուծոյ Պողիկարպոս. և զկնի նորա իմաստասէն Յաւուհ[1] բազմաշնորհ ի դիտութիւնս գրոց սրբոց և յերգս երաժշտութեանց:

Իսկ ի գաւառին Շիրակայ՝ Հոռոմոսիկ կոչեցեալ վանք[2] չինեցաւ ի ձեռն Յովհաննիսի որ էր զարդարեալ յամենայն առաքինութիւնսն, եւս առաւել յողորմածութեան զարգս: Վասն զի ողորմածութեամբ և առաքինութեամբ բաչխէր, մինչեւ ի զգեստուցն իւրոց մերկանայր զամենայն ի բաց, յորժամ աղքատաց Հանդիպէր. և անցաւորաց ի ճանապարհորդաց՝ հանգստարան պատրաստէր զտեղին, մինչեւ հանդչէլ իրր յիւրեանց տան՝ ամենայն օտարաց. որ մինչեւ ցայսօր երեւի նոյն նշան ողորմածութեան ի տանն յայնմ:

Այսպէս և յայսմ ժամանակի չինեցաւ Ղարեկ ի Ոչտաւնեաց գաւառին[3], նոյն կարգադրութեամբ, բազմազարդ պաշտօնապայծառ երգեցողութիւք և գրականն գիտողօք: Նոյնպէս և ի գաւառին Դերջանայ խոշաձորիկ անուանեալ վանք[4], որ ըստ վկայարանի նորին Յոհաբ Գրիգոր կոչի, ի ձեռն Հօր Սիւնեաց հիմնեցեալ, ժիր և ճգնողական ծառայի Քրիստոսի. որ ի սահմանս անախտութեան հասեալ վախճանի ի կենացս. փոխանակ իւր Թողլով վերակա-

1. Սա յատկապէս կամրջաձորեցի կոչուի, և իր գրուածներէն ունինք եկեղեցական կարգաց և գրոց մեկնութիւններ. փափագելի է իւր երաժշտական հըմտութեան այլ ճաշակ մի ունենալ:

2. Մօտ ի մայրաքաղաքն Անի, ծանօթ և հիմայ:

3. Հաւատարակաց ծանօթ և հռչակեալ աղօթատրող Ս. Գրիգորի անուամբն:

4. Գաւառն ծանօթ այլ ոչ նոյնպէս և վանքն:

ցու ուխտին զՊետրոս ծերունին, որ ի տուէ և ի դիշերի աշխատէր ի մշակութիւն Տեառն, գործել ձեռօք և սաղմոսել բերանով, ցայգաստաթած բազկատարածութեամբ, արտօսրիչոյց ողբովք լցեալ զաւուրս. որոյ ի ծերութեան վաստակ աչացն՝ լընտրութենէ ամենեցուն տայ գառաջնորդութիւն՝ Հօրն Բարսղի, որ ընդ ամենայնի ամենայն եղեւ, զամենեցուն ընտ զպակասութիւն կամ զվերակացուութիւն, գիտնական և իմաստնական հանճարով. մեռեալ ի կենդանութեան, և ի մահու զկեանս քարոզեաց, օրինակ բազմաց եղեալ հեռաւորաց և մերձաւորաց: Այս որ ժողովեալ բազմութեան արանց արգարոց՝ ճգնազգեաստ, խոնարհազարդ վայելչութեամբ զարդարեալք, ի ճաշակս՝ անճաշակ, մի անգամ միայն յաւուր ճաշակեալ և զովացեալ ջրով՝ ի չաբաթու և ի կիւրակէի արբմամբ, յաւուրս սուրբ քառասնորդացն: Այս որս եղեալ իմ յաւուրս քառասնորդացն՝ գրեցի զրանս յիշատակիս այսոքիկ սակաւուք, և զչափ ժամանակացս թուեցի ըստ կարի ի սոյն ժամանակս[1]:

Եւ ի Լիխանտիոն[2] աշխարհին, ի Նահրնեար տեղիան, ի կարգերդ գաւառին[3], ի ձեռն հօրն Մովսիսի չինեցաւ վանք, որ անուամբ նորա կոչի[4], բարեզարդ կարգադրութեամբ, բազմութեամբ եղբարց, բազմապայծառ բանական իմաստնովք: Եւ էր Մովսէս՝ այրն Աստուծոյ ի Տարօն գաւառէ ազգաւ, որ ամենայն արեւմտեայ աշխարհին[5] պատճառ բարեաց եղեւ ի բազմացուցանել զդաստ կրօնից նաւորաց. և իրրեւ աւանդապահ կրօնիցս մեր եղեալ՝ բաւեաց մինչեւ յաւուրս մեր:

Նոյն գունակ և նոյն օրինիւ վանք Հնձոյց[1] ի Կարին գաւառի, ի ձեռն հօրն Յարգսի[2] ամենայն օրինօք լցեալ. և վայելչազարդ տեղին որ կապուտաբարն անուանի յԱրշարունեաց գաւառին. և Դպրեվանք ի Շիրակ գաւառի. և Ջահաց քար ի Վայոց ձորի՝ ի ձեռն Հօր Յոհաննեայ:

Սոքա ամենեքեան և այլք յետ սոցա ի սոցանէ ուսեալք, միաբանական ճգնութեամբ անդրազ յաւիտենային ինքնասիրութեան հոգոյ, ոչ սահանալ մարդոյ ինքեան և ոչ խերեւէշ մի. ոչ ճաշակել ուրուք նախ քան զհասարակաց սեղանն, ո՛չ ի մրգաց և ոչ ի գալար խոտոյ. այլ զհրամայեալսն ի պատուիրանին Տեառն գործել. և զդաւթեան նուագն հնչեցուցանել ի դիշերի և ի տունկեան՝ հանապազորդեան փառաբանութեամբ: Եւ սոցա՝ այս գործ նահատակութեան:

Իսկ զմիայնաւորացն բազմազարդ առաքինութիւնս՝ զիարդ մարթասցուք բանիւ ասել. որք խաչակեալք խաչելոյն Քրիստոսի՝ քաղցիւ և ծարաւով, և հանապազամեռիկ կենօք քաղաքավարեալք ի ժամանակին յայնմ: Որպէս մեծանուն հռչակեալին Վարդիկ՝ հայրն Վաւգոյ[3], և սուրբ հայրն Կարմիր. որք՝ սուեր զկեանս աշխարհիս համարեալ՝ ամայութեամբ ընդ գազանս ի լերինս և յանապատ տեղիս անաւազութեամբ կէին, մինչեւ նշանագործ զօրութեան արժանանալ ի Տեառնէ. զի առիւծ հնազանդեցաւ Վարդկայ, բերեալ նմա

1. Իր ժամանակագրական Պատմութիւնը յիշեցընէ:
2. Բ և Գ Հայոց սահմանակից, սովորաբար Լիխանդոն գրուի:
3. Հիմակուան Ծանօթ Խարբերդն՝ է, որ և Քարբերդ: Ասոր անունն յիշուած է և յՈւռհայեցւոյ. երկրորդն Թուի արաքերէնն, զեռերու նշանակութեամբ:
4. Մովսիսնոց կոչուած:
5. Արեւմտեան Հայք:

1. Ծանօթ մինչեւ հիմայ:
2. Գիտնական բարեկամ և Թղթակից Գրիգորի Պատրոսի:
3. Տեղին ծանօթ չէ, բայց շատ հռչակուած է հօն պատուած խաչի մի համար, զոր Շնորհալին և այլ կաթողիկոսք պահէին, և անով օրհնութիւն տային՝ նա և զրով խաւրէին:

զեղչերուացն կաչի, և կորիւն երկու՝ առաջի անկեալ ձգեաց առ ոտս նորա[1]. և նա ձեռն եդեալ բժշկեաց զլսատանս նոցա. և այլ բազում հիւանդաց ձեռն եդեալ՝ արագապէս բուժէին յախտից։ Եւ հանդիսա ոսկերաց նորա որ ի Վանգոյ, յոր մինչեւ ցայսօր բժշկութիւն հիւանդաց լինի։

Իսկ Կարմիր Հայրն՝ որ և բարձեալ զՔրիստոս մարմնով ի կերով աղքատաւ, ի Յորդանանէ գաւառէն, մինչ Տաճկաց էր աշխարհն, բնակէր անդ. և յաւուր միում գնաց առ ամիրայն ի բերդն Պաղին. և ի սահմանն յայնոսիկ յաւերակ տեղիսն էր եկեղեցի մի, զոր հանդիսա իւր կալեալ՝ մատանէր անդ։ Աւեն ցնա մարդիկն, մի լինել անդ, զի մահաբուն է վիշապն որ կայ անդ։ Իսկ նա ի զօրութիւն Աստուծոյ վստահացեալ՝ մտեալ աղօթէր ի նմա զցայգն. և վիշապին մերձեցեալ ի դուռն եկեղեցւոյն՝ զօրութեամբ Տեառն և աղօթիւք սրբոյն՝ վաղվաղակի սատակեցաւ։ Եւ յառաւօտեն՝ անհաւատ հեթանոսքն սաեն ցհաւատացեալսն. «Երթայք, տեսէք, զի կլեալ է վիշապն ահաւոր զայրն զայն՝ զոր Աստուծոյն ասէք»։ Եւ ոչ ոք իշխեր մերձենալ ցբազում ժամս՝ անչարժ մնացեալ վիշապին. և մարդիկն կասկածանօք առ սակաւ սակաւ մօտէին։ Իսկ ճգնաւորն Քրիստոսի ի ներքուստ աղաղակեաց, «Քարշեցէք զպիղծդ, զի արտաքս ելից»։ Եւ այս ի պարծանս հաւատացելոց լինէր և յամօթ անհաւատիցն, և ի փառս Քրիստոսի։

Էին և վարդապետք վարժեալք վարդապետութեամբն Տեառն և ուսուցիչք հնմարտութեան. Բահիլիոս ծերունին՝ քաջակարօղն ի խօսս և քաջաքարոզն ի պատմել զօրէնս Տեառն. և Գրիգոր քահանայ յամառնացելոց, յորդախօսն և առատաբանն ի պատգամսն Տեառն. և Յուհիաննիոս՝ աշակերտ Բարսղի՝ որ Հոգեւորն կոչեցաւ, առաքեալ

1. Իբրեւ վարձք իր կորեանց բժշկողին՝ բերէ իր բղբջած եղջերուներու մսրմը։

չնորհ բանիւ և գործով։ Ընդ սմա և մեծանուն ի դիտութեան և յառաքինութեան Մովսէս, որ քաւասուն աւուրըք ձգտեցուցանէր զանօսուաղութիւն. և Դաւիթ՝ աղքատակերպ և գծծասէր գիտնական, որում անուն Մաշկոտաւ կոչի. և Պետրոս՝ հաւատաւ մեկնիչ Գրոց սրբոց. և Աթանիա՝ Փիլիսոփայն մեծ, որ և վանական Նարեկի[1]. սորա և գիրս է ասացեալ ընդդէմ աղանդոյն Թոնդրակաց[2] և այլոց հերձուածոց։ Զոմանս ի սոցանէ ի ծերութեան իւրեանց՝ ի տպայութեան մերում[3] տեսաք աչօք մերովք, ճաշակելով ի քաղցր ճաշակոց բանից նոցա։

ՄԻԹ

ՇԻՆՈՒԹԻՒՆ ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆԱՑ

(ԱՄՈՂԻՍ, Գ, ը.)

Յաւուրս Աբասայ արքայի Բագրատունւոյ չինեցան վանքն Կամրջաձորոյ և Կապուտաքարն ի գաւառին Արշակունեաց[4], և Պարեվանքն ի Շիրակ գաւառի, և հռչականուն Հոռոմոսին[5] կոչեցեալ վանքն. և զի կոչէին զերիցուսն Հոռոմոց՝ վասն այնորիկ անուանեցաւ մինչեւ ցարդ Հոռոմոցվանք, յառաջնորդութեան Յովհաննիսի արհեպիսկոպոսին։

Շինեցին և եկեղեցի մի յանուն Ամենասրբուհ

1. Սա այլ Նարեկացի համարուի. բայց գրածներն մեզի հասած չեն։
2. Այս աղանդաւորաց դէմ գլխաւոր գրոցագ մեկն, զոր յիշեն և այլք։
3. Ց. գարուն երկրորդ կիսում։
4. Երբեմն այսպէս գրուի Արշարունեաց տեղ։
5. Տես ի Շիրակ, երես 18։

հոյ Աստուածածնին՝ ի վանքն որ կոչի Յանահին, ի սահմանս Լօռէ քաղաքին, որ էր գեղեցկայարմար և չքնաղատես կոխուածով[1] և պողովատաչ վիմօք գմբեթաւորեալ, և երկնանման խորան, կառուցեալ ի վերայ գագաթան Նշանն ամենայաղթ։

... Յաւուրս որդւոյ նորա՝ Աշոտոյ Ողորմածի՝ ի բազում տեղիս չինեցան կրօնաւորաց և ճգնաւորականաց տեղիք, նա և ի Սեաւորդեաց աշխարհին[2] եւս, կամակցութեամբ թագաւորիս, մեծամեծ արդեամբք և բազում ծախիւք բարեպաշտուհոյս և տիկնաց տիկնոյ Խոսրովանոյշ թագուհոյս, կառուցան և հաչակաւոր ուխտք երկնանման և գմբեթաւոր խորանք, հաւատարակեաց և մխիթարանակեաց դադարք աստուածարնակաց և խաչաբարձից տեղիք, գեղեցիկ յօրինուածով և կոփածու պողովատաչ քարով... Որոց երկոցունն անուանք են այսոքիկ, Հաղբատ և Յանահին[3]... արանց հինգ հարիւրից և երկու. առաջնորդ Հաղբատայ՝ ճգնագործաց Յիսուսի ծառայն Աստուծոյ, իսկ առաջնորդ Սանահնայ՝ Յովհաննէս գիտնական այրն Աստուծոյ, որ էր Թուական Հայոց ՆԺ (961)։ Ոչինչ այնուհետեւ փոյթ և հոգ մարմնական ունելով ի վերայ անձանց իւրեանց. քանզի բնաւ ծախք և պիտոյք ասցա յարքունուստ էր չնորհեալ, առաւել քան զկարիս, ազնուացն և բարեպաշտուհի դշխոյն և բամբիշն ամենայն հայկազեան զարմից Խոսրովանոյշն։

Եւերից մեծապատիւ վկայ զՅիսուսի քոյ քարտուղարն Սանահնեւ, որ Սրբուհւոյ Աստուածածնին հիմնարկութեան և աւարտմանն ականատեսն էր եղեալ. որ ի ժամուն յայնմիկ գրեալ զգիրս

1. Հաւանօրէն պիտի գրուէր կոփուռածով։
2. Ոչ այնքան ընդարձակ երկիր էր որ աշխարհ կոչուէր. սովորաբար Սեաւորդեաց ձոր կոչուի, քնակչաց Սեւ կոչուած նահապետին անուամբ։
3. Իրարու մօտ են և չատ հեղ զոյգ յիշուին։

Բարսղի Կեսարացւոյ Յաղագս ճգնաւորաց, և նորան յիշատակարանի գրեալ այսպէս։... « Ես անարժանս ի կրօնաւորաց փցուն գրիչս Յիսուի, ի Թուականութեանս Հայոց ՆԻԱ (972), ի նորաչէն վանքս կոչեցեալ Յանահին, հրամանաւ Հօր իմոյ Յովհաննիսի, որ էր վանիցս չինութեան ամ վեց. զոր չինեաց բարեպաշտ թագուհին Խոսրովանոյշ՝ ամուսինն Հայոց Շահնշահի որդի Սմբատայ Բագրատունոյ Հայոց թագաւորի, և յաւուրսին ամի հայրապետութեան հոգեւոր հօրն հանուրց Տեառն Խաչիկայ արժանաւոր վերագիտողի, և յեպիսկոպոսութեան մերումս նահանգի գաւառիս Տաշիր՝ Գրիգորի արժանաւոր հօտապետի, որ և նորուն առաջնորդութեան են ամք երկու »։

Չկնի մահուան Աշոտոյ ի Թուականին ՆԻԶ (977), թագաւորէ որդի նորա Սմբատ. որում պատահէ երթալ ի տեսութիւն եղբօրն իւրում Հարապատին Գուրգենայ, որ էր յայնժամ իշխան բնաւ երկրին Տաշրաց. և ի բազում աւուրս կեցեալ առ միմեանս հանգերձ ամենայն ազատագունդ հայկազեան զօրօք, յիշեն զհոգեւորանոց և զմիաբանակեաց տեղիսն սրբոց, այսինքն զՅանահնայ սուրբ Աստուածածնի կաթուղիկէս, որ էր հիմնարկեալ և աւարտեալ հօրն և մօրն իւրեանց. և գրէ կոնդակ և արձան յաւիտենական, թագաւորական հրամանաւ. օրինակ զայս։

Կամաւն ամենազօրին Աստուծոյ. Ես Գուրգէն Թագաւոր, Շահնշահի որդի Աշոտոյ Ողորմածի, յազգէ Բագրատունի, յիշեալ զմեղս իմ եւ առաջի մտաց ունելով զաւուր (օր) դատաստանին. եւ ետու առնել ի հալալ գոյից իմոց ջահ մի, ունելով յինչեան կանթեղս ձԺԲ (112). զի որպէս հոլո լեալ լարեգակն ի ծիր ամէոյ յերկնից, եւ զլեմս ի յերկիր ունելով եւ պայծառացուցանելով զաւ, որպէս նմին օրինակի եւ ջահս այս ձախս առեալ ի գմբէթ կաթուղիկէիս՝ եւ ոչ զլեմս ի վայր

դարձուցանելով եւ կամ ինեղլով զնէթն, այլ ի պայծառութիւն եւ ի լուսաւորութիւն սուրբ կաթողիկէիս։ Եւ ապա չափաւոր ջաւ մի այլ յանուն Սրբոց Քառասնից, ունելով յինքեան կանթեղս ըստ թուոյ նոցա. եւ արդ[1] բերելով զնմանութիւն լուսնի. զի որպէս լուսինն ի գիշերի ծագէ եւ խոնաւ ճառագայթիւք իւրովք հաստուցանէ զգպտուղ երկրի, այլ եւ ի մխիթարութիւն այնոցիկ որ ձիւաւարեն ի վերայ ամեհի ալեաց ծովուն, այսպիսի օրինակաւ եւ ջաւիս այս պայծառացուցանէ զզաւիթ Սուրբ Աստուածածնիս եւ զսուրբ կաթողիկէիս Սանահնոյ, ի ծնողաց իմոց գերեզմանատանս Բագրատունեաց, որ են տեղիք հաստուն եւ կատարեալ առնելով զպտուղ հոգւոյն. այլ եւ ճանապարհարան ի վերին կայեանս եւ շաւիղ որ անցուցանէ ընդ յորդահոսան բռնութիւն ալեկոծութեան գեհենին։ Եւ արդ սորա որ վաղեալ բորբոքին ի տաւնս տէրունականաց եւ յիշատակի սրբոց մարտիրոսաց, մինն ի տունջեան ի ժամ սոսկալի պատարագին, եւ միւսն ի մէջ գիշերի ի լուսաւորութիւն սրբոցս, եւ ի պայծառութիւն մանկանց նոր Սիովնի. Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն »։

ՄԼ.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱԳՐՈՑ ԹՈՍՐՈՎՈՒ ԵՒ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Շնորհիւն Աստուծոյ յայտնաբանութիւն արարեալ եկեղեցական կարգադրութեանց՝ ըստ իւրաքանչիւր ժամուց, ի կատարումն հաստուցաք. ոչ որչափ ունէր խորհրդածութիւն քարոզացն և աղօ-

1. Գրելի էր այդ։

թիցն բանք, այլ որչափ հասողութիւն մեր բաւեաց՝ համառօտեցաք։ Եւ թէպէտ և բազում են եկեղեցականացն կարգաց զանազանութիւնք, քարոզաց և աղօթից և Պատարագամատուցաց, և են որք ըստ մարտիրոսաց յիշատակի, և են որք ըստ տէրունական տոնից, Ծննդեանն և Յարութեանն, և է որ ի շնորհատրութիւն կարգեալք[1]. այսինքն ի Մկրտութիւն, ի Ձեռնադրութիւն և յՕրհնութիւն պսակի, և ի թաղումն մեռելոց, և ի սեղան հաստատել, և սպաս եկեղեցւոյ օրհնել, և զՅուր սրբել ի Ցայտնութեան Տեառն, և խաչ օրհնել, և ի յօրհնել դերմն, զկալ, զդուարակ, զաղ, զհատ, և որ այլ եւս են շնորհաբաշխութիւնք. և որ վասն ճանապարհորդաց և հիւանդաց, և վասն այլ ինչ առնպիսեաց. զորս բովանդակ բան առ բան ընդ քննութեամբ արկանել, ոչ միայն մեք զրելոյն չնչնէք հանդուրժող, այլ և ոչ ընթերցողքն՝ լսելութեան։ Բայց եթէ հաստատութեամբ ոք միտ դնէ այսոցիկ՝ որ ասացանս, բաւականապէս առ այլսն ամենեսին միտս ստանայ։ Եւ զինչ ասեմք թէ առ մեծաբումբք զրեցելոցն առ բովանդակ թողեալսն կարողանայ իմաստից. այլ թէ և մասին ինչ ի սոցանէ հասանէ մտաց՝ բաւականանայ առ ամենայն լրումն եկեղեցական կարգաւորութեանց։...

Համարձակեցայ առ այս յանդգնաբար՝ ի հարկէ, և ոչ զի անձին փառս ստացայց, այլ զի զեպիսկոպոսութիւն վիճակեցայ, և ի վիճակելն՝ տգիտութիւն ի յայտնի վարկայ, և բանիւ՝ ամենայն ումեք զբովանդակ զայս ծանուցանել՝ անհնար գիտացի, պատշաճ համարեցայ ի գրի հարկանել. զի թերեւս այսպէս գիւրին առ ուսանել արարիչ՝ կամողաց։ Յաղագս որոյ և որք հանդիպին այսոցիկ լսելութեան՝ աղօթս վասն մեր փրկութեան արասցեն, սուղ աշխատութեանս՝ փոխահատոյց լինել

1. Մաշտոց գրոց կանոններն կամ արարողութիւնքն են յիշածներն։

առ ի Քրիստոսէ զնորա ողորմութեանցն պարգեւս։ Որում լիցի ամենեցուն մեզ հանդիպել յերկրի և յերկինս, և փառս վերառաքել Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս։

Ցիշատակարան[1]

Շնորհիւն Աստուծոյ եղեւ մեկնութիւն այսմ գրոց՝ ի ձեռն Թոսրովայ Անձեւացեաց եպիսկոպոսի, յոյժ հեռուզի պատուիրանացն Աստուծոյ. զոր մեզ և գովել անձամբ է, զի մի գայթակղեսջիք ի նմին, վասն գոլոյ նորուն՝ հայր իմ ըստ մարմնոյ. որոյ չեմ արժանի կոչիլ որդի և ոչ վարձկան, ըստ գրեցելումն[2]. այլ ի գրելոցդ լինիցին հասու խնդրոցքն՝ վասն նորա, որք սրտի մտօք ունկն դնիցեն։ Որք և աղօթիւք փոխադարձել պարտին ընդ տուեցելոյս. և հասարակացն տուողն Աստուած՝ և ձեզ հայցողացդ ձիրեացէ զիւրական պարգեւ։ Այլ յոյժ ամաչեցեալ և տարակոյս գտանիմ ես Գրիգոր, պարտաւոր պատուիրանաց սուրբ գրոց։

Արգ առաջին սուրբ գրոցս այսոցիկ գծագրութիւն՝ եղեւ ձեռամբ Յահակայ, որդւոյ Տեառն Թոսրովու՝ սոյն սուրբ գրոցս մեկնողի, յերեք հարիւր ինանասն և ինն թուականութեանս Հայոց։

1. Գրիգոր Նարեկացին է գայս գրողն։
2. Անառակ որդւոյն ըստածն է, յԱւետարանի։

ՄԼԱ.

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ

Ի ՆԻԶ թուականութեան (977) և ի թագաւորութեանս Հայոց՝ հարկեցայ ես Գրիգոր քահանայ՝ ի Նարեկայ, որդի Տեառն Թոսրովայ Անձաւացեաց եպիսկոպոսի, ի Գուրգենայ աստուածասէր քրիստոսապատակեալ արքայէ՝ յորդւոյ Աբուսահլի Համազասպ[1] թագաւորի, առ ի մեկնութիւնս ահաւոր բանիցն Սողոմոնի, և բացայայտել զխորին ծածուկսն որ ի նոսա, որ են քաղցր առ ի լսել։ Վասն զի զիւեսայէ և զՀարանէ ասէ. որ և զտեառնոյ և զկարմրացեալ չրթանց, և զայտից գեղեցկութենէ, և զաչաց ցանկալեաց, և զքեռ և զեղերօրդւոյ և զօրիորդաց. և զայլն ամենայն այսպիսեաց բանից տափականաց և սրտից խաղտանաց, սեռն սիրոյ չաղկապ միաւորութեան։ Զոր լուեալ մարդկան՝ անիմանալեօք մտօք՝ յայլ և յայլ իրս իմանային. ապա ի հոգս եղեալ թագաւորին այսպիսի իրի, յղէ առ իս մի անգամ և երկիցս. որում ոչ իշխեցի ընդդիմանալ, զի ծանեայ՝ եթէ աստուածահաճոյ է հրամանն. և մեկնեցի զերգս երգոցն, նոքին հրամանաւ։ Զի թէպէտ և աւելի գործ քան զիս առի զանձամբ, առ երկիւղի անհնազանդութեան, զի մի թագաւորական հրամանն անկատար մնասցէ. սակայն յոյժ յանդգնութիւն էր ինձ այս, և բազում բամբասանաց արժանի յամենեցունց, նա և յաստուածային կողմանէն՝ պատժոց ակնկա-

1. Արծրունեաց կամ Վասպուրականի թագաւորքն են։ Գրեթէ ամեն թագաւորազունք Արծրունիք՝ երկու անուն ունէին, մին հայկական, միւսն կամ զգուական կամ այլազգի։

լիք : Բայց յերկոցունց կողմանէ՝ յաստուածայնոցն և ի մարդկայնոցն, զթագաւորական հրամանն առաջի կալեալ՝ կարծեմ արդարանալ. զի իւր իսկ Քրիստոսի հրամանք է՝ հնազանդ լինել թագաւորաց՝ իբրեւ Աստուծոյ. և որ հնազանդի՝ իւր համարի Աստուած. և որ անհնազանդ գտանի, և զայն եւս իւր համարի : Զոր ազաչեմ զընթերցասէրդ, մի մեղադրանս յաւելուլ ինձ յաղագս ձեռնարկութեան ի գործ՝ որ առաւել քան զարժանն իմ: Զի ըստ հարկապահանջ խնդրոցին՝ ո՛չ կարացի վերջացեալ գտանիլ, այլ յուսալով ի մի Հոգին Սուրբ, զմտաւ ածի՝ թէ ոչ անտես առնէ զաղաչանսն առ նա, ակիզբն արարի ազօթիւք և արտասուօք խնդրել. որ և նայեցեալ յանարժանութիւն իմ, և ի սրտեառնդն կամն հայցողին, եթաց զբերան իմ յասել և ի համառօտել զսա, ի փառս Քրիստոսի. Ամէն:

ՄԼԲ

ՇԻՆՈՒԹԻԻՆ
ԵՒ ՆԱՒԱԿԱՏԻՔ ՍՐԲՈՑ ԽԱՉԻՆ ԱՊԱՐԱՆԻՑ [1]

(ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ)

« Աստիաննոս (առաջնորդ Ս. Խաչին) վերստին առեղծմամբ ի զարդ պաճուճանաց զարմանագործեաց, և գրեթէ երկին երկնի ի յերկրի վայելչապէս զեղուլ յօրինեաց. և զկազմած պատշաճաղութեան հրաշակառոյց խորանացն՝ քրովբէա-

1. Այս թուղթիկ գրուածս քիչ շատ հասկանալ ուզողն, պէտք է ունենայ Աւետիքեան Հ. Գաբրիել վարդապետի գրած մեկնութիւնը. տպագրեալ ի Ս. Ղազար, ի Վենետիկ:

բնակն յարկաց՝ բարենչան կերպիւ հիմնադրեաց. և նմանապէս սրովբէագաւիթ սրահին Սիոնի՝ սիրատեսակ տեսիւ տիրագրեաց. և համանման երկնաբերձ կայից կանգնեալ ամրոցին, որ ի համար համարոյ զինուցն օճառաց [1], այրատուր ալաքաց՝ ոսկեկուռ նիզակաց՝ հազարաւոր վահանաց՝ յապաւինութիւն պահեստի թիկանց, բազմութիւն գնդաց գումարատակաց մարտակաց երրայականաց արանց քաջաց՝ որ ի Թալպիոմի, թագադիտակ փառաք պատկեաց: Եւ ըստ ամբարձման կամարի վերնայարկին գնահ [2] ձգման գմբեթի՝ ճշգրտապէս ճարտարապետեաց. և գունակ խրախարար և բազմահաւաք խորին խնճոյից սուրբ հարկանարանին, զԱստուածամօրն սրբատաշման տեղւոյն տաճարն՝ ամենարուեստ հիւթիւ զարդարեաց. և անգնահ համանգամայն զանդրանկացն բոլ [3] ի միւռոմ խմբի բոլորեաց: Եւ իբր քաղաք կենդանեաց չինեալ Աստուծոյ, խօսեալ Յիսուսի, մայր մաքուր սրբոց, հանդէպ տեսակի դիմաց օրիորդաց փեսային, երգոք պարզաց առագաստապատաց ընտրելականաց, անդրդուելի արուեստաւորեաց. և լայնատարած գրամբ անանձուկ կայան բանակի բիւրաւոր զօրաց հրեշտակականաց դերվարագուրեաց: Եւ եւս քան զեւս անստուեր փայլմամբ քան զմտմտեան չինուած վրանին վկայականի՝ զանգակատանչ՝ բեհեզապանգուած մետաքսահիւս սպիտակապատուստ կարմրայարմար չաղաչարման՝ զաճիւնագեղ անձառն խորհուրդ հանրահաչակեաց: Եւ իբր սարգենեսեր անպահ պահանգաց չնորհապատար արարուածոյ յարկի գաւթեան համբակին՝ ճեմարանօրէն արուեստիւ սազրեաց: Զարմացն վերագրութիւն՝ վիմախարիսխ արձանակառոյց կեր-

1. Սազմանի չինած զինուց տաճարին նմանցընէ:
2. Երկնից գմբեթին կամ կամարն, նայն իսկ երկինքն:
3. Հաւատացեալք և կրօնաւորք:

պիւ առկայեաց. և իբր յականց վանեաց յեռելոց ճարտարագործ արուեստայարմար՝ բազմատեսակ երփնիւ նորոգեաց. և զեզեկիէլեան տեսեան երեւոյթ անյօդն էութեամբ՝ նոր նմանութեամբ իբր զգայութիւն իւր արձարձեաց. և իբր զմիաստանի վերարկու զեղեցկատիպ յանգուածով զրուանդակն սկսեալ յարմարեաց:

Ի նոյն և զաներեւոյթ հանդերձեալ բարեացն ծանօթութիւն փառացն ապառնեաց՝ ի ներկայումս աստ՝ ակներեւ տպիւ գծագրեաց: Եւ իբր զիայլուած լուսածագ բոցոյ բորբոքման՝ զբրամատոյց տիեզերալոյսն տեղի[1] ցանկեալ պարսպեաց: Եւ զարտաքին որմոցն զարձանս մաքրապար տեղւոյն բերկրութեան՝ ճառագայթանչոյլ բեհեզատիպ ըզգեստուքն պճնեաց. իսկ զդիմաց զրանդեացն դիրս՝ աքանչելի քանդակագործեալ քառաչուրթն զարմանագան, իբր ծաղկեղէն զգեստուց հանդերձանս սրբաբեհեզն պատմուճանի առագաստանուէր գեզազանց հարսինն, ի գլուխ ծայրից լրութեան թեզանեաց շրջապարուրեաց: Իսկ զդրանցն երեսաց տիպ նկարակերտ յանգուածատաչեալ կարմրերփեան փայտիւք՝ և փղոց ոսկերօք սեռակատոր այլազան գունովք երանգոց, յարակից կայիւք ի պէս-պէս մասանց արհեստիւ կապեաց: Իսկ զմէջ գաւթի յատակացն՝ իբր զկոնք մի ապակեղէն ամենահարթ գոյիւ անխորշ պնդութեամբ պատչառ պատրաստեաց: Իսկ զբարձրավանդակ սրբարանն զիսանեզի[2] երկնատեսակ բարձրութեան բեմբին, գաբիրայօրէն յօրինմամբ ըստ սարսափ անհնչուպ և փայլեալ վերին եթերին՝ ի սաղմնայնոցս աստի մեկուսեաց: Իսկ զմարագուբացն անզրպետարան իբր զպատրուակ անքոյթ տեսութեան՝ ի պատիւ պատրաստութեան՝ ի պաշտօն զգուշութեան խորհրդոյ

1. Խորանն:

2. Խորանին տապանակն, ուր Ս. Խորհրդոյ բաղմացն գրուբ:

մեծի, ի պատուական հիւթ պայծառ պաստառաց եգիպտացի դիպակակիտուած բազմատեսիլ ոսկեփառ և հրակերպ՝ երկնաձեւ և երկվերարկու՝ չնորհաշարդ չքով պաճուճեաց: Իսկ զտիրաւանդ և զարբշատուր կտակիս պաշտամանն գործի՝ սրբութեան տեղանոյն զաքանչելի զգեստն, իբր զտուրբ սրբութեան տուերին մաքրութեան, և զփայլուն պղտականին աստ պայծառութեան, և ճշմարտութիւն տուութեանն, և զնոր լրութիւն նախնոյն թերութեանն, զվերընդունակն անբաւ բնութեան տէրունեոյն մարմնոյ, ի զանազան թելոց գունելոց երկնակերպ կապուտակատիպ յելիմացի կղզեաց[1] ծովայնոց, ծիրանածուէն կերպասիւք պճնեաց: Իսկ զկապ պատուածոյ գօտեացն՝ եթովպացի և բաբելոնեացի բազմագանձ ականց բոցանչոյլ յակընթաց՝ գարնանագեղ զըմբրխտաց, աստեղազարդ մարգարտաց, թխատիպ սաթացն[2] կապուտակաց յեռմամբ առ իրեարս, ամենապատիեին համաստակօք կրկնելովք զուգայարեաց: Եւ որպէս զդչնոյ ումն թագակալ հանդէպ ճակատոյ պայծառ պատկերի զրուատելի դիմաց դիտակի սրբութեան սեղանոյն՝ մածուցեալ կապեաց: Իսկ զդմբեթին վերամբարձութիւն՝ որպէս կառուցումն ասիան անդամոց՝ ցանկալի հասակի մարմնոյ գլխոյ գագաթան մեծ արքայուհոյ, ի կարծրակոփ քարանց քերելոց քառաքանակեաց: Իսկ զդեզանկար ծաղկայօրինուորակ պատկերացն կենդանագիր տեսակի դեղոցն՝ զատուերացեալ հին ամանակացն զանեբեւոյթն աչաց[3] ներկայիցս, իբր զերեւոյթ յայանի

1. Ելիմացւոց երկրին դիրքն տարակուսական է, Պարսկաստանի արեւելեան հարաւակողմն համարեա. Սիկիլիոյ մէջ այլ կար համանուն վիճակ մի:

2. Սաթ, Ambre. այլեւայլ բնական նիւթեր, ուսկից արեւելեայք սիրեին պէսպէս զարդեր շինել:

3. Անցեալ ժամանակաց անձանց կամ դիպուածոց պատկերներ նկարել տար:

տեսակի ունողաց չնչոյ և զգայութեան՝ արգասաւորեաց: Եւ ամենայնիւ զամենայնն յամենեցունց մասանց նիւթելոց, ի մի կերպարան տեսակի զօդեաց: Եւ որպէս զարձանն եւթնատես վիմին Զօբաբաբելի յանդիման աչացն Յիսուսի ուղղեաց[1], որպէս զտիցն Աստուծոյ տեղի ի վերայ հաւատոյ վիմին հաստատեաց: Եւ իբր զընդարձակ ծոց արարածոց և երկրի արեգականն շրջագրութեան՝ կանթեղաբորբոք չահավառ լամբանշոյլ լուսով փայլեցոյց. և գրեթէ բոցեղէն յեղանակեաց ի մարմնի հողեղինի:

Իսկ զարտաքին գաւթացն յատակս և զդրաստանացն խարխճանութիւնս, ըստ իւրաքանչիւր պատշաճ խորհրդոյ պայծառ պատկանեաց. և անկեաց հաստատեաց և մշտնջենաւոր հիմնեցոյց խիտս բիւրաւորաց բուսոց անտառաց, ծառս գեղատպարթս[2], չնորհաշառաւիղս, ամբարձուղէս, հաստատեղունս, մարգադարմանս, բազկաստաձուս, առնունաճիւղս, վայելչատերեւս, բարեբողոջ բոյսս վարսաւոր փայտից, այլայլատեռ տարազոյ մրգոց, համեղահամս դիւրամօքելիս կրից կակորդաց: Եւ եւս քան զեւս յառախեաց ի ցեղից ցեղից ցանկալեաց ցցեալ ի գետինս գերապարարս՝ արգաւանդահոգս տենչալի վայրից, իբրեւ զծառն Տեառն և զմայրն Լիբանանու լերինն Ծուրայ՝ առատապէս պայծառագարգեաց. տունկս բերրեաց բերողաց բարեաց, ծաղկընծիւղս, պտղածինս, արմատարիսխս, մրգամատոյցս պատուաստակիրս, պտղապարգեւս. անդս ամենուսնական, ղրահոս և չուչանափայլս, սահմանս վտակարբուս, ուղխապատրաս, անձրեւանունդս, ցօղամատոյցս:...

Իբրեւ զամենայն զայս այսպէս կարգեաց, և

1. Զաքարիա մարգարէի ըսածը (Գ. 9) յիշեցընէ. «Զվէմն՝ զոր եդու առաջի երեսաց Յեսուայ, ի վե-
«րայ վիմին եօթն ակն են»:
2. Ծառոց և բանջարեղինաց այլեւայլ տեսակք:

եդեմ երկրորդ՝ փառօք առաջնոյն լուսանորոգեաց[1], ապա այնուհետեւ զընկալեալն ի Տեառնէ չնորհ՝ զփայտն գործակից կենացն արդարութեան, զնշանակն համբերութեան կամաւոր մահուն Յիսուսի, զպատկերն պարկեշտութեան անձանց ճգնաւորաց, զհաճութիւն կամաց աստուածդութեանն Հօր, զգործի իւի բարձրութեան փառացն Էմմանուէլի, զնշանն լուսոյ քրիստոսեան Թաչին[2], մեծաւ ահիւ և զգուշական երկիւղիւ բարձեալ հանգուցին. յօրինեալ տեղի հրաշակառոյց խորանի նազելի յարկի Սուրբ Կարապետին: Զոր յաւուրս իւրոյ վանականութեանն սկսեալ՝ ի նմին կատարեաց՝ ընտրեալն յայցելութիւն մաքուր դիտողութեան սուրբն եպիսկոպոս. և սրբոյ և ընտրելոյ Առաքելոյն Յակոբայ մարտիրոսարանի անուանն իւրոյ նորոգ յիշատակ՝ ի հանգստեան գերեզմանաց նախնեաց մեռելոց, ի հրաւէր խոստման անուսուն յարութեան, նպաստաւորեաց յաձալագոյն քան զյայտնել սրբոյ Թաչին գալստեան: Բայց զկարապետին տիրաբնակ և հոգիազարդ տաղաւարն ի խորհուրդ յուսոյ աներկբայ դիտման Թաչին գալստեան, իբր ընծայութիւն մաքրութեան ուխտի նուիրեաց[3] նախ քան զաթոռոյն վերակացութիւն: Վասն որոյ և ի գալուստ ծագմանն փրկականն փայտի՝ իբր ի գուշակումն անուսուն խոստացեալն չնորհի՝ ի նմին սեպհականեցաւ, հանգուցեալ ի տաճար մեծի մարգարէին Յովհաննու: Իսկ զԱստուածածնին չքնաղ կազմուած պանդխտելոցն բնակութեան՝ զուգամասն կրօնից բարեզարդն եպիսկոպոսութեան՝ կառուցեալ, սկիզբն արարեալ ի սկզբան տէրութեան իւրում նախագահութեանն. ուստի և հանճարեղ խորհրդածութեամբ ի նոյն տաճար վերագրել պատրաստեաց նշանին սրբոյ՝ ի յաւուր ուրբաթու

1. Դրախտին նմանցընէ այս պարտէզը:
2. Այս ամէն նմանութիւնք Թաչին համար էին:
3. Ս. Թաչափայտը գրին ի խորան Ս. Կարապետին:

մեծի պատեքին։ Զի յիշատակ գովութեան պաշտելի անուանց երկոցունց վեհից, Խաչին և Աստուածածնին, ի միասին երկրպագեցին, համբաւեալ զմին ծնող, զմին ծանուցող մարդացելոյ միոյ Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, Հօրն փառակից։

Իակ ի կողմանն աջոյ կայից հիւսիսոյ, ըստ առակողին ընթացից հետոց աջոյակ հողմոյն, առնի զԱռաքեալսն տիրապատիւս, և զՂազարոսիին սուրբ դաւանարանն։ Իսկ ըստ հարաւոյ դիմաց դարուս՝[1] զերբայեցի ընտրեալ պատանին զմարտիրոսն Ստեփաննոս։ Եւ համբարձեալ վերադրեաց զերագոյն դրան երջանիկն Առաքելոց՝ ի սեան ուղղի խորանի Սուրբ Աստուածամօր՝[2] ի չինուած միջոցի որմոյն կառուցման, զսրբոյն ոսկեբս ըզՄկրտչի զարարչին՝ Ջրով. և մաքրելոյն ի նմանէ հոգւով՝ զնախաւկայն զերկրորդն Աբէլ, և նորոյս Ադամայ զվշտացն ծնունդ երանեալ, որ եղեւ հրաւիրող մեռելոցն ի նախնին ընդ դրունս մահից երկրին կենդանեաց. զՅակոբայ որդւոյ Յովսեփայ որ կոչիւր Արդար, և սակս աննդական կենցաղակըցութեանն՝ Եղբայր Յիսուսի. զմեծի Առաքելոյն Ստեփանէ. զհզօրացն վկայից զընտրեալն Աստուանց. զՔառասնիցն որ ի Պոնտոսէ երկրին Գամրացւոց սուրբ զինուորացն[3]. զկոզմայի և զԴամիանոսի զնահատակացն։ Եւ ըստ կայից հարաւոյ ի սեան խորանին՝ զսուրբ պատանեկին Ստեփաննէի. զկիպրիանոսի զկարքեդոնացւոյն՝ որ յԱփրիկեայ սուրբ և երանեալ եպիսկոպոսի և վկայի, և Յուստինեայ կուսի խմաստնոյ անարատի և մարտիրոսի. զերջանկեայ վկայից աստուածաշնորհ քահանայից փառաւորեալն Ղեւոնդեանց։ Ստեպես զամենեսեան

1. Թաւի զաղար, զաղրելու կամ գնելու տեղ. եբրայերէն դարուտ նշանակէ նաւէր, գոհ։
2. Ստեփաննոսի Սրբոց նշխարքները յիշէ տեղաւորած Ս. Աստուածածնի խորանին չուրջը։
3. Սեբաստիոյ Քառասուն մանկանց։

զՍրբոցն պարս՝ ունի հաւաքեալ ընդ թեւովք իւրովք, իբր զմայր երանեալ ամենայն կենդանեաց՝ Տիրուհին և Աստուածածինն։

Արդ, ծագեաց նորանշոյլ փայլուկն Սրբոյ Ննանիա՝ ի մահից լուսոյ ականց արեւու[1], ի սահմանս բնակութեան լերանց Սիոնի, կողմանց հիւսիսոյ, յաւուրս ունոզաց տանս Վասպուրականի՝ եղբարց երից... անուն կրտսերոյն՝ զհաւոյն եդեալ Աննիքերիմ մականբեալ, իսկ միջնոյն՝ Գուրգէն, և նախնոյն[2] Աշոտ. բայց ի վրկագործն ծննդենէ աւազանին նորոգութեան՝ աստուածութեանն որգեգրութեան[3], անդրանկին՝ Յահակ, երկրորդին՝ Թադիկ, վերջնոյն՝ Յովհաննէս։ Թագաւորեալք և փառաւորեալք ի մի ամանակի, արք բարիք և աստուածասէրք, խոհեմութեամբ հանճարոյ առաւելեալք, և ըստ պատահման դիմաց պատկերի տեսման երեսի՝ յաւէտ ցանկալիք[4]։ Իսկ ի սէր սրբոց, ի պատիւ ընտրելոց, ի յարգումն հեզոց, յընդունելութիւն ուղղոց, ի զարդ եկեղեցեաց, ի պայծառութիւն սրբութեան տեղեաց և քրիստոսեան նշանաց, ի սպաս մարտիրոսաց, անկշիռք և անզուգականք։

Սոքա իսկ մեծաւ հաւատով՝ առեալ ընդ իւրեանս զգոյմարս և զկոյտս նախաբարութեան սեպուհն ազատաց, ընդ առաջ խաղացին աստուածեան Խաչին, զորմէ պատմութիւնս է. և վերբերեալ մեծաւ ընծայիւք՝ ի սահմանեալ և յատեալ տեղին ածէին, որ է ի ծործորս միջոցի լերանցն Կորդուաց վիճակին Մոկաց. և յանձանձեալ

1. Արեւմտեան կողմէ կամ աշխարհէ, ինչպէս էր Կ. պոլիս նկատմամբ Հայաստանի։
2. Երեց կամ անդրանիկն եղբարց։
3. Իբր թէ այդ առաջին անուններն չէին քրիստոնէական, մէկ մէկ այլ սուրբ անուններ տրուած էին։
4. Երեսօք և կերպարանօք այլ գեղեցիկք են եղեր այդ երեք թագաւորազն եղբարքն Արծրունիք։

անչափ գրգանօք, ի սրբոյ ուխտին տաճար Հանգուցին: Ի թիւս չափոյ քանակութեան համարոյ եղանակական չրջանակի հոլովման արուսեկի, որ ըստ ընթացման ամանակի այսմիկ նկատի, չորեքհարիւրորդի, երեսներորդի երկրորդի, յաբեթական տոհմիս տուժարի[1]: Եւ անդ զումարեցին խանեցին ժողովս բազմութեան տօնողաց ազանց. Հաչակեցին և աւանդեցին պաշտօն օրհնութեան կատարել աւուրց յաւուրս: Եւ մատուցին ընծայեցին չուրջ զնովաւ ակամբ՝ զրուրումն խնկոց ջահիւք վառեալք, և ծխովք անուշիւք կնդրկի և կասիայի, խառն ընդ երկրպագութիւն հոգւոյ նմին պատարագ: Եւ աղաղակեցին բերկրալիր բերանով օրհնաւաք բարբառով, ի շրթունս ընտիրս, ի լեզուս մաքուրս, ի հնչումն երգոց, ի տաւիղ օրհնութեանց, ի գոչումն ազգման, ի ձայն ցնծութեան, ի քնար շնչաւոր, ի փող անձնաւոր, ի խնճոյս հոգեւոր, ի ծնծղայս մարմնեղէն, ի ծափս ձեռին, ի տրոփումն կայթելոյ կաքաւման ոտին, ասելով զհոգեպարգեւն և աստուածաշունչն սաղմոս, «Եւտուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան»:

1. Զարս տաղով մեկ ի թուին նկր բառը նշանակէ, որ է 983–4 Քրիստոսին:

ՄԼԳ

ՎՐԷԺ ԱՊԼՂԱՐԻՊԻ Ի ԴԵՐԵՆԿԱՅ ԵԻ ՀԱՇՏՈՒԹԻԻՆ

(ՄԱՏԹ. ՈՒՌՀԱՑԵՑԻ. ԺԹ.)

Ցայսմ աւուրքս եղեւ կոտորած զօրացն Հայոց յԱնձեւացեաց գաւառին, ի Բաւնական կոչեցեալ անուն[1], նենգութեամբ առն քաջին Ապլ–դարիպայ[2]: Վասն զի թագաւորն Անձեւացեաց[3], որում անուն Դերենիկն ասէին, եհան զԱպլղարիպն ի յաստպարապետութենէ զօրաց իւրոց, զայր հզօր և զքաջ, և եդեալ ի տեղի իւր զՄարգիս զոմն ազատ. և կարի յոյժ վիրաւորեալ լինէր հզօրն Ապլղարիպ: Եւ յայնժամ բանտաւ լինէր[4] առ զօրսն այլազգեաց, և զամենայն պատճառս ծանուցանէր նոցա, և ասէր, թէ, «Ես ոչ ելից ի պատերազմ ընդ ձեզ. և արդ՝ ի գիչերի յարուցեալ եկայք ի վերայ բանակիս մեր. և ահա այս նշան ձեզ իմոյ վրանին, յորդան կարմիր է[5], և ի վերայ բլրին հաբեալ կայ, և զօրք իմ ընդ իս»: Իսկ զօրքն այլազգեաց եկին ի վերայ նոցա յանկասկած ժամու. և էր թագաւորն և զօրքն իւր ի մեծ ուրախութեան.

1. Յատուկ անուն տեղւոյ, թուի զօրաց այն տեղ կենալուն համար՝ այսպէս կոչուած:

2. Սա էր Հաւռուհիք կամ Հաւնուռնիք կոչուած ցեղէն:

3. Որ և Արծրունեաց:

4. Այլազգեաց մատնել ուզեր է զթագաւորը:

5. Ազնուական ցեղերն՝ մանաւանդ զինուորականք՝ իրենց զգեստուց և զարդուց յատուկ գոյն ունէին. այս զօրավարին (վրանին) գոյնն ալ որդէն ելած կարմիրն էր, Ver à Soie. Թուրք. Գըրմըզ:

և ի գիշերի անկան ի վերայ զօրացն Հայոց զօրք այլազգեացն, և արարին կոտորած մեծ. և մեռան բազում պատերազմողք երեւելիք և քաջք: Բայց ապաշաւելի այս իսկ էր, վասն զի չէր պատերազմ ի պատեհ ժամու. և արարին ձերբակալ զԴերեւենիկն՝ զթագաւորն. և ընդ Ապղաղարիպայ վրանովն ոչ իշխեաց անցանել ոք, վասն զի կայր ի վրանին զօրօք իւրովք պատրաստական: Եւ յայնժամ տարան զթագաւորն Դերեւենիկ՝ ի Հեր[1] քաղաք:

Յայնմ աւուր Վարագ[2] և ամենայն վանօրայքն անէծս ցաւագինս և սաստիկս կարդացին Ապղաղարիպայ. միայնակեացք և միաբանակեացք՝ դղրդեալ ի վերայ նորա՝ լուծին գնա ի հաւատոյ[3] և հանին արտաքս ի յեկեղեցւոյ Աստուծոյ: Իսկ Ապղաղարիպայ եկեալ ի միտս իւր՝ լայր, վասն զի էր այր հաւատարիմ և երկիւղած յԱստուծոյ, և կարի յոյժ ապաշաւէր զհեղումն արեան քրիստոնէից զօրացն Հայոց: Եւ յայնժամ հարցուկ լինէր վասն թագաւորին, եթէ յորում բերդի կայ արդեալ՝ ի Հեր քաղաքի. և ծանուցին նմա՝ եթէ ամիրայն Ապհանձա[4] ի գարանաց արձակեաց զԴերեւենիկն, և յամենայն ժամ հանէ գնա ի խաղ գնային մեյտանն[5] արտաքոյ քաղաքին Հերայ: Եւ լուեալ զայս Ապղաղարիպայ ուրախ լինէր յոյժ. և յուղարկեալ գազատարար առ թագաւորն Դերեւենիկ, և ասէր ցնա այսպէս. «Ահա ես յայս անուն ժամու յայնմ տեղւոյ լինիմ. յընաթիր և ի սուր ձիով հեծիր, և հանց չանաս որ ի յիս անկանիս[6]»: Եւ յաւուր միում Ապղաղարիպայ եղեալ խաղայր ի գունան, բազում ա-

1. Հիմիկու Խոյ քաղաքին մօտ:
2. Որ գլխաւոր և եպիսկոպոսական վանք էր:
3. Այսինքն՝ նզովեցին կամ բանադրեցին:
4. Աթաբացի կոչմնակալ Հեր գաւառի և քաղաքի:
5. Գնատակ նետելու և քշելու խաղի (Jeu de la Paume) հրապարակ:
6. Դէպ իմ կողմս վազես ձիովդ և գաս:

զատօք իւրովք, և արս հազարս երեք՝ զինուք չուրջ զնաքօք. և Ապղաղարիպ կայր ի քիմն[1] յիսուն արամբք, և Դերեւենիկն ի բունպանաց ուսգէն[2] խնդրեալ իւր սուր ձի, և տուեալ ինչս իւր. և յայնժամ Դերեւենիկն եհար զգունան և վարէր ի դիշն[3] ուր Ապղաղարիպ թագուցեալ կայր ի մէջ անտառնախիտ ծառոց զրախտեացն Հերայ. և գահեալ զերիվարն ուժգին՝ ի բաց թողեալ զգունան և եկ արարեալ: Եւ տեսեալ ամիրային Ապհանձէի և զօրացն, զհետ յարձակեցան մեծաւ ցասմամբ. և թագաւորն յԱստուած յուսացեալ գնայր քաջապէս և անկանէր առ Ապղաղարիպ: Իսկ ի զօրաց այլազգեաց ոմն խապշիկ՝ այր հզօր և քաջ, ընթացեալ զհետ և հասանէր ի վերայ Ապղաղարիպայ. և Ապղաղարիպ գոչեաց որպէս զառիւծ. և հասեալ ի վերայ նորա, և գազանաբար հարկանէր գնա, և յերկուս բաժանեաց գնա, և պատառեաց գնա ի վերուստ մինչեւ ցերանս: Եւ տեսեալ զայն այլազգեացն՝ ի փախուստ դարձան. և Ապղաղարիպ ձայն տուեալ քաջ արանց իւրոց, զհետ յարձակեալ և հասանէր ամիրային Ապղշհաձէի, և կամեցաւ գնա ի ձիոյ առնուլ և մինչեւ ի դուռն քաղաքին վարեաց գնա. և ամիրայն որպէս զփայլակն մտանէր ընդ դուռն քաղաքին Հերայ: Յայնժամ Ապղաղարիպն պողոպատ ճկաւն[4] հարկանէր զերկաթի դուռն քաղաքին, և պատառեալ զերկաթն և յայն գեհն անցուցանէր, որ և անեղանելի մնաց մինչեւ ցայսօր ժամանակի, և ի տեղն պնդեցին որպէս զբեւեռ: Եւ այսպիսի օրինակաւ ի ծառայութենէ եհան զթագաւորն ընդ Դերեւենիկ՝ քաջն Ապղաղարիպ: Այս ինչ եղեւ ի ՃՈՒՋ գաւառին Հայոց աշխարհին, ի գեղն որ կոչի Բակ, սահմանակից Վասպուրականայ:

1. Պահուրտած էր, յանկարծ դուրս էլնելու և յարձակելու համար: 2. Ախոռապետ:
3. Գնատակը նետած կու քշէր դէպ յԱպղաղարիպ:
4. Ճիկա և Մակր հատ թուր կամ տապար (պալթա) նշանակեն:

ՄԼԴ

ԳԻՒՏ ՄԱՏԻՆ ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՊԵՏՐՈՍԻ

Թէ զիարդ եղեւ կտրուելն կամ որպէս բերաւ ի Հայս

(ԽՕՍՔ ՊԱՆԴԱԼԷՈՆԻ ՔԱՀԱՆԱՅԻ[1])

Յամս Նիկիփորայ[2] տիեզերակալի կայսեր Յունաց, քաջի և առաքինւոյ, յաղթող ի պատերազմունս հեթանոսաց, որ ջարդեաց զլուծ իսմայելական՝ որ ի վերայ պարանոցի քրիստոնէից, և խարտակեաց զկզակս նոցա, և առ զանառիկ ամուրս նոցա, մանաւանդ զմեծն և զականաւորն և զհռչակաւորն նոցա զՏարսոն Կիլիկեցւոց, և զկրետէ, որ բնակեալ էին անդ հանապազաստուերն չարաճճիք դատարկապորաքն[3] այնոքիկ. և արար ծառայ զամենեսեան գայնոսիկ՝ մեծութեան պետութեան Հռոմայեցւոց, թագաւորն այն՝ երկրորդ զկնի թագաւորութեան վերնոյն. այլ և եբեր զարդս զպիղծ մոգպետաց նոցա՝ ի պատիւ Սրբոյն Սոփեայ. եհաս ինձ տառապեալ Պանդալեոնի և ոչ բան արժանեաց քահանայի, իբր թէ ի տեսչութենէ Աստուծոյ՝ ի հրամանէ երկրորդ տիեզերակալի տեառն

1. Ձոխաբանութեամբ գրուած է, բայց և եռանդեամբ և վայելուչ. ձեռագիր օրինակք այլ երբեմն աւելցուցեր պակսեցուցեր են:

2. Ի Նիկեփոր կայսրն է՝ Փոկաս մականուանեալ, յամս 963–9: Ի գրչագրին գրուած է Նիկիփաւռս:

3. Եպիմենիդէս քերդողին ըսածն է, զոր յիշած է Պօղոս Առաքեալ ի Թղթին առ Տիտոս, Ա, 12:

իմոյ աւագ Աբռուահիլի Հաւազասպայ՝ արքայից արքայի[1] մեծ պետութեանս՝ տանս Հայոց, գնալ զճանապարհս ուղեւորութեան, որ ի թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն՝ ի Նորն Հռոմ, յերկրորդն Բաբելոնէ, և ի ճչմարիտն Երուսաղէմ, յամենատեղւոյն յամենահրաշն ի գլուխն տիեզերաց, յանմատչելին և յանկոխելին ի թշնամեաց՝ Կոստանդինուպօլիս, ի ՆԾԴ (414–965) թուականութեանս Հայոց, ի ծովի Աստուածայայտնութեանն ի վեց յունուարի, ի ժամու հինգերորդի. յորում և կոխեցի անարժան գարշապարօք իմովք գատակս տանն Տեառն և գյարկ բնակութեան Աստուծոյ մերոյ. յորում կայի հիացեալ ուշ յապուշ զարմացմամբ. զի դեռ եւս ոչ էին չիջեալ կանթեղքն վառեալք և մոմեղէնքն բորբոքեալք. որ մեծի լուսոյն կային հակառակափոք, այսինքն արեգակնային ճառագայթիցն[2]: Ապա ուրեմն բղխեաց յիս Հոգին Սուրբ բանս բարիս՝ ներբողականս և դրուատելիս խօսել ինձ՝ ի խորանն լուսոյ, հառաչագին արտասուօք. զի ոչ գիտէի զիս յերկրի, այլ յափշտակեալ մինչեւ յերրորդ յերկինս: Ընդ որում և յոյժ հաճոյական գտեալ զգրեալսն յինէն՝ առաջի յարակիրթ հզօրաց քաջաց իմաստասիրացն այնոցիկ, մինչ պատմեցին զգործս իմ՝ թագաւորին. մինչ զի միաբանական հաճոյութեամբ և օրհնութեամբ ընկալան զօրհնութիւնս իմ, և ոչ եղե նախատինք հզօր արքայիս իմոյ և ոչ տանս Հայոց, և կամ վարդապետացն իմոց՝ որք անուշին և ուսուցինն զիս[3]:

1. Այլեւայլ անուամբք կոչուած՝ Աբծրունեաց ցեղին կամ Վասպուրականի թագաւորն է, որ թագակից ըրաւ իր որդին Սենեքերիմը: Տես ծան. 4, եր. 290:

2. Իբր թէ այնքան կանթեղք և մոմեղէնք վառուած կային, որոց լոյսն արեւու լուսոյն հաւասարէր:

3. Շատ փափագելի էր որ առ մեզ այլ հասած ըլլար այդ զմայլական ներբողն կամ գովեստ Ս. Սոփիոյ տաճարին:

Ապա եղեւ ինձ լինել իբրեւ եօթնամսեան աւուրքք, նստել ինձ ընդ վարդապետս, լսել և ուսանել ի նոցանէ, ի փառազարգեալ խորանին Աստուծոյ, զորմէ մարգարէն ասէ. «Եկայք ելցուք ի լեառն Տեառն և ի տուն Աստուծոյ մերոյ, և ցուցցէ մեզ զճանապարհս իւր և գնասցուք ընդ նմա»։ Զի անդ գումարեալ կան բազմութիւնք հրաշազեսից կղերիկոսաց, քահանայից և եպիսկոպոսաց, և հոգելից իմաստասիրաց[1], անլռելի հրաշաձայնեալ եղանակօք գեղգեղմամբ ազգի ազգի և անհասանելի իմացմանցս մերոց՝ բանիւք ցնծութեամբ, յամենայն օր ի լսելիսն Աստուծոյ, անհանգիստ իրանամբք ի տուէ և ի գիշերի զփրկութիւն հայցելով տիեզերաց։

Հարցի և ապա քննութեամբ ի վերայ բազմայ և զայս եւս, եթէ գուցէ՞ արդեօք մասն ինչ ի նշխարաց Սրբոյ Առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, որք հաճեալք կան և հաւանեալք ի մեծն Հռոմ՝ յերկրորդումն անուանեալս Հռոմի և կոչեցեալս Նոր Երուսաղէմ. պատասխանի ետուն և ասեն, ոչ. և պատճառք ոչ լինելոյն այս է զոր պատմեաց Բարդեծաւն յԵղեսեայ[2], այլ կորովի և բանիբուն իմաստասէր և հմուտ ժամանակագրական իմաստութեանց, որպէս կանխեաց ասաց նա վասն այսոցիկ. թէ, Մեծ թագաւորն Յուստիանոս յորժամ աւարառեաց զքինուածս հրաշատեսիկ եկեղեցւոյն Սուրբն Սոփեայ, ազաչեաց զՀռոմմայեցիս տալ մասն ինչ ի նշխարաց Սրբոյ Առաքելոցն՝ ի պատիւ սրբոյ եկեղեցւոյն, զի լինիցի իբրեւ զեկեղեցին Հռոմմայ զարդարեալ

1. Յիշեցինք աւրիշ տեղ՝ որ լաւ երգիչներն փիլիտոխայ կոչուին, այս տեղ այլ նոյն նշանակութեամբ իմաստասէր։

2. Բարդածան Ասորին յիշած են Խորենացին, Բ, կգ, և Եւսեբիոս. բայց Պանդալէոնի յիշածն աւրիշ անձ է՝ եթէ Յուստինիանոս կայսեր ժամանակակից է, կամ աւելի վերջ։

սրբովք Առաքելօք. և զայն ի գինս փոխարինին ոսկւոյ՝ որչափ և կամեսցին։ Ըստ որում հաւանեալ եղեւ ի նոցանէ՝ մաղս վեց[1] ի մորուաց Սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, ընդ անհնարին չափոյ ոսկւոյն կշռեալ բերեալ եղեւ ի քաղաքն Կոստանդինուպօլիս, և եդեալ ի Սուրբն Սոփի. և ժամանակ ինչ անցեալ՝ զարձեալ հնարեցան Հռովմայեցիքն և գողացեալ զարձուցին անդրէն ի Հռոմ։ Եւ պատմութիւնս այս կայր պահեալ մեծաւ զգուշութեամբ յարկեղս մեծի թագաւորին Յուստիանոսի։

Ապա զարձեալ մտախորհ լինելով իմ, թէ զիարդ արդեօք զրկեալ եղեն ամենայն ազգք յոսկերաց սրբոց Առաքելոցն, Հնդիկք, Պարթեւք և Մարք և Եղիմացիք, և որ բնակեալ են ի Միջագետս, ի Հրէաստանի, և ի Գամիրս, ի Պոնտոս և յԱսիա, ի Փռիւգիա և Պամփիւղիա, յԵգիպտոս և ի կողմանս Լիբեացւոց, Կրետացիք և Արաբացիք, և միայն Հռոմ եղեւ անդրանիկ ամենայն արարածոց. ապա հասի խաղաղութեամբ յաչխարհս մեր, զօրութեամբ սրբոյ նշանին և աղօթիւք սրբոց Առաքելոցն, և չնորհօք երկուց երանելեաց թագաւորաց մերոց՝ Նիկեփորոսի և Համազասպայ։ Լուայ յասելոյ ոմանց՝ եթէ նշխարք կան Պետրոսի Առաքելոյն ի գաւառին Կոգովտի[2], և ոչ կարացի հաւատալ բազում ժամանակս թէ այս լինիցի. ապա յայտնեալ ինձ աստուածահրաշ աքանչելի յայտնութիւնն[3] ի ձեռն Քակովբայ Հայոց Մարզպանի[4], որ ի բուն և ի բնիկ նախարարաց տանն Հայոց, այր լի իմաստութեամբ և

1. Ուրիշ 00. կ'աւելցընեն, վեց մազ ի վեց փող ոսկի, կամ ի վեց փողական եղեալ։

2. Որ և Կոգայովիտ, մօտ է Տարօնոյ։

3. Ուրիշ Օր. Աստուածային զնոր հրաշիցս աքանչելի յայտնութիւնս։

4. Ի գարուս Հայոց մարզպանութեան պաշտօնն կամ պատիւն անծանօթ է ինձ. թուի սահմանապահ։

կատարեալ հանճարով, ուղիղ հաւատով և կատարեալ առ աւագասիրութեան խնդիրս, բարերար առ ընկերս և ողորմած առ ապքաս, օգնական անօգնականից, չինող աշխարհի և հալածիչ անիրաւաց, զարդարիչ եկեղեցեաց և պատուաղիր քահանայական դասուն: Ապա երեր զաշխատութիւնն իւր պարզ և յայտնի բանիւք գրով ձեռին իւրոյ, զՊատմութիւն գալստեան Սուրբ Աւաքելոցն յաշխարհս մեր. զոր քննեալ և տեսեալ ի ստոյգ տեղեկութենէ ճշմարտութեամբ, ոչ գմտաւ ածեալ զաշխատութիւնս, եւ ինձ զպատմութիւնն, զի երեւեսցի պարծանք աշխարհիս մերոյ և մեծութիւն թագաւորիս մերոյ, ի մէջ ամենայն տիեզերաց, և լիցի պատմութիւնս (ճշմարտական, և թողաք յիշատակ յաւիտենական) ի մէջ եկեղեցւոյ, ի փրկութիւն թագաւորիս մերոյ՝ երկայն աւուրց կենաց, և թողութիւն մեզաց, և առաջնորդ ի կեանն յաւիտենից, հանդերձ ամենայն զարմիւք, որդւովք իւրովք և կանամբք, կենդանեօք և ննջեցելօք, նա և իշխանօք և իշխեցելօք, միանգամայն ամենայն ծառայիւք իւրովք: Զոր թողաք յիշատակ յաւիտենից ի մէջ եկեղեցւոյ. զի յաւուր յիշատակի Սրբոց Աւաքելոցն՝ համախմբեալ ժողովք աստուածահաճոյք՝ ընթերցցին զճառս հրաշից որ ի ձեռն Սրբոցն այնոցիկ գործեցաւ, և զգուշասցին յամբարհաւաճ և յանուղղայ գնացից, և պատուեսցեն զքահանայս աստուածս: Եւ արդ, ապաւինելով ի չնորհս Հոգւոյն Սրբոյ՝ սկիզբն արասցուք պատմութեանս՝ կարգեալ[1] յամենայն լսելիս, որ է այսպէս:

Քահանայ ոմն էր արժանաւոր զարդարեալ ամենայն առաքինութեամբք և սրբութեամբ՝ յԱզրապետ նուիրակաց[2] գաւառին՝ որ կոչի Գոգովիտ, ի գեղն որ

1. Գուցէ պիտի ըլլար կարդալ:
2. Կամ Աւագագունիք, Տաթեւոյ մերձաւոր գաւառ. իսկ միւս անունն սովորաբար գրուի Կոգովիտ:

Բզրայրի գոմ[1] անուն կոչի. և ի գեղն բնակեալ էր այր մի պատուական ի տանուտիրական տանէ. և խաբեալ զնա սատանայ չարութեամբ յայսմ նուագի, անզեղջ և անդառնալի խորհրդով արհամարհէր զքահանայն Աստուծոյ, և անարգէր զնա գարշելի և տգեղագոյն բանիւք, սատիկ վիճելով ընդ երկար աւուրս[2]: Զայրացեալ սրբոյ քահանային նզովեաց զնա զառնապէս, և ըստ աստուածատուր իշխանութեանն զոր ունէր ի ձեռին իւրում՝ զկապէն և զարձակէն ի յերկինս և յերկրի, կապեաց զնա բանիւ և զօրութեամբն Աստուծոյ՝ յանլուծանելի կապանս իմանալիս հոգեկաշկանդ խեղդմանց, ոչ կարացեալ արձակել զնա ումեք, բայց եթէ բանիւք բերանոյ իւրոյ և մատամբ սրբոյ ակոյ ձեռին նորա: Ապա եհաս վախճան քահանային գնալ զճանապարհս հարց իւրոց՝ ըստ օրինակի ամենայն կենդանեաց. և նա մնաց անզեղջ սրտիւ յ'անել բանտի ի տան կապանացն: Ապա ուրեք եկեալ ի միտս իւր, և գիտացեալ զհիգութիւն կորստեան անձին իւրոյ, ըստ մարգարէին, թէ Յորժամ գարձցիս և հեծծեսցես և յոգւոց հանցես՝ ապա գիտասցես թէ ուր իցես. սկսաւ այնուհետեւ կոծել զկուրծս իւր՝ լալով և ողբալով, վայ և եղուկ զանձն իւր կարգալով՝ վասն անգիւտ կորստեան անձինն իւրոյ.

1. Կամ Բրայրի, ըստ Յայսմաւուրց ոմանց Բձաւ և Գոմեր. ուրիշ կերպով այլ գրուած կայ:
2. Յայսմաւուրք՝ ռամկաբար կ'ասելցընեն. «Եւ » ապա յետ անաբգանացն առեալ զքցուած* գլխոյն » իւրոյ՝ զարկեալ զգետնի, և գիմեալ ի գուռն եկե» ղեցւոյն, և անկեալ ի վերայ երեսաց իւրոց հա» ռաչեաց ի խորոց սրտէ, աղաղակեաց ի վեր, և » անէծ զառանուաէրն »:

* Թէպէտ և կ'իմացուի որ այս բառս գլխանոց նշանակէ, այլ և յիշուած է ի գիրս, ի Վկայաբանութեան Ս. Թէոդուղայ, «Քցած ի գլուխ »:

հարցանէր ցգիտունս գրոց և ցհմուտս օրինացն Աստուծոյ, թէ արդեօք իցէ դեղ անբժշկելի ցաւոյս, և կամ հնար զերծանելոյ յ'անկ գրոյ կորըստեանս: Պատասխանի ետուն նմա և ասեն, թէ, Չէք քեզ հնար բժշկութիւն գտանել դառն վիրիդ կամ արձակել յանխզելի կապանացդ, բայց միայն թէ ուղեւորիս ընդ երկայն ճանապարհ որ տանի ի գլուխն տիեզերաց ի մեծն Հռոմ, ուր են Սուրբ Առաքեալքն Պաւղոս և Պետրոս, սիւնք եկեղեցւոյ, արձակողքն կապելոց և տուողքն կենդանութեան. նոքա կարեն արձակել զքեզ ի հիւանդութենէդ քումմէ. ընթացիր վազվազակի:

Զայս լուեալ նորա՝ ջերմեռանդն սրտիւ հառաչագին արտասուօք անչափապարար յուզի անկեալ, առ ոչինչ համարելով զանհնարին երկայնութիւն ճանապարհին, վաճառեալ զամենայն ինչս իւր, ընդ իւր տանելով թոշակ առ ի պէտս առաքի եղեալ ճանապարհին. յաղողեալ նմա ի Հոգւոյն Սրբոյ չնորհաց, ըստ մեծահաւատ աշխատութեանն իւրոյ՝ եհաս ի թագաւորեալ քաղաքն ի մեծն Հռոմի. դիմեալ յերկնանման սուրբ եկեղեցին, անկեալ առաքի պատրիարքին զոր Պապիոն կոչեն, և պատմեաց զամենայն անցս աղեաց իւրոց նա և զպատճառս գալոյն: Յայնժամ կոչեաց երանելի հայրապետն զբովանդակ ուխտ սրբոյ եկեղեցւոյն, և ասաց նոցա զամենայնն, և խնդրեաց ի նոցանէ այսպէս ասելով. Այս այս դիմեալ յարեւելից մինչեւ ի մուտս արեւու՝ եկեալ եհաս առ մեզ՝ մեծափափագ և պինդ հաւատով. եկայք եղբարք, աղաչեսցուք զտէր Աստուած մեր՝ վասն սորա, և զսուրբ զԱռաքեալն, զի բացցեն մեզ դուռն ողորմութեան զթութեանն Աստուծոյ, և ազատեսցեն զսա յայնպիսի գտան նեղութեան կապանաց: Ապա առնեցուն զայս լուեալ՝ ախորժելով ընկալեալ զասացեալսն ի սրբոյ հայրապետէն, սկիզբն արարեալ պաշտաման, անհանգիստ լինելով ի տուէ և ի գիշերի՝ զութ օր: Ձկնի անցանելոյ ութ աւուրն՝ իբրեւ յԱստուծոյ տեսչութենէ իմացումն եղեալ այսպիսի՝ սրբոյ պատրիարքին, հրամայեաց բերել զշղթայս երկաթիս և դնել ի պարանոց առնն այնորիկ, և կապել առաքի Սրբոց Առաքելոցն. և զայս վիճակ և նշան լինել յաստուածաւստ եղէն ի սիրտս իւրեանց, ասելով. Եթէ շղթայդդ այդ լուծանի ի պարանոցէ դորա, ապա յայտնապէս գիտեմք՝ եթէ ողորմութիւնն Աստուծոյ ժամանեաց յայդ յայդ և լուեալ ազատանաց մերոց: Եւ այսպէս թողեալ զնա ի կապանս շղթայիցն՝ գնացին: Ապա իրրեւ այգն զառաւօտն մերկանայր՝ սկիզբն առնել տունջեան աւուրն, եկին տեսանել զնա ամենայն բազմութիւնն, ընդ ինքեանս բերելով ըզսուրբ հայրապետն՝ զՊապիոն. իրրեւ տեսին՝ ի զարմացման եղեալ հիացմամբ մեծաւ փառաք ի բարձունս Աստուծոյ առաքեցին, և օրհնութիւն ծնրադրութեան առ Սուրբ Առաքեալն. զի ահ կալաւ զամենեսին. քանզի լուծեալ էին կապանք շղթայիցն ի պարանոցէ նորա. և նա կայր արձակ և աղօթէր առաքի Սրբոց Առաքելոցն: Հարցին ցնա և ասեն. Ո՛վ այր դու, զի՞նչ եղեւ քեզ, զի՞նչ տեսեալ քո, զի՞արդ լուծար ի կապանաց այսր. աղէ պատմեա մեզ մեզմով զամենայնն. աղէ ասա ճշմարտութեամբ առաքի այսքան աշագին բազմութեան՝ որ վասն քո այսքան աւուրբք նեղեալք և ճգնեալք են յոտանաւոր աքնութեամբ, զկնի սրբոյ հայրապետիս մերոյ: Պատասխանի ետ նոցա և ասէ. Մինչդեռ կայի ես կապեալ ի շղթայիս, յանկարծակի արկաւ զինեւ թմբրութիւն. տեսի ի տեսլեան դէմ յանդիման, զի քահանայն որ կապեացն զիս՝ նստէր ի վերայ աթոռոյ մեծ փառաք, և Սուրբ Առաքեալքն Պետրոս և Պաւղոս առաքի նորա յոտն կալով. և աղաչէին վասն իմ զքահանայն, այսպէս ասելով. Արձակեա՛, տէր քահանայ, զայրս զայս ի կապանացս՝ յոր կապեցեր. վասն զի ի մեզ դիմեաց այնքան հեռաձգեաց ճանապարհաւ. արդ, մի յամօթ առներ զյոյս դորա որ ի մեզ. ողոր-

մեա՛ վասն մեր՝ ողորմելի անձինդ. զի այսպէս հրաման ընկալաք ի վարդապետէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, յորժամ առաքեաց զմեզ ընդ աիեզերս, Թողլով իւրաքանչիւր ուժեք զյանցանս իւրեանց՝ որք հաւատով ապաւինին ի մեզ, և մեք յուսով՝ ի յոյս արիեզերաց Յիսուս Քրիստոս: Արդ, դու աչակերտ գոլով հեղոյն և մարդասիրին, ողորմեա սմա, նմանելով ողորմածին և մարդասիրին որ զմեզս մեր էառ և զհիւանդութիւնս մեր երարձ. զիա՞րդ կարէ հանդարտել սիրտ քո՝ չողորմել նմա՝ որ ըմբռնեալն է յայնպիսի դառն և ողորմելի տառապանս: Իսկ նորա պնդագոյնս բարբառեալ առ Սուրբ Աստուածն, ասելով. Չէ հնար այդմ լինել, զի մեծ է վնաս դորա և անբժշկելի է. ոչ է արժանի արձակման: Իսկ իբրեւ զիտացին զանխոնարհելի միտս նորա՝ երկոքեան նոքա ի գուռս անկեալ առաջի քահանային, աղաչէին զնա զի լուծցէ ի կապանացն: Իսկ իբրեւ յայս պատառանս կային Սուրբ Աստուածն և ոչ ընդունէր, եկին եկաց առաջի նոցա այր մի աշաւոր տեսլեամբ և լոյս զանձամբ արկեալ. իսկ իբրեւ տեսին զնա Սուրբ Աստուածն՝ ասեն ցքահանային, Թէ և մեզ ոչ լսես՝ սակայն զդա առ քեզ բարեխօս ունիմք, վասն դորա ողորմեաց սմա և արձակեա զդա ի կապանաց իւրոց: Այսպա յարեաւ քահանայն յաթոռոյն իւրմէ, և անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր՝ առաջի Սրբոյ Աստուածոյն. ասէ դմա. Այր դու, արձակեալ ես ի կապանաց քոց, վասն սոցա բարեխօսութեան, և թողեալ լիցի քեզ սաստիկ և անհնարին չար յանցանքն քո: Զայս ասացեալ նորա՝ յանկարծակի անկան չղթայքն ի պարանոցէ իմմէ. և ես երկրպագեալ Սրբոյ Աստուածոյն և քահանային, մեծաւ խնդութեամբ լցեալ՝ գարձեայ:

Զայս պատմեաց ժողովրդեանն և սրբոյ հայրապետին՝ այրն այն. և նոքա մեծ բերկրանօք լցեալ օրհնէին զԱստուած և զՍուրբ Աստուածն, որ ոչ անտես արարին զրազմաչխատ զպաղատանս նոցա.

յայնմ՛ ի սքանչելի տեսլենէ գիտացին և ծանեան՝ զմեծ պատիւ քահանայութեան: Ո՛վ սքանչելեացս. Պօղոս և Պետրոս՝ յորմէ սերովբէքն սաթսեն և քրովբէքն պատկառին, որոց՝ ամենայն բազմութիւնքն երկնաւոր զօրացն ահիւ կան առաջի, նոքա առաջի միոյ քահանայի անկեալ կան ի գուռս, աղաչեն զի արձակեացէ զկապեալն. և զայս վասն այնը՝ զի յայտ արասցեն զպատիւ քահանայութեան՝ ամենայն տիեզերաց: Զի՞նչ այսր պատուոյ զուգական իցէ. յերկրէ սկիզբն դատողական՝ յերկին առնու. զի զոր սա աստ ի խոնարհ կապէ, զնոյն և նա ի յերկինս հաստատէ. վասն որոյ և զնոյնն իսկ զթագաւորական զգլուխն՝ ընդ ձեռամբ քահանային բերեալ եդ Աստուած, զի յայտ արասցէ թէ մեծ քան զնորայն ունի պատիւ: Աստ օրհնեցէք ամենայն քահանայք զՏէր, ո կայք ի տուն Տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ. ամենայն դասք քահանայից օրհնեցէք զՏէր, որ այսպէս փառաւորեաց զձեզ և բարձրացոյց յերկրի և յերկինս. միայն թէ արժանի գնասցուք ըստ կոչմանն յոր կոչեցարուք. և նմա փառք յաւիտեանս, որ այսպէս բարձրացոյց զկարգ և զպատիւ քահանայութեան:

Այսպա յետ այսր սքանչելեացս՝ աղաչեաց այրն այն զսուրբ հայրապետն, զի տացէ նմա հրաման սպասաւորել սուրբ եկեղեցւոյն՝ առաջի Սուրբ Աստուածոյն. և նա հրամայեաց նմա: Եւ նա եկաց սպասաւորելով սրբոյ խորանին զամս եօթն. և ոչ երբէք մեկնէր ի տաճարէն զցայգ և զցերեկ՝ անհանգիստ աշխատութեամբ: Այսպա անկաւ յետ այսորիկ ի խորհուրդս իւր՝ դառնալ անդրէն ի տուն իւր և տեսանել զորդիս իւր. և խնդրեաց ի հայրապետէն զի հրաման տացէ նմա գնալ յաշխարհ իւր. և հրամայեաց նմա գնալ: Իսկ ապա ի խորհուրդս եղեալ ի տարակուսի կայր, զմտաւ ածելով թէ զիարդ արդեօք գնացից յաշխարհ իմ և ի տուն իմ, և ոչ լինիցի ընդ իս թոշակ կենաց և

դեղ փրկութեան, մասն ինչ ի Սրբոց Առաքելոցն: Ապա ի գիշերին յայնմիկ խափանեաց զգոչիւն ժամահարին՝ մինչեւ ցպայծառ ծագումն լուսոյն: Ապա յարուցեալ հայրապետին և գասք քահանայիցն՝ եկին ի գուռն եկեղեցւոյն, տեսանել թէ զինչ է խափանումն ժամուն. տեսին զի փակեալ էր գուռն եկեղեցւոյն. ապա բացեալ զդրունսն և դիմեցին ամենեքեան ի ներքս առհասարակ. տեսին զայրն զայն չաղախեալ արեամբ, կալով անչունչ իրրեւ զմեռեալ: Ապա սկիզբն արարեալ ժամու ազաչանաց և պաղատանաց, տեսին զեղեալ նշան առ նա. զի առամամբք իւրովք ի բաց հատեալ էր զտղայագոյն ի մատանցն Սրբոյն Պետրոսի, զճկոյթն. իրրեւ զայն տեսին՝ կամեցան սպանանել զնա: Ապա ձայն եղեւ ի Սուրբ Առաքելոցն և ասէ. Թոյլ տուք զմա վասն մեծի հաւատոյ գորա և սպասաւորելոյն մեզ. և մի հանէք զման՝ զոր ունի զա ի մէնջ, զի տարցէ զդա յերկիրն Հայոց: Ապա թոյլ ետուն նմա, և մեծաւ պարգեւօք և սիրով և օրհնութեամբ յղարկեցին զնալ նմա ի յերկիր իւր՝ ի գաւառն Աղպագունեաց, ի Կոգովիտ, յինքեան ունելով զբացողն դրանց արքայութեանն երկնից: Եւ եդ զնա յեկեղեցւոյն՝ ի գեղն որ կոչի Գոմ Բծթայրի, մեծաւ ուրախութեամբ, ի փառս և ի գովեստ Ամենասուրբ Երրորգութեանն. այժմ և յաւիտեանս յաւիտենից:

Որք ընթեռնուք՝ յիշեցէք զառաւպեալս Պանտալէոն, զի բազում աշխատութեամբ հանի զդա յարկեղաց Սրբոյն Սոփիայ, և թարգմանեցի ի յունականէն ի հայ լեզու, ձեռամբ օրհնելոյն Յովսեփայ [1]. ի փառս Աստուծոյ:

1. Ո՞վ էր այդ Յովսէփն. առաջ չէ յիշուած:

ՄԼԵ

ՆՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՂԱՁԱՓԵԱԼ ՌԱՄԿՕՐԷՆ

Տաղ գեղեցիկ եւ նազելի ի վերայ Յասրևցի տանտիրոջն, որ ընդ բանիւ եղեւ ի քահանայէն իրմէ, և յետոյ ի Հռոմ արձակեցաւ.

Ականջ դիէք, եղբարք, բանիս պատուական,
Զի պատմեմ աքանչելիս Տեառընդ զօրութեան.
Թէ ո՛րպէս ցուցանէ հրաշս ողորմութեան,
Որ հրեղինաց մտացն է անհասական:
Ի յերկիրն Հայոց գաւառըն Սասուն,
Գիւղըն Գոմ Բըծայրի որ կոչի անուն,
Կայր քահանայ մի անդ հառոյ Բարձրելոյն,
Աբդար սուրբ և մաքուր և Տեառընն սիրուն:
Կայր անդ և տանուտէր մի ամբարտաւան,
Անհոգ ի մարգկանէ, լիրը և անըզդամ,
Որ ի քահանային վերայ յարաժամ
Խրոխտայր և անարգէր զնա բազում անգամ:
Իսկ քահանային անօք ու անկարեւոր էր[1],
Աղքատ և անօգնական, և նա տէր չունէր.
Եւ կարեւոր՝ զՔրիստոս կալեալ էր,
Եւ հայրական աչօվն պահպանեալ էր:
Եւ կայր նա զայրացեալ յառնէն յայնմանէ.
Ելեալ և ի տաճարն Աստուծոյ դիմէ,
Եւ զղուխըն բացեալ՝ զայրն անիծանէ,
Եւ Քրիստոսի բանիւն անդէն զնա կապէ:
Եւ առեալ ըզտուն իւր ի գեղջէն ելաւ,
Գնացեալ յօտար երկիր անդ բնակեցաւ.
Եւ օր մահուն հասեալ անդ վախճանեցաւ,
Եւ յօտար գերեզմանըն նա թաղեցաւ:

1. Օգնական կամ այժ և ինչք չունէր:

Իսկ անէծք և նզովքըն քահանային՝
Կապեալ ըզտանուտէրն անդերծանելին.
Իսկ նա անխոյթ առնէր յիմարեալ հոգին,
Մինչեւ եհաս վախճան սուրբ քահանային:
Ապա որպէս թմրեալ ի բազում գինոյն՝
Ի միտս եկեալ ծանեաւ զպատիժ իւր հոգւոյն.
Բախեր զսիրտն և կոծէր ի բազում սըգոյն,
Վայ և եղուկ կարդայր անձին իւրոյն:
Ելեալ առ վարդապետսըն չրվագայեալ՝
Դեղ անողջանալի վիրացըն հարցեալ.
Նոքա ամենեքեան զայս պատասխանեալ,
« Ոչ ուստեք չիք ճար՝ բայց այն որ կապեալ »:
Եւ արք յիմաստնոց նոցա ասացին,
Գնալ ի յարեւմուտս՝ յերկիրըն Լատին,
Առ Պետրոս և Պօղոս աչակերտք Փրկչին,
Մայրաքաղաքն ի Հռոմ՝ յաչխարհ Ֆըռանգին.
« Զի նոցա ետ, ասեն, Տէրն՝ ըզբանալին
Երկնից արքայութեանըն յաւիտենին,
Եւ համարձակ խօսին հետ Կենարարին,
Եւ միշտ բարեխօսեն վասն ումն և կամին »:
Զոր անյապաղ ելեալ և անդէն գընաց,
Ընդ ծով և ընդ ցամաք ճանապարհ հորդեաց.
Գնացեալ ի Հռոմ, լալով և երկըրպագեաց
Նըշխարացըն սրբոց Տեառն աչակերտաց:
Մըտեալ առ Պապն՝ ասաց զպատճառն երթալուն
Եւ ըզկապիլ նորա յիւրմէ երիցուն:
Իսկ նա վաղվաղակի զուխտ եկեղեցուն
Կոչէ, և ասէ նոցա ըզգործ եկելոյն.
Ասէ. Թէ, « Աչխարհաւ ու ազգաւ սա Հայ է,
Եւ ի քահանայէն իւրմէ կապեալ է,
Եւ հաստատուն յուսով առ մեզ եկեալ է
Յերկար ճանապարհաւ, որ մին տարոյ է:
Եկայք, աղաչեսցուք զԱստուած միաբան՝
Սըրբոց Առաքելոցըս բարեխօսութեամբ,
Միթէ ամենագութ Տէրըն վերնական՝
Տացէ քահանային հրաման արձակման »:
Եւ անդէն միաբան խորհուրդ արարին,
Բերին կապս երկաթի և յոտսըն դըրին,

Չձեռքն և պարանոցն այնպէս պնդեցին
Կնքեալ, և ի տաճարըն տարեալ արկին.
« Թէ արձակի, ասեն, կապանք երկաթոյն՝
Նա այնիւ ծանիցուք զարձակիլ հոգւոյն »:
Կանգնեալ հսկումն արին ի յայնմ իրիկուն,
Մինչեւ եկեալ եհաս լոյս առաւօտուն:
Իսկ այրն հառաչէր և լայր ի սըրտի,
Թէ, « Հոգւովս էի կապեալ ի յերկնի,
Եւ կրկին կապեցայ մարմնովս յերկրի.
Իցէ Թէ արձակիմ աստի և անտի »:
Եւ մինչեւ յայս խորհուրդս էր նա վարանեալ,
Յանկարծ մեծ ապշութիւն էր ըզնա կալեալ.
Տաճարըն սուրբ պայծառ լուսով էր լըցեալ
Եւ հոտն անմահութեան էր ըզնա զմայլեալ:
Եւ աթոռ զանազան ի լուսոյ կազմեալ,
Զորոյ գնմանութիւնն աք չըկարէ տալ,
Եւ ի վերայ նորա երէցն իւր բազմեալ,
Աբեգական նըման փառաք զարդարեալ,
Եւ Առաքեալքըն սուրբ առաջի կային,
Կապեալ ոտքն և զձեռքն՝ պաղատէին
Արձակել ի կապից զայրըն խնդրէին:
Եւ նա չլուաւ նոցա իսկ ամենեւին:
Եւ կայր յարեւելից կողման տաճարին
Թագաւոր մանկագոյն բազմեալ յաթոռին,
Եւ էր տեսիլ նորա յոյժ աշագին,
Եւ հազարք հազարաց ըզնա պաշտէին:
Իսկ Առաքեալքն անկան հանդէպ աթոռին
Եւ երկըրպագեցին անմահ արքային.
Պատմեն զընդդիմանալըն քահանային,
Թէ, ոչ լսէ թողուլ զմեզ յանցաւորին:
Եւ Տէրն զՊատիւհէն յուղարկէ առ նա,
Արձակել ի կապից զայրն որ անկեալ կայ:
Ծուներ ի յերկիր կրկնեալ դէմ Փրկչին՝ նորա,
Ասէ, Թէ Զի հնար թողութեան նորա.
Զի չատ նախատանօք սա անարգեաց զիս,
Եւ ի յիմ հայրենի տանէն վարեաց զիս.
Ես գայրացեալ մընամ աւուրն՝ որ յայտնիս,
Եւ առնես գատաստան ընդ սա և ընդ իս».

Աստուածն ամենայնի որ մարդասէր է,
Եւ վասըն փրկութեան մեր մարդ եղեալ է,
Ելեալ դէպ ի երէցըն քայլս արձակէ,
Բարեխօսել առ նա վասն որ կապեալ է։
Իսկ քահանայն իրրեւ կանգնեալ զՏէրն ետես,
Անկեալ և ի յերկիր մաժուցեալ զերես,
Ասաց, թէ, « Արարիչ Աստուած, մեզայ քեզ ».
Եւ դարձեալ ցայրն ասէ, Տէրն արձակէ զքեզ։
Յորժամ որ քահանայն արձակեաց զհոգին՝
Փակտեցաւ ի նմանէ կապանքն երկաթին.
Ելեալ երկրըպագեաց Յիսուսի Փրկչին,
Եւ օրհնեցաւ աջով իւր քահանային։
Իսկ հայրապետն՝ ուխտիւ որ յաղօթս կային՝
Աւետաւուն եկեալ զտաճարըն բացին.
Տեսին գայրն արձակեալ զոր կապեալն էին,
Եւ խնդութեամբ լըցեալ զԱստուած օրհնեցին։
Հարցմունք եղեալ նմա զպատճառս արձակման,
Եւ նա կարգաւ պատմեաց նոցա զայս ամենայն.
Զխնդիրս Գաբրիէլոցըն Տեառըն հարցման,
Եւ ազատիլըն իւր չնորհիւ տիրական։
Յայնժամ ի սուրբ Փափէն սկսաւ նա խնդրել.
Ասէ, թէ, Լուսաւոր հոգւոյս խաւարել՝
Հրաման տուր ինձ տաճարիս այս ծառայել,
Եւ զերախտիս Սրբոցն առաէն վըճարել։
Եւ հայրապետն երեսս ի նա զրանալին.
Եւ յանձն արար ի նա զհոգըս տաճարին։
Եւ նա ուրախութեամբ մինչ յեօթըն տարին
Սպասեալ Գաբրիէլոցըն սուրբ տապանին։
Գպա խորհուրդ բարի արկեալ ի սըրտին՝
Գընալ ի յարեւելս իւր հայրենին.
Եւ ասէր. Պիտէր ինձ ատ մասն և բաժին
Ի նչխարաց սրբոց Պետրոսի վիմին։
Զի պատուական մարմինքն են յայտնի եղեալ
Ի յարձաթի տապան և ոսկով կազմեալ.
Անպակաս և սուրբ անդէն մընացեալ,
Ոչ մազ մի ի գլխոցըն չէ պակասեալ։
Գաղտաբար գընացեալ ի մէջ գիչերին
Եւ բացեալ ըզտապան Սիմոն Պետրոսին,

Եւ կտրեալ ատամօք զալ ճկոյթ ձեռին.
Ի յահէ խելքն անցեալ՝ անկեալ ի գետին։
Զի ահագին ձայնիւ տաճարըն գոչեալ,
Մինչ ի բոլոր քաղաքն անդէն ժամանեալ.
Ելեալ ամենեքեան և անդէն դիմեալ,
Եւ տեսին զայրն անկեալ արեամբ ճապաղեալ.
Եւ նոքա չուր բերին յերեսըն ցանել,
Եւ ապա խելաբերեալ սկսան հարցանել.
Եւ նա զինչ որ արաւ՝ սկսաւ պատմել.
Եւ նոքա կամեցան զնա սպանանել։
Եւ կրկին ձայն եղեւ ի սուրբ տապանէն,
Թէ, « Մի առնուք ըզմսան ի լուսաբարէն,
Վասըն ծառայելուն ի բոլոր սրտէն.
Թողէք՝ զի տանիցէ ի յերկիրն իւր մէն »։
Բազում գանձս և դուռվաչըս նորա տուին,
Եւ խիստ մեծարանօք զնա յուղարկեցին։
Եւ նա եկեալ եհաս յաչխարհըն վերին,
Ընդ ինքեան ունելով զերկնից բանալին։
Եկեալ ի Կոգովիտ գաւառըն Սառոյ,
Եւ զազատիչ հոգւոյն իւր և մարմնոյ՝
Եդ ի յեկեղեցինըն Գոմ Բըծայրոյ.
Եւ ինքն անդէն հանգեաւ ի փառս Աստուծոյ։

ՄԼԶ

ԱՇՈՏ (Բ) ՈՂՈՐՄԱԾ ԹԱԳԱՒՈՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

(Ա ՄՈՂԻԿ· Գ· Ը·)

Զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ՝ որդի նորա, որ և Շահանշահ կոչիւր, ամս 25. և Մռչեղ՝ եղբայր նորա առ նովաւ թագաւորեաց ի Կարս։ Այս Աշոտ խաղաղասէր բարուք կալեալ զաչխարհս Հայոց՝ խոնարհութեամբ և ողորմածութեամբ ան-

ցոյց զամենեքումբք. վասն զի զգոնչացեալն[1] և զկազան և զկոյրսն՝ հաւաքէր առ ինքն, և բարձակից ինքեան առնելով ի խրախճանութիւնսն, զոմանս ի նոցանէ՝ իշխան և իշխանաց իշխանս և կիւրապաղատս անուանէր, և զբօսնոյր նոքօք. և զբոսն կարմիր և զվերս նոցա՝ առաջի աչաց իւրոց՝ փոխանակ զարգուց և ականց փայլելոց՝ համարէր: Այլ և զթաժակն իւր թագաւորական ըմպելիօք մատուցանէր նոցա. և յորժամ թարախ վիրաց նոցա խառնէր ընդ գինւոյն՝ յայնժամ զմեացորդս նոցա առեալ ինքն ճաշակէր[2]: Եւ այնքան առատաձեռնութեամբ բաշխէր կարօտելոց, մինչեւ ի մահուն իւր ոչ լինել գրամ մի ի գանձատան նորա. այլ և զկապուտ զարգուցն և բազմականացն և որմոյ՝ տայր կարօտելոց. և քաւեաց զմեզս իւր ողորմութեամբ և գթով տնանկաց:

Յաւուրս սորա չինեցան կրօնաւորանոցք՝ ճգնաւորականաց տեղիք Սեաւորդեաց աշխարհին, հաւատարակեացք, միաբանականք, ըստ յառաջաստացեալ կանոնին սահմանադրութեան Սրբոյն Բարսղի. որոց երկոցունց տեղեացն անուանք՝ Հաղբատ և Սանահին[3], հանդէպ միմեանց, միակրօնք ի տան Աստուծոյ՝ արանց հինգ հարիւրից:

1. Ֆառատ, քորտ, կամ խեղանգամ. գոնէ նշանակէ եւս՝ անտաշ կոշտ փայտ:

2. Պժգալի առ ընութիւն. որոյ յաղթելով՝ ոչ միայն թագակիցն Աշոտոյ Լուդովիկոս Թ. Փառնկաց, այլ և կուսանք (որպէս Սիւնեացին Կատարինէ) ըրած են այդպէս: Ֆրիատաս՝ ցուրտ ջրոյ բաժակ մի տուողին՝ վարձք խոստացաւ. իսկ այդպիսի բաժակի ի՞նչ կուտայ:

3. Շատ հեղ յիշուած վերահռչակ վանքեր, մինչեւ հիմայ չափաւորապէս չեն են:

ՄԼԷ

ՇԻՆՈՒԹԻՒՆՔ ՊԱՐՍՊԱՑ ԱՆՒՈՑ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷԻՆ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑՒՈՑ

(Ա ՄՈՂԻԿ. Գ. ԺԱ)

Ձայսու ժամանակաւ մեռաւ թագաւորն Հայոց օրհնեալն Աշոտ, ի ՆԻԶ (977–8) թուին. և ի նոյն աւուր թագաւորեաց Սմբատ՝ որդի նորա ամս 13. Սա լիր արկեալ՝ պարապափակ առնէ զպարիսպն Անւոյ յԱխուրեան գետոյ մինչեւ ցձորն Ծաղկոցաց, կրով և վիմօվք մածուցեալ մահարձանօք բրգանց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պարիսպն՝ յընդարձակութիւն քաղաքին, և մայրագերան դրամբք երկաթագամ, հաստահեղոյս բեւեռապինդ ամրացուցեալ:

Արկանէ հիմն և մեծաչէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ, ի ձեռն Տարտարապետին Տրդատայ[1], որ զկաթողիկոսարանին եկեղեցին չինեաց յԱրգինայ:...

Կատարեալ թագուհի բարեպաշտուհի եղեալ, որ էր դուստր վաստակաւոր Սիւնեաց իշխանի, չինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ՝ ամենապայծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամարօք գմբէթաւորեալ խորան երկնանման. և զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ ոսկեթել, նկարագործ անկուածոց արծաթեղէն և ոսկեղէն անօթոց, և բազմապայծառ լուսատուս անօթոց վայելչութեամբ,

1. Այս հռչակաւոր ճարտարապետն է՝ որ հրաւիրուած ի կայսերէն Յունաց՝ գնացեր և նորոգեր է Կոստանդնուպօլսի սրեզերահռչակ Ս. Սոփիայ տաճարին ձկաուսուած մաս մի:

որովք չահանայր ըստ երկնային կամարին՝ կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անւոյ[1]։...

Ցայնմ ժամանակի, յորում լնոյր լրութեամբ ամն հաղար մարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ, ի Վասլի կայսեր յաւուրս, Գագիկ՝ արքայ Հայոց, խորհուրդ բարի ի յանձին կալեալ՝ զմեծաչէն եկեղեցին, որ ի քաղաքռդաշտի անուամբ Սրբոյն Գրիգորի չինեալ, որ էր վլեալ և կործանեալ, կամեցաւ նոյնաձեւ չափով և և յօրինուա-

1. Արժանի է այս տեղ ընծայել այս մեծագի թադուհոյ չինուածոյն արժանաւոր՝ վրան քանդակած արձանագրութիւնն եւս.

Ի ՆԾ Թ. Հայոց ✠ ՄԺԹ Թ. Հոռոմոց ի ժամանակս աստուածապատիւ եւ հոգեւոր Տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի եւ ի մեծափառ թագաւորութեանն Գագկա Հայոց եւ Վրաց Շահանշահի ես Կատրանիդէ Հայոց թագուհի դուստր Վասակա Սիւնեաց թագաւորի յողորմութիւնն Աստուծոյ ապաւինեցա եւ հրամանաւ առն իմո Գագկա Շահանշահի չինեցի զսուրբ կաթողիկէս զոր էր հիմնադրեալ մեծի Սմպատա եւ կանգնեցաք տուն Աստուծոյ նորոգ եւ կենդանի ծը-

ծով յարդարել ի քաղաքին Անւոյ[1], հիմնարկեալ ի կուսէ Ծաղկոցաձորոյն, ի բարձրաւանդակ տեղւոջն. տարփատենչ տեսողացն, մեծատաչ, վիմադեան, կոփածոյ վիմօք, մանուածոյ քանդակաւ

նունդ հոգեւոր եւ արձան մչունչենաւոր. զարդարեցի եւ զարդիւք պատուականաւք նըւէրք ինձ ի Քրիստոս եւ զարմից իմ եւ որդոց Սմբատա Աբասա եւ Աշոտոյ. Հրամայեալ եմ ես Տէր Սարգիս սպասաւորաց եկեղեցոյս յետ ելից բարեպաշտ թագուհոյս զՎարդաւարին[2] յինեական միով քառանիւ կատարել անխափան մինչեւ ի գալուստն Քրիստոսի. Եթէ ոք զարձանագրեալդ անփոյթ առնէ՝ դատապարտեալ եղիցի ի Քրիստոսէ.

1. Այս Գագկայ պանծալի չէնքն այլ իր նախադաղափարին (Բաղաքռդաշտի՝ եկեղեցւոյն) պէս հիմայ աւերուած է. վրան եկեղեցւոյն՝ ներկայանայ այստեղ իր վայելուչ Հանգստարանն՝ Ս. Գեորգ կոչուած մատրամբ, որ չէ հեռու իր հօր Ողբրմածին Աշոտոյ չիրմէն։

2. Ոմանք ի նախնեաց մերոց այսպէս գրուածը իմաստակօրէն կամ ոտիպեալ մեկնեն, թէ վ տառը թաղլով կարդալու է՝ արդաւար, իբր թէ հիմայ Աստուած իբրեւ աւար ժողվէ զՀոգիս մարդկան՝ յար-

յօրինեալ, լոյսանցոյց պատուհանօք, երրակի դրանց դրանդեօք, սքանչատես տեսլեամբ գմբէթաւորեալ՝ գունակ գերամբարձ և երկնանման գնդին[1]:

ՄԼԸ

ԱԲԱՍ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՐՈՒՑ ԵՒ ՎԱՆՔ ՇԻՐՄԻՆ

(ԱՍՈՂԻԿ, Գ. ԺԲ.)

Ցայսմ ժամանակի, ի թուին ՆԼԳ (984) Մռուենէ՝ թագաւորն մայրաքաղաքին Կարուց[2] վախճանի. և փոխանակ նորա թագաւորէ Աբաս՝ որդի նորա, ամս վեց: Սա յառաջ քան զթագաւորելն էր մանուկ փոյթ և կայտառ, և կարծիս տայր տեսողացն՝ անհաղորդ լինել բարեաց լինչ գործոց հոգեւորաց: Իսկ յորժամ եհաս նա յաթոռ թագաւորութեան, երեւեցաւ նա այր չքեղ, լի հանճարով և իմաստուն, ընդ առաջին իմաստունսն համարեալ, և

քայութիւն: Իսկ սովորական վարդավառ զրուժեան հին պատճառն է հեթանոսաց ասն մի՝ Աստղկան կամ Աֆրոդիտեայ, որոյ նուիրած էին վարդը՝ ծաղկանց թագուհին, զոր մեր եկեղեցին վայելչապէս զուգեց Քրիստոսի հրաշափառ Այլակերպութեան: Շատերն զայս յիշեն. նշանաւոր գանեմ զբան Յովհ. Եղեգնացւոյ. « Բոլորք նովաւ կոչին ռոտիասոս (Ῥοδισμός) » որ է վարդավառ, յերկոտասաներկն մայիս ամսոյ » մինչեւ ի տասարաւն յունիս ամսոյ· զոր քրիստո- » նէից առեալ Աստուածածնին նուիրեցին »:

1. Երկնանման գունան միմէ նոյն ինքն երկինքըն չէ:

2. Ցառաջ քան զԱնի չինուած և հռչակուած է Կարս, և ամրութեան համբաւն և փորձն ցուցած է շատ անգամ, մանաւանդ դէմ նոր անցեալ (ԺԹ) դարու, Օսմանեանց և Ռուսաց պատերազմաց առթիւ:

դարձաւ նա յայր այլ: Եւ սկիզբն արարեալ ամենայն բարեգործութեանց, նախ և առաջին՝ երարձ նա յաչխարհէն իւրմէ զաւազակութիւն, զմարդադաւութիւն, զոր ազգքն Վանանդայ իբրեւ զհայրենիք ունէին, ըստ ասելոյ պատմագրին[1]. և յաւուրս հօր սորա ոչ միայն ի ճանապարհս և ի բացեայ տեղիսն կողոպտէին, այլ ի նոյն ինքն ի քաղաքին՝ յերեկոյացեալ ժամուն. և զիւերն ամենայն ճիչք և ձայնք կողոպտանաց լինէին: Այլ սա ինքնին վրէժխնդիր եղեալ, և զգտեալ գողն առնչառս մահու գատապարտեալ, ոչ խնայելով ի մեծս կամ ի փոքրս, յիշխանս կամ ի չինականս. և այնպէս խաղաղացոյց զաշխարհն իւր, մինչ զի ի գիշերի իբրեւ ի տունկեան, և յանապատի՝ իբրեւ յապարանս չրջէին, ամենեքեան չինութեան և աշխատասիրի գործոց պարապեալ, և արդարադատ իրաւամբք ուղղեալք: Նա և որ սովորութեամբ անկարգութիւն էր յաշխարհիս Հայոց, իշխանաց և ազատաց որովայնամոլութեամբ ապականել զկարգեալ զաւուրս պահոց՝ զշորեքշաբթի, զուրբաթ և զաւուրս չարաթուց, բաց ի մսոյ՝ կթեղէն կերակրովք. յայնմ՝ անձամբ օրինակ եղեալ, ոչ ի կթեղինաց ինչ և ոչ ի ձկանց ճաշակեալ, և հացիւ և բանջարեղէն մրգօք անցուցանէր զաւուրսն զայնոսիկ՝ զօրինաւորեալս կանոնիւ:

Եւ ապա խորհուրդ բարի կալեալ յանձին իւրում, չինել վանս ի փրկանս անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ յաւիտենական. և ընտրեաց տեղի ընտրանւոյ՝ ի գլուխս Արշարունեաց գաւառին, որում Շիրիմն[2] կոչիւր. և ընդարձակագոյն պարըսպեալ օրձաքար վիմօք, չորեքկուսի ձեւով, յիւրոց գանձուցն մեծամեծս աշխատութեամբ յարդարեալ

1. Որ է Խորեն. (Խ, Գ.) « Զաւազակութեան գործ՝ » մեծ ցանկութեամբ գործէին, և ուղիղ թուին նոցա »:

2. Անուանէն գուշակուի որ այդ տեղ մեծագործ շինիմք՝ գերեզմանք՝ կանգնուած են ի հնումն:

զամենայն չինուածսն պիտոյից, ի բնակութիւն կրօնաւորաց: Եւ ըստ հռչակաւոր տեղւոյն կացուցանէ առաջնորդ ուխտին զայրն Աստուծոյ զՄովսէս, ընտիր երեւեալ յամենայն աշխարհիս Հայոց. զի էին սոքա արք երկք, Մովսէս և Յովհաննիկ և Յաղիքրոս[1], եղբարք ըստ մարմնոյ, եւս առաւել հոգւով միաբանութեամբ, միակրօնք՝ ի կարգս Աստուծոյ. յորս էր մի հոգի և անձն, և բնութիւն չնչակապութեան յերիս անձինս բնակեալ, երիւք խոստովանութեամբ զերրորդութիւնն Սուրբ փառաւորեալ բարեպաշտութեամբ. և երիւք առաքինութեամբ պայծառացեալ, գործելով և պահելով և ազօթիւք: Եւ այսպէս կեցեալ առաքինութեամբ և բարի անուամբ՝ ի միում ամի վախճանեցան ի ՆՄԱ (1002) թուին:

Իսկ մայր թագաւորին Աբասայ՝ բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց, որ է քոյր թագաւորացն փառաւորաց՝[2] Սենեքերիմայ և Գրիգորի, ի բաց ընկեցեալ զերկրաւոր պատկն, յոչինչ համարեալ զփառս անցաւորս, ընթանայր զհետ երկնաւորին. զվարս կրօնաւորութեան յանձն առեալ, երթեալ բնակէ ի տեղին որ Թրիւն վանք կոչի[3], զի են եկեղեցիք փորածոյ ի սպիտակ քարի, ընդդէմ հարաւոյ. և ազօթից և գործոց բարեաց պարապեալ և հոգեւոր առաքինութեան:

1. Գրուի և Անիիքրոս, անսովոր Հայոց, Ἀμβλιχος, յոյն անուն, քանի մի հռետորաց. բայց այդ անուամբ Սուրբ չի յիշուիր:

2. Վերջին թագաւորին Սիւնեաց, որոյ սահմանակից է Փառիսոս գաւառ քնիկ Արցախոյ:

3. Կաւսանաց վանք մ՚էր նոյնպէս չինուած յԱբասէ, որոյ զերքն յայտնի չէ, բայց Երասխաձորոյ կողմերն ըլլալու է:

ՄԼԹ

ՀԱՅՔ ԵՒ ՎԻՐՔ ՅԱՂԹԵՆ ՄԱԼՄԼԱՆԱՅ ՅԱՊԱՀՈՒՆԻՍ

(ԱՍՈՂԻԿ. Գ. ԽԱ.)

Յայսմ ամի և ի սոյն աւուրս, ի ՆԽԷ (998) թուին, գարձեալ զօրաժողով լինի Մաղկան որդի Ապլնաձի, թոռն Ռոմադայ՝ ամիրայի Աստպատականի, գալ ի պատերազմ ի վերայ կիւրապաղատին Դաւթի[1]. և կուտէ առ ինքն զրազմութիւն զօրացն Պարսից և Մարաց, և օգնականութեամբ ամիրային Խորասանայ և այլ խուժադուժ զօրօք բազմօք, խորհի տիրել Հայոց և Վրաց, չինել զքաղաքն Կարնոյ և յաւարի առնուլ զերկիրն Տայոց, փոխանակ զի ի Մանազկերտ զառն աղօթից նոցա կործանեցին քրիստոնեայք: Եւ եկեալ ի Թաւրիզոյ՝ ի քաղաքէ իւրմէ, ի սահմանս Հերայ[2] ծանր ամբոխիւ, լայն բանակաւ, անցանէ ընդ աշխարհն Վասպուրականի. գայ, իջանէ ի գաւառն Ապահունեաց[3]: Իսկ կիւրապաղատն Դաւիթ ոչ անձամբն երթայ ի պատերազմ ընդդէմ նորա, զի այր ծեր էր և անցեալ զաւուրքն, այլ առաքէ առ արքայն

1. Իր ժամանակի արեւելեան թագաւորաց և իշխանաց մէջ ամենէն խոհեմն և զօրաւորն, զոր Հայք և Վիրք իրենց ազգակից համարին: Յունաց կայսերէն առած պատուոյ անուամբն յիշուի. իր երկիրն Տայք՝ միջնաշխարհն էր Հայոց և Վրաց, Ախալցխեի կողմերն:

2. Յիշուեցաւ յ՚233 Յօդուածի, այժմու Խոյ քաղաքն:

3. Ուր էր քաղաքն Մանազկերտ (Մէլազկերտ) ի Տարօնագաւառի նահանգի:

Հայոց Գագիկ (Ա.) և առ Թագաւորն Վրաց Գուրգեն, (զի մեռեալ էր Բագարատ՝ հայր Գուրգենայ, և Թագաւորեաց Գուրգէն՝ որպէս նորա ընդ նորա), տալ զօրս յօգնականութիւն: Եւ Գագկայ՝ յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ վեց հազար յընտիր վաճառոցն, գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ[1] որդւոյ Գրիգորի Պահլաւունւոյ, որ զՄարմաշէն և զԲերդևերն[2] չինեաց, և Սմբատայ մաժխասոսի՝ որդւոյ Վահրամայ, և մարզպանին Աշոտոյ. և զօրք Թագաւորին Վանանդեցւոյ Աբասայ, նոյնպէս և Գուրգէն՝ Վրաց Թագաւորն, յընտրելոյն իւրոց վեց հազարի առնելոյ՝ տայ ի ձեռն փերսի՝ իշխանաց իշխանին՝ որդւոյ Ջոջկայ. և ամենայն բազմութիւն զօրացն կիւրապաղատին Դաւթի՝ ի ձեռն Գաբրիէլի՝ որդւոյ Աչապղնեայ. որք յառաջ երթեալ ի լեառն Սուկաւ[3], ի ձորն Աղտից, պահէին զառաջս պարսիկ զօրուն, կարծելով նախ ի Բագրեւանդ մտանել: Այլ որ միաբան հասանէին զօրքն Հայոց և Վրաց. և չուեալ երթան ի գաւառն Այգահովտեայ. բանակին յանդիման բանակին Մալմնայ, ի բարձրաւանդակ, ամրագոյն տեղւոջ մի, ի սահմանս գեղջն Ծմբոյ[4]: Եւ բազում աւուրս ի նմին տեղւոջ օթևանս կալեալ. զի ի ոտանաւորենէ ասպային Պարսից զարհուրելոք էին, ոչ իշխելով քան զնձաւ[5] տեղի բանակին՝ արտաքս ելանել. այլ միայն ազթիւք պաղատանս առ Աստուած վերառաքէին. նոյն և

1. Որ է հայր Հաչակաւորին Գրիգորի Մագիստրոսի:
2. Ի Շէրակ գաւառի, ի սահմանս Անւոյ:
3. Հիմայ Քէօսէ տաղ կոչեալ, յանուն Ս. Սաւքիտանց Քաղից, ոչ շատ հեռի ի Մշոյ:
4. Կամ Ծծրնոյ. գեղն չի յիշուիր հիմայ այդ անուամբ, բայց այն կողմերու հանգային ազգերը տան գուշակել:
5. Բարայրներու կամ քարտ տեղեաց մէջ ամրացեր են՝ իբրեւ պարսպապօք. եթէ անձռուի գրուած չէ:

յամենայն քրիստոնէից աղերսական աղօթք արտասուօք սփռեալ լինէին առաջի Աստուծոյ, յօգնութիւն անձանց և զօրացն կարգալով զանուանն ահաւոր: Եւ Թագաւորքն առատաձեռն զողորմութիւնս աղքատացն բաշխէին, և զցայգապաշտօնն սաղմոսանուագ երգով ուխտն սրբութեան[1] հանդերձ հայրապետաւն կատարէին:

Եւ իբրեւ գիտաց զօրն Պարսից եթէ ոչ կամին նոքա կամաւ իջանել առ նոսա ի պատերազմ, մանաւանդ զանակնութիւն նոցա գիտացեալ՝ առ իւրեանց բազմութիւնն, յայնժամ յարուցեալ յամսամտին Արեգ ամսոյ[2], յերեք չաբաթէսն աւուր, ընդ առաւօտանալն՝ ճակատ պատրաստէին բազմակրկին յօրինուածով. ռամկ յօրինէին ընդ երեսս լայն գաշտին դէմ առ դէմ վահանափակովք, գային, մերձենային մօտ ի բլուրն բանակին Հայոց և Վրաց. որոց և տեսութիւն իսկ ի բազմութենէն՝ ահաւոր թուէր ամենայն տեսողացն. որոց թիւն պատմեցաւ հարիւր հազար լինել ընդ հեծեալսագունդ և ընդ այրուձին Պարսից:

Զայն տային ի պատերազմ պատրաստիլ, յառաջ մատչել ի կռուարանն և ի տեղի հանդիպին. իսկ զօրքն Հայոց և Վրաց զանգիտեալք՝ առաքէն, ոչ յայսմ աւուր՝ այլ յայլում աւուր պատերազմեցարո՛ւք: Իսկ Պարսիկքն պանծացեալ պերճութեամբ՝ առաքէն դեպանս առ նոսա. Եթէ կամաւ եթէ ակամայ՝ յայսմ աւուր պատերազմեսցուք: Բայց նոքա ոչ առին յանձն, և ոչ հեծան յերիվարս. այլ մնացին անդէն ի բանակին. միայն սակաւ սրբ իջեալ առ նոսա՝ մենամարտիկս լինէին. և մեռան ի Վրաց զօրուէն սրբ հինգ: Յայնժամ Պարսկաստանեայքն զպատրաստութիւն պատերազ-

1. Սրբազան անձինք, քահանայք, կրօնաւորք:
2. Ըստ անշարժ տոմարի՝ յուլիսի վերջի օրերն:
3. Դէպուռ, կասպից ծովու հարաւակողման ընդարձակ գաւառէն եկած զօրքն:

մին թողեալք, զկարգ ճակատուն քակեալք և զգաւազմին յարդարումն լքեալք, իւրաքանչիւր ոք ձիարձակ լինէին յառ, յաւար, յապուռ դիմէին, իբրեւ ի կապուտ մեռելոց դիականց կամ փախուցեալոց, յամենայն կողմանց գային ի վերայ բանակին քրիստոնէից։

Իսկ զօրն Հայոց և Վրաց, զի ոչ թագաւոր զոք ունէին, զամենեցուն թագաւորն զԲրիտոս ունէր լով գլուխ և օգնական, առ նա ապաստակէին միաձայն. և զղարդ զինուցն զանձամբ առեալ արագապէս յերիվարս աչառնակէին, և ոչ ըստ օրինաց պատերազմի ճակատէին. այլ իւրաքանչիւրն ըստ առհմից և աւագութեան գնդից՝ դիմէին աւիւծաբար մռնչելով՝ յանտառացեալ բազմութիւն բանակին Պարսից։ Ոչ դադարեալ արագաշարժ չարժմամբ զօրն Հայոց, զաղոյ ձեռամբ ի խառն մեծ խմբին դիմեալ, խառն խոյուածովք և խիստ և խոր սուսերահար արարեալ հարկանելով, զմիջին դուժս դաշուցանէին դառն հարուածովք։ Իսկ կամրակէրն[1] գովեալ եղբարք Մխիթարիք՝ վրայական զօրուն միմեամիեալք՝ հարուստ ուժովք ի հարկանել զհեծեալն կամ զերիվարն կիսակտուր կործանէին. յորոց յահէ ոչիր վայրացն լինէին. և ամենայն զօրն Տայոց՝ տարածելոցն դիպէին, դիաթաւալ զդիակունսն ի ներքոյ ոտիցն տարածելով։ Զայս օրէն նման ձեւոյ[2] օրինակեալ իբրեւ զհուր յանտառս բորբոքեալ, կամ իբրեւ զարծուի քաջալացիկ՝ զհաւուց երամս խուճապեալս։ Այլ անդ էր տեսանել զարեան վտակս, առուք եղեալ և գետք յորդէին, դիակունք թաւալեալք, և կիսամեռք ընդ մեռելոց անկեալ դնէին։

Յայնժամ Մալմլան պակուցեալ՝ պարսկաստանեաք մնացելովք զփախչելն փութային։ Որոց հետ

1. Ձեզ կամ ընտանիք մի Մեսթաց երկրին, որ է յարեւմտակողմն Վրաստանի։

2. Շարաղրութիւնն չվսթած կամ այլայլած երեւի։

տամուտ եղեալ Հայոց և Վրաց զօրուն՝ սաստիկ հարուածովք հարկանէին՝ ի սուր սուսերի մաշելով գնոսա, մինչեւ ի մուտս արեւուն, մինչեւ ի գուռն Արձիլ քաղաքին։ Եւ անտի դարձեալ՝ յաւարի առին զբանակս նոցա, լցեալ բազմութեամբ գանձուց և երիվարաց և պատուական հանդերձից։ Եւս առաւել այն էր ուրախութիւն, զի քան զառաջին հինգ մարդոցն ի վենամարտութեան, որ ի Վրաց զօրէն մեռան, այլ ոչ հարեալ ոք սրով և ոչ մեռեալ գտաւ յամենայն բազմութենէ Հայոց և Վրաց։ Վասն որոյ ուրախալից ցնծութեամբ դարձան յիւրաքանչիւր աշխարհ, փառաւորելով զԱստուած։

ՄԽ

ՄԱՀ ՄԵԾԻ ԿԻՒՐԱՊԱՂԱՏԻՆ ԴԱԻԹԻ

(Ա ՊՈՂԻԿ. Բ. ԽԳ)։

Այլ վասն մահուան մեծի կիւրապաղատին Դաւթի՝ պարտ վարկանէի երկարաձիգ ողբովք վիպասանել, եթէ ոչ զերկարանալ բանիս կամէի կարճել. զի ոչ ճառից են ժամանակ, այլ գոյն յիշատակարանաց։ Բայց զի էր այրն հեզ և հանգարտ՝ առաւել քան զամենայն թագաւորս՝ որ ի ժամանակիս յայս. և եղեւ նա պատճառ խաղաղութեան և չինութեան ամենայն արեւելեայց, մանաւանդ Հայոց և Վրաց. զի զգոն պատերազմաց յամենայն կողմանց զգաստացոյց նա, յայլմող եղեալ ամենայն չուրջանակի ազգաց. և ամենայն թագաւորք կամաւ հնազանդեցան նմա։ Սա լցեալ աւուրքդ, ծերացեալ ժամանակօք՝ վախճանեցաւ յաւուր մեծի փրկական Զատկին, ի ՆԽԹ (1000) թուին. բայց զի ոչ գոյր նորա որդի կամ եղբայր,

որ ժառանգէր զաթոռ թագաւորութեան նորա[1], յանձն արարեալ էր զազատագունդն իւր՝ թագաւորին Յունաց Վասլի։

ՄԽԱ.

ՍԱՐԳԻՍ ՄԱՆԿԱՆՑ ԱԶԱՏԻՉ

(ԱՍՈՂԻԿ. Գ. ԺԹ.)

Որդի Ալեւորին[2] Հերայ հատուածի պատճառաւ անցանէ յամիրային Ասպահունեաց. և ի կրկին անդէն գառնալն՝ յորժամ մերձ եղեալ ի սահմանսն Հերայ՝ անցանէին ընդ գետ ինչ, տեսանէին զմանկունս քրիստոնեայս գեղեցիկս՝ ի խաղս. և գայլաբար արշաւեալ՝ բառնան յերիվարս իւրեանց և ի փախուստ մտանեն։ Զոր տեսեալ ազատ ումն ի հաւատացելոց՝ Սարգիս անուն, յերիվար հեծեալ զհետ ընթանայր. «Զի՛ և զի՛ առնէք զայդ», ասէր։ Եւ նոքա դարձեալ թշնամանս դնէին նմա. և (նա) զպղպովատիկ սուրն՝ քաջապէս չհատակեալ[3], աբեամբ նոցա արբուցանէր, զամենեսեան սատակեալ, միջնակաւոր արարեալ զորդի Ալեւորին, դարձուցանէր զմանկունսն գերեալ։

Եւ Ալեւորն Հերայ առաքէ առ ամիրային Ասորեստանի Աբլ–ռաձ, տալ նոցա խոստանայր զգ-

1. Իր բուն իշխանութեան երկիրն՝ Հայոց Տայք անուանեալ նահանգն կամ աշխարհն, ծանօթ էր հին հեղինակաց Յունաց՝ Τάοχοι կոչմամբ։

2. Երբեմն արեւելեան իշխանք քաղաքաց՝ մանաւանդ կրօնականք՝ Ալեւոր (Թուրք. Ագ–սագալլը, ճերմակ–մօրուք) կ'անուանին։

3. Իր անուանակցին նման (Ս. Սարգսի Զօրավարի) չատ լաւ քաջութեամբ գործածեր է սուրը։

քաղաքն Հեր, միայն թէ զվրէժ արեան որդւոյ նորա խնդրեսցէ յաչխարհէն Վասպուրականի։ Եւ նորա յանձն առեալ՝ ի բազմութիւն զօրացն վըտահանալով, անմարդացուցանել խոստանայր զաշխարհն ամենայն։ Եւ ժողովեալ զբազմութիւնն խուժադուժացն Պարսից՝ գայ հասանէ ի մուտս սահմանացն Վասպուրականի. յերիս առաջս զզօրսն բաժանելով, յերեկոյացեալ ժամուն. զի առ վաղիւն գունդ բանակին միոյ ընդ ակոզմն սփռեալ ընդ եզերս աշխարհին, և միւնն ընդ ահեկեայսն, և ինքն բանակաւ մեծաւ զմիջոց աշխարհին կալցէ զի մի ոք կարասցէ ապրել ի քրիստոնէիցն։ Զայս խորհեալ և խօսեցեալ ընդ զօրս իւր ի մուտս առեւտուն. իսկ ի գիշերին յայնմ առացաւ առ նա բան փրկչին. «Անմիտ. թէ յայսմ գիշերի ոգիդ ի քաց պահանջի, իսկ այդ խորհուրդ ամբարշտութեան մտացդ գիարդ կատարեսցի»։ Եւ ի վաղիւն գաւաւ մեռեալ. և խափանեցաւ խորհուրդ չարութեան նորա։

ՄԽԲ.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍԻՄԷՈՆԻ Վ. ԸՆԴՕՐԻՆԱԿՈՂԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ[1]

Փառք Այնմասուրբ Երրորդութեան, որ հաստոյց յեաին գիրս գրոցիս. ամէն։ Յանուն Աստուծոյ գրեցաւ գիրքս ի Ն. Ի. և Ը (449) թուականին Հայոց, ի հայրապետութեան Տեառն Սարգսի Հայոց կաթուղիկոսի, և ի թագաւորութեան Աղենքերխայ[2]

1. Մեր Ս. Ղազարու վանքում է այս Ձեռագիրս՝ թղթի վրայ գրուած, և նշանաւոր է հնութեամբ այդ նիւթին. գրողն ուղիղ կամ աչ գրածն՝ անփոփոխ օրինակուած է այս տեղ։

2. Արծրունեաց թագաւորն էր, որ և կոչուէր Յով-

որդւոյ Աբուսահլի, ձեռամբ Սիմիռոմնի վարդապետի և նուաստ կրաննաւորի. զորս զկարդացողդ աղաչեմ յաստուածամատոյց աղաւթսդ անմոռաց յիշմամբ յիշատակել պաղատիմ։ Եւ զՏիրաւորն զկազմիչ և գյաւրինիչ գրոցս[1] անմոռաց ունել. և Աստուած փոխարէն հատուցէ յեսին աւուրն։

Թուիցիմք թէ աւելորդս ինչ բանս յաստացեալս յաւելցուք. վասն զի այլոյն ի գալ արիոյն և բազմածիրք աստեղացն[2], և ի մանկութենէ փախըստեայ ընթանալ ծերութիւն. տեղի տայ և ձմեռն գարնանայինն եղանակաց միանգամայն և հիւանդութիւն՝ քաղցղութեան և պայծառ և չքնաղ տեսակաց. զոր և աստուստ սակաւիկ ինչ բանքս՝ զոր ասելս կամիմ՝ արգելու զիս հոգիս, և լռել՝ անպիտան վարկանիմ[3]. զոր և իբր ի մէջ երկուց հրեղէն վիմաց պաշարեալ դադամ[4]. զՏեառն ներբեմէ ասեմ և զտիեզերական և զաստուածապատիւ Տեառն Յովհաննու Կոստանդինուպոլսի եպիսկոպոսապետի. զի սա զբոլորս զոլորս լուսաւորեաց զազգն Յունաց. և Տէր Եփրեմ՝ Ասորեստանեայ[5] ազգին աննուազ ծագեաց արեգական, և զրուցմադուան[6] զրանն և զմիին՝ Պաւղոսի երանելի Աստ-

հաննէս, իսկ հայրն Աբուսահլ՝ կաշուեր և Չամազգասպ։

1. Գիրքը կոկող կազմող. եթէ հիմակուան կազմն է, աղքատին բան մ'է։

2. Երբ ծագէ արեւն՝ մթննան աստեղայց լուսաւթիւնք։

3. Հեղինակն այսինքն գրիչն Սիմոն կաւ տագնապի, թէ արդեօք գրէ թէ լռէ մտածմունք։

4. Օրինակած գիրքն է Ս. Եփրեմի և Ս. Յհ. Ոսկեբերանի Մեկնութիւնքն Պօղոս Աստաբելոյ թղթոց, զորս իր երկու կողմն հրեղէն պարիսպներու նմանցընէ։

5. Ստուգիւ Ասորւոց պէտք էր ըսել և ոչ Ասորեստանեայց։

6. Շատ կերպով բացատրելի մեկնուելի են բանք Պօղոսի։

քելոյն՝ բացերեւութապէս և յայտնի մեզ ցուցին։ Ոչքա են լերինք մշտնջենաւորք սեպք և ուղղորկք[1], անտեղիտալիք չար և նենգաւոր գազանաց։ Արդ, եթէ ոք ինձ իցէ[2] մի մերձեսցի, գուցէ քարկոծեսցի, զի մի խայտաբղետ իցէ անմաքուր վարուք. և մի ոք անասնական կերպիւ՝ գայլենի ի ներքուստ և արտաքուստ գառնենի՝ երկդիմի բնութեամբ՝ մի մերձեսցի ի լեառնս. և դարձեալ մի ոք արարչի և ընդդիմադրող և հակառակող, քարկոծեսցին[3] ի վիմէն՝ զոր առանց ձեռին ի լեռնէն հատաւ[4] չաի աշխարհի. և մի ոք և այլ ինչ ազանդաւոր, զոր և ի ժամանակիս տեսանեմ։ Վասն զի լուծանել հրամայէ վերկրաքարշ և զմեղաթաւալ կաւշիկ[5], և զօրէն մեծին Մովսիսի յիմանալի լեառն ելանել, և ընդ ամպովն լինել և ընդ Աստուծոյն խօսել։ Ասյս լերինք մշտնջենաւորք են դիտանոց պրախանին Աստուծոյ, որ գեղեցկապէս բուրեն ի մեզ պրուրումն բուրաստանացն Աստուծոյ, զերանելոյն առաքեալ զՊրոխորն Պաւղոսի, որ հոտ անոյշ էր ի Քրիստոս, ի մէջ երկուց բնութիանց՝ բարւոյն և չարի։ Ոչքա հնչեցուցանեն ի մեզ, ոչ փողոյ բարբառ և բանք տագնապողք, այլ զՔրիստոս ի Պաւղոսէ քարոզեալ և յայտնեալ, և կենագործեալ զաշխարհս։ Ոչքա մածեալ և անտսիկ բարձր դիտանոցք, որք ցուցանեն ոչ տախտակք քարկոծողք՝ այլ կեանք

1. Ոլորկ, վրան խորտուբորտ չհլած։

2. Ինձ գազանն (Թրգ. գաւիլան) խայտաբղետ, խառնուածիկ գոյներով։

3. Հին առեն արաքացի ըսուած կառապի գայլը յիշէ, և այդ գազաններով՝ ծուռ մտածողները։

4. Դանիէլ մարգարէի տեսիլքն է յիշածն. լեռնէն փաքրիկ քար մի փրթաւ, բանաւորաց մեծամեծ արձաններըը կործանեց։

5. Աստուած երբ յայտնուեցաւ Մովսէս մարգարէի՝ հրամեց որ սաից ամաններըը հանէ, որպէս թէ չաղտոտի աւրըը գետինն։

աւետարանականք և առաքելականք միանգամայն և մարգարէականքն: Սոքա եւթնապատիկ ծագեալ քան զարեգակն՝ փախստական արարին զիաւար ագիտութեան յազգէ մարդկան, վասն որոյ[1] և առաւել եւս յազգէս Հայոց. ուստի և եաս եմ միւիւռովն նուաստ և անպիտան կրօնաւոր, որ ընթերցասէր և ցանկացող եղեալ ի մանկութենէ իմմէ՝ յուզէի խնդրել զիւրս Տեառն Եփրեմի զհին կատարանաց թարգմանութիւն և զնոր: Զոր և գնացի յաչխարհն ուստի և սուրբ առաքեալն Բարթողիմէոս կատարեցաւ, ի տեղւոյն՝[2] որ ամենակալութիւն Արծրունեաց տանն կոչի Եղեւիւ անուն ինչ տեղոյն[3]. և գտի զմեկնութիւն երանելի Առաքելոյն՝ Տեառն Եփրեմի խորին[4] Աստուծոյ, և զրեցի ի տոմոյգ և ի հին օրինակէ, զոր և բերի. և այսու միայնոյ ոչ հաւանեալ՝ այլ և յայլ տեղ գտի զերանելոյն Տեառն Յովհաննու Ոսկերերանի կարճառօտ մեկնութիւն Ի՛ թղթացն Պաւղոսի, և ի մին գիրս գրեցի. նախ առաջին՝ զՏեառն Եփրեմի և ապա զՏեառն Յովհաննու: Զոր և անբաւ և մեծ գիտութիւն յինքեան բովանդակեալ ունի. և գրեցաւ գիրքս Տեառն Եփրեմի՝ որպէս յառաջն ասացի՝ ՅԱղրագ գաւառի ի տանն Արծրունեաց. և վերկրօրդ գիրքս՝ ի Կոգովիտ գաւառի, ի տանն Բագրատունեաց եպիսկոպոսարանի, ի Տեառն Դաթեոսի[5] ժամանակի Տեառն Մուշէի եղբօրորդւոյ, որ զառաքելոյն Թադէոսի ունէր զվարս և զսրբու-

1. Այս տեղ վասն որոյ նշանակէ՝ նաեւ, մանաւանդ:
2. Վարը կ՛իմացընէ որ Աղբակ գաւառն է:
3. Թուի թէ տեղւոյն յառուկ անունը չուզեր ըսել և այսպէս աննշան կոչում մի տայ:
4. Խոսրի կամ արաբ բառ է այս, որ նշանակէ կարդացող կամ գրիչ:
5. Թադէոս գրուի ուղիղն, այսպէս կոչուի եղեր Կոգովաի կամ Բագրատունեաց եպիսկոպոսն, եղբօրորդի և յաջորդ Տէր Մուշէ եպիսկոպոսի:

թիւն. զոր համարձակիմ և ասեմ թէ գուցէ և զմաքուր կուսութիւն Աւետարանչին Յովհաննու, այր կուսակրօն և պարկեշտ և վկայեալ յամենայն բերանոց և ՅԱստուծոյ փառաւորեալ:

Ի սոքա աւուրս և Աստուած հաշտ էր ընդ աշխարհի, զի կենդանի մարդ էր և Աստուծոյ՝ հանապազ մեռեալ. և ամենայն հոգեւոր գանձու գիտութեան եչտեմարան[1] զոր ոչ է բաւական ժամանակս բարերանել զերանելի հոգին՝ որքան արժան է. այլ յայնմ ժամու և ի ձեռն նորա գրեցաւ գիրքս ի Ն. Ի և ութ (448–999) թուականութեանն Հայոց. ի թագաւորութեան Գակիկ[2] որդւոյ Աշոտոյ[3] և ի հարմանն Պարսից ի ձեռաց թաւրի կորապաղատի[4], օգնականութեամբն Աստուծոյ:

Յայնմ ժամանակի այս գիրք գրեցան աղքատ նիւթով և խոշոր, զորս աղաչեմ անմեղադիր լինել անհեղեղ գրոյս և աղքատ քարտիսիս. այլ զաշխատութիւնս զոր ընկալայ ի սմա, զայս առ և ընկալ և ուրախ լեր սրբոցս[5]: Վասն զի թէ տայցես յանօթ այլուստ ումեք՝ սորա փոխան ուժգին առցես[6]. զի չէ բաւական գանձք որք արժեն զոսա. վասն զի նոր կտակ կարգեցի այնոցիկ որք զկնի իմ վայելեն զսա և լուսաւորին: Բայց, աւաղ, թէ և յանգիտաց անկեալ ի ձեռս անարգաբար և ընդ վայր հարկանի[7]. զի հրաժարեցուցանէ

1. Այսպէս գրած է, փոխանակ չտեմարան գրելու:
2. Բագրատունեաց թագաւորն է, Գագիկ Ա:
3. Այս տեղ բառ մի գրուած և աւրուած է, կարծուի սպարապետ, կամ Բագրատ...:
4. Տես Յօդուած 240:
5. Իմանալու է, Աւրախ լեր վասն Սրբոցս մեկնչաց Պօղոսի թղթոց, կամ շնորհակալ եղիր անոնց:
6. Թէ որ այս գիրքս մեկու մի տալու ըլլաս, անոր տեղ երմէ աւրիշ մի և լաւ մի առ:
7. Բարեբաղդաբար՝ ոչ անգէտ այլ գիտուն՝ Յովհաննէս Բագրատունի թագաւորին ձեռքը անցեր է այս գիրքս. յետ մահուան այդ իմաստասէր թագաւորին և Անւոյ մայրաքաղաքին մատնութեան՝ ինչ

և աւետարանն՝ արկանել խոզից մարգարիտ և տալ սրբութիւն՝ չանց[1], և որ այլ եւս: Այլ դու ո՛վ այր դու Աստուծոյ, գիտես դինչ է սա և ուսիր և ծանիր գաշխատութիւնս իմ և մի ապախտառներ գվաստակդ իմ, զոր ձրի վայելես գկնի իմ. այլ անչարթելի[2] ունել ի մտի և յանապական և յանմեռանելի կենդանի՝ որ վասն աշխարհի մեռաւ Քրիստոս՝ ի պատարագին՝ յիշել, և ի բոլոր սրտէ աղօթս առնել ի լուսաւոր և ի սուրբ պատարագին և ի մեզսաքաւիչ փրկական խորհրդին. զի թերեւս Աստուած ողորմեսցի իմ մեղուցեալ հոգւոյս յաւուրն յայնմանե[3] ի գալստեան մեծի արքայի Քրիստոսի. և Աստուած զձեզ յիշեսցէ յանդրաւական և ի տիեզերագումար հրապարակին. ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, ընդ որում Հաւր և միանգամայն և Հոգւոյն Սրբոյ՝ փառք և պատիւ այժմ և յաւիտեանս. ամէն:

«Փառք Աստուծոյ՝ անսկզբան և անժամանակի. փառք Յիսուսի Քրիստոսի զիւզակցի Հաւր և փառակից Սուրբ Հոգւոյն ելոզի ի Հաւրէ և յԱրդւոյ ոչ բարժանողին, և իակակցին Հաւր և Որդւոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն[4]»:

Հաաեր է այս Սիմէոնի գաւրգաւրալով գրած և յանձնած գրքին, կարգալու է գայն գանող Սեւանայ Սարգիս վարդապետի գրածը՝ յամին 1041 (եր. 311). գար մի և աւելի վերջ (1154) գիրքն անցեր է ի ձեռս Հոչակաւոր Տաւէթարդի Գրիգոր վարդապետին, որոյ թէ իմաստակ խոսքով թէ ձեւով թէ պարծանօք (գինքն յազատ տանիլ ըսելով) գրածն՝ ահա տեսնուի (յերես 310). անուանքը տառերուն սրունձեւ կամ երկայն մասերն կարմրագոյն են, օղակներն դեղնագոյն. յայտնի որ երիտասարդութեան տաեն ձաբուակեր է գայս: Հիմայ մեր Ս. Վազարս մատենադարանի մէջ հանդչի այդ Ձեռագիրքն՝ ինդգարեան յորելինով:

1. Գիրքսոսի խօսքն է, Աւետ. Մատթէի, է, 6:
2. Անջնջելի, անկորսնցելի:
3. Այսպէս է գրուած, փոխանակ գրելու յետնուոյն:
4. Կարեւոր տառուածաբանական քննելի գրուած

ՄԻՓ.

ԱՌԱՋԻՆ ԵԼՆ ԱՅԼԱԶԳԵԱՑ, ԵՒ ԱՍՊԱՏԱԿ Ի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ[1]

(ՄԱՏԹ. ՈՒՒՀԱՅԵՑԻ. ԼԲ.)

Յորժամ Թուականութիւնն Հայոց հասանէր ի յամն ՆԿԷ (467–1018), զարթեաւ առտուածատասան բարկութիւնն ի վերայ ամենայն քրիստոնէից ժողովրդեանն և երկրպագողաց Սուրբ Խաչին. զարթեաւ վիշապն մահաչունչ՝ հանդերձ մահաբեր հրով. եհար զհաւատացեալս Սրբոյ Երրորդութեանն: Յայմ թուականութեանս առտնեցան հիմունք աւազակականացն և մարգարէականացն. վասն զի օձք թեւաւորք հասին, և կամին ցոլտնալ ընդ ամենայն աշխարհ հաւատացեալոց Քրիստոսի. այս է առաջին ելն արիւնարբու գազանացն: Ընդ աւուրսն ընդ այնոսիկ զօրաժողով լինէին խաւժագոյժ ազգքն անօրինաց, և հասեալ մտանէին յաշխարհն Հայոց ի Վասպուրական գաւառ, և անողորմ ի սրոյ բերան կոտորէին զհաւատացեալս Քրիստոսի:

Յայնժամ հասանէր համբաւ կոտորածիս այս առ թագաւորն Աղեքսէրիոս. և յայնժամ աւազ որդին նորա Դաւիթ ժողովեալ զզօրսն ապատաց, հասանէր ի վերայ (օտար) բանակին. և հարան առտուկապէս ընդ միմեանս աշխուռ պատերազմաւ: Իսկ յայնմ ժամանակին չէին բնաւ տեսեալ թուրք զօրք հե-

մի է և այս յիշատակարանս կամ փառատրութիւնն Սիմէոնի:

1. Ո՞վ էր առաջնորդ այս առտատակողաց.— չէ յիշուած. բայց այդ կողմերէ ծանօթագոյն և մեծ արշաւողն՝ քան տարի մի յետոյ երեւցաւ. Տուղրիլ Սուլտանն Սելճուգեանց, զոր և Պատմիչս յետոյ պիտի յիշէ:

ծելոց. և ի հանդիպելն նոցա՝ տեսին այլակերպ դնոսա, աղեղնաւորս և հեծարձակս իբրեւ զկանայս. և յայնժամ զօրքն Հայոց չէին սովոր պատրաստ լինել ընդդէմ նետից. և քաջաբար ի վերայ այլազգեացն յարձակեցան, և առ հասարակ մերկացուցին զսուսերս իւրեանց պատենից, և աբիւրաբար ի պատերազմ ընթանային արիական գունդքն Հայոց. և զրազումս յայլազգեացն սատակէին. իսկ այլազգիքն նետաձգութեամբն զրազումս ի զօրացն Հայոց վիրաւորէին խոցելով: Եւ տեսեալ զայն ամենայն Շապուհ՝ ասէր ցԴաւիթ. «Դարձիր, թագաւոր, յերեսաց թշնամեացս, վասն զի ի նետից վիրաւորեալ եղեն մեծ մասն զօրացս. գնասցուք, և ընդդէմ այսմ զինուցս՝ զօր տեսանեմք առ այլազգիսդ, այլ զգեստ պատրաստեսցուք ընդդէմ նետից[1]»: Իսկ Դաւիթ առ մեծութիւնն իւր հայելով, հպարտացեալ մեծաւ ամբարտաւանութեամբ ոչ լսելով Շապհոյ, և գառնայր ի պատերազմ: Յայնժամ Շապուհ բարկութեամբ դիմեաց ի վերայ Դաւթի, և բռնցի հարեալ զթիկունն՝ ուժգնակի մղէր զնա գառնալ. վասն զի Շապուհ էր այր քաջ և պատերազմող հզօր, և էր մանկակաւ և անուցիչ Դաւթի. վասն այնորիկ անահ էր ի նմանէ. և այսպիսի օրինակաւ գարձուցանէր զԴաւիթ՝ հանդերձ զօրօքն[2]: Եւ գնացին

1. Թաւի թէ այս ժամանակ Հայք իրենց նախնեաց կապարճն և աղեղն թողեր և Բիւզանդացւոց զէնքեր գործածէին. յիշած եմք ուրիշ տեղ որ հին Հայք այնքան ճարպիկ նետող էին, որ Հռովմայեցիք՝ զՀայս կերպարանելու համար՝ երբեմն միայն կապարճ և աղեղ ձեւացընէին, և երբեմն նա և Հայոց աղեղնաւորաց գունդ մի կ'առնուին:

2. Երբ Սենեքերիմ՝ Դաւթի և ուրիշ արքունի հետ գաղթեցաւ ի Սեբաստիա և մեռաւ, կայսերք կասկածելով արքունի վրայ՝ կանչեցին ի Կ. պոլիս. Շապուհ որ անոնց հետ եկեր էր, ուզեց վերնառել յաւնաց զօրքը, և քաջութիւնը ցուցընելու համար՝

Ասսան քաղաք, և պատժեցին Թագաւորին Սենեքերիմայ, և ասացին զորպիսութիւն կերպարանաց այլազգեացն: Եւ լուեալ Սենեքերիմայ յոյժ վիրաւորեալ լինէր. ոչ եկեր և ոչ արբ, այլ կայր մտախորհ լի տրտմութեամբ, և զգիշերն ամենայն անքուն անցուցանէր. և նստեալ քննէր զժամանակագրութիւնս և զասացուածս աստուածախօս տեառնեղացն, զորոց վարդապետացն, և գտանէր գրեալ ի գիրսն զժամանակս ելանելոյ Թուրք զօրականացն. և ծանեաւ զկորուստս և զկատարած ամենայն երկրի. և գտանէր ի գիրսն գրեալ այսպէս. եթէ, «ի ժամանակին յայնմիկ փախչեն յարեւելից յարեւմուտս, ի հիւսիսոյ ի հարաւ, և հանգիստ ոչ գտանեն ի վերայ երկրի, վասն զի սրեամբք ծածկին զաչք և լերինք. և այս էր զոր ասաց Եսայիա, եթէ «Սմրակք երիվարաց նոցա հատատուն»:

ՄԻԹՂ

ՄԵՆԱՄԱՐՏ ԵՒ ՄԱՀ ՎԱՍԱԿԱՑ ՊԱՀԱՒԱՒՈՒՆԻՈՑ[1]

(ՄԱՏԹ. ՈՒՒՀ. Ը Ա.)

Ախոյեան մի երեւեալ ի զօրացն այլազգեաց, սեաւ խաւիղիկ և այր քաջ, որ և Եբրե–գայլ կոչէին զնա. վասն զի՝ զինչ և եւթն գայլն ի չոկս

ըսաւ արքայորդւոցն. «Կամի՛ք՝ զի զզօրագ Հռոմոց » ցիր և ցան ածեմ յերեսս դաշտաց ». և արար զրահս եօթն կրկնակի, և զարկանէր թրով ի վերայ՝ և ի վայր թողլոյր մանր զերկաթին: Եւ ասեն որդիք Թագաւորացն Հայոց (վասնզի), «Մի եղիցի այդպէս. այլ երբ » Թամբ գՏէտ կռնականացն ». և գնացին:

1. Վասակ Տօրեզբայր է հռչակաւոր Գրիգ. Մամիկոնեան և եղբայր Վահրամայ Սպարապետի:

ոչխարացն գործէր՝ նա եւս առաւել ի մէջ պատերազմին։ Եւ ահա գայր խափչիկն իրրեւ զհեւս ամպ որոտալով, որ բոց հատանէին ի գրհոյց նորա. և ձայն տուեալ և յանուանէ յուզէր զվասակ։ Հայեցաւ[1] քաջն Եմիւան, և եհես զնա ի գայր որպէս լեառն մրրկեալ. դարձաւ առ Վասակ, և ասէր. «Ահա այր անպարտելի և քաջ, որ այլ չէր ծնեալ ի վերայ երկրի»։ Եւ ասաց Վասակ. «Ո՛վ առիւծ և քաջ Եմրան, վասն էր զարհուրեցար ընդ տեսիլ նորա. ահա ես ելից ընդդէմ նորա, և տայ նմա գլարգեւքն զոր ետ Դաւիթ՝ Գաղիաթու հայհոյչին Աստուծոյ»։

Յայնժամ հասանէր զգանաբար այրն այն, առումբ եղեալ[2] քաջին Վասակայ, որպէս զի առցէ զնա ի ծայր գեղարդեանն իւրոյ. և ի շտապս լեալ Վասակին՝ երագս դիմեաց, և պողովատ թրովն ի վերայ սաղաւարտին գահեաց[3], և յերկուս հերձեաց զվահիչին քաջ, որ և մասունք մարմնոյն յերկիր անկանէր։ Եւ հասուստեցան ի պատերազմն և անհնարին գործոյն. և ի սաստկանալ մարտին և ի բազմանալ խոցուած սուսերացն՝ պակասեաց[4] քաջն Եմրան. վասն զի յանհնարին պատերազմին՝ ի միմեանց մոլորեալ եղեն դասք ազատացն, որ և զերերաց մահ ոչ կարացին տեսանել։

Յայնժամ քաջն Վասակ դարձաւ միացեալ[5], և զնայր իրրեւ զառիւծ զայրացեալ, ընդ մէջ զօրացն այլազգեաց անցանէր. և էր ձանձրացեալ[6] ի մեծի

1. Հայոց զօրավարաց մէկն երեւի, բայց առաջ յիշուած չէ։
2. Նիզակին սուր մասին ներքեւ՝ երկաթէ գունտ մի զնէ, որպէս զի ուժով իջեցընէ հարուածը։
3. Ուժով իջեցընել (թուրը) զարնել։
4. Սուրի զարնուածքներով շատ վերք առած սկսաւ ուժ ընկնալ։
5. Միանալ։
6. Յոգնած։

պատերազմին. և դիմեաց ելանել ի լեառն որ կոչէր Վերկեւելոյ[1]. և ի բազում հալածանաց պատերազմին՝ նստեալ (հանգչէր) ընդ հովանեաւ քարանց։ Եւ տեսեալ զնա չինականացն՝ որք փախուցեալ էին, յայնժամ մի ոմն նմանեալ կայենի սպանողին, եկեալ գտանէր զնա զի ննջէր ի վշտացն, ուժգին բախեաց զնա, և ընկէց զնա ընդ բարձրութիւն քարին. և այսպէս կատարեցաւ քաջն Վասակ Պահլաւունին։

Մխե

ՄԵՆԱՄԱՐՏ ԱՇՈՏՈՅ ԵՂԲՕՐ ՅՈՎՀ. ԹԱԳԱՒՈՐԻ ԸՆԴ ՎՐԱՑԻՈՅ

(ՄԱՏԹ. ՈԻԹՀ. Թ.)

Իրրեւ լուաւ Յովհաննէս զգալն Աշոտոյ եղբօր իւրոյ, հրամայեաց փող պատերազմի հարկանել. և ինքն ի գահոյս անշարժ նստեալ կայր, վասն զի անհմուտ էր պատերազմի. և զղրդեալ Անի՝ ելեալ ի պատերազմ ընդ Աշոտոյ՝ քառասուն հազար հեծեւակաց և քսան հազար ձիաւորաց։ Եւ յայնժամ մի ոմն իշխան ի զօրաց թագաւորին Վրաց՝ ի դեսպանութիւն եկեալ էր առ Յովհաննէս. վասն զի մայրն Յովհաննիսի և Աշոտոյ դուստր էր Վրաց թագաւորին Գուրգի, կատարեալ իմիդ[2] թագուհին. և ասէր իշխանն Վրաց ընդ թագաւորն Յովհան-

1. Սաղմոսավանից մօտ է լեռն ու գեղն Սերկեւիլի։
2. Հայրն սովորաբար կորիկէ կոչուի՝ քան Վրաց, իսկ թագուհին շատ հեղ կատարեալիդի գրուի, համաձայն Լատինաց Գաբերիելա անուան, որպէս կոչուէր և մեծազի դշխոյն Կատարանիդէ, կին Գագկայ Ա։ Տես յօդուած 257։

նէա. «Ո՛վ տրքայ Յովհաննէս, հրամայեա՝ զի ցուցանիցեն ինձ միայն զԱչոտ, և ես ձերբակալ առարից զնա, և կապանօք բերից զնա առաջի քո»։ Վասն զի այրն այն էր քաջ և անպարտելի ի պատերազմի. և ասէր Յովհաննէս թագաւորն ցայրն այն. «Ահա այր հզօր է Աչոտ, գուցէ զիա՞րդ կարես ածել առաջի իմ»։ Եւ ասէր իշխանն վրացի. «Զիո՞նէ առից զնա կենդանի»։ Եւ ասէ ցնա Յովհաննէս, եթէ, «Զկորիւն առիւծու մի արհամարհեացես՝ մինչեւ տեսանիցես»։

Եւ յորժամ ձակատեցան ընդ միմեանս, և իշխանն որ յԱփխազաց՝[1] որպէս զարծուի ընթացեալ ի ձայն բարձր և յուզէր[2] զԱչոտ, և ասէր. «Ո՛վ Աչոտ, յառաջ եկեացես»։ Եւ լուեալ Աչոտ և եղեւ զայրացեալ իբրեւ զինծ. և յուզեալ զմիմեանս՝ ընթանային առ իրեարս. և իշխանն վրաց զնիզակն եդեալ Աչոտոյ. իսկ Աչոտ իբրեւ զկայծակն ի ներքս անցանէր և հարկանէր զնա պողպատովն ի վերայ սաղաւարտին. և զերկաթապատ մարմինն պատառեաց մինչեւ ցոտն, և հանգերձ միջօքն յերկիր ընկենոյր։ Եւ եղեւ յաւուր յայնմիկ սաստիկ պատերազմ. և զարձուցին զքաղաքն ի փախուստ[3], մինչեւ փախուցեալքն ոչ ժամանէին մտանել ի քաղաքն, յԱխուրեան գետն անկանէին. և զարձաւ Աչոտ մեծաւ յաղթութեամբ։

Եւ յետ աւուրց ինչ խորհեցան Բագրատունիքն և Պալհատունիքն և այլ ամենայն ազատագունդ զօրացն հայկազանց, առնել խաղաղութիւն ի մէջ Յովհաննիսի և Աչոտայ. և յայնժամ տուրք հայրապետն Պետրոս և իշխանք ելին առ Աչոտ, և մեծաւ երդմամբ նստուցին զԱչոտ Դրուց աշխար-

1. Աղգաւ Աբխազ էր, բայց հպատակ Վրաց։
2. Գրգռելով յառաջ կանչել։
3. Այսինքն, զքաղաքացիս Անւոյ կամ զզօրս քաղաքին։

հին[1] թագաւոր, ամենայն տանն Հայոց. և Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն Անի, և եթէ մեռանի Յովհաննէս, Աչոտ լինի թագաւոր ամենայն տանն Հայոց[2]։ Եւ յայնժամ եղեւ խաղաղութիւն ամենայն աշխարհին Հայոց։

ՄԽԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՃԱՐԱՄԱՑ ՊԱՀԼԱՒՈՒՆՈՑ[3] Ի ՄԱՐՄԱՇԷՆ ՇԻՐԱԿԱՑ

«Շնորհիւն Աստուծոյ ես Վահրամ իշխանաց իշխան անթիպատ[4] պատրիկ, որդի Գրիգորի իշխանի[5] Հայոց Մեծաց ի ցեղէն Պահլաւունի եւ ի զարմից Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ եւ զտիեզերական ուխտս Մարմաշէն[6] սկսեալ ի Նէ Թուականին Հայոց (986 Քրիստոսի) յաւուրս Սմբատայ որդւոյ Աշոտոյ Հայոց Թագաւորի, մինչեւ ի ժամանակս Յովաննիսի որդւոյ Գագկայ Հայոց Շահանշահի, առն իմաստնոյ շինողի եւ խաղաղաբարի[7], եւ ի Թուականիս Հայոց ՆՀԸ (1029) կատարեցաք մեծ ջա-

1. Անի քաղքին առհմանները դուրս եղած՝ Բագրատունեաց երկիրներն։
2. Վասն զի Յովհաննէս զաւակ չունէր։
3. Եղբայր Վասակայ և հայր Հռիփսիմեր Գրիգորի Մագիստրոսի։
4. Ἀνθύπατος, անթիհիւպատ գրուի սովորաբար պատուանուն բիւզանդական իշխանի, իբր Հեծելապետ։
5. Գրիգորս այս որդի Ապուղամրի՝ Հաւգէ կոչուէր։
6. Տես ի Շերմակ (147) տեղւոյս առաջարդութիւնը։
7. Նշանաւոր վկայութիւն բարուց Բագրատունեաց թագաւորաց, որոյ վկայեն և այլ պատմիչք։

նիւ եւ բազում ճախիւր, ես եւ մայր իմ Շուշիկ[1] Հայոց տիկնաց տիկին[2], եւ եղբարք իմ՝ Վասակ իշխանաց իշխան որ նահատակեցաւ ի Թուրքաց պատերազմի[3], եւ Աղխարիք Հայոց մարզպան, եւ մանուկն Համզէ· որ էաւ ամենայն տամբ եւ տոհմիւք հաւատարիմ տերանց մերոց, եւ նահատակեալ ի վերայ տանս Հայոց աշխատութեամբ եւ արեամբ մերով եւ որդւոց մերոց եւ գանձուց առատութեամբ. եւ ամենայն հնարիւք խնդրէաք զխաղաղութիւն աշխարհիս եւ զհաստատութիւն եկեղեցեաց։ Շինեցաք եւ այլ բազում եկեղեցիս եւ վանորայս· բայց զտեղի հանգստեանս մերոյ առաւել պատուել մեծացուցաք եւ լիացուցաք ամենայն գոյիւք ըերամբք եւ դաշտաւք· աւանդեցաք ի սա գիւղս եւ ագարակս գանձագինս, զԹագարանի գեղ[4] եւ զիւր ագարակն· զԳողիան եւ զՊորտանդն, զԱրտեճ եւ զԱզատա, զԱմանէ եւ զԵղնկայն· եւ յԱչկանի այգիք եւ Գ (երեք) աղաց· եւ Բ ջաղաց ի Դողս· ի յԱչտարակի այգի· ի Կարբոյ դաշտի այգի· ի Սերկեւլի այգի· ի Վժան այգի· ի Մրենի այգիք· ի յԱնի տներ եւ կղպականի[5]· եւ զարդարեցաք զաս ամենայն կազմութեամբ ի յիշատակ յաւիտենից մեզ եւ որդւոց մերոց· եւ կարգեցաք ի ձեռն սուրբ հաւր Երեմիայի[6] եւ որ զկնի յաջորդեցաւ Սոմթենէս նորին որդիացեալ·

1· Շուշիկ կամ Շուշան, ծնողքն կարծեմ յիշատակ չեն, ծնած է յամի 932։

2· Յետ թագուհւոյն Հայոց՝ նախապատիւ իշխանուհին այսպէս կոչուէր, նոյնպէս և յետոյ Թուրքմենաց ժամանակ։

3· Տես 244 յօդուածը։

4· Բագարան և հետեւեալ չատերն ծանօթ են մինչեւ հիմայ, և յիշուած ի Շիրակ և յԱյրարատ գիրս։

5· Այսինքն կրպակք կամ խանութք։

6· Որ էր աթոռակից Մարմաշենի վանաց։

եւ փոխարէն հատուցման ընկալեալ մեր ի ժառանգաւորաց սուրբ ուխտիս՝ տարին Զ (վեց) քառասունք[1] անխափան մինչեւ ի գալուստն Քրիստոսի· Արդ եթէ ոք ի մերոց կամ յաւտարաց աւագ որ զմեր զտուրս ի սուրբ ուխտէս պակասեցուցանէ կամ հայր որ զմեր ժամս խափանէ, ինքն որոշեալ լիցի ի Քրիստոսէ եւ դատող նորա աստանայ լիցի, նա մի տեսցէ զփառս առն Աստուծոյ· իսկ որք հաստատուն պահեն զաւանդս մեր աւրհնեալ եղիցին։

Տապանագիր Սոփիայ կնոջ Վահրամայ

Այս հանգիստ է Սոփեայ աղախնոյն Քրիստոսի կնոջ Վահրամա Պահլաւունւոն իշխանաց իշխանի դստեր Տիգրանայ Հայոց մարզպանի տեառն Անձեւացեաց մեծին Վասպուրականի· կիսաւրեա աւ Աստուած փոխեցա եւ թողի զաւակս իմ տրտում· աղաչեմ յիշեսջիք զիս եւ Աստուած ձեզ ողորմեսցի[2]· Թ. ՆԿԴ (1115)։

1· Վեց անգամ 40 պատարագ։

2· Զաւակներէն յիշուած են Ամբատ Մագիստրոս † 1044ին, Գրիգոր և Պետրոս։

ՄԽԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՉԵՌՆ[1]

(ՅԱՅՍՄԱԿՈՒՐՔ, ՀՈԿՏ. 5.)

Ի թուականութեանս Հայոց ՆՀՀ (478–1029–30) ամին և ի նոյն թագաւորութեան Յունաց Վասլին[2], եղեւ յերկինս ահաւոր նշան, և սոսկալի բարկութիւն ի վերայ երկրի. ի հոկտեմբերի ամսոյ երեք յերրորդ ժամու աւուրն, պատառեցաւ վերին հաստատութիւնն երկնից՝ յարեւելից կուսէ մինչեւ յարեւմուտս, ընդ երկուս հերձաւ երկինդ կապոյտ, և լոյս պայծառ յերկիր թափեցաւ ի հիւսիսային կողմանէն, և մեծաւ չարժմամբ դղրդեաց ամենայն երկիր. և նախ քան զնուազել լուսոյն՝ (եղեւ) գոչիւն և թնդիւն ահաւոր ի վերայ ամենայն արարածոց. խաւարեցաւ արեգակն, և երեւեցան աստեղք որպէս ի մէջ գիշերի. և ամենեքեան սուգ զգեցան, և զառն արտասուօք աղաղակէին ամենայն մարդիկ առ Աստուած: Եւ ապա յետ երից աւուրց ժողովեցան ամենայն իշխանքն և ազատքն հրամանաւ թագաւորին Յովհաննէսի, և եկին առ մեծ վարդապետն Կոզեռն Ցոհաննէս. որ էր այր աստուածապզեաց հրեշտակակրօն և հոգեւոս, լցեալ առաքելական և մարգարէական դրոց գիտու-

1. Կոզեռն ուղղաւ ձագ նշանակէ. յայտնի չէ թէ ինչո՞ւ այսպէս մականուաներ է վարդապետս: Կ'ա-ւանդուի որ երկար տեսիլք մի տեսած է և գրաւած այս վերնագրով. « Տեսիլ սուրբ Վարդապետին Յո-» հաննու որ մականուն Կոզեռն կոչեցեալ, այր հըզ-» նազգեաց և բանիբուն վարդապետ »:

2. Բ Վասիլ կայսրն է, որոյ գալն ի Հայս պատմած էր յօդուածիս հեղինակին:

թեամբ: Եւ յորժամ եկին իշխանքն Հայոց հարցանել զնա և իմանալ վասն հրաշալի նշանին որ եղեւ, և տեսին զվարդապետն Յովհաննէս անկեալ ի վերայ երեսաց իւրոց խոր արտմութեամբ, և լայր դառնապէս. և ի հարցանել նոցա՝ նա ոչով և աղիողորմ հառաչանօք պատասխանի տուեալ ասաց, Ո՛վ որդեակք, լուարուք, զի ահա այսօր հազար ամ է կապանաց սատանայի, զոր կապեաց Քրիստոս իւրով մկրտութեամբն ի գետն Յորդանան. և արդ արձակեցաւ սատանայ ի կապանաց իւրոց, ըստ վկայութեան Սրբոյն Յովհաննու աւետարանչի[1], որպէս ասաց նմա հրեշտակն, թէ հազար ամ կապեսցի սատանայ և դարձեալ արձակեսցի ի կապանաց իւրոց. և ահա այսօր արձակեցաւ սատանայ, որ Հայոց թուականն ՆՀՀ (478) (է), և կալ զառաջին եօթն (552) որ լինի ՌԼ ամ (1030)[2]. արդ զերեսուն տուր յառաջ քան զմկրտութիւնն, և կամ զհազար ի մկրտութենէն Քրիստոսի մինչեւ ցայսօր: Եւ արդ, որդեակք, վասն այսորիկ եղեւ պատառումն երկնից. և ահա յայսմ հետէ ոչ ոք կարասցէ կալ հաստատուն ի պատուիրանս Աստուծոյ:... Յայսմ հետէ կամքն սատանայի առաւել կատարեսցի ի մարդկանէ քան զԱստուծոյն:... Զայս ամենայն այսպէս խօսեցաւ սուրբ վարդապետն Յովհաննէս վասն ահաւոր նշանին. և զոր ասացն՝ ամենայն կատարեցան և կատարին:

Եւ գարձեալ յետ ութ տարւոյն՝ ի թուականիս Հայոց ՆՀՀ (478)[3] խաւարեցաւ արեգակն ահա-

1. Աւդարեւ Քրիստոսի քարոզութեան սկսելէն մինչեւ այս թուականն՝ հազար տարի կ'ըլլար. չատ քրիստոնեից մէջ կարծիք և վախ կար, որ այն թուականին աշխարհիս վերջ պիտի ըլլայ. և այս բանս՝ Յովհ. Յայտնութեան մէկ խօսքէն հետեւցնէին:

2. Որ է Քրիստոսի Ծնընդեան կամ Մարդեղութեան թուականն:

3. Առջի 478 թուականէն ութ տարի եռքը՝ պէտք

էր և սոսկալի տեսլեամբ. զի սեւացաւ արեգակն ի կէս աւուրն, և ամենայն աստեղքն երեւեցան որպէս ի մէջ գիշերի. և ամենայն մարդիկ ահա-բեկ եղեալ անկան յերկիր որպէս մեռեալ, ի սաս-տիկ չարժմանէն և յահագին որոտմանէն և գոռա-լոյն խորոց և բարձանց: Յայնժամ կաթողիկոսն Տէր Պետրոս և Թագաւորն Յովհաննէս՝ յղեցին արս փառաւորս ի մեծապատուացն առ վարդա-պետն Յոհաննէս որ կոչիւր Կոգեան, զի ի նմանէ գիտասցեն զմեկնութիւն մեծի նշանին. և զի էր այր սուրբ և զարդարեալ աքանչելի առաքինութեամբ, և էր մեկնիչ հին և նոր կտակարանացն Աստուծոյ լեալ վարդապետական շնորհաքն. և որք եկին առ վարդապետն՝ էին այսոքիկ. Գրիգոր մագիստրոսն որդին Վասակայ[1], և մեծն Աշոտ Սարգիսն[2], և այլք յազատացն Հայոց և ի պատուական երիցանց, որք եկեալ գտին զՎարդապետն անկեալ ի վերայ երեսաց իւրոց յերկիր, ի խոր արմուխտեան և ի լաց, մինչ զի թացեալ էր արտասուօք գետինն՝ ի սաս-տիկ լալոյն. իրրեւ տեսին զնա յայնպիսի տրտմու-թեան՝ զահի հարան և ոչ իշխէին հարցանել զնա քան ինչ, զի անդպատար հեզոյր զարտասուս իւր և կոծէր զկուրծսն: Ապա յետ վեց ժամու դեգեր-մանն, սկսաւ փառաւոր իշխանն Աշոտ Սարգիսն հարցանել զնա վասն ահագին նշանին. լային ամե-

*ներ ըլլալ 486 Հայոց, Քրիստոսի 1036 ինչպէս կ'ըսէ և Մատթ. Ուռհայեցի (ԽԸ)· « Ի թուի Հայոց ՆՀԵ (1036)
» Թաւարեցաւ արեգակն ահաւոր և սոսկալի տես-» լեամբ »: Գալէ Այրիվանեցին ուղղագոյն գնէ ի ՆՀ թուականի (481). « Աւուրս խաւարեցաւ ի քա-» ղաց ԾԳ, (տեսա 21) յաւրբաթի, ի մէջօրէին, և աս-» տակեցաւ սաստանայ ի կապանաց խաչելութեանն
» Քրիստոսի »:*

1. Ծանօթ Գր. Մագիստրոս՝ եղբօրորդի է Վասակայ:

2. Այն որ Վեստ կոչուի յաւնական պատուա-նուամբ, և որ քանի մի տարի վերջ եղաւ մանիչ, Անի մայրաքաղաքը Յունաց կայսեր անցընել տալով:

նայն մարդիկն եկեալ առ նա անձինք 120: Յայն-ժամ տեսեալ սուրբ վարդապետն զհառաչանս եկե-ղոյն առ նա, սկսաւ ասել ցնոսա. Լուարուք, որ-դեակք իմ, ի դառնացեալ ծերոյս, զի այսօր լցաւ հազար ամ չարչարանացն Քրիստոսի. և յայսմ հետէ համարձակուիմն է սատանայի և պեղծ դիւաց նորա:... Եւ առաջին նշանն եղոյց յառաջ քան զայս եօթն ամաւ[1], և գարձեալ երկրորդեաց. զի ահա յայսմհետէ ամենայն ազգք հաւատացելոց Քրիստոսի՝ ի խաւարի շրջելոց են, զի թուլանան ի պահոց և յաղօթից:...

Զայս ամենայն խօսեցաւ սուրբ վարդապետն Յովհաննէս ընդ իշխանան եկեալս առ ինքն, և արձակեաց զնոսա: Եւ ինքն կեցեալ ժամանակս՝ բազում աղօթիւք և հառաչանօք վասն աւերման աշ-խարհիս և քանդարման սուրբ կանոնացն՝ զոր հառս մարգարէական հոգւով, և լայր դառնապէս անմո-խիթար սգով:...

1. Վէրը աւթ տարի ըսաւ. Մխիթար Այրիվանեցին զայս այլ նշանակէ ի ժամանակագրական Պատմու-թեանն. « Նշն (477–1029). ի հակառմբերի Գ յերեկս-» րեայ երկինքն պատառեցաւ յերդէ յերդ, և ան-» դունդք գոչեցին. և արձակեցաւ ոստանայ ի կա-» պանաց մկրտութեանն Քրիստոսի »:

ՄԽԻ

ԱՊԻՒԼ-ՍՈՒՎԱՐ
ԱՄԻՐԱՅ ԴՈՒՆԻ ԵՒ ԴԱՒԻԹ ԱՆՀՈՂԻՆ

(ՄԱՏԹ. ՈՒՒԷԱՅԵՑԻ. ԺԴ.)

Յայսմ ժամանակիս զօրաժողով արար մեծ ամիրային Պարսից Ապուսռսար[1], իբրեւ հարիւր յիսուն հազար, զազգն յանօրինաց[2], և մեծաւ սրտմտութեամբ յարձակեալ գայր ի վերայ քրիստոնէից, և գառնաչուէնչ բարկութեամբ մտաւ յաշխարհն Աղուանից, ի Գաւրի Ալինողիի[3] գաւառն. և բազում վիշտ էած հաւատացելոց. և Դաւիթ երկուցեալ ի բազմութենէ զօրացն այլազգեաց՝ ոչ ելաներ ի պատերազմ: Իսկ անօրէնն Ապուսռսար էառ ղբազում գաւառս և դիմաբերդս չորք հարիւր[4]. և տարի մի կացեալ՝ արար յիւր հնազանդութիւն զմեծ մասն աշխարհին. և կամեցաւ գալ ի վերայ Դաւիթ: Յայնժամ անճարակեալ Դաւիթ և յուզարկէր առ թագաւորն Յովհաննիկս որ նստեր յԱնի, և ասէր, թէ, « Էառ Ապուսռսար զամենայն

1. Ապիւլ-Սվար Շետտատ կոչուած Քաւրդ ցեղէն էր, որոյ նախնին ի գարու կիսուն ապստամբելով յամիրապետէն Արաբաց՝ ինքնագլուխ տիրապետեր Աղուանից կողմերուն:

2. Սուլտանէն առած էր զօրաց մեծ մասը:

3. Ասոր քոյրը ի կնութիւն առած էր Ապիւլսըվար: Դաւիթ՝ հին Աղուանից մինակ փոքր մասին տիրէր: Ինչո՞ւ Ալինողին կամ Ալինող կոչուած է. — մին Փառնկաց այլ Sans terre կոչուածի նման:

4. Համարիմ թէ նշանակէ՝ դէմ դնելու բերդ, այսինքն ամուր. կան օրինակք որ ի տառիւ գրեն Թիւմաբերդ, որ գուցէ թեմ կամ ուրիշ բան նշանակէ. բերդից թիւն այլ կասկածելի է:

գաւառս Հայոց աշխարհիս և գայ ի վերայ իմ. և եթէ ինչ ոչ օգնես ինձ, և ես երթամ իւր ի հնազանդութիւն, և լինիմ իւր առաջնորդ, և խաւարածեմ գաւառիդ Շիրակայ»: Եւ լուեալ զայս Յովհաննէս՝ յուզարկէր Դաւթի արս երեք հազար. նոյնպէս և յուզարկեալ ի կապաւիճ[1] թագաւորն, զի և նա տայր նմա արս երկու հազար: Եւ այսպիսի օրինակաւ սպառնացեալ Աւփխազաց թագաւորին, և նա յուզարկէր յօգնութիւն Դաւթին արս չորս հազար. և ինքն Դաւիթ ժողովեալ զիւր զօրսն իբրեւ տասն հազար. և յուզարկեաց առ կաթուղիկոսն Աղուանից և ասէր. եթէ, « Այս ազգս անօրինաց վասն քրիստոսական հաւատոցն գան ի վերայ մեր, և կամին զօբէնս խաչապաշտացն խափանել և զհաւատս հաւատացելոց Քրիստոսի ջնջել. և ահա արժան է և իրաւունս ամենայն հաւատացելոց՝ ընդդէմ սրոյ երթալ և մեռանել ի վերայ քրիստոսական հաւատոցն: Եւ արդ ժողովեա զամենայն եպիսկոպոսունդ Հայոց աշխարհիդ՝ որ յԱղուանեն են, և ի բանակ այսր հասիր, զի ընդ մեզ մեռանիցիք»: Զոր և արար իսկ. երկերիւր եպիսկոպոսաւք գնայր[2] Տէր Յովհէփ ի բանակն քրիստոնէից: Գրեաց և ի վանորայն առ Հարսն՝ գալ միաբան ամենայն կրօնաւորաւքն ի զօրն հաւատացելոցն. և ժողովեաց զամենայն քահանայս Աղուանից աշխարհին և զաբեղաւագունսն, և քարոզ կարդաց ընդ ամենայն գաւառն և ասէր. « Եթէ այր իցէ և եթէ կին, որ ցանկացող է մարտիրոսական մահուն, ահա հասեալ եղեւ յայսմ ամի ի վերայ մեր. ուստի պիտոյ է Քրիստոս՝ վաղվաղակի

1. Սիւնեաց երկրին մէկ մասն է, լեռներով և նեղ անցքերով ամուր, անոր համար այլ կապանք կոչուած, յհայոյ Զաւիսան:

2. Ձափպաղանց թիւ. վասն կաթողիկոսն հազիւ թէ 30 եպիսկոպոս ունէր, Աղուանք աւելի փոքր ազգ համարին:

առ մեզ հասցէ»: Եւ լուեալ զայս՝ հայր որդւովքն և մայր դստերօքն ի բանակն հաւատացելոց հասանէին. և լցաւ դաշտն առհասարակ անթիւ բազմութեամբ իբրեւ զհօտս հանդերձ գառամբք:

Եւ լուեալ զայս Ապուսուար ծիծաղեցաւ ի վերայ եղելոցս այսր, և խաղայր գայր ի վերայ զօրացն քրիստոնէից: Եւ յայնժամ հրամայեաց Դաւիթ քարոզ կարգալ եպիսկոպոսացն և կրօնաւորացն և քահանայիցն, զի ամենայն ոք իւր ձիոքն պատերազմի՝ խաչ առցէ ի ձեռս իւր, և միայն զաւետարանն Քրիստոսի, և այնիւ ընդդէմ թշնամեաց սրոյն ընթացուք: Եւ յայնժամ ամենայն բանակն խաչ և աւետարան զարձաւ. և ահա մերձեցան զօրք անօրինացն. և բազմութիւն քահանայիցն կային ընդդէմ նոցա. իսկ Դաւիթ քան հազարով հասանէր ի վերայ այլազգեացն սրանց քաջաց: Իբրեւ ճակատ զճակատ հարան, ձայն բարձին քահանայական դասքն միաբան առ Աստուած՝ լալով, որ և հնչեաց երկիրն ի ձայնէն, և ասէին. «Արի Տէր, օգնեա մեզ, և փրկեա զմեզ վասն անուանդ քումդ սրբոյ»: Իսկ զօրքն հաւատացելոց իբրեւ զծով մխեցան ի մէջ բանակի անօրինացն, սր և ծածկեցան իսկ. յայնժամ քահանայական դասքն չարժեցան միաբան քրիստոսական սուրբ նշանիւքն, և ի վերայ թշնամեացն գիմեալ յարձակեցան, և հուր սաստկապէս ցոլացեալ ի նոցանէ, և եհար զզօրս այլազգեացն, և առհասարակ ի փախուստ դարձան: Եւ զօրքն Հայոց՝ սրով զհետ նոցա. և գաւուրս հինգ աշագին կոտորածով վաթեցին զզօրս այլազգեացն, որ և արեամբք ծածկեցան դաշտք և լերինք. առին անթիւ զանձս ոսկւոյ և արծաթոյ և աւարս բազումս. և մնացեալ զօրքն Պարսից մազապուրծ մերկ և բոկ անկան յաշխարհն իւրեանց: Եւ յաւուրս երիս տիրանայր Դաւիթ ամենայն գաւառացն՝ զոր էառ այլազգին, և մեծաւ պարգեւօք յուղարկեաց զամենայն զօրսն որք եկեալ էին ի յօգնութիւն իւր. և բաշխէր

բազում ինչս յաւարէն՝ եպիսկոպոսացն և քահանայիցն և ամենայն եկելոցն առ նա, և արձակեաց զնոսա. և եղեւ խաղաղութիւն:

ՄԽԻ

ԽՈՒԼ ԽԱԶԻԿ ԵՒ ՈՐԴԻՔՆ

(ՄՈՑԹ. ՈՒՌՀԱՅԵՑԻ. ԿԳ.)

Յայսմ ամի (1043) սպանաւ մեծ իշխանն Հայոց Խաչիկ և տղայ որդի նորա իշխաւն անուն, ի վասպուրական գաւառին. վասն զի ժողովեցան Հներ և Սաղամատ[1] և տոպատուակ արարին զթոռնենւոն գաւառն. և համբաւ հասանէր առ Խաչիկ, եթէ զօրքն այլազգեաց մտին ի գաւառն քո: Եւ նա էր այր քաջ և յաղթող պատերազմաց, յազգէ ի վերոյն[2], յառիւծ լակէ[3]. բայց ծերացեալ և թօշակեալ էր զգործ պատերազմին, և հաճաչելով ապաշաւէր. քանզի աւագ որդին նորա քաջն Հասան և ձնձղուկն հանդերձ զօրօքն ի յարեւմուտեան էին զհետ թագաւորին Միխայէլին[4]: Եւ յայնժամ իշխանն Հայոց Խաչիկ ոչ կարաց համբերել սրտին. յարուցեալ եօթանասուն արամբք հասանէր ի վերայ այլազգեացն, և զօրդին իւր ի տանն արգելական արար զիշխաւն անուն, զի տղայ էր հնգամասանամեայ: Եւ իրեւ հասու Խաչիկ այլազգեացն, տեսաւ բազում զօրս (առաջի) իւր. ձայն

1. Այսինքն բնակիչք կամ զօրք Խոյ և Սալմաստ գաւառաց Պարսկահայոց:
2. Սկսալ գրուած թուի. չեմ կարծեր իմերիա և վրացի նշանակել:
3. Առիւծի պէս ուժով, կարիճ:
4. Որ է կայսրն Յունաց Միքայէլ Ե:

տուեալ արանց իւրոց՝ և ի պատերազմ մտանէր, և բաղխեր սաստկապէս զայլազգիսն և յերկիր թաւալեցուցանէր: Եւ ահա տեսանէր զի տղայ որդի նորա զերծեալ լինէր յարգելանոցէն և գայր ի պատերազմ. իբրեւ տեսս Խաչիկ՝ բեկաւ[1]. քանզի տղայ էր և գեղեցիկ. և գայր Իշխանն անուն իբրեւ զկորիւն առիւծոյ, և ուժգին բաղխեր զպատերազմն, և առ ախմարութեանն՝ քաշապէս մտաներ[2]: Եւ իմացեալ զնա թէ որդի առն քաջին է, փակեցին զնա ի մէջ, և կալան սպանին: Եւ տեսեալ Խաչիկ բեկաւ ողն նորա, և անկաւ սուսերն ի ձեռաց նորա. և տեսեալ զայն զօրացն այլազգեաց՝ դիմեցին ի վերայ նորա, կալան զնա և սպանին. և միացեալքն փախստական գնացին ի տունս իւրեանց:

Եւ զկնի աւուրց ինչ գային որդիքն Խաչիկայ յարեւմտից, զի լուեալ էին զմահ հօրն իւրեանց և զտղայ եղբօրն, և գային սեաւ զգեստօք և լային բազում լալիւնս: Եւ յայնժամ Հասան կալաւ ռայիս[3] մի Քուրթ, որ էր իւր սահմանակից, և տայր նմա հազար դահեկան և ասէր. «Մուտ ի Հեր և ի Սաղամասս, և ասա, թէ, «Թոռնեւեան և ամենայն աշխարհն անմարդ է. զի կայք պատրաստ, բազում հօտս ոչխարաց և ծառայս ընդ վայր չրջին»: Եւ արար ռայիսն այնպէս: Եւ ժողովեցան այլազգիքն արս հնգետասան հազար. եկին մտին ի նոյն տեղին. և գայր ռայիսն, և պատմեաց Հասանայ և ձնձղկան. և ժողովեալ Հասանայ ըղզօրս իւր արս հինգ հազար, և մեծաւ զայրացմամբ իբրեւ զխոցուած գազան հասանէր ի վերայ բանակի անօրինացն: Եւ ձայն տուեալ Հասան արտասուալից գոչմամբ ի ճակատ այլազգեացն և ասէր. «Ո՞ւր է այրն այն որ եսպան զՀայրն իմ

1. Սիրտն կտրեցաւ, որդւոյն վտանգը տեսնելով:
2. Յանդգնութեամբ վազէր, թշնամեաց մէջ մտնէր:
3. Գեղապետ կամ վիճակապետ:

զԽաչիկ, յառաջ եկեսցէ»: Եւ ահա գայր մի ոմն յայլազգեացն, սեաւ մի և հզօր, և ձայնեալ ասէր, թէ, «Ես եմ որ սպանի զառիւծն զԽաչիկ, և ահա պատերազմու ձին և զգեստն և իւր նշանակն[1] և Թուրն, զոր ունիմ ես»: Եւ տեսեալ Հասան որդի նորա՝ եկաց, և հանեալ զԹուրն ի պատենէն, և որպէս զառիւծ հասանէր ի մէջ այլազգեացն, և հարեալ զնա՝ ընդ երկուս պատառեալ յերկիր ընկենոյր. և առեալ զձին և զնշանակն՝ անվնաս եղանէր:

Այսպիսի օրինակաւ ձայն տուեալ բարձր՝ եղբայրն Հասանայ ձնձղուկն և ասէ. «Ո՞վ է որ եսպան զեղբայրն իմ զԻշխան անուն. եկեղ յատենի՝ զի տեսից զնա»: Եւ գայր պարսիկ մի քաջ, և ձայն տուեալ և ասէր. «Ես եմ որ սպանի զԻշխան անունն, և ահա իւր սպիտակ ձին և իւր վառ նշանակն[2] և իւր Թուրն»: Եւ որպէս կայծակն հասաւ ձնձղուկ ի վերայ նորա և սատակեաց զնա. և առեալ զձին և զնշանակն, և գայր առ Հասան. և ձայն տուեալ Հասան զօրացն և քաջապէս բախեալ ի պատերազմ՝ դարձուցին ի փախուստ, և կոտորեցին ի նոցանէ արս չորս հազար. և դարձան խաղաղութեամբ և մեծաւ ուրախութեամբ, և փոխեցին զտեսս իւրեանց:

1. Խաչիկայ պատերազմի դրօշն:
2. Վառ՝ չատ հեղ դրօշ նշանակէ, բայց այստեղ Թուի կարմիր դրօշ:

ՄԾ

ՎԵՍՏ ՍԱՐԳԻՍ ՄԱՏՆԻՉ ԱՆԻՈՑ

(ՄԱՏԹ. ՈՒՌՀԱՅԵՑԻ. ԿԲ.)

Յայսմ ժամանակիս սկսաւ անօրէնն Սարգիս յառաջ բերել զչար նենգութիւնն իւր. և ազդ առաքեալ Մոնոմախին[1] և ասէր, եթէ, «Կոչեա առ քեզ զԳագիկ[2] ի Կոստանդինուպոլիս՝ սիրոյ պատճառանօք, և յայնժամ խաբէութեամբ առցես ի նմանէ զքաղաքն Անի»: Եւ լուեալ զայս Մոնոմախ թագաւորն, և ուրախ լինէր յոյժ. և բուսաւ ի սիրտ նորա բոյս չարութեան՝ առ ի բառնալ զթագաւորութիւնն Հայոց: Եւ զրեաց թուղթ առ Գագիկ արքայն Հայոց հանդերձ մեծամեծ երդմամբ. և այնչափ մոլեգնեալ՝ մինչեւ զքրիստոսականն աւետարանն և զնշանն սուրբ խաչին Քրիստոսի՝ միշնորդս և երաշխաւորս յուզարկեալ ի Հայք. և այսպիսի օրինակաւ կոչէր զթագաւորն Հայոց վասն սիրոյ և տեսութեան: Եւ լուեալ զայս Գագիկ և ոչ էառ յանձն գնալ զհետ սուտութեան. վասն զի գիտէր զչոռոմոց նենգութիւնն: Յայնժամ նենգաւորն Սարգիս և այլք յազատացն Յառաջ մատեան, որք բանատուքն[3] էին առ Մոնոմախին, և քաջալերէին զնա գնալ, և ասէին. «Ո՛վ թագաւոր, վասն էր երկնչիս և ոչ գնաս, վասն այսպիսի երդմանցս և միշնորդութեամբ սրբոյ Աւետարանին և սրբոյ Նշանին Քրիստոսի. և յազագս մեր մի՛ երկնչիր. վասն զի ահա անձինք մեր մեռանիմք ի վերայ քո»: Եւ կացուցին միշնորդս զՏէր Պետրոս[1], և արարին երդմունս սաստիկս յաւուր յայնմիկ. և բերին զաւուրբ խորհուրդն մաքրոյ և արեան Որդւոյն Աստուծոյ, և թանային զգրիչն յարիւն կենարարին, և արարին երդման գիր հայրապետաց և ամենայն իշխանաց Հայոց[2]: Եւ յայնժամ գնաց Գագիկ արքայ Հայոց ի Կոստանդինուպոլիս առ թագաւորն Մոնոմախ: Եւ ամենայն քաղաքն բաղխեալ ելանէին ընդ առաջ Գագկայ Հայոց արքային. մեծ փառաւորութեամբ տարան զնա առ թագաւորն, որպէս վայել է թագաւորին. և աւուրս ինչ մեծարեաց զնա Մոնոմախն:

Եւ յայնժամ աստուածուրաց նենգաւորքն որք արեամբն Աստուծոյ կապեցին զերդումն սոսկալի, առաքեն զքառասուն բանալիս քաղաքին Անւոյ առ թագաւորն Մոնոմախ, և ի հետ թուղթ, թէ, «Անի քաղաքն և ամենայն արեւելք քեզ եղեւ»: Եւ կոչեաց թագաւորն զԳագիկ, և զբանալիս տանն և զքաղաքին և զթուղթն առաջի նորա եդեալ, և ասէր ցԳագիկ, եթէ, զԱնի և զամենայն արեւելք ետուն ի ձեռս իմ: Եւ ծանեաւ Գագիկ զնենգութեան գործքն, յորոց եհան արտասուօք և ասէր. «Դատ արասցէ Քրիստոս ընդ իս և ընդ նենգաւորան իմ»: Եւ ասէր Գագիկ ցՄոնոմախն, եթէ, «Տէր և թագաւորն ես եմ տանն Հայոց, և ահա ես ոչ տաց զՀայք ի ձեռս քո. վասն զի զոմ զիս խաբէութեամբ ածեր ի Կոստանդինուպոլիս»: Եւ զաւուրս երեսուն պնդեալ ոչ հաւանեցաւ Գագիկ. և յորժամ եկս իրացն ոչ գտանէր, յայնժամ տայր զԱնի ի ձեռս Հոռոմոց. և տայր Մոնոմախն Գագկայ զկալօլ–պեղատն և զՊիզոս[3], և ոչ յուզար-

1. Գետադարձ կոչուած կաթողիկոսն:
2. Զի հաւատալի թէ կաթողիկոսն ըրած ըլլայ այդպիսի բան. և եթէ հաւաներ է Գագկայ երթալուն, պարզմտութեամբ է և ոչ մատնութեամբ:
3. Կապադովկիոյ մէջ են, բայց տեղիքն անծանօթ:

1. Կոստանդին Մոնոմախոս կայսր:
2. Վերջին թագաւոր Հայոց Բագրատունեաց, որմէ Աշոտոյ՝ եղբօր Յովհաննու թագաւորի: Տես յօդ. 245:
3. Մատնիչք, ծածուկ լուր առուղք:

կեաց զԳագիկ ի քաղաքն Անի. և զտուն հայրենի իւրոյ[1] տայր բերել ի Հոռոմս. և կայր զեզերեալ թագաւորն պանդխտեալ ի մէջ անողորմ և չար ազգին Յունաց[2]: Բայց ոչ հասանէր Գագիկ՝ նեղութիւն մեծ արկանէր ի վերայ ազգին Յունաց, պեպակս խայտառակութեամբ. վասն զի որպէս թագաւոր աշարկութեամբ կայր ի մէջ նոցա և Հոռոմոց. բայց սաստիկ սուգ ունէր ի սրտի իւրում վասն հայրենի աթոռոյն իւրոյ, զոր նենգութեամբ յափշտակեցին:

ՄԾԱ.

ՔԱՋՈՒԹԻՒՆ ԵԻ ՍՊԱՆՈՒՄՆ ԼԻՊԱՐՏԻ ՕՐՊԵԼԵԱՆ

(ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐՊԵԼԵԱՆ, Կ2·)

Համբաւ դառնալոյր և սիեզերակոծման հըռչակին[3] հասանէր յառաջագոյն առ կայսրն Յունաց. և դողումն սաբսռալի հասեալ կալաւ զերիկամունս ամենայն մարդոյ: Վասն որոյ յղեն այսր դկամևևուս[4] ի Տրապիզոնոյ՝ զօրաք. և խնդրեն միաբան օգնականութիւն ի Հայոց և ի Վրաց, թերեւս կարասցեն զերծանիլ յայնմ անդնդապատոյտ և աշադնեռանդ բարկութենանցն Հարաւայ-

1. Պէտք էր ըսել, « զտուն իւր Հայրենի » կամ զտուն Հայրենեացն:
2. Պատմչին սիրտն այլ զայրացեր է ոչ պակաս քան զԹագաւորն, և սուր գրչով անխնայ խոցէ զՅոյնս:
3. Խուարեգմ կամ Խարազմ Պարսից արշաւանաց լսեն:
4. Ծանօթ անուանի յայն ցեղէն մէկ մի, ուսկից յաջորդ դարերուն կայսերք եղան Կ. Պոլսի:

նոց: Զոր լուեալ թագաւորին Գաւթի և Գագկայ՝[1] ոչ համարձակեցան ընդ առաջ ելանել իսմայէլեան զօրուն. այլ մեծապատիր թախանձանօք հաւանեցուցեալ զքաջն անպարտելի՝ զԼիպարիտն Օրպելեանց՝ գնալ և խառնիլ ի զօրն Յունաց, և ընդդիմանալ մարտին եկելոյ. և ինքեանք զղեալ որջացան յամուրս աշխարհին: Ապա յանձն առեալ Լիպարտի՝ անվախ սրտիւ ասէ, « Ես երթամ ընդ առաջ այլազգեացն, և դնեմ զանձն իմ ի վերայ քրիստոսական հաւատոյս. և զօրութեամբն Աստուծոյ՝ կամ դարձուցանեմ անդրէն և կամ մեռանիմ վասն Քրիստոսի. բայց ոչ թագաւոր, յանձն առնեմ զյետնորդս իմ[2] քեզ, զի մի վասն նախանձոտ և չարաբարոյ ազատացդ Վրաց՝ նեղեցես ինչ սոցա և զրկեսցես ի պատուոյ և ի հայրենեացս մերոց »:

Զայս ասացեալ՝ ինքն Լիպարիտ հանդէս արար ազատաց և զօրաց իւրոց, որ ունէր զկէս թագաւորութեանն, և անցին ի հանդիսին 700 ազատք մեծամեծք, որք էին սեպհական ծառայք նորին. և 16,000 արք պատերազմողք: Իսկ ի զօրացն արքունի էառ տասն հազար այր. և գնացեալ ի Վանանդ ի Դաշտն Կարուց՝ խառնեցան ի նա զօրքն Հոռոմոց 15,000 այր. և եղեն միանգամայն 41,000 հեծեալ: Եւ զի այլազգիքն կոտորեալ էին նախ զՈրդուս գիւղ[3], և ասպատակեալ էին զամենայն շրջակայ գաւառան, և բանակէին ի նոյն դաշտի, ապա ճակատեցան ընդդէմ իրերաց ընդ լուսանայն այգուն, և յօրինեցին զառաջն հանդիսին երեքկարգեան գնդովք, նախամարտիկս և միջնամարտիկս և վերջապահս: Եւ զի առ անթիւ բազ-

1. Գաւթի՝ թագաւոր Վրաց, Գագիկ՝ Հայոց Կարսի կամ Վանանդայ:
2. Զաւկընները, ժառանգները:
3. Կամ Որդուրու, Բառեն գաւառի գիւղ մի, որոյ մնա էր Դուռ, որք հիմայ կոչուին Մեծ և Փոքր Ցուռ:

մութեան Իսմայէլացւոցն՝[1] Լիպարտեան զօրն ոչինչ երեւէին, այլ իբր ջրոտուս կամ զինաքաղս[2] թուէին առ նոցա. տեսեալ զայն անպարտելի ախոյեանն քաջն Լիպարիտ՝ զօրացոյց զգունդն իւր, և ասէ. «Մի՛ երկնչիք, այլ միայն զօրացիք անուամբն Քրիստոսի, և կնքեցէ՛ք զձեզ նշանաւ խաչին. և մեր է յաղթութիւնն»: Եւ ինքն իջեալ յերիվարէն՝ ծունր դնէր և կնքէր զինքն նշանաւ սուրբ խաչին, և յանձն առնէր Քրիստոսի. և կապէր ի պարանոցն զմանեակն որ ի փրկական խաչէն. և այնպէս զինեալ զինքն՝ հեծեալ ի տաճիկ երիվարն, և ընկենոյր զոսկենկար վահանն ի թիկունսն, և զճօճ նիզակին յահեկ բազուկն, և զլայն պողովատիկ շղչիրն[3] երկբերանի՝ յալ ձեռինն, և զվաղրն ահագին ի ներքոյ բարձիցն՝ իբր զուռն դարբնաց և կամ ըզսակր կոցաւոր քարահատաց. անցեալ ի մէջ ռազմաւոր հանդիսին՝ արշաւէր սիգալով յայսկոյս և յայնկոյս. և յոսկեկուռ զրահէն և ի սաղաւարտէն նշոյլք հատանէին իբր յարեգականէ: Բչէր, գոռայր իբր զառիւծ, խնդրէր ի նոցանէ մենամարտիկս, և ասէր. «Ես եմ Լիպարիտն Ափխազաց[4]. եկա՛յք, քաջդ Պարսից և Աբեաց, և նախամարտեսցուք ընդ միմեանս»: Եւ թէպէտ բազում եղանելի նմա. և յոր տեղ սլանայր Լիպարիտն՝ և իբր զարծիւ խոյանայր ի վերայ նոցա, յեսս յեսս մատչէին՝ զմիմեանս առաքուր կոխելով:

Ապա գիտաց Լիպարիտն զի բեկեան սիրտք նո-

1. Սովորաբար Արաբացիքն կոչուին Իսմայէլացի. իսկ այս այլազգիք ուրիշ ցեղապետէ առաջ եկած են:
2. Բանակի մէջ զօրաց ընկած զէնքերնին բերողք և ջուր առողք:
3. Շեղչիյր, պարակերէն սուր նշանակէ:
4. Իշխան Ափխազաց, բայց ոչ Ափխազ, զի Օրպելեանք ի ձենաց գաղթեալ են ի կողմանս Վրաց և Հայոց, ըստ աւանդութեան սոցա:

ցա, և թուլացաւ զօրութիւն նոցա. դարձաւ յիւր ռազմն, և քաջալերեալ յառաջ չարժեաց. և գոչեցին աշեղ ազաղակաւ, և խառնեցան ընդ միմեանս. և խմբեցաւ պատերազմն ահագին իմն դղրդմամբ, որ թուէր իբր որոտումն ամպոց և ճայթմունք փայլատակմանց: Եւ ինքն Լիպարիտ իբր զամպ հրախառն մտանէր և ելանէր և կայծակնահար առնէր զբազումս. և զօրքն հրոյ ընդ եղեգն փութորկեալ՝ ճեղքէր զռազմ նոցա և անցանէր յայն կողմն, և յայլ և յայնեակ հոսէր գեաս արեանց. և դնէր կոյտս դիականց, և հատանէր յայլազգեացն գունդս գունդս. և զայն իրրեւ զերամս նապատակաց տապատս արկանէր ի գաշտին: Եւ այնպէս կոտորեալ յաղթեաց Իսմայէլացւոցն. և փախստական արար գսակաւ մնացեալսն՝ քաջն Լիպարիտ, զօրութեամբն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն մերոյ:

Եւ ապա ի հաւարակել աւուրն՝ դարձան ի մեծաձայն աշխատութեանց և վաստակոց՝ մեծաւ գոհութեամբ և բազում ուրախութեամբ: Իսկ անիծեալ և տիրասպան ազատքն Վրաց՝ երկուցեալ յահագին զօրութենէ նորա, և խորհուրդ արարեալ ընդ դեղեսպէղ[1] զօրագլխան Լիպարտի, և յանկարծակի հասին զքիլ երիվարին նորա և ընկեցին յերկիր զԼիպարիտն. և ի մէջ առեալ բազմութեանն՝ սպանին զնա ի տեղւոջն, և ածին խաւար և սուգ քրիստոնէից: Զոր և իմացեալ Իսմայէլացւոցն և մեծաւ խնդութեամբ դարձան անդրէն և սուր ի վեր առեալ կոտորեցին զզօրսն Վրաց. և ոմանք փախստական եղեալ ցրուեցան ընդ երկիր: Եւ այն էր կատարած կորստեան աշխարհիս Հայոց և Վրաց, զի տիրեաց Տաճիկն ընդհանուր գաւառաց. առին սակաւ մի յեսոյ զԱնի, որ ի 513 (Թուին Քրիստոսի 1064), Աչփահան սուլտանն. առին և զԿարս, առին զբոլոր գա-

1. Վրաց բառ, գլխաւոր կամ իշխան նշանակէ:

ւառն Շիրակայ և Վանանդայ և Աղշարունեաց, և զԱրարատեանն և զԻսիական աշխարհս և զԲաղացն, և զամենայն երկիրս մինչ ի դուռն Տփխեաց:

Եւ արդ, զայսպիսի դուռն մեծի կորստեան և աշխարհագունաց կործանման քրիստոնէից՝ յայնմ աւուր բացին անիծեալ և սիրասպան զօրքն Վրաց: Բայց ես զսպանումն Լիպարտի համարիմ ոչ կոտուած անձին, այլ գիւտ մեծի փրկութեան. զի եղեալ զանձն ի վերայ հօտին Քրիստոսի՝ մեծապէս հանդիսացաւ, և անպարտ սպանմամբ յիւրոցն՝ մարտիրոսական արեամբ պսակեցաւ, և զնաց առ ամենաթագաւորն Քրիստոս, զի ի նմանէ ընկալցի զվարձս և զպարգեւս մեծավաստակ աշխատութեան իւրոյ: Իսկ ապա հաւատարիմ ծառայք նորա բարձին զդիակ գեղեցիկ երիտասարդին և անպարտելի քաջին՝ մեծաւ ողբով. և տարեալ ի Կարս՝ կազմեցին զագաղս և զարգարեցին ոսկեհուռ հանդերձիւ և արքայական ճոխութեամբ. և առեալ տարան ի մեծ հանդիսաւոր վանսն իւրեանց ի Բնթաւիա[1], որ էր չինեալ նախնեացն նորա տուն գերեզմանի ինքեանց:

ՄՕԲ

ՀԱՐՊԻԿՆ ԿԱՋ ԴԱԻԱԾԱՆԵԱՆ

(ՄԱՏԹ. ՈՒՌՀԱՑԵՑԻ. ՀՋ.)

Յամս Ե (1051–2) մատեան առ թագաւորն Մոնոմախ չարաթոյնք և լեզուք նենգաւորք, և մատուցանէին չարախօսութիւնս վասն փառաւոր իշ-

1. Տփխոյս մօտերն հին վանատուն:

խանացն Հայոց՝ որք ի գաւառն Պաղնայ[1] բնակեալ կային. և ասացին, թէ անհնազանդ կան հրամանաց քոց, և կամին ապստամբ լինել ի քէն: Եւ առաքեաց զօրապետս հանդերձ զօրօք ի Պաղին, և անիրաւաբար հեղոյր զչարութեան թոյնս իւր ի վերայ անմեղաց. և բարկութեամբ սկսաւ ապականել զամենայն գաւառն, և զամենայն իշխանսն սկսաւ ի փառաց ընկենուլ. վասն զի էր այր պիղծ և չար, որ էր զօրագլուխ սատանայի, որոյ անուն նորա Պետրոս Ճանաչի. և կամեցաւ որ զմեծ իշխանսն զորդիսն Հաբելի՝ ձերբակալ առնել, զՀարպիկ զայր քաջ և հզօր, և զԴաւիթ և զԼեւոն և զԿոստանդին, զչորս եղբարսն, այսմ օրինակաւ և զայլ իշխանսն: Յայնժամ ամենայն իշխանքն ծածկաբար խորհուրդ արարին զի ամենայն օք զիւր ամրոցն բռնեսցէ, մինչեւ ծանուցանեն թագաւորին զաւերումն գաւառին յանօրէն Պետրոսէ. և միաբան արարին զերդումն միաբանութեան. զի յայդ չարաթոյն ատկէ ամենայն օք զիւր ամրոցն[2]: Եւ յայնժամ մի ոմն ի միաբանելոցն Թորոսակ անուն՝ ուրացաւ զերդումն, և ազդ արարեալ անդէն Պետրոսին, եթէ ամենայն իշխանքն միաբանեցան չգալ ի կոչումդ քո: Եւ զայս ամենայն ոչ գիտացեալ Հաբելի որդեացն, և որպէս յառաջն ասացեալ էին՝ յաւուր չարաթուն առին զմեծ ամրոցն որ

1. Որ և Պաղնատուն գաւառ Դ Հայոց, արեւմտեան եփրատայ կողմերը:

2. Շաբաթ օր առաւօտուն, ամեն բերդատէր իր բերդը ամրացուցած գոցէ:

3. Գուցէ բերդն գլխաւոր ըլայ, իբր Թիլ–Պաղնատնոյ կոչուելով երբեմն: – Սովորաբար թիլ կոչուին ձեռագործ հողաբլուրք, և այդ Դ Հայոց և մերձաւոր Միջագետաց կողմերն՝ կան շատ տեղիք այդ Թիլ անուամբ:

կոչի Աղկնի[1], որ էր մերձ ի գաւառն Թլհարոյ. և այլ ամենայն միաբանքն գնացին ի կոչն Պեռոսին: Եւ լուաւ զայն զոր արարին որդիքն Հաբելի, ա- բար ժողով ի վերայ բերդին Աղկնոյ զօրս բազումս. և տեսանէր զամրութիւն բերդին և հիանայր յոյժ, և ոչ կարէր պատերազմել, վասն զի բարձր էր յոյժ և անառ ի թշնամեաց. և ոչ կարաց մերձե- նալ ի նա: Եւ յայնժամ խորհեցաւ զայս ինչ չար և ասաց. «Եթէ ոք բերդէ զգլուխն Հարպկան առ իս, առցէ գանձ ոսկւոյ և արծաթոյ բազում, և իշխանութիւնս և մեծութիւնս ի թագաւորէն»: Եւ լուեալ զայս անդգակիւք և նախածանօթք իւր՝ որք առ ինքն էին ի բերդն, և խորհեցան խոր- հուրդ անօրէնութեան զՅուդայի և զԿայենի եղ- բայրասպանին: Եւ էր մօտ ի բերդն տեղի հա- կառակի[2], և Հարպիկն առեալ արս և ելեալ պահէր զտեղին, և գաւուրս երեք ոչ իշխեաց ննջել ամե- նեւին. և ասեն ներգաւօրքն. «Վասն էր ոչ ննջես, տէր մեր. զի ահա այսօր անձինք մեր մեռանիմք ի վերայ քո անձինդ»: Եւ հաւատացեալ նոցա ննջեաց, զի ձանձրացեալ էր յոյժ. և իրրեւ քաղ- ցրացաւ ի քուն իւր, յարուցեալ ազգականն իւր հատանէր զգլուխ Հարպկանն՝ պատն հզօրի և քա- ջի, և զնոյն գիշերին հասուցանէին զգլուխն առ Պեռոս կառապանն, և սպանողքն ոչ ինչ օգտեցան, բայց միայն անէծս: Եւ հրամայեաց Պեռոս ի ձող ցցել զգլուխ Հարպկանն և տանել ընդդէմ գրան բերդին. և ի լուսանալն՝ տեսեալ եղբարցն նորա և ծանեան. և վազվազակի բացեալ զդուռն և ար- կեալ հող ի վերայ գլխոց իւրեանց, և լալով գային երեք եղբարքն և անկանէին առաջի հատեալ գլխոյ Հարպկանն. և այնչափ կոծ առեալ նոցա,

1. Հիմայ կոչուի Աղղանա, և ի մօտն կան պղընձահանք:

2. Այնպիսի տեղ մի, որոյ տիրոջն կըրնայ ուրիշ տեղ անցնիլ և տիրել:

մինչեւ ողբս առնել լային ամենայն զօրք բանա- կին: Եւ այսպիսի օրինակաւս տիրանայր Պեռոսն՝ ամուր բերդին Աղկնոյ, և զեղբարսն Հարպկանն զորդիս Հաբելի՝ տարաւ ի Կոստանդնուպոլիս առ թագաւորն Մոնոմախ: Եւ տեսեալ զնոսա թագա- ւորն և ամենայն տունն Յունաց, հիանային ընդ սոսկալի տեսիլ կիրպարանաց նոցա. վասն զի ա- հաւոր էին տեսլեամբ, և թիկամբք հանդերձ բարձր էին քան զամենայն տունն Յունաց. և յաղագս զեղեցիկ տեսլեանն ոչ ինչ արարին խրատ[1] նոցա. այլ հրամայեաց անցուցանել զնոսա ի կղզի[2], զԹա- սիթ և զԼեւն և Կոստանդին, արք քաջք և հզօրք և իշխանք երեւելիք Հայոց:

ՄԾԳ

ԱՆՇՓՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, Ի ՆՈՒԱՃԵԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

(ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ.)

Աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իրրեւ զդրախտ անկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերեւալից, պտղաբեր, զեղեցկաչուք և երջանիկ անցաւորացն ցուցանիւր. քանզի իշխանք նստէին յիշխանական գահու զուարթահայեաց դիմօք, և զգարնանալիսն ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք առաջի կացեալք, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր և ձայնք փո- ղոցն և ծնծղայիցն և այլ երգեցողական արուեստիցն՝ ղսողացն անձինս լի առնէին ուրախական

1. Պատիժ չտուին:

2. Աքսորել Կ. պոլսի մօտ կղզեաց մէկուն մէջ, ինչպէս կ'ընէին կայսերք ազնուական յանցաւորաց:

բերկրանօք: Անդանօր և ծերք նստէին ի հրապարակ՝ հարկաւոր և պատուական ալեօք բարգաւաճեալ. այլ և մարք զմանկունս ի գիրկս ընկալեալ, և մայրենի զթովքն աղէխարչեալ, և վասն առատ ուրախութեանցն՝ մոռանային զտխրական ժամանակս երկանց. զօրէն աղաւնեաց գնորափետուր ձագօքն միչտ թռթռելով: Ջինչ ասացից և զհարսանեցն ի սենեկի, և զփեսայիցն յառագաստի՝ զսիրահարուստ ըղձից զբօրբոքուն, և զանմոյժ բնութեանն զհակամիտութիւն:

Այլ և ի վեր տանելի է մեզ բանս, առ հայրապետական աթոռն և առ թագաւորական պատիւն. զի մինն[1] զօրէն ամպոյ խոտացեալ ի պարզեւացն Հոգւոյն, ի ձեռն վարդապետական չնորհին ցօղէր զցօղ կենացն. որով պարարտացեալ պտղաբերէր եկեղեցւոյն դրախտ, արթուն պահպանեն ի վերայ պարսպաց նորա կարգելով՝ զառ ի յինքենէ ձեռնադրեալսն: Իսկ թագաւորն՝ յառաւօտինն յորժամ ի քաղաքէն ելանէր, զօրէն փեսայի որ ելանէ յառագաստէ իւրմէ, կամ որպէս տունկ ճենային արուսեակն[2], որ ի գլխոյն արարածոց բարձրանալովն՝ զամենայն տեսանելիս յինքն ձգէ, այսպէս և նա պաղպաջէր փայփուն հանդերձիւք և մարգարտախուռն թագիւն, և զամենայն մարդ ի տեսութիւն և ի զարմանս ցուցանէր. որ և սպիտակամազ նժոյգ՝ ոսկեզօծ զարդիւք առաջի ընթանալով, ի ճառագայթից արեգականն որ զնովաւ հարկանէր՝ շլացուցանէր ըզտեսողացն տեսանելիս. իսկ զօրացն բազմութիւն խուռն առաջի ընթանալով՝ զօրէն ծովային ալեացն զմիմեամբ կուտակելով: Նա և անպատական վայրքն՝ լցեալ և խճողեալ էին կրօնաւորական դասուք. մինչ զի գեղօս և զագարակս առ բարի նա-

1. Ուխտ եկեղեցւոյն, այսինքն եկեղեցականքն, կարգաւորք, սկսեալ ի կաթողիկոսէն:
2. Արեգակն յառաւօտու ծագման առեն:

խանձ քահեալ՝[1] առնէին բնակութիւն կրօնաւորաց: Զայս և որ սոցին նման է՝ առաւել ունէր աշխարհս մեր: Եւ զայս զի զրեցի, զի յորժամ զսոցին հակառակն պատմեցից, ամենեցունց չարժեցից զարտասուսն:

Արդ այժմ՝ թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրեւ զգերի կալանաւոր՝ նստի ի հեռաւոր տեղիս[2]. այսպէս և հայրապետական աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմօք իբրեւ զկին նորահարսն՝ ծնացեալ յայրիութեան: Հեծելազօրն անտերունչ չրջեալ, ոմն ի Պարս և ոմն ի Յոյն, և ոմն ի Վիրս. սեպուհ գունդն ազատաց՝ եղեալ ի հայրենեաց, անկեալ ի ձախութենէ՝ մընչեն, ուր և են, իբրեւ զկորիւն առիւծուց ի խշտիս իւրեանց: Աքաղաղական ապարանքն աւերակ և անմարդի. մարդաբնակ աշխարհն՝ թափուր ի բնակչացն: Ոչ լսի ձայն ուրախութեան ի կութս այգեաց, և ոչ բարեբանութիւն՝ առ կոխողս հնձանի[3]. ոչ խաղան մանկունք առաջի ծնողացն, և ոչ նստին աթոռով ծերք ի հրապարակս. ոչ լսի ձայն հարսանեաց, և ոչ զարդարին առագաստք հարսնացանին: Պակասեաց այս ամենայն և կորեաւ, և ոչ եւս յաւելուցու յառնել, ըստ սաղմոսողին ձայնին: Այժմ յաղթ փոխեցաւ մեզ ամենայն, և ուրախութեան պատմուճանն այն՝ յարկնագեաս[4] խորտ փոխեցաւ: Ո՞ր լսելիք տանիցեն զթշուառութեանս մերոյ զպատմութիւն: Ո՞ր սիրտ քարեղէն, որ ոչ լքանի հառաչմամբ և բեկանի հեծեծելով: Ժամ է ինձ յերեմիայի ողբոյն խառնել

1. Թուէ Քառահեղ, արհամարհել:
2. Ի Գագիկ թագաւորն Բագրատունեաց՝ կապադովկիոյ կողմեր քաշեաւծ, ոչ հեռի անկէ և կաթողիկոսն Պետրոս Գետադարձ:
3. Այնչն ազգի և երկրի գիւղացւոց բնական բերումն է ուրախութիւն, խաղող կթելու և կոխելու առեն:
4. Սեւ և թանձր անարգ հագուստ:

ընդ մեր հառաչանս. «Ձանապարհք Սիոնի, ա-
ւէ, սգան, զի ոչ ոք է որ մտանէ». այսոքիկ
ասացան յայնժամ յաւերն Երուսաղէմի, բայց կա-
տարեցաւ այժմ։

ՄԾՂ

ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱԻԱՆՔ ՍԱԼՋՈՒԿԵԱՆՑ Ց'ԱՐԾՆ

(ՄԱՏԹ. ՈՒՌՀԱՅՑՑԻ. ՀԳ.)

Յայսմ թուականութեանս Հայոց ՆՂԸ (1049–50)
... զարթեաւ աստուածամասամբ բարկութիւնն ի
տանէն Պարսից, հրամանաւ Տօղրիլ[1] սուլտանին. և
եղեալ երկու զօրապետք բազում զօրօք ի դիւանէ
անտի, որք անուանեալ ասէին Այրհիմ և Գրմոչ[2],
և անթիւ բազմութեամբ գան յաշխարհն Հայոց.
վասն զի ի ձեռացն Հոռոմոց գիւտացին անտէր և
անպահապան զամենայն աշխարհն Հայոց. զի զարս
քաջս և զհզօրս քակեալ հանին յարեւելից՝ Հոռոմք,
և կուրապօրապետօք ջանային պահել զաշխարհն
Հայոց և զամենայն տունն արեւելից։ Եւ ահա յայսմ
ամի զօրք (այլազգի)ացն հասանէին ի հռչակաւորն
և ի բազմամարդն քաղաքն Հայոց՝ որ կոչի Այծ[3].
և գտեալ անպարիսպ զքաղաքն, և անթիւ բազ-

1. Տօղրուլ, Տօղրիլ, Տօղրէլ, Տոռղուռպ ըստ մեր պատմագրաց, Թօղրռլ բեկ կամ սուլտան՝ ըստ օտարաց, նահապետ Համարուի Սալճուկ կամ Սել-ճուղ ցեղի Թուրքաց, որ տիրեց Պարսից և այլոց։

2. Լաւ եւս Գոռբոռլմոռչ կ'ըսուի։

3. Կարնոյ գաւառին արեւելեան լերանց ստորոտն, ոչ հեռի Եփրատայ աղբիւրներէն, հարուստ վաճառականաց չհաստատ. հիմայ անյայտ է տեղն, ուսանք կարծեն զնոյն Կարնոյ քաղաքն (Արզիրում)։

մութեամբ լցեալ արանց և կանանց, և անհամար
չափս ոսկւոյ և արծաթոյ։ Եւ քաղաքացիքն տեսեալ
զզօրսն այլազգեաց՝ միաբան ի պատերազմ ելեալ,
և խմբեցաւ չուրջ զեզերօք քաղաքին ստուար և
ահաւոր պատերազմ. և տեւեալ ցմեծ մասն աւուրն,
և անդաստանքն արեամբ ծածկեցան. վասն զի ոչ
գոյր տեղի փախստեան և ոչ օգնական, միայն
զմահն ունէին յոյս. և ի բազմութենէ ... այն ձանձ-
բացան զօրքն քաղաքին և ի փախուստ դարձան
առհասարակ։ Եւ այլազգիքն սրով յարձակեցան
ի վերայ քաղաքին, ստստիկ կոտորածով առհա-
սարակ ի ներքոյ սրոյ անցուցին զամենայն քա-
ղաքն, իբրեւ բիւրս հնդետասան[1]։ Այլ զոսկւոյ և
զարծաթոյ և զդիպակաց՝ աւելորդ է ասել. վասն
զի ոչ արկանի ընդ գրով։ Բայց զայս բազում
անգամ լուեալ է մեր ի բազմաց՝ յաղագս քորե-
պիսկոպոսին որ ասէին Դաւթրուկ[2], երթէ զգանձա-
տանն տունն նորա Աբրէհէմի էառ, և քառասուն
ուղտ բարձաւ զգանձատունն նորա, և ութ հարիւր
վեցկի եզանց[3] եւանէին ի տանէ նորա։ Եւ կայր

1. Պատմիչս 150,000 կ'ըսէ ջարդուածներն, ոչ չատ պակաս և յայն պատմիչ մի 140,000 կ'ըսէ։

2. Ինչ անգամ յիշուին առ մեզ քորեպիսկոպոսք. և սա նշանակէ որ Կարնոյ քաղաքն կամ թէոդոսուպոլիս՝ ունէր իր յատուկ եպիսկոպոսն կամ արքեպիսկոպոսն. իսկ Այծն քաղաքաւան մ'ըլլալով անոր իշխանութեան տակ՝ ունէր քորեպիսկոպոս մի։

3. Վեցկի համարուի ըստ սմանց վեց գիհ եզանց, այսինքն երեք զոյգ եզանց. ըստ այլոց՝ գիհ՝ զոյգ նշանակէ. 800 գիհք՝ երթէ երեք և երթէ վեց զոյգք ըլլան՝ չափազանց են. կան օրինակք որ միայն 100 զրեն. և այն ոչ է քիչ. իսկ Դաւթի ուրիշ գանձուց համար զրեն, թէ 40 ուղտուց բեռն բարձեր տարեր է Աբրեհիմ զօրավարն։

Նոյնպէս չափազանց է և թիւ եկեղեցեաց քաղաքին, որ միայն կըրնայ բաղդատուիլ Անւոյ 1000 եկեղեցեաց հետ. զասոնք այլ համարելով միայն խոր-

յայնժամ 800 եկեղեցի ընդ պատարագով։ Եւ այսպիսի դառն կոտորածիւս և չարաչար մահուամբս՝ սրով անցաւ վայելուչ և փառաւոր քաղաքն Աբծն։

... Ո՞րպէս լալով ասացից զանցումն իշխանացն և զքահանայիցն՝ որք անթաղք կերակուր գազանաց լեալ. և փառաւոր կանայք հանդերձ տղայօքն վաղեցան ի գերութիւն յաշխարհն Պարսից՝ յանդին ծառայութիւն։ Եւ ահա սկիզբն եղեւ Հայոց կորստեանս... զի այս է առաջին քաղաք՝ որ առաւ սրով և գերութեամբ՝ ի Հայոց։

ՄԾԵ

ԹԱԹՈՒԼ ԵՒ ՏՈՒՂՐԻԼ ՍՈՒԼՏԱՆ

(ԱՐԻՍՏ. ԼԱՍՏԻՎԱՐՏՅԻ ԺԶ.)

Որ ի վերայ Հայոց գնացին (ասպատակք Սելչուկ Թուրքաց), զոր և գտին՝ ի սուր և ի գերութիւն ծախեցին, և լցեալ աւարաւ՝ դարձան անդրէն. և եկեալ ի սահմանս Վանանդայ, որոց ի դիմի հարեալ քաջազուն իշխանքն Գագկայ որդւոյ Աբասայ[1], և բազում նախճիրս ի տեղւոյն գործեալ։ Որոց ի վերայ հասեալ զօրք անօրինացն՝ ի մէջ փակեցին. և քանզի յերկարել պատերազմին և յահագին կոտորուածէն՝ ի զօրութենէ պակասեալք էին ինքեանք և երիվարք իւրեանց, վասն որոյ ոչ կարացեալ զպատնէշ թշնամեացն պատառել և ելանել, յորոց սուր ի վերայ եղեալ կոտո-

պատարագի՝ պատարագողաց թիւն այլ կըմնար չատ ըլլալ, եթէ և վանականք ըլլային ի քաղաքին կամ մօտ ի քաղաքն. 150 քահանայք կ'ըսուին սպանուած ի Չարըխն։

1. Վանանդայ և Կարսի բագրատունի թագաւորք են։

րեցին յազատացն արս երեսուն։ Իսկ զմի ոմն յազատացն կալեալ՝ որում անուն էր Թաթուլ, որ էր այր հզօր և պատերազմասէր, զոր առեալ տարան առ սուլտանն (Տուղրիլ)։ Եւ քանզի կարեւվէր խոցեալ էր զորդի Աբուռբահայ Պարսից ամիրային, զոր իբրեւ եհաս սուլտանն՝ ասէ. Եթէ դա սպրի՝ զքեզ սպատեմ. ապա թէ մեռանի՝ զքեզ դմա մատաղ հրամայեմ առնել։ Որ յետ սակաւ աւուրց մեռաւ. իսկ նորա պատասխանեալ, «Թէ իմ է զարկածն՝ չէ կենաց. թէ այլում է՝ զայն ոչ գիտեմ»։ Սուլտանն իբրեւ լուաւ թէ մեռաւ, հրամայեաց սպանանել զնա. և զալ բազուկ նորա հատեալ, եհատանել Աբսուբանայ ի մխիթարութիւն, թէ ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին։

ՄԾԶ

ՏՈՒՂՐԻԼ ՊԱՇԱՐԷ ՋՄԱՆԱԶԿԵՐՏ ԵՒ ՈՉ ԿԱՐԷ ԱՌՆՈՒԼ

(ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԱՐՏՅԻ, ԺԶ.)

Չինչ է ինձ մի ըստ միոջէ զանկանգնելի կարծանումն քրիստոնէից ընդ գրով սահմանել. որ իբրեւ ծով ի սաստիկ հոզմոց յուզեալ՝ ահագին ծփանօք և փրփրադէզ կուտակօքն յամենայն կողմանց գայ ի ծփանս. այսպէս և մեզ հանդիպեցաւ. աշխարհս ամենայն յանկարծակի լի եղեւ խառնութեամբ, և ոչ ուրեք գտանիւր տեղի սպաւինի. զի վասն անհնարին չարեացն՝ բարձաւ յայս կենաց յամենայն մարդկանէ։ Զայս և Փրկիչն յառաջագոյն գուշակեաց, իբրեւ ծովու խառնութեանց նմանեցուցանելով զեղեռնաւոր չարիս, յորս բազումք ի մարդկանէ թակարեալք՝ ոչ կարէին պահել զոգիսն առ ինքեանս, յերկիւղէ և ի կար-

ծեաց եկեղեցն: Բայց դու թողեալ զայլս, եկ զարմացիր ընդ սուրբանայ անմտութիւնն և ընդ Աստուծոյ բազմապատիկ իմաստութիւնն. ընդ նորա անմտութիւնն, զի ամենակալ համբաւէր զինքն և Աստուծոյ աթոռակից. և ընդ Աստուծոյ իմաստութիւնն, զի մինչ տամբ[1] խաղաց ընդ նմա, և լի անարգանօք դարձոյց յաչխարհն իւր: Եւ արդ, դու միտ դիր ասացելոցս՝ ի կարգի յառաջին անդամոյն. յորժամ եկեալ անհամար զօրօքն չրջապատեաց զքաղաքն և նոքա յանպատրաստի էին ի մարդոյ և յանասնոյ, և յայնժամ թէ տասն օր ի վերայ կացեալ էր, առեալ էր զքաղաքն. բայց Աստուած որ ոչ ի սպառ բարկանայ և ոչ յաւիտեան պահէ ոխս, և ոչ ըստ մեզաց մերոց առնէ, այլովքն հանդերձ, արկանէր ի միտս նորա խորհուրդ նաներութեան: Ցետ երից աւուրց չարժեալ ամենայն բանակաւն, խաղաց իջանէ ի Ցոհարաժոյ տափ[2], և անտի իջանէ յընդարձակ դաշտն Բաաենոյ, առ անառ ամրոցաւն որ կոչի Աչևիկ[3], յորում եռես աշխարհաժողով մարդոյ և անասնոյ, և ոչ ինչ փոյթ արար. քանզի ի հայելոյն միայն ծանեաւ թէ անառ է. և անցեալ առ նովաւ՝ գայ ի գլուխն Բաաենոյ, մերձ ի գեօղն որ կոչի Դոռ: Եւ եղեալ անտի սակաւ արամբք յանգէտս ի վերայ գահին որ[4] հայի ի Կարին, եռես զքաղաքն վառեալ ամենայն պատրաստութեամբ. և նայեցեալ յերկար ժամս՝ դարձաւ անդրէն: Իսկ արքն Մանդկերտոյ անկասկած ի դուրս եղեալ ի քաղաքէն՝ պատրաստեցին առատապէս զարմանս մարդոյ և անասնոյ. քանզի

1. Թերեւս միով արարէ պէտք էր ըլլալ:
2. Տուրուբերան կամ Տարօն նահանգի գաւառ մի է, անունն գուշակէ՝ եզն և ոչխար արածելու տեղ:
3. Շատ անգամ յայտնուած է այս բերդիս անառիկ՝ շատ ամուր ըլլալն, երկար պաշարմանց դիմանալով:
4. Կարնոյ գաւառին արեւելակողմեան լեռները:

ժամանակն հնձոց իսկ էր: Եւ մինչ սուլտանն զայսու զայնու եղեալ զարձաւ անդրէն, նոքա յանհոգս եղեալ էին. և ապա եկեալ նորա վառեալ սրտմտութեամբ, դնէ մարտ պատերազմի ընդ քաղաքին: Իսկ իշխանն որ ունէր զհոգ վերակացութեան քաղաքին[1], քանզի այր բարեպաշտ էր, զամենակալն Աստուած կարգայր յօգնականութիւն, պահօք և աղօթիւք հրահանգելով զինքն. և այնու սպառազինեալ՝ քաջապէս հաւատովք արիանայր, և առ Աստուած սաղմոսելով ասէր. «Ոչ երկեայց ի չարէ, զի դու Տէր, ընդ իս ես». և զմիւսն, թէ, «Ոչ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա, որ չուրջ են զինեալ». և որ ի կարգին է: Եւ առ զօրս խրախոյս առեալ ասէ. «Քաջալերեցարուք, ընկերք և եղբարք իմ, քաջալերեցարուք, և մի երկնչիք. գործ մի գիւրին է Աստուծոյ այս. նոքա գան ի վերայ մեր կառօք և երիվարօք, մեք զանուն Տեառն մերոյ կարգասցուք, և Աստուծով պարծեսցուք յաւիտեան, և անուան նորա խոստովան եղիցուք. զի նա տացէ զօրաւթիւն և հաստատութիւն ժողովրդեան իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեան»: Զքահանայս յորդորէր յաղօթս, յերգս սաղմոսաց, որք անհատական ազազակաւ առ Աստուած կարգային ի տուէ և ի գիշերի, որ խաչիւ և ժամահարաւ բարձրաձայնութեամբ ի վերայ պարսպացն զԱստուած աղաչէին գալ յօգնականութիւն վտանգելոցն: Ցօրմէ ձանձրացեալ լսելիք բըռնաւորին՝ հարցանէր, թէ զինչ է այն անհատ աղաղակն. և ուսանէր ի գիտնոցն՝ թէ առ Աստուած աղաղակեն:

Արդ, ամենականօք աւուրբք եկաց ի վերայ քաղաքին, առ մի մի օր երկիցս անգամ դնէր մարտ պատերազմի ընդ քաղաքին, մի ի լուսանալ աւուրն, մի ընդ երեկն: Բայց դու աստ տես զԱս-

1. Ցետոյ կ'իմացընէ՝ որ վասիլ կոչուէր այս իշխանս, հաւանօրէն ազգաւ յոյն էր:

տուժոյ իմաստութիւնն, թէ որպէս գիտէ հակառակքն գհակառակին պատուղն չահել: Արդ, մինչդեռ քաղաքն յայս տարակուսի և ի վտանգ կայր, արկաներ խորհուրդս բարւոք ի սիրտ իշխանի միոջ, որ էր յոյժ ի մտերմաց սուլտանայ, որ զառ ի նմանէ խորհեալսն ծանուցանէր քաղաքին՝ բանիւ կամ գրով. բազում անգամ գրեալ ի քարափդի՝ ի սլաք նետին կապէր, և պատերազմի օրինակաւ մերձեալ ի պարիսպն՝ զնետն ի քաղաքն ընկենոյր. և այնու՝ զամենայն կռուոյ օրինակն ծանուցանէր նոցա. թէ, առ վաղիւն այսպէս և ըստ այսմ ձեւոյ է կռուոյն օրինակն. և եթէ, յայս նիշ տեղւոջ ի դիշերի կամին ի ներքոյ պարսպին գերկիր փորել և մտանել ի ներքս. բայց դուք պինդ և ամուր կայէք, և ի տեղեացն վերայ զգուշացարուք:

Զայս առնէ Աստուած, որ գիտէ ի հեռուստ հիմն արկանել մեծամեծ իրաց. որ զԲազատամ առ Բաղակաւ մարգարէ գործեաց՝ ի տեսչութիւն ժողովրդեանն, և զանխոս անասունն՝ մարդկեղէն բանիւ ետ բարբառել. և զԵղիա ի ձորն Քորիաթու ագռաւաւքն զերիս ամս ի սովին կերակրեաց. զինչ թէ և աստ ի ձեռն հակառակորդացն զիրկութիւնն քաղաքին տնօրինեաց: Արդ, յոր կողմ և նոքա ի պատերազմ կացին՝ թէ ի գիշերի և թէ ի տուբընջեան, տոքա վառեալք և պատրաստք անդր գտանէին:

Յետ այսորիկ մեքենայս կանգնեալ՝ այնու պատերազմէին: Իսկ երէց ումն ի մերոց՝ հնագոյն ուղնելով զաւուրս, որ յոյժ տեղեակ էր արուեստին, և սա իւր կանգնեալ փիլիկուան[1], և լինէր՝ յորժամ նոքա քար եդեալ ի պարսատիկս մեքենային և ձգէին ի քաղաքն, երէցն զիւր քարն դեպ ի ուղիղ նոցա քարին արձակէր, որպէս զի դիպեալ քար երիցուն ի քար անօրինացն՝ ի վերայ իւրեանց ընկենոյր: Զայս արարեալ անօրինացն եօթն

1. Քար ձգելու մեծ պարսատիկ (Թուրք. սափան), որ աւելի Ֆելախեն կոչուած:

անգամ, ոչ ինչ կարացին վճարել. քանզի զօրացաւ քարն երիցուն ի վերայ քարի նոցա:

Ապա այլ պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք բաբան[1] կոչէին, որ յոյժ ահագին էր, զոր ասէին թէ չորս հարիւր սպասաւորք էին նորա, որք զպարանն քարշէին, և վաթսուն լիտր քար եդեալ ի պարսատիկն՝ ի քաղաքն ձգէին. և առաջի նորա պարիսպ կանգնեցին ի բամբակի բեռանց և յայլ բազում կարասւոյ, զի մի՛ քար երիցուն հասցէ ի նա: Եւ իրրեւ զայս այսպէս յարդարեցին, արձակեցին քար մի, որ դիպեալ ի պարիսպն ուժգնակի՝ փլոյց և խոռեաց զնա. զոր տեսեալ քաղաքին՝ յոյժ զդողի հարան, և առ Աստուած աղաղակէին մեծաւ հառաչմամբ, գալ յօգնականութիւն. իսկ անօրինացն լինէր մեծ ուրախութիւն: Իսկ ի գալ երկրորդ աւուրն՝ Որտիվիզ՝ որ զօրուն իշխանն էր, առեալ զզօրս իւր եկեալ մարտ եդեալ կռուէր ընդ մերսն, քանզի այր քաջ էր. եկեալ խռոնի[2] կամէր հզօրապէս ի ներքս մտանել, և յանկարծակի զիւրովին երթեալ անկաւ: Իսկ որ ի վերայ պարսպին էին, ձգեալ զձանկ երկաթի՝ կալան զնա և քարշեալ ձգեցին ի ներքոյ պարսպին. և զօրացն տեսեալ՝ զարձան լի սրտմտութեամբ ի բանակն. իսկ քաղաքին լինէր ուրախութիւն ոչ սակաւ:

Յայնժամ ժի ումն զօրաւոր ի զօրացն Հոռոմոց՝ պատրաստեալ հուր նաւթիւ և ծծմբով, և արկեալ յաման ապակեղէն, և նստեալ ի վերայ ձգնիւ երիվարի, քաջասիրտ և արի գոլով, վահանաւ միայն զերեսիկունս ամրացուցեալ, և եկեալ ընդ դուռն

1. Շատ աւելի մեծ քան զՓիլիկուանն, ոչ այնքան քար նետելու, որքան մեծ քարով պարիսպները ծեծելու փլցընելու. հին ատեն այլ հնարաւոր էր այսպիսի մեքենայ մի՝ որ յատկական բառով կոչուէր Catapulte (Καταβολή), իբր վերէն նետող կամ վար ձգող:

2. Պարսպին ծակուած փլած տեղին մօտենալով:

քաղաքին՝ մտանել ի բանակ այլազգեացն, մանաւանդ[1] ձայնելով զինքն, այսինքն թղթաբեր: Եւ երթեալ մինչեւ ի բարանն՝ չուրջ անցեալ գնովաւ, և յանկարծակի ի վեր առեալ զչիչն՝ եհեղ ի վերայ բարանացն. և նոյնժամայն բորբոքեալ հրոյն՝ բոց ծիրանի ի դուրս ելանէր, և ինքն գառնայր փութապէս: Ջոր տեսեալ անօրինացն՝ ի հիացման եղեալ, հեծեալ յերիվարան զհետ մտեալ՝ և ոչ կարացին հասանել. և նորա եկեալ խաղաղութեամբ եմուտ ի քաղաքն, օգնականութեամբ Աստուծոյ ոչ ինչ ունելով վէր յանձին: Իսկ սուլտանն իբրեւ ետես զեղեալսն, յոստմամբ մեծաւ հրամայեաց զպահապանսն սրակոտոր առնել:...

Իսկ Վասիլն որ քաղաքին իշխանն էր՝ հրամայեաց ամսկին ի վերայ պարսպին մեծաձայն աղաղակաւ անարգել և թշնամանել զսուլտանն. որ յետ երկուց աւուրց չարժեալ բանակաւն գնաց ի տեղւոյն... մեծաւ արտմութեամբ յաչխարհն իւր. քանզի ոչ զոր ինչ կամէր կարաց վճարել ինչ:

Մ Ծ Ի

ՄԻԻՍ ԵԻՍ ՈՂՔ ԱՐԻՍՏ· ԼԱՍՏԻՎԱՐՏ· ՎԱՍՆ ԱԻԵՐԱՅԻ ՀԱՅՐԵՆԵԱՑՆ[2]

Էր թուականիս մերոյ ամք հինգ հարիւր երեք (1054), ի նոյն ամիս և ի նոյն քանիս ամսոյն, ուր զառաջինն աչխարհս գերի տարան, զԱրծն այրեցին, և զայլ քաղաքս և զաւանս. խաղաց գազանն մահաշունչ արիւնարբու և մարդախոշոն սուլտան

1. Ըստ Յունաց և Լատինաց՝ լուր կամ հրամանն քերող առնող:

2. Ողբասաց պատմիչ հեղինակիս չատ գեղեցիկ և պատչարժ մեկ կտոր գրուածն է այս:

անհամար զօրօք, փղօք և կառօք և երիվարօք, կանամբք և որդւովք, և բազում պատրաստութեամբ: Զանց արարեալ զԱրձիշաւ և զԲերկրաւ[1] եկեալ բանակեցաւ չուրջ զքաղաքաւն որ կոչի Մանազկերտ ի գաւառն Ապահունեաց, որ կալաւ բռնադակ զընդարձակ վայրս դաշտացն: Եւ արձակեաց ասպատակս յերեսին կողմանս աչխարհին. ի հիւսիս՝ մինչեւ յամուրն Աչխազաց և մինչեւ ի լեառն որ կոչի Պարխար և մինչեւ ցսահմանս Կովկասու[2]. և յարեւմուտս՝ մինչեւ յանտառն Ճանկեթոյ[3], իսկ ի հարաւ՝ մինչեւ ցՄիմն կոչեցեալ լեառն[4]. և բովանդակ կալեալ զաչխարհս՝ իբրեւ հնձողք ոճոյ ապարակի:

Այդ, զայնմ ժամու զչարիսն՝ զոր նոքա աչխարհիս հասուցին, ով կարէ ընդ գրով արկանել, կամ ոյր միտք բաւեն ի համար ածել. զի ամենայն աչխարհս լի էր զիակամբք, չէնք և անչէնք, ճանապարհք և անապատ տեղիք, քարանձաւք և առապարք, անտառախիտ մայրիք և ափափայ վայրք. և յամենայն չինանիստ տեղիս հուր հարեալ ապականեցին զտունս և զեկեղեցիս, որոյ բոց հրատին առաւել բարձրանայր քան զհնոցն Բաբելովնի. և այսպիսի ձեռնարկութեամբ ապականեցին զաչխարհս մեր, ոչ մի անգամ այլ երից անգամ մի ի միոյ վերայ դարձ արարեալ, մինչեւ առհասարակ հատաւ երկիրս ի բնակչաց և բարձաւ կառչ անասնոց[5]:

1. Վանայ ծովաւ հիւսիսային և արեւելեան եզերքն:

2. Հիւսիսային և արեւմտեան կողմն մինչեւ ի սահմանս Սեւ ծովու, ուր են այդ յիշեալ Պարխար լերինք, յորոց փչաւած հովերը՝ Հայք Պախրոցի կոչած են, իբր հիւսիսային:

3. Ճանկիկ գաւառն Պոնտոսի յիշեցընէ զանուանս:

4. Տարօնոյ և Սասնոյ կողմեր:

5. Անասնոց ձայն անգամ չէր լսուեր, հովուութիւն և մշակութիւն չըլլալուն համար:

Զայս արարուած տեսեալ՝ սուգ առ և կոծա-
նեցաւ երկիր. վասն զի կոծանեցան բնակիչք նո-
ա, բարձաւ ուրախութիւն յերեսաց ամենայն եր-
կրի. յամենայն տեղիս ողբք և հառաչանք. ամե-
նայն ուրեք կոծ և լալականաց հանդէսք. ոչ ուրեք
քահանայից երգք. ոչ ուրեք լսի փառաբանութիւն
Աստուծոյ. ոչ ուրեք բանին գիրք առ ի խրատ և
ի մխիթարութիւն լսողաց. վասն զի ընթերցողքն
սրամահք ի հրապարակս, և ինքեանք այրեցեալք և
ածխնացեալք: Ոչ ուրեք լսի ձայն հարսանեաց, և
ոչ աւետիք նորածին մանկանց. ոչ նաւին ծերք
աթոռով ի հրապարակի, և ոչ խաղան մանկունք
առաջի նոցա. ոչ երամանան անդեայք ի յարօտս,
և ոչ խայտան գառինք ի մարգս: Ոչ լնու հնձող
որայիւ զգիրկս, և ոչ լսի բարեբանութիւն յ'ան-
ցաւորաց. ոչ լնուն կալք ցորենով, և ոչ զեղուն
գինւով. ոչ լսին ձայնք ուրախութեան ի կութս
այգեաց, և ո՛չ ծանրանան պահառք ի ստամանաց[1]:
Բարձաւ այս ամենայն, կորեաւ և ոչ երևի: Ո՛ր
Երեմիա ողբասցէ զմեր կոծանութիւնս, ի ճանա-
պարհաց և ի լերանց՝ յերկարելով զողբսն. ո՛ր Ե-
սայիաս անհնազանդի մխիթարչացն՝ զի՝ յագեսցի
ողբովք:

Վա՛յ ինձ, որ վիպասեմ զայսոսիկ. հիմնասցի
երիսասարդին[2] նման գոլով իմ՝ գուժարկու եղէ,
ո՛չ միւսմ գիւղի կամ միւսմ քաղաքի, այլ ամենայն
աշխարհաց, ազգաց յազգս մինչեւ ի կատարած
ժամանակաց. քանզի չէք ինչ ժամանակ կամ
գործ՝ որ զմեզն հնացուցանել կարէ, բայց թէ որ

1. Եթէ տակառ բառին հետ չփոթուած չէ, նշա-
նակէ սեղ մի կամ գիրք մի՝ ուր չարեն գինւոյ առա-
ւմանիներ, չիշ կամ որ և է մանր աման գինւոյ:

2. Կամ Յամփնացի, որ Հեղի քահանայապետին
գայժ առաւ, թէ սրդիքդ սպանուեցան և Տապանակն
գերի եղաւ այլազգեաց: Ա Թագ. գ, 12:

զպղծայն անապատի[1] գթուշացուցանեն գիրք: Արդ,
զի՞նչ արարից. թողից ի պատմելոյ զանհնարին
չարիսն որ եհաս ի վերայ քրիստոնէից, խնայելով
ի ձեզ, եթէ չարժեցից ողբս և հառաչանս ամե-
նեցուն՝ որք հանդիսակից էք այսմ դժոխալուր
պատմութեանս. բայց գիտեմ որ կամիք լսել. վասն
որոյ և ես ի բաց եդեալ զանձին դանդաղանս՝
զրեցից զգլխաւոր տեղեաց մի ըստ միոջէ զանհնը-
նարին չարիսն: Զխորձեալ և զվանձիկն յորժամ
յիշեմ և որ ինչ ի նոսա գործեցաւ, հատկիմ ար-
տասուօք, փղձկի սիրտ իմ, և յիմարին միտք իմ,
և զդողի հարկանի ձեռքս, և ոչ կարեմ զոճ տա-
ղիս յառաջ խաղացուցանել: Բազում և անհամար
հոգիք ի վերագոյն գաւառացն՝ վասն տեղեացն
ամրութեան՝ անդր ժողովեալ էին. յորոց վերայ
հասեալ անօրինացն արագապէս՝ որպէս թռչունք,
անողորմաբար որպէս գազանք, սրամտութեամբ
եռացեալք՝ որպէս վրէժխնդիրք, և խիլ արկեալ[2]
ի քարանձաւս և յանտառախիտ մայրիս՝ անյա-
գաբար կոտորեցին զորս և գտին. մինչ զի արիւնն
զօրէն գարնանաբեր ժամանակին, յորժամ ի ջեր-
մութենէ օդոյն ջուրն ծորեալ հլանէ՝ ի ձեռնն ա-
ռուս առուս վիժելով, զհող երկրին զկնի իւր հե-
ղեղատելով, այսպէս և յայնժամ լինէր. արեան
առուք ի դիականցն անկելոցն գլեալ ի գառ ի
կող տեղիս՝ ի յորգութեան գնացից զհող երկրին
հեղեղատէին:

Այլ դու յայնժամ եղեալն ած զմտաւ. զկրօնա-
ւորացն դաս և զքահանայիցն՝ որ անդ հանդիպե-
ցան, կամ զերամս ծերոցն, կամ զերիտասարդ-
սացն զթափմութիւնս, որոց դեռաբոյս մօրուացն՝
իբրեւ զնկար գեղեցկայարմար զայտան զարդա-
րէին, և խոպոպք վարսիցն փոփփեալք ի վերայ

1. Այս մեզի հանդիպածէն աւելի մեծ չարիք էըլ-
լար. բայց եթէ դեռին ընելիքն:

2. Ամեն ծածուկ տեղուանք փնտռելով:

ճակատուն՝ զօրէն վարդի վառ ի վառ գունով ըզդիրս երեսացն պայծառացուցանէին. թէ որպէս յանկարծակի ի սրոյ թշնամեացն իրրեւ ի կարկտոյ հարեալք՝ յերկիր անկեալ թաւալ գլոր խաղային: Բեր ի մէջ և զաղայոցն համար, զորս առեալ ի գրկաց մարցն՝ յերկիր ընկենուին, որ մեծակական հառաչմամբ զմարսն խնդրէին. իսկ ծնօղքն գանալից հարուածովք՝ առ չտապ ի նոցանէ բաժանէին: Ո՜ր սիրտ քարեղէն՝ որ զայս լսելով ոչ հեղձնու արտասուօք՝ ընդ բազմադիմի չարեացն յաճախութեամբ: Կայք ի խայտառականս անկեալք, նորահարսունք՝ յարանց բաժանեալք և ի գերութիւն մատնեալք: Ի միում վայրկենի երկիրն որ իրրեւ զքաղաք մարդախիտ առատութեամբ խճողեալ էր՝ եղեւ անմարդ ամայի. յերկուս բաժանեալ, կամ սրակոտոր կամ գերի:

Ո՜վ Քրիստոս, քո յայնժամ ներողութեանդ. ո՜վ մերում չարեաց. ո՜րքան գառն մահու մատնեալք եղաք:

ՄՄԸ

ՀԱՅՐՆ

ԱՏՈՄ ԵՒ ԳԵՏԱՐԳԵԼ ՍՈՒՐԲ ՆՇԱՆՆ[1]

Յետ վաղճանին Տեառն Պետրոսի՝ ամենք յաշակերտաց նորա առին գԳետարգել սուրբ Նշանին,

1. Ծանօթ աւանդութիւն է յազգիս՝ Պետրոս կաթողիկոսի ի տօնի Յայտնութեան Ջուր օրհնելի ի Տրապիզոն, և խաչիւ կնքելով մեռոնը թափած առեն՝ Ջրոյն վիսալը, և այն պատճառաւ ինքն Գետադարձ՝ իր խաչն Գետարգել կոչուեր են: Այս աւանդութեան հետեւորդ է այս տեղ պատմուած նոյն խաչին զօրութեամբ քարալերին ճղքուիլն և Ախուրեան գետոյ կամ իր մէկ առուին անոր միջէն անցնիլն:

և բնակեցան ի գաւառն Աղշակունեաց[1], ի վանքն որ կոչի Խաւարաձոր[2]: Եւ յետ նոցա սպասաւորեալ լինէր Գետարգել սուրբ նշանն յայլմէ, մինչեւ ի բազմերջանիկն և ի ճգնազգեաց հայրն Ատոմ. վասն որոյ համբաւ հաճոյական վարուց նորա ել առ հեռաւորս և առ մերձաւորս: Քանզի էր հասակաւն վայելուչ, տեսլեամբն գեղեցիկ, և մբտոքն ընտրող, բարուքն հանդարտ, վարուքն ճգնող, խորհրդոյն վեհ, հաւատովն ուղղափառ, յուսովն կատարեալ, սիրովն անկեղծաւոր, մարմնովն կորովի, հոգւովն առոյգ և խոնարհ, և սրտիւն սուրբ: Սա անցուցանէր զամենեքեան որ յաւուրս նորա էին սուրբք և առաքինիք. յորում ժամանակի նուազեալ էր ազգն Հայոց, և զօրացեալ էր ազգն տանկաց. և տիրէին առհասարակ ի վերայ բերդօրէիցն և գաւառաց Հայաստանեայց. և անխնայ հարուածովք վչտանայր օր ըստ օրէ ազգս Հայոց ի Հագարացւոց. մինչ զի քանդեալ և աւերեալ լինէին եկեղեցիք և տեղիք ազօթից ի յանօրինաց:

Զայս տեսեալ երանելոյն Ատոմայ, խոյս տայր ի բարկութենէ անտի, և երթայր ի գաւառն Շիրակայ, ի քաղաքն Անի. և անտի ելեալ գնայր ի սուրբ ուխտն որ կոչի Հոռոմոց վանք[3]. և էր վանքն այն ի խորուձոր ի վերայ բլրի միում, զորով չուրջ բակ առեալ պատէր մեծ գետն Ախուրեան. և գետն այն բաղում ցաւս և վտանգս հասուցանէր վանացն. վի յորժամ արեգակն յամառային տեղին հասանէր, չոգեալ չոզանայր վանքն ի տապոյ աբեւուն, որ խլանէր ի քարանձաւսն, և օդք խորչակայինք և զազրահոտք և ցաւարերք ի գետոյ անտի փչէր ընդդէմ վանացն, ի չորից կողմանց:

1. Փոխանակ ըսելու Աբշարունեաց, որ և երբա-խաձոր:

2. Անծանօթ է հիմայ տեղն և անուան պատճառն:

3. Սովարաբար Հոռոմոսի կոչուի. մօտիկ է Անիի, և ռամկօրէն Թօշաւանք կոչուի:

Զոր տեսեալ երանելոյն Աստմայ զվտանգ վանացն և գնեղութիւն, առեալ զսուրբ Նշանն և ել ի բարձր ի տեղի մի ի վերոյ վանացն. և կացեալ յաղօթս՝ տարածեաց զԳետարգել սուրբ նշանն ընդդէմ լերինն, և ասաց. Տէր Աստուած զօրութեանց, ա- զաչեմ զքեզ, արա զօրութեամբ Գետարգել սուրբ նշանիս՝ պատսառել լերինս այսմիկ, և գնասցէ ջուր գետոյս այսմիկ ի մէջ լերինս զառ ի վայր հոսե- լով. և գետս այս որ գնայ ընդ հիւսիսի՝ գառնայ անդրէն թափընթաց ընդ հարաւ: Եւ իրրեւ կա- տարեաց զբանս աղօթիցն, յանկարծակի մեծա- պէս որոտմամբ պատառեցաւ վէմն, և լեառն ընդ մէջ բարժանեցաւ յայսկոյս և յայնկոյս՝ կանգուն վաթսուն, և էանց գետն ընդ մէջ լերինն, զառ ի վայր կոյս սաստիկ թափընթաց: Իսկ բնակիչք վա- նացն՝ իրրեւ տեսին զաքանչելիսն՝ մեծաւ գոհու- թեամբ փառաւորելով զՔրիստոս Աստուած, եր- կիր պագին Գետարգել սուրբ նշանին:

Եւ յետ այս սոսկալի աքանչելեացս՝ առեալ սուրբ Հայրն Աստմ զսուրբ նշանն Գետարգել, և գնաց դարձեալ ի վանքն Խաւարաձոր, և ժողովեալ զբ- ղօրեալ եղբարսն և չինեաց զվանքն: Եւ հասեալ ի բարւոք ծերութիւն սուրբ Հայրն Աստմ՝ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս, և եղաւ մեծաւ պա- տուով ի դիրս հարցն, ի հիւսիսայ կողմանէ վա- նացն: Իսկ այժմ Խաւարաձորն գեղ դարձաւ, և կայ Գետարգել սուրբ նշանն ի Զագալանս՝ յեր- կիրն Կոստեուց[1], ի փրկութիւն քրիստոնէից և ի պարծանս հաւատացելոցն:

1. Կոտայք գաւառն է, երեւանու կողմերն:

ՄԹ

ԱՐՇԱԻԱՆՔ ԱԼՓԱՐՍԼԱՆԱՑ[1] ԵՒ ԱՌՈՒՄՆ ԱՆԻՈՑ

(ՄԱՏԹ. ՈՒՌՀԱՅԵՑՒ. ՃԺԶ.)

Ցարուցեալ սուլտանն մեծաւ յաղթութեամբ և խաղաց չար վիշապն Պարսից, և գայր մտանէր յաշխարհն Հայոց. և զաստուածաստաստ բարկու- թիւնն հեղոյր ի վերայ տանն արեւելից, և արբու- ցանէր զմաղձ գառնութեան իւրոյ՝ ամենայն ազ- գին Հայոց. և սփռեցաւ բոց բորբոքեալ մահու առհասարակ հաւատացելոց Քրիստոսի, և լցաւ ամենայն տունն Հայոց արեամբ, սրով և գերու- թեամբ: Եւ յարուցեալ գայր որպէս զամպս սեւա- ցեալս, և իջեալ ի վերայ թագաւորանոց քաղա- քին Անւոյ, և պատեաց առ հասարակ շուրջանա- կաւ՝ նման չար վիշապի: Եւ տեսեալ բազմութիւն քաղաքին՝ զոդաց առ հասարակ. և պատրաստե- ցան ընդդէմ Պարսից ուժգին զօրութեամբ: Իսկ զօրք անօրինացն յարձակեցան գազանաբար ի պա- տերազմ՝ մեծաւ սրամտութեամբ, և ի քաղաքն Անի արկանէին զզօրսն Հայոց, և գումարեցին ըզ- նոսա առ հասարակ ի քաղաքն. և ահաւոր պա- տերազմաւ արկանէին զքաղաքն ի մեծ վտանգս: Եւ յայնժամ յահէ չար գաղանին զոդոց սասա- նեալ ամենայն ազգ հաւատացելոց. սկան լալ՝ հայր ի վերայ որդւոյ իւրոյ, և որդին ի վերայ հօր իւրոյ. մայր ի վերայ որդւոյ իւրոյ և գուստերն, և դուստր ի վերայ մօր իւրոյ, եղբայր՝ զեղբայր, սիրելին առ սիրելին իւր: Եւ ահա ամենայն բազ-

1. Ալփ–արսլան՝ (մեծ կամ հզօր առիւծ նշանակէ) եղբայր և յաջորդ Տուղրիլի՝ տիրած 5 յամս 1064–72:

մութիւն քաղաքին Անւոյ կային ի մեծ վտանգի, և պատերազմն եւս առաւել սաստկանայր յոյժ, որ և սասանէր ամենայն քաղաքն:

Եւ ի յերկարել պատերազմացն՝ աղօթից և պահոց սկիզբն արար ամենայն քաղաքն, լալով և հառաչանօք միաբան ձայն առ Աստուած արձակէին, զի փրկեսցէ զնոսա ի չար գազանէն: Վասն զի էր Անի բազմամբոխ, լցեալ քաղաքն բիւրք բիւրոց արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ և հիացումն արկանէր տեսողացն. զոր կարծեալ զօրացն բազմաց եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց է. և յայնմ աւուր հազար և մէկ եկեղեցի[1] ի պատարագի կայր Անի: Եւ էր քաղաքն չուրջանակի քարակուռ, և էր գետն Ախուրեան շրջապատ, բայց միայն ի մի կողմն կայր տեղի ինչ դոյր՝ որպէս թէ նետընկէց մի, զոր բարնով փլուցին այլազգիքն. և զբազում աւուրս պատերազմեալ՝ ոչ կարացին մտանել ի քաղաքն. յայնժամ թուլացան ի պատերազմէն: Իսկ անօրէն իշխանքն Հոռոմոց՝ զորս կացուցեալ էր թագաւորն[2] պահապանս տանն Հայոց, Բագրատ Հայրն Սմբատայ[3], և Գրիգոր Բագռեւանին որդին՝ վրացի ազգաւ, սկսան առքա ամրանալ ի վերին և ի ներքին բերդն: Եւ յայնմ աւուր սուլտանն և ամենայն զօրքն Պարսից՝ բանակաւն խլեցան[4] և կամեցան գնալ ի Պարսիկս. և յորժամ տեսին քաղաքացիքն զաստուածաւրաց պահապանացն ամրանալն, բեկան. և այր իւրաքանչիւր ի փախուստ լինէր առանց պատճառի. և ամենայն

1. Թէ և արեւելեան ձեւ մ'է չափաւորութիւն ցուցընելու համար՝ հազար ու մէկ ըսել, բայց սակայն այլ է որ շատ եկեղեցիք և մատուռներ կային Անի, թէ և ոչ մեծամեծք:

2. Կայսրն Յունաց՝ Կոստանդին Կումնենոս:

3. Բազմաթիւ համանուանց մէջ՝ ծանոթ չէ սրն ըլլալն:

4. Ժողովեցան եղան չեռ դառնալու:

քաղաքն առ հասարակ ի փոշի դարձաւ. և մեծամեծքն քաղաքին երթեալ լալով անկանէին ի վերայ գերեզմանացն առաջին թագաւորացն Հայոց. և անդ կոծ առեալ սաստկապէս լալով և ասէին, եթէ, « Արիք, տեսէք զտուն հայրենեաց ձերոց »: Եւ իրրեւ զայս տեսին զօրք այլազգեացն՝ հասեալ պատմեցին սուլտանին, և նա ոչ հաւատայր. իսկ զօրք այլազգեացն յորժամ տեսին զպարիսպն անպահապան՝ առ հասարակ ի քաղաքն մտին. առին տղայ մի ի մօրէն իւրմէ, հասուցին սուլտանին, և ասեն. « Այս քեզ նշան ի քաղաքէն, զի ահա առաք զքաղաքս Անի »: Եւ լուեալ զայս սուլտանն՝ հիացաւ յոյժ և այսպէս ասաց, եթէ, « Աստուածն նոցա մասնեաց զնոսա այսօր զանառ քաղաքն ի ձեռս իմ »: Եւ դարձաւ բազմութեամբ զօրօք և մտաւ ի քաղաքն Անի, և առ հասարակ ամենայն զօրքն անօրինաց ունէին դանակ քաջասուր, զերկուսն ունելով յերկոսեան ձեռն և զմէկն ունէլով յատամունսն. և այսպիսի օրինակաւ սկսան զամենայն քաղաքն առհասարակ կոտորել անողորմաբար. և զայնքան բազմութիւն քաղաքին նման դալար խոտոյ հունձ ածին, և կամ որպէս զքաղկոյս ի միմեանց վերայ կոյտ արարին. և առ վայր մի ծովացաւ ամենայն քաղաքն արեամբ. և ամենայն մեծամեծ իշխանքն տանն Հայոց և դաք ազատացն՝ երկաթի կապանօք կային առաջի սուլտանին. և կանայք գեղեցիկք և ահարկուք՝ ի վառուսոր տանէ, վարեցան ի Պարսիկս ի գերութիւն. և անհամար մանկունս լուսատեսիլս, վայելուչ աղկունս տարան զհետ մարդն. և բազում սրբասունդ քահանայք այրեցան հրով, նա և զոմանս յոտից մինչեւ ցգլուխ քերթեալ չարաչար խոցուածով, որ և տեսողացն սոսկալի էր: Եւ այլ ոմն ի չարագործ ազգէն՝ ելեալ ի վերայ բարձրութեան եկեղեցւոյն Սուրբ Կաթուղիկէ, և զծանրագին խաչն որ կայր ի գումբէթն եկեղեցւոյն՝ ընկէց յերկիր,

և մտեալ ի դրանն[1] որ կայր ի գումբէթն եկեղեցւոյն, և պըլօր (բիւրեղեայ) կանթեղն ընկէց ի մէջ եկեղեցւոյն և մանրեաց, զոր Սմբատ Տիեզերակալն էր բերել տուեալ ի Հնդկաց՝ ընդ բիւր մի գանձուց[2]. երկոտասան լիտր էր կշիռ նորա, և նոյն չափովն երկոտասան լիտր տանէր. և յորժամ ընկէց զխաչն ի գումբեթէն, նոյնժամայն եղեւ սաստիկ որոտմունք և անձրեւ բազում, և ցամենայն զգէշն կոտորածոյն[3] ելից յԱխուրեան գետն, և լուաց յարեներ ցամենայն քաղաքն։ Իսկ յորժամ մանրեցաւ պըլօր կանթեղն, որ այլ չէր լեալ ի վերայ արարածոց[4], լուեալ սուլտանն յոյժ վիրաւորեցաւ. և զխաչն զարծաթին զոր ընկեցին՝ որ էր մարդաչափ մի, տարան եդին զնա ի կոխ դրան՝ ի դուռն մաքըթին Նախչուան քաղաքին, որ կայ մինչեւ ցայսօր։

1. Թերեւս պիտի ըլլար ի դարանն, բան պահելու տեղ (թուրք. տոլապ)։
2. Իմանալու է 10,000 ոսկի։
3. Սպաննելոց մարմիններն։
4. Երկրիս վրայ ոչ մէկ տեղ մի այդպիսի մեծ բիւրեղ կանթեղ չէր տեսնուած։

ՄԿ

ԽՈՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԳԱԳԿԱՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՎԱՆԱՆԴԱՑ

(Մ. ՈՒՌՀԱՑԵՑԻ. ՃԺԲ.)

Ցայնմ ժամանակի էր Գագիկ ի Խարս[1], որդին Աբասայ Շահնշահին. և յղեաց սուլտանն[2] առ նա դեսպանս՝ զի գայցէ նմա յերկրպագութիւն։ Եւ էր Գագիկ այր հանճարեղ և խմաստասէր, և խորհեցաւ հնարս վերծանել խաղաղութեամբ ի սուլտանէն. յայնժամ զգեցաւ սեաւ զգեստ սգաւորի և նստաւ ի վերայ սեաւ բարձի։ Եւ յորժամ տեսաւ զնա դեսպանն սուլտանին՝ հարցուկ լինէր, և կամեցաւ զպատճառն ուսանել, եթէ, Վասն էր ես սեաւք, զի ահա դու այր թագաւոր ես։ Եւ նա ասէր, թէ, «Յորժամ մեռաւ իմ բարեկամն Տուղրիլ սուլտանն՝ եղբայր Ալփասլանայ, ես յայնմ աւուր զգեցայ զայս սեաւ զգեստս»։ Եւ հիանայր այրն այն, և երթեալ պատմեաց սուլտանին. և նա զարմանայր յոյժ։ Եւ յարուցեալ ամենայն բանակովն եկն առ Գագիկ ի Խարս, և արար ընդ նմա սէր և ուրախութիւն մեծ. և զգեցոյց նմա զգեստ թագաւորական. և արար Գագիկ ճաշ սուլտանին։ Եւ զայս այսպէս լսեցաք, եթէ մէկ գաւին վերայ՝ զոր խորովեաց՝ ծախք եհան հազար դահեկան, և հարիւր հազար դահեկան[3] սեղան

1. Որ սովորաբար կարս գրուի, յայլազգեաց կոչուի Ղարս, Գարս. բայց կայ այն կողմերն և Խարս անուամբ գեղ մի, թերեւս աւելի հին քան զքաղաքն։
2. Ալփարսլան։
3. Կ'իմացուի ոսկի. բայց ինչ կերպով պատրաստուած էր այդ խորոված գառնուկն, կամ ինչ թանկ ամանի մէջ դրուած՝ որ այդչափ արժեց։

տուեալ սուլտանին և ամենայն զօրացն նորա: Եւ այսու զերծաւ խաղաղութեամբ:

Եւ եղեւ զկնի աւուրցս այսոցիկ թողեալ Գագիկ զԽարս և գնաց ի Հոռոմս, և թագաւորն Ցուռկիժ[1] տայր նմա զՄաւնդաւ[2]. և անդ եղեալ Գագիկ ազատօք իւրովք և թողեալ զտունն հայրենեաց իւրոց:

ՄԿԱ.

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ[3]

Ի ժամանակս բարեպաշտ արքային Ցունաց Կոստանդեայ Մոնոմախի, և թագաւորելոյ և բարեսիրի[4], և ի հայրապետութեան Հայոց տեառն Պետրոսի, այր ոմն ի թագակալ տոհմէ ՅԱբշակունեաց, ի պահպանութենէ զարմէ, արեանաւոր ազգականութեամբ ի չառաւիղէ Սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի, որդի Վասակայ Պահլաւունւոյ և մարտիրոսի, տեառն Բջնոյ, Գրիգորիոս անուն. յոյժ իմաստուն և հանճարեղ, և ներքին և արտաքին ուսմամբ ներակրթեալ վարժմամբ ի մանկական տիոց, հայկական և յունական դպրութեամբ. մինչեւ հասեալ ի հեռատրական ասպիճան փիլիսոփայութեան. որ և ուղեւորեալ ի թագաւորեալ քաղաքն Կոստանդինուպոլիս՝ յանդիման լինէր թա-

1. Կոստանդին Դուկաս:

2. Կեսարիոյ հարաւակողմը ամուր բերդ մի, որոյ անուամբ և մօտ գեան հիմայ կոչուի Ծառանգիդ:

3. Հեղինակ բանիս է Ներսէսի Շնորհալւոյ վարքը գրողն, որ չի յիշեր իր անունը, այլ միայն կ'ըսէ թէ այդ Ս. Կաթողիկոսին մահուանէն (1173) 67 տարի վերջը գրեր է, որ է 1240: Տես Յօդուած 297:

4. Ուրիշ ազգային պատմիչք շատ գովելի չեն գըտներ այդ կայսրը:

գաւորին. և պատուեալ յինքնակալէն և ի մեծամեծաց պալատանն՝ ըստ արժանեաց քաջատհմութեանն և ըստ մեծիմաստ գիտութեանն և հանճարոյն. քանզի ընդ իմաստունս Յունաց աւուրս բազումս ի հարց և ի փարձ գժուարալոյծ բանից մաքառեալ՝ ըստ փիլիսոփայական սարասի, և ըստ եկեղեցական սրինաց և կարգի, յաղթէր բնաւիցն. և տկարագոյն զամենեսեան երեւեցուցանէր անճշմարիտ գիտութիւնն[1]. հզօր գոլով նորա ի պատասխանիս, և հանճարեղ և խոհական ի դարձուածս բանից: Որոյ ազագաւ ընկալեալ լինէր յինքնակալէն զպատիւ մագիստրոսութեան և զքաջութեան, և առաքէր յաշխարհն արեւելից տիրել յոգունց գաւառաց: Որոյ եկեալ՝ ոչ միայն մարմնական իշխանութեամբ հովուէր զաշխարհ ամենայն որ ընդ իշխանութեամբ նորա էին, այլ և հոգեւորապէս կարգաւորէր զամենեսեան ըստ հաճոյիցն Աստուծոյ: Զարդարէր զվանորայսն և զեկեղեցիսն աստուածային պայծառագոյն կարգօք. յարգէր զարս իմաստունս և զառաքինիս և զդասս եկեղեցականաց, և յանձանձէր զամենեսեան աստուածայնապէս. ժողովէր զհոյլս վարդապետաց և քննէր նոքօք անդադար զխորս աստուածայնոցն իմաստից. և զօրացուցանէր զամենեսեան ի գործս առաքինութեան և աստուածպաշտութեան: Հայր՝ ըստ Յովբայ՝ եղեալ որբոց և այրեաց, և աստուեալ զանձս նիւթականս՝ սերմանէր յանձինս տնանկաց և կաթսեղոց:

Եւ քանզի ի ժամանակին յայնմիկ զօրացեալ լինէր ազանդն Մանիքեացւոց և Թոնդրակեցւոց, զորս խլէր արմատաքի աստուածուսոյց վարդապետութեամբ, և մաքրէր իմաստայեղց և կորավարան թղթովք: Իսկ առ անհաւատսն և խստացեալսն չարութեամբ՝ որք ըստ բնութեան իժից և քար-

1. Գր. Մագիստրոս անունց անկատար գիտութեան տկարութիւնը յայտնէր:

բից՝ ոչ կամէին լսել զձայն թովչի ձարտարի, և ոչ առնուլ դեղ ի դեղատուէն իմաստնոյ, զիշխանականն սաստ ի կիր արկանէր, և այնպէս տապալէր ի հիմանէ զհնացեալն չարութիւն: Եւ բարւոք կենցաղավարութեամբ և հանդիսական քաղաքավարութեամբ կացեալ փոխի յաստեացս՝ սերմանութեամբ յանվազման կեանն, թողով ժառանգ բարի զամենայնիւ նմանեալն բարելաւութեանց նախնոյն իւրեանց պարթեւազեան պահլաւուն Գրիգորի՝ վառեալ անուն[1]:

ՄԿԲ

ԹՈՒՂԹ ԳՐ· ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԱՌ ՀԱՅՐ[2] ՍԱՐԳԻՍ

Յորժամ տակաւին ի մերումն էաք բնակութեան[3], մնալով ողորմութեանն Աստուծոյ, ակն ունէի ի հրամանաց թագաւորական[4] ըստ իմում յոքնալման թախանձանացն՝ ազատել զիս յայսպիսի գործառնութեանց, զի իմոյս պարապեցից տառապեալ հոգւոյս: Ապա հասին հրամանք թագաւորական՝ ոչ մի կամ երկուց կամ երից, այլ բազում ազաչանօք առաւել քան զիմն թախանձումն նորայն արժանի հրաշից[5]· և փակեալ յամենայնի զկս

1· Այն է Գրիգոր Վկայասէրն Մեծ:

2· Եթէ իշխանաց և թէ եկեղեցականաց զիանական թղթիւր գրած է Մագիստրոս· յորոց՝ իբրեւ 80 կամ 90 գտաւին: Հայր Սարգիսդ է վանահայր Ս· Կարապետի:

3· Այս խօսքով յայտնէ՝ որ Բագրատունեաց թագաւորութեան վերցուելէն վերջը գրեր է զայս:

4· Յունաց կայսեր, յորմէ մագիստրոսութեան պատիւն առեր էր:

5· Զարմանալի է կ'ըսէ, որ կայսրն աւելի կ'ազաչէը իրեն հրամանը կատարելու, քան ինքն կայսեր՝ որ հրամանէն ազատ ըլլայ:

իրացն իմոց հայցուածոցն, և տարակուսեալ յերկուցն՝ ոչ գտեալ զկս իրացն, ձեպէի զիս՝ միայն զհնազանդութեանն սահման և զհրաման արքունի կատարել· յառաջել առ լեռնոտամբն բարձրաւանդակի Ջորին կոչելոյ[1], թողեալ զայլ մանկունս իմ հանդերձ մարքն ի տեղւոջ բնակութեան իւրեանց: Իսկ զմանուկն զայն ոչ կարացի արգելուլ, քանզի որ երեւի ինձ կայտառ և արիական հարցն սերտութեամբ՝ ունի զխոկումն մարտական և ընթացական մրցման[2]: Արդ, մինչ զկնի իմ գայր, եհաս նմա պատահ խօթութեամբ սիւնիքոտական[3] ջերմանն. և առժամայն ամբարձեալ գոլորշի սաստիկ յուզման կոհակացն եռացելոց արեանն՝ ի խելապատակն, յեղափոխեր զնա ի մոտաց[4], և անծանօթս զմեզ ունէր: Եւ այս հասանէր ի ձորակի միոջ ագարակի. և արգելեաց զմեզ Հոգին Սուրբ, ցուցանելով եթէ մակացու եմ և գերագոյն ամենայն թագաւորական հրամանաց: Եւ իմ տարակուսեալ առաւել քան զաստ հրամանացն Աստուծոյ՝ ի թագաւորական խնդրոյն, և բորբոքեալ եռանդն ջերմանն ձեպէր զնա. մինչեւ ծանուցեալ մօրն իւրոյ՝ եկն առ նա: Եւ զինչ արգելօք մտմտքուքն այրեցման և կիզման մերոյս ծնողական ազէտի գրել քեզ հաւանիմ. քանզի առաւել[5] քո ընդ մեզ կիզեալ և տոչորեալ հանդերձ բոլոր քրիստոսազգեաց եղբարբդ:

1· Հաւանօրէն Տարօնոյ կողմերու լեռնակ մի է:

2· Թէ խոհեմութեան և թէ քաջութեան ոգի ուներ՝ իր նախնեաց նման այդ իր գաւակն, որ իր յուներն պատուոյ անուամբ Աբիսպատ կոչուեր, որ նշանակէ փոխանորդ հիւպատոսի կամ բդեշխի:

3· Յունարէն բառ, որ նշանակէ անընդհատ կամ շարունակ ջերմն, Συνεχὴς, և ոչ երկու կամ երեք օր հեղ մի բռնողն:

4· Մագիստրոս բժշկութեան եւս հմուտ ցուցընէ զինքն այդ բացատրութեամբդ:

5· Բան մի պակսելով՝ լաւ չիմացուիր ըսածն:

Արդ, յայսոսիկ տարակուսեալ ըստ իմում սո-
վորութեան, քանզի բնաւորեալ եմ ոչ այլ ինչ
ազօթել, բայց միայն Թէ, Եղիցին կամք քո. քան-
զի, դու Տէր, առաւել գիտես զօգուտն մեր և կա-
միս. բայց, երբէք, Տէր իմ, զգործոց իմոց մի՛
հատուսցես ինձ՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Ապա
բորբոքումն եռանդան հրացեալ կայծակմամբ՝ զիւրն
վերրուսուցանէր ծաղիկ, զնախահօրն սերմանեալ
յիւրոց վաստակոց: Եւ զայն՝ ո՞րք և որպիսի՞. իբրու
զկաչկառ վիմաց հուպ միմեանց հարթ և հայծ կար-
կառեալ՝ անտեղի թողլով միւնչեւ ցմիոյ նչմարելոյ
կառուցանելոյ ծայրի աղաղն[1]. և փքացեալ իբրեւ
զտիկս ուժգնակի փչմամբ՝ անբարբառ և անտես
յաչաց գնա առժամայն գործէր, և անյուսալի գնա
ամենեցուն ի կենաց գիտել: Իսկ առուգեալ ծա-
նեալ և ճշմարտութեամբ հաւատոց ոչ ատել ի
Քրիստոս, զի ձերդ զօրութեամբ հայցուածք խըն-
դրոյ՝ յայնմ աւուր իսկ վերարծարծեաց գնա, և
ներեաց անտանելի բորբոքումն հրացեալ ախտին.
և յուսամ և հաւատամ զի զօրութեամբ ի մեռե-
լոց յարուցեալ է ձեր գնա. հրաշագործեալ ի մեզ
ներողութեանն Աստուծոյ, այն որ յամենայնի խըն-
դրէ ի մէնջ զօգուտն մեր խորհել և առնել:... Իսկ
մանուկն տակաւին տակաւրեալ ի մահիճս դնի.
մի՛ անխոյթ առնէք, թէպէտ և դուք ոչ երբէք մո-
ռանայք՝ ըստ ձերումդ աստուածեղէն զգրութեան
կարգի: Ո՛ղջ լերուք:

1. Ջերմին առաքութենէն հիւանդին մարմինն մանր
ծաղկանց պէս ուռեցքներ դուրս առեր են, քովէ
քով քարերու չարքի պէս, որ ասեղի ծայր մ՛այլ
դնելու տեղ չըլլայ: — Կաշկառ նշանակէ քարա-
կոյտ, վրայէ վրայ դիզուած քարեր: « Որք երթան
» անդ (ի Մաքքա, կ՛ըսէ գրող մի մեր) կան ընկենուն
» քար ի վերայ կաշկառին »:

ՄԿԳ

ՓԻԼԱՐՏՈՍ ԵՒ ԹՈՌՆԻԿ

(Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ. ՃԶ–Լ.)

Յայսմ ժամանակիս բռնակալեցաւ անօրէնն և
ամենաչար իշխանն որ ասի Փիլառտոս[1], որ էր
իսկ անդրանիկ որդի սատանային. ի յանկանել
Տիոժէնին[2] բռնակալեցաւ ի վերայ երկրի. այր
չարաշունչ, որ էր իսկ սա կարապետ պղծոյն, նեռն
դիւաբնակ և այլանդակ չարաչար վարուք[3]: Սա
սկսեալ տալ պատերազմ ընդ հաւատացեալոց Քրիս-
տոսի, վասն զի էր սա անհաւատ քրիստոնեայ, ոչ
Հայ գիտելով զնա և ոչ Հառամ. վարք և կրօնք
Հառամոյ ունէր, և հայրենեօք և մայրենեօք Հայ
էր[4], և ի տգիտութենէն կացեալ առ հօրեղբայր
իւր ի վանք որ կոչի Զօրափարի – կոզեռն, ի Հար-
սրն–Մարայ[5] գաւառին: Սա եղեալ յանապատ՝ և
եղեւ պիղծ յանապատ. սա սիրեալ բազում աշ-
խարհաց և քաղաքաց, և բազում մեծամեծ իշ-
խանս կորոյս անողորմաբար, և եկեալ բնակեցաւ
ի Մշարն[6]. և յուզարկեաց և կոչեաց զքաջն Թոռ-
նիկ՝ զտէրն Սասնոյ, գալ նմա ի հնազանդութիւն:

1. Ըստ Յունաց Փիլարետ կամ Ֆիլարետոս, ազգաւ
Հայ բայց յունադաւան, մեծ պատիւ և իշխանութիւն
գտած ի կայսերացս, Դեմեստիկոս (Domesticus) և կիւ-
րապաղատ:
2. Թեոմանես Փիոպինեց կայսրն:
3. Շատ անխնայ է հեղինակն իր չհաւանածներուն:
4. Վաստպուրականի վարաժնուներաց գաւառէն:
5. Ուղիղն Հասան–մանսուր. Ի Հայոց նահանգին
մէջ, Հայաստանի արեւմտեան հարաւակողմն:
6. Այս այլ ի Դ Հայոց, Թարբերդու կողմերն:

Եւ լուեալ զայս Թոռնիկ՝ Մուշեղայ որդին, ծիծաղեալ զանմտութիւն նորա, և ասացեալ թէ, «Ահա որ բնաւ ես ոչ տեսանեմ զերեսս նորա»: Եւ ասեն ցԹոռնիկ կոչնականք Փիլատոսին, թէ, «Ահա գայ բազում զօրօք ի վերայ քո, և տապալեալ սպասցեն զամենայն գաւառս քո»: Ասէ Թոռնիկ. Եւ քանի՞ են զօրք Փիլատոսին. ասեն արքն, իբրեւ քսան հազար: Ասէ Թոռնիկ. «Են իմ հազար ձիաւոր, որ հանապազ հաղորդին ի մարմնոյ և յարենէ Աստուծոյ. բայց զայս այսպէս գիտեմ՝ զի Փիլատոսն և ամենայն զօրքն իւր՝ թափուր և ունայն են ի հաւատոցն, և կան լցեալ ամենայն չարաչար յանցանօք»: Եւ գնացին՝ զայս ամենայն պատմեցին Փիլատոսին. և յայնժամ կոչեաց Փիլատոս զՏէր Գրիգորիս[1] և ասէ ցնա, եթէ, «Փեսայ քո է Թոռնիկ, գնա և կոչէ գնա ինձ ի հնազանդութիւն»: Իսկ Տէր Վահրամ՝ վասն չար բանսրուցն Փիլատոսին յոչ կամաց գնաց առ Թոռնիկ, և այլ ոչ տեսաւ զերեսն Փիլատոսին: Եւ պատմեաց զպատճառն գնալոյն՝ Թոռնըկայ. և հիացեալ Թոռնիկն և ասէ, եթէ, Զիարդ ոչ պատառեցաւ երեսք անօրինին ի սաստիկ լրբութեանցն իւրոց, յուղարկել զքեզ առ իս իբրեւ զդեսպան, հանդերձ սուտ երդմամբ: Եւ գիտացեալ Փիլատոսին եթէ ոչ կամի գալ Թոռնիկ ի կոչ նորա, զօրաժողով արարեալ գնաց ի վերայ Թոռնըկայ. և Թոռնիկ ոչ գիտացեալ զգալ նորա ի վերայ նորա. և իբրեւ լուաւ զգալն Փիլատոսին, ձայն տուեալ զօրաց իւրոց, և արար ժողով զամենայն Սասուն՝ յիսուն հազար հետեւակաց և վեց հազար ձիաւորաց, և գայր ի ճապղջուր. և ոչ հասուցայր գալոյ Փիլատոսին. զարձոյց զամենայն հետեւակազօրն, և ինքն հազար ձիաւորով ի ՅԱ-

1. Մեծ Վկայասէր կաթողիկոսն, որմէ Կը. Մագիստրոսէ, որոյ առաջին անունն էր Վահրամ:

մուշատ քաղաքն[1] Հայոց չոգաւ. և յԱլեղուտս դաշտին հանդիպեցան զօրքն Փիլատոսին՝ ութ հազար արամբք: Եւ տրամեցաւ Թոռնիկ որ դարձոյց զհետեւակ զօրսն իւր. և յայնժամ կարգեաց Թոռնիկ զճակատ պատերազմին իւրոյ՝ դաս առ դաս, յայսկոյս և յայնկոյս և յառաջոյ, և թիկնապահ իւր եղեալ զկապուտն[2] զայր քաջ՝ երեք հարիւր արամբք. բայց ակն ածէր ի Փռանկէն[3] քան յայլ զօրացն, և ասէր. «Տեսէք, զի գունդս երիվիցէ ընդդէմ Ֆռանկին»: Եւ ահա գայր Ռեմբռանտ[4] և զօրք իւր, և ի դիմի հարաւ Թոռնըկայ գնդին, և պատառեաց զզօրսն և էանց ընդ մէջն: Եւ յայնժամ ձայն տուեալ Թոռնիկ զօրաց իւրոց, և միաբան ի մէջ իւրեանց փակեցին զնոսա, և զամենայն իշխանս ձերբակալս արարին, կալան և զկոմսն[5] նոցա. և զՓիլատոսն[6] և զամենայն զօրս իւր փախստական արարին, և զիշխանս նորա արարին ձերբակալ արս հազար և հինգ հարիւր: Եւ յաւուր յայնմիկ եղեւ բազում կոտորած Ֆռանկաց և այլոց քրիստոնէից: Եւ գարձաւ Թոռնիկ և ամենայն զօրքն Հայոց գնացին ի Սասուն, բազում աւարաւ. և Փիլատոսն գնաց փախստական, և լի ամօթով մտանէր ի խորերդ: Այս եղեւ ի Հաւնձիր գաւառին և յԱլեղուս դաշտին:...

Յայսմ աւուրս[7] գայ Թոռնիկ սակաւ արամբք, և մտանէր ի բերդն իւր յԱշմուշատ քաղաք՝ ի

1. Որ և Աշտարուշատ, ի Գ Հայս. զոր պէտք չէ շփոթել ընդ Շամշատայ՝ որ է Սամոսատ:
2. Պօդիկարպոս անուանն Համառօտած:
3. Այն առեններէ գաւուէին Փռանկ կամ գերմանացի զօրականք ի գինուորութեան կայսերաց:
4. Rembrandt կամ Rembault.
5. Անշուշտ վերայիշեալ Ռմբաւան:
6. Վարը սրաչ կ'իմացըննէ որ առ չէր բանուած:
7. Հեղինակն անմիջապէս վերի զրածին հետ կըցէ, բայց ժամանակ մի վերջը եղած է այս:

ՅԱրծնոյ վերայ[1]. և յանկարծակի գայր ամիրայ ոմն բազում զօրօք, որում անուն էր Ամր-Բեափր. և լուեալ եթէ Թոռնիկ առանց զօրաց է, յայնժամ հրամանաւ Փիլատոսի գայր ի վերայ Թոռնըկայ. և խաբանօք և սուտ երդմամբ սկսաւ սէր և միաբանութիւն կարգել ընդ նմա, մինչեւ ի ձեռն բազում տրաց և ընծայից հաւանեցուցանել զծառայն Թոռնկայ. և այսու պատրեալ զնա՝ հանէր ի սուտ սէր միաբանութեան իւրեանց՝ երեք աքամբ: Եւ մինչդեռ կային ի դիմաբրուտն, վազեաց ամիրային գազանաբար ի վերայ Թոռնկայ, և կամէր սպանանել զնա. և ոչ ունելով Թոռնիկ առ իւր բայց փոքրիկ դանակով հարեալ զամիրային՝ ի վայր հեզոյր զվիզ նորա. և զայլոց ամիրային բռնեալ զգլուխն՝ ընդ իւրար ծեծեալ սատակեաց. և ինքն եկեալ անվնաս գնայր ի բերդն, վասն զի մօտ էր բերդն. և ամենայն թուրքն փախստական լինէին առաջի նոցա:

Եւ յորժամ գնաց մօտ ի բերդն՝ մի ոմն ի յայլազգեաց ի թաքստեան կայր. հարեալ զԹոռնիկ աքմբով ի սիրտն գազաւարար, և անկեն մեռանէր քաջն Թոռնիկ. և տարան զգլուխ նորա առ Փիլատոսն. և անօրէնն Փիլատոսն հանեալ զսկաւառակ գլխոյն և արար գաւաթ, և նովաւ ըմպէր գինի. և զմնացեալսն գլխոյն առաքէր ամիրային Մուֆարզնայ. և զամենայն մարմինն այրեցին հրով. զօրս յեղոյ Ժողովեցին զայրեցած զոսկերս նորա՝ զառն քաջի և աստուածապաշտի, և տարան թաղեցին ի գուռն Սրբոյ Կարապետին[2]: Եւ մնաց իւր երկու որդի, Զորտուհանէին և վասակ ի ազատականն հասակի[3]:

1. Գետ մի Դ Հայոց մէջ, որ թափի ի Տիգրիս:

2. Ինչ այլակերպ անձինք և դիպուածք. ամեն լսող գառէ. փիլարտոս ինչ և սէր այլ որ ըլլայ, Թոռնիկի մնայ միշտ քաջ և սրտառուչ Թոռնիկ:

3. Ասոնք պիտի յիշուին յետոյ յ'293 Յօդուածի,

ՄԿԴ

ՎՐԷԺՔ ԳՈՐԳԱՅ ՇԻՐԱԿԱՑԻՈՑ ՅԱՆՏԻՈՔ

(Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ. ՃԻԴ.)

Այլ ինչ զարմանալի ասացից ձեզ՝ զոր ինչ եղեւ յԱնտիոք, յառաջ քան զքան ամ, զոր և մեք իսկ լուաք զայս ի քաղաքացեացն. եթէ, այնչափ չար և առեցողք էին Հայոց ազգին՝ Անտիոքացիքն, զի յորժամ ի քաղաքն օտարական բանէին, զմօրուքն կարէին, և հանէին ընդ գուռն քաղաքին: Եւ յաւուր միում բանեցին զոմն Անեցի՝ այր փառաւոր, և կարեցին զմօրուքն նորա, և առին զամենայն ինչս նորա, և հանին զնա ի քաղաքէն. և նա վիրաւորեալ[1] գնաց. և առեալ զօրս Թուրքաց հինգ հարիւր այր, և եկեալ գերեաց զամենայն գաւառն Անտիոքայ, և զաուլին[2] երկոտասան գեղն այրեաց հրով. և բերեալ ի գուռն քաղաքին բազում գերութիւն, կոտորեաց և ելից զնոսա ի գետն. և ձայն տուեալ ի քաղաքն և ասէր. «Եւ եմ Գորգ Շիրակացին, որ զմօրուքն կարեցիք. թ'ապա աւէ՛ այս մօրուք՝ թէ ոչ[3]». և գնաց անհամար աւարաւն:

Նոյնպէս յաւուրսն բարեկենդանին՝ ի նոյն ամին, եկեալ կարաւան ի յարեւելից ի քաղաքն Անտիոքայ, բարձեալ բերէին տարեխ[4] ձուկն. և

իրենց նախորդաց և յաջորդաց հետ, ուրիշ կերպով սրտառուչ դիպուածոց առթիւ:

1. Սիրտն վիրաւորուած, արմատ:

2. Անտիոքայ Յունաց դըքսին:

3. Տեսէք հիմայ, թէ ինչ արժէք ունի մօրուքս:

4. Վանայ ծովուն անուանի ձուկն, զոր չորցուցած պիկեն հետու տեղուանք. գրուբ և տառեխ:

կային ի մէջ չուկային ի գինարբուքեան. և ի լսել քաղաքացեացն զձայն պարուցն նոցա, ամենայն արք քաղաքին հասանէին ի վերայ նոցա, և ծեծելով գանալից արարին զնոսա, սկսան հանել ըզնոսա ի քաղաքէն: Էին արքն իբրեւ ութսուն՝ բրէզածք՝[1] և ընտրեալք քաջութեամբ. և յայնժամ ձայն տուեալ մանկտաւազքն[2] նոցա, և նոքա միաբան գինեխմեալ էին՝ յարձակեցան ի վերայ քաղաքացեացն, և ի Սեւռոդոյն[3] դրանէն մինչեւ ի Տէր Պետրոս[4], զամենայն արք քաղաքին փախըստական արարին, և կառափնաբեկ, ռանեակոտորս[5] արարին արս բազումս. և ապա խաչով և աւետարանով երդուեալ նոցա՝ բնաւ այլ ոչ մեղանչել նոցա. յայնժամ արարին խաղաղութիւն, և դարձան ի տեղիս իւրեանց անհամար աւարաւ:

ՄԿԵ

ՄԷԼԻՓ–ՇԱՀ[6] ՅԱՓՆ ՈՎԿԻԱՆՈՒ

(Մ. ՈՒՌՀԱՑՅՑԻ. ՃԻԲ.)

Յայսմ ամի (1086) չարժեալ ահագին բազմութեամբ տիեզերակալ Մահմետ սուլտանն Պար-

1. Թուի թէ բրածեծ պիտի, իբրեւ բրով, գաւազանով ծեծուած:

2. Կարիճներուն գլխաւորքն. այսպէս կոչուին և տղայոց և ծառայից գլխաւորքն:

3. Քաղաքին ծովեզերեայ կողման դուռն, որ խաչակրաց ժամանակի պատմութեան մէջ չատ հեղ յիշուի. հին առեն քաղաք մի կար այն տեղ Սելեւկիա Պիերիա կոչուած. իսկ Սեւռոսի՝ Աբգարացւոց Միհեի. տին կոչածն էր:

4. Ս. Պետրոս մայր եկեղեցին Անտիոքայ:

5. Գլուխներն, ոտուընին զարկին, կտրտեցին:

6. Որդի Ալփ–արսլանայ եղբօր Տուղրիլ սուլտանի:

սից՝ Ասքանազանց ազգաւ[1], և անթիւ զօրակաւք՝ խաղայր գայր, և չրջեալ եմուտ յարեւմուտս ի յաշխարհն Հոռոմոց, առ ի տիրանալ այնմ աշխարհին. և քաղցրութեամբ և հեզութեամբ և ողորմութեամբ լցեալ էր սիրտ նորա ի վերայ քրիստոնէից ազգաց, և հայրախնամ գութ ցուցանէր ամենայն աշխարհի. և առանց պատերազմաց տիրեալ լինէր բազում քաղաքաց և գաւառաց: Եւ յայսմ ամի տիրեաց սուլտանն ամենայն աշխարհին Հայոց և Հոռոմոց. և գայր հասանէր ի մեծ քաղաքն Անտիոք, տիրանայր այն աշխարհին և Հալպայ. և տիրելով տիրեաց ի Կասբականէն մինչեւ ի Յովկիանոս[2]. և հաւանեցոյց առ հասարակ զամենայն թագաւորութիւնս՝ իւրոյ աթոռոյն, որք յայսկոյս Ովկիանոսին, և ոչ մնաց աշխարհ՝ որ ոչ հնազանդեցաւ նորա թագաւորութեանն. և եղեն հարկատուք և հնազանդեցան նմա երկոտասան ազգք թագաւորաց[3]: Եւ եղեւ յետ տիրանալոյ Անտիոքայ, իջեալ յեզր Ովկիանոս ծովուն՝ ի տեղի որ կոչի Սեւռոտի. և տեսեալ սուլտանին զծովն մեծ՝ զոհացաւ և օրհնէր զԱստուած՝ որ մեծացոյց զթագաւորութիւնն առաւել քան զնօր իւրոյ Ալփասլանայ: Եւ ձիով իւրով մտեալ կոխէր զՈվկիանոս.

1. Ըստ Ս. Գրոց Ասքանազ հօրեղբայր էր Թորգոմայ. ասոր անունէն համարին ոմանք ի գիտնոց գԹիւրքմէնս, որոց գեղջն են և Սելճուկեան Թուրքք իրենց սուլտաններովն. ըստ այս կարծեաց՝ ազգան համարեցան ոմանք զՀայս և զԹուրքս:

2. Ի ծովէն կասպից մինչեւ ի Միջերկրական, զոր Հեղինակս և այլք Ովկիանոս կոչեն, իբր մեծ ծով: — Սամուէլ Անեցի կամ իր ժամանակագրութեանն աւելցընող մի՝ գրէ. «Կոխեալ երիվարաւն ի ծովն՝ և » ետ շուքր (գոհութիւն) Աստուծոյ, որ տիրեաց խա» զաղութեամբ ի ծովէն Պարսից մինչեւ ի ծովն արեւ» մըտից »:

3. Թամկական բառ ածք մ՚է, 12 ազգ համարել ընդհանուր մարդկան ցեղերը կամ տէրութիւնները:

և եհան զթուրն իւր, և երիք հատ մխեաց ի յՈվկիանոսն զթուրն իւր և ասաց, եթէ, « Ահա տիրել ինձ երեսս Աստուած ի ծովէն Պարսից մինչեւ ի ծովս այս »: Եւ հանեալ զհանդերձս տարածեաց ի վերայ գետնոյն, և եկաց յաղօթս առ Տէր Աստուած, և օրհնեաց զբարերար ողորմութիւնն Աստուծոյ: Եւ հրամայեաց ծառայիցն իւր աւազս բառնալ ի ծովէն, և տարաւ զայն ի Պարսիկս, և էարկ ի վերայ գերեզմանի հօրն իւրոյ Ալփասլանայ, և ասէր. « Հայր իմ Ալփասլան, ահա աւետիք քեզ, զանն զի տղայ որդին քո զոր թողեր, տիրելով տիրեաց մինչեւ ի ծագս աշխարհի »:

Եւ դներ սուլտանն յԱնտիոք զամիրայն որ ասի Աղսխան[1], այր չար և չուն և խաւարար և գանձամիտ. դներ և ի Հալապ քաղաք՝ զԱղ-Սրեգոյր[2], որ էր այր բարի և խաղաղարար և քաղցր ի վերայ ամենայն ուրուք և չինող աշխարհի:

ՄԿԶ

ՆՈՅՆ ԸՍՏ ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Իրրեւ առնոյր զփառս իշխանութեանն բարեբաղդն Մէլիք-շահ՝ զկնի հօրն մահուան Ալփասլանն կոչեցեալն, մեծապէս կարգաւ յօրիներ զթագաւորութիւնն, ըստ անուանն արդարեւ եղեալ Արքայ արքայից. ոչ հեռանեալ հօրն բարուց և կամաց, այլ և յաւէտ մանաւանդ զընդդէմն ախորժեալ. մինչ զի և մտահաս եղեալ զնորայն բանբերն զիմացմունս, իրրեւ եղեալ հակառակ խաղաղութեան և կենաց մարդկան՝ արեամբ և զրկմամբ

1. Կամ Աղուսիան. Լատինք զրած են Æxianus, և այլ կերպ:

2. Թուրքերէն Ագ-սօնղօր նշանակէ ճերմակ բազէ:

խանդացեալ: Իսկ ինքն իմաստաբար քաղաքավարութեան կարգօք պատրաստէր զամենայն:

Այդ, խոհեմն այն և արի քաջ զյղոլուխ ի թագաւորաց և քան զամենեսեան որ առ մեօք, ոչ այնքան տանէր հոգ որքան արգարութեամբ առ ամենեսին վարիլ, զի մի ոք լիցի արտում ի զրկելոց և հպարտ ի գոռոզաց: Էր և ազատաբարոյ և մեծախորհուրդ. այլ և տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութեանն. ընդ որում՝ հեզութիւն ի քաղցրութիւն բարուցն լծակցեալ՝ առնէր սիրելի ամենեցուն. զոր միայն կոչեցիկ թագաւոր և փարթամ: Սա ի դոյզն ժամանակի՝ փոքր ինչ նուազ զրոլորս հնազանդէր զտիեզերս, զոր այլք ի թագաւորաց ի բազում ժամանակս և կամ ոչ բնաւ. բայց ոչ այնքան պատերազմաւ և բռնութեամբ՝ որքան սիրով և քաղցրութեամբ. զի թէ սակաւ ժամանակաւ այնքան զօրեաց, կարծեմ թէ և ոչ Եւրոպէ կարէր ոչ տալ մեզս արքայութեան նորա, եթէ յոլովեալ էին կենացն նորա ժամանակք:...

Ի ՇԽԱ (1092–3) թուականին[1] սպանաւ մեծ հազարապետն արքային Պարսից Մէլիք-շահի, որում անուն էր Հասան, իսկ ըստ պատմոյ աստիճանին՝ Վզրոյի-խօջա[2]. և զկնի աւուրց քանի և ութից մեռանի և ինքն Մէլիք-շահն, զորմէ համբաւէր յամանց՝ դեղակուր ի կնոջէն լինել: Որ էր հեզ առ ամենեսեան և քաղցր բարուք, յաւէտ առ ազգս քրիստոնէից. և յետ մահու նորա անպատմելի

1. Սամուէլ Անեցի այս Սարկաւագայ զրածը օրինակէն առաջ կ'ըսէ. « Ախորժելի եղեւ բանիւ զրուածոյ » տեօք վարդապետին սրբոյ զրիլ, (որ) և խոստաց » նայր զարձեալ զրիլ արուեստաբան և երկայն պատ » մութեամբ. և յորժամ զկենացն վճարէր զատա » ցուածն, զմահուանէն ապա այսպէս է զրեալ »:

2. Ուրիշ Օր. վզուրկ խօջա. բնիկ անուամբ կոչուէր Հասան-իպն Սապպահ:

եղեւ խռովութիւն ամենայն ազգաց զամս չորս. զի եղբայր նորա Դրդռչն և որդի նորա Բէքխառնիան[1] զայսոսիկ զամս մարտիւ պատերազմաց ըզբաբէյարմարութիւն զամենայն ի բաց ընկեցին, վասն ոչ ընդ փոյթ միոյ ի նոցանէ տիրելով՝ հոսմունս արեանց իրրեւ զուղխից լինէր, ոչ միայն զինակիր նահատակաց՝ այլ առհասարակ ազանց և գաւառաց, և նեղութիւնք վչտաց, սովոյ և գերութեան. և այսպէս բարիքն ի բաց վճարեցան՝ ընդ խմման կենաց թագաւորին. որոյ երկիր և աշխատութիւնք թագաւորականք՝ ուրոյն, և շահն և օգուտն՝ հասարակ ամենեցուն, մեծամեծքն և ընարելիքն. մանաւանդ զխաղաղականն ասեմ կեանս, զանկարօտս և զանհակառակս: Զի սիրէր զազգս մեր այնքան՝ մինչ զի աղօթս հայցէր և օրհնութիւն. յորմէ՝ անդ երբեմն չոքաւ հայրապետն Հայոց: Օ՜չ, թէ միայն էր աշակերտեալ քրիստոնէական կրօնից և կարգաց: Այլ, ի քաղաքն յորում նստաւ և թագաւորեաց ի մայրաքաղաքն Աշտիշատ՝ մեռանի անդ:

ՄԿԼ

ՍԵՆԵՖԵՐԻՄ ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱՒՈՐ ՍԻՒՆԵԱՑ· ԵՒ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐՊԵԼԵԱՆ· ԾԹ·)

Գրիգոր[2] առեալ էր իւր կին զամենօրհնեալ և մեծահաւատ բարեպաշտուհին Շահանդուխտ ի տանէն Աղուանից, զոյսդ նոցին թագաւորացին մեծին Սիւնեաց, և էին անզաւակ. և կամէր մեռ-

1. Այլք զրեն Բերկիարուխ:
2. Սիւնեաց թագաւորն:

թագաւորութիւն նոցա անժառանգ[1]: Այսպա խորհեալ ի միասին ընդ իշխանն՝ ածեն յԱղուանից զՍենեքերիմ՝ եղբայր նորին Շահանդըխտոյ, թագաւորացն մանուկ, յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ, հանճարեղ և իմաստուն, նա և երկեւզած յԱստուծոյ: Եւ ստանայ զսա (Գրիգոր) ժառանգ իւրեանց թագաւորութեանն ամս ինչ. և վախճանի և սա:

Եւ յայնմ ժամանակի էր բարձրացեալ և զօրացեալ տէրութիւնն Տաճկաց[2], և ամենայն աշխարհ ի ներքոյ հարկի նոցա նուաճեալ կայր. վասն որոյ և յոլով գաւառս չորթեալ հանին ի Միահական աշխարհէն՝ ի ձեռաց բնիկ տերանցն: Եւ էր յաթոռ սուլտանութեանն Մելիք շահն, այր բարեբարոյ և խաղաղարար, յորմէ մեծարեալ լինէր Սենեքերիմ ի պատիւ թագաւորութեան. և յոյժ երեւելի փառօք թագաւորեաց ի տանս Բաղաց[3], և ընդարձակեաց զամենայն սահմանս տէրութեան իւրոյ. և բազում ամօք վարեալ զթագաւորութիւնն՝ քաղցր և խաղաղական կենօք՝ մինչ ի մահ Մելիք սուլտանին, որ մեռաւ ի 541 թուականին: Եւ ապա սկսաւ քայքայիլ խաղաղութիւնն և պականիլ ամենայն չինութիւնք աշխարհիս, զոր յիւրում տեղւոջ ասացից: Եւ էին Սենեքերիմայ երեք որդիք, Գրիգոր, Ամբատ, Աեւադա, և դուստր մի:

Բայց մահ Սենեքերիմայ եղեւ այսպիսի պատճառաւ. զի յետ Մելիք-շահին ամենայն օք գլուխ ի վեր առեալ՝ եղեւ անճնիշխան, և զմիմեամբք եղեալ[4] ո՛ օք որ կարողանայր՝ աւերէր զերկիր

1. Անզաւակ ըլլալով անժառանգ պիտի մնային:
2. Սելճուկեան Թուրքաց:
3. Որ է գլխաւոր գաւառ Սիւնեաց, անոր համար և այդ թագաւորքն կոչուին Թագաւորք Բաղաց:
4. Ինչպէս նախընթաց Յօդուածին մէջ այլ ըսաւ Սարկաւագ Վարդապետան:

գերիմամբ և յաջողութեամբ: Սակս որոյ խանդացեալ... համայէլականացն՝ ընդ գեղեցիկ և մեծ թագաւորութիւնս Բազաց, զոր ինչ մեծ՝ հաւարէին ինքեանց. և ելեալ ամբոխն Պարտաւայ և Ղանձայ և Գանձակայ՝[1] բազում զօրօք գայ ի պատերազմ ընդ Սենեքերիմայ, ընդ որում էր Շիրակայ իշխանն Գրիգոր Ապիրատեան[2]: Իմացեալ զայն Սենեքերիմայ և ամբացուցեալ զամենայն աշխարհն յանուանիկ ամուրն. եկեալ ապա անիծեալ ամբոխն, և տեսաւ զի անհնարին էր ի մարդկանէ, յուզարկէ զԳրիգոր իշխանն Ապեղի, որ պատճառաւ ինչ կայր առ նմա, առ Սենեքերիմ արքայն, և ասէ. «Երգմամբ հաւանեցո՛ զնա գալ առ իս, և առնեմք ընդ միմեանս սէր; և մեծամեծ պարգեւօք արձակեմ զնա. ապա թէ ոչ հաւանեցուցանես, և զքոյդ գլուխ առնէն հատանեմ»: Գնացեալ ապա Գրիգորին այն զչար ճանապարհն, և մտեալ առ Սենեքերիմ և մեծամեծ երդմամբ հաւանեցուցանէ զնա գալ առ ամբոխն, որք և եկին ի միասին: Իսկ տեսեալ զնա չարաթոյն գազանին, և առեաց ուխտին, և յարձակեալ մամլուանօք ի վերայ՝ եապան զվագաւորն. և ինքն անդ գնաց յաշխարհ իւր:

Ահա այսպէս շինեաւ ծրագն քրիստոնէից, որ կայր մնացեալ յամուրն Բազաց: Զոր և եկեալ մեծամեծացն և որդեացն իւր՝ կոծ մեծ արարին ի վերայ. և բարձեալ տարան ի սուրբ ուխտն Վահևունս[3]. և անդ եղեւ[4] ի շիրմի՝ ընդ այլ թագաւորան: Եւ յետ նորա էառ զհերութիւն նորա որդի իւր Գրիգոր, նուազ և ընդ աղօտ թագաւորեալ: Բայց այս Սենեքերիմ և քոյրն իւր Շահանդուխտ բազումս արարին արդիւնս և շինուածս երեւելիս

1. Աղուանից երկրի գլխաւոր գաւառք և քաղաքք:
2. Անշուշտ Պահլաւունի, Գր. Մագիստրոսի ցեղէն:
3. Սիւնեաց թագաւորազանց գերեզմանատունն էր:
4. Թերեւս զրուելի էր եղեալ ի շիրմի:

ի վանս Յովհաննու[1]. նաեւ բազում պարգեւս և ժառանգութիւնս ընծայեցին ի սուրբ մայրաքաղքն[2] աթոռ ի Տարեւ:

Իբրեւ կատարեցաւ երանելի մեծապատիւն Սիւնեաց Տէր Յովհաննէս, ապա ատուածապատակ թագաւորն Սմբատ[3] ընտրէ այր մի պատշաճաւոր, վկայեալ յամենեցունց, զարգարեալ ամենայն առաքինութեամբ և լի գիտութեամբ Գրիգոր անուն, յուղարկէ առ կաթողիկոսն Հայոց յԱնի[4], և տայ ձեռնադրել զնա եպիսկոպոս Սիւնեաց: Որ եկեալ բազում՝ չանիւ, մեծամեծատակ առաքինութեամբ քաղաքավարէր ի մարմնի, տեւեալ զանձն օրինակ ամենայն բարեաց, տեւեալ ձիգ ժամանակաւք մինչեւ ամն յիսուն և ութ:

Սա արարեալ զարմանալի շինուածս յեպիսկոպոսարանին Տարեւ. զի կանգնեաց կամարս ի վերայ զրան վանացն որ հայէր ընդ արեւելս, և մերձ նմին տուն արքայէն[5]. և ի վերայ սոցա եկեղեցի մի գմբէթաւոր գեղեցկայարմար՝ յանուն Սրբուհւոյ Աստուածածնին: Եւ էր նա իբրեւ դիտանոց բարձր որ հայէր ի վերայ վանացն. և ի չորեսին կողմանն յօրինեաց գաւիթս. բայց յառաջի կողմն բարձրաբերձ սեամբք չինէր սրահս վայելուչս՝ իբր քաղցր հովանոց. և զրէ ինքեան արձան յիշատակի ի վերայ եկեղեցւոյն. և հաստատէ քառասուն մի՝ առ յամէ կատարել անխափան ի յիշատակ իւր:

Սա առնոյր և զՊողոտաբարն Նորքաց բաժինն[6]

1. Բազաց ամուր բերդին ատենն էր այս վանքս:
2. Այսինքն՝ մեծ վանքն աթոռ եպիսկոպոսին:
3. Նախորդն Գրիգոր թագաւորի:
4. Անուանեալ կաթողիկոս, մինչ ընդհանրական կաթողիկոսն Հայոց էր մեծ Վկայասէրն Գրիգոր:
5. Թերեւս ապագային, այս ինքն տափակ տանիքով:
6. Արցախ նահանգի Խաչէն գաւառին իշխող:

ի Գիճևիճ՝ որդւոյ Թադրակայ[1]. և հաստատեր նզովիւք ի սուրբ եկեղեցին։ Ի ձեռն սորա ասանդեաց երանելի և սուրբ թագուհին Շահանդուխտ և բազբեպաչա թագաւորն Սենեքերիմ եղբայր նորին, զԱրիման ասան որ է մերձ և սահմանակից սրբոյ և մեծի աթոռոյն Տաթեւոյ. և գրեն զվճիռ պայմանի ահագին և սոսկալի նզովիւք՝ ինքն իսկ թագաւորն իւրով ձեռամբն որ էր այսպէս. «Կամաւ կարող հզօրին Յիսուսի ես Սենեքերիմ՝ թագաւոր Հայոց, կացեալ ի Սիսական և Բազաց աշխարհիս, ընթերցայ զառաջին հայրապետացն և զիշխանացն հաստատագիծ նամակ. կամեցաք վերստին նորոգել և անգրբէն գարձուցանել. և գրեցաք զայս վճիռ պայմանի՝ իմ սրտի յօժարութեամբ և հրամանաւ բարեպաշտ և քրիստոսազգեաց քերցս իմոց, թագուհւոյս Շահանդխտոյ և սրբասնունդ սիրտրդիս կատայիս, որք լքին զերկրաւոր փառս աշխարհիս և զհետ երանեաւէտ ձայնին Քրիստոսի ընթացան ձգնազգեաց առաքինութեամբ։ Եւ եառ զԱրիման իւր ամենայն սահմանօք չորքանակի հողով և ջրով և արտավարօք և զամենայն որ ինչ իւրն էր, ի Տաթեւոյ սուրբ եկեղեցիքն, ի հայրապետանիստ մայրաքաղաքն, ի Սուրբ Աստուածածնի և ի Սուրբ Գրիգորն, ի հայրապետութեան Տեառն Գրիգորի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և իւրեանն արդիացելոյ Տեառն Յովհաննուի։ Եառ անհաչիւ, անհամմատ[2], առանց զոք զրկելոյ, առանց զուրաք յափշտակելոյ, առանց ումեք տրտնջելոյ. քանզի մեր սեփական (էր) և ոչ այլ ումեք՝ զոր ընծայեցի սուրբ ուխտիդ Տաթեւոյ, յաղագս փրկութեան հոգւոյ իմոյ և քաւութեան մեզաց իմոց և հարազատաց իմոց քերց, և արդեկաց իմոց կենաց և փրկութեան, Գրիգորոյ, Սմբատայ և Սիւնդայի և մօր իւրեանց և քեան։ Եւ կարգեցի քառասունք մի՝ որ

1. Բերդ մի ի Նարք կամ Նարիք վիճակի Բազաց։
2. Առանց հակառակութեան։

ամ յամէ կատարեն ի սուրբ եկեղեցիքն ի տէրունի քառասունքն, զքսան օր թագաւորին Գրիգորոյ՝ որդւոյ Աշոտոյ, և զքսան օրն՝ իմ մօրն Սոփեայ որչափ մեք կենդանի եմք, և յետ ելիցն մերոց՝ զքսան օրն իմ քուերն Շահանդխտոյ առնեն և զքսան օրն՝ ինձ Սենեքերիմայ»։

ՄԿԸ

ՍՈՎ ՅԱՆԻ ԵԻ ԳԹԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԻ ՄԻՈՅ

(ՎԱՐԴԱՆ)

Եղեւ ի պատճառս մարախոյ և երաշտոյ սով սաստիկ, և ի ՅԱՆի կարի իմն նեղութիւն մեծ. ուստի զմեռեալսն թաղել ոչ կարէին ի սովոյն, և ոչ օրինացն հաղորդել. որ և այր մի, ասեն, քաջութիւն ցուցեալ և սէր առ Աստուած՝ թաղեաց վեց հազար անձինս, որում անուն էր Բեհ։ Զայսպիսի աղէտս լուեալ այր մի մեծատուն ի Պարսս, և երամակ մի ուղտուց բարձեալ ցորենով՝ գայր ի ՅԱՆի, և ասէր, ոչ այլ ումեք տալ՝ բայց տղայոց։ Զոր լուեալ բերէին զբազումս՝ յորդառատ արտասուօք, և նա յագեցուցանէր և կերակրէր զնոսա. և ի սպառել ցորենոյն՝ ձայն արարեալ ծնողաց մանկանցն՝ զի եկեսցեն համբուրեսցին զուստերս և զդստերս իւրեանց։ Եւ իրրեւ կական բարձեալ մորմոքէին զրկախառնեալք, և ահա բարբառ քաղցր և բարի այրն բարբառեալ՝ ասաց. Առէք զտղայսդ ձեր և գնացէք ի տունս ձեր, փառաւորելով ըզտուողն բարեաց զԱստուած՝ ի մեծութեանն իւրում. զոր և արարինն իսկ։

ՍՈՎ Ի ՄԻՋԱԳԵՏՍ ԵՒ ԱՒԵՏԻՔ ՈՂՈՐՄԱԾ ՔԱՀԱՆԱՅ[1]

(Վ. ԱՐԴԱՆ)

Եղեւ սով սաստիկ ի Միջագետս, և քահանայ մի Աշետ անուն հայ ազգաւ՝ բարձեալ ցորեան՝ իշոց, տաներ ազալ ի Ջրազացն. և ի տեսլենէ տապալոցն ազէխարշեալ բաշխէր զամենայն՝ աղքատաց, և զչէն վաճառեալ նոյնպէս արար, և այլ ոչ դարձաւ ի տուն իւր. այլ զգեցեալ այծեայս շրջէր քարոզութեամբ ընդ քաղաքս և ընդ գեօղս քրիստոսաբար. զի ունէր բանս հանճարեղս և ետ նմա Տէր չնորհս նշանաց. և զղջացեալ ի բանս նորա՝ դառնային բազումք ի չարեաց, և խնամ ածէր որբոց և այրեաց, ընդով զկարիս նոցա իւրով միջնորդութեամբ՝ ի կարողացն: Եւ ել համբաւ զնըմանէ. և գային յարեւելից ի նա յոլովութիւնք ժողովոց. և եկն մինչեւ ի Մանծկերտ, և ել ընդ առաջ նորա Շահի Արմենն՝ մեծաւ հանդիսիւ, և խնդրեաց ի նմանէ աղօթս և եմոյծ պատուով ի քաղաքն: Եւ զի յանդիմանէր զպոռնիկ քահանայսն՝ քսեցին[2] զնա առ շահն[3], թէ լրտես է Հռոմ թագաւորին, և ետուն զնա քարկոծել. յորոյ վերայ տեսին լոյս երկնային՝ զերիս տիւս և զերիս գիշերս: Զոր տեսեալ շահն՝ աւաղեաց զմահ սրբոյն, և ետ հրաման պատուել զոսկերս նորա:

1. Յարմար համարեցայ վերադրեալ զեղեցիկ գործոյ նման մի այլ յարել նոյն հեղինակէն:
2. Ամբաստանեցին զրպարտութեամբ. ոմանք օրէն այլ կ'ըսուի վրան մուր քսել:
3. Սելճուկեան սուլտանաց յայնմըդն:

ՄԿԹ

ԵԼԵՆ ՖՌԱՆԳԱՑ· ԱՌԱՋԻՆ[1] ԽԱՉԱԿԻՐՔ

(Մ· ՈՒՌՀԱՅԵՑԻ· ՃԺ·)

Ի ժամանակիս (1096–7) եղեւ Ելեն Հռովմայեցւոց, և բացաւ դուռն Լատինացւոց ազգին. վասն զի սոքօք կամեցաւ Տէր պատերազմել ընդ տունն Պարսից. և դարձեալ եղեւ Տէր ի բարկութենէն իւրմէ, ըստ բանի Դաւթի մարգարէին, ըստ այնմ զոր ասաց· եթէ, «Զարթիր, ընդէր ննջես, Տէր· արի և մի մերժեր զմեզ խապաւ». և թէ, «Զարթեաւ որպէս ի քնոյ՝ Տէր, որպէս հզօր զի թափեսցէ զգինի իւր. և եհար յետս զթշնամիս իւր. Նախատինս յաւիտենից արար զնոսա»: Եւ ահա յայսմ ամի չարժեալ եղեւ ամենայն Իտալիա և Սպանիա մինչեւ ՅԱֆրիկէա խորին. և ազգն Ֆռանկաց զրոհեալ անթիւ և անհամար և ահագին բազմութեամբ և անհամար դասապետութեամբ՝ որպէս զմարախս որ ոչ թուի, և կամ որպէս զա-

1. Այսպէս կոչեն ժամանակագիրք մեր՝ Լատինաց կամ քրիստոնէից Եւրոպիոյ՝ խաչակրութեամբ դիմելն յարեւելս՝ յազատութիւն Երուսաղեմի կամ Սուրբ տեղեաց. Լատինք սովորաբար կոչեն (Passagium, փռ. Passage, Անգ.)՝ յորմէ և սմանք ի մերոցս՝ Բաստածն. սովորաբար կոչուի Croisade, Crociata. Այս պատմական կամ տիեզերական մեծ գործոյն (յորում և Հայք մասն ինչ ունեցեր են) առտյգ և մանրամասն գիտելիքն՝ ի հարկէ չի խնդրուիր մեր Ուռհայեցի պատմըչէն. սակայն բաւական ճշդութիւն և յարգուն՝ նա և յայս Եւրոպացւոց, որք օգտուած են իրմէ, և բոլոր գործոյն փռանկերէն թարգմանութիւնն (Տիւլորիէի) Գաղղիոյ ձեմարանն Խաչակրաց ամեն պատմչաց հետ տպագրած է չքեղութեամբ:

ւազ ծովու որ ոչ քննի մտաց. և ահաւոր մեծութեամբ և բարձրագահ իշխանութեամբ եղեալ գային իշխանքն աշխարհին Ֆռանկաց, և իւրաքանչիւր զօրօք գային յօգնութիւն քրիստոնէից, և առ ի փրկել յայլազգեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ, և ազատել ի Տաճկաց զսուրբ գերեզմանն աստուածընկալ. արք փառաւորք և թագաւորազունք, հաւատով և ամենայն աստուածպաշտութեամբ զարդարեալք. և էին անեալք ի գործս բարութեան: Որոց էին անուանքս այսոքիկ, կոնդափրէ[1] այր հզօր, որ էր յազգէ թագաւորացն Հռովմայեցւոց, և նորին եղբայրն Պաղտին: Այս կոնդոփրէ էր՝ որ ունէր զհետ իւր զթագն և զթուրն վեհապիանի[2] թագաւորին, որ կոտորեաց նովաւ զԵրուսաղէմ: Էր և մեծ կոմսն որ ասէին Պևմոնդի[3], և Տանգրիմ[4] քուրորդին նորա և կոմսն որ ասի Զնձիլ[5], այր աշարկու և փառաւոր, և Ռոշպերթ Նորմանդաց կոմսն[6], և միւս այլ Պաղտին[7]. գայր և յետոյ կոմսն որ ասի Ճօսլին[8], այր քաջ և հզօր:

Աւրդ, այսքան արք հզօրք և պատերազմողք գային սոքա ահագին բազմութեամբ՝ որպէս զաստեղս երկնից. գային եւս զհետ սոցա բազում եպիսկոպոսունք, քահանայք և սարկաւագունք. և մեծաւ աշխատութեամբ ճանապարհորդեալ ընդ հեռաձիգ աշխարհն Հռովմայեցւոց, և չարաչար նեզ-

1. Աշխարհահռչակ առաջնորդ Ա. Խաչակրացն էր Godefroy de Bouillon վեհապն, նոյնպէս հռչակեալ երջանկահիշատակ Գերասատեալ քերդուածով իտալացի Տասսոյ (Tasso) բանաստեղծի:
2. Այս աւանդութիւն է ռամկաց:
3. Bohemond prince d'Antioche.
4. Tancrède Նորմանդացի ի Սիկիլիոյ:
5. Saint-Gilles, comte de Toulouse.
6. Robert comte de Normandie.
7. Baudouin de Bourg, կոմս Եդեսիոյ:
8. Josselin de Courtenay.

զութեամբ անցանէին ընդ աշխարհն Ոռնգաց[1], ընդ նեղ և դժար կապանօն լերանց նոցա. և ժամանեալ հասանէին ընդ սահմանս աշխարհին Բուլղարաց, որ էր ընդ իշխանութեամբ Ալեքսիի Յունաց թագաւորին. և այսպիսի ճանապարհորդութեամբ հասանէին ի մեծն Կոստանդինուպոլիս:

Եւ լուեալ զգալն նոցա թագաւորն Ալեքսն՝ առաքէր զօրս ընդդէմ նոցա ի պատերազմ. և եղեւ ահագին կոտորած երկոցունց կողմանց, և արար Ֆռանկն փախստական զզօրսն Յունաց. և յայնմ աւուր եղեւ բազում արեանց հեղումն: Եւ այսպիսի օրինակաւ ընդ որ անցանէին՝ գային ամենայն աշխարհք ի վերայ նոցա ի պատերազմ, և նեղէին զնոսա բազում չարչարանօք: Եւ լուեալ զայս ամենայն թագաւորն Ալեքսն, և վերացոյց զսուրն, և ոչ ետ այլ պատերազմ ընդ նոսա: Եւ ամենայն բանակն առհասարակ եկեալ էջան ի դաւն Կոստանդինուպոլսի. և խնդրէին ընդ ծովն Ովկիանոս անցանել. և թագաւորն Ալեքսն արար սէր և միաբանութիւն ընդ ամենայն իշխանն Ֆռանկաց, և տարաւ զնոսա ի Սուրբ Սոփի, և ետ նոցա բազում տուրս ոսկւոյ և արծաթոյ. և նոքա երդուան նմա՝ զի զամենայն գաւառսն որ յառաջ լեալ էր Հռոմոյ՝ թափեն ի Պարսից և յԱրապակաց, եղիցին ազգին Հռոմոյ. և այսպիսի գաւանութեամբ խաչով և աւետարանով կապեցին զերդումն անխզանելի կապանօք: Եւ առեալ զօրս և իշխանս ի թագաւորէն՝ նաւէին ընդ մեծն Ովկիանոս[2]. և հասեալ բազմութեամբ բանակաւն ի քաղաքն որ կոչի Նիկիա, մօտ ի Յովկիանէ ծովն:

Եւ ամենայն զօրքն Պարսից ժողովեցան ի վերայ Ֆռանկաց, որ բանակեալ էին ի սահմանն յայն, և արարին պատերազմ ընդ զօրսն Ֆռանկաց. և յայնժամ զօրքն Ֆռանկաց յաղթեցին զօ-

1. Հունգարք, Մաճառք. Hongrois.
2. Միջերկրական ծովն՝ Ովկիանոս համարուած:

բացն Պարսից և արարին զնոսա փախստական. և յարձակեցան զհետ նոցա սրով, և սրեամբ լցին զերկիրն: Եւ պատերազմեալ ի վերայ քաղաքին Նիկիոյ՝ և սրով առին զքաղաքն. և կոտորեցին զամենայն անհաւատսն: Եւ յայնժամ գնացին ճիշկան[1] առ սուլտանն Խլիճ-Ասլան[2], յօրժամ պատերազմէր ի վերայ քաղաքին Մելտենոյ. և զայս ամենայն ազգ արարին նմա: Եւ նորա արարեալ ժողով անթիւ բազմութեամբ, և գայր ի վերայ Ցռանկ զօրացն, ի գաւառին Նիկիոյ. և արարին սաստիկ կոտորած յերկոցունց կողմանցն, և անխնայ քաջապէս յարձակեցան ի վերայ միմեանց, և գազանաբար բաղխէին զնակատ պատերազմացն. և ի փայլատակմանէ սաղաւարտացն և ի չաչել զրահացն և ի ճայթմանէ ազեղանցն՝ եղեն գումարեալք ամենայն զօրացն այլազգեաց[3]. վասն զի ի սաստկութենէ ձայնիցն դողայր երկիրն, և ի չաչել նետիցն՝ երիվարքն սարսեին: Իսկ որ արիականքն ընտիրքն էին՝ քաջքն ընդ քաջք ելանէին, և որպէս զկոբիւնս առիւծոց անխնայ կռիւէին զմիմեանս: Եւ էր օրն այն օր մեծ և աշագին առաջին պատերազմին. վասն զի վաթսուն բիւրով (600,000) պատերազմէր սուլտանն ընդ ազգն Ցռանկաց. և ի վերայ այսքան պատերազմաց՝ յաղթեալ զօրքն Ցռանկաց զօրացն Պարսից, և արարին զնոսա փախստականս՝ աշաւար և սաստիկ կոտորածով, որ և ծածկեալ եղեւ դաշտն դիակամբ մեռելոք. և առին բիւրս բիւրոց ասար և գերութիւն, և թիւ ոչ գոյր ոսկւոյ և արծաթոյ զոր առին ի Պարսից: Եւ զկնի երից աւուրց դարձեալ սուլտանն՝ և արար երկրորդ ժողով, և աշագին բազմութեամբ գայր ի վերայ Ցռանկին զօրացն. և արարին պատերազմ աշաւար և սաստիկ քան զառաջինն. և զօրքն Ցռանկաց զնոյն բարկութիւն արկանէին ի վերայ զօրացն Պարսից, և սաստիկ կոտորածով և գերութեամբ հանին զնոսա յայնմ աշխարհէն. և եւս առն զօրքն Ցռանկաց զՆիկիա ի ձեռն Հոռոմոց թագաւորին Ալեքսին:

1. Գայժ, սեւ լուր տալով:
2. Իկոնիոյ (Ղոնիայի) սուլտանն:
3. Սխալ ինչ կայ ի շարաբանութեանն:

ՄՀ

ԾԱԳՈՒՄՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԵՒ ԵՐԿԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՑ

(ԿԻՐԱԿՈՍ[1].)

(Յետ սպանման Գագկայ ի Ցունաց) Զմանուկն[2] այն որ էր ընդ նմա, գնեաց ումն վաճառական Հայ, և արար իւր փեսայ: Եւ եղեւ յետ աւուրց իրրեւ զարգացաւ մանուկն և եղեւ այր, գնաց ի սահմանս Կիլիկիոյ արամբ միով որպէս կաքաւս. և էր անդ բերդ մի՝ զոր Բարձրբերդ կոչեն. և էր անդ եպիսկոպոս մի Հոռոմ. և եղեւ ծանօթութիւն առնն և եպիսկոպոսին, և եղեն միմեանց սիրելիք, և զրազում աւուրս ուտէին և ըմպէին ի միասին. և այրն ոչ հանէր ի մտաց զիրսն զոր գործեցին Հոռոմք ընդ թագաւորն Գագիկ՝ ընդ ազգական նորա: Եւ եղեւ օր մի զի ամենայն պաշտօնեայքն եպիսկոպոսին ելեալ էին արտաքս ի բերդէն՝ ի

1. Կիրակոս կ'երեւի թէ Ռուբինեանց ծագման վրայ սոյգ տեղեկութիւն չէ ունեցեր, և չիմանէ զԳագիկ թագաւոր Բագրատունեաց՝ կարսի Գագիկ թագաւորին հետ: Տես յաջորդ յօդուածը:
2. Որ էր Ռուբէն Ա: Իսկ բերդն իր ժառանգնեբուն ամենէն նշանաւոր բերդից մէկն եղաւ, զոր Ա-բաթայիք այլ հայերէն անունը ծամոկելով՝ Պերպերդ կոչէին:

պէտս ինչ գործոյ իւրեանց. և էր եպիսկոպոսն միայն և մանուկ մի ընդ նմա. եկն այրն որսորդ հուպ առ բերդն՝ որսալ կաքաւս. և տեսեալ զնա եպիսկոպոսին ձայնեաց ի պարսպէն գալ առ նա, և ի միասին ճաշակել. և նա ոչ հաւանէր. և էջ առ նա եպիսկոպոսն առանց պաշտօնէի: Իբրեւ ետես այրն թէ միայն գայ եպիսկոպոսն և ծանեաւ թէ ոչ ոք կայ ի բերդն, ասէ ցայրն որ ընդ նմա էր. Այսօր ի դէպ է առնուլ զվրէժ արեան սպանման թագաւորին մերոյ՝ զոր գործեցին Հոռոմք. տես, գուցէ առաքեսցէ զքեզ եպիսկոպոսն ի բերդէն, չանասղիր առնուլ զնա, և ինձ իմացուսցես ի ձեռն նշանի ինչ, զի ես սպանից զեպիսկոպոսն: Եւ իբրեւ եկն եպիսկոպոսն՝ մտին ի ճաշել. և ի պակասել գինւոյն՝ ասէ եպիսկոպոսն ցսպասաւորն. Եր՛թ ի բերդ անդր, և բեր մեզ անտի գինի, զի ուրախասցուք ի միասին. և գնաց այրն և ասաց տհրաման եպիսկոպոսին՝ սպասաւորի նորա: Եւ իբրեւ նա խոնարհեցաւ ի կարաս անդր զի հանցէ գինի, նա կալեալ զտից նորա և դարձուցեալ ի վերայ գլխոյն՝ խեղդեաց զնա ի գինի անդր: Եւ ելեալ ի պարիսպն՝ նշանակեաց տէառն իւրում, եթէ առի զբերդս. և սա առաքն ի ներքոյ խեղդեաց զեպիսկոպոսն, և ինքն մտեալ ի բերդ անդր բռնացաւ[1]: Եւ առ սակաւ սակաւ աճեցոյց զկալւածս իւր, զոր բռնութեամբ և զոր պատրանօք. մինչեւ տիրեցին նա և որդիքն իւր և թոռունքն՝ աշխարհին Կիլիկեցւոց, քաղաքաց և գաւառաց: Սա է նախնի թագաւորին Լեւոնի՝ որ ընդարձակեաց զսահմանս իւր քաջութեամբ:

1. Տարբեր կերպով պատմէ Ուռհայեցին:

ՄԱՍ.

ՆՈՑՆ ԲԱՆ ԸՍՏ ՅԻՇԱՏԱԿԱԳՐԻ[1]

Յորժամ յաղախնածին զօրացն սրոյ և ի պարսկական խակամիտ նենգութենէ՝ սպառեցաւ թագաւորութիւնն Հայոց ի տանէն Ռբեւելից, և բարձաւ բազուկ տէրութեան նոցին ի կողմանցն հիւսիսոյ, յայնժամ սահեալք իշխանք Հայոց և որք ընդ իշխանութեամբ նոցին՝ զետեղեալ պանդխտեցան ի տարրին կողմանն Գամրաց և Պոնտոսի. որք և անդանօր նեղեալք և նհանգեալք ի նենգաժէտ յազգէն Յունաց, խոյս տուեալ եկին ի սահմանս Կեսարիոյ Կապադովկացւոց[2]: Որոյ տիրեալ քաղութեամբ արքայն մեծ Գագիկ, և զբազումս ի Յունաց սատակեալ, ընդ որս և զմետրապոլիտ քաղաքին զՄարկոս, որ եղեռնական բարուք զանուն ազգին Հայոց՝ չանն իւրոյ մակագրեալ՝ Ռբևելն անուն վերածայնէր: Ռբքայն բարեչուք զնա և զչունն իւր ի միւսմ քրձի ածեալ՝ չար հարուածովք գանից, ... Վասն որոյ և յընդհանուր Յունաց բնակչաց աշխարհին որսացեալ եղեւ, որով և սպասնաւ արդար արքայն յամպարիշտ որդւոցն Մաւոտպէի, ի բերդն կնտռասկաւի[3]: Եւ յայնմ պատճառէ ցրուեցան պայազատքն Հայոց և այլ եւս խառնազանգ բազմութիւնքն ընդ բազում տեղիս և գաւառս պանդխտացեալք:

1. Յիշատակարան ձաշոց զրոց, յամին (1286):
2. Վերոյգրելոյն Գամիրք ըստն, յանուն Գոմերայ:
3. Ըստ ոմանց նոյն է Կիւզիստռա, Küçüstra, կոչուածն. բայց հմուտ Կիլիկեցի տարեգիր մի կ'իմացընէ՝ որ այժմու թուրքաց Տեվելի Գարահիսար կոչած բերդաւանն է, Արգեոս լերին արեւմտեան հարաւային կողմն. իսկ Կիւբիւստռա՝ ըստ այժմու քննողաց՝ Առակլի, Heraclea Cybistra կոչուածն է:

Ընդ որս և մեծափառ անն իշխան իշխանաց ի սեռէ թագաւորութեան, արեանառու մեծին Գագկայ, Ռուբէն անուն, յինքն յարեալ զյոլովս ի զօրացն, խաղացեալ գայ և առնու զամրոցն զկաւսիտառայ[1]. յորում և դնէ ինքեան տուն իշխանութեան, և տիրէ լեռնակողմանցն Փոխւգիոյ. և բարեպաշտութեան կենօք կացեալ՝ փոխեցաւ առ Քրիստոս: Յաջորդեալ զփառս նորա որդի նորին Կոստանդին, այր քաջ և արդարադործ, որ և ի բազմաց սիրեցեալ եղեւ բնակչաց աշխարհին Կիլիկիոյ. որոյ ձեռնտուութեամբ ելեալ ի ծովակողմն Տօրոսի, տիրեաց նահանգին այնորիկ. նախ առեալ զդղեակն զՎահկայ[2], և ապա անտի յառաջ յոլովից տիրեալ տեղեաց՝ գաշտաց և ամրոցաց, զյաջորդսն ի Ցունաց հարեալ: Այլ և փառագ զօրուն՝ որ յԱնտիոք, նիզակակից եղեալ ընդդէմ Իսմայէլեան զօրուն, և քաջութիւնս զարմանալիս անդանօր կատարեալ, հիացոյց զարիականաց գունդն[3]. յորոց և կամուրջեան անուն առացեալ՝ Մարգիզ գնա վերակոչէին: Եւ այնպիսի յաղթական կենօք կեցեալ և ծնեալ երկու որդիս, զԹորոս և զԼեւոն, ինքն փոխեցաւ առ Քրիստոս, և թաղեցաւ ի տէրբ ուխտն կաստաղոնի[4], առեալ զիշխանութիւն իւր որդւոյ իւրոյ Թորոսի, այն որ ի Ցունաց պատուեալ Պռուաս–Միհատիոս կոչեցաւ: Որ և իսկոյն ընդ

1. Այս այլ նոյն համարուի ընդ Կոպիտառայ: Տես Սիսուան, երես 169:

2. Ինչուան հիմայ ծանօթ է այս տեղս ի հիւսակողմն Կիլիկիոյ: Տես Սիսուան, երես 161:

3. Հայք ժամանակին Արիական ազգ անուանէին զՖռանգս, զոյգ և ըստ բառին նշանակութեան, ազատ քաջ, կարիճ:

4. Տես ի Սիսուան երես, 163. Մատթ. Ուռհայեցի փոխան Կաստաղոնի վահկայի համար գրէ, « Մերձ ի » յամուր բերդն (վերոյ գրեալ ծան. 3) որ ասի Վահ- » կայ, ի Տօրոս լեառն »:

տիրելն՝ խնդրեաց զվրէժ արեանն Գագկայ՝ յորդւոցն Մանգալէի. և առեալ զամրոցն յոլով գանձիւք, և գնասին չարամահ սատակեալ, բերեալ ընդ ինքեան զպատկեր Տիրամօրն՝ եդ ի դղեակն Ալաիզաբայ[1], զոր իւր առեալ էր ի Ցունաց. յորում և չինեաց գՀոգևակաւոր տաճարն[2], և եդ անդ զպատկերն, որպէս և գրեալ է յարձանի ի չինուածս տաճարին. այլ և բազում եկեղեցիս և ժողովարանս միանձանց չինեալ, և տատատուր պարգեւօք կարգաւորեալ ճոխացոյց, միանգամայն և հիւրանոցս[3] բազում, և ամենայն ազգաց քրիստոնէից տեղի և տուն պատրաստեալ, յարգեցաւ բարձրացաւ և հռչակեցաւ յամենայն լեզուս. որք

1. Ա.յժմեան կիսաքանդ դղեակն անմատչելի՝ մեծին Լեւոնի (Ա.ռաջին թագաւորի) չինածն է, առարաքրեալ խրոխտ արձանագրութեամբ և թուականաւ 1187 տարւոյն:

ՅԱՄԻ ԱԼՋԵՐՈՐԴԻ ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ ԹԱԻԱՐԵՑԱԻ ԱՐԵՒԱԿՆ ՄԻՆՉԵՒ ԱՍՏԵԼՔ ԵՐԵԻՑԱՆ. ԵԻ ԷԱՒ ԹՈՒՐՔՆ ՉՍՈՒԻՐԲ ՔԱՂԱՔՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ. ՅԱՅՆՄ ԱՄԻ ՄԵԹԱԻ ՌՈՒԲԷՆ ՍՏԵՓԱՆԷԻ ՈՐԴԻՆ ԵԻ ՆՈՏԱԻ ՅԱԹՈՌ ՆՈՐԻՆ ԲԱՐԵՊԱՇՏՆ ԼԵՒՈՆ. ՈՒՆԵԼՈՎ ՉԿԻԼԻԿԻԱ ՏՈՐՈՍ ԼԵՐԱՄԲ ԵԻ ՍԵԱԻ ԼԵՐԱՄԲ ԾՈՎԵՉԵՐՆ ՄԻՆՉԵՒ ՅՕՏԱԼԻԱ. ԵԻ ՅԵՐԿՈՐԴ ԱՄԻ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՑ ՍԿՍԱԻ ՇԻՆԵԼ, ՉԿԱՑՍ ՈՐ Ի ՄԱՅՐ ՔԱՂԱՔԱՑՆ ԱՆԱՒԱՐՉԱ. ՁԵՂՔԵԱՑ ԹՍՏԱԴՈՑՆՍ ԵՐԿԱԹԵԱԻՔ ՉԱՊԱՌԱՃՍ ԵԻ ՀԱՍՏԱՏԻՄՆ ՄԵՆԱՄԵՆԻ ՎԻՄԱԻՔ ԿԱՆԳՆԵԱՑ ՉՊԱՐԻՍՊՍ ԵԻ ՀԱՍՏԱՏԵԱՑ ՏԱՐԲ ԵՐԿԱԹՈՎ ԵԻ ԿԱՊԱՐԱԻ. ԵԻ Ի ՄԻ ԱՄԻ ԿԱՏԱՐԵՑԱԻ.

2. Արձանագիր ձեռակերտ տաճարին Թորոսի՝ որ Թէոդոս կոչէ զինքն, եթէ ուղիղ կարդացաւեր է, մատամբ աւրուած է, նոյն և Թուականն:

3. Ոչ միայն հիւրոց տեղ և պանդոկ՝ այլ և աղքատանոց և հիւանդանոց նշանակէ Հիւրանոցն:

զԿիլիկիա անուն լքեալ՝ Թորոսի երկիր զաչխարհն նորին վերաձայնէին: Եւ նա բարիոք վարուք կենցաղավարեալ հանգեաւ ի Քրիստոս, և թաղեցաւ ի սուրբ ուխտն Դրազարին[1]. Թողեալ իւր որդի մի, որ նենգեալ սպանմամբ յամպարշտաց ոմանց, վասն որոյ ընկալաւ զիշխանութիւն մեծին Թորոսի եղբայր նորին Լեւոն, որ և ծնեալ երիս որդիս, զԹորոս, զՄուեֆաճէ, և՝ ի հարճէ՝ զոմն Ռուբէն անուն:

Այս Լեւոն տիրեալ Մաւևատիոյ[2] և Տարսոնի և ամենայն սոցին նահանգի, և սկսեալ Ֆռանգաց ի գործ պատերազմի, քաջութեան անուն ըստացաւ, և կացեալ յիշխանութեան կարզագոյն կենօք և առաքինի վարուք. մինչեւ եկն թագաւորն Յունաց փեռիեռօժէն[3] ի Կիլիկիա, և պատրանօք կոչեալ զԼեւոն՝ ըմբռնեաց ի կապանս, երկու որդւովքն՝ Թորոսիւ և Ռուբենաւ, ոչ դիպեալ անդ Մլեհին և Մաճիանէի, զի կային յՈւռհա առ կոմս նորին[4], որ էր քեռի ինքեանց: Առեալ փերիեռօժէն զԼեւոն որդւովքն՝ տարաւ ի Կոստանդինուպոլիս և արկ ի բանտ. յորում տեղոջ զՈւռբէն՝ վասն անհնարին քաջութեանն կուրացուցին՝ կուրացեալ նախանձով ազգն Յունաց. և մեծն

1. Երկու երեք դար թէ իշխանազանց և թէ մեծատոհմեան եկեղեցականաց գերեզմանատեղի եղաւ, իբրեւ Saint-Denis Բարիզու, այս Կիլիկիոյ ամենէն նշանաւոր վանքն: Անուանը նմանութեամբ Փռանկք ժամանակին Trois-Arcs կոչած և թարգմանած են:

2. Հինքն կոչէին Մոպսուեստիա, ռամկօրէն կոչուի Մսիս:

3. Յովհաննէս Կոմնենոս Բ, զոր չատ հեղ մեր պատմիչք կիւ Ժան անուանեն, իսկ Պերիերօժէն նշանակէ Միրաւաճիլի, յորմէ և Հայք սովորեցան երբեմն նոյնպէս անուանել իրենց արքայազունքը:

4. Կոմսն էր՝ Baudouin de Bourg, ըստ Հայոց՝ Պաղտին Տ. Պօրկ, ըստ Ֆռանկ. Ուռհայեցւոյ, որոյ քրոջ անուն՝ հնոջ Լեւոնի՝ չէ յիշուած ի մերոց:

Լեւոն և որդի նորա Թորոս մնացին անդանօր ի բանտի. և իշխանութիւն Հայոց բարձաւ ի Կիլիկիոյ, տիրելով վերստին Յունաց: Յետ ժամանակաց ինչ լինելոյ ի բանտի, եռաց երազ որդի նորա Թորոս և պատմեաց հօր իւրում. Թէ, Տեսի՛ յանուրջս, զի այր ոմն տայր յիս նկանակ մի հացի և ձուկն ի վերայ, և ես առի, և քեզ ոչ եռու ի նմանէ. և հայրն խնդացեալ ելոյծ զտեսիլն որդւոյն. Թէ, Ունիս վերստին տիրել Կիլիկիոյ, զոր նախնիքն մեր կալան քաջութեամբ. այլ և ընդարձակեացես զտէրութիւն քո մինչեւ ի ծով, զոր ձուկն նչանակեաց, սակայն ես յայն ոչ ժամանեմ: Որ և եղեւ իսկ, զի մեռաւ մեծն Լեւոն ի Կոստանդնուպոլիս:

Եւ մեծն Թորոս գտեալ օգնութիւն յԱստուծոյ, և ի դիպող ժամու վերստին եկն ի Կիլիկիա. և ձեռնտուութեամբ լեռնակողմանց Տօրոսի ապինա Հայոց, որ մնացեալ էին անդանօր, տիրեաց նախ Վահկային և ամենայն փռիւգիոյ. և յետ սակաւուց Ալեւարգաբայ և ամենայն դաշտակողմանն: Զորոյ դիեղանակ գալստեանն ի Կոստանդնուպոլիս և ըզտիրելոյն Կիլիկեայ՝ այլ և այլ օրինակաւ պատմեն գիրք. բայց որպէս և է, գթութեամբն Աստուծոյ և օգնականութեամբն ազատեալ ի բանտէ, վերըստին տիրեաց իշխանութեան նախնեաց իւրոց, զոր յափշտակեալ էր Յունաց. և եւս ընդարձակեալ զբազուկ տէրութեան իւրոյ՝ գնաց ի Մաւռեատիա և առ գնաւ: Եւ մինչ կայր նա յանհոգս՝ տուկն[1] յունական ազգին, որ էր ի կայսերէ կարգեալ, ժողովեալ զգօրս իւր եւս և զՀայիգազունան, զնաթանիելեանս[2] զտեարան Ասկուռաայ[3], և զՀերոռմ տէր

1. Ախինքն Թուքան:

2. Մի ի զլխաւորս բերդօրէից Լեռնային Կիլիկիոյ, զոր Նաթանիայէլեան կոչուած տոհմ մի Հայոց՝ Հեթմեանց հետ յարեւելից եկած՝ ընդունեցաւ ի Յունաց:

3. Վենեակեցի հին ճամբորդ մի Assers գրած է այդ անունը:

Լաւերուհին. որք և նոքա յարեւելից ի սրոյն Իսմայելացւոց խոյս տուեալ եկին և կալան զկողմանսդ նախասացեալ, և մտին ընդ հնազանդութեամբ կայսերն Յունաց. վասն որոյ և ընդ նոցին զօրաց և զօրապետի եկին ի վերայ Թորոսի ի Մաժեսիա. և նա յարուցեալ սակաւուք արամբք անդէն և անպատրաստ ի վերայ անկաւ բիւրական զօրացն յեզակարծ ժամու. զՅոյնան եսպան և զՀայկազունն ձերբակալ արարեալ կալաւ, և յետոյ ազատեաց: Եւ այսպէս քաջացեալ էառ զՏարսոն, և զյոլով մասն Սաւխիոյ[1]: Զորոյ քաջութեան համբաւ լուեալ կայսրն Լիմնաւոհէ որդին Փեւփեւոժէնին, մխիթարել իբրեւ զառիւծ՝ եկն զօրօք բազմօք ի Կիլիկիա՝ ըմբռնել զԹորոս. և պաշարեալ զնա ի դղեակն Բարձրբերդ կոչեցեալ: Յարձակեալ ապա քաջն Թորոս ի վերայ ժողովոյն Յունաց, զբազումս եսպան, և զյոլով սեւաստիանոսս գերի տարեալ ի դղեակն, վաճառեաց ընդ ոսկւով՝ կայսերն Լիմնաւէլի, և զգանձն բաչխեաց իւրոց հետեւակաց զօրուն: Ընդ որոյ քաջութիւնն և առաքամտութիւնն զարմացեալ՝ կոչեաց զնա իւր յորդեգրութիւն, և եառ զԿիլիկիա ձեռնագրով և ոսկի վոռոյ[2] Թորոսի, և այլ գանձս բազումս, և ինքն գնաց ի Կոստանդնուպոլիս: Եւ վերոմին լուեալ զհամբաւ բարութեան և զքաջութեան մեծին Թորոսի՝ կայսրն Լիմնաւուէլ, և ոչ կարացեալ տանել նախանձու, սկսաւ կաշառօք զրգռել զՄլխիճ–Սլան սուլտանն Իկոնիոյ՝ ի վերայ Թորոսի. որ և եկեալ բազում զօրօք ի Կիլիկիա՝ պաշարեաց զԹիլի[3] աւան, և ի Տեառնէ պատուհասեալ ախ-

1. Խաւերիա, Փոքր Ասիոյ աշխարհաց մէկն, Կիլիկիոյ արեւմտեան հիւսիսակողմն:
2. Ոսկի կնքով հրովարտակ, Bulle.
3. Երբեմն Թիլի աւան կոչուի, երբեմն Թիլ Համտրնոյ, ըստ Աբրաքաց Թիլ–Հաւնտռն, Կիլիկիոյ արեւելեան կողմն, Ասորւոց սահմանակից:

տիւ և ցաւօք, զորոց զերիվարան չհնաձանձ սպառեաց: Սլլ և մեծն Թորոս ապաստակեալ զաշխարհն Իկոնիոյ աւերեաց, և զառ և զաւար էած ի Կիլիկիա. վասն որոյ՝ յայնմանէ Խլիճ–Սլան և ի հարուածոցն Սատւծոյ նեղեալ, և այլ ոչ հրապուրեցաւ ի բանսն Լիմնաւուէլի:

Բայց իբրեւ եկն Թորոս ի Կոստանդնուպոլսէ ի Կիլիկիա, լուեալ եղբօր նորա Ստեփանէի՝ եկն առ նա, բայց Մլեհն մնաց առ Նուռբատին սուլտանն Հալպայ. և Ստեփանէ ձեռնտուութեամբ եղբօր իւրոյ գնաց ի Մեաւ ղեառն[1] և տիրեաց ամենայն կողմանցն այնոցիկ. այլ և կալաւ զԳերմանիկի[2] և զՊեհեսեի. և դաւեալ ի Յունացն՝ սպանաւ յեռանդան կատապի, և թաղեցաւ ի սուրբ ուխտն ՅԱրքայկաղնիի[3]. Թողեալ իւր երկու որդի, զՀոռբեն և զԼեւոն, որ և յետոյ թագաւորեաց:

Սլլ մեծն Թորոս տիրեալ քաջութեամբ Կիլիկիոյ և Սաւրիոյ, վարեր զիշխանութիւնն ըստ հաճոյիցն Սատւծոյ. զի էր այր բարեպաշտ և ողորմած, մեծախորհուրդ և առատաձիա, վարժեալ հին և նոր օրինօք Սատւծոյ, տեղեակ գոլով և ամենայն իմաստասիրական արհեստից. զորմէ ասեն հոգի մարգարէութեան ունել, որ և զբազում դժուարալոյծ բանս մեկնեալ, զոր գտանի այժմ առ մեզ[4]: Կեցեալ սա այսպիսի բարեզարդ կենօք, փոխեցաւ յաշխարհն կենդանեաց. և հանգուցեալ եղաւ ի դամբարանի, ի հռչակաւոր անապատն սուրբ՝ ի Դրազարկն. և զերկիր իշխանութեան իւրոյ և զմատաղ որդին իւր վստահացաւ յաներկն

1. Մլէքերկրական ծովու մօտ Տօրոս լերանց մասն:
2. Որ է Մարաշ քաղաք՝ իր գաւառովն:
3. Մի ի մեծագոյն և եպիսկոպոսանիստ վանաց Կիլիկիոյ:
4. Ափսո՜ս որ մեզի չեն հասած:

իւր Թոռնաց անուն իշխան մեծ, զոր և Պայղ[1] իսկ եդ Հայոց ցեղ իւր։

Այլ Մլեհն լուեալ զմահ եղբօր իւրոյ զմեծին Թորոսի, էառ զոր բազում ի Նուրատին ուլատանէն, և եկն առնուլ զտէրութիւնն ի վերայ Հայոց. և բազում չար հասուցեալ աշխարհիս Կիլիկեցւոց, յորմէ նեղեալք բնակիչք և իշխանք աշխարհիս, կամաք ձեռնտու եղեն նմա տիրել ի վերայ ինքեանց։ Ուստի ընդ գալն նորա՝ Թումանն փախչէր յԱնտիոք՝ ուստի և եկեալն իսկ էր, և զորգի Թորոսին ամպարիշտք ոմանք կալեալ սպանին։ Եւ Մլեհն տիրեաց որոց ցանկայր անձն նորա. սակայն վասն խստասրտութեանն ոչ կարացեալ յերկարել, վազվազակի սպանաւ ի զօրաց իւրոց, ի քաղաքն Սիս[2], և թաղեցաւ ի վանքն Մեծ-Քար կոչեցեալ, զոր իւր իսկ շինեալ էր։ Եւ զօրք աշխարհին առաքեալ բերին զորդիսն Սահֆանէի, որ անանէին առ քեռին իւրեանց Բակուրան՝ ի Տարսոն, և կացուցին իշխան և պարոն՝ զՌուբէն զորգի Սահֆանէի. որ եղեւ այր աշխարհաշէն առատաձիտ և բարեգործ, որոյ ել համբաւ նորա ընդ ամենայն աշխարհ. վասն որոյ Հռովմայեցիքն զնա պատուեալ՝ յղզէ թագաւորութեանն կին եառն նմա[3], յորմէ ծնաւ երկուս զաւերս։ Սակայն ի տերանց Լամբրունի եղեւ դաւ նմա, զի սպարել[4]

1. Խնամակալքն տղայհասակ ժառանգից տէրութեան՝ այսպէս կոչուէին լատին կամ փռանկ բառիւ։

2. Առաջին անգամ յիշուի քաղաքս ի պատմութեան Ռուբինեանց, որոց յետոյ եղաւ մայրաքաղաք հռչակաւոր. և մօտիկ Մեծքար վանքն այլ՝ սիմոն եպիսկոպոսի, քարաժայռից մէջ շինուած ըստ լով՝ ժամանակակից Լամբրոն այլ խորհրդոց քար կոչած են զայն, Petra concava.

3. Զապել, Isabelle, զուսար Հըմֆըրի՝ Humfery, տիրոջ Քարաբի, որ է զաւառ և քաղաք Ասորւոց Ժողեղբքը, մօտ յԵգիպտոս։

4. Թուրք բառ. պահարել նշանակէ։

էր Ռուբէն զԼամբրուն, և նոքա նեղեալ յղեցին առ բրինձն Անտիոքու, զի ելս հնարեսցէ իրացն. իսկ բրինձն խաբանօք ի ճաշ կոչեալ զՌուբէն՝ արգել զնա յԱնտիոք, վստահանալով՝ թէ կարասցէ այնու զԿիլիկիա առնուլ։ Այլ Ռուբէն յղեաց առ եղբայր իւր Լեւոն՝ նստել յաթոռ պարոնութեան և պահել զերկիրն, և պնդել զզօր բերդին Լամբրունի. և Լեւոն և իշխանքն այսպէս արարին։ Իսկ բրինձն իբրեւ եառս եթէ ոչինչ չահի այնու, ապա անկաւ ի բանս վաճառելոյ. զոր հաւանեալ Պարոն Լեւոն և իշխանքն՝ եառն գնձ և երկիր, և թափեցին զՌուբէն. որ եկեալ և վերատին չինքն առեալ զպարոնութիւնն, կեցեալ աւուրս ինչ բարիոք կենօք, և ի վախճան մահու հասեալ՝ խրատեաց զեղբայրն իւր բազում խնամատութեամբ և բարութեան խրատով. թողեալ ի նա զիշխանութիւնն և զդստերս իւր, ինքն հանգեաւ ի Քրիստոս, և կրօնաւորեալ թաղեցաւ ի Դրազարկն։

ՄՀԲ

ԳՐԻԳՈՐ (Բ) ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԿԱՅԱՍԷՐ (ՄԵԾ)[1]

Սնեալ և վարժեալ ի մանկական տիոց ուսմամբ աստուածային գրոց և զարդարեալ ամենայն բարութեամբ. որոյ հասեալ ի հայրենին իշխանութեան աստիճան՝[2] գեղեցիկ և պարկեշտ քաղաքա-

1. Իր եղբօրորդին և յաջորդն եւս վկայից վարքեր հաւաքել առեալ՝ իրմէ որոշուելու համար Փոքր վկայասէր կոչուած է։ Հեղինակ քանիս է գրող վարուց Ներս Շնորհալւոյ (տես Յօդուած 287). որ գրեթէ այս Սրբոյս վկայաբանութեամբ ստանաւոր գրածը՝ արձակ փոխեր է։

2. Իբրեւ անդրանիկ որդի Գր. Մագիստրոսի՝ ժա-

վարութեամբ զարդարէր զանձն: Այսպ զմտաւ ածէր զտիրականն հրաման որ ասէ, թէ, «Որ ոչ առնու զխաչ իւր և ուրացի զանձն և եկեսցէ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել». և վազվազակի ի բաց մերկանայր զաշխարհական ձեւ, և լուծանէր զիշխանականն կամար, և հրաժարեալ յիւրայոցն՝ հետեւէր ի միայնաւանս, զգեցեալ զխոնարհութիւն. և հնազանդեալ անդրաղական կենաց՝ ձգներ պահօք ի տուէ և ի գիշերի. հանգոյն մեծին Յովհաննու, և աստուածաշունչ տառիւ միշտ ընթերցմամբ՝ կերակրէր զբանական հոգին: Այլ քանզի ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին չինեալ իցէ. ընդ այն ժամանակս բարձեալ լինէին հովուապետքն Հայոց՝ յաշխարհէ, և պակասեալ տունն Տեառն Պետրոսի[1] յարժանաւոր ժառանգաւորէ՝ որպէս ծերացեալն Հեղեայ, և մնայր տունն թորգոմեան զեւթն ամ առանց հայրապետի: Քանզի աշխարհս՝ ընդ այն ժամանակս անկեալ էր ի ձեռս այլազգեաց, և աթոռ կաթողիկոսութեանն վտարեալ ի Սերաստիա, և այն ընդ իշխանութեամբ Հոռոմոց. և վասն այնորիկ թագաւորք Յունաց ոչ տային թոյլ դնել զոք կաթողիկոս, սակս անառաջնորդ մնալոյ ազգիս մերոյ, և այնր ազատաւ չինքեանս զառնալոյ: Յայնժամ արքայն Հայոց Գագիկ[2] մեծաւ չանիւ և բազում աշխատութեամբ գտուն գործեալ՝ առաքէր առ թագաւորն Յունաց մեծաւ ծախիւք. և զամուրն զկարս այսմ խնդրելոյ փոխանակեալ՝ տայր ի ձեռս Հոռոմոց, և առնոյր հրաման ի թագաւորէն՝ ոսկի մատանեաւ կնքեալ, նստուցանել զո և կամեցին յաթոռ հայրապետութեանն Հայոց: Այսպ թագաւորն Հայոց Գագիկ ժողովէր զհարս Հայոց առ

ռանգ էր իր հօր մեծագոյն պատուոյ աստիճանի և ընչից:

1. Պետրոսի, որ վախճանեցաւ ի 1058:
2. Թագաւորիկ թագաւորն Վանանդայ կամ Կարսի:

հասարակ. և միաբան համակամութեամբ գտեալ զարժանաւոր խնդրոյն, որպէս ի վերուստ ակնարկութեամբ Հոգւոյն Սրբոյ յայտնեալ զանձն ծածկեալ յագարակի, և ամենեցուն համաձայնութեամբ յառաջ կոչեն զվաճառ որդի Գրիգորի մագիստրոսի՝ զորմէ վերագոյն ասացաք. որոյ ծանուցեալ՝ հրաժարէր ի պատուոյն, անարժան վարկանելով զինքն մեծի կոչմանն, և Աստուծոյ և մարդկան միջնորդ լինելոյն: Որոյ ամենեցուն բանագատեալ՝ կոչեն զնա յանուն նախնոյն իւրոյ Սրբոյն Գրիգորի՝ Գրիգորիս. և արժանաւոր ձեռնադրութեամբ և հոգեւոր օծմամբ նստուցանեն յաթոռ կաթողիկոսութեան Հայոց և Թորգոմայ: Որ վասն հաստատեալ և Անտիոքոյն ընտրութեան[1] համեմատ՝ հաստատեաց զհիմունս եկեղեցւոյ Հայաստանեայց, և վերստին լուսաւորեալ պայծառացոյց համանման Սուրբ Լուսաւորչին և Սրբոց Թարգմանչացն՝ Սահակայ և Մեսրոպայ: Քանզի ունէր չնորհս թարգմանութեան, և միշտ քննէր զգիրս ամենայն ազգաց, և զպիտանիսն՝ զոր ըստ մերս թերի գտանէր՝ թարգմանէր աշխատասիրաբար, ինքեամբ և այլովք ոմամբք ճարտարօք, և ուսանէր եկեղեցւոյ սրբոյ: Կարգէր ոսկս վկայից և սրանց սրբոց, և պատուէր զնոսա՝ պայծառագոյն ոսկսախմբութեամբ, և նորագոյն թարգմանեալ ճառիւք: Եւ ինքն վառեալ ի հուր սիրոյ նոցին՝ խառնէր զիւրն մչտաթոր արտասուս՝ ընդ սուրբ և պատուական արիւնս նոցա. որ և ըստ չերմեռանդն սիրոյն զոր ունէր առ սուրբ վկայսն՝ զվկայասէր անուն ընկալաւ. զոր միշտ վերագոչէ եկեղեցի յամենեցուն լսելիս՝ զպարծանաց յորջորջումն: Հովուէր զհօտս յանձն արարեալս նմա ի Տեառնէ՝ ըստ օրինի քաջ հովուապետին, և տածէր զամենեսեան ի վայրս դալար և ի չուրս հանգստեան, յատուածային պատուիրանացն պահպանութիւն. տքներ

1. Պետրոսի և Պօղոսի Առաքելոց:

հանապազ վասն փրկութեան հոգւոց նոցա. և ոչինչ էր նմա փոյթ՝ բայց եթէ անվնաս մնալն նոցա յապականիչ գայլոց. չրջէր միշտ առ նոսա և խրատէր զամենեսեան գնալ յօրէնս և ի պատուիրանս Տեառն անարատութեամբ: Աշխատէր յընթացսն երբեմն յովանակաւ երբեմն ի հեռուստս. և քաղցրագոյն էր նմա աշխատութիւն մարմնոյն առ սէր աստուածայնոցն: Արհամարհեալ էին ի նմանէ իրք մարմնականք, և ոչ էր փոյթ ինչ նմա յաղագս փառաց անցաւորի, այլինքն հեծանելեաց, փակերաթաց երիւարաց կամ զարդարեալ կիսիշէից[1]. կամ զգեստուց խենեչութեան՝[2] որով բաղումք արտաքուստ զարդարին, որպէս յայտնի է ամենեցուն. նա և ոչ գոյր նմա տուն հանգստեան կամ տեղի բնակութեան, որով հանգիստ տայր տկարութեան մարմնոյ՝ ի բաղում աշխատութեանցն, կամ ժառանգութիւն ինչ մարմնական ստացեալ, կամ ի միւմ վայրի բնակութիւն կալեալ. այլ պանդխտաբար չրջէր յերկրի, և զքաղցեալ հոգիսն կերակրէր աստուածային բանիւն:

Գնայր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և երկիր պագանէր սուրբ տեղեացն որ անդ. և հասանէր յարեւմուտս[3], ուր ազգ բազում Հայոց իջեալ էին, և լուսաւորեալ զհոգիս նոցա, և հաստատեալ ի հաւատս, դայր հասանէր ի թագաւորեալ քաղաքն Կոստանդինուպոլիս, և յանդիման լինէր թագաւորին և պատրիարքին. որոց տեսեալ զայնպիսի աս-

1. Ձորիներ:

2. Մեղադրէ եկեղեցական անձանց ճոխազարդ հագուստս սրբեալը:

3. Փաքր Ասիոյ և Յունաց կողմերն. թէ և թուի ամանց ի Հռոմ եւս երթալն. և չէ հաւանական թէ այն առեն յիտալիա այլ սփռուած ըլլան Հայք, ինչպէս յետոյ յ'ԺԴ և ԺԴ դար. բայց առուգիւ Հռոմայ Պապից հետ թղթակցութիւն ունեցեր է Վկայասէրն:

տուածազգեաց հայրապետ՝ զարդարեալ չնորհօք և իմաստութեամբ Հոգւոյն Սրբոյ, մեծաւ պատուով ընկալան զնա. մանաւանդ յորժամ խօսեցան ընդ միմեանս ի հարց և ի փորձ բանի, ըստ օրինի իմաստնոց, և գտին զնա անթերի լրմամբ լցեալ ի չնորհաց Հոգւոյն Սրբոյ. քանզի քաջ տեղեակ էր յունական լեզուին և դպրութեանն, և յիրս և ի բանս ըստ ամենայնի վարժ և կիրթ. ի հարցուածսն խոհեմ, ի պատասխանին՝ զգօն և հանդարտ. գեղ երեսացն բարետեսիլ և հեզահայեաց. և բանք աստուածաներկ լեզուին՝ համեստ և քաղցրագոյն. յորս կապեցան սիրով թագաւորն և բովանդակ իմաստնոցն ժողով: Յայնժամ սուրբն Աստուծոյ ըստ խորագէտ իմաստութեանն իւրոյ՝ խնդրէր ի թագաւորէն և ի պատրիարքէն դադարել ժամանակս ինչ առ նոսա և ընթեռնուլ զմատեանս նոցա և օգտել: Յօժարեալ կարգեցին ամենեցուն որոց ընդ նմա՝ կերակուրս և ռոճիկս յարքունուստ, և հրամայեցին անխնայ տալ զմատեանսն ամենայն՝ նմա: Որոյ դադարեալ անդ բազում ժամանակս և առեալ թարգմանէր զվարս սուրբ հարց և զՊատմութիւնս վկայից, և զմատեանս ուղղափառ վարդապետաց, և զճառս ներբողենից որ ի տօնս տէրունիս և յիշատակս Սրբոց. և տայր ցայնոսիկ որ ընդ նմայն էին՝ արք ճարտարք և իմաստունք՝ յարագագիր զրչութիւն և ի գիտութիւն բանի. զոր առեալ վաղվաղակի փոխարկէին, սրբաբանեալ ըստ մերումս բայի՝ զորիս ամենեսեան և քերեալս ըստ քերթողացն արհեստի:

ՄՀԳ

ՆՈՅՆ ԲԱՆ ԸՍՏ ՄԱՏԹ· ՈՒՌՀԱՅԵՑԻՈՑ· (ՃՁԷ)

Ի թուականութեանս Հայոց ՇԾԴ (554=1105–6) լինէր փոխումն սուրբ հայրապետին Տէր Գրիգորիսի, համանուն Տէր Վահրամին[1] որդի Գրիգորոյ (Մագիստրոսի) որդւոյ Վասակայ, ի Պահլաւունի ազգէ: Յայմ ամի եղեւ անկեալ սիւնն հաւատոյ Հայաստանեայց և պարիսպ սրբոյ եկեղեցւոյ տանն Աբեւելից. վասն զի սա եղեւ աքանչելագործ ի մէջ Հայաստանեայց, և պայծառ առաքինութեամբ կայր յամենայն հոգևոր վարս. և էր ժուժկալ պահօք և աղօթիւք. և կայր ի պաշտօնն Աստուծոյ անդադար սաղմոսերգութեամբ: Սա նորոգեաց զկարգ հաւատոց Հայաստանեայց. և անհանգիստ թարգմանութեան էր պարապեալ. և զամենայն պակասութիւն կտակարանացն Աստուծոյ առ մեզ՝ կարգաւ կատարեալ զարգարեաց ի Յունաց և յԱսորւոց թարգմանութենէ. հոգս տարեալ, և անդադար խորհրդով և ամենայն պայծառութեամբ Սուրբ Գրոց ելից զեկեղեցի Հայաստանեայցս: Եւ էր ինքն հեզ բարուք և խոնարհ սրտիւ. և ի վերայ այսր ամենայնի էր յոյժ աստուածասէր և պատուիրանապահ. և յամենայն կողմանց կարող էր օգնել հօտին Քրիստոսի. վասն զի էր ի բնէ ի բուն[2] կտրովի գրոց չնորհաց: Եւ էր սա նմանեալ առաջին խմաստնոց Հայոց, Մովսիսի ունիմ ասել և Դաւիթի[3]. վասն զի ունէր զլուխ աթենացի[4], և լեզու հրեղէն ներկեալ, և

1· Համանունաբար և Գրիգոր և Վահրամ կոչուէր:
2· Պարզապէս կ'ըսուի Բանիբուն:
3· Մովսէս Խորենացի, Դաւիթ Անյաղթ:
4· Գեղեցիկ բացատրութիւն, նայնպէս և հետեւեալ

դիւրաւ առնոյր զծածկոց՝ յիրեաց հին և նոր կտակարանացն Աստուծոյ, և բանայր զգուշն աստուածաբուղխ աղբիւրացն, և զհոսումն Սրբոյ Հոգւոյն զեղոյր ի լսելիս հաւատացեալ ժողովրդոցն: Սա եղեւ օրինակ դասուց կրօնաւորաց. ամենայն քաջակիրթ առաքինութեամբ յառաջացեալ էր:

Եւ կացեալ սորա յաթոռ հայրապետութեան ամս քառասուն. և ի ժամանակի մահուանն հանդիպեցաւ առ մեծ իշխանին Հայոց՝ որ ասի Գող Վասիլ, որ էր այր հզօր և պատերազմող. վասն զի առ սա եղեւ ժողովեալ ամենայն գունդն Հայոց:... Եւ եղեւ ի տրէ ամիս, յառաջին չաթաթն ամսեան աղուհացին[1] յաւուր չաթաթու վախճանեցաւ սուրբ հայրապետն Տէր Գրիգորէս՝ և թաղեցաւ մեծաւ հանդիսիւ ի կարմիր վանքն՝ մերձ ի Քեսուն. և Տէր Յովհաննէս հայր վանացն արար ժողով ի վերայ գերեզմանին նորա՝ կրօնաւորաց և քահանայից, և հայրապետական պատուով յուղարկեաց զնա ընդ սուրբսն: Եւ իշխանն Հայոց Վասիլ և այլ ազատագունդք ի Հայոց՝ արարին կոծ մեծ ի վերայ նորին. և գառնակոծ արտասուօք լացին առհասարակ ի վերայ նորա. վասն զի զրկեալ եղեն յայնպիսի սուրբ հայրապետէն. և նովաւ յիշեալ լացին տունն Հայոց, և լային զանտիրանալն իւրեանց յօտար աշխարհն և զելանել ի հայրենի տանէն իւրեանց:

ըսուածն՝ Սուրբ գրոց քօղը վերցընելը, որ է բանալ մեկնել զՍուրբ գԳիրս:

1· Վկայաբերին մահուան տարին 1103՝ ըստ Հայոց տօմարի կամ սկսի ի 23 փետրուարեն, որով մահն այլ մայիսի վերջերը կամ ի սկիզբն յունիսի. ամման աղուհացն այլ՝ կըընար յարմարիլ Վարդավառի պահոց:

ՄՀՂ

ԳՐ· ՎԿԱՅԱՍԷՐ ԵՒ ՓԵՌՈՐԴԻ ԻՒՐ ՅԵԳԻՊՏՈՍ

Խորհուրդ զմտաւ ածեալ (Գրիգորի Վկայասիրի), պատրաստէր զոր ընդ նմայն էին ազգայինքն իւր և ընտրելոց արանց ժողով, և զորդի քեռն իւր զարդարեալն երկոքումք գեղեցկութեամբ՝ ըստ մարմնոյ քաղաքավարութեան և ըստ հոգւոյ պարկեշտութեան և սրբութեան, զարքեպիսկոպոսն զՏէր Գրիգորիոս, հանդերձ ամենայն կահիւն իւրեանց, մտանել ի նաւ, և յառաջագոյն անցանել զսահմանս Պաղեստինացւոց. և ինքն զկնի սակաւ ատուրց առնել հրաման յարքայէ[1], և ողջունիւ բաժանեալ յամենեցունց, զի թեթեւակի բացանայեալ հասցէ նոցունց: Որոց մտեալ ի նաւ, հընչեալ ուժգին հողմոյ՝ վարէր բանութեամբ զնաւն, ձգէր յԵգիպտոս: Եւ քանզի աշխարհն Եգիպտացւոց ընդ իշխանութեամբ Աւրաթացւոց էր, երկեան երկիւղ մեծ, և ակն ունէին վարիլ յաւար և ի գերութիւն: Յայնժամ խորհուրդ իմաստութեան զմտաւ ածէր Տէրն Գրիգորիոս, և զգենոյր զեկեղեցական զգեստն իւր և զգեցուցանէր զարան եկեղեցականս՝ իւրեանց զգեստուք. զարդարեցան և աշխարհայինք իւրեանց ոսկիակուռ պատմուճանօք, զոր ընկալեալ էին պարգեւ ի թագաւորէն Յունաց. և ամենեքեան պատուհասեալք նստան, մեծամեծքն ըստ իւրաքանչիւր աստիճանի, և փոքունքն կանգնեցան ի սպասու առաջի:

Իսկ որպէս սովորութիւն էր՝ առաքեաց կարգեալ իշխան տեղւոյն տեսանել և իմանալ թէ զինչ իցէ որ կայ ի նաւին, կամ ուստի իցեն եկեալ. գնացին առաքեալքն և տեսին զոր պատուականս

1. Ի կայսերէն Յունաց ի Կ. Պոլիս՝ ուր գնացեր էր:

և գեղեցկատեսիլս, զարդարեալս պէսպէս զգեստուք. և հիացան ընդ սքանչելատեսիկն տեսիլ, ափ ի բերան եղեալ դարձան առ իշխանն և պատմեցին նմա: Յայնժամ իշխանն յարուցեալ դայր առ նոսա յողջոյն, պատուով և հնազանդութեամբ, և հարցանէր հեզութեամբ, թէ ո ոք իցեն. և տուեալ պատասխանի, եթէ ազգականք և սպասաւորք կաթողիկոսին Հայոց եմք, և առաքեաց զմեզ յառաջագոյն, զի և ինքն եկեսցէ, որպէս զի տեսցուք զսուրբ լեառնն Սինա, և զմիաբնաւորանս նախնի Սրբոցն որ ասա, և երկիր պագեալ դարձցուք յաշխարհ մեր: Ապա ընկալեալ իշխանն ըզնոսա պատուով և հանգուցանէր մարգասիրաբար, և առաքէր վազվազակի ազդ առնէր ամիրապետին իւրեանց՝ մեծ խալիփային, որ էր յառաջնորդական աթոռ ազգին իւրեանց. որ էր այր բարի և իմաստուն, առատաձեռն ի պարգեւս, քաղցր և ողորմած առ ամենեսեան: Որ իբրեւ ծանեաւ՝ յոյժ ուրախ եղեւ, և փութանակի առաքեաց ածել ընդնոսա առ ինքն մեծաւ պատուով: Զոր տեսեալ՝ համբուրէր ըղձական սիրով, և տեղեկացեալ հարցմամբ ի նոցանէ զպատճառս գալստեանն՝ ուրախ լինէր. մանաւանդ յորժամ ծանեաւ թէ սուրբ հայրապետն գալոց էր անդրէն. և հրամայեաց հանգուցանել զնոսա ի պատշաճաւոր տեղւոջ, և տալ զպէտս նոցա առատապէս: Իսկ արքեպիսկոպոսն Տէր Գրիգորիս վազվազակի առաքէր առ սուրբ հայրապետն և ծանուցանէր նմա զիւրեանցն պատահումն, և հայցէր փութապէս հասանել առ նոսա: Եւ լուեալ սրբոյն Աթուձոյ զայսոսիկ, վազվազակի մտեալ ի նաւ՝ անդր հասանէր. և բարեբարոյ խալիֆային ամենայն մեծամեծութիւք իւրօք ելանէր ընդ առաջ նորա, և առեալ զսուրբ ձեռն համբուրէր և դնէր ի վերայ աչաց և երեսաց իւրոց, և տայր մեծաւ գոհութեամբ օրհնութիւն Աթուձոյ, որ այնպիսի մեծի փարթամութեան արժանի արար զինքն. և հրամայէր պատրաստել նմա

իջեւանս պատուականս, և հանգուցանէր զնոսա որպէս արժանն էր. և կարգէր նոցա սպասաւորս, պատրաստական առնել զամենայն պէտս նոցա մեծաժախս և առատաձեռն պարգեւօք. և լցոյց զնոսա ի մեծամեծաց մինչեւ ի փոքունս՝ օժտապարգեւ ընծայիւք, ոսկւով արաբացւով և այլօք պատուականօք, զոր աշխարհն այն մատուցանէր սիեզերաց։

Ապա յետ բազում աւուրց տեսանելոյ զմխիթարն և յոգնակի խօսակցութեան, խնդրէր հայրապետն հրաման դառնալոյ յաշխարհն իւր. իսկ նա ոչ առնոյր յանձն իւր ամենեւին, թէպէտ սուրբ հայրապետն պատճառէր և դնէր առաջի զերկիւղն Աստուծոյ, յաղագս բազում ժամանակաց անտէրունչ թողլոյ զժողովուրդն իւր. ասէր. Ցայսպիսի մեծագոյն պարգեւէ առաքելոյ ինձ Աստուծոյ՝ ոչ երբէք զրկեալ աղքատացայց. դնէր և այլ պատճառս բանիւ յաղագս ոչ լինելոյ անդ յազգէս Հայոց՝ ունայն գնովուածն իւր։ Իսկ նա բառնայր զպատճառանս և երդմամբ հաստատէր լնուլ զաշխարհն՝ Հայաստանեայց ազգօք, զոր և արար իսկ, և բազմացոյց անդ բազմութիւն յոյժ իբր տասն հազարաց. և ի նոցանէ բազում իչխանս և հեծելազօրս պատուեալս։ Եւ տեսեալ սրբոյ Հայրապետին զվերմեռանդն և զզորովալիր սէր նորա, թողոյր փոխանակ իւր անդր զորդի քեռն իւր, և ձեռնադրէր գնա կաթողիկոս[1] Եգիպտոսի. և այսու հաւանեցուցանէր զբարեբարոյ խալիփային՝ թողուլ գնա ելանել յաշխարհն իւրոյ։ Այլ մեզ ոչ է ժամանակ պատմել զբարեկրթութիւնս ի նմանէ եղեալս առ նորահաստատ Հայրապետն և առ ժողովուրդն իւր. քանզի նախկին յայլոց ճառեցաւ մանրապատում երկարագոյն ճառապրութեամբ։

1. Թէ արդարեւ այդ գերագոյն կոչումը առած է, կըրնայ տարակուսուիլ։

ՄՀԵ

ՏՕՆԱՆԱՄԱԿ ԳՐԻԳՈՐԻ (Բ) ՎԿԱՅԱՍԻՐԻ[1]

Այս է յիշատակարան տօնից տէրունականաց և Սրբոց Աստուծոյ. ցուցմամբ աւուրց Հոռոմի աւուրց՝ ըստ իւրաքանչիւր Սրբոց հանդիպմամբ չարչարանաց կատարման, և կամ ըստ խաղազական ելից հանդմանց[2] մարտիրոսաց և հայրապետաց սրբոց, որք հառոյացան Աստուծոյ՝ նեղ և անձուկ ճանապարհաւն Յիսուսի։

Զոր ես Գրիգորիս ծառայ Աստուծոյ և դիտապետ Հայաստան ազգիս, համարձակեալ վասն սիրոյ վկայիդ Քրիստոսի, յաւելի ի նախակարգեալ տօնսն հոռոմի տմոց՝ ընտրեալ ի Տօնաւանակաց յոգունց զտակաւս, որ ի բազմաց անիսոյթ էր լեալ։ Եւ մեք աշխատեալ զայսպիսի համառօտահաւաք Տօնամակս՝ գրեցաք ի պայծառութիւն եկեղեցւոյ. զոր ցանկ ընթերցող ամենայն ժամու սոսկալի պատարագին, զոր մի՛ ոք աւելորդ վարկցի. զորոց ըզվարս քաղաքավարական պատմութեանց՝ զոր ոչ գոյր առ մեզ հայ գրով, մեք աշխատութեամբ թարգմանեցաք ի յունականէն ի մերս գիր և բառ։ Վասն որոյ ազաչեմ սրբովք վկայիւքս զամենեսեան

1. Գրիգոր Բ մեծ ջանքով փնտռեց և փնտռել տուաւ Սրբոց և մանաւանդ Մարտիրոսաց վարքերը, թարգմանեց կամ թարգմանել տուաւ. այն պատճառաւ կոչուեցաւ Վկայասէր. անոնց հանդստեան կամ նահատակութեան օրերուն յարմար դառաւորած գիրքն ալ կոչուեցաւ Տօնաւանակ կամ համառօտեալ Տօնաւանակ. իրմէ առաջ ալ կար այսպիսի հաւաքածոյ, բայց քիչ էին վկայաբանաւթիւնքն։

2. Այսինքն՝ ըստ աւուրց տմոյ անոնց հանգըստեան, մահուան։

առհասարակ՝ մի անփոյթ առնել զմեր աղէտանըկ երկս աշխատութեան, այլ ընդօրինակել գաղափառ և գրելով՝ պահել յամենայն սուրբ եկեղեցիս. և անխափան առանց յերկուանալոյ կատարել ըզկանոն ընթերցուածիս ի տօնի յիշատակի Սրբոցն։ Եւ որ ոք գրէ զգիրս զայս՝ աղաչեմ գրել ի գլուխս գրոցն և զդոյզն բան յիշատակի մերոյ. և ազօթիւք յիշել ի Քրիստոս՝ զարարող գրոցս, և զԳրիգորիս[1] համանուն և համազգի իմ, որ և գրիչ և յօրինիչ գրոցս, յիշեսջիք ի Քրիստոս. և որք յիշեջդ յիշեալ լինիք օրհնութեամբ ի Տէր։ Յիշեա Տէր և ողորմեա։

Ես կիրակոս տրուպ Գիտնական և անարժան ծառայ Աստուծոյ, ծանուցանեմ ձեզ վասն սուրբ կտակիս Տնօնամակի եկեղեցւոյ սրբոյ և աստուածայնոյ յիշատակի։ Որպէս գիտէք՝ ի սկզբանէ հաւատոց մերոց, մեր ուղղադաւան ազգիս արամեան որդիացեալք՝ աշակերտութեամբ Սրբոյն Գրիգորի ատաուածանման Լուսաւորչին մերոյ, համօրէն ամենայն Սրբովք՝ որ եղեն յազգս մեր հաճոյ Աստուծոյ, զայս գրոյ եկեղեցւոյ անփոյթ արարին՝ վասն ժամանակին. և մեծ և աստուածային տունքն Խաչի կամ Աստուածածնի, վկայիցն և սուրբ հայրապետացն, հարցն ճգնաւորացն և կուսանաց վկայիցն, անփառաւոր և անկատար և անյարմար լինէր՝ առանց այս գրոց։ Այսպէս Հոգին Սուրբ ազդեաց սուրբ հայրապետին Գրիգորիսի աստուածասիրի և վկայասիրի, և նոր սկսեալ յօրինեաց զսա՝ ըստ ամենայն տունից արժանապէս, ի դէպ սաղմոսիւք և ընթեր-

1. Գրիգոր Մագիստրոսի որդւոց և թոռանց չատն՝ երեք չորս ազգ՝ Գրիգոր կոչուած են, և մի քանին կաթողիկոս եղած են, նոյն անուամբ, Բ, Գ, Դ, Ե. անունդմէ զատ եպիսկոպոսք և այլք, որոց մէկն է աշխատակից մեծ վկայասիրին և գիրքը կարգաւորողն, գուցե իր քեռորդին, յիշեալ ի 274 յօդուածի։

ցուածովք աստուածախօսիւք. բայց ոչ ի գլուխ աւարտեաց զամենայն՝ զոր պարտ և արժան էր տօնելոյ։ Այսպէս ինձ որ միշտ ընդ նմա էի՝ յամենայն իրս աստուածայինս կցորդ և յորդորիչ և փոյթ յաշխատութիւնս հոգեւորաց և Աստուծոյ սիրելեաց, հոգ եդ ի վախճանելն իւրում, մի անփոյթ առնել զամենէ, այլ յանկել[1] ընթերցուածովք ըստ արժանին, զոր և արարի։ Չի հարկ եղեալ է ի (վերայ) մեր Աստուծոյ՝ տօնել զսոսա. և է այսպէս. Քառասունն և վեց տօն սուրբ հայրապետացն[2] կարգեաց, և երեսուն ես տրուպս յաւելի, որ լինի եօթանասունն և վեց. զորս բոլոր տարւոյն բաւական համարեցաք, ընթերցուածովքն և Մարտիրոլոգիովք[3]. իսկ եթէ տարւոյն աւուրքն չլինի բաւական, զի է տարի որ երկոտասան լուսին լինի և է որ երեքտասան, և տօնքն՝ կարճ տարին յաւելուն, գուք զերկուսն ի մի տօնեցէք՝ երեք և չորս, և այսպէս զնուան ի գլուխ տարէք. զի ըստ հաւատոց մերոց և տօնք Սրբոցն պարտ է որ կատարին։ Իսկ զի սկզբնից սրբոց և աստուածասիրաց գրեցի[4], զի մի հայիցիք ի ծայլ և յորովայնամոլ կրօնաստանան՝ և ընդ նոսին կորնչիցիք ի կենացն Աստուծոյ, այլ Սրբոց նմանեալ՝ մեծ փափագմամբ տօնեսջիք. մեք զընթերցուածն առատապէս որիչ եղաք ընդ ամսոյն, զի մի աղքատ եղիցի կարգք եկեղեցւոյ։

Հարկ և հրաման ունիք յԱստուծոյ՝ զսակաւ յիշատակարանս խրատու՝ ի գիրսն զոր նորոգեցէք՝ օրինակել, որպէս և զհնդեւօր Տեառն[5] յիշատակ՝ ի նոր գիր։ Եւ ի վերայ ամենայնի զմեզ զերեքեանս ի նոյն, զսուրբ կաթողիկոսն և զհամանուն կարեւոր[6]

1. Յանգ հանել, աւարտել, լրացընել։
2. Գուցէ պէտք է «սուրբ հայրապետն կարգեաց»։
3. Յայն բառ, յորմէ և լատինն Martirologium, որոյ ճիշդ թարգմանութիւնն է վկայաբանութիւն ըստ ամսոյ։
4. Շփոթ կամ սխալ ըսուած մի է այս տեղ։
5. Կաթողիկոսին, նոյն Գրիգոր Վկայասիրին։
6. Մերձաւոր ազգական. թուի նոյն վերոյիշեալ

իւր զԳրիգորիս, և զիս զԿիւրակոս յիշեսջիք առաջի Քրիստոսի ի սուրբ խորհըրդին, և ի խորոյ սրտէ Թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ. և նոյն ինքն Յիսուս Քրիստոս ամենեցուն ողորմեսցի, և արժանի արասցէ արքայութեան երկնից. որում փառք յաւիտեանս. ամէն:

ՄՀՋ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՅՈՎՀ. ԱԻԵՏԱՐԱՆԻ ՅՈՍԿԻԲԵՐԱՆԷ

Զանգիւտ Հայկազանցս զլուսաւոր մարգարտիս զպատճառն, զերանելի Լուսաւորչին մերոյ զիոխառնորդ զԳրիգորիս՝ զհոգեւոր հայրն մեր և զինամածու՝ յիշեցէք ի Տէր. վասնզի նա եղեւ սկիզբն զսուրբ Աւետարանիս զմեկնութիւնս զրելոյ ի գիրս՝ յայս, ի ձեռն բազում աղաչանաց իմոց՝ զինքն զերանելին. որ և լուեալ ինձ՝ ըստ աստուածասէր հոգւոյ իւրոյ՝ սկիզբն ետ առնել թարգմանութեան, նախ յասորւոյն լեզուէ. և քանզի չազփոզի այլատարազ գայ լեզուն ասորի ի մերս հայկազանցս արամեանցս ազգ և լեզու, ըստ որում վերստին իմ աղաչանս ի ձեռն առեալ վկայասէր ոգւոյն, ի յունականէն առնել զթարգմանութիւն գերաշքաշ ճառից աստուածարան աւետարանչիս Յովհաննու մեկնութեան, ի ձեռն համանման երանելի պաարիարքին Կոստանդնուպօլսի՝ տիեզերակենցոյց աշխարհալոյս վարդապետի, Ոսկեբերան կոչեցեալոյ մականունութեամբ. զոր օրինակ և վերա-

քեռորդին, զոր յետ մասամբ զրոցն կարգաւորելու՝ թողուց յեգիպտոս:

1. Նոյն չատ հեղ յիշուած Գր. Վկայսերն Մեծ:

գոյնդ առ նա արարեալ իմ Կիրակոսի զբանս մազթանաց. վասն զի յարմար գոյ յունականն բարբառ ի մերս՝ ըստ թարգմանութեանն: Արդ, ունկնդիր եղեալ ինձ՝ թողեալ զՄիդրեատ երէց ասորի զթարգմանիչ, յղէ ի Միսապոտամն[1] գաւառ, առ յունականն հանեսոր Թեոպիատե կոչեցեալ. որ էր քարտուղար և պռոյնօտար[2] իշխանին Աջօնն կոչեցեալ[3]. և բազում ծախիւք առատատուր պարգեւօք նմա ետ թարգմանել զսուրբ գիրս: Եւ արդ, նա ի Քրիստոս փոխեալ յերանելի կեանսն, բազում ճառք մնացին անթարգման. յոր ես ձեռն արկեալ նոյնպէս առատաբար ձրիւք զմնացեալսն ետու աւարտել նմին առն: Եւ է ճառից թիւ զոր նորոգ ի յայս ածաք՝ յիսուն և հինգ ճառ. քանզի զերեսուն և զերիսն՝ բազում յուզիւք յառաջին մեր թարգմանչացն գտաք թարգմանեալ. ի սկզբան տասն և երիք ճառ յասորի լեզուէ, բանքն իսկ ցուցանեն. իսկ զբասնն ի յունականէն, որք լինին երեսուն և երիք ճառք: Բովանդակ էր գիրքն լեալ թարգմանած ի հայս, և ի ծուլութենէ և յանփոյթ առնելոյ՝ այլքն կորուսեալ և եղծեալ էին յօրինակս հինս՝ ուր և կայր: Եւ զայս զոր գտաք՝ ի յախմար և ի տգէտ խաւարած գրագրերոյ այլայլած և թիւրած էին բանքն և տունքն, և աւելի և պակաս, անօգուտ ի կարգալոյ և յիմանալոյ: Զոր իմ Կիւրակոսի տպրի և անարժանի ի ձեռն առեալ՝ ուղիղ յօրինեցի ըստ կարի, այլ ի մտաց բանիցն և այլ ի կրկին օրինակաց. և ըստ այսմ զնորոգ թարգմանեալս բազում չանիւ և աշխատութեամբ յերիւրեցաք յուղիղն բառ և բանս՝ ըստ մերումս, զհատակոտոր զերթին բանսն, և ըստ վերագոյն գրելոցն՝ ոչ աւելի և ոչ պակաս: Արդ, այսպէս գրեցաք և տուաք վերջին աւուրց վերջին դարուս,

1. Միջագետք, յունարէն. Mésopotame, փռանկ:
2. Protonotaire. Գլխաւորն նօտարաց:
3. Ազգաւ Հայ թուի, մագիստրոսի պատուով:

յարում ըստ կանխաւտացութեան Փրկչին և Աստ-
քելոց նորա՝ չար և գժնդակ են աւուրքս. աստա-
նալ թագաւորեալ, և սէր և հաւատ և ճշմարտու-
թիւն բարձեալ յամենայն մարդկանէ. քանզի բո-
լոր տիեզերք գնային զհետ սատանայի, է որ ան-
հաւատութեամբ և է որ հերետիկոսութեամբ, և
է որ մեղօք. յոր թաւալեցան առհասարակ և մերս
ազգ. հաւատօք և կարզօք ուղիղ, և գործովք ըստ
բանսարկուին կամաց հետեւեալք, և հեռացեալք
յերկնաւոր կոչմանէն. նա և բարձրացեալ յերկինս
աշտիճանաւ կրօնաւորք և քահանայք՝ ընդ այլ չա-
րահաւատ ազգս նախանձեալ՝ ի մարմին գարձան
և ի կամս նորա, օտարացեալք ի կոչմանէն Քրիս-
տոսի. Աստ և յանիշխանութեան գոլով տիեզերք,
քանզի կարծեալքն իշխանք ի սուր և յաւեր գար-
ձան յիրեարս, եւս և որք թագաւորք անուանէին:
Եւ մեք ի սոյն աւուրս աշխատեալք՝ նորոգեցաք
զսա, և տուաք ի յիշատակ աստուածասէր եղբարց
սրբոց, թերեւս անձանց և բարմաց օգուտս գոր-
ծիցեն. որք և հովացեալք և ցրտացեալք եղեն
բնաւք ի պատուիրանացն Աստուծոյ և ի սիրոյ
գրոց: Զայս գրեցաք՝ զի որք ընթեռնուցուք՝ իմա-
ցեալք զմերս և զսուրբ դիտապետին[1] Ղանս, ըստ
այսմ ի Փրկչէն հայցեցէք զողորմութիւն վասն
նորա: Ընդ սոս և զսուրբ վարդապետան մեր զԳէորգ
յիշեալք, զդիտապետան Հայոց և զհովիւն բարի[2]
և զգաստ և զմարդասէր հոգին, որ վերստին ծնաւ
զմեզ բանիւն կենաց, և զերկոց աւուրքդ խոհակա-
նութեամբ զեղբայրն մեր և զանդրանիկ մերոյն
կրթավարժ և հրահանգայեղձ աշակերտութեան՝
զբրիստոսազգեացն զԳէորգ մականուն Մեղր[3] կո-

1. Գրիգորի Վկայասիրի:
2. Սա Լօռեցի անուանեալն է, որ նախ իբրեւ օգ-
նական եղեալ Գր. Վկայասիրի, յետոյ իր չափին վեր
ելնելով՝ մերժուեցաւ աթոռէն:
3. Սովրաբար Մեղրիկ կոչուի:

չեցեալ՝ յիշեալք ի Քրիստոս. և եւս զծնօղն իմ
հանգուցեալս ի Քրիստոս՝ յիշեալք ազօթիւք. որ-
պէս զի ազօթիւք ձեր և ամենայն սրբոց հաճոյա-
ցեալոց Տեառն ի սկզբանէ՝ գացուք միաբան արժա-
նաւորք կենացն յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի
Տէր մեր, ընդ որում՝ Հօր և Աստենասուրբ Հոգւոյն
փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Էր թիւ ի սկզբանց արարչութեանց ի մեզ ՅՇԼԶ
(6536) ամ, իսկ ի կենարար գալստենէն Քրիս-
տոսի ՌԺԺԲ (1112) ամ. իսկ ի Թոսրովային Պար-
սից[1] սկսեալ մերս թիւ ըստ ամաց՝ ԵՃԿԶ (566).
իսկ ըստ աւարտման առաջին շրջանին[2] ԵՃԼԲ,
նորս սկսեալ չար ամաց ԼԴ (34) ամ: Աստ և զաղա-
չանս իմ զվերջին ընկալչիք սիրովը Աստուծոյ. զկնի
վախճանի իմոյ ամ և տայ Աստուած ի ձեռն իմ
զսուրբ գիրս զայս, մի արգելցէ տալ զսա օրինակ
ով և կամեսցի գրել, զի տարածեսցի և մի իւիք
փակեսցի խօսքս Աստուծոյ: Եւ որք գրել տայցեն՝
գրեսցեն և զյիշատակարանս զայս բոլանդակ ի
նմին, և մի հատցեն ի սմանէ բան մի. և որք
զերկու խնդիրս զիմ կատարեսցեն՝ գրեսցէ զնոսա
Աստուած ի գպրութեան կենաց. իսկ որք սուն-
գանեն՝ եղիցին ընդ գտատատանաւ Տեառն Աս-
տուծոյ, որ է օրհնեալ յանբաւ յաւիտեանս. ամէն:

Եւ որ զգիրքս գրեցի հրամանաւ սուրբ աստուա-
ծարեալ վարդապետիս Կիրակոսի՝ որում Յիշատա-

1. Հայոց թուականն գրուած է Սասանեան Պար-
սից Ա. Թոսրով թագաւորին տեն, և ըստ իմիք անուց
ամսարին այլ յարմարցուցած:
2. 532 տարուան շրջանն է, եկեղեցական ասնից
օրերը գտնելու համար ըստ փոփոխութեան տարե-
գլխին. ըստ հեղինակիս՝ առաջին անգամ այս շրջանս
լրացեր էր և 34 տարի առաջ սկսեր էր Բ շրջանն,
որում առաջնոյն սկիզբն կ'ընկալայ յամի 346 Քրիստոսի.
սակայն Հայոց թուականին և ամսարին կարգադրու-
թիւնն վեց տարի վերջն եղած է, այսինքն 532ին:

կարանս է, և բովանդակ գիրքս յօրինեալ և յարմարեալ ըստ տանց և ըստ ամենայն արհեստից պատշաճեալ, դիւրահաս ընթերցողաց և լսողաց. թէպէտ և խոշոր է գիրս և անարհեստ և ախմար գրիչոյ, բայց աղաչեմ յիչել ի սուրբ մաղթանս՝ զբազմամեղս Յոհաննու կոչեցեալ, և զեղբարս իմ, որպէս զի աղօթիւք ձեր և ամենայն Սրբոց հաճոյացելոց Տեառն ի սկզբանէ՝ գացուք միասեան արժանաւորք կենացն յաւիտենից:

ՄՀԷ

ԳՈՂ ՎԱՍԻԼ ԳՆԷ ԶԳԵՐԵԱԼՆ ՊԵՏՈՒՆԴ, ՎԱՆՔ ԶՊԱՐՍԻԿՍ

(Մ. ՈՒՌՀԱՑԵՑԻ ՃՀԸ.)

Յայսմ ամի (1104) գնեցին զկոմսն Ֆռանկաց Պեմունդն[1] ի ձեռաց Դանիշմանին՝[2] հարիւր հազար դահեկան[3], ժիջնորդութեամբ և օգնութեամբ մեծ իշխանին Հայոց որ ասի Գող Վասիլ[4]. և սորա

1. Անտիոքայ Բրինց (Prince) կոչուած իշխանաց Առաջինն է:

2. Տհնիշմենտ, դիտնական նշանակէ, վասն զի իր հայրն այսպիսի մեկն էր, իսկ իր սովորական անունն է Կիւմիշդ-թէքին, և տիրէր Սեբաստիոյ և ուրիշ կողմերու:

3. Դահեկանն ոսկի գրամ է. եթէ բիւզանդացի և եթէ արաբացի ըլլայ՝ այդ դումարն միլիոն մի ֆրանգ կ'ընէ ըստ նիւթական արժէքից, իսկ համեմատութեամբ ժամանակին՝ կրկին և կրկին:

4. Յայտնի է պատճառ մականունին, յանկարծ թշնամեաց վրայ հասնելով՝ անոնց ընչից և երկրին տիրելուն: Շատ նշանաւոր և արժանաւոր անձն է, խելքով, քաջութեամբ, բարեպաշտութեամբ և եռանդ

տուեալ տասն հազար դահեկան ի գինն նորա. իսկ կոմսն Անտիոքայ Տանգրի՝ ոչ տայր ի գինս Պեմունդին և ոչ մի ինչ: Եւ յայնժամ ժողովեցան ամենայն գանձն առ Վասիլն, և մեծաւ իշխանութեամբ չան եդեալ և տայր բերել զնա ի սահմանս աշխարհին իւրոյ, և տայր զգանձն հարիւր հազար դահեկան. և առեալ զՊեմունդն առ իւր, և ելանէր ընդ առաջ նորա, և մեծաւ պատուով հանգուցանէր զնա ի տան իւրում, և բազում ընծայս տայր Պեմնդին և բերողացն[1]. որ ընդ ամենայն լինէր քսան հազար դահեկան:

Եւ զկնի աւուրցն գնացեալ Պեմունդն ի քաղաքն իւր Անտիոք, և մեծաւ երդմամբ եղեւ որդեգիր Գող Վասլին Հայոց իշխանին. և զիջարդն զդուստրդին Պեմնդին՝ երեսք Դանիշմանն տուրս Ալէքսին՝ Յունաց թագաւորին՝ ի ձեռն բազում գանձուց:...

Յայսմ ամի (1108) զօրաժողով եղեալ ազգն Պարսից երկոտասան հազար, և անցեալ ընդ Տօրոս լեառն[2] որ կոչի Ալաղդա[3], և արար աւար զամենայն երկիրն Թորոսի՝ որդւոյ Ռուբենայ[4]. և զայր անցանէր ընդ դաշտն քաղաքին Մարաշայ. և անթիւ գերութեամբ հասանէր յերկիրն Գող Վասլին, ի տեղի որ կոչի Բերդուս[5] ի սահ

թեամբ. ծանօթ և յարգելի ժամանակակից արեւմտեայց, որք նոյն հայերէն մականունամբ կոչեն Corouassilius. իր տէրութեան սկիզբն էր Քեսուն քաղաքն:

1. Հաւանօրդացւոց գրուած է ի ձեռագրին:

2. Այդ մեծ քաղքին մօտ ըլլալով՝ այդպէս կոչէ լեռները:

3. Անծանօթ անուն. սմանք կարծեն Անաւարզա քաղքին անուամբ, բայց չէ յարմարիր:

4. Հայոց Կիլիկիոյ իշխանութիւնը հաստատողն:

5. Բերդուս Կիլիկիոյ հիւսիսային կողմերում մեծ բերդաւան մ'էր, եպիսկոպոսանիստ:

մանս Նորիրակաւ[1]: Եւ լուեալ զայս իշխանն Հայոց Վասիլն, զօրաժողով արարեալ զգունդն զօրացն Հայոց, և նոքա որպէս զարծիւս և կամ որպէս զկորիւն առիւծոց հասանէին ի վերայ այլազգեացն. և արարին սաստիկ և ահաւոր պատերազմ. և մեծաւ յաղթութեամբ զարձուցին... ի փախուստ, և մինչեան սրով զհետ ընթացան և արարին անթիւ կոտորած զնոսա, և կալան ըզբազումս ի նոցանէ, և թափեցին զամենայն առ և զգերութիւնն: Եւ զարձեալ իշխանն Հայոց Վասիլ, և ամենայն ազատագունդն Հայոց մեծաւ յաղթութեամբ և բազում ուրախութեամբ եկեալ ի քաղաքն իւր Քեսուն, և տուեալ զոհութիւն Աստուծոյ որ ամօթ արար զթշնամիսն խաչին Քրիստոսի:

Իսկ ի հասանել թուականութեանն Հայոց ՇՕԹ (1108–1109), դարձեալ կրկնապատիկ ժողով արարին ազգն Պարսից և արս ընտիրս, լինէին իբրեւ վաթս հազար, և հանդերձ սուլտանովն իւրեանց գային յաշխարհն Վասլին՝ Հայոց իշխանին, և քինախնդիր լինէին վասն առաջին կոտորածին զոր կոտորեաց Վասիլ իշխանն ի Բերդուսն: Եւ գազանաբար հասանէին ի սահմանս քաղաքին որ կոչի Հաւասև–մառէր[2]. և էր ժամանակ հնձոյն արտեաց և արարին կոտորած զվաստակաւորսն, և հանդերձ գերութեամբ դարձան և իջին առ բերդն որ ասր Հարթան[3]: Եւ յորժամ լուաւ իշխանն Հայոց Գող

1. Ուրիշ օրինակք այս անունս գրած են Նոռիրակաւին: Մեր հնագոյն պատմիչք յիշեն Նորշիրակաւ կան երկիր մի, որ չատ հեռի չէ այս կողմերէն, բայց աւելի դէպ ի հարաւ–արեւելք. իսկ սա թուի իր հետ յիշուած Բերդուսին գաւառն ըլլալ:

2. Հրսև–Մաևսոր, այսինքն Բերդ Մանսուրի, Եփրատ գետոյ արեւմտեան կողմը, Գ Հայոց մօտ:

3. Մօտ նախայիշեալ բերդին, Զահան գաւառի և համանուն գետոյ մօտ:

Վասիլն՝ զգալ այլազգեացն, հասանէր զօրօք իւրովք ի վերայ նոցա հինգ հարիւր արամբք. և արարին սաստիկ պատերազմ. քաջագունդն Հայոց և ազատք՝ զմիմեանս յորդորէին և յօժարաբար քաջանային ընդդէմ այլազգեաց զօրացն: Ապրատաբ[1] յազատ ազգէ իւր զօրօքն յարձակեալ ի վերայ այլազգեացն, և Պետրոս քեհին Գող Վասլին՝ իւր ազատօքն արիանայր. և Վասիլ տէն Տղայ[2] անուն՝ մայրենեօք յազատ ազգէ, և նա իւր զօրօքն բեկանէր զթեւս զօրացն Պարսից. և Տիգրան՝ այր հզօր և քաջ, որդի ապնուականի ի մեծամեծացն Հայոց: Եւ արարին պատերազմ ահաւոր քաջագունդն Հայոց, և յաղթեցին զօրաց այլազգեացն՝ մեծաւ յաղթութեամբ, և արարին սաստիկ կոտորածս զնոսա. և կալան զսուլտանն Հայոց[3] և զայլ բազում իշխանս Պարսից, և ի գերութիւն վարէր զնոսա առաջի իւր: Եւ զարձաւ իշխանն Հայոց Վասիլն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ. և եկեալ ի քաղաքն իւր Քեսուն, և փրկեաց զամենայն գերութիւնն զոր առին այլազգիքն. և եղեւ մեծ ուրախութիւն հաւատացելոց:...

Յայսմ ամի (1113) արեգ ամսոյ քսան և չորս մեռանէր մեծ իշխանն Հայոց որ կոչեցաւ Գող Վասիլ. և եղեւ սուգ սաստիկ ամենայն տանն Հայոց. վասն զի առ նա էին ժողովեալ միացեալ զօրքն Հայոց, և ամենայն զօրքն Բագրատունեաց և Պալհաւունեաց, և որդիք թագաւորացն Հայոց՝ հանդերձ ազատագունդ զօրօքն՝ առ նա կային հանգուցեալ՝ մեծաւ փառաւորութեամբ. և աթոռ հայրապետութեանն Հայոց աչխարհին աստ եդաւ:

1. Տարօնեցի Տաճատ իշխանի որդի:

2. Թուի որդեգրածն նոյն մեծին Գող Վասլի:

3. Կամ տեղւոյ մի յատուկ անուն պիտի ըլլայ, մանաւանդ որ ուրիշ օրինակք Հայոցայ գրեն, կամ Մեծ Հայոց մասի մի տիրող մէկն:

Վասնզի տիրեալ էր բազում գաւառաց իւրով զօրութեամբն, և ամենայն երամք կրօնաւորաց, եպիսկոպոսաց, հարց և վարդապետաց՝ առ սա ժողովեցան, և առ հաստարակ կային մեծաւ ուրախութեամբ: Մեռաւ իշխանն Հայոց և թաղեցաւ ի կարմիր վանքն[1]. և էր հոգեբարձու նորա և հայր խոստովանութեան տէր Բարսեղ կաթուղիկոսն Հայոց[2]. և տուաւ հողդրամ հազար դահեկան, և պատարագուց հարիւր և յիսուն դահեկան, աւելի և ոչ պակաս, և մատաղ անթիւ: Եւ տարան Տանգրէի բազում տուրս ի տանէն Վասլին, բազում գանձս և դիպակս, ձիս և ջորիս. տարան և զթագն կնոջ Վասլին առ կինն Տանգրէի. և այլ իշխանաց թագաւորացն տուաւ բազում ընծայս, և աղքատաց բազում ինչս: Եւ տան զիշխանութիւն Վասլին՝ Տղայ Վասլին, որ է մայրենեօք յազգէ կամսարական, տնեալ և զարգացեալ ի տան Վասլին՝ որպէս որդի ի ծոց հօր իւրոյ, գեղեցկատեսիլ և առիւծագէմ, յաղողական և սրագլուխ, այր քաջ և պատերազմող, ամաց քսան և հնգից: Զսա ներտուցին յաթոռ մեծ իշխանին Վասլին, և նմա հնազանդեցան ամենայն զօրքն. վասն զի յայժ առատաձեռն և մեծատուր եղեւ, սիրեցեալ յաչս ամենեցուն և զօրացն: Եւ արար միաբան ժողով Տէր Բարսեղ, և տայ զամենայն իշխանութիւնն ի Տղայ Վասլին, և եղեւ ուրախութիւն ի վերայ տանն Հայոց[3]:

1. Քեռունեաց մօտ, անուանի այն տաճարն:
2. Յաջորդ մեծ Վկայասիրին Գրիգորի:
3. Շատ երկար չեղաւ ուրախութիւնն. վասն զի չորս կամ հինգ տարի վերջ՝ երբ Վասիլ գնաց ի Կիլիկիա և Ա. Պարսն Լեւոնի գաւառը կին առաւ, Լեւոնի եղբայրն Թորոս Ա բռնեց զՎասիլ և մատնեց Ուռհայի կամս Պալտինին (ինչո՞ւ համար). և սա չատ նեղացընելով զՎասիլ՝ առաւ անոր երկիրները. Վասիլ զարձաւ առ աներն և յետոյ գնաց առ կայսրն Յունաց:

ՄՀԸ

ԹՈՐՈՍ Ա·
ԱՌՆՈՒ ԶՎՐԷԺ ՍՊԱՆՄԱՆ ԳԱԳԿԱՑ

(Մ· ՈՒՌՀԱՑԵՑԻ· ՄԵ·)

Յայսմ ամի (1111) եղեւ վրէժխնդրութիւն Աստուծոյ՝ անմեզ արեան Գագկայ Շահնշահի՝ որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ, ի ձեռն առն հզօրի և մեծ իշխանին Հայոց Թորոսի որդւոյ Կոստանդեայ՝ որդւոյ Ռաբենայ: Արդ, ի յաւուրս Թորոսի էին սպասնողքն Գագկայ արքային Հայոց ի բերդն որ անուանեալ կոչի Կիղռօսկաւխա, ահաւոր ամրութեամբ բարձրացեալ՝ անպարտելի յամենայն կողմանց. և որդիքն Մանգալէի դեռ եւս կենդանի էին՝ երեք եղբարք, և մի ի նոցանէ ունէր ընդ Թորոսի միաբանութիւն՝ վասն խնամութեան, և յաղագս այսորիկ խոստացեալ էին տալ զբերդն՝ Թորոսի, վասն զի սահմանակից էր գաւառի նորա մերձ ի յերկիրն որ կոչի Զկնջուր[1], լեառնահայեաց Գամրաց աշխարհին: Յայսմ ամի յարուցեալ իշխանն Հայոց, և սակաւ ինչ զօրօք գնաց առ նոսա սիրոյ ազաչաւ, և իջեալ ի սահմանան այն և յօղարկեաց նոցա ծանուցումն զգալն իւր: Յայնժամ մի ոմն ի սպասնողացն առեալ ընծայս և գայր առ Թորոս. և նա մեծարեաց զնա. և նա հանեալ գանակ մի ծանրագին և հանդերձ մի՝ գնէր առաջի Թորոսի. և կերան և արբին: Յայնժամ ասէր ցնա Թորոս, եթէ, «Ա՛ռ իս խոստումն կայ ձեր՝ վասն բերդին, տուք ի յիս, և յամենայն գաւառս իմ առեք ձեզ տեղի զոր կամիք»: Եւ նորա ստեալ գյատաչաստա-

1. Կապագովկիոյ կամ կեսարիոյ գաւառին սահմանակից, բայց անուանն անծանօթ է հիմայ:

ցեալն՝ և ասէր ցիչխանն Հայոց, եթէ, Ոչ կարեմք տալ զբերդն, վասն զի մեր հայրենիք է և ազգի տեղիք: Եւ իրրեւ գիտաց Թորոս եթէ խաբեցաւ ի նոցանէ, տայր զբերեալ նուէրս յինքն, և սրտմտեալ ասէր. «Ա՛րի և գնա ի տուն քո, և յայտ հետ պատրաստ եղերուք յինէն»: Եւ յարուցեալ աստուածատապանին[1] գարձաւ ի տուն իւր. գարձաւ և Թորոս դիմաք[2] ի տուն՝ առաջի աչաց նորա:

Եւ իրրեւ գնաց սպանողն և եղեւ անհետ[3], դարձաւ Թորոս զօրաքն և ի գիշերին հասանէր ի վերայ բերդին և դարանակալ առնէր զհետեւակ զօրսըն, և ձիաւորսին հեռանայր յագարական. կամեցաւ ասպատակ առնել զերկիրն: Իսկ ի լուսանալ առաւօտուն ելանէին ի բերդէն բերդացիքն, և հանդիպեցան ի վերայ քմին[3]. և յորժամ տեսին՝ եղեն փախստական: Եւ յարուցեալ զօրացն Թորոսի ընթանային ընդ զառ ի վեր բերդին. և յորժամ տեսին բերդացիքն՝ փակեցաւ դուռնն. և նոքա արտաքոյ կալան զդուռն, և սկսան պատերազմել, և կրակ հարկանէին ընդ ցուեաց[4] բերդին, և նա յոյժ բորբոքեցաւ: Եւ յորժամ տեսին բնակիչքն՝ բացեալ ի յայլ կողմանէ դուռն, և ելեալ փախեան. և զօրքն Թորոսի առին զբերդն և կալան զփախստականսն. և հասեալ պատմեցին Թորոսի. և նա յոյժ հիացեալ, և գայր մեծաւ ուրախութեամբ ի բերդն Կնդաւսկաւիս: Եւ յորժամ մտաւ ի բերդն, սկսաւ քննութիւն առնել զանձատան նոցա. վասն զի ամենայն գաւառին գանձ՝ ոսկի և արծաթ անդ ի պահեստի էր ժողովեալ. և ասէր Թորոս ցՄանդալէի որդիքն, եթէ, Բերէք առ իս զԳագկայ Թուրն և զհանդերձն Հայոց Թագաւորին: Եւ նոքա բերին. և տեսեալ Թորոսի ելաց զառնապէս, և ամենայն զօրքն լային: Եւ յայնժամ հրամայեաց Թորոս ցուցանել զգանձս իւրեանց, և նոքա պնդեալ ոչ գային ի խոստ[1]. և սկսան ի խոշտանգանս արկանել զնոսա: Յայնժամ միւս եղբայրն աղաչէր զզօրականսն՝ զի տարցեն զնա ի քարակաւուրն[2] զի ջուր հեղցէ. և յորժամ տարան, ձգէր զինքն ի բարձրութենէն ի վայր, և անկեալ սատակեցաւ չարաչար: Իսկ զմիւս եղբայրն սկսաւ ի վտանգ արկանել Թորոս. և նա լրբենի երեսօք ասէր ցԹորոս, եթէ, Դու Հայ մարդ ես, և մեք Հոռոմք իշխանք, զի՞նչ կամիս պատասխանիս տալ Հոռոմոց Թագաւորին, որ դատես զմեզ: Յայնժամ սրտմտեալ Թորոս և զոյն երեսացն այլագունեցաւ, և առեալ ի ձեռին իւրում բիր մի կանի[3], և գազանաբար յարձակեցաւ ի վերայ նորա, և ասէր, եթէ, Ո՞վ էիք դուք որ զայր հզօր և զօծեալ Թագաւորն Հայոց սպանիք. և կամ զինչ պատասխանի եառուք ազգին Հայոց. և լալսխառն սկսաւ չարաչար հարկանել զնա՝ մինչեւ սատակեցաւ գառնահառաչ մահուամբ: Եւ յայնժամ գոհանայր զԱստուծոյ որ էառ զվրէժ արեան Գագկայ Հայոց արքային. վասն զի հայր հօր նորա Իւրէն ի գաւակացն Գագկայ էր[4]: Եւ միարարձ արարեալ զամենայն տունս նոցա բազում գանձս և դիպակս և խաչս յոյժ մեծամեծս արծաթիս, և պատկեր ոսկեձոյլ և արծաթ, առեալ գնոցա ի վահկայն. և զմիւս եղբայրն զկնի տանէր, և դնէր զզօրսն ի բերդն պահապանս:

1. Որովհետեւ հեղինակս՝ առաջ սպանողները Յունդայի նմանեցուցեր էր, հիմայ այլ փոխանակ մարդասպան ըսելու՝ զայս կ'ըսէ:
2. Բարկացած, ամբոխէն կ'ըսուի երեսը կախած:
3. Պահուըտած տեղւոյն:
4. Առաստաղը, տանիքը, տան վերնածածկը:

1. Ձեին յայտներ:
2. Գլուխ քարաբլրոյն՝ որոյ վրայ կանգնած էր յիշեալ բերդն:
3. Փռ. Marteau. Թրք. չեքիճ:
4. Ստոյգ չէ Գագկայ ցեղէն ըլլալն՝ որ էր բագրատունի, այլ Գագկայ մարդիկներէն:

ՄՀԹ

ՀԱՅՔ ՋԵՐԹՈՒՅԱՆԵՆ Ի ԹԱՐԲԵՐԴԷ ՋԿՈՄՍՆ ՃՈՍԼԻՆ

(Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ. ՄԼԵ.)

Ի Թուականութեան Հայոց ի յամի ՇՀԲ (1123–4), զօրաժողով արարեալ Թագաւորն Երուսաղեմի Պաղտինն (Բ), և յուզէր պատերազմ ընդ Պալակայ ամիրային, վասն երկու իշխանացն զոր արկեալ էր ի բանտի, զՃօսլին[1] և զԳալէրան[2]: Եւ հասանէր Թագաւորն ամենայն զօրօքն Ֆռանկաց ի Ռապան[3] քաղաք, և Պալակն յառաջագոյն եկեալ էր մերձ այնմ գաւառին, զի զերկիրն արասցէ աւար և գերութիւն. և զմիմեանց ոչ գիտեալ երկոցունց կողմանցն՝ և եկեալ Թագաւորն առկայս զօրօքն ի Շէյզրիոյ կանդարայն[4], և անցեալ գետովն ի վեր՝ կամէր ելանել ի տեղին որ ասի Շէյզրիկ. և Պալակն բազում զօրօք կայր մերձ ի քաղին[5], յարժամ հարին զվրան Թագաւորին. և Թագաւորն կամէր որսալ բագէիւն. և Պալակն[6] յանկասկած յարձակեցաւ ի վերայ՝ իւր ամենայն զօրօքն, և արար կոտորած սաստիկ հզօր, և կալաւ զԹագաւորն

1. Խաչակրաց հետ եկաղն, որ եղաւ կոմս Եդեսիոյ:
2. Ազգականն Ճօսլրնի, Galeran կամ Waleran.
3. Յարեւմտեան Ասորիս կամ Եփրատացիս:
4. Հին տեղն կ'ըսուէր Մինգա, զոր մի՝ որոյ վրայ Հռովմայեցիք կամուրջ մի (կամնդարա) ձգած էին. որոյ անուամբ կոչուած է և Շէյզրիկն:
5. Ուր որ պահպանած էր, յանկարծ թշնամւոյն վրայ յարձակելու համար:
6. Նաւրէտ–ռովվա Պալակ՝ Ասորւոց և Եփրատայ կողմանց չատ քաղաքաց տիրող էր:

զորն Երուսաղեմի և զքուրորդին Թագաւորին: Այս եղեւ յամսեանն Հոռի, զկնի չորս աւուր անցանելոյ սուրբ Զատկին: Եւ տարաւ Պալակն զԹագաւորն ի դուռն կառկառայ[1], և նա տայր զկառկառ ի ձեռս Պալակին. և տարան զԹագաւորն և զքուրորդին ի Թաբրեզ, և երկաթի կապանօք եդին ի խոր բանտին, ուր եդեալ կայր Ճօսլին և Գալերանն:

Յայսմ ամի զկնի հինգ ամսոց որ այս գործեցաւ, եղեւ զարմանալի ինչ. վասն զի յազգս այսորիկ եղեւ կատարած կօրստեան: Յարուցեալ միաբանեցան արք հնգեհատասանք ի յամուր բերդէն Պահևսնոյ, և խորհեցան խորհուրդս քաջայց և կատարեցին զգործս անմահից[2]: Յարուցեալ արանցս այսոցիկ գնան ի Հաւնիիր գաւառն[3]. և յաչս[4] ունէին զամուր բերդն Թաբրեզոյ, ուր կայր յարգելանոցի Թագաւորն Ֆռանկաց և Ճօսլինն և Գալերանն. և տեսին զպահապան բերդին սակաւս, և կային անհոգս. գնացին ի դուռն՝ գծուծ կերպարանօք, և իբրեւ զդատաստանաւորք[5]. կայր և այլ ոք բանտաւ ի ներքս ի բերդն: Եւ զկնի սակաւ մի ժամու դիմեցին և մտին ի բերդն, և քաջապէս չանացան ի բանտն, և զոր ի դուռն գտին՝ սպանին և փակեցին զդուռն. մեծաւ ազաղակաւ հասանէին ի բերդն, ուր էր Թագաւորն արգելած, և Ճօսլինն և Գալերանն և այլ իշխանքն. և հասին զնոսա ի բանդէն մեծաւ ուրախութեամբ. և զայլս ոմանս զոր բազում հանին ի կապանաց, արք և կանայք. և ոմանք ի տեղացեացն մտին ի

1. Ինչուան հիմայ ծանօթ քաղաքաբերդ Եփրատայ եզերքը, որպէս և վարը յիշուած Պահևսնին կամ Բհևևսնի:
2. Քաջերուն արժանաւոր գեղեցիկ զրուցուած:
3. Դ Հայոց նահանգին գաւառ մի, յորում էր անուանի քաղաքն Թաբրեզ:
4. Թիւեին, զննէին. աչել՝ նայիլ բառին արմատն:
5. Աղքատի ձեւով, և իբրեւ գատաստանի եկած:

բանան վասն փրկութեան թագաւորին և Ճօսլինին և այլոց կալանաւորացն: Եւ ելեալ թագաւորն և ամենայն բանտարկեալք, և առին զերդն և տիրեցին ամենայն տանն Պալակին: Եւ իրրեւ լուան զայս զօրք այլազգեացն որք էին ի գաւառին, փախեան ի յայլ աշխարհ. և վասն այլ գիշերին չարթեքչարաթ լուսանալն՝ ելեալ Ճօսլինն և հետեւակ մի ընդ նմա, և գաղտաբար գնացին ի փեւռեն, և անտի գնացին յԱնտիոք, զի զօրաժողով արասցէ և գայցէ յօգնութիւն թագաւորին և այլոց կալանաւորացն:

ՄԶ

ՅՈՎՀ. ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ[1]

(ԿԻՐԱԿՈՍ)

Մեծիմաստն գիտութեամբ քան զյոլով և հանճարեղն ամենայնի, մտահարուստն Յովհաննէս՝ Սարկաւագն կոչեցեալ[2] ի Հաղբատ. սա բազում ինչ աշխատասիրեաց ի գիրս՝ յիշատակ բարի թողեալ. սա զբազմայ փափաքելին և ոչ ձեռնհասն՝ զհաստատ և զանչարժ տօմարն կարգեաց Հայոց, փոխանակ չարժականին և անհաստատնոյն. արար և զվիսբանութիւն ամենայն ազգաց տումարին[3]

1. Մեր հայ գրագիտաց ամենէն հանճարեղներէն և ճարտար գրողներէն մէկն է, ԹՒ գարուն վերջերուն, ԺԲին սկիզբներուն:

2. Անշուշտ քահանայ էր. բայց ինչո՞ւ Սարկաւագ կոչուի:

3. Հաստատ կամ Անշարժ տօմարին հետ նոր թուական մ՚այլ հաստատեց, Քրիստոսի 1084 տարիէն սկսեալ:

ընդ Հայոց. վասն զի յոյժ իմաստուն էր այրն, և աստուածային չնորհօք զարդարեալ: Սորա բանքն ամենայն իմաստասիրական ոճով է, որպէս զԳրիգորի Աստուածաբանին՝ և ոչ դեղձուկ: Սա գրեաց ճառս ներբողական ի մեծազօր արքայն Հայոց Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի աքանչելին Սահակ և Մեսրոպ[1]. արար և չարաչանս Վահեւնդեանց քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, որոց սկիզբն է այս. Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք: Գրեաց և ճառս ներբողականս նոցունց[2]. գրեաց սա և գիրս Աղօթից[3]. գրեաց և օրինակս սոցայգ Գրոց[4]: Եւ կարի յոյժ սիրէր զսա թագաւորն Վրաց Դաւիթ, հայրն Դեմետրեայ, պապն Գէորգայ և Դաւթի. այնքան՝ զի մինչ լսէր զգալուստ նորա՝ յոտն յառնէր և ելանէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցեալ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւն. և նա եղեալ զձեռն ի վերայ գլխոյ նորա, զայս ասէր. «Գոհ գՊատիժ Ծառայ իմ, իւղով սրբով օծի զնա. ձեռն իմ ընկալցի զնա և բազուկ իմ զօրացուսցէ: Մի մեպիղծ նմա թշնամի և որդի անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զնա»: Եւ ի պատճառս սորա սիրէր թագաւորն զազգս Հայոց:

Դէպ եղեւ սմա վասն անառակ գնացիցն որչել զամն ի խորհրդական պատարագէն, Զոմզոմա անուն. և նա փոխանակ զղջանալոյ և ապաշխարելոյ՝ խորշէր սպանանել զաքանչելին. և օր մի պատահեալ նմա՝ մինչդեռ գայր նա յայրէ անտի՝ որ

1. Ա.յս Ներբողներն անծանօթ են մեզ. միայն Ս. Լուսաւորչի վրայ գրածն կայ և տպագրեալ է:

2. Ա.յս ներբողն այլ չկայ:

3. Ա.յս Աղօթագիրքն տպագրուած է ի Ս. Պազար:

4. Ա.յսինքն Աստուածաշունչ գրոց, բաղդատեալ ձեռագիրքեր. կ՚ըսուի թէ գոեր էր և քուն մեր Թարգմանչաց ձեռօք գրուած օրինակ մի, և երեսացը քսելով պագներ:

ի ներքոյ կայ վանիցն (Հաղբատայ), հայելով ի վերայ գետոյն, ըմբռնեալ անամօթն՝ ընկէց յերկիր և հարաւ ի վերայ նորա: Իսկ սուրբն զի իմաստուն էր, ասէ ցնա. Որդեակ Ստեփաննոս, մի սպանաներ զիս: Եւ ասէ ցնա յանդուգն. Մինչեւ ցայժմ Զոհզոմա էի, իսկ այժմ փոխանակ միոյ նուի բազումս յաւելուս Ստեփաննոս. (քանզի աւելի ա-նուն նորա Զոհզոմա էր[1]). դու ընդէր սպաներ զիս, զի հաներ յեկեղեցւոյն: Ասէ ցնա իմաստասէրն. Եւ դարձեալ մուծից զքեզ յեկեղեցի: Եւ եկեալ ի վանս ասէ ցեղբարսն. Զոր ինչ ասէին զեղբսրէս զայս-մանէ՝ կարծեմ թէ սուտ է. ահաւասիկ մուծանեմ զսա յեկեղեցի: Եւ հրամայեաց եկեղեցպանին առնել զնա աւազդ երէց: Բազում զբթմնջիւն էր վանս այնորիկ, որպէս թէ անարժան էր, և նա կաշառս էառ և եմոյծ զնա յեկեղեցին: Իրրեւ եհաս ժամ խորհրդական պատարագին, եղ Թշուառականն ի բեմն անդր զի մատուսցէ պատարագ. և եկն վարդապետն ի գաւիթ անդր ի մէջ ատենին հանդէպ սրբոյ սեղանոյն, երաց զղլուխն իւր, սկսաւ աղօթել. և վազվազակի ոգի չար եմուտ յայրն աներ-կիւղ, և ընկէց զնա ի բեմէ անտի յատակս տաճարին, և սկսաւ լլկել զնա յոյժ. և հանին զնա արտաքս ի տաճարէ անտի, որպէս զՈզիա. և երկիւղ մեծ անկաւ ի վերայ ամենայնի:

Եւ այսպիսի բարի քաղաքավարութեամբ կեցեալ յաշխարհի՝ փոխեցաւ ի Քրիստոս աշխատասէրն՝ ի Հաղբատ. և Թաղեցին զնա յարեւելից կուսէ եկեղեցւոյն մեծի առ դուռն փոքրագոյն եկեղեցւոյն[2], զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն Հաւազապ և

1. Այս նախատական մականունը չգիտեմ ինչ նշանակէ: Թուի թէ Սարկաւագ ձայնը կակղացընելով Ստեփանիոս կ'ըսէր:

2. Իր վարժ մտաց համեմատ է և տապանագիրն. Արծաթս այս Սեմական է Սոփեստէսի Սարկաւագին:

չինեաց հրաշալի չինուած՝ ուր զանկական կախէին, յարմարեալ ի նմին և եկեղեցիս: Եւ եղեւ վախճան սրբոյն ի հինգ հարիւր եօթանասունն և ութ թուականին (1129[1]): Եւ զկնի ամի միոյ վախճանեցաւ սուրբ լուսաւորիչն Գաւիթ վարդապետ Աշաւկայ որդի, որ զրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմար և պիտանացու[2], ի խնդրոյ քահանայի միոջ որում անուն էր Աբրահոտիւն, ի քաղաքէն Գանձակայ: Եւ միւս եւս աքանչելի վարդապետն՝ զոր Թոքաքերի որդի կոչէին՝ Գրիգոր անուն. սոքա երեքին յաշխարհէն Գանձակայ էին, ուստի և ես: Դեպ եղեւ զի յաւուր միում նստէին երեք այս արքս աքանչելի. եկն անդ այր մի չինական, և ասէ ցնոսա. Երանի՛ որ գիտէ ի ձէնջ թէ ո՞րդ իմաստնագոյն իցէ. զայս իրրեւ ծաղրական ասաց: Պատասխանի ետ Թոքաքերի որդին և ասէ. Ես ասեմ քեզ. մինչդեռ էաք ի մերում աշխարհին՝ ես կարող էի և կարող. իսկ Սարկաւագս կարել միայն գիտէր. իսկ այժմ սա կարէ և կարէ, և բազում նկարս յաւելու ի վերայ: Զայս առակաբար վասն յիմարութեան նորա ասաց. զի այնպէս փոյթ էր այրն յաւուրսն, մինչ պատահեաց յաւուր միում գնալ յայրն յորում էին զրեանքն, և այլք ընդ նմա. իրրեւ ելին որ ընդ նմա էին և փակեցին զդուռն, նա թաքոյց զանձն ի ներքս. այսպէս գիտելով նոցա՝ եթէ նախ ել նա: Իրրեւ անցին բազում աւուրք ի վերայ՝ դարձեալ գնացին յայրն ի պէտս ինչ, և տեսին զնա անդ, և աքանչացան, և հարցանէին՝ թէ ո՞րպէս ապրեցար առանց կերակրոյ և ըմպելւոյ. և եցոյց նա զզրեանն զոր ընթերցեալ էր, և ասէ. Այդ է իմ կերակուր և ըմպելի՝ զոր կերայ և արբի զաւուրս զայսոսիկ[3]:

1. Ոմանք առան սարի առաջ կամ վերջ նշանակին զԹուականն, կ (60) և Հ (70) տառից չփոթմամբ:

2. Այս օրինադրութիւնք մասամբ հասած են մեզ:

3. Մելչիսեդեկեան Թուրքաց համար է ըսածն:

ՄՋԱ.

ՓԱՏԼՈՒՆ ԱՄԻՐԱՅ ՏԻՐՔ ԱՆԻՈՅ· ՓԱՋՈՒԹԻՒՆ ԱՅՏԵԱՄՆ ԿՆՈՋ

(ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ)

Ի բազում հինահարութեանց և ի սպառ ջընջելոյ ասպատակ արձակելով յաշխարհս մեր, երբեմն ի վրաց, երբեմն ի Սկիւթացւոց[1], անհնարին նեղութեամբ տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անւոյ և Շիրակ գաւառի, խորհեցան եկս գտանել մերկին՝ ձեռս տալով յարքային Վրաց ի Դաւիթ. նենգեցին ամիրային Ապլառաբայ որդւոյ Մահուչէի՝ որ տիրէր քաղաքին՝ յետ հօրն մահու. առնլով վճռագուռն ի ներքս, բանալով դրունս քաղաքին. որ ընդ մտանելն եղեւ ինչս արեան և ոչ մի չնչոյ. բայց կալեալ զԱպլսուար որդւովքն՝ ընդ իւր խաղացոյց յերկիրն Վրաց, ի մահարար տեղւոջ բնակեցոյց զնոսա. ուր երկու որդիքն հանդերձ հարրն վճարեցին զկենցաղս: Նոյնպէս և քաղն Դաւիթ մեռանի. անդէն թագաւորէ աշխարհին Վրաց որպի նորա Դեմետրէ զուարթ յաժենայն արիական մանկութիւնս: Իսկ փատղուն անդրանիկն Ապլսուարայ՝ գնացեալ յառաջագոյն առ ամիրապետն ի Խորասան, յորժամ լուաւ զայսպիսի լուր գնօրէն և զեղեցաց, փութացաւ զալ յերկիրս մեր. և չուրջ զքաղաքաւս գիշխողս իւրաքանչիւր տեղեաց ի բանի արարեալ՝ պաշարեաց զսա. վասն որոյ զամն զայն ողջոյն օր ըստ օրէ առատակացան հարուածք սուսերի. և բնակիչք սորա

1. Ապ-իւլ-Ասվար, Շէտատատեան քուրդ ցեղի եիւղ մի էր Ասվար կոչուած, յորմէ մեկն այլ Դաւին մայրաքաղաքին աիրեց:

ի կողմանս կողմանս ելս առնելով ի գիշերի[1]. յորոց վերայ անկեալ գարանեալքն՝ զարս կոտորէին, որոց արեամբ և ոսկերօք ծածկեցաւ երկիր, և զկանայս և զմանկունս՝ վաճառակուր առնէին: Եւ թէպէտ եռեզակալք գային յաշխարհէն Վրաց երբեք երբեք արք անուանիք, որպէս անուանի քաջագործին Իւանէ որդի Ապղնեթի, որ բազում արութիւնս ցուցեալ՝ զասպատակս կոտորէր, և ի զօրաժողովն լինել ի վերայ քաղաքիս՝ փատղունոյ՝ բազում հեծելովք առ ոչինչ համարեալ՝ պարտէր. այլ և սակաւ արամբ պատճառք եղեւ փրկութեան քաղաքիս, մարտակըցութեամբ բնակչաց սորա:

Եւ յայսմ պատերազմի կին մի առաքինացաւ ի վերայ պարսպացս, առնացի ստացեալ սիրտ. հալածականս առնէր քարամբք զմարտուցեալսն յեղանելն ընդ պատուարան՝ առ ոչինչ համարեալ զվտացած նետիցն զոր վիրաւորէին արտաքուստ. և էր անուն նորա ըստ արժանի արագութեանն Այծեաւն կոչեցեալ: Սակայն, վասն զի թագաւորութիւնն Վրաց չեւ էր հաստատեալ բովանդակ, և սովն և մարդածախութիւն յղօվացաւ, ապա հարկեցան տալ անդրէն ի փատղուն զսա. զաշխնս երդմանց պահանջեալ ի նմանէ՝ չառնուլ վրէժս ի նեղելոց հօր նորա և եղբարց, զոր թէպէտ և յանձն առնոյր առ ժամայն, այլ յետ զպարապ առնլոյ՝ իւիք իւիք հնարիւք առ զվրէժս, հատուցեալ նոցա զհատուցումն: Ցորոյ իշխանակալութեամբն թէպէտ և խաղաղանայր երկիրս ի սովորական հինից, այլ վասն վերոյգրեալ նեղութեանց և յաղագս հարկապահանջ յափշտակութեանց, եկն եհաս ի վերայ մեր յետին աղքատութիւն և տառապանք անհնարին, որ յառաջագոյն ժամանակաւ ունէր զաշխարհս Հայոց, և ասասանօր յատկու յաճախապէս մինչեւ յատուրս յայսոսիկ յորում եմք:

1. Գիշեր առեն Անեցիք քաղքին այլեւայլ կողմերէն կ'ելլեն փախչելու:

ՄՂԲ

ԺԱԺ ԳԱՆՁԱԿԱՑ

(ՄԻԽԻԹԱՐ ԳՈՇ)

Յամենայն արեգի որ օր ուխտեւտան էր ամասոյն, ի գիշերի ուրբաթուն ի լուսանալ շաբաթուն, յորում աւուր սուն էր Սրբոյն Գէորգայ, զարթեաւ ցասումն բարկութեան Աստուծոյ ի վերայ աշխարհի՝ ի բռնութենէ հղմոյ[1], և չարժեալ անհնարին դողմամբ սաստիկ կործանումն հասուցանելով աշխարհիս Աղուանից, ըստ գրելոյն, թէ, «Ո չարժէ զառ ի ներքոյս երկրի ի հիմանց, և սիւնք նորա դողան. և ըստ միւսոյն, Ո հայի յերկիր և տայ դողալ սմա»: Որով չարժմամբ բազում աւերուած լինէր ընդ բազում տեղիս ի գաւառիս փառհատոյ և խալխևոյ, առ հասարակ ի դաշտս և ի լերինս. յորում և մայրաքաղաքն Գանձակ առ հասարակ յանդունդս կործանիւր, խորասոյզ առնելով զրնակիչս իւր. քանզի չորս կողմ երեսաց նորա ամիսոփեաց զնոսա ի ծոց իւր. և ի լեռնակողմանս բազում դղեակք և գիւղք տապալեցան հանդերձ վանորայիւք և եկեղեցեօք, որք փլան ի վերայ գլխոյ բնակչաց իւրեանց. յորում և անթիւք սատակեցան ի կործանմանէ չինուածոց և աշտարակաց. և լինէր այս ի ՇՀԸ (1139) թուականին Հայոց:

Իսկ ի նոյն յաւուրսն յորում եղեւ չարժումնն, ել թագաւորն Վրաց հանդերձ զօրօք բազմօք և եկն ի գաւառն Աբանայ[2], որ անուանեալ կոչիւր Դե-

1. Յիշեցինք որ ըստ կարծեաց ումանց՝ երկրի ներքեւ խորոց մէջ հովերք չնչեն, և անկէ պատճառի գետնաշարժն:

2. Նոյն Հայ–Աղուանից երկիրն է:

վետրէ՝ որպէս Դաւթի թագաւորի. սորա եկեալ ի մայրաքաղաքն Գանձակ՝ յառաջնորդութենէ զօրագլխին իւրոյ Իւանէի, որ եկեալք անողորմ և գազանային բարուք՝ յարեան ի վերայ ինացորդաց մարդկանն, վարելով առհասարակ ի սուր և ի գերութիւն. որ թէպէտ և տեսին զքաղաքն զայն որ յառաջագոյն էր քաղաք վայելուչ՝ որպէս զդժոխք եղեալ յանկարծակի, զի ի միասին կուտեալ էին ի նմա բլուրք ոսկւոյ և բլուրք ոսկերաց մարդկան, յորում և անթաղ կային անթիւ բազմութիւնք գիականց. սակայն ոչ կամեցան առնել ողորմութիւն ի վերայ նորա. այլ փութային հանելով գանձս ոսկւոյ և արծաթոյ, և քերելով և ծառայանօք առեալ չարչարեցին քան զժամանն: Իսկ յաւուր չարժմանն՝ ի սաստկութենէ հարուածոցն փոխեցան առ Քրիստոս լուսաւորիչ վարդապետքն մեր Յարգիս և Գրիգոր[1]: Իսկ յետ աւուրց ինչ անցելոյ, ամիրայ ումն ի Տաճկաց՝ որ անուանեալ կոչիւր խարանգուղ, որ ըստ պարսկային բարբառոյն սիրեզրատիալ անուանեցաւ, որոյ ելեալ յաշխարհէն Պարսից եկն ի գաւառս Աբանայ, և սիրելի որպէս չինութեան և հաստատութեան այսմ աշխարհի, և չինեաց զաւերեալ պարիսպ քաղաքին Գանձակայ, և առնէր խաղաղութիւն ամենայն սահմանաց նորա. և ապա դիմէր ի վերայ գաւառին որ ընդ իշխանութեամբ Թագաւորին Վրաց, առ ի վրէժխնդիր լինել վասն գաւառի իւրոյ որ աւերեալ էր ի ձեռաց նորա, քանզի յառաջագոյն ընդ նորա իշխանութեամբ էր Գանձակ հանդերձ ամենայն սահմանօքն իւրովք: Ապա երթեալ յաշխարհն Վրաց միանգամ և երկիցս՝ զարհաւրեցուցանէր զնոսա զողմամբ, և առնոյր յամուր զղեկաց նոցա և նուաճէր զնոսա, և գառնայր այսրէն ընդ լեռ-

1. Ի՞նչ էր այս վարդապետաց առաջ լսյոն, կամ ո՞վք էին, մեզ անծանօթ են:

նակողմ Գեղամայ[1]. ապա անցեալ ընդ գետն Երասխ՝ հասանէր ի սահմանն Ատրպատականի, և անդ վախճանէր զկեանս ի ՇՀԹ թուականին Հայոց։

ՄՋԳ

ԱՌՈՒՄՆ ՈՒՌՀԱՅԻ Ի ՋԱՆԳԻ ԱՄԻՐԱՅԷ[2]

(Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ. ՄԾԷ.)

Ի տէրութեանն Անտիոքու որդւոյ Պետեւինի[3], որ էր ի տիս մանկութեան՝ սկայազօր և ուժեղ, այլ ոչ խելանի յիմաստասիրութեան, յիշխանութեան Պաղտինի, որ էր Տէր Բեանոյ և Մարաշայ և գաւառաց նոցա, ի սիւնօդէն[4] Մելտենոյ մինչեւ ի գուռն Անտիոքու, որ էր տալ տիօք և ծեր մտօք, աստուածաշաճոյ յամենայն ի գործս արդարութեան. ի կոմսութեան Ջօսլինի փոքու՝ որդւոյ մեծի քալ զօրականին Ջօսլինի, ի հայրապետութեանն Հայոց Տէր Գրիգորիսի[5] տանն Թորգոմայ. յաւուրս սորա և յաւազասացեալ թուականութեանս, ի տօնի սրբոյ Նախավկային Ստեփաննոսի, անտես եղեալ քաղաքն Ուռհայ ի քաղցր կամաց Աբարչին, որ և առաւ բռնութեամբ յորդւոց Հազարու, որոյ անուն գլխաւորին Ջաւիգի յորջորջէր. զոր բազում և անխնայ արիւն հան հեղուլ, ոչ խնայելով ի պատուական ծերսն. ոչ մայր ի

1. Սեւանայ ծովուն արեւմտակողմն։
2. Յաջորդ յօդուածին մէջ պիտի տեսնուի՝ որ մեր Շնորհալի Հայրապետն՝ թէ և բանաստեղծօրէն զրելով՝ չատ աւելի տեղեկութիւն տայ այս դիպուածիս վրայ։
3. Bodouin որդի էր Ումմունդ դքսի։
4. Սահման, մտա, զրացի երկիր։
5. Եղբօր Ներսիսի Շնորհալւոյ։

դուստր գթայր, և ոչ ողորմելով զառնանման արզայոցն. որ և յահէ սրոյն զարհուրեալ քաղաքացեացն՝ փախատեամբ դիմեալ յապաւէն իւրեանց, զոր կոչէ Մաթիհակայ ասէին[1]. ոչ եղբայր զեղբայր հոգայր և ոչ հայր զորդին, և ոչ մերձաւոր բարեկամ ի սիրելիս իւր նայելով, յաղագս գառն և ծանր լուսոյն այնորիկ. ոչ ժամանեալ փախուցելոցն մտանել յամուրն իւրեանց, խեղդամահ եղեալ ի դուռն ամրոցին՝ և մեռան ոգիք իրրեւ երկու հազարք. որ և պապիսան[2] Ֆռանկաց հեզձաւ յամբոխամիջի անդ։ Զայսոսիկ տեսեալ բռնաւորին՝ զղջացաւ ի միտս իւր, և հրամայեաց վերացուցանել զսուրն որ անխնայ և անողորմ կոտորէին զմարդիկն ի փողոցամիջի անդ՝ իրրեւ զանասունս. և զազգն Ֆռանկաց զոր ըմբռնեցին՝ հրամայեաց առաջի իւր սրախողխող առնել, և զկին և զորդիս ի գերութիւն վարել. և որք փախուցեալ քրիստոնեայք էին որք ժամանեցին մտանել յամրոցն, ոչ բաւեցին աւուրս բազումս, քանզի չուր ոչ ունէին. ասին և զայս սիրով և երգմամբ։ Եւ ամբարտաւանն այն կամեցաւ խաղաղեցուցանել զքաղաքն, և հրամայեաց քարոզել՝ մի ամենեւին այլ զժուար առնել քրիստոնէից, քանզի չագեցան ամենեքեան արեամբ և զանձիւ։

Դարձեալ խրոխտացաւ ի միտս իւր՝ որպէս և կատարեաց զյաղթութիւնն մեծ, զոր ի բազում ժամանակաց ոչ ոք ի մեծամեծաց և ի վեհագունից կարող եղեւ սիրել բռնութեամբ քաղաքին օրհնելոյ ի Տեառնէ, զոր անուա բերանովն հրամայեաց ի մարգեզութեանն իւրում, զոր զրեաց ի Թղթին իւրում առ Աբգար[3] թագաւորն, թէ, «Սով

1. Անուամբ երբեմն սիրուղի քաղաքին։
2. Ոչ պապն Հռովմայ, այլ Անտիոքայ պատրիարքն։
3. Անվաւեր թուղթ մի, զոր Եւսեբիոս, Խորենացի և այլք յիշեն. բայց անոր մէջ այս քաղքին պաշտպանութեան կամ չառնուելուն խօսք չկայ։

և սուր ոչ մտցէ ի քաղաքս քո՝ ի ժամանակի թա-
գաւորութեան քո, եթէ կայցեն ի հրաման պա-
տուիրանի իմոյ»: Զոր և մոռացեալ նոցա յետ
ժամանակաց պատուէրն Աբարչին՝ նմանեալ Իս-
բայելացւոցն, (որք) յետ բազում երախտեացն զոր
ընդունէին յԱստուծոյ, դարձեալ փոխանակի մո-
ռանային զաստուածատուր և զանձան բարիսն,
զոսին և զսխարն Եգիպտացւոց և զդաման ծա-
ռայութիւնն՝ յոգւոց հանելով յիշէին, մինչեւ զան-
բարկանալն Աստուած ի ցասումն սրտմտութեան
բորբոքէին՝ ոչ տալ տեսանել նոցա զերկիրն խոս-
տացեալ: Նոյնպէս քաղաքացիքն զայս խոստումն
Աստուծոյ մոռացեալ էին, և գործէին զանարժան
հակառակ կամաց ողորմածին Քրիստոսի. որ և ըղ-
փոխարէնն առին՝ ըստ անիմաստ մտաց իւրեանց:

ՄՋԴ

ՈՂԲՔ (Ի ԴԻՄԱՑ ՔԱՂԱՔԻՆ) ԵԴԵՍԻՈՅ[1]

(ՆԵՐՍ. ՇՆՈՐՀԱԼԻ.)

Քայց եւ ըզքեզ յայս հրաւիրեմ
Աբեւելեան քաղաքդ Ամի,
Կըցորդ իմոյս լինել ձայնի

1. Եթէ չասերն չեն կարծացեր՝ բայց լսած են, որ մեր Շնորհալի Հայրապետն՝ իր տաճն (1144ին) այս քաղաքին առման և փորձանաց վրայ երկայն ոտա-նաւոր ողբախառն պատմութիւն մի գրած է, համա-րելով թէ ինքն քաղաքն Եդեսիա կամ Ուռհա՝ իբ-րեւ թշուառ թագուհի մի կ'ողբայ իր և իրենեներուն վրայ. և իրմէ առաջ նոյնպիսի փորձանաց հանդի-պողները կու հրաւիրէ ողբակից ըլլալ. որոց մէկն այլ էր մեր աշխարհահռչակ Անի քաղաքն: Աւելորդ

Եւ ըսթափել տարակուսի.
Քանզի և դու երբեմն էիր
Վայելչական հարսն ի քողի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի
Հեռաւորաց վախագելի:...
Այլ կարեկից ինձ այս վըշտի՝
Պարտ է կոչել աղերսալի
Զչորեքծագեան կողմ աշխարհի՝
Որք ընդհանուր մարդկան որդի,
Զարեւելս արեւմըտիւք
Եւ զհարաւ ընդ հիւսիսի:...
Եդեսիա Ուռհայ քաղաք
Որդեկորոյս որբ և այրի՝
Կանչեմ առ ձեզ ձայն կանացի
Կականալիր ողորմելի.
Զքօղս ի գլխոյս վերկանալով՝
Զիմ պատառեմ զծածկոյթ զարդի.
Փետեմ ըզվարսս իմ ցանկալի,
Խըզեմ ըզհերս անխնայելի:...
Նըստիմ ի սուգ ի տան մըթին
Որպէս օրէն է սգաւորի...
Քանզի առակ եղէ յերկրի,
Տիեզերաց նախատելի.
Եւ անցաւորք ճանապարհի
Վայ ի վերայ ասեն վայի.
Չի ոչ ծածուկ էի տեղի
Կամ ի յանկեան ինչ թաքըստի,
Այլ ի գետոցն որ յԱդեմի՝
Էի բազմեալ ես ի մէջի,
Ի յԵփրատայ և Տիգրիսի՝

է ըսել՝ որ Շնորհալւոյ դեղեցիկ և խնկատիպ գրուա-ծոց մէկն է այս անուանեալն Ողբք Եդեսիոյ, թարգ-մանուած և փառնկերբէն. 2000 տողէ աւելի է գրածն, որոց առաջին կիսոյն մէջէն քաղելով քանի մի հա-տիկ տող հրատարակեմք, թողածներուս նչան դնե-լով այս... կէտերը:

Ո՛ր Միջագետքն անուանի։...
Ես մայր էի բազմարդութեան,
Ընթիւ ծընայ գուստր եւ որդի,
Զորս մայրաբար դիեցուցի՝
Ի տեառնց իմոց կաթն արբուցի.
Գեղեցկատիպ յօրինեցի,
Վայելչապէս զարդարեցի.
Քանզի երկիր պարարտ էի,
Աղբիւր և կաթն յորդ բղխէի,
Արգասաւոր վայրի նըման
Ի այլ գերագոյն ես թըւէի.
Զուր կենդանի չինէն բղխէր
Եւ զանազան բոյս յօրինէր.
Գետոց նըման վրտակ հոսէր
Ըզբուրաստանս արբուցանէր.
Ծովիլ ի միջի իմ ծածանէր
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր.
Զաղտեղութիւն տըղմից մաքրէր
Եւ զհրապարակսըն զարդարէր[1]։...
Տերեւախիտ հեզիկ չարժէր,
Անմահութեան հոտ իսկ բուրէր.
Նարդոս քրքում ինձ ընձիւղէր,
Վարդ մանուշակ վերաբերէր,
Առաւօտեան ցօղն իջանէր
Ոսկենըման ճաճանչ փայլէր.
Անհամեմատ երկրի նա էր
Պտղովիլ աւեն զոր ընծայէր։...
Բայց թէ զդիրս իմ յանկաւոր[2]
Ոք պատմեսցէ պատչաճաւոր,
Կարծեմ թէ չէ նմանաւոր

1. Յայտնէ քաղքին մէջ թէ ջըրի մեծ աւազան և թէ շատ աղբիւրներ ըլլալն, թէ մաքրութեան համար և թէ պարտիզաց ոռոգման։

2. Հետեւեալ տողերով նկարագրէ քաղքին գեղեցիկ զիրքը, չէնքերը, ամրութիւնները, վաճառանոցները, և այլն։

Այս քաղաքացս որ երկրաւոր.
Լայն և արձակ նստեալ յաթոռ՝
Որպէս ի կառըս թագաւոր,
Կամ թագուհի յոյժ գեղաւոր
Ոսկեշըտուն և ճամկաւոր,
Փողփողելով ի վերջաւոր
Պայծառազգեստ և պճնաւոր.
Շուրջանակի պարսպաւոր
Պարիսպ ածեալ լայն և ամուր,
Աշտարակօք բարձր ահաւոր,
Իմաստապէս արուեստաւոր.
Հաստահեղոյս հիմամբ ի խոր
Մահարձանօք պըսակաւոր.
Տունք և տաճար զարմանաւոր
Շինեալ ի գիրկս իմ չքեղաւոր.
Յարկ և փողոց, տեղ վաճառոց
Գոյր յօրինեալ հանճարաւոր։
Բայց ըզխորանըսն լուսաւոր[1]
Թէ որպիսիք յոյժ փառաւոր,
Զայն չէ ասել ինձ հնարաւոր
Կամ հաղիւէն մարդ երկրաւոր.
Զի երկնայինսն է նմանաւոր,
Վերնագունին հանգիստաւոր.
Զարմանագան և աննման,
Զոր չէ տեսեալ մարդ բանական.
Այնպէս կայի յոյժ խնդաւոր
Զերդ մայր որդւով բերկրեալ յորդոր։...
Եօթանաստուն խորհըրդաւոր
Աւանք պատեալ կինեւ բոլոր[2],
Եւ ես բազմեալ գերդ թագաւոր
Կայի ի մէջ հանդիսաւոր։
Արդ, այս բարիքս որ պատմեցան
Փոքր ի չատէ բան ճառեցան,

1. Եկեղեցեաց համար կ'ըսէ։

2. Մանր գեղերէն զատ՝ 70 մեծ գեղ կամ աւան այլ ունի հղեր Եդեսիա իր չորս կողմն։

Որ ի յանցեալ դարուն ակաան
Եւ այժմ առին փութթով վախճան։...
Բարիքն ամեն ըսպառեցան
Եւ քաղցրութիւնքըն՝ պառնացան,
Եւ երանի տալոյն փոխան՝
Չիս եղկելի այժըմ կարդան.
Իմ թշնամեայ գաւաքըն խնդան,
Եւ սիրելիքս կարի ողբան.
Գլուխ ի վերայ իմ ամբառնան
Որք ի ներքոյ ոտից եզան։...
Յայնժամ յարեան ի յիս վերայ
Աղգք և ծընունդքըն Հագարայ.
Յառաջ՝ զորդիան իմ զոր ծընայ՝
Կոտորեցին յոյժ անխընայ,
Ապա զաւանսըն պարագայ
Որք և կային ինձ չըրջակայ՝
Գանգեցին աւերեցին,
Հողարբուր թողին գնահին.
Եւ այս ի յամն էր ոչ սակաւ՝
Այլ քառասուն և այլ գերակայ[1],
Յորս ի յաւժոյ պակասեցայ
Եւ զօրութեամբ տըկարացայ.
Հէնք ի հինից գային վերայ,
Ապատակաւ ես գերեցայ։...
Արդ, զայս տեսեալ բռնաւորին
Եւ նենգաւոր թիւնաւորին...
Արձակեցաւ յանկարծօրէն
Եւ յեզակարծ ժամանակին.
Յորժամ լըսաւ և իմացաւ
Որ զօրականքն իմ աստ չէին,
Յայնժամ պատեաց չուրջանակի
Չիս պաշարեաց զօրօք նորին[2]...

Ելիմացիք և Գեղացիք
Անթիւ բազում լեգեանին.
Չօրք բիւրաւորք պատեալ կային
Անել և անմուտ գիս առնէին...
Չըրահաւորք մըկընդաւորք
Նաբօք ի մարտ վառեալ գային
Ձօշիւք[1] պատեալ բոլոր անձին,
Տիգաւորք և աղեղնաւորք
Նետիւք հարեալ խոցոտէին.
Պատնէշ կանգնեալ մեքենայիւք՝
Ըռըմբաքարըս հոսէին.
Ծեծէին հարկանէին
Անհընարին տագնապէին։
Բայց այսոքիւք ոչ կարացին
Յաղթել քաջացն՝ որ յիս կային,
Մինչեւ ի յայլ հընար մըտին
Այն խորամանկ նենգաւորին.
Որպէս գխլուրգըն[2] փորէին,
Ներքոյ հիմանց ամրականին՝
Սիւնս և նեցուկս հաստատէին
Աչատարակացն և տաճարին,
Այ ի յայրել պատրաստէին,
Որպէս օրէն է այս նոցին։
Յայնժամ բարբառ արձակէին
Այ ժողովուրդըս քաղաքին,
Մի յամառել ընդդէմ նոցին,
Չի մի մահու մեռանիցին.
Այլ տալ յօժար և կամավին՝
Չի բարութեանց պատահիցին։
Եւ գայս լըսեալ՝ ժողովէին
Գաջքն և արիքն ի միասին.
Պընդէին հաստատէին

Հաթաղն. Զանգի, արդի Մելիքշահէն այն կողմերու իշխան դրուած Աղ-Սօնղօրի։ Տես Յօդուած 265։

1. Զրահ նշանակէ։
2. Գետնի մուկ, Taupe.

1. Գրեթէ Թաշակրաց գալէն և Եղեսիոյ տիրելէն քիչ տարի վերջը սկսած է անոր նեղուիլն Յայլազպեաց։

2. Նախընթաց Յօդուածն իմացուց թէ ով էր պա-

Ուխտս և դաշինըս դընէին՝
Ոչ երկուանալ ի հանդիսին,
Ոչ լըքանել պատերազմին,
Ոչ հաւանել բանից նոցին
Եւ ոչ կամաւ բանալ նըմին[1].
Քանզի բարւոք վարկանէին
Թէ անդանօր մեռանէին,
Եւ ոչ սըտել մեծի ուխտին
Եւ վայելել առօրէին.
Մակաբայեանց նըմանէին
Եւ վարդանանց պատերազմին...
Քաջալերէր հայրըն զորդին,
Որդիքն ի մարտ պատրաստէին...
Եպիսկոպոսք և վարդապետք
Եւ քահանայք պատուիրէին
Անդրդուելի կալ ի մարտին
Արիաբար ընդդէմ չարին:...
Աւրդ, իբրեւ զայս բարբառէին
Եւ քաջալերս միմեանց տային,
Գանէ հասցեն մեզ օգնութեան
Քաջ և արի զօրքն, ասէին[2],
Եւ ի թիկունըս հայէին
Ընդ ճանապարհըս դիտէին...
Թէպէտ և ոչ ժամանեցին
Որոց ինքեանք ըսպասէին.
Քանզի յամեալ յապաղեցին
Որք ընդհանուր կազմանս էին՝
Գալ յօգնութիւն իմոյ կոմսին՝[3]
Երկրպագուք սրբոյ Խաչին:
Վասն այնորիկ յոյժ փութային

1. Կ'իմացուի թէ քաղաքացիք յանձն չառին զըռնները բանալ և հնազանդիլ պաշարողին:
2. Յուսալով որ Խաչակիրք իրենց օգնութեան գան:
3. Այս կոմսն էր Ժոպիհն կամ Ճոպիհն Բ կամ Փոքր, որդի Ա. և մեծ Ժոսլընի և մեր Պարոն Լեւոնի քաւոր:

Կազմանք դասուց հակառակին[1],
Չի գործ ծածուկ մեքենային
Փոյթ և արագ վըճարեացին:...
Յայնժամ ըզհօրըն Սոդոմին՝
Ներքուստ ի վեր բորբոքեցին,
Ոչ ի վերուստ անձրեւածին՝
Այլ ի ստորինըս փորուածին:
Յայնժամ պարիսպք ամրականին
Վերուստ ի վայր կործանէին
Եւ ի հիմանց տապալէին,
Մուտ թըշնամեացըն գործէին.
Այլ քաջարիքն ոչ կասէին
Ի ոչ ի փախուստ դառնային,
Հայց առ միմեանըս ձայնէին
Քաջալերեալ յորդորէին:...
Իսկ չարութեան արբանեկին՝
Չդասըն վառէր զօրականին,
Հրատարակէր ի լուր նոցին
Արիանալ եւ յայն մարտին.
Յորմէ պարգեւք խոստանային
Եւ մեծութիւն յոյժ երկրային.
Նա և պատիժ պատուհասին
Սպառնայր ածել թոյլ և վատին:
Յայնժամ զինեալք յոյժ վառէին
Գազանաբար յարձակէին
Մերձեալ ի մուտըն պարըսպին:
Իսկ զօրականքն անյապաղելի
Ըզհակառակսըն վանէին.
Մինչ զի զահի հարկանէին
Եւ յետս ընդդէմ նահանջէին:
Հայց, երանի էր իմ անձին՝
Թէ բանք իմ աստ դադարէին

1. Թշնամիք այլ վախնալով որ օգնականք չգան, Ջանային շուտով տիրել քաղաքին, թէ պարսպաց հիմերը փորելով թէ մեքենաներով զարնելով և թէ կրակ թափելով:

Եւ ոչ յառաջ իսկ խաղային[1],
Քանզի ճմլէ զսիրտ լըսողին։
Այլ չէ օգուտ ինձ յայցանել
Բանիւ լըռել զորս ի կարգին։
Քանզի յորժամ ոչ կարացին
Յաղթել քաջացն որ անդ կային,
Յայնժամ վիշապն անդընդային
Գոչեաց առժիկ զօրականին,
Ի սուր և աւար ի գերութիւն
Ասաց առնել զամենեսին։
Եւ զայն լըսեալ Հեբրայեցին[2]
Անթիւ զօրաց բարբարոսին՝
Իրրեւ զեռանդըն կաթսային
Բոլոր պատեալ շուրջ քաղաքին՝
Չերմըն սիրով տագնապէին
Եւ առ միմեանս արշաւէին.
Փողս և տաւիղըս հնչէին
Իրրեւ յամպոցն որոտային,
Զայնս ահագինս արձակէին,
Մինչ զի զերկիր դըղըրդէին։...
Եւ զի տեսեալ ժուժկալեցին
Իբր ամաօրեայ գոլ ի մարտին,
Վասն այն տեղի ինչ ամրոցին
Ի պահակացն Թափուր գըտին,
Յօրում եկեալ բարձրանային
Անակաւաք ոմանք յաշտարակին.
Իսկ ժողովուրդըն քաղաքին
Զայն ինչ տեսեալ՝ զարհուրէին,
Զայնըս գուժի արձակէին
Եւ ի փախուստըն դառնային։

1. Շատ գեղեցիկ և սրատեսուչ զգացուած. նոյնպէս և անդրադարձութիւնն՝ թէ անօգուտ է լռելն, զի ամենուն յայտնի եղաւ գործն։

2. Եթէ սխալ գրուած բառ մի չէ, յայտնի չէ ինչ նշանակէ այս տեղ այլ հեբրայեցի բառն՝ որ հրեայ լսել է։

Եւ ապա զինչ կամ որպիսի,
Անդ տեսութիւնն է դժուարին։
Քանզի խուժան (պաչարողին)
Երբ ըզփախուստըն զայն տեսին,
Առաջամերկըք լինէին,
Մէջ քաղաքին յարձակէին.
Եւ ժողովոցըն բազմութիւն
Մի զմիոյ հետ պնդէին,
Փոյթ ընդ առաջ ընթանային
Մինչեւ ի դրունըս դըղեկին։
Իսկ մարդադէմ գազանք չարին
Ըզսայրասուրըն քարչէին,
Եւ որպէս գայլս ի մէջ գառանց
Ըզհետ նոցա յարձակէին,
Աւ հասարակ կոտորէին,
Արեան վըտակըս հոսէին.
Չերիտասարդս և ըզմանկունս
Անխնայաբար խողխողէին,
Յալիս ծերոյն ոչ գըթային
Ի ոչ ի հասակըն տըղային,
Ոչ ի պատիւ հայրապետին
Ի ոչ յատենան քահանային.
Մինչ զի յարեանցըն ճապաղիս՝
Ծերոց ալիքըն ներկէին,
Եւ քահանայքըն խորհըրդին
Ի սուրբ արեան Կենարարին՝
Չարիւնս իւրեանց յայն խառնէին
Եւ ընդ նոսին թաթաւէին։
Քանզի արեան էր ծարաւի
Որով էառ զփափագ սրտին։...
Բայց ըզհանդէսն ողորմագին
Որ դառնագոյն է լըսողին՝
Չէ բաւական բան ասոդին
Պատմել զազէտըս սաստկագին։...
Յայնմ երկիւղ զարհուրէին

Բարձր ի դըղեակըն դիմէին[1]։
Իսկ չարուքեան արբանեկին
Որ պահապան էր կըլային՝
Ըզդրունան ընդդէմ եդեալ նոցին
Փակեալ ամուր ըզմուտ բերդին.
Եւ բազմութիւնքն խուսափէին
Յահէ սըրոյն փախուստ առին.
Ամենեքեան անդ փութային
Իբր ապաստան ամրանային,
Սաստիկ ձեպոյն տագնապէին
Աղիողորմ յոյժ գոռային.
Եւ զի փակեալ մուտն առէլին
Եւ թշնամեայ սուրըն վերջին[2],
Յայնժամ առ դուրսըն կուտէին
Իբրեւ ըզչեղջս անհընարին,
Կամ յօրինակ փայտից մայրին
Միմեանց վերայ դիպանէին,
Արք և կանայք, ծերք և տըղայք
Մանկունք ւ ամէն չափ հասակի։...
Եւ զի խօսել ոչ կարէին՝
Յոգւոց հանելըն հեղձնուին...
Բայց փրկութեան ոչ կանային[3],
Ձանգի չարժել ոչ կարէին,
Իւրաքանչիւր յիւրում տեղին՝
Ուր պատահեացն՝ անկանէին,
Եւ ի չնչոյն նուազութեան
Հեղձամըղձուկ անդ լինէին։
Իսկ փախուցեալքն որ ճեպէին՝

1. Ինչպէս ամեն պաշարելոց բնական է՝ երբ թշնամին մանեն ի քաղաքն՝ չանան մանել ի բերդն և ազատիլ։

2. Երկու կողմէն վտանգ էր քաղաքացեաց. առջևէն՝ կլային զուռն գոցուած չէր բացուեր վրեննք ընդունելու, եաեւնէն թշնամեաց անխնայ սուրն։

3. Փախչել այլ չէին կըրնար, որովհետեւ նեղ տեղ գրեթէ իրարու կպած՝ չէին կըրնար չարժիլ։

Յահէ սըրոյն զարհուրէին,
Եւ ընդ անկելոց դիակուտին՝
Կոխան ոտից այնք լինէին,
Որպէս ի գետ կամ ի ծովի
Վերայ գլխոցըն լողային։
Բայց այլազգեացըն բազմութիւն
Որք սուսերաքն ի հետ գային՝
Իբրեւ գազանըս վայրենին
Ի մէջ հօտիցն անկանէին,
Իւրաքանչիւր ոք ըստ մըտին
Առ յընտրութիւն պարապէին.
Ձանգի զոմանըս գերէին
Որք գեղեցիկ դիմօքն էին[1].
Իսկ ըզկըցեալսըն հասակաւ
Զայնս չարաչար խողխողէին,
Եւ զխեղդելոցըն դիակունս
Ձարչեալ արտաքս ձըգէին։...
Զորից ազգաց քրիստոնէից
Գլուխք հօտից որք աստ կային,
Դաղմատեացն2 և Թորգոմին
Յունականին և Ասորին՝
Առհասարակ զանձինս եդին,
Մինչեւ ի մահ գուն գործեցին,
Ձալ և արի հովուապետին՝
Գործովք բարեաց նըմանեցին...
Հառվմայեցւոց հօտապետին

1. Գուշակէ ընթերցողն թէ ինչ կ'ընեն այդպիսի բարբարոսք իրենց գաս դաս գերիները։

2. Զորս ազգք իրենց առանձին եպիսկոպոսն կամ արքեպիսկոպոսն ունէին, որոց առաջին գրէ զՀռոմայեցիս կամ Լատինս՝ Դաղմատացի կոչելով, ըստ Աւետարանի մերում գրուածին ի տախտակին Պիզատոսի. ապա Հայք, Յոյնք և Ասորիք։ Լատինաց եպիսկոպոսն պապնուեր է, Հայոցն բռնուեր է, բայց առ ջինին պէս ինք զինքը մահուան վտանգի դրեր էր իր ժողովրդեան համար։

Զանձն իւր ի մահ ետ ընդ հօտին...
Նա և Հայոց ազգաց ցեղին
Եպիսկոպոսն ընտրեալ նոցին,
Թէպէտ մահու ոչ մատնեցին
Ըստ խընամոց Բարերարին՝
Որ զնա պահեաց ի մէջ գնդին,
Սակայն յոգունց ի հանդիսին
Յաղթող գըտաւ յասպարիսին,
Անձամբ տըւեալ զանձն իւր ի մահ
Իբր յօրինակ հօտից նորին։...
Սակայն ամանք խուսափէին
Եւ ի դըղեակն ամրանային.
Զոր հուպ եկեալ բռնաւորին՝
Բանս ասելով զայս ընդ նոսին.
«Թէ ոչ լըսէք իմն հրամանի
Եւ հնազանդեալ տայք ի ձեռին,
Լինիք և դուք նըման ոգին՝
Որք կան անկեալք ի փողոցին»։
Բայց նոքա ոչ զանգիտէին
Եւ տալ ի ձեռն ոչ յանձն առին,
Արիաբար ընդդէմ կացին.
Սակայն և ոչ յաւասլագոյն
Անդ կերակուր համբարեցին,
Եւ ոչ ըզկուրն առ ի վերուստ
Որք ժողովեալք ի միասին,
Զարար տեղեակ ոք ըզնոսին,
Թէ ահա մերձ է և դիւրին[1].
Վասն այսորիկ ոչ կարացին
Տնեալ յերկար ընդդէմ չարին,
Այլ յետ աւուրց ինչ պայմանին՝
Տըւեալ արտաքս էլանէին։
Իսկ խորամանկ չար խարդին

1. Քաջութեամբ ուղեր են դիմանալ կէսային մէջ եղողքն, բայց ոչ բաւական ուտելիք հոգացեր են, և ոչ տեղւոյն վերէն իջած ջուրը հաւաքեր են խմելու համար։

Զուխտըն սըտէ զոր եդ 'նդ նոսին.
Ընարէր ըզդասս զօրականին
Յորոց ունէր խոց ի սրտին,
Տայր նըշաւակ կանգնել յոտին,
Նետիւք խոցէր իւրով ձեռին[1]...
Զինքըն կարծէր ողոմելին
Վրէժխնդիր երկնաւորին,
Որպէս նըւէր աստուածային
Մատուցանէր զարիւնս նոցին։
Արդ, իբրեւ զայս կատարեցին
Փոքր ի չատէ զօրս սասցի,
Ընդ գերեզոյն զօրս գերեցին
Եւ զօրս արեամբ սըրով սպանին,
Զինչս և ըզգոյս կողոպտեցին
Չհարց և զնախնեաց զանձս օր կային,
Զոսկիակազմ զարդ կանացին
Եւ զպատուական հանդերձանին,
Զարծաթեղէնս 'նդ ոսկեղինին,
Զանօթ սրբոյ պատարագին,
Զունակ բուրման անոյշ խընկին[2],
Զհընչող քըշացն՝ տիպ հրեշտակին[3],
Ըզվարագոյրըս խորանին
Եւ ըզհանդերձըս տաճարին,
Զքահանայից զարդ հանդիսին
Զհայրապետաց պատմուճանին.
Ըզպատուական նախորտանին[4],
Զեմիփորոնն սուրբ խորհըրդին,
Զոսկենըկար տիպն ուրարին՝
Այն որ զուսովըն պատէին,

1. Զանգի իրեն դէմ քաջութեամբ կռուաղներէն վրէժ առնելու համար՝ զանոնք կեցուցեր և նեռահար սպաններ է։
2. Բուրվառներ և խընկի ամաններ։
3. Քշացներուս ձայնը հրեշտակաց ձայնի զուգէ։
4. Շուրջառներ։

Զականակապ քառակուսին՝[1]
Որ էր նըման սուրբ վակասին.
Զբազմագունակ գործ հրաշալի
Այն որ ի քղանցըս հանդերձին.
Եւ զայլսն ամեն որ ի կարգին[2],
Որոց յիշումն է ողբագին:...
Այդ, փոխանակ այսմ ամենի՝
Դուք լըւարուք խնդամս ձայնի,
Չի դառնաբեր պըտուղք չարին
Զօրս ընդ որոց փոխարկեցին...
Այլ յամենայն սուրբ խորանին
Որք աստանօր չինեալ կային,
Յամենեսին մըտանէին
Եւ զսրբութիւնսըն պղծէին...
Իսկ ըզգերեալսն՝ զկին և զմանկտին
Պարգեւ միմեանց զնոյնս բաշխէին.
Ըզգեղեցիկսըն ընտրէին
Ի հեռաւորս յուղարկէին,
Բարելացւոց թագաւորին
Խորասանայ մեծ սուլթանին:
. . . . . .
. . . . . .
(Յորոց հայցեմ և զիս յիշել)
Զողբերգական բանիս գըրոզ՝
Աւ ի զբօսանս արտմեցելոց
Զեզ և բոլոր ազգիս Հայոց,
Որ էք ի սուգ վասըն սոցունց:...
Զոր պահանջեաց տարփմամբ սիրոյ
Եղբօրորդին իմ ըստ մարմնոյ[3],

1. Եպիսկոպոսաց գոտիէն կախուած քառակուսի տախտակաձեւն, պնակիտն:

2. Դիտելի է որ այդ զգեստուց ինչուան ջղաւոցքն՝ (փեշերն) այլ յիշէ, բայց զլխոյ խայր կամ միթր՝ ոչ:

3. Եղբայրն էր Շահնշահ, որոյ այդ զինուորութեան համառօտ որդին՝ Ապիրատ, որ այն առեն իբր 22 տարուան էր, յետոյ եղաւ Գրիգոր Զ կաթողիկոս:

Մանուկ տըղայ գոլով տիոյ
Եւ կատարեալ յիմաստ հոգւոյ.
Ներհըմտացեալ յարհեստ զինուց
Ըստ հրահանգին Հռովմայեցւոց՝
Գոլ ամողակ զինուց ձիոց,
Որպէս օրէն է վարժելոց.
Յանուն նախնեաց յորջորջելոց
Ի Ապիրատ մականալոց,
Զոր արարաք խրախճանելոց,
Իբր ըզբօսանըս հրճուելոց:

ՄՋԵ

ՈՂԲՔ ԲԱՐՍՂԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ՍԻՐ ՊԱՂՏԻՆ ՏԷՐՆ ՄԱՐԱՇԱՑ ԵՒ ՔԵՍՆՈՑ[1]

(Մ. ՈՒՌՀԱՑԵՑԻ. ՄԽԸ.)

Բարսեղ, նուաստ ծառայ (Աստուծոյ) գրեմ մեծակական ողբովք և բազմահառաչ արտասուօք՝ համօրէն հաւատացելոց Քրիստոսի. մանաւանդ մերձակայից մերոց, Քեսունոյ, Պեհեսնոյ, Ռապնայ[2], Գերմանիկոյ[3], և որք ընդ սաքօք գեօղավանք և կրօնատանք իցեն յիւրաքանչիւր ազգս և լեզուս, վասն

1. Մեր մատենագրութեան մէջ նշանաւոր նորաձեւ և միանգամայն արտառուչ գրուածք մ'է այս, իբրեւ դամբանական խօսք (Oraison funèbre). պատմիչն կ'անուանէ զՀեղինակս Ամենագովելի վարդապետ, Սուրբ և երջանիկ հայրապետ, որ տայ կարծել թէ Քեսունոյ եպիսկոպոսն էր, միանգամայն և արեւմտեան լեզուաց՝ գոնէ փառնկերքէն՝ հմուտ, և քաղաքագէտ անձն:

2. Ամսոր բերդաքաղաքի Դ Հայոց, Աստեաց մօտ:

3. Որ է շատ հեղ յիշեալ Մարաչն:

անգիւտ կորուսելոյ իշխանին և անտէր մեռանե-
լոյն Պաղտնիի[1]. զոր առակ նշանակի և ցոյց խրա-
տու արար զնա ամենազօր արարիչն Աստուած՝ ա-
մենայն տիեզերաց, մանաւանդ անզեղջ, սէգ և
անիրաւ իշխանաց զօրաց Հռովմայեցւոց. յայտ առ-
նելով ամենեցուն, եթէ ակնարկելոյ կամաց արար-
չին սպառեալ մնան տարերք և արարածք ամենայն,
որ եթէ խեթիւ հայեացի՝ ոչ տանին զնա տիեզերք
ամենայն: Զի ծով աղաղակէ, թէ, ոչ է ասա Պաղ-
տինն. և երկիր գոչէ, թէ, ոչ ծածկեցաւ հողով
ի ծոց իմ. օդ և լուր վկային հրային մասամբն՝
եթէ, ոչ մեք համարձակեցաք բառնալ, կամ յայտ-
նել ումեք զառ ի խրատ պատուհասեաք թագու-
ցեալն Աստուծոյ՝ մահ: Եւ գերեզմանք բողոքեն,
թէ մեք ոչ ըմբռնեցաք և ոչ տեսաք իջեալ ի կարգս
մեռելոց. և ի մէջ կենդանեաց ոչ ուրեք երեւի:

Ընտ որում սիրելին իմ իշխան, հեքն այն մա-
նուկ, խիզախն ի մարտի, յաղթող և քաջասիրտն
ի պատերազմունս բարբարոսաց, մեծազօր ըմբիշն
և անթաքչելի սպառազէն զօրականն քրիստոնէից,
սիրեցեալ անուն իմ Պաղտիի[2]: Ո՞ր ձեռն կոփեաց
զհաստատեղգ պնդութիւնն, կարճեաց զձեռն հզօ-
րին. կամ ո՞ր բազուկ տկար՝ խոնարհեցոյց զանվնա-
սելի բազուկս անուանի քաջին. կամ ո՞ր առն ի
զօրականաց թլփատելոյն զօրութիւն՝ զօրեաց խոր-
տակել, իջուցանել յերկիր զյաղթանդամն զայն,
զրուէն ոսկերօք, զբարձր հասակն, զկայազօր մար-

1. Սա Անտիոքայ Բրնձին եղբայրն էր, և միաբա-
նելով ընդ Ժսալէնի՝ ուզեցին զՅերեսխա ազատել. բայց
յետոյ պատերազմի մէջ մեռաւ, և գիակը չգտնուե-
ցաւ. անոր համար սատակ կ'ազգայ Բարսեղ, որ
խոսոռովանահայրն էր այն վանականին երիտասարդին:

2. Արդարեւ Հօր պես գեղդեղայ Բարսեղ և չի
դադրիր Պաղտիին, Սիրի–Պաղտիի կանչել իր հազեւոր
զաւակին. և քերդողաց փնտռած սիրալիր սերտ քա-
ղեկամութեան՝ գեղեցիկ օրինակ մի կ'ընծայէ:

մինն: Եւ ո՞ր կատաղեցելոյ գազանի սիրտ՝ ոչ խան-
դաղատեցաւ գեղեցկութեամբ նորա, և ոչ ամա-
չեաց ի գիմաց նորա, ոչ գթացաւ ի գեղեցկու-
թիւն նորա, և ոչ ողորմեցաւ մանկական տիոց
վայելչութեան նորա, խնայելով ի հասակ տղայու-
թեան նորա: Եւ հիմ ոչ ձայնեաց առ նա, զո՞վ
ոք իցես դու, կամ ուստի՞, հարցանելով զբան.
թերեւս մեղկեալ զիջաներ կատաղութիւն գազա-
նութեանն՝ ընդ համեստ, հանճարեղ և ընդ իմաս-
տուն պատասխանիս նորա: Անոյշթաքելի լեզուաւ
ի հայերէն լեզու բարբառէր, և առ ի բազմաց ծա-
նուցեալ յիմաստութիւն, ի զօրութիւն և ի հասակ,
ի տեսակ, ի քաջամարտիկ յաղթութիւն և յամե-
նայն կիրս անցաւոր կենցաղոյս, ուստի ճանաչի
մեծանձնութիւն գովութեան իշխանացն:

Աւելորդ վարկանիմ երկայնել զբանս, զի մի
ստգտանիցեմ ի պարսաւագէտ առաղաց նորա: Այլ
աւաղ, ասեմ, անբախտ կորստեան նորա և անա-
ջողակ ճանապարհին՝ զոր բազում անգամ դեկու-
ցաք՝ ոչ գնալ զանգառնալի գճանապարհն զայն, և
ոչ անսաց բանից մերոց, զորս առեալ էր զփորձ:
Զի ոչ յայլ ինչ պարապէաք խօսել ընդ նմա, բայց
զօգտակարն անձին նորա և զփրկութիւն և զխն-
յուն տագապելոց քրիստոնէից. որում անլուր գը-
տաւ յայսմ ամենայնի:

Ասաի և մեք իսկ գուշակեցաք զկորուստ առա-
ջի նորա՝ բազում անգամ, թէպէտ և ցաւ էր մեզ,
և գժուարին էր զայն ասել նմա, այլ ոչ ոք իշ-
խէր. սակայն հնարէաք զայն, (զի) թերեւս զար-
հուրեալ երկիցէ և փոխեսցի ի յանցաւոր բարուց՝
ի խոնարհութիւն ողորմութեան և յանոխակալու-
թիւն քաղցրութեան:...

Զիմոյ զանխրատ հոգւոյն, զանտէր մեռելոյն և
զանգնելի գերւոյն, զանգիւտ կորուսելոյն, զվայե-
լուչ մանկանն, զյաղթող և զօրաւոր քաջին, զհան-
ճարեղ զիմաստուն և զխելօք իշխանին՝ զկարճա-
տեայ կենացն, զնազելի և զգեղեցիկ և զմարմնա-

ւոր անուանն զԱիրի–Պաղտնիս՝ ախորժեմ պատմել զկորուստն, և հրապարակագոյժ առնել խոստովանութեամբ զյանցումն. ոչ զի խայտառակեցի, այլ զի կատարելապէս թողութիւն ընկալցի յԱստուծոյ. գիտելով զայս, զի ով որ ծածկեալ թաքուցանեն աստ զյանցանս իւրեանց և զգազանիս ամօթոյ՝ վասն ամաչելոյ, յիմար են այնպիսիք՝ առաջի հրեշտակաց և մարդկան[1]:...

Ամբարտաւանութիւն և ստութիւն նորա բժշկեցաւ յայն օր՝ անչափ և աստիկ խոնարհութեամբ՝ որով զիջանէր առ ամենեսին, առ զօրս հեծելոց և հետեւակաց, քաղցրագոյնս և ախորժականս և ողորմագին բանս բարբառելով, որպիս Աստուծոյ և եղբարս հարազատս՝ զամենեսեան անուանէր, իշխանս և տէրս յանուանէ կոչէր, մարդէր զօրսն ամենայն, յորդորէր, սրտապնդէր, քաջալերէր իբրեւ ըմբիշ և քաջ նահատակ. չուրջանակի զօրացն անցանէր, ուժգին և աշագին ձայնիւ ամրացուցանէր զօրսն ամենայն. ձայնէր առ ամենեսեան յանուանէ զանուն քաջութեան. «Վա՛շ, ո՛վ քաջք, վա՛շ բազդին և աւուրս չնորհի. որ աստ նահատակի փոքր մի՝ և յաղթէ. մի զանգիտեք ի նոցանէ. ահա օր հանդիսի և մահ երանելի վասն Քրիստոսի՝ ի վերայ քրիստոնէից մեռանել»: Եւ իրրեւ այսպէս զօրացուցանէր հաստատէր զարտաքոյ կոզմանս բանակին, գարձեալ ի միջոցս անդ զօրացն մտանէր. զլքեալսն երկիւղիւ և զխուսափեալսն թաքստեամբ՝ յառաջ քարշէր, և զքաջասիրտսն գովէր. զի բաց ընկեցեալ զենս անարի արանցն կամ որք ունէին կարկամեալ ցամաքեալ ձեռս՝ յափշտակէր կորզէր և արիացելոցն մատուցանէր ի ձեռին. ոմանց տայր,

1. Այս խօսքիս յետոյ՝ Բարսեղ երկար և չատ երկար խոստովանութիւն գրած է Պալաթնի բերդով, իր մեղաց կամ բնաւորութեանց, և իւրաքանչիւրին պատիժ և քաւութիւն՝ այս պատերազմիս մէջ քաշած վտանգներն և մահն:

յոմանց առնոյր: Եւ գարձեալ առիւծաբար խրոխտանօք յայլ վայրս հասանէր, ահաւոր գոչմամբ և բարձրաձիչ աղաղակաւ զգիշերն ողջոյն և զտիւն ամենայն լնոյր զմիջոց բանակին. զի ոչ ունկն պարապէր զայլ ուրուք լսել զձայն քաջութեան, կամ աչքն տեսանել զարագընթաց սլացումն հաւասար և նման Աիրի–Պաղտնին. մինչեւ պակասեալ հաւատ ի ձայնէ և ի բնական ուժոյն զօրութենէ[1], հանդերձ երիվարաւն, և ժանգանալ կարմրութեամբ գոլորշեաց սրտին՝ ի սանձապատ զրահից բերանոյ նորա, որպէս ասի յոմանց: Այդ, խոստութիւն հպարտութեան նորա այսու օրինակաւ ընկեալ մարքեցաւ. իսկ անզորմութիւն սրտին՝ յայնմ աւուր ողորմութեամբ գթովք աղէխարշեալ գորովք ի վերայ տառապելոցն կորընտեան. ուստի և դեգերելով ընդ նոսա՝ ինքն կորուսեալ եղեւ. և զրկանաց անցումն՝ որով զամենեսեան զրկէր առանց ողորմութեան, և ինքն զրկեալ գտանէր յայն օր ի մարտի անդ յամենայն օգնականաց իւրոց: Քանզի քքեալ թողին զնա ընկերակից իշխանք և զօրք ամենայն ի մէջ մեծի պատերազմին, և ելին ի մարտէ անտի. և ոչ ոք ողորմեցաւ նմա գառնալ գիտել թէ ուր իցէ գլխաւոր իշխանն, մեծ զօրականն մեր. և յայտ անտի է՝ զի ոչ ոք այլ ի զօրացն նորա կորեաւ կամ ըմբռնեցաւ ընդ նմա, և ոչ ամենեւին եռես ոք զնա: Եւ ոչ ի վաստութենէ զօրացն ունիմ ասել զայս, կամ կամաւ զկորուստ նորա, այլ զի հարկ էր այնպէս բազմաժամանակեայ զրկանացն և անիրաւութեան որ առ նոսա՝ յայնմ աւուր զրկանօք ի զօրացն գառնել և բժշկութիւն, որպէս վերագոյն ասացաք:

Իսկ բազմաց արիւն որ հեղաւ յաւուրս նորա ի գալ յայս երկիր վատչուէր և սուտ նենգաւորին Վասլին՝[2] միով արեամբն իւրոյ անձինն, զոր յօ-

1. Զօրինակին գրուած է և ի բանակն կամ բանական ուժոյն զօրութենէն. պակաս կամ սխալ բան մի:
2. Ո՞վ է այդ նենգաւոր Վասլին.— կարծուեցաւ թէ

ժարութեամբ սրտի ետ հեղուլ ի վերայ քրիստո-
նէից՝ սրբ ելին և ազատեցան ի պատերազմէ ան-
տի. զոր և ինքեանք յայտնապէս խոստովանին զեր-
ծեալքն ամենայն, Աստուծոյ ունելով նախ չնորհ,
և երկրորդ ի մարդկանէ Սիրի–Պաղտնին՝ զազատու-
թիւն իւրեանց: Եւ արդ, եթէ կատարեցաւ մա-
հուամբ ի պատերազմի անդ, թողութիւն ընկալաւ
ի Տեառնէ ամենայն յանցանաց իւրոց... և եթէ
կենդանի իցէ և յայտնեսցի, քաջութիւն նորա
տարածեցաւ և տարածի օր ըստ օրէ ընդ տիեզերս
ամենայն՝ մինչեւ ի կատարած աշխարհի:...

Այս ինչ է յայտնի պատճառ բանից մերոց եր-
կարութեան. սիրէաք զնա հոգեւորական սիրով,
որպէս օրէն է ծառայից Աստուծոյ, ըստ որում և
նա զմեզ. և զկնի մահուան նորա՝ հարկ էր մեզ
փոխանակ անչափ սիրոյ նորա հատուցանել սէր՝
կորուսելոյն ի կենաց ատի: Որ յԱնտիոքացւոց
քաղաքէն մինչեւ ի սահմանս Մելիտինոյ ձգեր իշ-
խանութիւն նորա, և տեղի ոչ ուրեք երեւեցաւ
գերեզմանի նորա. այնքան զօրաց և աշխարհաց
տէր և անուանի երեւելի իշխան, և այժմ ի մե-
ռեալս ոչ յիշատակի, ոչ ի կենդանիս երեւի. ոչ
զանգակ նմա հնչեցոյց և ոչ ուրեք եկեղեցի զա-
նուն նորա յիշեցոյց. և ոչ նուէր պատարագի և
կամ մանր յիշատակի ողորմութեան ել նմա յերկրէ
ատի. ուլ մի կամ դանդ ինչ՝ ոչ կարի աղքատա-
գունիցն հասանել: Ոչ ոք է որ յիշէ զնա, և ոչ ոք
որ ողորմի նմա. ի կենդանութեան իւրում ոչ հան-
գեաւ, ոչ վայելեաց ի սմա, այլ ի տղայական տիոցն
սկսեալ՝ ի տապնապի ի ցնորս և ի տառապանս
անցոյց զժամանակս մանկութեան իւրոյ՝ ի դիւաց,
ի թշնամեաց և ի խստերախ մարմնական տեռանց

Բարձրբերդոյ տէրն Ըլլայ, Յունաց Համախահ, զոր
յիշէ Ուռհայեցին (ՄԿԴ), և զոր գերի բռնեց Թորոս
Ռուբինեան և տիրեց բերդին (1132). յիշէ նաեւ ասար
եղբայրը՝ Տիգրան, որ Գոդղ Վասլի զօրավար մ'էր:

և ի դաւաճանող ընկերակից իշխանաց, և այժմ ի
կատարած կենաց իւրոց՝ կորեաւ անյիշատակ.
Չնչեցաւ բարձաւ անուն նորա և սէր՝ յամենայն
աշխարհէ և ի սրտէ՝ ընտանեաց և օտարաց:

Զայս ամենայն դառն և անհնարին կորուստ՝ յոր-
ժամ տեսանեմ հասեալ ի վերայ նորա, հեղձա-
մղձուկ եղեալ ցնդիմ յարտասուս, և ոչ գիտեմ
զինչ արարից և կամ որպէս օգնեցից ձեռն կար-
կառելով: Յաւակից մեզ յայսոսիկ Աստուած ա-
պաւինեալ վստահացայ, որ միայն է անոխակալ և
մարդասէր. որ ոչ կամի զմահ մեղաւորի և ոչ խըն-
դայ ընդ կորստեան ուրուք: Եւ զրեցաք զայս գիր
խոստովանութեան և աղերսի ի գիմաց նորա և
մեր, և ոչ դադարեմք յարաժամ գոչել այսու՝ յա-
մենայն տեղիս՝ առաջի ողորմած հզօրին, որ բար-
կացաւ նմա և մեզ, հաշտեցի ողորմութեամբն իւ-
րով, և յայտնեսցէ զնա՝ մեռեալ կամ կենդանի:

Այլ և զձեզ զամենեսեան աղաչեմ, ով մարդիկ,
որ լսէք զողբերգական բանս զայսոսիկ, մի՛ քաշել
ձանձրանայք և տագտկացեալ հրաժարէք՝ անտես
առնելով զպատահանս մեր որ վասն նորա, առ ծու-
լութեան կամ առելութեան նորա, այլ սրտի մաօք
թողութիւն արարէք նմա. և մի՛ ընդ կորուսելոյն
ոխս բերեալ պահէք. այլ և ազօթս արարէք առ
Հաստարակաց դատաւորն և արարիչն Աստուած, զի
ողորմեսցի նմա և թողցէ զամենայն յանցանս նորա՝
զոր առ Աստուած կամ առ մարդիկ: Եւ ամենա-
զօր արարիչն Աստուած բարեխօսութեամբ Սուրբ
Աստուածածնին և աղաչանօք ամենայն Սրբոց՝
ողորմեսցի նմա և թողութիւն արասցէ ամենայն
յանցանաց նորա՝ մեծամեծաց և փոքունց. և զձեզ
օրհնեսցէ հոգւով և մարմնով, և երկնից արքայու-
թեանն արժանի արասցէ ընդ ամենայն Սուրբս,
ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում՝ փառք յա-
ւիտեանս. ամէն:

ՄՀՋ

ԿՈՒՆՑ ՍԱՐԳԻՍ Վ· ՄԵԿՆԻՋ
ԱՒԵՏԱՐԱՆԱՑ ՂՈՒԿԱՑ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Ողորմութեամբն Աստուծոյ հասի ըղձից իմոց՝ որ յամայր ամս. և գտի տաճս կենդանիս Տեառն և վեկնութիւնս Սրբոց, ղերանելոյն Եփրեմի և Տեառն Կիւրղի Աղեքսանդրացւոյ և Տեառն Ստեփանիոսի Սինեաց վերադիտողի[1], և տէր Իգնատիոսի[2], և ուր ոչ այսոցիկ՝ Յոհաննիսու Որկերեսրանի, և սուղ ինչ վկայութիւն ՅԱստուածաբանէ և Յեպիփաւէ, և ի Նարեկացի վարդապետէն Գրիգորի[3], և յիմաստուն հեռուրէն Յարկաւագէ[4]: Ուր ուրեք մտառեցի թէ աստուածային արօրոյն սիտոյանայ քառեակք եղանց[5] յուղղաձգութիւն ակօսոյն, ի խնդրոց ուսումնասիրաց. և մոռացայ զծերութիւն և զտկարութիւն մտացս՝ առ անձուկ յօժարութեանս, համառօտեցի չնորհօք Սուրբ Հոգւոյն, որ տայ իմաստս ախմարաց. նմանեալ մեղուի անօսր թռչնոյ[6], արձակել զթեւս ի լերինս բարձանց և ի հովիտս ծաղկանց. այլ ճշդիկտ և ունի յօժարութիւն, այլ սակայն վասն տկարութեան ոչ բովանդակէ զբնաւն, այլ զպայծառագոյնն և զփո-

1. Տես ի յօդուած 201 ասոր վախճանը:
2. Աշակերտակից Ն. Շնորհալւոյ և Սարգսի մեկնչէն Թղթոց Կաթողիկեայց:
3. Գր. Նարեկացւոյ՝ Աւետարանաց մեկնութիւն գրէն ծանօթ չէ մեզ:
4. Որոյ աշակերտ է ինքն այս հեղինակս՝ Կունտ Ս:
5. Զորս գլխաւոր մեկնիչներէ քաղելով գրելը՝ նըմանցնէ չորս եզներով լծուած արօրի, որպէս զի շիտակ փորուի արտն:
6. Շատք՝ թռչնոց դասակցեն զմեղուն՝ թեւաւոր ընկալուն համար:

չեռեսակն և զանուշահոտն՝ ի միջոյ ծաղկանցն բառնայ ի վերայ թիկանցն կամ ընդ ոտիւք կառուցեալ, ամայէ[1] ի վեցանկիւնի բջիջն, և գործէ զարմանալիս իմաստնոց[2]: Այնպէս և իմ բաղձանք աստուածային գանձուս ծածկելոյ աստուածագիծ տառիս, զերկու ոտս տարածեալ ի վերայ բազում բլրոց և լերանց՝ ի գիւտս օրինակացն[3] արիւիս-հրաշ արեգնածաւալ լուսափայլ մտաց ընթերցասիրաց. որք ընդ հովանեաւ սորա նստին՝ քաղցրանայ ի կոկորդս նոցա քան զմեղու խորիսխ, և տայ մռռացումն ունել տկարութեան. զի անուշակ և քաղցր է իմանալի կերակուր հոգւոյ քան զպալի կերակուր մարմնոյ՝ որոց կիրթ են ճաշակելիքն: Որում և ես Սարգիս մականուն և ոչ իր յիմաստս իմաստնոց և տգէտս ի գիտնականաց, պատկերս յանցանաց, զլուխս մեղաւորաց, ի թուականիս Նոյ[4] ԿԹ (63), ստացայ զսա ինձ ի խրատ և ի վարժուն:

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի, ժամանեալ ի կէտ նպատակի վերջին գծիս[5], որում ըղձայի. ես արեւպս և անպիտանս ի ժառանգաւորս եկեղեցւոյ՝ Սարգիս վարդապետ մականուն Կուշտ կոչեցեալ, ի գաւառէ Աբարատեան. բազում չանիւ աշխատեցայ՝ զտառս կենդանիս գտանել զանուշահոտ և զծաղկազարդ զպայծառացեալ և զարիւիահրաշ զարեգակնածաւալ և ըզլուսափայլ մեկնութիւն սրբոց վարդապետացն, որք

1. Ամալ, ժողվել, դիզել, ամբարել:
2. Մեղուն, արդարեւ զարմանալի քաղցր գործ չնչին միջատաց:
3. Շատ տեղ երիտալով փնտռելով գտեր է մեկնչաց ձեռագիրքերը:
4. Ըստ Յոհ. Սարկաւագի թուականին, որ է Քրիստոսի 1146–7:
5. Այս երկրորդ Յիշատակարանն է հեղինակին, գործը լմընցընելէն վերջը գրած:

զծորանս չնորհաց Սուրբ Հոգւոյն՝ իբր յանապատ աղբերէ յանձինս իւրեանց ընկալեալ ունէին. զեբանելոյն Եփրեմի, զՏեառն Կիւրղի Ալեքսանդրացւոյ և Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց վերադիտողի, զՏէր Իգնատիոսի, և ուր ոչ այսօրիկ՝ Յովհաննու Ոսկեբերանի, և սուղ ինչ յԱստուածաբանէն Գրիգորէ առեալ ի վկայութիւն, և յԵպիփանէ Կիպրացւոյ և ի Նարեկացւոյ Գրիգոր վարդապետէ և յիմաստնոյն Սարկաւագ վարդապետէ, ուրեք ուրեք մտառեալ. է ինչ որ ի Մովսէսէ Քերդողէ և ի Մամբրէէ վերծանողէ[1] և ի Թէոդիդոսէ Ոսկիբերանի աշակերտէ. սակաւ ինչ յամենեցունց մատնաւորեալ զպատշաճաւորն, իբր իմաստուն մեղու թռչելով ի մարգս և ի լերինս և ի ծաղկաւէտ բուրաստանս ժողովելով զպիտանիսն ի նոցանէ առի յօգուտ և ի շահ փրկութեան մարդկան, հանգուցանելով ի պէսպէս աշխատութեանց հոգւոյ և մարմնոյ՝ զվարդապետս եկեղեցւոյ, լուսաւորել ըստ ներքին մարդոյն, յորում բնակեալ Տեառն հաւատոյ սուրբ եկեղեցի, ըստ անձին մաքրութեան: Զակարութիւն ի բաց եդեալ ձեռն ի գործ արկի, և բազում աշխատութեամբ ի մին տեղի հաւաքեցի, ի ՈՂԶ (1197) թուականութեանս հայկազեանս սեռի. ի գառն և ի չար ժամանակիս, որ չիմթ էր կաթողիկոսութեան իշխանութեան Սրբոյն Գրիգորի. զի անկեալ մեռաւ Տէր Գրիգոր կաթողիկոսն ի գղեակէն Կոպիտառուռ, և այժմ ոչ ոք է յաջորդեալ զաթոռ նորին[2]. և աղերս ընծայեցի ի սուրբ և յուղղափառ Հայաստանեացդ եկեղեցի:

1. Մովս. Խորենացւոյ եղբայր համարուի. յայտնի են գրած ճառերն, Գազաթաւ Յարութեան և Քրիստոսի Յերուսաղէմ մանելոյ (Ծաղկազարդի) վրայ:

2. Այդ թուականին, 1197, Գրիգոր Ապիրատան արքէն յաջորդած էր Քարավիժին. թուի թէ լուրն դեռ չէր հասած ի Մեծ Հայս, կամ դեռ չէր օրինաւոր հաստատուած:

Կատարեցաւ հոգևնորոգ տաւս մեկնութեան սուրբ աւետարանին Յովհաննու[1], զոր կարգեալ և ուղղեալ բազում աշխատութեամբ մեծի իմաստնոյ Յարգիս կոչեցեալ, աշակերտ երիցս երանելի սուրբ վարդապետի Յարիաւագ կոչեցեալ, որ և նմա հաստատեալ ի սոյն խորհրդի, ժողովեալ բանս պատշաճաւորս յաղագս օգտի լսողաց և ուսումնասիրացն ընթերցողաց: Բայց հաւաքեալ են ասա բանք պիտանիք ի վարդապետութենէ Սրբոյն Եփրեմի, և Ոսկեբերանի, և Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց վերադիտողի, և ի տեղիս տեղիս՝ Աստուածաբանի և Սարկաւագի, և Ալեքսիայի, և Իգնատիոսի. և սկիզբն ի Ղանաւէ[2], սակաւ մի, և ի Սերբիհաւոսէ՝ ի մէջ քրիստոսասիրացն[3] սուղ ինչ վկայութիւն: Գրեցաւ ձեռամբ Թադէոսի և Վարդանայ, ի յիշատակ մեզ և ծնողաց մերոց: Աղաչեմ որք օգտիք կամ ընդօրինակէք կամ ուսանիք և լուսաւորիք՝ թողութիւն հայցեցէք մեզ, և Քրիստոս յիշողացդ ողորմեսցի: Գրեցաւ ի թուականիս Հայոց ՈՂԷ[4] (1198–9), ի սուրբ յանապատիս Թեղենիս[5], ի սուրբ կաթողիկէ դրանս. և Քրիստոսի փառք յաւիտեանս յաւետենից: Եւ տուաք զսա հոգեւոր եղբօր մերոյ Աչեռեաց, որ տառապէր տարաչխարհիկ՝ ի գիւտս մակացութեան գրոց:

1. Այս այլ գիրքն օրինակողին Յիշատակարանն է:

2. Տես 215 յօդուածը:

3. Այս բառերով սկսի Սերբերիանոս յեպիսկոպոս իր ճառն ի Ծնունդ Քրիստոսի:

4. Հին և մեծ վանք Սիւնեաց երկրին:

5. Յօրինակին ՈՒԻ (1178) գրուած էր, բայց որովհետեւ վերը գործոյն աւարտիչն ՈՂԶ (1197–8) թուականին գրուած է, հարկ է որ օրինակէն այլ անկէ վերջն եղած ըլլայ:

ՄՋԻ

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԿԱՄ ԿԼԱՑԵՑԻ[1]

Սուրբ Հայրապետան Գրիգորիս, յօրժամ տեսաներէր զայսպիսի անճառելի շնորհս և զիմաստութիւնն՝ աղերսաբար յառաջ եկեալ յեղբօրէն՝ ի Սրբոյն Ներսէսէ, խնդրէր հարազատաբար հոգեւոր սիրով ի նմանէ՝ արծարծել այնուհետեւ զաստուածային շնորհն, ի լցուցանել զթերին ի կարգս եկեղեցւոյ, յիշատակ նոցունց ի սուրբ եկեղեցի ապագայիցն թողուլ: Որոյ ընկալեալ զհրամանս և զաղաչանս աստուածայնոյ հայրապետին, սկսանէր երգել զերգըս հոգեւորս պաշտամանց՝ զոր պակաս և թերի գտանէր, և սուրբ ձեռինն գրով աւանդէր մանկանց եկեղեցւոյ, որք ժողովեալ լինէին առ նոսա յամենայն գաւառաց՝ ի սպասաւորութիւն սրբոյ աթոռոյն, արք իմաստունք և շնորհազեացք՝ յեպիսկոպոսաց և ի վարդապետաց, ի քահանայից և ի սարկաւագաց: Զի ոչ ինչ էր նոցա ըստ այնմ ժամանակի սիրելի, բայց եթէ ընտրելոց արանց

1. Խոհական ընթերցութեամբ և սճով չարադրուած Շնորհալւոյ վարուց մաս մ'է այս Յօդուածս, որոյ ամբողջն հրատարակուած է ի ԺԴ Մուխեռս Հայոց· հեղինակն չի յիշեր իր անունը, այլ միայն Յովհաննէս վարդապետի մի յորդորանօք գրելը իմացընէ, Ա. Հերմոյ թագաւորութեան առեն, յամի 1240, Սրբոյն մահուանէն 67 տարի վերջը, որ սխալմամբ գրուած է 77 տարի: Մենք այլ այս սուրբ հայրապետին երկանիկ մահուան 700դ տարեդարձին՝ (1873) հրատարակութեանցիկ ընդարձակագոյն պատմութիւն մի, Շնորհալի և Պարագայ իւր անուանելով· յոր այնուրիկ սուրբիշ յիշատակներ եւս յայտնուեցան, այլ դեռ չեն բաւական՝ այս արդարեւ շնորհալի անձին արժէքը լիովին ճանչցընելու:

և առաքինեաց ժողով: Որով հարսնացեալ եկեղեցի Հայաստանեաց՝ պայծառապէս զարդարմամբ չքեղանայր, հալածեալ ի նմանէ ազգմազգին խաւար թանձրամած (որ) ի յանկմանէ ազգիս և ի ծուլագոյն հովուաց ի ներքս մտեալ. և լուսաւոր կարգ եկեղեցւոյ ի սուրբ լուսաւորչացն հաստեալ՝ յանիշխանութենէ ազգիս մերոյ բարձեալ, և խաւարաւմոռացութեան նեմսացեալ խրթնատեսակ անզարդութեամբ: Եւ ոչ ի բնաւին նիւթականաց ինչ փոյթ էր նոցա, այլ որ ինչ եկեղեցւոյ սրբոյ կարգ, և պայծառագոյն մաքրութեամբ յիւրաքանչիւրսն մեզսաքաւիչ մարմնոյ և արեանն Տեառն անբիծ սպասաւորութեան, զօրս պայծառս և առոյգս յարդարէր. զեստս մաքուրս և վայելուչս եկեղեցականացն կազմէր, և հոգեւոր և մարմնաւոր սրբութեամբ ուսուցանէր սուրբ խորհրդոցն սպասաւորել: Նորոգէր զառաջին սուրբ հարցն հաստատեալ կարգս եկեղեցւոյ. և զարգարէր զեկեղեցիս Հայաստանեաց անթերի լրմամբ. և հոգեւոր երգովք և քաղցրանուագ եղանակօք վայելչացուցանէր ըզսուրբ պատարագին խորհրդական երգսն. որպէս զի թանձրագոյն միտք տեսողացն՝ զսուրբ խորհուրդն նայելով յայնպիսի պայծառագոյն սպասաւորութիւն և սարսափելի խորհրդածութիւն, կացկզացեալ անօսրասցին զգալի տեսութեամբն, և յիմանալին դիտաւորութիւն հաստեալ օգտեսցին. ուստի առ փոքր փոքր յաւելեալ նոյն մեծագոյնն չահիցն հասանիցեն, և պարզաբար պարզագունին տեսութեան արժանասցին: Երգէր և երգս տաղից քաղցրանուագ եղանակօք՝ յիմաստս բանի դաչնակեալ՝ ի տօնս տէրունիս և յիշատակս առաքելոց և մարգարէից և մարտիրոսաց:

Եւ թէպէտ և հրաշալիք էին բանք երգոց նորա առ միտս իմաստութեան, բայց եւս առաւել զարմանալի էին արուեստաք գանազան եղանակացն՝ զոր աննման միմեանց յօրինէր, որպէս յանծախելի և յառատագոյն գանձարանէ ի ճոխ և ի հարուստ

մատցն արտաբերեալ: Եւ զի վայելուչք և զօրկադոյնք էին ասացեալքն առ ի նմանէ և Հոգւով Սրբով լի, այնր աղագաւ յօժարապէս ի միտս առնուին զնոսա, զի իրրեւ աղիւ համեմեալք էին. և որպէս ի ճախարակս ճարտարաց քերեալ անգէզ և անգծական բայիւք[1]: Անուն և տաղաչափութեամբ Վիպասանութիւնս հանգոյն տաղիցն Հռոմերոսի, չափաբերեալ և ի մի գիծ աւարտեալ[2], մանաւանդ թէ եւս առաւելեալք Հոգւոյն իմաստիւք՝ հռետորացն Ելլենացւոց: Շարադրէր բանս աղօթականս նոյն արուեստիւ, սկսեալ ի նախնի հօրէն մինչ ի կատարած յաւիտենից այսմ[3]. և ընդ ի նմա զմիտս և զզօրութիւն հնոյն և նորոյս[4], և զրուանդակ յանգուածս տանցն միով գծիւ յօրինէր: Անուն և խոստովանական դաւանութիւնս սրբոյ բանս աստուածարանութեամբ առ Սուրբ Երրորդութիւնն և միաբանական աստուածութիւնն և Որդւոյ անօրէնութիւնն[5], ըստ ուղղափառ դաւանութեան սուրբ հարցն, նովին տաղաչափութեամբ, յոյժ ընդունելի և հաւանական ընդհանուր եկեղեցեաց ուղղափառաց և իմաստախոհ քննողաց: Գրէր և Ողբս ի վերայ առման մեծին Եդեսիոյ՝ նովին աւրուեւսիւ յոյժ գեղեցիկ և յարմարական պատմութեամբ, որ զամենայն ընթերցողս չարժէ[6]: Նա և զնախկի պատմագրեալն ի Մովսէսէ Խորենացւոյ

1. Ծուռ կամ խորթ, ակընկի ծանր եկող ձայն չունէին զրուածքն և երգքն:

2. Նոյն յանգով վերջացընէր տողերը, սովորաբար իւն, իւն կամ եալ եալ:

3. Այս է Ճիառաս որդի բառերով սկսած երկար տաղաչափութիւնն, երեք մատն բաժնուած, 4000 տող:

4. Հին և Նոր կտակարանաց:

5. Անանք և վարի յիշուածքն՝ ամէնն այլ միատեղ տպագրուած են ի Ս. Ղազար, յամին 1830:

6. Աւրդարեւ չատ գեղեցիկ մատեր կան այս երկար քերդուածոյ մէջ, որ սովորաբար Ողբք Եդեսիոյ կոչուի: Տես Յօդուած 284:

յաղագս նախնեացն Հայոց՝ վերստին չափաբերութեամբ պատմէր, սկսեալ ի տիտանեանն Բելայ և ի նախնոյն մեր Հայկայ և հասուցեալ մինչեւ ի հարս իւրեանց և յինքեանս[1]: Գրեաց և զՍրբոց Հրեշտակապետացն և զերկնաւոր զօրաց ձառս ևերբողական, և բացայայտեաց ի նմա զմիտս խորագոյնս որ յաղագս նոցին ծածկեալ էր ի գիրս սուրբս. արար և երգս խորհրդականս և պատշաճաւորս առուր տօնի նոցին2, և աստուածխմաստ չնորհօքն պայծառացոյց զօր յիշատակի նոցին: Ձեղեղէր և զտառս Աւրեւրենից և ընդայր ի նոսա բազում իմաստս բանի և խրատս հոգեւորս. և ի բազում տեղիս ի նախագիծս տանցն՝ զսուրբ անունն իւր կարգէր, որպէս և յայտնի է ամենեցուն:...

Եւ լցեալ անթերի լրմամբ չնորհաց Հոգւոյն Սրբոյ, իրրեւ զծով համատարած ինքն առ ինքեան ծփայր միշտ[3]:

Եւ իշխանութիւն մեր բարձեալ և եկեղեցի մեր խրթնացեալ, և աշխարհն մեր յապգաց օտարաց աւերեալ, և յետին գառնագոյն և չար ժամանակի պատահեալք, ցրտացեալ լինէին ամենեքեան առ աէր աստուածայնոցն, և ոչ ոք էր որ խնդրէր յայնպիսոյն աստուածամուխ առնէ զձառս իմաստից, կամ զմեկնութիւնս խորին խորհրդոց դանխպատեալոց ի սուրբ կտակարանս, առ ի յօդուտ միտլոյ ազգիս մերոյ՝ յիշատակ բարեաց յապագայսն զկնի եկողացն թողուլ: Եւ այսր աղագաւ ծարաւի մըննային յանապատ աղբերէն, և աղքատք և թափուրք յանհիւզ ճոխութենէն: Եւ գանգի կատարեալ էր նա աստուածային իմաստութեամբն, ոչ կամէր առանց խնդրոյ յանպէտս բաչխել զՀոգւոյն չնորհ, և բանս պարտաւանաց կրել չնորհակալութեան փոխարէն:

1. Իբրեւ 1600 տող, ասակ հետեւակ բան, առանց բանաստեղծութեան:

2. Շարականն «Որ յանեից աստեղծեր», և այլն:

3. Շատ խորին և գեղեցիկ բացատրութիւն:

Եւ արդ, թէպէտ և ունէր զդիտութիւնն ի կըր-
թութենէ վարժմանն, ուստի և յայտ յայտմանէ
էր, զի յարաժամ մեզան և քարտէս պատրաս-
տական լինէր մերձ նմա առ ի գրել. և նա ան-
պարապորդ միշտ մատեան ի ձեռս ունելով՝ ընթեռ-
նոյր և որոնէր և քննէր անդադար զխորին միտս
գրոց՝ նուրբ տեսութեամբ. և ի կարի երկարագոյն
աշխատութեանցն՝ թէ պատահէր փոքր մի յարիլ
ի բազմոցի և սակաւ ինչ նիրհմամբ հանգչել, շըր-
թունք նորա իբրեւ ի յարթնութեան չարժէին և
խաղային՝ թելադրութեամբ Հոգւոյն Սրբոյ[1]. որոյ
զինի իբրեւ ի խթանէ ուժգնէ զարթնոյր, և առեալ
փութապէս զպատրաստական քարտէսն՝ զրէր արագ
արագ, զոր ի տեսլեանն առեալ լինէր ի Հոգւոյն
Սրբոյ. և դարձեալ ննջէր, և նոյնպէս լինէր այս
առ նմա հանապազ:

Ունէր և այլ հրաշալի չնորհ առաքինութեան.
զի յորմէ հետէ ի զգայութիւն եհաս, ոչ ուժգ ի
մանկանցն զանկատար ձայնեաց զանուն, զոր ամե-
նայն ազգք մարդկան սովորաբար ունին, և ոչ ու-
մեք մականուն ասաց. այլ որպէս երկոքումբք հո-
գիացեալ էր և լուսաւորեալ աստուածային լու-
սովն, Լոյս վերադայնէր ամենեցունց[2] անուն՝ մեծի
և փոքու: Նա և այնչափ զրոնութիւն մարմնոյ
առնձեաց և հնազանդեցոյց աստուածուսոյց պա-
տուիրանին, որպէս զանմարմին գոլով, և զամե-
նայն ժամանակս կենաց իւրոց ոչ խօսեցաւ բանս
դատարկս և ծիծաղելիս. այլ զոր ինչ խօսէրն բան՝
լինէր հոգեւոր, յորդորումն ի բարիս, պատճառք
սիրոյ, խրատք առ ի գործս առաքինութեան, միշտ
ընթերցումն, և աղօթք արժանաւորք ի սուրբ սըր-

1. Նշանաւոր և հրաշալի սուրբք Աստուածոյ. երբ
չատ յագնած առեն քիչ մի նատի կամ կթթընի ա-
թոռին՝ քնանալու, պակուննքն չարժին իբր թէ խօսի:
2. Փոխանակ սր և ե փաղաքշական անուն տալու
աղայոց կամ այլոց՝ միայն Լոյս կ՚ըսէր:

տէ, խօսակցութիւն ընդ Աստուծոյ: Եւ զբնաւ
զգայութիւն անձին և մարմնոյ՝ երասանակաւ ա-
ռաքինութեան ուղղէր յանապատաք յընթացս աս-
տուածայնոցն չաւղաց. պարկեշտութեամբ առ հար-
կաւորսն, և ճնշմամբ սուրբ և ամենամաքուր մար-
մընոյն՝ յըսա մարմնոյն, զմարմնական ցանկու-
թեանցն ամենեւին ցամաքեցուցանէր զաղբիւր:

Էր ի նմա և այլ ինչ առաքինութեան կիրք, որ
առաւել գերագոյն էր այլոց բարեաց մասանց, զոր
կարի յոյժ դժուարին յերկրածնաց ոք ստացական
ջանիւ կարողանայ ստանձնել. զամենագովելի հե-
զութիւնն ասեմ, զոր ունէր հանգոյն մեծի նախա-
մարգարէին Մովսեսի, որ ոչ մասնաւորաբար ըստ
ժամոյ ուրեք, այլ զամենայն աւուրս կենաց իւրոց՝
ոչ ումեք բարկացաւ. և եթէ լինէր ի պատճառէ
խմճմել բան կամ գործ յումեքէ արժանի բարկու-
թեան, նա և ոչ սրտնէր կամ ցուցանէր բարկու-
թիւն ինչ, այլ հեզ և քաղցրագոյն բանիւ ասէր.
«Լոյս, եթէ ոչ յիս խնայէի՝ բարկանայի քեզ»:

Եւ այս էր նորա բարեաց սովորութիւնք միշտ,
որ ի վեր է քան զմարմնոյ բնութիւն: Զոր առ-
նել եղբօրն՝ գոհանայր զՏեառնէ որ այնպիսի
մեծի փարթամութեան եղեւ ունող. և այնչափ մեծ
սիրն հաւատոյ ետես հաստատեալ ի սուրբ եկե-
ղեցի՝ յորովայնէ ծնողաց իւրոց: Որոյ լծակցու-
թեամբ անթերի յօրինամբ զարգուց ճոխացուցա-
նէր զեկեղեցիս Հայաստանեաց:...

... Սուրբն և ամենայն երանութեանց արժա-
նին Ներսէս՝ արժանաւոր կոչմամբ նստեալ յաթոռն
հայրապետական՝ տքնէր մեծաւ վարանմամբ, և
հոգայր միշտ ի տուէ և ի գիշերի, թէ զիարդ կա-
րիցէ զհաւատացեալն իւր բանաւոր հօտ՝ ըստ քաջ
հովուապետին հովուել. զի մի ոք յանմարմին գա-
զանէ որսացեալ պատառեսցի և գիշատեալ կորի-
ցէ: Քանզի որպէս վերագոյնն ասացաք, աշխարհ
ամենայն յայլասեռից ըմբռնեալ էին և ազգ մեր
ի մէջ նոցա ցրուեալք ընդ ոլորտս տիեզերաց, և

ոչ գոյր հնար լրջել ի միջի նոցա և խրատել զնոսա և ուղղել՝ ըստ նմանութեան առաքելոց սրբոց, յաղագս ժամանակին չարութեան և անիշխանութեան։ Նա և ոչ գոյր քաղաք թագաւորական յազգի մերում, զի անդ նստելով յաթոռ հայրապետութեան և վարդապետութեան, ի տուէ և ի գիշերի ուսուցանել ժողովրդեան մերոյ գաստուածային պատուիրանս։ Եւ զ՚ի բաց թողուլն և լքանելն ի հովուելոյ՝ անհաւատութեան համարէր նշանակ, տեսանելով զպահինս ի գայլոց յափշտակեալս, և անտես առնելով։ Այսպէս յետ բազում և պէսպէս հոգւոյ անհանգիստ լինելոյ՝ ածէր զմտաւ զրելով առաքել յընթանուրս և խօսել առ ամենեսեան զպատուիրեալսն յԱստուծոյ՝ ի հին և ի նոր կտակարանս. նմանելով այսուիկ մեծի Առաքելոյն Պաւղոսի, որ ոչ միայն չրջելով ի տար աշխարհ՝ քարոզէր զաւետարանն, որպէս և ասէրն, թէ, յԵրուսաղեմէ մինչեւ ի Լիւրիկիա, այլ և ի կապանս գոլով՝ թղթովք հաստատէր զաշակերտեալսն։ Եւ յայս խորհուրդ հաստատեալ՝ զրեր Շրջաբերական նամակ[1] և առաքէր ընդ ամենայն աշխարհ, յարեւելս և յարեւմուտս, ի մէջերկրեայս և որք ընդ ովիկեարս երկրի ցրուեալք ի զանազան տեղիս. և զգուշացուցեալներ զամենեսեան առաուածայնոց պատուիրանացն պահպանութեանց։ Զեպիսկոպոսունս, զեղբիցունս, զվանականս, զքհանայս, զվինուորս, զքաղաքականս, զռամիկս, և զամենեսեան ըստ իւրաքանչիւր կարգի խրատեր կանոնական սահմանադրութեամբ, որպէս և յայտնի են այսօր գրեալքն՝ ի միջի մերում։

Ի կիր արկանէր վերատին և զողորմութիւնն՝ զոր ունէրն նախկի բնաւորաբար սովորութեամբ. և ըստ մեծի ատիճանին առաւելութեան՝ առաւել

1. Շնորհալւոյ Ընդհանրական անուամբ չատ հեղ տպագրուած են այս նամակներն, նա և լատիներէն թարգմանուած և տպուած։

լոյր և ի տուրսն աղքատաց, յայտնապէս և ի ծածուկ։ Քանզի ունէր սովորաբար առնել խորհրդածս զամանս իւրոց աշակերտացն՝ իւրաքանչիւր զանխափարար խորհրդեանն, գնալ իմանալ և քննել, թէ, ո՞ր իցէ անանկ և հասեալ ի յետին աղքատութիւն՝ և ամաչէ գալ ի հասարակաց բաշխումն ողորմութեանն, և ծանուցանել նմա. զոր իրրեւ իմանայր՝ տայր ցնոսա ծրարս ոսկւոյ առատապէս, և հրամայէր ընկենուլ զայն ընդ երդս և ընդ պատուհանս նոցա ի գիշերի, առ ի լինել նոցա ի լրումն պիտոյից իւրեանց. և զգուշագոյնս պատուիրէր՝ զի մի ոք գիտասցէ. և այսու նմանէր աքանչելագործ հայրապետին Նիկողայոսի։

Եւ բազում և պէսպէս առաքինութեամբ զնախնի Սրբոցն բերէր զնմանութիւն յանձին. զմիշտ աղօթսն ի սուրբ սրտէ, զպահսն սրբութեան, զհամբերութիւնն ի ճգունս հոգեւոր պատերազմին, զսէրն՝ առ Աստուած և առ ամենեսին, զնախանձն ի բարիս, զհաւատն ուղիղ, զյոյսն առ Աստուած, զանբաւ հնազոյիւնն[1], զընդ ամենայնի ամենայն լինելն, զժուժկալութիւնն յաշխատութիւնսն, միշտ և յաբաժամ ընթեռնուով և զբելով զրանս աստուածային, և ի նոյն խոկալով անդադար. և զայլ ամենայն բարեաց տեսակսն, զոր տկարանայ լեզու պատմոզաց մի ըստ միոջէն պատմել։...

1. Մասնաւոր խնամով կրկնէ հեղինակն՝ շնորհալւոյ այս առաքինութիւնը, զոր առաջ այլ չատուկ և երկար յիշեր էր. և արժանապէս. վասն զի և Տէրն իւր և մեր՝ Յիսուս, այս քաղցր շնորհաց համար ըստ չատուկ, «Ուսարուք յինէն, զի հնզ եմ և խոնարհ» սրտիւ». որոյ պատուէն այլ աւելցուց, «զի գոլիք» հանգիստ անձանց ձերոց»։ Գրասնց չատ նեղութիւններ կրած է մեր շնորհալին, այլ միշտ գտած և սրտին հանգիստս, ուրիշներուն այլ գտնել տալով իր ողորմութեամբք, խրատուք և գրուածովք. զոր և մենք կարդալով՝ գտնեմք ոչ սակաւ հանգիստ մեր խղճուկ սրտին։

Թէ իմանայր ուրեք թէ իցէ ոք յերիցանց կամ ի սարկաւագաց որ ունիցի չնորհս և սէր ի հոգեւոր գործառնութիւնան, վաղվաղակի առաքէր և ի ձեռն գրոյ առ ինքն կոչէր, և եւս առաւել յորդորէր ի նոյն, և ուսուցանէր և խրատէր յաւրաժամ։ Եւ յոյժ սիրելի էր նմա այր՝ որ ուշ նէր նախանձ և ողջախոհութիւն ի բարիս և ի չնորհս աստուածայինս. զորս թէպէտ և հոգեւորքն ճոխացուցանէր, այլ և մարմնականաքն ոչ թողոյր անիսրթամ։ Եւ որպէս լծակցեալ Աստուծոյ, զպաշտուեալսն չնորհօք ի նմանէ՝ և ինքն պատուէր, սիրէր և յարգէր աննախանձ մտօք՝ որպէս հայր բարի գթած և որդեսէր։

Վասն որոյ ընդհանուր եկեղեցի Հայաստանեաց՝ ի ժամանակս սուրբ հայրապետին Ներսիսի՝ լուսաւորեալք ի չնորհաց նորա և ուրախացեալք ի վերայ աստուածայնագոյն հովուապետութեան նորա, ընդ ամենայն տեղիս գոհանային պՏեառնէ, որ այնպիսի լուսաւորիչ ի զարմէ Սրբոյն Գրիգորի պարգեւեաց նոցա ի յետին ժամանակիս, և ուրախ էին ամենեքեան ի Տէր։...

Իսկ անքնին գատաստանքն Աստուծոյ և անհասանելի խորքն՝ ի նոյն ամի (1173) վերափոխեր զերանելի զհայրապետն սուրբ, փոխադասեալ յանվաղճան խաղաղութիւն, յամենեանն աւգոստոսի որ օր երեքտասան էր, յաւուր հինգշաբթւոջ, և ի թուականութեանս Հայոց վեցհարիւր քսան և երկու[1]. և մնաց այս գործ անկատար մինչեւ ցայս վայր[2]։ Քանզի ի ձգնաւորական կրօնից տկարացեալ

1. Այս թուականին 622=1173, հինգշաբթի օր մի Հանդիպի օգոստոսի 8ին, որ օր նշանակեն Սրբոյն մահը՝ Մխիթարէ Աստրի իր ժամանակակիցն և հին Ցայսմաւուրք, և այս երեւի սոյգ. ամանք այլ ամսոյն 3ին նշանակեն։

2. Հայոց և Յունաց հաւատոյ միաբանութեան գործն։

երանելւոյն ըստ մարմնոյ, յայնժամ ճնշէր ցաւօք պարկեշտ անձնն. և հասեալ ամառնայինն եղանակ ի վերայ՝ չերմային օդովքն տապացուցանէր ըղսուրբն, և վաղվաղակի վախճանէր։ Սուգ մեծ հասեալ եկեղեցւոյ մեր և բովանդակ զարմիս. և ոչ միայն մեզ՝ այլ հասեալ համբաւն ի թագաւորական քաղաքն, վշտանայր բարեպաշտ արքայն[1] և հառաչանօք ասէր. Մեծ զգայարան և արթուն բարձաւ այսօր յեկեղեցւոյ Աստուծոյ. զրկեցան Հայաստանեայք յերկրորդ Լուսաւորչէն իւրեանց. ոլ երանելի սուրբ հայրապետ, զիարդ զիմս փափաք անկատար թողեալ ժամանեցեր առ Քրիստոս. սակայն մեք զարժանի յիշատակի անուն քո՝ ընդ առաջին Սրբոցն դասակարգեմք ոտնախմբելով ուրախութեամբ ի Քրիստոս։ Եւ պատուէր հրամանի եւս՝ ի թագաւորական քաղաքին եկեղեցիսն յիշատակել զնա ընդ առաջին Սուրբսն ոտնախմբութեամբ։

Իսկ զհոգիացեալ մարմին սուրբ հայրապետին Ներսիսի՝ մեծաւ պատուով և առաքինեաց և վարդապետաց ժողովով, մեծապայծառ հանդիսիւ հանգուցին յարժանաւոր դամբարանին, ի հիմունս սուրբ և գեղապաճոյճ տաճարին, որ չինեցաւ յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ յորդւոյ եղբօր իւրոյ ի Տէր Գրիգորիսէ[2]. քանզի նա յաջորդեաց զաթոռս հայրապետութեանն Հայոց՝ զկնի Սրբոյն Ներսեսի. որ և առաւել զարգարեաց զսուրբ աթոռն, ամենավայելուչ տաճարին չինմամբ, և ճոխացոյց երեւելի և պատուական սպասուք. և նա բերել զնչխարս սուրբ հայրապետին և նախնոյն իւրեանց Տէր Գրիգորիսի Վկայասիրի, և ամփոփեաց ի հիմունս նոյն տաճարի, մերձ առ դամբարանս երկուց հայրապետացն, Գրիգորիսի և Ներսեսի։

Սրդ, կացեալ սուրբն Աստուծոյ ի հայրապետու-

1. Մանուէլ կայսրն, որ թղթակցէր՝ Հայոց և Յունաց միաբանութեան համար՝ ի հաւատոյս։

2. Գրիգոր Դ. Տղայ մականուանեալ կաթողիկոսն։

թեանն ամս ինն[1], բարւոք և զեղեցիկ կենցաղավարութեամբ՝ զընթացսն կատարեալ և զհաւատսն պահեալ, ըստ Պաւղոսի, փոխեցաւ յանվախճան և յերանելի կեանսն, և հանգեաւ ի գաս առաքելոց և մարգարէից և ուղղադատան հարց և վարդապետաց:

ՄՋԸ

ՅԻՇԱՏԱԿ ՄԻ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ[2]

... Մեր երջանիկ սուրբ և աստուածարեալ հայրապետ (Ներսէս), ըստ մարմնոյ զարմ և չառաւիղ Սրբոյն Գրիգորի[3] մեծ նահատակին Քրիստոսի, և ըստ հոգւոյ՝ համանման և զուգահաւասար նմին. բանիւ կատարեալ, հոգւով լցեալ, առաստաւղիս իրրեւ զյորձանս գետոյ, յ'առնել և յուսուցանել զգիտութիւն աստուածաշունչ գրոց. հեզ և խոնարհ սրտիւ. զգաստ և արթուն ի քննութեան աստուածայնոց գրոց. որ և'լի աւուրբք կատարեալ հասակաւ տիոք ծերութեան: Որ և յանդարի ժամանակի յաջորդեաց զաթոռն հայրապետութեան տանն Թորգոմայ, ի քրիստոսազգեաց եղբօրէ իւրմէ Գրիգորիսէ. որոյ քաջութիւն անուանն և գովութիւն իմաստիցն՝ անցանէ քան զվիսս[4]. որ և

1. Թերեւս իր եղբօր Գրիգորիսի կենդանութեան առենէն սկսեալ՝ ինն տարի. բայց սուզիւ եօթն, ինչպէս հետեւեալ ժամանակակիցն այլ գրէ:

2. Նայն Շնորհալւոյ հրամանաւ գրուած Ա.ւետարանի մի յիշատակարան է:

3. Յայտնի է որ Շնորհալին թոռն է Գրիգորի Մագիստրոսի, և սա ի Պահլաւունեաց ցեղէն էր, յորմէ և Ս. Լուսաւորիչ մեր:

4. Այս գովութեան խօսքերս Գրիգորիսի համար

բազմամեայ ժամանակաւ, երկայնաձիգ գաւազանաւ վարեաց զհոգեւորս այս իշխանութիւն, փառաւորեալ յԱստուծոյ և ի մարդկանէ... լի աւուրբք պատուական ծերութեամբ փոխեցաւ ի Քրիստոս, յամին յորում էր թիւն Հայոց ՈՃԵ (1166)... Եւ ըստ վերոյգրելոցս՝ փոխանորդեաց ի հայրապետական յաթոռ՝ եղբայրն նորա երջանիկն Ներսէս: Որ և ըստ աստուածային սիրոյն բորբոքելոյն յոգի նորա, ցանկացող եղեալ այսմ աստուածային գանձուս (Ա.ւետարանի) և լուսերանգ տառիս, որ է աւետեաց քարոզ բոլոր ազգաց և ազանց... ետ զրել զսա ի լաւ և յընտիր օրինակաց սրբոյ աթոռոյս, և զարգարեալ զանազան երանգօք և ծաղկօք յոսկւոյ սրբոյ և դեղոց պատուականաց, ոչ ի պատճառս մեծութեան և փառաց՝ որ ի սմայս խօսի Աստուած, այլ ի վայելումն և ի զուարճութիւն մանկանց եկեղեցւոյ և ի յիշատակ իւր յաւպագայն: Որ և յաւարտումն լուսազարդ տառիս և ի լնուլ փափագմանն սրտին, փոխի յաստեացս առ Քրիստոս. վարեալ զիշխանութիւն իւր ամս եօթն, և յիշատակ բարի թողեալ յաշխարհի, յետ որոյ բազում խնամ ողորմութեան եցոյց Տէր ի վերայ աղքատացեալ ազգիս և սրբոյ աթոռոյս:...

Աչնօթա այս պատուական վայելուչ մատեան՝ որ իմով ձեռամբ գծեալ Գրիգորի մեղապարտի, և անկատար մնացեալ, զորոյ զպակասութիւն լցեալ հրամանաւ կաթողիկոսի Հայոց Գրիգորի Տղայի, ի թուականիս ՈԻԳ (1174): Վասն որոյ աղաչեմ զամենեսեան զատացողսդ, յետ սոցուն զընթերցողդ յարաժամ, և զամենայն որգիս լուսոյ, յիշել ի Տէր՝ յառաջ զպատճառն բարեաց ի սորայս գործ-

են, որոյ չատ (34) տարիներ հայրապետութիւնը՝ ամեն կողմ ցրուած ազգայնոց վրայ, երկայնաձիգ գաւազան կոչէ. չատ պատիւ գտած է ի լատինաց յերուսաղէմ գնացած ատեն և հրաւիրուած անոնց եկեղեցական ժողովոյ:

առնութիւն զսուրբ և զաստուածազգեաց Հայրապետն Ներսէս, և ապա զերկրորդ լուսաւորիչն Հայոց զեղբայր սորա զԳրիգորիս կաթողիկոս. ընդ սոսին և զեղբօրորդի սոցուն Գրիգոր՝ վերատեսուչ Հայոց սեռի։...

ՄՂԹԻ

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՄԵԿՆԻԶ ԹՂԹՈՑ ԿԱԹՈՂԻԿԵԱՑՑ

Ամենայն ոք որ[1] զգիրս աստուածային ի ձեռն առնուցուն՝ նախկի զմակագրութիւն նորա ընթեռնու, և նովաւ հասու լինի՝ եթէ մարգարէական իցէ արդեօք։... Այսպէս երիցս երանելով և ճշմարտասէր հոգի սուրբ վարդապետն Սարգիս և կատարեալ պուետիկոն՝ ընտրեցաւ ի Հոգւոյն Սրբոյ, և գրեցաւ ընդ անդրանիկս եկեղեցւոյ, ի տանէ Հայկազնեան, յազգէ Թորգոմեան. և որպէս ասաց Փրկիչն, թէ, ի պտղոյ անտի ծառն ճանաչի, այսպէս և հոգելից հայրս մեր՝ փորձ և ընտիր գտաւ ի համացեղս. և այս յայտնի է ի խորհրդական և ի հանճարեղ բանս իւր։ Թուի թէ առաքեալքն սուրբք՝ որք արբին զծորանս բանին ի վերնատանն՝ ինքնամբ հրեղինաք լեզուաք Հոգւոյն Սրբոյ՝ ի վերայ նոցա՝ առ բանն ընտրութեան, եւին զդայլ[2] կենդանարար բաժակին ի ձեռս նորա, արբուցանել զուրախարար բաժակն արժանաւոր և ընտրեալ անձանց, այսինքն է ամենայն հաւատացելոց։...

Որպէս և ի մերս ժամանակ եօթնարփեան չնորհօք Հոգւոյն լցեալ սուրբ հայրս մեր՝ վարդապետս Սարգիս, և եղեւ ջահ եօթնատեղեան անշիջանելի, յաւէտ լուսաւոր Հայաստանեայցս եկեղեցւոյ։ Բայց զոր օրինակ արեգակն ի ծայրս կամարացն լինելով՝ ի հասարակ ժամս զամենեսեան առհասարակ լուսաւորէ զարարածս, ըստ մարգարէութեանն Դաւթի, թէ, «Ոչ ոք իցէ որ թաքիցէ ի տապոյ նորա», զի զծերսս և զփոսսս ի լոյս ածէ և ի տեսիլ, այսպէս և սա զառաքելական բանս զծածկեալս և զխորինս զեօթանեցուցն Թղթոց կաթուղիկեայց՝ ի յայս և ի տեսիլ ածեալ ամենեցուն, և ոչ եթող և ոչ խուն մի ի բանից նոցա՝ որ ոչ մեկնեաց վարդապետօրէն. և այլ ի ճահ և ի դէպ ի կարգ անկեալ՝ մեկնէ զամենայն. ոչ նուրբ բանիւք և ոչ գեղջուկ, այլ զմիջակ և զարքունականն գնալով ճանապարհ, զի գիւրալուր և ախորժ լինիցի լսողացն, զի ի պարսաւադիտաց և արհամարհոզաց ի բաց փախչի, և անկարօտ և անտարակուսելի զլսողսն առնէ։

Արդ, պարտ է մեզ հարկաւորաբար եւս գրել, թէ յորում ժամանակի էր սուրբ վարդապետս, կամ առ ո՞ վարժեցաւ, կամ ո՞յք էին ուսումնակիցք սորա, և տեղին ուր գրեաց զգիրս, և թէ ո՞ւր կան սուրբ ասկերք նորա եդեալ. զի հաւատարիմ լիցի լսողացն, թէ ոչ որպէս ամենայն հին և նոր կատակարանք՝ ի լեզուս Հայոց թարգմանեցաւ. այլ սուրբս այս ի մերոց ազգաց է և ի տանէ Հայոց[1], առաքելական չնորհօք լցեալ, գրեաց զգիրս առաքելական մատենից մեկնութեանս։

1. Սա նման Ներսիսի Կլայեցւոյ Շնորհալի անուանուած է յամանց, չնորհիւ վարուցն և գրուածեանն. և է անոր և իգնատիոսի (Ղուկ. աւետարանի մեկնողին) աշակերտակից։ Իր վրայ և իր վարպետին Սահակեանց վրայ այս յառաջաբան տեղեկութիւնները գրողն կարապետ անուամբ մեկն է, թերեւս իր աշակերտ կամ ժամանակակից կամ ոչ հեռի ժամանակաւ, զի կ'ըսէ «ի մերս ժամանակս»։

2. Թուի դայլ, մեծ աման ջրոյ. Թուրք. պարգաձ։

1. Ըսել ուզէ, թէ ոչ իրրեւ շատ Ս. Հարց գրքերը յօտար լեզուներէ թարգմանուած է այս մեկնութեան գիրքս այլ, հապա մեր ընիկ հայազգի հեղինակի մի հարազատ գործ է։

Աբդ, յաւուրս Տեառն Բարդի[1] սովորութիւն էր Հայոց կաթողիկոսացն յառաջն՝ շրջել ամ յամէ ընդ Հայք, և հայրական խնամօք ուղղել զամենեսեան ի կանոնական սահմանս. գնաց յաշխարհն Կիլիկեցւոց և եմուտ ի Սեաւ լեառնին, ուր էին բազում վանորայք և անապատք. և յայնմ ժամանակի հալածումն եհաս ամենայն Հայոց՝ յանօրէնն ազգէն Իսմայելի, և բազում գաւառք և վանորայք աւերեցան, և մնացեալքն փախստական լինէին:

Իսկ մանուկ մի քահանայ գոլով և վարժեալ ի հին և ի նոր կտակարանս վարդապետական ուսմամբ՝ ի հօրեղբօրէն իւրմէ, անուն կոչեցեալ Յովհաննու, որպէս թէ աթեւաւանամենից, սորա ընդ այլ փախստականն հասեալ ի գաւառն Քևևոյ, ի մեծահռչակ սուրբ ուխտն որ կարմիր վանքն կոչիւր, որ էր իշխանաց իշխանին վասպի, որ Գաղ վասպի կոչէր յայլազգեացն[2], վանն արիւթեան նորին, և ի նմին տեղին բնակեցաւ. բայց ծածկեաց զանուն վարդապետութեանն վանս մանկական հասակին. իսկ յետ աւուրց յայտնեցաւ բնակչաց տեղւոյն, եթէ ուսեալ է զհին և զնոր կտակարանս լիով, և հրաման ունի առանց գաւազանի ազօթել ի տեղի ազօթից: Եւ ապա ծերքն որ անդ կային՝ որք սիրողք էին լսել զպատուիրանս Աստուծոյ, հարկեցին զնա վարդապետել ի հասարակաց տեղին, օրինակ բերեալ ի մէջ, եթէ Դանիէլ մանուկ էր՝ սակայն զօրացեալ Հոգւովն յանդիմանեաց զանօրէն ծերսն ի սատակումն անձանց. և Սաղոմոն մանուկ գոլով և նստաւ յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ Դաւթի: Իսկ նա ոչ եղեւ անհնազանդ՝ կատարել զվնդրուածս նոցա, մանաւանդ զմտաւ ածեալ զտէրունեան հրամանն, եթէ, «Ոչ ոք լուացանէ ճրագ և դնէ ընդ զրուանաւ, այլ ի վերայ աչտանակի, զի լոյս տայ ամենեցուն որ ի տանն

1. Մեծ Գրիգոր Վկայասիրի յաջորդ կաթողիկոսն:
2. Տես Յօդուած 277:

իցեն»: Եւ նա յանձն առնու խօսել առաջի հրեշտակաց զրանն կենաց. և անօթ ընտիր գտեալ զնա Հոգի Սուրբ Աստուած՝ առատաբուղխ լինէր ի նա զաստուածախօս վարդապետութիւնն. և ել համբաւ նորա ընդ բազում գաւառս: Եւ ոմանք նմա նախանձաբեկ լինէին վասն մանկական հասակին՝ վարդապետք և առաջնորդք որ ի ժամանակին էին, և չարախօսէին առ Տէր Բարսեղ, անարգեալ՝ ոչ միայն զնա այլ և զբնակիչս սուրբ ուխտին: Իսկ կաթողիկոսն առնու ընդ իւր վարդապետս և եպիսկոպոսս, այլ և յընտիր իշխանացն որ էին ի ժամանակին, և գայ յողջոյն իշխանաց իշխանին Վասպի, և զգլխաւոր վարդապետս զՄեղրիկ և զԿիրակոս[1], և գայ նոքօք ի մեծ ուխտն ի Կարմիր վանքն: Եւ բնակիչք տեղւոյն ելին ընդ առաջ մեծաւ հանդիսիւ, և ընկալան զնա մեծաւ պատուով: Եւ քանզի շաբաթ էր օրն այն, և յորժամ ի գիշերային պաշտամունսն հասին՝ կացին առաջի կաթողիկոսին և խնդրէին, եթէ, Հրամայեա վարդապետացդ խօսել մեզ մխիթարութեան բան: Իսկ վարդապետքն արհամարհեալ զծերսն՝ ասեն. Խօսեսցի ընդ ձեզ վարդապետն ձեր, որ յայնքան ի մանուկ հասակի համարձակութիւն տայք ի մէջ եկեղեցւոյ վարդապետել, և զհրամանս Ս. Գրիգորի Աստուածաբանի ի վկայութիւն ածել, եթէ, Ցիսուս երեսնամեայ մկրտեցաւ, և դու յառաջ քան զմօրուդ վարդապետես: Մինչեւ յամենեցունց յառաջ կոչել զմանուկն Սահակունոս, կամ վարդապետել առաջի իմաստնոց և գիտնական գլխաւորաց, և կամ թէ ոչ՝ անարգիլ արհամարհանաց: Եւ զայն ոչ զմտաւ ածէին զոր ասաց Փրկիչն, եթէ, «Որ հարցի ընդ վիմիս ընդ այս՝ փչրեսցի. և յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա»: Իսկ նա զօրացեալ Հոգւովն Սրբով և գրեալ զսիրտ իւր տէրունեան նշանաւ, որպէս թէ ասէր զմարգարէին, «Տէր տէր տայ ինձ լեզու խրա-

1. Տես Յօդուած 276, ուր յիշուին ասոնք:

տու խօսել ինձ զբանն». և սկսաւ խօսել առանց երկիւղի առաջի ամենեցուն. մինչեւ զահի հարան վասն բանին առաւութեան և մտացն խմաստութեան: Եւ մինչ զբանն յօրհնութիւն Տեառն աւանդեաց, երկիր պագանէր կաթողիկոսին: Ապա նոյն ժամայն յառաջ մատուցեալ Տէրն Բարսեղ՝ գիրկս արկանէր նմա և համբուրէր. և եդ զպարգարեալ գաւազանն յոսկւոյ և յարծաթոյ՝ ի ձեռն նորա, և զվաւերականն իւրովի ի մատն նորա: Եւ ի վաղիւն որ էր օր տէրունեան՝ արար զնա եպիսկոպոս նահանգացն՝ որ ընդ իշխանութեամբ մեծի իշխանին Վասլի: Իսկ նա հասեալ ի հասակ կատարեալ՝ ժողովեցան առ նա աշակերտք բազումք. իսկ նա ոչ վարդապետօրէն ուսուցանէր՝ այլ առաքելաշնորհ եղեալ՝ փչէր ի նոսա զբանն կենաց:

Որ և մի էր յաշակերտաց նորա հզօր վարդապետն Սարգիս, որ և զբեաց զկաթողիկեաց Մեկնութիւնս. և ընկեր սորա իգնատիոս, որ և նա զբեաց զՄեկնութիւն աւետարանին Ղուկայ. և այլ եւս երկու եղբարք, Գրիգորէս և Ներսէս[1], եղբօրորդիք Տէր Վահրամայ կաթողիկոսին Հայոց[2], որ յետ նորա նստան յաթոռ հայրապետութեանն, յառաջագոյն Տէր Գրիգորիս և զկնի նորա Տէր Ներսէս եղբայր նորա: Եւ այս յայտ իսկ է ամենեցուն, թէ որքան երգս հոգեւորս աւանդեաց եկեղեցւոյ Տէր Ներսէս, որ և այժմ երգեն յամենայն տեղիս. և սկիզբն սորա մեկնելոյ զաւետարանն մատթէոսեան քաղցր բանիւք և առատ մտօք, որ և հաճելի էր գիտնականաց. և եհաս մինչեւ ցայն վայր՝ զոր ասաց Փրկիչն, Մի համարիք լուծանել օրէնս, և աւարտ եղեւ կենաց նորա[3]: Իսկ երէց

1. Ներսէս Շնորհալին և երէց եղբայրն:
2. Որ է Մեծ Վկայասէրն, Գրիգոր Բ:
3. Մնացած մասն աւետարանին՝ մեկնած և աւարտած է Յովհաննէս Եղնկացին, իբրեւ հարիւր յիսուն տարի վերջը:

եղբայր նորա տէր Գրիգորէս՝ որ Վկայասէրն անուանեցաւ[1] և մինչեւ յայժմ ասի, սա բազում ճառս սուրբ մարտիրոսաց՝ էր որ ի Յունաց և էր որ յԱսորւոցն՝ ի Հայս թարգմանեաց, որ և այժմ ընթեռնուն յեկեղեցի. է որ ներբողեանքն են և է որ պատմութիւնք. վասն այսորիկ Վկայասէր կոչեցաւ: Քանզի առաց ամն յիմաստնոցն, եթէ Ծածկեալ գիտութեան վարդապետի[2] բերան են աշակերտին. քանզի լուսաւորիչք եղեն ազգիս Հայոց՝ ի մերս ժամանակի:

Իսկ լցեալ Հոգւով Սրբով ի մէջ ընկերացն՝ սուրբս այս վարդապետս Սարգիս՝ վասն որոյ պատմութիւնս, արդ զնուրն կենդանի առաքելական, և զնոյն կենդանարար հաւր իբրեւ զանապատ աղբիւր մշտնջենաւոր՝ ետ յարբուն Հայաստանեայցս եկեղեցւոյ: Սա զամենայն ժամանակս իւր ետ զկեանս իւր ի խոհումն գրոց, և արար բնակութիւն իւր ի սուրբ ուխտն Տգնաւորաց, որ և յաստղի լեզուն Բարաշիրուս կոչի. անդ աւարտեաց զաստուածային մատեանս, և ի նոյն տեղի կան սուրբ նշխարք ոսկերաց նորա:

Անդադրիկ ցուցաւ փափաքողաց և խնդրողաց՝ անտարակուսելի լինել ժամանակն և կենցաղավարութիւն նորա, և եթէ առ ո՞վ վարժեցաւ և ոյք էին ընկերք նորա և տեղին ուր փոխեցաւ առ Քրիստոս[3]:

1. Փոքր Վկայասէր կոչուի, իր հօրեղբօրէն սրոշուելու համար:
2. Յաեփեանոսի համար կ'ըսէ:
3. Սարգսի գրութեան կամ մանաւանդ վերջացընելուն ժամանակն է 1156 թուականն Փրկչին: Գրուածն չատ երկայն է, անոր համար ինքն Սարգիս քանի մի տարի վերջը համառօտեր է զայն, որ առանց ձանձրութեան չատերն կարդան: Անոյշ խօսքերով և խոնարհաբար խնդրէ, «Զկրկին աշխատող գրոցս ի յիշո» ղանի Մեկնութեան նախագունէին, և ապա ի հա» մառօտել զպիտանացուն, ընթերցող լուսամիտ համ-

ՄՂ

ՅՈՎՍԷՓ ՆՈՐ ՎԿԱՅ

Դաւթի Քահանայի[1] ի սբանչելի վկայն Քրիստոսի Յովսէփ Պատանւի, որ յԱյրարատոյ Նահանգէն, Ներբողական գովեստի բան

Պարտապան եմ պատուասիրել առ քեզ, ըստ նագելի և պարկեշտագեղ պատուոյ գերագունիդ իմասանոյ, և ինձ յոյժ ատուածաւսոյց պատուիրանին՝ սիրով մերձաւորիդ, զգօրութիւն ատուածային Հոգւոյն և զանուն մխիթարական յանձին կրողի, վկայասէր մտօք զվաղնջուցն ի ձէնջ խընդիրս լնուլ, զոռոգանութիւնս գովեստից։ Վասն զի մանաւանդ ի ճշմարիտն ձայնէ ուսաք ի հաւատարակութիւն նմանակցութեան՝ գյօժարութիւն.

» բակացդ ուսումնասիրաց և քրիստոսասիրաց, զորս
» աղաչեմ սիրով Հոգւոյն և մաղթեմ թախանձելով,
» մի անտես առնել զերկայն ժամանակաց աշխատու-
» թիւնս իմ, այլ սրբամատոյց ազօթիւք յիշել միշտ
» առաջի յուսոյն մերոյ Քրիստոսի, զի թերեւս ի ձեռն
» ձեր ողորմութիւն գտայց ի նմանէ՝ յաւուրն մեծի
» և համառօտի, և Աստուած յիշողացդ և յիշելոցս
» աղօրմեացի. ամէն »։ Ասար նման շատ մանր յիշատակներ այլ գրած է։

1. Ծի գարու երկրորդ կիսուն Դաւիթ անուամբ քանի մի գիանական եկեղեցականք կային յարեւելեան կողմանս Մեծ Հայոց. ով և որ գաւառէ է սա, չէ յայտ. ով այլ ըլլայ՝ լաւ գրիչ մ'է. իսկ այս յատաղաքանն՝ թէ ոճով և թէ իմաստով՝ մեծ հանճարոյ նշան կու տայ։ Գրուածի խնդրողն այլ՝ Մխիթար մ'է, և հաւանօրէն Գոշն հռչակաւոր, որոյ հայրենակից և ժամանակակից էր Դաւիթ վ. Ալաշկայ որդի գիտնական գրող մի, յիշուած յ'280 Յօդուածի։

զոր խնդրողիդ յաւէտ չնորհ ունել իրաւացի է, եթէ գիպեսցի պատեհաբար ինչ իմանալ և ասել, և գրուագս գովեստից ընդ պատմութեան նորին գովելի կենացն և նահատակութեան յարահիւսել։ Սակայն ի սատկագոյն լինիմ յերկիւղի. գուցէ այլայլութիւն մտաց և ապազօր զգայարանացս գոլոյ՝ յարժանւոյն վրիպեցայց ասից. վասն որոյ անագան յայտսիկ ածայ հաւանութիւն՝ լծակցեալ ընդ վկայասէր անձին քումմ և զիմս յօժարութիւն։ Եւ քանզի դու ինքն որով ունիսդ՝ բաւական քան զմեզ էիր յաւէտ հրաչացուցանել՝ զհանգունակիցն հրեշտակաց ի մարմնի անդ խնարհութեան, այլ զի իրաւացի վարկար ըստ պատմութեան ճշգրտանութեան և զգովեստիցն մեզ լնուլ պարտս, հաւանութիւն յանձին ունիմ անտերիւր սիրոյ ախորժիւք. քանզի և հոգիք մարգարէից՝ մարգարէից հնազանդել օրինադրեցան յԱստուածոյ. և սիրոյ հաստատութիւն՝ ընդարձակէ ի համարձակութիւն, վասն զիմանելոյ սիրողին ի սիրեցելոյն վատասբրատութիւն։ Ուստի, իրաւացի վարկայ սկսանիլ ի դրուատիս գովեստից մեծապանծ և նորագարդ վրկային Աստուծոյ, և ինձ ի տեսիլ աչաց ժամանեցելոյ[1], իսկապէս և անբսգիւտ սիրողին Քրիստոսի՝ Յովսեփայ։...

Սա ի մեծ ատանէն Հայոց՝[2] սուրենական ազգաւ, և պարսկականին վիճակեալ կրօնից, յորմէ յուրատ ի մանկական տիոց լինել՝ յոլովակի խաչատանդանս գանըմպութեամբ ի ծնողացն ընդունէր, և մանու եւս սպառնալեաց ցոյցս. նա և չողոքորդ բանս փազաքչականս, զոր սովոր են առաջի դնել մանկանց։ Յորոց առ վայր մի իրրեւ խաբանօքն յանձնառութեան կարծիս յինքեան բերեալ, և զայն ի սպրդելոյ ամանց, որպէս թէ ինչ ոչ վնաս-

1. Գրող հեղինակս աչօք տեսեր է եղեր զՅովսէփ։
2. Որ է Դուին մայրաքաղաքն Հայոց յԱյրարատ։ Առրեւնական՝ թուի թէ Պահլաւ ուզղ ըսել։

սիցի յայնմանէ. այլ թաղծէը սուրբն յինքեան յաղագս այնորիկ. և նորին ազագաւ փախստեայ եղեալ օտարանայր կամայօժար աղքատութեամբ: Քանզի խիթայր յաղագս չար յանձն(առ)ութեանն, և ասէր յայտնի խոստովանութեամբ, թէ, Մինչ առ քրիստոնէիցն սնանէի մանկունս և յեկեղեցին Աստուծոյ ընդ նոսա փութայի, և զձախողակի դէնին նախնեացն աղարտէի զաշխատելի կրօնս, ընդէր ոչ ի նմին կալով վկայեցի ճշմարտութեան Յիսուսի, ի գաւառի՝ յորում յոգունք վկայական արեամբն ծաղկազարդ զանդաստանս երկրին արարին[1]. յորմէ թէպէտ և վրիպեցայ մանկաբար, սակայն իրաւացի է ինձ ի նոյն տեղի խիղախելով ընթանալ, և տոկոսեօք յոգնապատկօք լնուլ զպարտապանութեանն գլուխս:

Եւ զայսոսիկ խորհելով՝ միթէ չութափեա՞ց ինչ մանկաբար և կամ յափրացո՞յց հեղգալով գյօժարութիւնն. և ոչ իւիք: Այլ ի բաղում տեղիս ուխտից և յանուանի արս առաքինիս զէմ եղեալ ընթանայր ճշնական կրօնից ժուժկալութեամբ, մինչեւ զամենայն իսկ բաւանդակել զայր գաւանութեան առաքինի սրեաս, յարեւելս, ի հիւսիսի, յարեւմուտս և ի միջերկրեայս[2]: Եւ զամանց ի նո-

1. Մեր չատ ազգային նահատակաց համար կ'ըսէ, որք Դուինայ կողմեր նահատակեցան, մանաւանդ Թ դարուն կիսուն, և ի սկիզբն ԺԻն ի Բուղայէ և Յաւսփայ: Տես 219, 220 Յօդուածները:

2. Արեւմուտք և Միջերկրեայք իմանալու է Փոքր Հայոց և Միջագետաց կամ Ասորւոց կողմերը. որոց մօտ է և Հռոմկլայն, այն առենուան Հայոց կաթողիկոսարանն, ուր նստէր մեր Ս. Ներսէս Շնորհալին. և երբ իրեն հանդիպեցաւ Յովսէփ, քալալերեց որ հաստատուն մնայ իր հաւատոց վրայ. և եթէ նահատակութիւն, ըսաւ, զքեզ ի թիւս սուրբ նահատակաց կարգեմ. և այնպէս գասուած է ի Յայտմաւուրս՝ յիշատակն: Ինչո՞ւ Շնորհալւոյ յաղորդքն չպատուիրեցին որ ասնուին:

ցանէ զնպատակ առաքինութեան առնու իւր օժիտս ճանապարհի, և զայլոց՝ բանից խրատականաց քաջալերս. գայ հասանէ ի մայրն մրցանաց ի սուրբն Երուսաղէմ, յորում Տէրն զքաջութեանն յարդարեաց ասպարէզ. որ և հանդիսարանն իսկ է առաքելոց և մարգարէից և գուռն վերնոյ մայրաքաղքին. և անդ վերկեաւ մի բավանդակեալ՝ ի տեղիան չրջելով փրկագործ տնօրէնութեան մերոյ կենսարարին, այնպիսի կրօնիւք սակաւապիտութեան և ժուժկալութեան յօրանայր, իբր ի փափկութեան գրգարանի և յանկարօտ կեանս գրախտին Աստուծոյ. վասն զի ոչինչ յերկրաւորացս հանգուցակից աստուածայնոյ ուրախութեանն: Եւ վասն զի ոչ զայն բաւական ի կատարած վարկանէր՝ առ ի բժշկութիւն այնր խղճի վիրաց՝ յորմէ խիթայրն և կաթածէր, յանկատարութեան մնալ ուխտի խոստովանութեանն. և յաղօթելն իւրում՝ զի ի չարչարանս կըցուիենէ հասարակացն Փրկչի մի վերջացի, ծանեաւ թէ ի նմին գաւառի յորում զառաջինն սկսաւ խրախուսել՝ և վերջինն դիւցի հանդիսարան[1]: Վասն որոյ և ելս ի սրտի ընդ հոգեղէն բանիցն եղեալ՝ ի տեղի ուխտադրութեանն ժամանել. և նոյն հետայն գործ զխորհուրդն արարեալ, գայ և հասանէ առ սահմանաքն Հեր և Ջարաւանդ[2] գաւառի, ի կողմանս Մեծն կոչեցեալ Հայոց՝ ի վկայարանս մեր առաքելոց և լուսաւորչաց, զի և զնոցայն եւս նման նախանձ յանձին բերիցէ՝ քաջալերս իւրոյ առաքինութեանն, որով իբր ի պատրաստեալ խահից ա-

1. Գուշակեց՝ թէ ասր որ սկսաւ նախ քրիստոնէութեան փափագիլ՝ հոն այլ պիտի նահատակուի, որ է Դուին:

2. Հիմակուան Խոյ, Սալամաստ և Որմի գաւառներն, ուր Քրիստոսի Առաքելոց մեկ երկուքն նահատակուած համարուին. ինչպէս, Յուդա Յակովբեան և Սիմոն Կանանացի. Բարթողիմէոսի նահատակութեան տեղն այլ հեռու չէ: Տես Յօդ. 31. 56. և այլն:

մեհապատակաց դիմեալ երթայր արքունական սեղանոյ[1]։

Ի մայրաքաղաք Որտանին՝ ուր իշխանն էր՝ հասանէր. յորմէ ինչ ոչ զանգիտեալ կամ անխայտութիւն անձին արարեալ. քանզի զտապ կրկնակի փորձութեանցն չերամեանդ սիրոյն Քրիստոսի չի-ջուցանել փութացեալ էր։ Եւ եկեալ ի մայր քաղաքացն անօրէնութեան, մտանէր ի սնոտի և խաբեպատիր տուն ազօթանոցի նոցա, ուր ժողովք դպրաց դիւանուէրը պատանեկաց՝ ի ձախակողմն ազօթողաց, զի այպանեսցէ զընդունայնաչան գեղերանան, և յարեւելս կոյս զազօթս իւր սուրբ Նուիրեր Աստուծոյ. զի յայնի հրապարակաւ լուսաւորեալ զանձն քարոզիցէ արդարութեանն արեգակամբ։ Զոր պղծալից տանն բնակչաց իմացեալ՝ ծանեան զարհամարհանս ձախակողի գենին իւրեանց. և գանալից զնա արարեալ՝ արտաքսեն ի խաւարաբնակ ազօթարանէն։ Իսկ նորա ի դուռն ապաքանից ամիրապետին երթեալ՝ արձանանայր ի տեսիլ ելողաց և մտողաց, զի զհաւատոցն հաստատութիւն և զանդրդուելի համարձակութիւնն՝ հրապարակայայտ բազմութեանն արասցէ։ Իսկ նախածանօթիցն նորա ի մանկութենէ և տեղեակ նոցայոցն եղելոց իրաց՝ տեսեալ զնա, ազդեն ի ներքս իշխանին. և նորա արտաքս զոմանս յղեալ՝ հարցանէր զհանգամանս գալստեանն։ Իսկ նորա ողջախոհս պատասխանեալ, եթէ վասն սակին զոր արկեր յաղագս իմ ի վերայ գեղջէիցն՝ եկեալ աղերսեմ զի թողացուսցես, և զիս ազատ ի խղճէ արասցես. այլ և ինձ համարձակեսցես առանց զանգիտելոյ կալ յորում ճգնեցայ պատանման[2]. վասն զի ոչ եկի ես զոյգն լոմայիւք ազատանալ վասն սա-

1. Իբրեւ թէ համեղ կերակրոց սեղանի կ'երթար։
2. Ինդրէ վկայն՝ որ իրեն համար գեղացւոց վրայ դրած տուրքը վերցընէ աստիկանն, և զինքն ազատ թողու քրիստոնէութեանը մէջ։

կաւու ինչ դիւրութեան. քանզի գինք անձին իմոյ է արիւնն այն՝ որով տիեզերք յազատութիւն վերադրեցան. այլ ոչ եթէ ապականացու և անցաւոր նիւթով արծաթոյ ազատեցաք ի հայրենատանգ ուռնայնութենանցն. զոր եթէ ոչ ախորժեցես առնել, ես պատրաստեալ կամ ի վերայ այսր գաւանման և կրօնից՝ պատարագել Աստուծոյ, ւկանօք և մահու։

Իսկ նորա ըստ նախկի գազանասրտութեանն մռնչելով՝ ի դուրս ելեալ ապարանիցն, սաստկապէս և յոլովակի գան հարկանել հրամայէր, մինչ թալանալ նմա ի սաստիկ հարուածոցն։ Եւ բարձեալ զնա իբրեւ զմեռեալ անչունչ՝ ի տուն բանտին մուծանէին, պնդեալ զոտս նորա ի կոճեղս փայտեայ, և չղթայիւք երկաթեայ զձեռս և զպարանոցս սեղմոյն։ Եւ այսպիսեօք անըմբերելի կտտանօք ի ներքս տանելով և արտաքս հանելով, օր ըստ օրէ անդադրմ գանիւք, և զմկանունեան պարանոցաւն ի խոնարհ կորացուցանելով պրկէին սաստկապէս։ Եւ այնպիսի չարալուկ հնարիւք զգլուխ երանելոյն ընդ ստորոտ խարազն զգեստուս նորա անցուցեալ, յեռուստ կուսէ[1] մինչ ի քակտումն յօդից և խազղակաց չրջանակի պարանոցին։ Եւ յայնմանէ ի միւս չրջեալ հնարս տանջանաց՝ ծակէին գունչս սրբոյն որպէս ուղտու, և չրօշակ պարանաւ[2] ի ներքս անցուցեալ՝ քարչէին ընդ հրապարակն ամենայն՝ գանիւ ուժգնակի և ձաղանօք յոքնակի։ Եւ այսոքիւք երկարաձգեալ երանելին, և այլ եւս հնարից պատրաստութեամբք՝ մինչեւ յաւուրս երից ամսոց բռնադակելոյ։ Եւ ընդ այսոսիկ զդաժանագոյնն ի միասին խառնեալ նիւթս, աղ և բորակ, քացախ

1. Գլուխը ծակելով իր մազերէն հագուստին փեչէն կ'անցուցնեն բռնութեամբ, այնպէս որ վզին եռեւի սակրները կու խածին։
2. Ինչպէս ուղտերու կ'ընեն, անոր քիթն օղակ անցուցած՝ չուանով քաշելով տանէին հրապարակին մէջ։

և մանանեխ, ընդ ընկուզս նորա յորսայեալ արկանէին, թերեւս և այնու ցեառն իւրում և հանգունակից նահատակացն հաւատարեսցի հանդիսից: Չկնի որոյ քարող ամբարչացն ազաղակէր, թէ, որ զհայրենին յուրատ լինի կրօնս, զայսոսիկ կըրեսցէ անցս դժնեայս:

Աբտաքս հանեալ յատենէն՝ մահու վճռաւ արիւնարբու Դեղմաստանացն[1] մատներ, որպէս զի զարհուրեալ հերքեսցի ի հաստատուն խորհրդոց: Որոց արիւնախանձ գազանութեամբ ի վերայ յարձակեալ, զճեռանէ աստի անտի առեալ ի տեղի կատարմանն փութային: Եւ նորա զոր միչտն առեալ էր ի բերան, և անդ զնոյն կրթէր բան. Վասն քո մեռանիմ, Քրիստոս Աստուած իմ, հանդիսադիր զօրագլուխս առաքինեաց. քանզի և դու վասն իմ պատուականդ հեղեր զարիւն, ընդ հատարական և գիս ազատել ի չար ծառայութենէդ չարասիրին: Իսկ գահճացն անողորմից՝ գանալից ի գնալն գնա արագեալ՝ քարամբք և փայտիւ և լուտական ձեռակոծմամբ. և նա ըստ առաջնոյ նախամարտին[2] անյիշելութիւն ի քաւչապետէն հայցէր ամբարչացն: Բայց հարազատն իւր ըստ մարմնոյ[3] առ ոտսն թաւալելով՝ զյանձնառութիւն ազերսէր նմա յայնմ նուագի, թերեւս խափանեսցի այնր ժամու հատանալն վճիռ: Այլ որ խոժոռեալ իսկապէսն հանդիսաւոր՝ սաստելով, Հեռի յինէն երթիցես, և մի խոչ ընդ ոտս ելանիցես բարւոյ առաջարկութեանս. քանզի տէրունականն սոսկալի է դատաւճիռ ուրացողաց դնա ի մահկանացուաց ատենի: Իսկ գազանասիրտ գահճացն սուղ ինչ հեռացուցեալ զնա յարքայօրէն բանակալէնն և յամակակոյտ

1. Պարսից Տիլաւմ գաւառի մարդիկ:
2. Ս. Առեփաննոսի Նախավկային նման կ'ազօթէր իր չարչարողաց համար:
3. Իր հարազատ եղբայրն գալով կ'ազաչէ, որ անգամ մի հաւանի ամիրային կամաց և ազատի:

վայրացն, առանց հարցափորձի կամ երկրորդելոյ մեծին հրամայողի՝ մի ոմն ի նոցանէ պատառէր սուսերաւ զորովայն նորա և հեղոյր յերկիր զիրոտի նորա, մինչեւ թաւալգլոր խաղալ նմա յաբեան իւրում: Նմանապէս և այլքն չուրջանակի խոցոտէին սուսերաւ, և կէսք քարամբք զսուրբն կոչկոճէին. ընդ նմին և զգլուխն հատեալ՝ մորթէին յոսկերաց անտի զմորթն, և անդէն զնչխարս ոսկերացն թողուին բովանդակ իսկ անդամօք մարմնոյն: Եւ նորա ի ձեռս տուողին զմաքուրն ատանդեալ ոգի, ըստ զրեցելոյն Իմաստութեան. և եղբօրն արգահատողի դիպելով ի տեղւոջն՝ ի նմին վայրի յաւազին տեղւոջ թաղեալ զմարմին երանելոյն, և խուսէր ի վայրացն:

Սակայն նուիրապետն[1] այնր անուշահոտ պատարագի՝ ոչ իրաւացի վարկաւ սակաւուց եւեթ տեղեկանալ մարտի նորա, և զանխուլ ի բազմութենէն լինել նշանաւոր ոչխարի հօտի իւրոյ. այնր աղագաւ որատման արհաւրօք և սաստկագին չարժմամբ զարհուրեցուցանէր զբոլոր բանակն ի նմին դիչերի: Եւ երեւէր յանկարծօրէն բանալ հաստատութեան վերնոյ, լուսոյ յղփացուն[2] և պանծալւոյ՝ զօրէն կամարաձեւ ծիածանի՝ կացեալ ժամս հարուստս ի վերայ տեղւոյ նահատակութեան սրբոյ պատանւոյն:

Ի վաղնջուց երաչտացեալ երկիրն Այրարատոյ՝ ի ցօղոյ արեան նախագունիցն մարտիրոսաց՝ իւրով անագանաղոս ցօղաւորեալ արեամբ՝ զովացուցանէր վերատին. յորմէ և ինքն ընձիւղեցաւ ուղէչ[3] պտղաշատ, կարմրագունի նմանեալ խնծորոյ՝ ըստ վկա-

1. Քրիստոս, այս գոհը կամ պատարագը ընդունողն:
2. Շատ առատ լոյս ծագեր է նահատակին վրայ:
3. Այս նոր վկայն այլ Այրարատոյ երկրէն բուսաւ, և իր արեամբ նորէն ցօղեց զայն՝ որ ցամքեր էր իր հին մարտիրոսաց արիւնէն:

յական արեանն ներկուածոյ. թէպէտ և ի փուչս բուսեալ անտառախիտ ամբարշտացն արմատոց, ոչ ինչ նուազ գովեստի արժանաւորի քաջաբերութիւն անդաստանին Աւրբատայ: Քանզի յոլովս ծանեաք յայսպիսեաց սերմնացանութեանց փոփոխեալս յօրակութեանցն բնաւորելոց՝ յայլս, յայսմիկ վիճակի, ի փշոց խաղող և ի տատասկէ թուզ. թէպէտ և յանդգնութիւն է ընդդիմաբանել սէրուեհանն հրամանի[1], այլ զի վասն ընդդիմացող կամակորացն պայն հրամայէ՝ անսուտ իսկ է վճիռն:

ՄԼԱ.

ՀԱՂԲԱՏԱՑ ՎԱՆՔ· ԲԱՐՍԵՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՂԻՈՑՆ ԵՒ ԲՈԼՈՐ ՎՐԱՀԱՑՈՑ[2] ԵՒ ԱՅԼ ԳԻՏՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՔ Ի ՎԵՐՋՍ ԺԲ ԴԱՐՈՒ

Որ գթերութիւն եկեզեցւոյ միշտ լրացուցանէ Հոգին Սուրբ՝ իւրով ամենապատիկ չնորհօքն, նմա փառք ընդ Հօր և ընդ Որդւոյ միակամութեանն, այժմ և միշտ և յաւիտեանս:

Ցոյժ ըղձիւ և յաւէտ տարփմամբ անձկոյ՝ ի վաղուց ժամանակաց տոչորեալ՝ այսմ աստուածատիրաչ վարդապետութեան սիրով Սրբոյն Բարսղի, սուրբ ուխտս Հաղբատայ, քանզի թէ յանփոյթ առնելոյ առաջնոցն և թէ ի չպատահելոյ ժամու

1. Քրիստոս ըսաւ, թէ փուչէն խաղող կամ թուզ չի քաղուիր, սակայն այս տեղ կ'ըսէ պատմիչն, յանդգնօրէն կերպով մի կըրնամ ըսել՝ թէ հակառակն եղաւ, փուչէն պտուղ բերաւ· վասն զի Քրիստոսի ըսածրն՝ յամառելով չուղղուներուն համար էր:

2. Այդ վանաց մէջ գրուած և ի գրատան գրուած Մեծին Ս. Բարսղի ճառից Յիշատակարանն է:

դիպաւորի, ոչ գրեալ և ոչ ստացեալ ումեք զայս գիրս, և աննախարարամ գանձարանս այսմ ուխտի՝ ոչ ունէր զսա[1]. որոյ թերութիւն զիւրն խնդրէր լրումն, որ պահիւր համանուանս իւրոյ Տեառն Բարսղի արշիեպիսկոպոսի աստուածաբնակ այսմ սրբարանի. որ ըստ կանխանկատ գիտութեան վերնոյ դիտմանն՝ եկեալ ի գաւառէն Խալեճոյ, եղեւ ըստ յաջորդելոյ Հոգւոյն Աստուծոյ՝ վերատեսուչ համայն քրիստոնէիցն Հայոց, որ ընդ գաւազանաւ թագաւորութեանս վրաց, յաջորդեալ զաթոռ Տեառն Գիորգայ՝ ամենայնիւ առաւելեալ քան զառաջինան ի փոյթ չինուածեան սրբոյ ուխտիս: Քանզի թէպէտ և էր ի հարց և ի հասուց ազատ յազատաց և մեծազգի ի մեծազգեաց և փառաւոր ի փառաւորաց, եւս առաւել զոյր արժանաւոր մեծի գովութեան՝ վասն հոգւոյ անարատութեան և վարուց մաքրութեան. որով և կոչեցաւ իսկ յայս յաթոռ, ըստ վկայելոյ թագաւորիս և համայն ազատաց այլ և ճգնաւորական գասու կրօնաւորաց, և յամենեցունց եղեւ պատուեալ ըստ արժանւոյ: Եւս առաւել ի մեծ Աստիր սպասալարէն յիշաւնեի և ի զուգակից նորին ի բարեսէր թագուհւոյն Ռոշտոգանայ, որ էր յազգէ Բագրատունեացն մերոց կոթուսեալ ազգիս թագաւորաց, որ ցուցանէր զգութ հարց իւրոց և նորոգէր զիւրոյ նախնեացն սէր առ ամենեսին, առ հեռաւոր և մերձաւոր ուխտս սուրբըս: Քանզի ամենայն տեղի որ ի նախնեացն սորա չինեալ էին և նուազեալ յեռոյ, ի սորա աւուրս պայծառանային և նորոգէին վերստին. եթէ ի մերում գաւառիս և եթէ ի գաւառն Աղձոյ սեփական քաղաքին իւրեանց, և ի նոյն իսկ յԱնի, և եթէ ի գաւառն Դըշևայ: Քանզի յամենայն տեղի իշխա-

1. Շատ վկայութիւններ կան Հաղբատայ վանաց հարըստութեան ձեռագրաց, յորոց ոչ սակաւք գաւուին հիմայ յիջմիածին և ուրիշ կողմեր. այս Ս. Բարսղի ճառերն այլ ի մեր քով:

նութիւն և երկիւղն մեծի սպասալարին Իւանէի՝ առն սորա[1] հասանէր. և սա չանայր զի դիւր նախնեացն չինեալ եկեղեցիսն պայծառացուցանէ: Որ և կամեցաւ զգերեզմանս առաջնոց թագաւորացն՝ որ ի սուրբ ուխտիս, առաւել պատուել և պայծառացուցանել. վասն որոյ եղ զսուրբ ուխտս ի ձեռս Տեառնս Բարսղի. և սա ելից ընդ այլ թերութիւնսն բազմաց՝ և զայսմ գրոց պակասութիւնն և հաստատեաց ի սուրբ տեղւոջս, զի մի ոք իշխեսցէ հեռացուցանել ի սուրբ ուխտէս՝ թշնամութեամբ կամ ագահութեամբ. ապա թէ ոք յանդգնեսցի՝ տաթագրեսցի ինքն յորդեգրութենէն Աստուծոյ՝ զօրութեամբ սրբոյ Նշանիս[2]. իսկ թէ ըստ ժամանակի բերմանց գոյանայցէ յումեքէ կամ ի ձեռաց աւարառուաց գերեսցի, և ոք զսա գարձուսցէ ի տէղի իւր, նորոգեսցէ Աստուած զյիշատակ նորա և զրեսցէ զանուն նորա ի կենաց գրոցն:

Գրեցաւ գիրքս ի թուականիս Հայոց նորումս[3] ՉՔ (89–1172), իսկ Հռոմոց ՅՂԳ (393), ի հայրապետութեան Տեառն Ներսիսի Հայոց Կաթողիկոսի[4], և ի թագաւորութենէն Վրաց և այլ բազում ազգաց՝ Գէորգեայ՝ որդւոյ Թեմուրէի:

Գրեցաւ ձեռամբ Յարգահ, նուաստ գրչի և ախմարի և յեսին աշակերտի եկեղեցւոյ սրբոյ ուխտիս: Ցորոց ամենեցունց հայցեմ չլինել մեզադիր ագիտութեան իմոյ, և յիշատակի թերեւս արժանի համարել զիս. և հասարակաց փրկիչն Քրիստոս յիշողացդ և զկնի յապագայ յիշելոցս՝ ողորմեսցի յիւրում միւսանգամ գալստեանն. ամէն: Կազմե-

1. Ասաւուգանայ այրիկն Իւանէ ապասալար՝ թուի Ծանօթագոյն Իւանէ Ախթաբէկի հօրեղբայր:
2. Մեծ եկեղեցին Հաղբատայ կոչուի Ս. Նշան:
3. Շատ անգամ յիշուած Սարկաւագայ նոր թուականն է: Հռոմոց կամ Հռովմայեցւոց թուականն այլ Հինդհարիւրեակի (532 տարիներու) չրջանակն է:
4. Վերջընթեր տարի կենաց Ներսիսի Շնորհալւոյ:

ցաւ ձեռամբ Յովսեփայ վարդապետի և եղաւ յարկեղ Սրբոյ Նշանիս, զոր կարապետ և կազմիչս ամենի[1] նորոգեսցէ յիւրում գալստեանն՝ ընդ համապատուականացս[2] իւրոց. ամէն:

Այլ Յիշատակարան

Ի թուականութեանս Հայոց ՈՒԾԴ (վեց հարիւր քառասուն և չորից, 1195), յանկ եղեալ կատարեցաւ աստուածարեալ իմաստութիւն սրբոյ Հօրն Եփրեմի, մեկնութիւն Աւետարանի Համաարարքառ[3]. եւս և ձառք հոգեպատումք, զոր չարակարգեալ ի չահ օգտութեան մանգանց եկեղեցւոյ: Ընդ որս հայեցեալ ի բազմաթեր բարեացն ամբարեալ ի սմա պատուղս, և որպէս աւանդ հայրենի յազգս որդոյ յաւէտապահեստ արարեալ, գանձեալ և եղեալ սուրբ և արդիւնակատար վարդապետ անի՝ Գևոնիկ, ժառանգաւոր տանս Հաղբատայ, և ի լուսաւորութիւն հանուրց աշխարհի[4]:

Արդ, ես խեղճատուր այր անի անտհմիկ թափառական և աղքատ, սուտ անուն արեղայ, դիմեալ ի հրահանգս վարժից առ ոտս իմաստուն և սրբասնեալ վարդապետացդ, գտեալ ապա իմ զայս աստուածատուր գանձարանս՝ առ մեծարգի և իմաստուն վար-


1. Բրիստոս և իր Սուրբ Խաչն:
2. Յիշեալ Յովսէփ վարդապետի պատուակիցքն:
3. Որոյ օրինակութեան Յիշատակարանն է Յօդուածս:
4. Սովորաբար Սանահնեցի կոչուի սա, ԺԱ. դարու հեղինակ. կրօնական խնդրոց վրայ գրուածներ ունի աչ ու ձախ համազմամբ: Ինքն՝ Ս. Եփրեմի Աւետարանաց հատուածաստութեան գործոյն օրինակ մի ճարեր է Հաղբատայ վանաց գրանոցին, ուսկից ընդօրինակեր է խաչատուր. այս օրինակս հիմայ մեր քով է:

դապետի իմոյ Դաւթի[1], և խնդրեալ չարագրեցի[2] անարուեստ և անվարժ գրով. զի սէր փափագանացս ստիպեալ հարկեցոյց զիս, և կարի առաւել յորդորեաց. մանաւանդ համբաւ իմաստիցն Եփրեմի, որ ոչ միայն ինձ այլ և ամենեցուն է ցանկալի առաջնոցն և վերջնոց և որ այժմ են: Իսկ երէկ կորովութեամբ և...[3] ուխտեամբ մտաց և ծաղկոց բուրաստան... չնչմամբ Հոգւոյն որպէս անօսր և քաղցր... օդով հովահարեալ զովանան և պարզ (արին քիմք) նոցա. և որ ծանծաղութեամբ և վերվեր (թեթեւս)մտութեամբ մտանէ՝ անամահակ եւ լանէ[4]... ոչ այլ ուրեք այլ ինքեան զինքն:

Բայց (գրեցաւ) գիրքս այս ի գաւառիս Ջորոյգետ, ի վանքս Հաղբատ, ընդ հովանեաւ սուրբ և կեն(դանարար) մօրս լուսոյ կաթուղիկէի և ամենայն որ ի նմա սուրբք իցեն. յեպիսկոպոսութեան տեառն Յովհաննիսի, և ի մահուան Տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի[5], ի վարդապետութեանն Դաւթի, Պետրոսի, Իգնատիոսի. և զկնի մահուան վարդանայ վարդապետի[6]. յորում ամի գերեալ ի վրայ գաւառն կարնոյ և վանատրայն՝ յաւերումն յառ և ի գերութիւն մատնեցան: Յայսմ ժամանակի ես խաչատուրս ակարացեալ և խելայեղեալ՝[7] գրեցի զգիրս զայս խաչոր և անյարմար յանպիտան

1. Այդ ժամանակ, ժի դարու կիսաւմ, նշանաւոր Դաւիթ գիտնականք էին Քորայրեցին և Գանձակեցի. ուրիշ մի թուի այս տեղ յիշուածն:
2. Գրեցի, օրինակեցի ըսել կ'ուզէ:
3. Կիսանիշ տեղուանքն մնացած են ձեռագրին մէջ:
4. Անօգուտ աշխատանօք տանջուած կամ սովամահ:
5. Գրիգոր Դ, Տղայն:
6. Կիրակոս պատմիչն այլ (Գլ. Ե) մեկ տեղ յիշէ այն ժամանակի երեւելի վարդապետաց մէջ՝ զԿիպնաեցին, Վարդան և Դաւիթ և Դռնեցի Գրիգոր մի:
7. Թուի թէ կարնոյ վանքերէն էր խաչատուր և տագնապով եկած ի Հաղբատ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԿՈՂՄԱՆՑ ԳՈՒԳԱՐԱՑ ԵՒ ԱՐՑԱԽՈՑ



1. Ուրիշ կնոջմէ, ոչ ի թամարայ:
2. Գայր Զաքարիա և Իւանէի մեծ գօրավարաց:
3. Կին Հասանայ Թաչենցոյ, որ գրեթէ ինքնագլուխ իշխանուհիւամբ տիրեր այն գաւառին:

նիւթի[1]. և արդ յերեսս անկեալ ազաչեմ չլինել մեղադիր, այլ յիշել սրտի մտօք և ցաւակցաբար դիս և զվարդապետան իմ Դաւիթ՝ որ զօրինակս շնորհեաց, և զծնողս իմ և զեղբարս. և որ յիշէ յիշեսցի ի Քրիստոս, հանդերձ Հարբ և Սուրբ Հոգւովն, որում փառք յաւիտեանս:

Ով եղբայր՝ որ կարդաս, գիտեմ որ մեղադրես, բայց աւատաս ու տեսանես որ... այս (չափս) կարացի, թէ դու լաւ ես՝ նիստ և այլ (գրեա), բայց վասն քո հոգոյդ ինձ մի մեղադրես:

... Աւարտեցան ճառք աւետարանականք խորհրդաւորք Աբբա Եփրեմի, ի փառս Ամենասրբոյ Երրորդութեանն, յաւիտեան. ամէն: Զարգիւնաւատար սուրբ և ամեներջանիկ վարդապետան Վարդան, գաստուածատէր հոգին[2], ի մանգութենէ մինչեւ յաւագոյթ ի Քրիստոս միացեալ, զՀոգոյ Սրբոյ բնակարանն, զլցեալն ամենայն տեսակօք բարութեանց, զզարդարեալն ամենայն առաքինութեամբ, զպսակեալն տնանկաց, զվերակացուն օտարաց, զսիրողն աղքատաց, զբժիշկն հոգոց, զհայրն որբոց, զպարծանան քրիստոնէից, զլուսաւորիչ եկեղեցոյ, զհովիւն բանաւոր ոչխարաց, զհոգին օրհնեալ, զարժանին Աստուծոյ, զգերազանցեալ քան զզովութիւն, զփոխեալն ի կենաց և զհանգուցեալն ի Քրիստոս. և զԳրիգոր վարդապետ՝ նորին հաւատաւոր և զխաչատառ որբացեալ աշակերտ՝ յիշեսջիք յաղօթս, ով ընթերցողք, սուրբ մանկունք նոր Սիոնի և որդիք վերինն Երուսաղէմի, և ուսումնականք և աշակերտեալք բանին Աստուծոյ:

1. Թղթեայ է վերջն, հիմայ 700 և աւելի տարի հնութեամբ:

2. Փափագելի էր որ մականունն այլ դրած ըլլար, որ այնքան վարդանաց մէջ այս մեծապէս գովաւածն որաշուեր. մօտ ժամանակին յիշուի գիտնական Վարդան մի, որ գնացեր էր առ Ս. Ներսէս Շնորհալի, և

ՄՂԲ

ԿԱԹՈՂԻԿՈՍՔ ԵՒ ԴԻՊՔ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻՆ Ի ՄԻՋ ԺԲ ԴԱՐՈՒ

(ՄԻՒԹԱՐ ԳՈՇ)

Համարեցաք և զայս եւս հարկաւոր լինել[1]*, զի զշար կարգի հայրապետացն դիցուք զԱղուանից. զի և յայնոսիկ յամենահասն՝ զոսա որ այժմ ունին՝ յարմարեսցուք. մի, ըստ այդմ գրեսցուք պատճառի. երկրորդ, զի թէ ոք յօժարեսցի գրել պատմութիւն զկնի գրեցելումն պատմութեանն Մովսէսի Դասխուրանեցւոյ*[2] *որ զբովանդակ պատմէ պատճառս Աղուանից, դիւրին լիցի յայսմանէ զշար հայրապետացն առնուլ. զի ոչ զամենեցուն անուն ի նոցայն գոցէ պատմութեան, բայց զայնոցիկ զոր ոչ գրեաց. զի յայն ժամանակէ մինչեւ ցայժմ՝ ոչ ոք գրեաց. և թէ պատահի ոք՝ յոյժ հարկաւոր է: Եւ արդ դիցուք զկարգն.*

Շարք հայրապետացն Աղուանից որք կացին զկնի Տճառն Եղիշայի որ եկն յԵրուսաղէմէ[3]*:*

Ա. Սուրբն Շուշիքազիշոյ[4].
Բ. Մատթէ.

Ս. Գրիգորի նեւսացւոյ գրոց վարդ[ա]պետութիւն առեր էր իրմէ:

1. Հեղինակն իր Պատմութենագրոց վերջաբան յիշատակարանին կցած է այս գրուածս. տես 297 յօդուածը:

2. Տես ի կարգի Պատմչաց Հայոց զՄովսէս Կաղանկատուացւոյ:

3. Տես զծանօթութիւնն 47 երեսի գրոցս:

4. Սովորաբար Հ գրով գրուի, Շուշիանիկոյ. անունն յայտնէ որ ազգաւ արամացի կամ ասորի էր:

Գ. Սահակ.
Դ. Կարէն.
Ե. Պանտ.

Զ. Վազար. *սա չինեաց զվազարապատ գտեալ ի Բեղամէջս, և զոր եկեղեցին Պանտալէոնիի*[1]*, և չինէ աշաւոր տեսլեամբ: Եւ ի Սրբոյն Եղիշայէ մինչեւ ցՍուրբն Գրիգոր ամք 3 (300). և ապա խնդրեցին Աղուանք ի Հայոց՝ կաթողիկոս զՍուրբն Գրիգորիս՝ ի հնգետասան ամի ձեռնադրեալ ի Հայրապետութիւն, և ի բարբարոսաց վախճան մահու ընկալաւ. հոռոմ թվ. ՃՈ (101) էր*[2]*: Եւ այսոքիկ են որք ի Զոլ*[3] *հայրապետք նստան.*

Զաքարէա.
Դաւիթ.
Սուրբն Յոհան.
Երեմեայ.

Իսկ յամի յորում Հայ թուականն սկիզբն առնոյր՝ փախեցին զաթոռ կաթողիկոսութեանն ի Պարտաւ[4]*, և նստուցին կաթողիկոս զՏէր Աբրա, որ կալաւ ամս ԻԹ: Եւ նախնեացն այսպիսի իմն սովորութիւն էր, զօրինակ պատրիարգի*[5] *թղթոյն յաղորդէին այսպէս. Աղուանից, Լփնայ և Զոլայ կաթողիկոսք:*

1. Շարադրութիւնն չիմաթ է. Աղուանից պատմիչն (գ, ծԳ) Ս. Գրիգորիսի համար կ'ըսէ, թէ, Ս. Պանտալէոնի (Ժշկին նահատակելոյ ի Նիկոմիդիա) նըշխարքը բերեր և դրեր էր ի Յոի բերդաքաղաքն, ուր հրաշքով գտուեցան ի վերջ ե գարու (Նոյն, Գլ. ծԹ):

2. Հռոմայ չինութեան հաշար տարիքն վերջ ակսեալ նոր թուականն, որոյ 1017 տարին կ'ըլլայ 551 Քրիստոսին:

3. Զոլ կամ Ձոր՝ Դարբանատայ կամ Հոնաց գրան մօտ քաղաք մ'էր:

4. Շատ անգամ յիշուած մայրաքաղաք Աղուանից, մինչեւ հիմայ ծանօթ է Պերտէ գեղի անուամբ, որոյ քով են հին քաղքին աւերակներն:

5. Նամակաց երեսագիրն, հասցէն:

Տէր Վիրոյ ամս ԼԳ, այր սուրբ և պայծառաշեալ առաքինութեամբ. հայ թվ. ՀԵ (75-626):
Տէր Զաքարիա այր սուրբ և ամբիծ, ամս ԺԷ.
Տէր Յոհան ամս ԻԵ.
Տէր Ուխտանէս, ամս ԲԺ.
Տէր Եղիազար ամս Զ. սա յԱստուծոյ ընտրեցաւ ի նախագահութիւն. Հայ թուականն ձԼԷ. (137=688) էր[1]:
Տէր Ներսէս ամս ԺԵ. և էր նա հեռաւեալ Քաղկեդոնի:
Տէր Սիմէոնն ամ մի և կէս.
Տէր Միքայէլ ամս ԼԵ. հայ թուականն ճՂ. (190=741).
Տէր Աշնաստաս ամս Գ.
Տէր Յուսէփ ամս ԺԵ.
Տէր Դաւիթ ամս Գ.
Միւս Տէր Դաւիթ ամս Թ. հայ թվ. ՄԻԵ.
Տէր Մատթէ ամ մի և կէս.
Տէր Մովսէս ամ մի և կէս.
Տէր ԱՀարոն ամս Բ.
Տէր Սողոմոն կէս ամ.
Տէր Թէոդորոս ամս Գ. հայ թ. ՄԼԳ (234=785):
Տէր Սողոմոն ամս ԺԱ.
Տէր Յովհաննէս ամս ԻԵ.
Տէր Մովսէս կէս ամ.
Տէր Դաւիթ ամս ԻՂ.
Տէր Յովսէփ ամս ԻԲ. հայ թվ. ՅԻԷ (327=878):
Տէր Յամուէլ ամս ԺԲ.
Տէր Յոհան ամս Ը.
Տէր Սիմէոն ամս ԻԱ.
Տէր Դաւիթ ամս ԼԵ. թու. ՅՀՂ (378=929):
Տէր Սահակ ամս ԻԵ.

1. Կաթողիկոսաց աթոռակալութեան տարիներու դումարին և Հայ թուականին զուգութեան՝ կըրնան տարբերութիւնք գտուիլ: Յատուկ անուանց ուղիղն կամ ծուռն այլ ըստ հեղինակին գրածին է:

Տէր Գագիկ ամս Ժ.
Տէր Դաւիթ ամս Զ.
Տէր Պետրոս ամս ԺԲ: Սորա ի կենդանութեանն հրաժարեալ յաթոռոյն՝ յաջորդէ յաթոռ իւր զՏէր Մովսէս, վանական փառիսոյ[1]: Իսկ զկնի Մովսիսի կալաւ զաթոռ հայրապետութեան այրն Աստուծոյ Տէր Մարկոս. և յետ նորա Տէր Յովսէփ. և ապա միւս Տէր Մարկոս. և զկնի նորա Տէր Ստեփաննոս. և ապա Տէր Յովհաննէս. և ապա Տէր Ստեփաննոս կոչեցաւ ի կաթողիկոսութիւն ի տիս պատանեկութեան, որ և կալաւ զաշխարհն հայրապետութեան ամ մի և կէս: Այսպէս յետ վախճանելոյ նորա՝ զամս ութ առանց հայրապետի եկաց նահանգս Աղուանից, յորում և ոչ գոյր ի սմա եպիսկոպոս. մինչ զի զնուիրեալսն ի քահանայութիւն՝ յայլ գաւառ տանէին առ ձեռնադրութիւն. և այնքան սպառեցաւ իշդն օծութեան՝ մինչ զի լոկով ջրով մկրտէին զերեխայսն, և զմանս սոսկ ձիթով օծանէին: Իսկ յետ անցանելոյ ութ ամացն՝ ի ՇՀՂ (588=1139) թուական. Հայոց (եկն) ի Հայոց Մահակ աստուածընկալ եպիսկոպոս ի դրանէ սրբաբաղան հայրապետին Տեառն Գրիգորիսի[2] Հայոց կաթողիկոսի. որ ըստ հրամանի նորին և առաքմանն՝ եկեալ ի գաւառն Աղուանից, ի խնդրոյ և ի ձեռնարկութենէ Գրիգորոյ վարդապետի աշխարհիս մերոյ, որ էր աշակերտ Դաւթի փառաւոր և մեծահռչակ վարդապետի: Այրդ ի գալ Տէր Սահակայ յաշխարհս Աղուանից, ժողովէր զամենեսեան առ հաստարակ ի տուն թագաւորին Աբասայ Բագրատունւոյ, որդւոյ Կիւրիկեի (Բ)[3] արքայի. որ

1. Նշանաւոր վանք Ուտի նահանգի Գարգման գաւառի մէջ, Սեւանայ ծովուն արեւելեան հիւսիսային կողմն:
2. Եղբայրն և նախորդ Ս. Ներսիսի Շնորհալւոյ:
3. Հայոց և Աղուանից սահմանակցութեան միջոց ամաւր բերդերու մէջ ապահովուած տիրէին այս փո-

և ժողովեալ ամենեցուն առաջի նորա ի բերդն որ կոչի Տաւուշ[1], ուր և ժողովեալ հարանց սրբոց և եպիսկոպոսաց. թագաւորն Դաւիթ եղբայր Աբասայ թագաւորի. Տէր Ստեփաննոս որդի Կիւրիկէի՝ նոցունց եղբայր. Սարգիս վարդապետ աշակերտ Դաւթի վարդապետի. Գրիգոր արհեպիսկոպոս Գանձակայ. Յահակ եպիսկոպոս աշակերտ Սարգսի վարդապետի. Ստեփաննոս եպիսկոպոս Կողբ[2] գաւառին և քաղաքին Շահրորոյ[3]. Սարգիս եպիսկոպոս Շահիրամաձորոյ. Սահակ եպիսկոպոս կաթողիկոս Հայոց Սահակ գրան եպիսկոպոս Հայոց կաթողիկոսի, և Սարգիս ձգնազգեաց և երանելի վարդապետ: Եւ այսպէս մեծաւ հանդիսիւ և հոչակաւոր կոչմամբ ձեռնադրեցին կաթողիկոս Աղուանից զԳրիգորիս հօրեղբօրորդի Տեառն Ստեփանոսի Աղուանից կաթողիկոսի: Եւ էր Գրիգորիս յորժամ ձեռնադրեցաւն և նա ի տիս պատանեկութեան, գոլով որդի Գեորգայ և եղբօրորդի Կարնկայ թոռն կարապետին: Իսկ սր ժողովելոցն ի միասին էր ոտն պենտակոստէին և Գալուստ Հոգւոյն Սբրոյ, յամսեանն մրէ:

Եւ ապա յետ այսորիկ չուեցին ժողովեալքն յիւրաքանչիւր տեղի իւր. ապա գարձեալ ի ոտնի վարդապետին ժողովեալ ամենեցուն ի միասին ի բերդն՝ որ ասի կաթողիկոսաց–քար, նոյնք վերստացեալ եպիսկոպոսունք և վարդապետք և հարք սուրբք և այլ վարդապետք քան զառաջինն յոլովագոյն և քահանայք. յորում աւուր և ձեռնադրեցին երկու եւս այլ եպիսկոպոս և օրհնեցին զեղն սծութեան յոլովագոյն, բազում և առատ ընձեռմամբ բաշխեցին ընդ ամենայն տեղիս. և այսպէս խրախութիւն հոգեւորական կատարէին մինչեւ ցաւուրս Սրբոյ Խաչին, զուարճացեալք ի միասին ի փառս Աստուծոյ[1]...:

Իսկ շահապ քաղաքին Գանձակայ՝ որ կարգեալ էր ծառայ մի նորա անուն Խոհխոռոտի, սորա ապստամբեալ ի սուլտանէն՝ յանդգնէր և ձեռնարկէր համարձակութեամբ արտաքոյ իշխանութեան սահմանաց իւրոց. և ապա ելեալ զօրօք բազմօք ի Գանձակայ՝ եկն ի լեռնակողմ Հադառեայ, և հասեալ ի բերդն որ կոչի կաթողիկոսի քար, և որ մերձն է առ նմին՝ որ անուանի կարապետաց քար. և ի բազում աւուրս պաշարեալ զերկոսին և չնեւ մեծաւ առեալ՝ աւերեաց զերկոսին քակմամբ և հրկիզութեամբ. և եկեղեցիք սրբութեան կոխան եղեն անօրինացն, մինչ զի խափան չնչել և աւերել կաթողիկոսի – քարին ի ՇՂԱ (1142) թվակ. Հայոց. և ապա այսպէս վարելով ապստամբութեամբ աւուրս լինչ: Իսկ զկնի այնորիկ եկն դարձեալ ի

1. Ահկե վերջը մինչեւ մրս... պատմէ զվաճն Գանձակայ, զոր տես ի Յօդուածն 282:

քրիկ թագաւորք, և իրենց պայազատքն ԺԱ–ԺԳ դարերում. Կիւրիկէն Աշոտ Ողորմածի թոռան որդի է: Յօդուածիս վերջը, յերես 392, դրուած ազգացուցակին (ոչ ամբողջ) յայտնէ այս թագաւորաց նախորդ և յաջորդ սերունդքն՝ ինչուան տան ազգ՝ յԱշոտայ Ողորմածէ սկսեալ. որոնք սր թուականին որ յիշուած են՝ զայն ցուցընեն նշանակուած թիւքն:

1. Ինչուան հիմայ ծանօթ է Թաւուս կամ Թովուզ կոչմամբ գեղ և գետ:

2. Հին Արցախ նահանգի գաւառ մի:

3. Երբեմն մեծ քաղաք, հիմայ աւերակ. չատ հռչակեալ էր Միհր Շահրորոյ կուչուած զարմանալի աշտարակ մի, բարձր իբր 200 սաժ, կարմիր աղիւսով և կանաչ յախճապակիօք չինուած, մի մահ ուրիանկիւնի, միւն բոլորակ, չինողն անյայտ, զոր սմանք ինչուան Մեծն Ալեքսանդր և Պամպէոս Համարած են, սմանք զՀայս կամ զՊարսիկս. վրան սոնց գրերը տեսնելով Ջալալեանն՝ Գէորգայ վրաց թագաւորի և Լիպարտի անուններըը կարդացեր է: Այս հետաքննութիւնս եւ բոպացի տեսողք այլ չէին լուծած, երբ Արարատայ մեծ ժամն 1840ին՝ այս գարաւոր կանգուն անծանօթից յիշատակը՝ գետնի հաւասար կործանեց:

Պարսից զօրագլուխ մի անուն Զաւլի, որ ունէր զիշխանութիւն զօրաց ի դուռն Գանձակայ, յորում և ապստամբեալ էր Խուհտուղտի. և պաշարեալ զքաղաքն ամիս մի՝ առնոյր զնա. և կալեալ զԽուհտուղտի՝ փորեաց գաչս նորա, և յինքն նուաճեաց զամենեսին, ի ՇՂԲ թուականին (1142–3)։

Ի սմին ամի մեռաւ Տէր Ստեփաննոս եպիսկոպոս որդի Կիւրիկէի թագաւորի՝ ի բերդին որ կոչի Խալնձաքար։ Իսկ Զաւլեայ ամբարտաւանեալ յանձն իւր՝ դիմեաց ի կողմանս Խաչենոյ և էառ զամենայն ամրոցս նոցա, քակեաց զեկեղեցիսն և այրեաց զվանորեայսն, կտաւրեաց զազատսն և գերեաց զզօրականսն, և պէսպէս խոպան մաշեաց զամենեսեան առ հասարակ ի սուր և ի գերութիւն. և ապա ինքն դարձեալ երթայր յաշխարհն Պարսից։ Այս ի միւսում ամին դարձեալ գայր ի զաւառս Աւանայ, և փութանակի երթայր ի բերդն Տաւուշ, յորում ամրացեալ էր թագաւորն Աբաս. և բազում չանիւ ընդերկար պաշարեալ զնա՝ ապա առնոյր զբերդն. իսկ Աբաս անցեալ գնաց առ թագաւորն Վրաց, ի ՇՂՒ թուականին (1145–6)։ Ի նմին ամի փոխի առ Քրիստոս թագաւորն Դաւիթ որդի Կիւրիկէի ի յամրոցին որ կոչի Մածնաբերդ[1]. և թագաւորեաց Կիւրիկէ որդի նորա ընդ նորա։

Իսկ Զաւլի գնաց ի կողմ Խաչենոյ, Ջաւախայ և Ախալքայ, կրկին անգամ. քանզի յառաջնում նուաճեցին ոչ միայն ընդ ձեռամբ նորա զղեակք այնքիկ զոր էառն, այլ սակաւ ինչ միայնեալքն՝ յազատաց անտի որք էին զօրեալք յանտառս մայրեաց, առին զարձեալ զբերդամրոցսն իւրեանց, և զարձեալ ապստամբութեամբ վարեցին ընդ Տաճկացն։ Վասն այսր պատճառանաց սրտմտեալ Զաւլեայ՝

1. Գանձակայ մօտ սրածայր բլրի մի վրայ. ռամկօրէն Մղկնաբերդ կոչուի։ Վերը յիշեցինք որ այս տեղ թագաւորող Դաւիթն եղբայր էր Աբասայ թագաւորին Տաւուշի։

դիմէ առ ի վրէժխնդրութիւն ի վերայ նոցա. իսկ զամրոցսն ոչ կարաց առնուլ, բայց զգաւառն զաւերեցեալ ի սպառ աւերէր. այրեաց և զառաքելադիր ուխտ սրբութեանն որ կոչի Դադոյի վանք[1]. և ինքն չուեալ գնաց յաշխարհն Պարսից, և ապստամբեալ ի սուլտանէն՝[2] ապա չարաչար մահուամբ սատակի վերջ ի քաղաքն Զանգան[3], ի ՇՂԵ (1146–7) թվ. Հայոց։

Իսկ այլ ոմն ամիրայ՝ անուն փահլաւդին մեծատուն և մեծատոհմ յազգէ, սա տիրեաց զօրացն Զաւլեայ և գաւառացն համանգամայն որ ընդ իշխանութեամբ նորա. և ըստ հրամանի սուլտանին եկեալ ի գաւառս Աւանայ՝ տիրէ ամենայնի. բայց դի ոխացեալ էր քենու ընդ թագաւորին Վրաց և ապառնայր աւերել զամենայն գաւառսն՝ որք ընդ իշխանութեամբ նորա, վասն այսր ահի և ապառնալեաց՝ տարակուսեալ յերկիւղէն՝ սուրբ մայրաքաղաք վանորեայսն, Հաղբատ և Սանահինն՝ միայն յաղօթս ապաւինեալ հայցէին յԱստուծոյ զիրկութիւն ամենայն հաւատացելոց. զոր և վազվազակի լսեր Աստուած աղօթից նոցա և բառնայր ի կենաց զփախարդինն, ոսկաւ աւուրս տիրապետեալ Գանձակայ, ապանմամբ սրոյ ի ձեռն ամիրայի միոյ Խագբեկ կոչեցելոյ, որ ի տանէ սուլտանին՝ ապան զնա. և էր թուականս ՇՂԶ (596=1147–8), և հոռոմին ՑԿԷ (367)[4]. իսկ Պարսիցն ՇԼԶ. և էր կայսր Յունաց Միխայէլ որդի Կալոժանայ, թոռն

1. Ս. Թագէոսի աշակերտ Դադի կամ Դադէի (տես Յոգ. 31) անուամբ չինուած, Մռաւ լերին սոսբոսը, Թարթառ կամ Տրտու գետոյ մօտ։

2. Ս. յայնկոյս Սեղջուկեան սուլտանք յայնժամ Մելիքշահին։

3. Ծանօթ Զանգեան անուամբ յԱարպատականի։

4. Վերոյիշեալ Հռոմմայ երկրորդ հաշտարեկէն հինգհարիւրեակ շրջան մի անցած և նոր սկսեալ շրջանին 367դ տարին, Հիճրեդի թուականին 536։

Աղբսիի. թագաւորն Վրաց Դեմետրէ որդի Դաւթի թոռն Գէորգայ Բագրատունի. իսկ Պարսից սուլտանն Մասուդ որդի Մահմետի, թոռն Մելքշահի:

Իսկ ամիրային Փարսայ և Խուժաստանի[1] որում անուն Բզափայ կոչիւր, լուեալ զպանուածն Փախրադինին, և իմացեալ թէ հրամանաւ սուլտանին է, զօրաժողով եղեալ դիմէր ի վերայ նորա, կամեցեալ ընկենուլ զնա յիշխանութենէ. իսկ Թազրեկինի[2] առեալ զզօրս իւր գնաց յօգնականութիւն սուլտանին. և սաստիկ պատերազմ եղեալ՝ զմիմեանս զօրքն սատակէին. յորում պատերազմի ապանաւ Բզափայն, և եղեւ չիոթձումն մեծ:

Ձեռ այսորիկ եկն ամիրայ ումն անուն Ըրդիչ կոչեցեալ, առանց հրամանի սուլտանին տիրապետել կամեցաւ Գանձակայ. զոր գիտացեալ քաղաքին գլխաւորաց և ոչ ընկալան զնա ի քաղաքն. և նա զչարեալ յաղագս արհամարհանաց իւրոց՝ ել ի լեռնակողմանս, և ժողովեալ զապստամբ զԳլխաւորսն Թուրքմանին. և նոքօք բազում աւեր հասուցանէր լեռնակողմանցն, և զգաւառն բժժանեալ նոցա՝ ոչ սակաւ տագնապ հասուցանէր, և այնպէս կամեցեալ պաշարել զքաղաքն. իսկ քաղաքացեացն օգնականութիւն խնդրեալ ի թագաւորէն Վրաց՝ որում անուն էր Դեմետրէ, զի գուսար նորա յառաջագոյն կին լեալ էր սուլտանին, որոյ անուն էր Ռուզուդան, և յանուն վարձանի տուեալ էր նոցա Գանձակ. ըստ այսմ պատճառի գօրս առաքեալ թագաւորն Վրաց, և փախուցական եղեալ Ըրդիչն գարձաւ ի կողմանս Պարսից: Իսկ զկնի այսորիկ առաքէ սուլտան Մասուտն զամիրայ ումն Ռոմադի անուն չահապ քաղաքին Գանձակայ. որոյ եկեալ և կամեցաւ վրէժ խնդիր լինել աւերման գաւառին ի Թուրքմանէն, և ոչ կարացեալ նուաճել

1. Ինքն Պարսից Ֆարս երկիրն և Խուճիստան:
2. Սուլտանին արշուց ամիրայքն կամ գաստիարակն էր:

զնոսա. զի ոչ էր մեծ ազգաւ և կամ զօրութեամբ, յաղագս որոյ արհամարհեալ զնա Թուրքմանի գլխաւորացն՝ բազում ապստամբութիւն ցուցանէին նմա, նոյնպէս և ամենայն բերդօրայք գաւառին ոչ հնազանդէին նմա. և նորա երթեալ և պաշարեալ զնոսա՝ ոչ ինչ կարաց առնել նոցա. և Թուրքմանին ոչ սակաւ աւերեալ զդաշտավայրս և զբնակավանսն. յաղագս որոյ զչարեալ եկ, և բազում աւար առեալ ի Թուրքմանէն՝ և առաւել զնոսա ի թշնամութիւն իւր գարձուցանէր: Այս սէր և բարեկամութիւն եդեալ ընդ նոսա, առնու իւր կին ի նոցանէ, և զքոյր իւր տայ ի կնութիւն Ազգադին կոչեցելոյ տեառն Հերքաւի–բերդոյ. և այսպէս խաղաղութիւն արարեալ գաւառին:

Ձեռ այսորիկ որդի Դարին[1] Տաւդաի անուն, իշխան աշխարհին Ջառաբերդոյ[2] և նորին դղեակին, ամպարտաւանեալ և կամեցեալ տիրել Ալանայ, միանգամայն զի եկեալ ումն որդի սուլտանի առնա՝ որում անուն էր Ջահր–շահ, և առեալ զնա և զաներ իւր զԴիփգոր իշխան որդի Վաասակայ տեառն Խաչահաւի[3] բերդոյ. որոյ եկեալ առ նա՝ զի նովաւ վրէժ առցէ ի Հասանայ որդւոյ Դևտոյ, յաղագս եղբօր իւրոյ Աիսպատայ, զոր սպանեալ էր նա պատերազմի պատճառաւ, զոր ունէին ընդ միմեանս վայրապար. և յաղագս այդպիսի պատճառաց զդրօտերս իւրեանց յայլազգիս յամուսնութիւն տային: Եւ զի ըստ այսմ պատճառի Գրիգոր համարձակեալ եկն առ փեսայ իւր Տաւդան, և երթեալ Տաւ-

1. Ո՛վ է այլ Դարն, առաջ յիշաւած չէ:
2. Որ և Ջարաբերդ և Ջրաբերդ, մի յամրագոյն բերդից Արցախ նահանդի կամ Խաչենոյ, ի հովիտ Թարթառ գետոյ:
3. Կամ Խօխաւի, հիմայ կոչեալ և Թարխաւի–գալէ, Գանձասարայ վանից մօտ բարձր և սաստ բլրի մի վրայ, որոյ ներքեւ կան աւերակք աւանի և մեծամեծ տաներու, զոր Դարպասներ կոչեն:

զան նոքօք բանակէր ի լեառն որ կոչի կայծոյ ժառ, մերձ ի Հերքան–բերդ. բայց զի յաւագագոյն փեսայացեալ էր Յովադայի՝ Գոչրբուղային զլխաւորի Թուրքմանի միոյ[1], զոր կոչէր Տաւղան ի հնազանդութիւն սուլտանին, զնա և զայլս որ ընդ նմա՝ զՅոհաննէսեանսն կոչեցեալ. և նոցա բանակեալ ի լեառն որ կոչի Դիւահառ, ոչ գային ի հնազանդութիւն նոցա. և եղեւ յաղագս այսորիկ պատերազմին, և հարան զօրքն Տաւղանայ, և ինքն Տաւզան ապանաւ. սպանին և զԳրիգոր, և ընդ նմին այլ եւս ազատս, որ և թագեալ անդ քրիստոնէից գաւառին. և զկնի ամի միոյ առեալ բերին ի վանքն անուանեալ Գանձասար[2]. որ էր ատենատուն նախնեաց նորա. և անդ թաղեցին զնա: Իսկ զՁախըրչահն ըմբռնեալ տարան Յովադի[3], ի քաղաքն Գանձակ. իսկ նորա իբր զառաջ ոք և զնաթարեալ համարեալ զնա՝ այլն արարեալ չըլեցուցանէր ի քաղաքին նախատանաք, և ապա թողին զնա: Եւ նորա երթեալ առ Թուրքմանսն զոր յառաջագոյն աւարեալ էր Յովադի, և նոքա ուրախացեալ առ հասարակ կոչեն զամենայն Թուրքսն Գեղամայ լերինն, և պատուեալ զնա իբր թագաւոր, և զօր ժողովեալ և եկեալ զամենայն գաւառսն լեռնակոզմանն բաժանէր նոցա. և ինքն զօրօք բազմօք եկեալ պաշարէր զքաղաքն Գանձակ: Իսկ Յովադի առաքեալ ի թագաւորն Վրաց և հայցեալ ի նմանէ զօրք յօգնականութիւն, և նորա առաքեալ զօր բազում. և լուեալ Զախըրչահին և փախուցեալ ի վայր քան զՊերդապատ՝ որ այժմ ասի Պարտաւ, և անդ դադարեալ առ Թուրքմանսն ապստամբս:

Զկնի այսորիկ Սեւռնձ անն ծառայ թագաւորա-

1. Յովադի փեսայ եղեր է Գոչբուղայի:
2. Աղաւանից ամենեն նշանաւոր վանքն, որ և իրենց կաթուղիկոսին ամիոռ եղաւ մինչեւ մեր օրերն:
3. Այսինքն տարին առ Յովադի:

ղանայ, որ էր ի դղեկին եգեալ՝ որ կոչի Զարևք[1], նա մախանս ունելով ընդ Յովադու, վասն յառաջագոյն պաշարելոյ զնա յիւրում ամրոցին և աւերման գաւառին իւրոյ, և վիրաւորութեան ոմանց ի քաղաքէն Գանձակայ, երթեալ առ Ելտկուզն[2] որ էր տէր Նախճաւան քաղաքին և գաւառին. և կոչեալ զնա և բերեալ, և պաշարեալ զքաղաքն Գանձակ՝ առնու զկնի ամաց միոյ, յաւուր տրագալուցի Յայտնութեան Տեառն մերոյ, կամաք քաղաքացեացն: Եւ Յովադի իբր գիտաց զկամս քաղաքին՝ ինքն իսկ կամաք տայ զքաղաքն ի ձեռս նորա. բայց իբրեւ եկն Ելտկուզն ի դաւն քաղաքին՝ առեն քաղաքացիքն. Եթէ զթշնամին մեր զՁախըրչահն ոչ բառնաս՝ ոչ հնազանդիմք քեզ. յաղագս որոյ անյապաղ երթեալ և ըմբռնեալ զնա՝ կախ զփայտէ. և ապա եկեալ առնու զքաղաքն, որպէս ասացաք: Իսկ Յովադի անցեալ գնաց ի հայրենի գաւառն իւր մերձ ի Բելաւպատ քաղաք: Բայց զի ունէր կին Ելտկուզն ի կանանց սուլտանին, զկնի մահուան Մասուդին թագաւորեցուցանէ զԱլպասլան շահ, որ էր որդի կնոջ զոր ինքն ունէր, և առնու յինքն զպատիւ աթաբակութեան, զի սպանեալ էր զիագրեկն աթաբակ որդւոյն սուլտանին՝ ի հակառակել իւրեանց. և յաղագս այսորիկ տիրեալ թագաւորութեանն Պարսից՝ զօրացաւ յոյժ և երկարձ ժամանակս իշխանն ամենայն և հնազանդեցոյց ըզբազումս, և զղլխաւոր ապստամբան ի Թուրքմանացն երկարձ բնաւ. և խաղաղացոյց զկռովութիւն աշխարհիս Աղանայ. և վայրենամիտ ազգն Իսմայելացւոց ընդանացան[3], և կապուտ կողոպուտն

1. Մի ի նշանաւոր բերդից, և քան զայն աւելի՝ Անապատն կամ Վանքն Զարեքոյ, Շամքոր գեաոյ եզերքը. հիմիկ վանքն ծէր գարեմ չինուած է:
2. Շատ հզօր և անուանի է սա իր ժամանակի իշխաղաց և զօրաւորաց մէջ:
3. Այսինքն, հանդարտեցան:

գադարեաց ի նոցանէ, զոր առնէին յաճախ աշխարհիս Աղուանից։ Բայց սակայն զմարտ պատերազմի ոչ դադարեցուցանէր ընդ թագաւորին Վրաց և ընդ իշխանն Խաչենոյ. զի երթեալ երբեմն գաղտագողի և առեալ զամրոցն Հարուր[1], և առ հասարակ զամենեսեան կոտորեալ սրով։

Իսկ իբրեւ մեռաւ թագաւորն Վրաց Դեմետրէ՝ թագաւորեաց փոխանակ նորա Դաւիթ որդի նորա, այր բարեմիտ՝ մանաւանդ առ իշխանն Հայոց, որք էին ընդ ձեռամբ նորա. և զի յոյժ մեծարէր պատուով զչահապ քաղաքին Տըփխեաց՝ զվաստակ որդի վահրամայ իշխանի և զեղբարս նորա զՔուռդն կոչեցեալ և զՄարդիս, և այնքան բարեսիրութիւն ցուցանէր՝ մինչ զի առաքէր և կոչէր զթագաւորն Կիւրիկէ[2] որդի Դաւթի թագաւորի Բագրատունւոյ, և խոստանայր նմա[3] գարձուցանել ի նա զժառանգութիւն նորա, զոր նախնեացն իւրոց հանեալ էր ի նոցանէ. և այնպէս պարգեւօք յղարկէր զնա, ժամադիր եղեալ նմա։ Կամէր և ժողովս առնել և յաղագս հաւատոյ զնմարիան գիտել, և այնպէս պատուել զուղղափառութիւն։ Զայսպիսի զկամս իբրեւ գիտացին իշխանքն Վրաց՝ յոյժ նախանձաբեկ եղեն, մանաւանդ Որբելեանքն կոչեցեալ ազգ, և դեղ մահու արբուցեալ սպանին զթագաւորն Դաւիթ, և սուգ մեծ և բազմաժամանակեայ արարեալ աշխարհին Վրաց և Հայոց, և թագաւորեցուցին զԳիորգի եղբայր նորա ընդ նորա։

1. Աղուանից անուանի գարգարացոց երկրին և գեաւղն մնան մի՝ որ վաղանդս կոչուի հիմայ, որոյ մէջ է այս Հարուռ կամ Հարսռ գիւղս, Ս. Մեսրովպ եկեղեցեաւ։

2. Հայոց Բագրատունեաց սերունդք, առաջ Գուրգէն կոչեաձքն՝ երբ Վրաց կողմեր սկսան թագաւորել Կորիկէ կոչուեցան. և չատերն յաջորդաբար որդիք որդի Դաւթի և Կորիկէ կոչուին։ Տես վերայիշեալ Ագաթացւոյակը (եր. 392)։

3. Յօրինակին էր նորա։

Իբր թագաւորեաց Գիորգի կամեցաւ ըմբռնել զիշխանն Վասակ, զի մինչ ունէր ընդ նմա, զի մինչ քաղաքապետն էր՝ ոչ մեծարէր զնա իբրեւ զեղբայր իւր զԴաւիթ, և ոչ ծառայէր նմա սպասաւորելով. չարախօսելով և այլոց իշխանացն Վրաց, յաղագս այսորիկ փախստական եղեալ Վասակայ իւրովք եղբարբքն հանդերձ, և երթեալ ի Թիւռքաստպոլիս որ այժմ ասի Կարնոյ քաղաք։ Եւ ամիրային որ կոչէր Մատռէխ՝ խնդրեաց և մեծարանօք ընկալեալ զնոսա. զի յորժամ ըմբռնեցաւ Սալտուխն ի զօրացն Վրաց, մինչ պաշարեալ էր զքաղաքն Անի և ածաւ առ թագաւորն Դեմետրէ ի Տփխիս, բազում սպասակալութիւն արարեալ էր նմա Վասակ. յաղագս այսորիկ պատուեալ զնոսա պարգեւօք և չնորհեաց իշխանութիւն գիւղօրէից բազմաց։ Եւ անդ լինելով ամս ինչ մեծաւ Վասակ, և թագեցաւ յեկեղեցւոյն որ կոչի Աստուածածին ի քաղաքին։ Իսկ զղրոյ նորա և զփող և զիշխանութիւն՝ տուեալ եղբօր նորա՝ որ կոչեցեալ էր Քուռդ[1], և կայր նա անդ մեծաւ պատուով։

Իսկ Գիորգի իբրեւ թագաւորեաց և հաստատեցաւ՝ բազում գործ արութեան ցուցանէր, արշաւելով ի կողմանս կողմանս, զբազում գաւառս հարկանէր զպատահեալսն պատերազմաւ, առնոյր և զքաղաքն Անի միանգամ և երկիցս, կոչելով եպիսկոպոսին Բարդի և եղբարցս նորա՝ որգւոցն Մարիամայ Հաւանայ. և ապա ընդդիմացեալ ոչ ապրին ի ձեռս նորա զքաղաքն. և առեալ բռնաբար զքաղաքն՝ և հրամայեաց աւար հարկանել. և մերկացուցեալ զօրացն զամենեսեան զարս և

1. Պատմէ Կիրակոս (Գլ. ծՁ.) որ ասոր քոյր եկաւ կեցաւ առեն մի Մխիթար Գոշ, ի քաղաքն Կարնոյ, յետոյ երբ դարձաւ իշխանն իր երկիրը՝ նոքեն քալեն եկաւ Մխիթար։ Գար մի վերջը աւելի անուանի եղաւ իր ցեղէն ուրիշ Քուրդ իշխան մի, որոյ քոյր իշաւ Հեղնամ Ա թագաւոր ի Թամթարատան երթալու առեն։

զկանայսն, զքաՀանայս և զկրօնաւորս՝ բազում ա-
նարգանս ցուցանէին յաղագս ընդդիմանալոյն. և
եդեալ չահագ քաղաքին և զօր ընդ նմա՝ գնաց:
Եւ նեղեալ քաղաքն յարշաւանացն ՔՀնամեացն՝
ազաղակեցին տալ ի ձեռս առաջին տեառնն՝ որ էր
պարսիկ ազգաւ. և դարձեալ յայլ յայլմէ փոխեալ՝
ոչ լինէր խաղաղութիւն քաղաքին և գաւառին:
Ապա տայ ի ձեռս զօրավարին իւրոյ Իշանիի[1]. և ոչ
եղեւ և ոչ այնպէս հանդարտութիւն, մինչեւ տալ ի
ձեռս իւրոց առաջնոց տերանց:

Իսկ Ելկոտւկին՝ որ էր իշխան ամենայն թագա-
ւորութեանն Պարսից զայս իրրեւ եառես և զամենայն
զօրութիւն նորա յառաջ քան զայսոսիկ զօրա-
ժողով եղեալ առեալ ընդ իւր զսուլտանն և եկեալ
բանակեցաւ ի գաշտին մերձ ի բերդն որ կոչի
Գագ[2]. և այրեալ զսուրան որ յանուն Սրբոյն Աստ-
ղրիկ. և բազում հարուած եղեալ ի բանակն և բա-
զումք յօձիցն սատակէին: Իսկ թագաւորն Գիորգի
ժողով արարեալ զօրաց բազմաց՝ եկն բանակեցաւ
ընդդէմ նորա և պատրաստեցաւ պատերազմիլ:
Բայց զօրավարն նորա Իշանիկ որդի Ամբատայ Թա-
լագռձեան կոչեցեալ՝ ծածկաբար ազգ արարեալ

1. Ոչ Զաքարիա Սպասալարի եղբայր անուանի
ամիրսէին Թամար թագուհւոյ, այլ իրմէ առաջ մէկն:
2. Կասպից ծովու արեւմտակողմն՝ ընդարձակ Մու-
ղանն գաշտի հիւսիսային մասն Գագ կոչուէր, յանուն
լեռնաբլրոյ մի, որոյ գագաթան վրայ չինուած էր Ս.
Սարգսի վանքն, ուր Ս. Մեսրովբ զրեր էր այդ Ս.
Զօրավարին նշխարք մի. այս է որ երգուի յեկեղեցիս
մեր ի տօնի Սրբոյն. «Խաչաչարչար սուրբդ դիտապետ.
» նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի, առա-
» ւել պայծառ ի Գողթիսն Գագայ ի գագաթան տեղ-
» ւոջն՝ օրհնեալ Սրբոյն Մեսրովպայ, երագահաս
» Սուրբդ Սարգիս՝ բազնեաց կործանիչ», և այլն:
Անոր մատ է և սրագլուխ Գաւառգին լեռնաբլուրն,
զոր իր սուլուչիկ ձեւին համար՝ ամանք կարծեն Գա-
ւառազան կոչուած և անկէ փոխուած Գաւառգին:

աթաբակին և սուլտանէ, զի դաշնադիր էր նոցա
և կաշառով կուբացեալ ի նոցանէ. և նոքա ի գի-
շերին յորում հանդերձեալ էին վազն պատերազ-
միլ՝ փախուցեալ գաղտագողի թողեալ զսուրան իւ-
րեանց գնացին. այլ սակայն ոչ գադարէր ի չար
կամաց որ ընդ քրիստոնեայս: Եկեալ յանկարծ-
օրէն ի սահմանս Աղուէ, և զԱշնակ և զԹաշիր[1]
զաւանագեօղորեայան առեալ և այրեալ զամրոցսն,
և զրազում զարս և զկանայս և զմանկտի ընդ
նոսա. և զրազումս վարեաց ի գերութիւն վաճա-
ռակուր եղեալ յազգս հեռաւորս: Իսկ թագաւորն
Գիորգի յանկարծօրէն երթեալ սակաւ արամբք ի
քաղաքն Դվինի, և զրազում ժամանակեայ ի Պարս-
կաց մնացեալ... բազում աւար առեալ փակեաց
և զաւէնն... Որմըզդի[2]:

ՄԼԳ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍԿԻՐ ԵՒ ՍՈՒԳ ԶՈՐՏՈՒԱՆԷԼԵԱՆ ԻՇԽԱՆԱԶԱՆՑ ԿՈՂՄԱՆՑ ՍԱՍՆՈՑ[3]

Ի ձիր չնորհի սորա (Աստուծոյ) յաւսացեալ օգ-
նութեամբ Երրորդութեանն սկսայ և ողորմութեամբ
նորին կատարեցի զՍուրբ Աւետարանս, ի հայրա-

1. Երկուքն այլ Այրարատայ Արագածոտն գաւա-
ռին մեծամեծ աւաններ էին. երկրորդին անուամբ
կան Նոր գիւղ մի և հին չինուածոց մնացորդք, և
եկեղեցին՝ որոյ պատկերն է դիմացնիս:
2. Վերջին տողերս մնացած են, յեռով թուղթերն
այլ թափած կորած. երեւի թէ և շատ բան պակսի
հետաքրքրական դէպքերէն: Տես ի կարգի Պատմչաց
ինչ որ ըստ եմք Գոչին այս Պատմութեանն համար:
3. Յիշատակարան է սա Սանոյ անուանեալ մէկ
Աւետարանի, նոյն կողմերը գրուած յամին 1169–70,

պետութեանն Տեառն Ներսիսի Հայոց կաթուղիկոսի[1] և ի տէրութեան Սասնոյ՝ Վիգենոյ[2] մեծի Պատռեղեսիմոսի որդւոյ Զորտռանկի[3], Թոռն Թոռ-

զոր քանասէր Սրուանձտեան Գարեգին Վ. հրատարակած է իր հաճոյական Թորոս Ագղաթ գրոց մէջ։ Այլեւայլ տեսութեամբ նշանաւոր գրուած մ'է այս. նախ ամենէն աւելի՝ որ տառապանչ քաջատրութեամբ ցեղով և բարուք ազնիւ ընտանեաց սիրոյ և ցաւոց, կամ ծննդոց և մահու. որպիսի պարզ և զգայուն գրուածկամ դէպք՝ դժուար թէ գտնի մեր պատմագրաց քով։ Երկրորդ, զարմանալի իմն է՝ այն խորտուբորտ անհարթ անծանօթի, քրզաբոյն երկրի մէջ՝ այսպիսի ազնիւ արեամբ, որտիւ և հզօրով անձանց գտուիլն այնպիսի առեն, նման այն պայծառ գունագոյն ծաղկանց, որ թէ և քարանց մէջ բուսանին, բայց պարտիզաց ծաղիկներէն թերեւս աւելի ակնախտիղ երեւին։ Նկատելի է եւս այդպիսի կէս վայրենի խոշերուժ՝ ոչ միայն Հայոց հին ազնուականաց սերունդներ գտնել, այլ և այնքան իշխող և տէր, մինչեւ իրենց կանանց այլ կոչուիլ թագուհի՝ հայ և արաբ լեզուաւ։ Ուրքան պէսպէս թագաւն գանգ կան եղեր այնպիսի հայրենեաց մէջ։

1. Յայտնի է որ Շնորհալի Ս. Հայրապետն է։

2. Անսովոր կամ անծանօթ անուն, զոր ամանք հիմայ համարին և կ'ըսեն փոխանակ լատինական Վիջենի, Vincentius, Vincent. Իսկ պատուանունն անշուշտ բիւզանդական մ'է, թերեւս Nobilissimus, որ աւրիշ հայ իշխանաց այլ տրուած է, և մեր գրիչքն նոյնպէս այլակերպած գրեր են նաեւ Նովսերիոնոս։

3. Ահա նորանոր անուն մ'այլ, չգիտեմ ուստի ծագեալ։ Ի գարու վերջերն և հետեւեալ երկու գարուց՝ մէջ շատ յիշուի, թէ առ Վրացիս և թէ մանաւանդ առ Հայս. ասանց առաջին Թուի Գորգ Զորտռանկ ազատ, այսինքն ազնուական, նիզակակից Վատակայ Պահլաւունոյ հօր Գր. Մագիստրոսի, յամին 1021, (տես Յօդուած 244)։ գուցէ ատ ըլլայ Վիգենի պապան պապն, զի տարիքն յարմար է, և ըստ այսմ կ'ըլլայ դա հայր Մանուէլի, և ասկէ կ'իջնան որդիէ որդի վեց ազգք կամ պարագ, Մանուէլ· Թոռնիկ· Զորտռանկել

ներկայ[1], մեծի հզօրի և քաջի, որ բնիկ Աղուանից հաստատուն հիմնակառուցեալ ունի զաթոռ հայրենի տէրութեան իւրոյ, և ի թուականութեանս Հայոց ի Ո. Ժ. Ը. Հրամանաւ երանելի և Քրիստոսասէր թագուհւոյ Մխիթարոյ[2] ամուսնոյ Վիգենոյ, որ է յազգէ Աբծրունի և ի չառաւիղէ Սբրբոյն Վարդանայ՝ գտեր մեծի իշխանին Մոկաց՝ Հմայեկի[3]։ Իսկ բարեացապարան երիցս երանեանն Վիգէն և ամենայն օրհնութեանցն արժանի երանելի աստուածասէր թագուհին, ոչքա ըստ ազնուականութեան հայրենի պատուոյն և ըստ աս-

(Բ). Վիգէն. Զորտռանկել (Գ). Թոռնիկ (Բ) և իր եղբարքն Վասիլ և Շահինշահ։ Բ Զորտռանկել (հօր Վիգենի) ժամանակակից է մեր Զորտռանկ մի որդի Տաճատայ, նոյնպէս Տարօնոյ իշխան հրատարակուած, մամիկոնեան և պահլաւ. որ և իր նախնեաց մէջ յիշէ Վահան մի. ասոր Յիշատակարանը յարմար համարեցանք կարգել յաջորդ (294) Յօդուածով։ Այսչափ Զորտռանկելեանց վրայ աւելի չփոթի կամ զարմանք բերէ՝ մեր մէկ մի Սասնոյ իշխան, որ Վիգենի որդւոյն պէս ճանչցուի քեռայր Գրիգորի կաթողիկոսի, բայց Տղային, սակայն ամենայարմար ժամանակին· վասնզի գրա սրբիքն՝ Հերոտէ և Շահինշահ, կ'երթան ի Կիլիկիա առ Մեծագործն Լեւոն Ա, որ Հեթմայ կին կու տայ իր եղբօր Ռուբենի Ալիծ դուստրը և Մսիս քաղաքը, Շահինշահի այլ Զեվելիա քաղաք, յամին 1188։ Ոչքա և իրենց քեռի կաթողիկոսն մեկ ամուսան մէջ մեռնին, յամի 1193։ Ի՛նչ նմանութիւնք ոչ համանմանք։

1. Այս Վիգենի քաջ պապան անարժան ապանութիւնն ի փիլպատոսէ՝ պատմուած է յ'265 Յօդուածի։

2. Յայտնի է մեկեք թագաւոր նշանակէն, նոյն տրաք լեզուաւ և սիրքի՝ տիկին նշանակէ· ըստ այսմ և Մխիթարիս՝ բնիկ անուն չէ՝ այլ պատուոյն։

3. Շփոթի է այս տեղ այլ չարադրութիւնն՝ որով և ազգակցութիւնն. Թուի թէ չառաւիղն Ս. Վարդանայ էր նոյն ինքն (անծանօթ) դուստրն, տուեալ կին Հըմայեկի Մոկաց իշխանի, որոյ քով տեսն մի քաշուած կեցաւ Վարդան։

աուածային օրինացն գեղեցիկ քաղաքավարութեամբ կացեալ առ միմեանս, և զամենայն օրինակ բարեպաշտութեան յանձինս իւրեանց բերելով, և զարդարող ոչ միայն մարմնաւոր մեծութեամբ այլ և հոգեւոր փարթամութեամբ աստուածպաշտութեամբ. զի երանելին Վիքէն պաղաղութեան գՀետ երթեալ՝ ըստ առաքելական բանին, որ ասէ՝ « Երանի է խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին », և զաշխարհաշինութեան, զարբար դատողութեան. խրատելով զատահական, դատ առնելով զրկելոց, օգնական լինելով նեղելոց և ապաւէն ամենայն փախուցելոց, շինելով զեկեղեցիս Աստուծոյ և զարդարելով ամենահրաշ սպասուք և զարդուք, և զքահանայս Աստուծոյ պատուելով և մեծարելով, և զկեանս նոցա դարմանելով. և յամենայնի առաջին սուրբ նահապետացն և թագաւորացն նմանեալ, որք զպատուիրանս Աստուծոյ պահեցին և հաճոյ եղեն նմա. և ի վերայ այսր ամենայնի զոզորմածութիւն և զսէրն ունելով՝ որ է գլուխ ամենայն առաքինութեան:

Նոյնպէս և երանելի թագուհին զամենայն առաքինութեանց գՀետ երթեալ, և զարդարեալ ոչ միայն ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք, կամ ի հանդերձս ոսկեհուռս հպարտացուցանողս զմիտս կանանց թագաւորացանց. այլ սա զնի մարմնական մեծութեան՝ սատակեալ և զհոգեւոր առաքինութիւն, զսբրութիւն, զհամեստութիւն, զխոնարհութիւն, զպահս սրբութեան և զաղօթս հանապազորդս, եկեղեցեաց զարդարիչ և քահանայից յանձանձիչ, որբոց և այրեաց խնամածու, զվերկս զգեցուցանելով և զքաղցեալս կերակրելով. և այլ բազում առաքինութեամբ, ըստ օրինակի առաջին սրբոցն որ ընթացան զնի Քրիստոսի կոչմանն առաքելական քարոզութեանն, որպէս ասէ Պաւղոս փողն Տարսոնական, անօթն ընտրութեան, քարոզն սիրելոյ, յուսուցանելն իւրում, եթէ, « Կանայք, հնա-

զանդ լերուք արանց ձերոց յամենայնի՝ իբրեւ Տեառն. և, Արք, սիրեցէք զկանայս ձեր իբրեւ զանձինս ձեր »:

Իսկ ամենագով երանելիքս՝ ըստ առաքելական խրատուս և ըստ Քրիստոսի պատուիրանացն, սուրբ և պարկեշտ ամուսնութեամբ կացեալ առ միմեանս՝ որպէս զմի մարմին, և ծնեալ ուստերս լուսածագիկս և դստերս գեղեցկատեսիլս, և սնուցեալ խրատու և ուսմամբ, կրթելով զնոսա յերկիւղ Տեառն և ի հրահանգս բարեպաշտութեան: Այսպէս ամենք ի գաւակաց սոցա յառաջագոյն փոխեցան յաւուրցս ի հանդերձեալսն, իբրեւ զպտուղ ինչ նոր՝ յառաջին արմտեաց ընծայ Տեառն մատուցեալ. յորոց միոն Գրիգորիոս ճանաչիւր, և այլոց ազնւականն գրեալ են ի գպրութեան կենաց. և սուղ ինչ զվախճան նոցա արտասուեալ, և գոհութիւն Աստուծոյ մատուցեալ, վասն ընդունելոյ զպտուղ որովայնի նոցա: Այսպէս զնի այսորիկ աստուածապաշտ կարգօք ուրախացեալք՝ բարեկարգութեամբ վարեին զիշխանական տէրութիւն իւրեանց, հանդերձ մեացեալ որդւովն. զերիցերանեան և զամենագովելին ասեմ զՂորտուռանիկն, զգեղեցիկն, զբարեսիրն, զգանգրահերն, զխաթախչագեղն, զպայծաթիկունքն, զհաստատագուհն, զչափահասակն, զբրիտոսասէրն, զաղօթասէրն, զքահանայասէրն, զխոնարհամիտն, զհեզն, զերկայնամիտն, զսիրուննն, զսիրեցեալն, զողորմածն առ ամենեսեան, զօգնականն անօգնականից և զբարեխօսն դատապարտելոց և զհանիչն բանտարկելոց և զկերակրիչն քաղցելոց: Եւ զինչ թուեմ մի ըստ միոջէ, զի ամենայն չնորհօք զարդարեալ էր ի հոգեւորականն և ի մարմնականս. և այսպիսի վարուք աճէր և իմաստնանայր և հլու էր ծնողացն և հպատակ հրամանաց նոցա. և ոչ իրրեւ զմանուկ թագաւորազին ամբառնայր ընդդէմ կամ բարձրամտէր, այլ ընդ խոնարհս զինչանէր. զերբունեան հրամանն կատարելով, թէ, Որ խոնարհեցուցանէ զանձն բարձրացի. և վասն

զեղեցիկ վարուցն և լաւութեան բարուցն, ծնողքն առաւել սիրէին զնա: Ապա խորհուրդ ի մէջ առեալ ամենայնումբ կամելով զչառաւիղն ազգին իւրեանց, փեսայացուցանեն զնա ընդ դուստր վասպի եղբօր Տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, հզօրի և մեծի[1], որոյ անունն Վանինէ[2] ճանաչի. որոց եկեալ առ միմեանս եղեալ իրրեւ զմի մարմին, սիրուն և սիրեցեալք, և ըստ աստուածային օրինացն կեցեալք՝ ծնանին երիս որդիս զեղեցիկս և հրեշտակատեսիլս. որում առաջնոյն ասի Վասիլ, իսկ երկրորդին Շահինշահ և երրորդին Թոռնիկ. և կային բարեկարգութեամբ, զուարճացեալք լուսաճաղիկ գաւակօքն:

Իսկ զկնի այսմ եղելոցս՝ աստուածասէրն Վիզէն և երանելի ամուսինն նորա Մելեքսթի՝ օրհնութիւն Ամենատեառն մատուցանէին, տեսանելով զբարեկարգութիւն տէրութեան իւրեանց և զաճումն զաւակաց և զչինութիւն աշխարհին: Էր ապա դուստր մի իւրեանց կոյս զեղեցիկ յոյժ, զարդարեալ ամենայն բարեձեւութեամբ և յոյժ սիրեցեալ յաչս մօրն՝ առաւել քան զամենայն մանկունս իւր, որոյ անուն յորջորջեալ կոչի Կատա[3]. կատարեալ հասակաւ և զեղեցկութեամբ, և ամենայն առաքինութեամբ. յորոյ անուն՝ Ս. Աւետարանս գրեցաւ[4]: Զնա կամեցեալ ծնողացն իւրոց տալ մեծաշուք պատուով ի թագուհութիւն Շահինշահի որդւոյ Գրիգորի, թոռին Կատակալոսի որդւոյ Կաւեձի[1] մեծի, ի Գեղեաց գաւառ, ի մեծ ամրոցն որ կոչի Պաղուկ[2]. որ իրրեւ երթեալ անդ ըստ հայրենի ազնուականութեանն և ըստ մայրենի աստուածպաշտութեանն որով անեալն էր, և անդ ցուցեալ զզեղեցիկ բարեձեւութիւնն, զսրբութիւնն, զողորմածութիւնն, զեկեղեցեաց և զքահանայից հոգաբարձութիւն: Եւ սուրբ ամուսնութեամբ ծնեալ մանուկ մի զեղեցկատեսիլ, որոյ անուն է Շահվէլիք[3]. զոր իրրեւ լսէին ծնողքն զնորա բարի յառաջադիմութիւն, փառս ի բարձունս Աստուծոյ մատուցանէին: Եւ ինքն երանելի զքնաղագեղն Կատայն գոհութիւն Աստուծոյ մատուցանէր, որ եթող ըզտուն հօր իւրոյ ի մեծութեան և յարքայութեան՝ եղբարբքն հանդերձ և ամենայն ընտանեօք:

Եւ մինչ յայսմ ուրախութեան էին և բերկրէին ի միմեանց բարեկեցութենէ, և ի չինութեան էին և ուրախ էին առ հասարակ ամենայն սիրելիք, հեռաւորք և մերձաւորք, պէտք և իշխանք և ամենայն քրիստոնեայք և վանօրայք և կրօնաւորք որ ընդ իշխանութեամբ սոցա էին, ապա մեզատէրն և բարիատացն սատանայ նախանձեալ ընդ բարի կեանս նոցա, մտեալ յիւր սիրելին... յարուցանէ

1. Ծանօթ եղբայր երկու կաթողիկոսացն Գրիգորիսի և Կերսիսի, զօրավարութեամբ պատուեալ ի կայսերաց Յունաց:

2. Սովորաբար Վանենի կոչուի:

3. Վերին Հայոց և վրաց մէջ այլ շատ ընդունելի էր այս իգական անունս, իբրեւ համառօտութիւն Կատարանեթայ կամ Կատարինեայ:

4. Այս Կատայի համար կամ ի յիշատակ նորա՝ մայրն զրել տուեր է այս արդարեւ յիշատակաց արժանի Աւետարանը:

1. Կարծեցընէ զԿատակալոս Քեքաւմենոս (Այրած մականուանեալն, յորմէ Կաւին?) յոյն զօրավարն, զոր Մանուէլ կայսրն՝ Գր. Մագիստրոսի հետ խաւրեց ի Հայս, իբր յամի 1051, և թէ նա խնամեցած ըլլայ ընդ Հայոց և անկէ ծագած Շահինշահ փեսային վիգենի:

2. Թարեւցւոյ Աչխարհագրութենէն դուրս՝ հազիւ անգամ մի յիշուած է այս Դ Հայոց գաւառս, յորում եր անուանի բերդն Անդղ. իսկ հօս յիշուած Պաղուկ ամրոցն՝ աչ ընտ. այլ հաւանօրէն սա եր քնավայր կամ հայրենիք Սղխունեաց ցեղին. որոց՝ Տարօնոյ աստմանակից ըլլալն յայտնի եր:

3. Այս անունն այլ նշանակ թագաւորական, իբր Արքայարդի:

պատերազմ ի վերայ տանն Վիգենայ. այլ ի զօրութենէն Աստուծոյ յայնապէս պատերազմաւ ոչ ինչ կարացին սանանել նմա, այլ գաղտնագողի իբրեւ զօձ սողեալ մտին և աւերեցին տեղիս տեղիս ի գաւառաց նորա, և գերեցին բազումս ի քրիստոնէից: Եւ այն էր սկիզբն թանձրամած սգոյն զոր ունէցաք էր զմեզ և զնոսա և զամենայն քրիստոնեայսքս, և զամենայն սիրելիս, զհեռաւորս և զմերձաւորս: Զի հուպ ընդ հուպ կարճ ի կարճոյ ի նմին ամիս՝ յաւուրս պահոց քառասնորդացն, ի հինգերորդում չարաթօղն, զկնի տոնի Սրբոց Գաւառանիցն, ըստ սաստուածակոչ հրամանին՝ հասանէր վախճան երանելւոյն Զօրտուանէլի՝ ի տիս երիտասարդութեան, թողեալ չառաւիղ աղգի զլուսածագղիկ զաւակն իւր և մխիթարանք ծնողաց իւրոց, և ինքն փոխի ի Քրիստոս, առ որ անձկացեալն էր: Բայց զաղէտս տարակարծ դիպուածոյն և զիրս անբաւ կածոյն որ եղեն յայնժամ, զոր գործեցին հայակոյտ բազմութիւն ազատացն, ծառայից և աղախնեայց և տիկնանց ազատաց, և գաւառաց գաւառաց՝ ընդ խուռն եկելոց ի կած լալեաց, և զողբս հօրն և մօրն և ամուսնոյ նորա, ոչ կարեմք զգրով արկանել: Բայց ի նմին ժամու ժողովեալ բազմութիւն քահանայից և կրօնաւորաց և վարդապետաց, զսպեալ զգեղեցիկ մարմին նորա պայծառ և պատուական հանդերձիւք, և բարձեալ տարան ի հայրենի տապանատունն իւրեանց, յոխտին որ կոչի Վանադիր[1], ի դուռն սրբոյ կաթուղիկէին զոր շինեաց իւր երանելի հայրն Վիգէն՝ իննսնորանեան, և փոխեն զնա ի հանգիստ, սաղմոսիւք և արհնութեամբ և երգօք հոգեւորօք, և փառաւորեալ արձակեցին զժողովուրդն: Գործեցաւ այս ի Հայոց թուականիս ի ՈԺԴ (1165):

1. Վանադիր գրութեամբ կարծեմ յիշուած է հեղմի, բայց զիրքն անծանօթ, և փափաքելի գոնէ աւերակացն յայտնուելոյս, վասն զի հնինխորանեան կոչմամբն գուշակութ մեծ կամ չքեղ:

Եւ մինչ յայսմ տրտմութեան էին և սակաւ մի զանձինս իւրեանց մխիթարել կամելով գեղեցիկ մանկամբն իւրեանց Վասակաւ և որդւովքն Զօրտուանէլի, ապա յանկարծակի յետ ամի միոյ անցելոյ զկնի մահուան Զօրտուանէլին, հասանէր նոցա տրտմութիւն ի վերայ տրտմութեան. զի քրիստասասէրն և բարեպաշտուհի գուստրն իւրեանց Կատայն, մինչդեռ յուրախութեան էր և ի մեծութեան ինքն և ցանկալի տէր իւր Շահինշահն, և համակեալ էին ի սէր իրերաց և բերկրէին ի միմեանց տեսլենէ, և զուարճանային ընդ տեսիլ զաւակի իւրեանց, և ոչ էր լուեալ զմահ եղբօրն և զարհամարհութիւն ծնողաց, և ակն ունէր բազում ժամանակս վայելել զկեանս աշխարհիս, և ծնանել ուստերս և գստերս. ապա եղեւ նորա ժամանակ ծնանելոյ՝ ունելով յորովայնին մանկունս երկուս. եկին հասին երկունք ծննդեանն, ըստ տէրունեան հրամանին՝ որ ասաց ցնախահայրն, թէ, Տրտմութեամբ ծնցիս որդիս. և ի կենսաբեր Ս. Աւետարանին ասէ. «Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա». և առիպեալ երկանցն՝ զկնի ճեպէին երկունք մահուն[1]. և ի մեկնել մանկանցն՝ եկն եհաս օրհասն մահու, և ուրախութեամբ փչեալ զոգին՝ վերծեալ ի պատրանաց աշխարհիս և ի զբաղմանց սորա, փութացեալ առ նաւահանգիստն Քրիստոս: Եւ անդ ի ր տեսանել զաղէտս անբաւ տարակուսանացն և զողբս անհնարինս, զկականաւն պատուական և ազատ կանանց, զաղիողորմ արտասուս աղայոցն, զհառաչանս սիրելեացն, զաշխարանս բարեկամացն. զի ամենեքեան մինչդեռ յուրախութեան և ի հանգերձս հարսանեաց համակեալք էին, վաղվաղակի սգոյ

1. Սխալի կամ սխալի զուգութիւն. երկունք ծննդեան և յաւսոյ և երկունք մահու և սգոյ. առկայն երանելի է Կատայն՝ որ ոչ ախտաւորեալ աւանդեր է վերջին չունչը:

հանդերձս զգեցեալ ի թխութիւն զառնային. և այսպիսի կոծով երանելի և սիրեցեալ առնն՝ ըզվախճան նորա սպացեալ՝ զի ի մատաղ հասակի հրաժարեաց ի նմանէ, և սուղ ինչ ժամանակս բերկրեցան ի միմեանց տեսլենէ, և կարճակատար եղեւ սէր նոցա, փոխի յաշխարհէս ի հանդերձեալն առ Քրիստոս, յանվախճան ուրախութիւնան։

Ապա առեալ զպատուական մարմինն պատեալ պայծառ հանդերձիւք եդեալ ի տապանի, և բարձեալ դասուք քահանայից և բազմամբոխ ժողովրդովք՝ տարեալ յիւր սեփական վանն որ կոչի Ս. Փրկիչ[1], յորում բնակեալ են կրօնաւորք միաբանակեացք հրեշտակակրօնք, սուրբք և ընտրեալք, փառեն զնա ի հանգիստ՝ սաղմոսիւք և աւրհնութեամբ և երգօք հոգեւորօք. և կնքեալ զգերեզմանն և մեծարեալ զօր հանգստեան նորա՝ արձակեալ զժողովուրդս գնացին ի տունս իւրեանց։

Այսոցիկ այսպէս եղելոց, լուեալ ապա երանելի ծնողացն զվախճան դստերն, յանհնարին սուգ տրտմութեան ընկղմեցան, և նորոգեցին զկեղեքումն առաջին վիրացն և յայրումն ի վերայ այրման. և մոռացան զառաջին սուգն՝ զսորայս խիստ համալրելով. զի 'հեռատեսութեան եղեւ վախճան նորա, և ոչ տեսին զմահ նորա. և բազում աւուրս սպասեալ գնա, ապա զյոյսն Քրիստոսի առաջի աչաց եղեալ՝ զմխիթարիչն ամենայն սգալուրաց, գոհութիւն Աստուծոյ մատուցեալ՝ որ եւս գնոսա և դարձեալ կամեցաւ առնուլ գնոսա։ Զոր տէր Քրիստոս մխիթարեսցէ գնոսա մխիթարիչ Ս. Հոգւովն, հանդերձեալ միացեալ զաւակաքն, անտրտունս ուրախութեամբ, և հաստատուն պահեսցէ զերկրութիւն նոցա և յաղթող ի վերայ թշնամեաց, ազգաց յազգս մինչեւ ցյաւիտեան։

Իսկ ապա քրիստոսասէրն և բարեպաշտ թագուհի

1. Անծանօթ և այս վանք, որոյ անուամբ կանայլեւայլ դասառաց մէջ։

մայր գեղեցիկ աստուածասէր Կատային, բարի խորհուրդ դնտաւ ածել, զպակասումն զաւակին լնուլ կամեցեալ և զորմութիւնն յուրախութիւն փոխեցեալ, նմանեալ առն վաճառականի որ խընդրիցէ զպատուական մարգարիտն՝ զոր Տէրն յԱւետարանին առակեաց. ելեալ ի խնդիր այսմ լուսաւոր մարգարտի, որ ոչ ինչ յեղելոցս փոխանակի ընդ սմա՝ ատացաւ զսա, նիւթականաւքս զանանց մեծութիւնս ատացեալ, և յիշատակ դասեր իւրոյ՝ ի տեղի նորա կացուցեալ. իբրեւ այն թէ զնա կենդանի տեսանելով, յորժամ զսա տեսանիցեն և ընթեռնուցուն։ Ապա հրաման ետ ատորագրել զսա՝ Աբրահակիսի[1] յաքնամեղ անուն կրօնաւորի անիմաստ և փցուն գրչի. և գրեցաւ Ս. Աւետարանս ի լերինս Տաւրոսի, ի սահմանս Սասնոյ, յուխտիս որ կոչի Միջնադիւր[2]. որ է ի մէջ... ից քաղցրահամ ջուրց ընդ հովանեաւ Ս. փրկչիս, և Սրբոյ Աստուածածնին, յառաջնորդութեան Տէառն Յոհաննուի եպիսկոպոսի, զոր Տէր աւրհնեսցէ և պահպանեսցէ ընդ երկայն աւուրս... նա էր հոգացեալ։ Եւ ետ զՍ. Աւետա-

1. Այսպէս գեղեցիկ չարագրողն՝ հաւանօրէն գեղեցիկ տառերով այլ գրած է այս պատուական Աւետարանը։ Կըընայինք երազել թէ ինքն իսկ ըլլար հռչակաւոր Հեղինակն Աբռհամի գրուածին, որ ըստ ամենց էր այս ժի դարուն. Սրբազնագոյն վարդապետն Յովհաննէս չէ գրած Աւետարանիս գրին կամ զարդուց և թղթին վրայօք, այլ ուրիշ հեռագրգռելի յիշատակ մի. գրոց վերջին երեսին վրայ նկարուած է, կ'ըսէ, Կատային իր պատանեաց մէջ, քանի այլ իր նըրածին խեղճիկն (երկուսըմակը), և վրան հին տառերով գրուած քանի մի տող, զոր օրինակեմք յետ այս երկար Յիշատակարանիս։

2. Գուցէ Յովհ ըլլայ հիմայ այս տեղս կամ գեղս, զի գրոցս թուականէն քառասուն տարի մի յետոյ յիշուի Միջնադերքի Յովհաննէս քահանայ մի Տարօնոյ Ղազարու վանաց մատենագիր։

բանս ի Ս. Փրկիչն, յորում է գերեզման դստեր իւրոյ, ի յիշատակ նորա և պայծառութիւն տօնից տէրունականաց, և ի զուարճութիւն մանկանց եկեղեցւոյ, ընթեռնուով յաւուրս տօնից և զատկաց և ի ժամ պատարագելոյ մեզաքաւիչ և կենարար մարմնոյ և արեան Քրիստոսի:

Աղդ, ո՛վ դասք սրբոց, պարք երկնագումարք, հրեշտակք բանաւորք, տաճարք Երրորդութեան, որդիք վերին Սիոնի. աղաչեմ զձեզ Ս. Աւետարանս, զոր յորժամ ընթեռնուք զՍուրբ Աւետարանս և լուսաւորիք, յիշեսջիք ի մաքրարիալ աղօթս ձեր, զաստուածասէր թագուհին զԿատայն, և զեբանելի եղբայր իւր Զաքարեանէն, և զմայր իւր և զծնողս նորա. զի աղօթիւք ձերով և աւետարանիս չնորհիւ՝ յորժամ գայցէ Տէր փառօք Հօր յաւհագին աւուրն և ամենայն սուրբք ընդ նմա, պսակել և փառաւորել զսուրբս, յայնժամ յանուանէ կոչեսցէ զնոսա, թէ, « Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ արքայութիւնն» . և ընդ ամակոզմեանսն գասեսցէ ընդ սուրբս իւր ի հայրենի փառսն, յանեզրական ուրախութիւնսն: Եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

[1] Ծրագրութիւն պատկերիս այս է յանուն Կատային դստեր Վիգենայ, որ ի ծնունդն վախճանեցաւ ի տիս մանկութեան, և եթող սուգ անհնարին մօր իւրում. որում ողորմեսցի Տէր յիւրում գալստեանն. ամէն:

1. Ա.յս է նախընթաց ծանօթութեան մէջ յիշեալ պատկերին յիշատակարանն:

ՄՂԴ

ԶՈՐՏՈՒԱՆԷԼ,

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԻՇԽԱՆ ՏԱՐՕՆՈՑ[1]

Ա.յս մեր բարձր հրամանաց է գիր և մեծի տէրութեան իշխանի Տարօնոյ և ամենայն Հայոց. Զորտոռանելի՝ որդւոյ Տաճատայ քաջի Մամիկոնոյ. Քանզի ես Զորտուանէլ բազում աւուրց լեալ տիրեալ հայրենի աշխարհիս մերում Տարօնոյ և այլ բազում աշխարհաց, զօրավիգն ունելով զՔրիստոս և զսուրբ խաչն կենարար. և հրամանաւ ինքնակալացն Յունաց՝ ոչ զանգիտեցի ի սպառնալեաց և յարշաւանաց ազգին Իսմայելացւոց, որք յայսմ ժամանակի մարտեալ կռուին ընդ սուրբ եկեղեցիսն Աստուծոյ, և ծարաւին հեղման արեան որդւոց սուրբ աւազանին. և մեր սպասիւնեալ վերին օգնականութեան, կացեալ արիաբար ընդդէմ բազմահնար և չարաչար մարտի նոցա՝ զամենայն աւուրս կենաց իմոց մինչեւ յետին օր ծերութեանս

1. Տարօնոյ հռչակաւոր Աղաքելոց վանաց մեծ ձառընթիր գրոց մէջ անցուցած պահուի՝ այս պարզեւագիրս Զորտոռանելի. թէ որքան նշանաւոր պարզեւագրի կամ կտակի օրինակ է այս, ընթերցողք ինքնին գուշակեն, ժամանակն այլ կ'իմացընէ նոյն ճառընտրի մէջ սա համառօտ գրուածս. « Ի թուին » ՇՂԳ (553 = 1104) ձորտուանել Մամիկոնեան որդի » Տաճատայ Մամիկոնենի, իշխան գաւառին Տարօնոյ » բազում աշխատութեամբ զաւուրս բազում պարա- » պեալ, յաղողութեամբ Աստուծոյ ի գլուխ եհան »: Սակայն քննելի է այս յիշատակս, զոր Արեւելք լրագիրն իր 1114 թիւրիւն մէջ հրատարակած է, միայն թէ այդ մեծ գիրքն ապրած ըլլայ այս վերջի տարիներուս այրեցաւերութենէն, և վախնալու է կոբուտան, ըստ գրութեան Անահիտ ամսագրի, Ա, 66:

իմ, ոչ եղեւ խաղաղութիւն իմ ընդ նոսա. և զա-
մենայն աշխարհն որ ընդ մեր ձեռամբ էր՝ ի խա-
ղաղութեան պահել: Ապա զմտաւ ածի զօր մա-
հուան իմոյ և գյեաին ելս իմ յաշխարհէս. գնացի
ի սուրբ ուխտ Աւաքելոյն Ղազարոս վանաց՝ առ
Ծերունի և մեծ հեռաւորն Հայոց Պողոս, խնդրեցի
ինձ գերեզման ի դուռն սուրբ ուխտին. խոստո-
վանելով նմա զչարաչար յանցանս իմ, աղերսել ի
նմանէ չնորհել ինձ թողութիւն և լուծումն ի կա-
պանաց մեզաց: Իսկ նա որպէս զհայր գթած զո-
րովեաց զիս և մխիթարեաց զվշտացեալ հոգիս իմ՝
կանգնելով զիս վերստին ի գլխմանէ, և չնորհեաց
ինձ զհայցուածս իմ զօր խնդրեցի, տեղի գերեզ-
մանի մարմնոյս իմոյ. զի յետ ելից իմոց յաշխար-
հէս՝ անդ հանդուցից զծանրացեալ մեղօք մարմինս
իմ, ի դուռն Սուրբ Աւաքելոցն. վասն որոյ և ես
Զորտուանէզ զուարթ դիմօք և յօժարական կամօք
և սրտի մտօք աւանդեցի և եռաւ զսա....[1].. դաս-
տակերաս զհայրենի..... ձև և բազում.... (ջա)
զացանէն և բուրաստանօք և այգեստանօք. այս սի-
նաւառովս[2]. Աբեւելեանն՝ ընդ Մդաւնիք սպիտաբերն.
և իջանէ ի Տանձի–ձորն՝ կարմիր փոսովն ի վայր,
մինչ ի Ամառաւն, և երթայ Ամասին ուր խաչն է
Դաւթին, և անտի ի Սեղնքարն, և անտի յՄակե-
ծաւրին[3] կուռնտ խաչն, և երթայ ի Անձնին՝[4] վերեւ
Նորչիի գերեզմանացն. և արեւմտեանն Զորն Աւա-
զաց, և հարաւայինն՝ խաչն Գռնտորին[5] դաշտն. և

1. Աւերուած մաշած են կիսանիշ տեղիքն:
2. Զոր կոչմի սահմաններն, որոց մէջ կան քանի
մի ծանօթ տեղւանք բայց ոչ ամենքն, զոր մեզ
դժուար է ճանչնալ և ճանչցընել:
3. Մակեծաւրն խուռ սիկին մի, որ՝ կամ որոյ հա-
մար խաչ մի կանգներ է:
4. Պաղոյ ծառեր. թուրք. իւղկ. փռ. Sorbe.
5. Թուրի Գամ գիւղի տիրոջ:

ի ձորի անդ զՁերւաջոտրն չաղացքն երկուականեան[1].
Ճնացական հայրենիս[2] Սուրբ Աւաքելոցն Ղազա-
րու վանիցն, ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց,
Տաճատա Մամիկոնոյ և մօրն իմոյ Զարւանդիտոյ,
և նախնեաց իմոց զալ արանցն Վահանա և Մհերա,
որք յառաջ քան զմեզ տիրէին այսմ աշխարհիս:
Քանզի այս Բերդակ գեղս տեղիք էին զուարճա-
նալոյ բուսօք և մրգօք անուշիւք՝ նախնեաց իմոց
իշխանաց Մամիկոնէից, և մայրն իմ Զարմանդուխտ ի նոյն գեղի էր երկնել զիս յաշխարհ, և
էր տեղիք ծննդեան իմոյ. թէպէտ և բազում տե-
ղեաց ունէաք զիշխանութիւն, այլ սեպհական զայս
համարեցաք զտեղի ծննդեան իմոյ՝ տալ զին մե-
զաց իմոց, և հոգ փոխանակ հոգոյ ծածկել զհո-
գւոյին մարմինս իմ. զի որով ծնայ ի յայս գեղ
Բերդակ մարմնով մահկանացու, դարձեալ լիցի սա
ի պատճառ վերստին ծննդեան իմում ի կեանս
անմահականս. վասն այնր՝ սեպհականեցի զսա ընդ
իմ՝ լինել կենդանի ծառայ և սատարիչ սուրբ տե-
ղեացն, մինչեւ յաւիտեան, սակս թաւշակի միանձ-
նաւորաց և այլոց երթեւեկաց: Զսա եգի ինձ վար-
չամակ սեղանոյ, չնչել սուաւ զպղիր թարախ մե-
զաց իմոց, չնորհօք յուսոյն որ ի Քրիստոս: Նոյն-
պէս և յարդար սատցուածոց՝ լուծս վեցից՝ որ են
եղինս երկուասանս, և երիս կիսագրաստս[3], և
մաքիս եզնի[4] ի նոյն հանդուստարան[5] Սրբոցն Աւա-
քելոցն, ի սպաս պիտոյից հիւրատանն:

Դարձեալ ազաչեմ զամենեսեան ես Զորտուանէզ

1. Երկու քերան կամ ծորակ ունեցող ազբիւր ջրոյ
կամ չաղացք:
2. Յիշեալ տեղեաց բովանդակ միջոցը կու տայ
Առաքելոց վանաց, որ միշտ մնայ անոր:
3. Ջորիներ:
4. Չինգ հարիւր գառն կամ ոչխար:
5. Հանգստարան գրուած էր:

իշխան տանս Տարաւնոյ և ամենայն Հայոց[1], որք սիրէք յաթոռ և յիշխանութիւնս մեր՝ թէ ի մեռոց զարմից էք և թէ յայլոց, թէ քրիստոնեայ էք ազգաւ և թէ այլազգիք, նոյն պաշտօնեայք էք Տեառն Աստուծոյ մեծին. Որք կարդայք և լսէք և զգիրս գայս տեսանէք, մի վարկպարագի ընդ ոտն հարկանէք և ընդ վայր համարիք և ունայն գնչանագիրս և զաղաչանս՝ որք վասն այս գեղիս որ ի գրիս է նուիրած Աստուծոյ և Սուրբ Առաքելոցն, ի գինս մեզաց իմոց. զի ի բազում ստացուածոց մերոց զոր ունէաք գանձս բազումս և այլ քաղաքս, գեղք և ագարակս և բազում մեծութիւնս, զարդս և հանդերձս պատուականս, զայս գեղս միայն իմ առեալ ինձ յոյս կենաց աշխարհիս՝ ի թաւչակ հոգւոյ իմոյ այնմ աշխարհին, և զայլ բազում մեծութիւնս և գիշխանութիւնս թողեալ եմ իմոցդ և այլոց, որք սիրէք յաթոռ մեր և ի տեղի: Եւ ես յաշխարհէս գատարկ և մերկ և ունայն կու գնամ. զի որք կարդան և լսեն ի սմանէ՝ ընդունին և հաստատ պահեն զաւանդութիւնս ի մէնջ, նոքա հաստատին ի վերատին յոյս անմահին Աստուծոյ, ժառանգեն զկեանս անվախճան, վայելելով զանանց բարութիւն արքայութեան, զարդարեալ պսակին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ընդ սրբոց առաքելոցն և մարգարէիցն: Այս եթէ ոք գիշխանաց և ի բռնակալաց ոք իցէ և սիրեսցէ այսմ աշխարհիս մերում, և կարդասցէ զվերոյիշեալս ի մէնջ և չընդունին և ընդ վայր հարկանեն զգիր աղաչանաց մերոց, և չանան կտրել զսա կամ ի բաց հանել զգեղս գայս ի Սուրբ Առաքելոցն՝ զոր ոչ հրամայեցաք, կորէ գնոսա Աստուած ընդ մէջ, և մանն նոցա ընդ անհաւատսն դիցէ, ընդ ուրացողսն և ընդ կողոպտիչս Սրբոց. և յահագին աւուր դատաստանին ընդ ամենայն մեզաց տոհմի իմում՝

1. Ամենայն Հայոց՝ չատ է. բայց եթէ այն կողմի Յունաց կայսերաց հպատակ Հայքն իմացուսին:

ինքեանք տացեն պատասխանի, և մերկ թափուր ձեռն գիւրեանց բարի գործոցն, վճարեն յանչէջ հուրն և ի տարտարոս ստոնամանիս, ուր լալ աչաց է և կրճել ատամանց:

Բայց աղաչեմ զամենեսեան՝ չկողոպտել զմեր սակաւ ստացս՝ (զոր) ի մեր բազում մեծութենէս բարձաք, և երկնաւորին նուիրեցաք ի թօշակս տալոց ոգւոց մերոց. և մի զայս փոքրիկ նուէրս չարակնեալ յափշտակէք, զի մի և դուք ի յերկնաւորին փառացն զրկեսջիք և գատապարտեսջիք ի Սուրբ Առաքելոցն. այլ լինել սմա զօրավիգն և իրաւացի՝ զի հաստատ կացցէ ամենեսին յաւէտ: Դարձեալ եթէ ոք առաջնորդ եպիսկոպոս լիցի ուխտին կամ թէ հայր վանից կամ ձեռնաւոր կրօնաւոր, և յաղագս իրի պատճառանաց[1] վերոյգրեալ գեղս ծախէ կամ գրաւէ, կամ յայգեաց կամ յանդաստանաց սորա կամ զվաղագսն երկու – ակնեան ծախեն կամ գրաւ դիցեն, լուծցին և նոքա ի ժառանգութենէ կենացն յաւիտենից. և մի լիցի նոցա մասն բարեաց ընդ Սրբոց Առաքելոցն. այլ մնաս– (ցեն) . . . . .[2]

ՄՂԵ

ԿԵՋԱՌՈՒԱՑ ՎԱՆՔ· ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋՆՈՐԴ[3]

Իղձք բաղձալեաց և սենչումն փափագանաց սիրոյ՝ բնաւորեալ են զցանկալիսն իւրեանց մոռացուցս առնել բնութեան, և անհաւանելեաց ձեռն արկանել՝ որ անդր քան զզօրութիւնս իւրեանց,

1. Պատճառանաց եր գրւած:
2. Պակսի վերջն սրով և գրութեան թուականն:
3. Յիշատակարան ընդօրինակողի Կանդ Սարգսի Մեկնութեանցն· Տես Յօդուած 286:

իբր զկերինս ձեռամբ բերել և կամ յոտս և յերկինս ճանապարհ առնել. սակայն ապչեալքն ի ցանկութեանց՝ նկրտիլ չանան: Այսպէս ես թշուառս Աստուածատուր լոկ անուամբ կրօնաւոր և անպիտան արեզոյ, ցանկացեալ սուրբ և երկնատեսից տաճիս, զոր ըստ օրինի երկնաշէն և պայծառացուցիչ ծագկանց՝ ի վիսակին հաւաքեալ է աչխատասէր և արի մշակին Տեառն համատեր և հանճարեղ խմատիւք Հոգւոյն՝ Յարգիս կոչեցեալ և կոչիդ, ժողովեալ զսուտ ի միասին, զերկոցունց գլխոց աւետարեր բանից Տեառն զմեկնութիւնս, ի բազում սրբոց վիսոեցեալն ի մի վայր գումարեալ, գՂուկասեան և գՅովհաննեան: Որում և ես տառապեալս Աստուածատուր՝ ցանկալի և ոչ զօրեղի, բայց մաքսին պարտեալ ի փափագանաց՝ սկիզբն արարի. զոր և ժառեալ լինձ և կարեկցեալ սրդի եմ անդրանիկ ըստ Հոգւոյն՝ Ադդէ, որ և նա տակաւին տակաւ դոլով մարմնով և անհմատ գրչութեան արհեստի, տակայն անուս արարեալ զամենայն դանդաղանս տկարութեան՝ ըստ սիրոյ օրինի, սկիզբն արար. իսկ ամենատես պարգեւաձիր Սուրբ Հոգին՝ որ մերձ է առ կարդացողս իւր, սգնական եղեալ և զօրութիւն պարգեւեալ, աւարտեցաւ բազում թախանձանաք և տաժանմամբ: Եւ արդ, զրեցաւ ի վանս հռչակաւոր և հրաշազան Հանդիսարանիս Կեչառուս[1], ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչիս Գրիգորի, որ և պայծառապէս ճախճացեալ ի սկզբանն՝ և դարձեալ խրթնացեալ[2] ըստ յառաքելոյ մեղաց քրիստոնէիս, զոր նորոգեաց սուրբ Հայրն Պետրոս

1. Այլբարաւոյ Նիգ կոչուած գաւառի գիւղ որ կեչորոր այլ կ'ըսուի՝ և վանք մի, ուսկից էր և Թաչատուր վարդապետ Խորնուրդ Խորիսի երգողն:

2. Այսինքն, վանքն երբեմն շատ չէն և պայծառ է եղեր, յետոյ մթընցեր է, ապա նորէն պայծառացուցեր է Պետրոս առաջնորդն, ԺԲ դարու կիսէն վերջ:

հանդերձ հարազատաւն իւրով Տեառն Յոհաննիսաւ[1]: Բայց զերանաւէտ անձին Հօր Պետրոսի օրինակ բարեաց եղեալ՝ ոմ ոք բաւականացի պատմել զառաքինութիւնս. զի որպէս ճշմարիտ է ասել, վայելել է իսկ խնամոյն Աստուծոյ այսպիսեաւ քաւարանի[2] լինել այսպիսի նորոգիչ. զի բնաւ զպատկեր կենաց առաքինութեան, մանաւանդ զհեզութեան և զխոնարհութեան, հանդերձ բնաւ առաքինութեանցն անդամօք յօրինեալ՝ արար զմարդն Աստուծոյ կատարեալ ոիսկ մաքրութեան և պատկեր առաքինութեան, ինքն առաջին առնող բարեացն մաքրափայլ բազմալոյս. զի որ զկնի նորա էաք՝ ի նա ամենեքեան նկրտեաք. և թէպէտ և անհասանելի էր այրն՝ սակայն պատճառ բարեաց հանդիսաւոր շընորհի սուրբ հոգւոյն լինէր. և այնքան՝ մինչ զի զամենեսեան զգեստաւորեալ կրկին պատմուճանօք, և ինքն զժամանակս ձմերայնոյ միով սաուեաւ՝ դաժան և դառն առատմանեաց տեւէր. և ի թախանձել եղբարցն՝ հազիւ հնով յետոյն[3] թէ յանձն առնոյր չատանալ: Իսկ վասն ակնառութեան արեան ընտանութեան և կամ կոզմնաւոր սիրոյ՝ այսպիսի էր որպէս Տէրն վկայէր, թէ իմ եղբարք և մարք՝ սոքա են որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն: Իսկ վասն արժանաւորութեան՝ որպէս կամակ և ախորժ է գայթ[4] փափկասուն արանց, այսպէս գրեալիր և սարայս բարեսնունդ հոգի առ երկրաւորս ամենայն. իսկ ազօթիւք՝ անչէզ չահից նմա նեալ էր: Իսկ օտարասիրութեամբ և հիւրընկալութեամբ՝ յաւէտ գերազանց էր, եթէ ոչ յանդգնու-

1. Սա եպիսկոպոս է, իսկ եղբայրն Պետրոս թուի սոսկ վարդապետ, բայց ըստ գովութեանն՝ արժանաւոր վկեպիկ վարդապետի մահարձանին՝ որ հօն ի կեչառուս:

2. Եկեղեցի նշանակէ:

3. Ամենեն նուաստ եղբօր հինկեկ զգեստը հագներ:

4. Թուի քայտամանեակ, վզնոց թանկագին:

թիւն է ասել՝ ըստ Աբրահամու օրինացն. ըստ Յոբայն՝ հայր սրբոց և հանգուցիչ պանդխտացելոց. ըստ Մովսեսի՝ հեզ, ըստ Դաւթի՝ ողորմած, ըստ Սողոմոնի՝ հանճարեղ քան զամենայն նմանեսն. ըստ Երեմիայի՝ գթած և ամենեցուն փարելի, և ըստ Պաւղոսի՝ ընդ ամենայնի ամենայն, մինչեւ զամենեսին չահել. ըստ Յիսուսի՝ վասն ամենեցուն չարչարեալ և բնաւից հանգուցիչ: Եւ այս փոքր ի չատէ զրեցաւ. զի բազումն ի սակաւուցն ճանաչի: Եւ արդ, զի յիշատակ արդարոցն օրհնութեամբ լի է՝ ըստ իմաստնոյն, զի որք ընթեռնուք և կամ օգտիք և ընդօրինակիք, նախ զհայր Պետրոս բարի յայտահով մեր յիշեսիք յաղօթս, և ապա զԱնդե[1] զծող և զձեռասուն մանուկ մեր, և ապա զմչուռա Աստուածատուր՝ պատրաստիչ նիւթոց, և զՔառքեալ համբակ քահանայ, զի յոլով աշխատեցաւ ի ստացուածոց գրոցս: Բայց գրեցաւ ի թուականիս Հայոց ՈԼԹ:

1. Թուի թէ պէտք էր ըլլալ զԱդդէ:

ՄԱՂԱԽ

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ ԲԺԻՇԿ[1]

Բժշկարան Մխիթարայ իմաստուն բժշկի որ ի Հեր քաղաքէ Տիւդեաստ, եւ վարժեալ իմաստութեամբն Հելլենացոց, Հայոց, Ասորւոց եւ Պարսից, օգնականեւութեամբ Աստուծոյ[2].

Եւ Մխիթար Հերացի սրտապս ի բժշկաց, որ ի մանկութենէ սիրող եղէ իմաստութեան և բժշկական արուեստից, և վարժեցայ ի դպրութիւն Աբրաքացւոց, Պարսից և Հելլենացւոց, տեսի յընթերցուածն որ առ նոսա գրացն, զի ունէին զարուեստ բժշկութեան լի և կատարելութեամբն առաջին իմաստնոցն. այսինքն, վնախագիտութիւն, որ է իմաստ վարդապետութեան բժշկական արուեստից. և ի Հայք բնաւ ոչ գտի զվարդապետութիւն և զիմաստ նախագիտութեան, այլ զԱատծուն միայն. և այս ոչ ըստ կարգի և լի, այլ համառօտ և ծաղկաքաղ ասաի և անտի հաւաքեալ, յայլեւայլ գրչաց և մտաց այլայլած: Կամեցայ ըստ իմոյ կարողութեանս առնել զգիրքս զայս՝ միայն վասն երեք ազգ Չերմանցն[3], համառօտ նախագիտութեամբն և ըստատծմամբն: Զրովանդակն որ վասն արուեստի բժշկութեանս իմաստութիւն՝ թողի, և զերեք ազգ

1. Ազգային ծանօթ գրող բժշկաց առաջինն է սա, ժամանակակից Ներս. Շնորհալւոյ. Հայրենիքն Հեր՝ չատ հեղ յիշուած Պարսկահայոց Խոյ քաղաքն է:
2. Մխիթարայ գրոց վերնագիրն է այս:
3. Չերմանց վասն գրածէն զատ ունի ուրիշ գրուածք եւս՝ գուցէ յետոյ գրած, որք դեռ չեն տպագրուած:

ՀԵՐՄԱՆՑԱ ՄԻԱՅՆ ՀԱՒԱՔԵՑԻ ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵՑԻ Ի ՀԱՅ ԲԱՌ. ՊԱՏՃԱՌ ՈՒՆԵԼՈՎ ԱՅՍՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԸՁՍԵՐ ԵՒ ԶՅՕԺԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԲՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՏԻՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ՝ ՈՐ ՄԱԿԱ-ԿՈՉԻ ՏՂԱՅ։ ԱՄ՝ ՈՐ ԷՐ ԱՌԱՔՆՈՐԴ ՅԱԹՈՌ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՀԱՅՈՑ, ԶՈՐ ՏԵԱՌ ԱՄԵՆԱՅՆԻՒ ՍԻՐՈՎ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՄՈՒԹ, ԵՒ ՅԱՂԱԳՍ ԱՅՍՐԻԿ ՅՕԺԱՐԵՑԻ Ի ԱՊԵՍ ԵՒ Ի ՅՕԳՈՒՏ ԱՌՐԱ ԱՌՆԵԼ ԶԳԻՐՔՍ ԶԱՅՍ Ի ՀՈՌՈՄ ԵՒ Ի ՅԱՐԱՊԻԿ ԵՒ Ի ՊԱՐԱՒԻԿ ԶՐԵՆԱՑ, ԸՍՏ ԻՄՈՅ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆՆ ԵՒ ՀՆՈՐՀԻ, ԶՈՐ ԵԱ ԻՆՁ ՏԷՐ, ԳԻՏՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ ԵՒ ԳՐՈՑ ՆՈՑԱ։

ԿԱՐԳԵՑԻ ԵՒ ՀԱՐԵՑԻ ԸՍՏ ՀՈՐԻՑ ՆԻՒԹՈՑ ԿԱՐԳԻ, ԶՆԱԽԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՍՏԱԾՈՒՄՆ ՆՈՐԱ ԿԱՐԳԻ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ, ՎԱՆ ԵՐԵՔ ԱԶԳ ՉԵՐՄԵՐՈՒՆ ՄԻԱՅՆ... ՆՄԱՆԱՊԷՍ ԵՒ ՄԵՔ ՀԱՐԵՑԱՔ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ԸՍՏ ԿԱՐԳԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ, ԵՒ ԱՐԱՐԱՔ ԸՁԳԻՐՔՍ ԶԱՅՍ, ԵՒ ԱՆՈՒԱՆԵՑԱՔ ՉԵՐՄԱՆՑ ՄԻԽԻԹԱՐԻՈՒ ԹԻՒՆ։ ՉԻ ԱՄ ՄԻԽԻԹԱՐԵ ԶԲԺԻՇԿՆ ՈՒՄԱՄԲ, ԻՍԿ ԶՀԻՒԱՆԴՆ՝ ԱՌՈՂՈՒԹԵԱՄԲ. ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԵՒ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲՆ ԱՐԱՐՉԱԳՈՐԾԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ։ ԵՒ ԱՐԱՐԻ ՎԱՍ ԳԵՂՈՒԿ ԵՒ ԱՐՁԱԿ ԲԱՐՐԱՌՈՎ, ԶԻ ԴԻՒՐԱՀԱՍ ԼԻՑԻ ԱՄԵՆԱՅՆ ԸՆԹԵՐՑՈՂԱՑ. ԱՌ Ի ՅԻՇԱՏԱԿԵԼ ԶՄԵՂ ԵՒ ԽՆԴՐԵԼ ԹՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ Ի ՄԱՐԴԱՍԻՐԷՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ։ ԹԱՐԳՄԱՆԵՑԱԻ ԵՒ ԳՐԵՑԱԻ ԳԻՐՔՍ ԱՅՍ ՅԱՄԻ ՀԱԶԱՐԵՐՈՐԴԻ ՀԱՐԻՒՐԵՐՈՐԴԻ ՈՒԹԱՍԱՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՍՏԵԱՆՆ, ՅՈՐՄԱՄ ԷՐ ԵՒ ԹՈՒԱԿԱՆՍՆ ՀԱՅՈՑ ՈՒԿԴ. Ի ՀԱՅՐԱՊԱՏՈՒԹԵԱՆ ԱՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՍ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ, ՈՐԴՒՈՅ ՎԱՍԱՊ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻ ՊԱՀԼԱՒՈՒՆԻՈՅ, ՈՐ ԵՒ ՊԱՏՃԱՌԱՆ Է ԳՐՈՑՍ։

ՄԱՒԼԻ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ ՎԱՐԴԱՊԵՏ

(ԿԻՐԱԿՈՍ ԳԼ. ԾԱ–Գ)

Ա. Վասն Վարդապետին Մխիթարայ՝ թէ ոչտէր էր, և կամ որպիսի ոք էր, սակաւ ինչ առդիցուք.

ՀԱՉԱԿԱՒՈՐՆ ԱՅՆ ԵՒ ՄԵԾԻՄԱՍՈՆ ԳԻՏՈՒԹԵԱՄԲ՝ ԷՐ Ի ՔԱՂԱՔԷՆ ԳԱՆՁԱԿԱՅ, ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԾՆՈՂԱՑ ԶԱԼԱԿ, ՈՐՔ ԵՏՈՒՆ ԶՆԱ ՅԱՒՍՈՒՄՆ ԳՐՈՑ ՍՐԲՈՑ. ԵՒ ԻՐԲԵՒ ԵՀԱՍ ՆԱ ՅԱՐԲՈՒՆՈՑ ՀԱՒԱԿԻՆ՝ ՁԵՌՆԱԳՐԵՑԻՆ ԶՆԱ ՔԱՀԱՆԱՅ ԿԱՒՍԱԿՐՕՆ. ԵՒ ՊԱՇՏԵԱԼ ԶՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆՆ ՅՈԼՈՎ ԱՄՆ՝ ՅԱՆԿԱՑԱՒ ՆԱ ՀՄՈՒԹ ԼԻՆԵԼ ԳՐՈՑ ՍՐԲՈՑ ԵՒ ԱՌԱԿԱՑ ԽՈՐՆՈՑ՝ ՈՐ ԿԱՆ Ի ՆՈՍԱ. ԵՒ ՀԱՆԴԻՊԵՑԱՒ ՆԱ ՅՈՎՀԱՒԻՆԻՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԱՌՈՒՆԻՑԻ ԱՆՈՒԱՆԵԼ, ՈՐ Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅԱՅՆՄԻԿ ԵՐԵՒԵԼԻ ԷՐ ԳԻՏՈՒԹԵԱՄԲ, ԶԱՌԱՋԻՆՆ ՅԱՀԽԱՐՀԱԿԱՆԱՑ ԿԵԱՆՍ ԿԱՑԵԼ ՕԱԿԱՒ ԻՆՉ, ԵՒ (ԱՅԼԻ) ՄԱՑԵԼ ՅԱՄՈՒԱՆՈՅՆ, ԿՐՕՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԵԼ, ԵՒ ՀԱՍԱՒ ԵՂԵԼ ԱՍՏՈՒԱԾԱՅՆՈՑ ԶՐՈՑ ՊԱՐԱՊԵԼ։ ԵՒ ԶԻ ԷՐ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՐՆԱԳԱՅ ՏԵՂԱՒՈՂՔ Ի ՏԵՂԻ ՀՐՆԵԼՈՎ, ՔԱՐՈԶԵԼՈՎ ԶԲԱՆՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ ԵՒ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՎ ԶԲԱՐԻ ՎԱՐՍ ՄԱՐԴԿԱՆ. ՍԱ ԲԱԶՈՒՄ ԻՐԱ ԿԱՐԴԱՒՈՐԵԱՑ ԿԱՐԴԱՑ ԵՒ ԿՐՕՆԻՑ ՔՐԻՍՏՈՆԵԻՑ. ԶԻ ԴԵՒ ՑԱՅՆ ԺԱՄԱՆԱԿՆ Ի ՏԵՂԻՍ ՏԵՂԻՍ ԼՈՒԾԱՆԵԼԻՆ ՁՆԱՐԱԹ ԵՒ ԶԿԻԲԱԿԷՆ ՍՈՒՐԲ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ ԱՂՈՒՀԱՑԻՑՆ. ՍԱ ԵԴ ՕՐԷՆ ՊԱՀՕՔ ՎՃԱՐԵԼ՝ ՈՐՊԷՍ ՊԱՅԼ ԱՒՈՒԲՍ ՉԱՐԱԹՓՈՒՆ. ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ԿԻ ՏՕՆԵՍՑՆԷՆ Ի ՉԱՐԱԹՓՈՒՆ՝ ՎԿԱՅԻՑՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ, ԵՒ Ի ԿԻՒՐԱԿԷՆ՝ ԽՈՐՀՈՒՐԴ ՅԱՐԱՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ՄԱՍՈՒՑԱՆԷՆ ՁԽՈՐՀՈՒՐԴ ՄԵՂՍԱՔԱՒԼԻՉ ՄԱՐՄՆոյ ԵՒ ԱՐԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ. ԵՒ ԱՅՍՊԷՍ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԿԱԼԱՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԵՂԻՍ, ՁՅԻՆԵՐԵԱԿ՝ ՊԱՀՕՔ ՎՃԱՐԵԼ, ՈՐ ՅԱՌԱՁՆ ԿԷՔ ՊԱՀՕՔ ՎՃԱՐԷԻՆ ԵՒ ԿԷՔ ՈՉ։

Կացեալ առ սմա Մխիթարայ և առ այլս ոմանս, էառ սա զանուն վարդապետական. և այնու ոչ չատացաւ, այլ չոգաւ յարեւմուտս կոյս յաշխարհն՝ որ կոչի Սկաւ լեառն[1], առ վարդապետան՝ որք էին ուսուցիչք անդ. և գայն ինչ ի վեր ոչ հանեալ՝ թէ իցէ նորա առեալ զայն պատիւ, այլ բազում ինչ օգտեալ ի նոցանէ՝ եկն նա ի կարնոյ քաղաք. և անդ գտանէ նա զբարեպաշտ իշխանն մեծ՝ զանուանեալն Քուրդ և հաւատոյլ քրիստոնեայ, որ ընդ այն ժամանակս անդ լինէր, սարսուցեալ ի թագաւորէն Վրաց. և եղեալ նորա ծանօթ՝ սիրեցաւ ի նմանէ իբրեւ զհայր: Եւ յետ այսորիկ գարձաւ նա յաշխարհն իւր. և ել համբաւ իմաստութեան նորա յաշխարհս, և բազումք աշակերտին նմա յուսումն վարդապետութեան. և ապա նեղեալ նա ի Տաճկաց, ի սպրդելոյ[2] կաթուղիկոսին Աղուանից Յովհաննուի, և եկեալ նա յաշխարհն Թաչենոյ առ Վաղթանկ իշխանն Հաթերդոյ և առ եղբարս նորա, որք բազում պատուով պատուեցին զնա, և անդ գտարկեալ ամս ինչ. ապա գարձ եղեւ իշխանին Քրդի ի հայրենիս իւր, գալ յաշխարհն Կաղեոյ և Մահկանաբերդոյ, և բազում մեծարանս եդ նմա թագուհին Վրաց՝ որ Թամարն կոչէր, գարձուցանելով ի նա զհայրենի տեղիսն, և այլս յոլով: Սա[3] է հայր Սադռնին:

Իսկ իբրեւ լուաւ վարդապետն Մխիթար, թէ գարձաւ իշխանն ի հայրենիսն իւր, եկն նա առ

1. Կիլիկիայ կողմերն, ուր Թուբինեանց նոր հաստատած տէրութեամբ՝ կրօնք և գիտութիւնք այլ ծաղկէին: Մխիթար չէ իմացուցեր իր վարդապետ ընտրելը, արդեօ զի իբրեւ աչկերտի համարձակ սովրեցընեն: Տես Յօդուած 292:

2. Սպրդել՝ սովորաբար դէշ խորհուրդ տալ նշանակէ, այս տեղ՝ տարակուսական է Սահփանոսի ըրածն, թէպէ բարի խորհուրդ տուր:

3. Նոյն Քուրդ իշխանն:

նա՝ զոմն առաջին սիրոյ և միաբանութեանն որ առ միմեանս, և բնակեցաւ նա ի վանքն որ կոչի Գետիկ, ի գաւառին Կայենոյ, որ ի վերայ գետոյն մեծագունի զոր անուանեն Աղստեւոյ գետ, յայմ կողմանէ գետոյն. և էր առաջնորդ վանիցն վարդապետն որ Սարկաւագ անուանիւր[1], աշակերտ Նորին. որ բազում ուրախութեամբ ընկալաւ զնա, և ինքն սպասաւորէր նմա. և անդ գտարկեալ յոլով ժամանակս: Այսպ եղեւ չարժ սաստիկ՝ որ ըստ բազում տեղիս կործանեաց[2] և տապալեաց զբարձրաբերձ շինուածս. ընդ որս և խախտեցաւ եկեղեցին Գետիկայ սաստիկ յոյժ, մինչ զի ոչ լինէր հնար վերստին նորոգել: Այսպ երկմտեալ բնակիչն կամէին ցրուիլ այսր և անդր, ոչ միայն զնա խախտելոյ եկեղեցւոյն՝ այլ զի նեղեալ էին ի մերձակայիցն. քանզի ոմն յիշխանացն Վարգիս անուն փախեաց զգիւղն իւր ի տեղւոջն իւրմէ, և բերեալ չինեաց մերձ ի վանսն՝ այլ գեղ, և այնուհետեւ բազում գժտութեամբ կային ընդ միմեանս, քանզի պարսաւադէպք էին հանապազօր:

Իսկ վարդապետն սուրբ արդել գնաց անդ ի խորհրդոյն յայնմանէ, ոչ թողուլ զմիաբանս և ցրուիլ, այլ ի միասին կեալ և խնդրել իւրեանց բնակութիւն: Այսպ չոգան միաբան առ մեծ իշխանն Իւանէ՝ եղբայր զօրավարին Վրաց Զաքարէի, որդիք քեռ բարեպաշտի իշխանին Քրդին, որ ընդ այն ժամանակս իշխէր բերդին Կայենոյ և գաւառին, և ցուցին նմա զինգիրս, զի տացէ նոցա տեղի սուրբ վանքն իւրեանց փոխանակին. և նա հրամայեաց տեսանել, թէ որ տեղի պատշաճ իցէ. և նոցա չքնեալ գտին տեղի վայելուչ և գտանէս առ ստորոտս երկուց լերանց՝ որ կայ ի գլխոյ նորա, զոր անուանեն զտեղին Տանձոհռտայ

1. Ոչ մեծանուն Սարկաւագ վարդապետն՝ որ չատանց վախճանած էր:

2. Գանձակայ մեծ ժամէն (Յօդ. 282) չատ վերջը:

ձոր[1]. և էր ի նմա գիւղ, և ձորակ մի եւս փոքրագոյն անցանէր ընդ մէջ նորա, և միւս յորդագոյն[2] յամէ կողմանէ, տեղի փայտաւէտ և ջրաւէտ. անդր համարեցան թէ պատշաճ իցէ դետեղել։

Բ. Վասն շինուրեան վանացն Նորին Գետիկայ.

Սկսաւ այնուհետեւ վարդապետն աքանչելի հանդերձ միաբանօք իւրովք՝ ձեռն ի գործ արկանել շինուածեան վանից և եկեղեցւոյ, ի վերատացեալ ձորն Տանձուտայ, հրամանաւ մեծ իշխանին Իւանէի. և շինեցին եկեղեցի մի գեղեցկաչէն փայտակերտ, և օծեալ կնքեցաւ յանուն սուրբ Լուսաւորչին Գրիգորի։ Էր ի տօնախմբութեան սուրբ եկեղեցւոյն և սուրբ վարդապետն խաչատուր Տարօնացի[3], առաջնորդ սուրբ ուխտին՝ որ կոչի Հաղարծին[4], այր սուրբ և առաքինի և գիտութեամբ հրաշակեալ, մանաւանդ երաժշտական արուեստիւ։ Սա պայծառացոյց զսուրբ ուխտն՝ որում առաջնորդէր ինքն, որ յառաջ քան զդալ նորա ամայի էր և խամրացեալ. զսա պատուէր մեծապէս թագաւորն Վրաց Գեորգի՝ հայր Թամարին. և եհ եկեղեցւոյն ձեռնադրաւ իւրով զերկու գիւղսն՝ զԱքառաձոր և զՏանձուտն, և այգի մի ի Միջնաշխին. և եդ նզովս ամենայն Սրբովք՝ զի մի ոք իշխեսցէ հանել ընդ նոսա ի վանացն։ Սա երեք գեղս[5] ի կողմանս արեւելից, զանմարմին եղանակս ի մարմին ածել, զարարեալսն իմաստնոց առաջնոց, որ ցայն ժամանակս չէր ցրուեալ ընդ աշխարհս. սա եկեալ գրեաց և ուսոյց բազմաց. և ինքն անդ հանգեաւ ի Քրիստոս, և կայ թաղեալ յարեւմտից կուսէ եկեղեցւոյն։

1. Ոչ հեռի Սեւանայ ծովուն արեւելեան կողմէն։
2. Աւելի չատ ջուր ունող ձորակ։
3. Երգողն պատարագի խորհուրդ Խորին չարաբանը, որոյ անագնաւթ տառք իր անունը կապեն։
4. Ոչ հեռի Մխիթարայ Գոշի շինած վանքէն։
5. Երգոց եղանակաց նշաններն, Notes.

Շինեցին ի նմին Գետիկ փոքրագոյն եկեղեցի մի յանուն Ս. Կարապետին Յովհաննու, ի ծնունդս կանանց մեծի և Քրիստոսի ձեռնադրողի, ի գլուխ վանիցն. և ապա սկսան հիմն արկանել մեծափառ եկեղեցւոյն կոփածոյ վիմօք և գեղեցկաչէն արուեստիւ զմբեթայարդ երկնանման, սխրալի տեսողաց, սկսեալ ի վեց հարիւր քառասուն թուին Հայոց, զկնի չորից ամաց առնլոյ զԵրուսաղէմ Սալահադինին, և կատարի յամս հինգ։... Յայսմ ամի եղեւ աւարտ հռչակաւոր և խնդատես եկեղեցւոյն Գետիկայ, զոր շինեաց վարդապետն՝ իւր միաբանօք, ձեռնընտրութեամբ Վախթանկայ Խաչենեցւոյ՝ տեառն Հաթերքոյ, և եղբարց իւրոց Գրիգորոյ և Գրիգորիսի և Խոյդանայ և Վասակայ և այլոց իշխանաց բարեպաշտաց, որոցուց Քրդին՝ Դաւթի և Սադռնեին. նա և քոյր սոցա՝ որում անուն էր Մղոռ–Խաթռուն՝ կինն Վաղթանկայ Հաթերքոյ, սա բազում ինչ յօժանդակ եղեւ. արար և վարագոյր գեղեցիկ՝ դասերովք իւրովք ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մարգոյ այծիւն կակղագունից ներկեալ, պէսպէս և զանազան գործ քանդակեալ, և նկարեալ պատկերօք ճշդրտագոյն հանուածովք՝ տնօրինականօք Փրկչին և այլ Սրբոց, որ հիացուցանէր զտեսողն, և որք տեսանէին՝ օրհնութիւն տային Աստուծոյ, որ եւս կանանց իմաստութիւն ոսկերչանկութեան և հանճար նկարակերտութեան, որպէս առ Յորն ասացաւ. ոչ ինչ ընդհատ էր ի կազմուածոյ խորանին՝ զոր արարին Բեսաղիէլ և Ելիաբ, թէ ոչ յանգգնութիւն է ասելս, զի նոյն հոգի էր զնոսա և զսոսա[1]։ Եւ ոչ միայն այս եկեղեցւոյս արար ծածկոյթ, այլ և այլոց եկեղեցեաց, Հաղբատայ և Մակարայ վանից, և Դաւթի[2] վանից. քանզի յայժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ ու-

1. Կամ ըսելի էր ի նոսա և ի սոսա, կամ բառ մի պակսի, իբր, չարժանն կամ լուսաւորեալն զնոսա։
2. Անծանօթ. գուցէ Դաւիի ըլլար. տես երես 47։

կինն. և արարին նաւակատիս եկեղեցւոյն մեծա-
պէս խմբիւք. անդ էր և եպիսկոպոսն Հաղբատայ
Յովհաննէս, առաքինի և սուրբ այր, և այլ բազ-
մութիւն քահանայից և պաշտօնէից. և օծեալ
կնքեցաւ եկեղեցին յանուն Սրբոյ Աստուածածնին:
Շինեցին և գաւիթ եկեղեցւոյն գեղեցկազարդ և
կոփածոյ վիմօք. և յոլովք ձեռնտու եղեն. մեծ
զօրավարն Զաքարէ և եղբայր իւր Իւանէ, քանզի
նոքա ունէին պիշխանութիւն գաւառին, և յոյժ
սիրէին զվարդապետն. քանզի Զաքարէ՝ խոստո-
վանութեամբ նորա հոգեւոր որդի էր. և ընծայե-
ցին եկեղեցւոյն սահման չորգարձիւք՝ լեռնէ ի
լեառն, և բով մի յԱքաւաձոր, և զՂորոյ ձոր[1] ի
նահանգին Բջնոյ[2], և զՕշակա ի գլուխ վանացն:
Եւ չինեցին ինքեանք գիւղ մի մերձ ի ծովակն փո-
քրագոյն՝ անհնարին խորութեամբ, և անուանեցին
զգիւղն յանուն ծովակին՝ Ցզրկածով, քանզի բա-
զում մօրաւէր և ազմաւէր սոզուանք կային. և այլ
միւս եւս փոքրագոյն գիւղ ի ներքոյ վանիցն՝ զոր
Ոսկեվանիկ[3] անուանեցին. չինեցին և այլ մատուռն
յանուն Սրբոց Աւաքելոց և Սրբոյն Հռիփսիմեայ:

Եւ ինքն քանզի սիրէր զանապատ և զամայու-
թիւն, արար իւր տուն բնակութեան բացագոյն ի
վանացն. չինեաց և անդ փոքրագոյն եկեղեցի մի
փայտակերտ յանուն Սուրբ Հոգւոյն. և ի ժամա-
նակի ծերութեանն՝ ի գլուխ վանիցն յաղմկ կոզ-
մանէ չինեաց եկեղեցի մի չիրիմ գերեզմանի իւ-
րոյ, կրօվ և վիմօք մածուցեալ սրբագործ, յանուն
Համբարձմանն Քրիստոսի:

1. Կան օրինակք որ Ճորաձոր գրեն:
2. Ինիկ Աբուրաատայ գաւառին մէջ, որ երբեմն Գր. Մագիստրոսի նախնեաց ժառանգութիւն էր:
3. Ուրիշ օրինակի մէջ գրուած է Ոսկեվանիջ, որ թերեւս լաւագոյն է, վի բան մի նշանակէ, իբրեւ թէ ուռած կաթսք:

Գ. Թէ ոյք էին երեւելիք յաշակերտս նորա.

Բազումք էին որք աշակերտեցան ի նմանէ՝ վար-
դապետական բանիւ. քանզի համբաւ իմաստու-
թեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, և
գային առ նա յամենայն կողմանց. քանզի ըստ
անուան իւրոյ մխիթարէր զամենեսեան. քանզի էր
նա մխիթարական որպէս Բառնաբաս[1], և նշանա-
ւոր ի մէջ ժողովրդեան՝ որպէս Պետրոս[2]. և բանք
նորա արդիւնականք և լի շնորհօք, և ամենայն ոք
փափագէր տեսանել զնա և լսել ի նմանէ: Վասն
այսպիսի համբաւոյ բազումք որ էին ի կարգի վար-
դապետ[3] ծածկէին զինքեանս, և գային ի կարգի
աշակերտաց կալով՝ ուսանէին ի նմանէ, և առ-
նուին վերատին հրամանս. և բազումք յաշակերտաց
նորա հասին ի պատիւ վարդապետական: Բայց
երկուք ամանք ի նոցանէ՝ որք իմաստնագոյնք էին
քան զայլսն՝ որք կարող էին և զայլս օգտեցուցա-
նել. առաջնոյն Թորոս անուն՝ ի սահմանացն Մե-
ղիտինոյ Հայոց, հայր նորա հայկական և մայրն
ասորի. այր հեզ և խոնարհ, առաքինի և աղքատա-
սեր յոյժ, ասպնջական օտարաց և առատ ի տուրս,
որ զժամանակս կենաց իւրոց բարեպաշտ վարեալ
և ի ծերութիւն պարարտութեան՝ յաւելուա առ
հարսն իւր, և կայ թաղեալ ի հռչակաւոր վանքն
Հաղբատ, ի գլուխ վանացն, ի գերեզմանս եպիս-
կոպոսացն և վարդապետացն, որպ յիշատակն օրհ-
նութեամբ եղիցի, և աղօթք նորա պարիսպ հաւա-
տացելոց: Եւ երկրորդին՝ Վանական[3] անուն, այր

1. Առաքեալն, զոր ձակիցն Պօղոսի, ըստ վկայու-
թեան Գործոց Առաքելոց, Գլ. ԺԱ. 24:
2. Ս. Հայրն Անտոն Անապատական:
3. Կամ ի կարգի վարդապետաց:
4. Որոյ աշակերտ եղեալ պատմիչս Կիրակոս, և յե-
տոյ գրեց անոր վարքն այլ, ինչպէս պիտի տեսնուի
և ի կարգի այս մեր գրոցս:

սուրբ և պարկեշտ և յամենայն գործս բարիս յաւաջադէմ, ողջախոհ և զգաստ յամենայնի, և վարդապետական բանիւ քան զամենայն որ ի ժամանակին էին գերազանցեալ, ծննդական մօտք և յարմար բանիւք. վասն որոյ բազումք զեզերէին առնա՝ ուսման աղագաւ, ոչ միայն վարդապետական բանի՝ այլ ամենայն կեանք նորա և չարժուճն անդիր օրէնք էին տեառդացն. և զայս ոչ եթէ ականջալուր միայն ասեմ այլ և ականատես. զի բազում ժամանակս կացաք առ նմա ի վարժս կրթութեան, ի սահմանս Տաւուշ բերդոյ, յանապատի անդ՝ զոր ստացաւ իւր բնակութիւն, և աղբիւրաբար արբուցանէր ամենեցուն զբան վարդապետական:

Գ. Վասն վախճանի մեծ վարդապետին Մխիթարայ՝ որ Գոշն կոչի.

Սա երանելիս զոր վերագոյն ասացաք՝ զընթացսն կատարեալ և զհաւատոն պահեալ, եհաս ի խորին ծերութիւն. և իրրեւ հասեալ նա թէ ակաբացաւ յամենայն զօրութենէ մարմնոյն, և հանդերձեալ է այնուհետեւ յաւելուլ առ հարս իւր, կոչեաց նա զբնակիչս ուխտին վանացն Նոր Գետակայ, որ ընդ նմա ժուժկալեալ էին յամենայն աշխատութիւնս վանից և եկեղեցւոյն. օրհնեաց զնոսա և զաշակերտս իւրեանց՝ յանուն Տեառն. և զմի ոմն ի նոցանէ ընտրեալ Մարտիրոս անուն, որ աշակերտեալ էր նմա և ընտանի էր նմա՝ կացոյց զնա առաջնորդ նոցա, մանուկ ախոռք բայց կատարեալ իմաստութեամբ, այր քաղցրաձայն յերգս պաշտաման և առատամիտ յընթերցման, և արագ ի գրչութիւն. նմա հրամայեաց իչխել նոցա. և գրեաց կտակ առ մեծ հայգարապետն Իւանէ՝ եղբայր Զաքարէի, և յանձնեաց ի նա զվանս և զառաջնորդն. և ինքն փոխեցաւ յաստեացս առ Քրիստոս, ալեւորեալ և լի աւուրբք: Եւ վերակացու վանացն Մարտիրոս հանդերձ միաբանօք՝ գե-

զեցկապէս յարմարեաց զպատշաճս թաղման նորա, հոգեկան և մարմնական պիտոյիւք. և տարեալ հանդուցին զնա առաջի գրան եկեղեցւոյն միաբանիւն, որ կայ ի գլուխ վանացն՝ յարեւմտից կողմանէ վանացն. և մինչեւ ցայսօր գերեզման նորա սգնէ ցաւագնելոցն սրբ հաւատով ապաւինին յաղօթս նորա. և զհող տեզոյն հանապազ տանին ի պէտս հիւանդաց՝ մարդոյ և անասնոյ. զի Աստուած ըզփառաւորիչս իւր փառաւորէ՝ կենդանութեամբ և մահուամբ:

Դէպ եղեւ երբեմն զի պաշտօնեայք նորա գային գրաստիւք բարձեալ գինի ի պէտս վանացն. վրացի ոմն Բասիլիա անուն՝ եկեալ բռնութեամբ կամէր առնուլ ի նոցանէ ի գինւոյ անտի, զի գործակալ էր նա Իւանէի ի վերայ մայրացն, որ պահէր զտեղի իչխանի նորա. և պաշտօնեայքն ասէին, Մի՛ նեղեր զմեզ, քանզի Գոշին համ. զի այսպէս կոչէին զնա մականունամբ, զի հեզգազգոյն եկին ալիք նորա: Իսկ թշուառականն հայհոյեաց զնոսա և ըզԳոշն. և իրրեւ եկն յայն տեղի որ յիշէր զանուն նորա անարգանօք, անդէն վաղվաղակի համրացաւ և կապեցաւ լեզու նորա, և թիւրեցան չրթունք նորա. և այսպէս եկաց բազում ամս, մինչեւ հաւաչանօք խնդրեաց զթողութիւն, և ամենայն որ տեսանէր զայրն՝ գովէին զծառայն Աստուծոյ:

Եւ եթող նա յարձան և յիշատակ գերեզմանի՝ գիրս իմաստասիրս՝ յօգուտ իմաստասիրաց, հատուած[1] մարգարէութեանն Երեմիայի՝ գեղեցկագիր կարգօք, և սուղ ինչ կաւնոնս վասն սպասուսարկելոյ մարմնոյ և արեան Տեառն. թէ արդեօք պատշաճ իցէ, կամ օրպիսի կարգօք. և գիրք մի Ողբ ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա, և ի դիմաց Եւայի՝ առ դստերս նորա[2]. և

1. Այսինքն, Համառօտ մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի:

2. Հետաքրքրական գրուածք, որ մեզի հասած չէ:

գերք մի Յայտարարութիւն ուղղափառ հաւատոյ՝ ընդդէմ ամենայն հերձուածոց, ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ. և այլ Թուղթս խրատականս: Եւ եղեւ վախճան նորա ի վեց հարիւր փանսուն և երկու Թուին (1213):

ՄՂԸ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ԻՒՐ[1]

Եթէ յումմէ յորդորեալ եկաք ի գրել. ի բազում ժամանակաց հետէ տարակուսեալ յաղագս սորին լինէի, խոցոտելով ի նախատելն զմեզ[2] մերոց և օտարաց ազգաց. սակայն վստահիլ ի սոյն ոչ իշխէի, գիտելով զանձին տկարութիւն. յաղագս որոյ զվարանեն ի գրուցասարելն մեր՝ լուսաւ եղբայրն Պաւղոս, սիրելի աշակերտն աստուածային գրոց, և խոստովան եղեւ փափագող այնմիկ լինել: Ա՛սաւել եւս սկսաւ չարժել զմեզ հարկաւորութիւնք բանիւք. Նա և ոչ այնու ձեռնամուխ լինել կամեցաք. այլ խորհէի զայլս ազաչել գօրաւորս, որք կարող էին զհարկ վճարել բանին, զի բազումք իսկ էին: Բայց զի զանբնդունելութիւն ազգիս գիտէի պատճառել[3], և այնու ոչ կամեցայ զոք առ այս ազերսել. լռեցի ապա այնուհետեւ և եմ: Եւ զարմացեալ յաղագս այսորիկ լինէի, թէ զիարդ յառաջնոց հարանցն մերոց ոչ կարգեցաւ. և զնոյն գիտացեալ պատճառս, զի և ոչ յառաքելոց Տեառնէ տուաւ. և

1. Ինքնագիր Յիշատակարան հեղինակին, բուն իր ձեռօք գրածին օրինակուած, որ պահուի մեր քով:

2. Սիրտը խոցոտէին նախատելով, թէ Հայք՝ Օրինաց կամ Գիտատատանի գիրք չունին:

3. Այսինքն, ազգայնոց արհամարհելն այս տեսակ գրուածներն և գրողները:

կամ զի ոչ ոք հրաւիրեաց՝ և անձամբ ոչ եաուն, զարհուրեալք ի պարսաւագիտաց. և կամ ի հալածանաց և ի խռովութեանց անպարապ պատահեցան, և կամ ընդ տերութեամբ անկեալ այլոց ազգաց՝ նոցունց վարեցան դատաստանաք: Եւ թէպէտ ամենայն պատահեաց ըստ ժամանակիս, և նոյն պատճառ՝ որպէս յաւուրս հարցն մերոց, ոչ աւանդել գրով դատաստան՝ բայց ի միոյն, զի և ոչ յաջակերտէ անտի տուաւ, բայց սակայն հարկաւոր եղեւ գրել, որպէս վերագոյն ցուցաւ: Եւ սկիզբն առնել այսմ իրողութեան այսպիսի եղեւ:

Հանդիպեցաք առաջի Տեառն Յովհաննու[1] չնորհիւ Տեառն Յիսուսի Աղուանից կաթողիկոսի, և նոյն իրի վերատին յիշատակ եղեւ. և նա յորդորեալ փութացոյց զմեզ ասելով, եթէ չնորհ յոյժ ունիմ իրիդ կատարման. առաջի և մեք զմերս եդաք անկարութիւն, որպէս վերագոյնն. սակայն յերկրորդելն և ի քաջալերելն՝ խորհուրդ ինձ ի մեզ եղեւ՝ եթէ արժան է հոգեւոր հրամանի անեալ, զի թէ Տեառնէ իցէ՝ բարիոք յանդգնեալ կատարեսցի իմաստախորհութեամբ, զի թերեւս ի նմանէ լինի առաջաւորութիւնս. ապա թէ ոչ՝ պատճառ լիցի կատարելոց ամանց չարժիլ ի սոյն: զի և ոչ գործ ամենայն և արուեստ՝ ի միոջէ սկսողէ կատարեալ աւարտեցաւ ի սկզբանէ, այլ ի բազմայ. զի մասնաւոր գրեալքն ժողովեալ գոյացուցին զաբեւեան՝ ըստ ասացանկաց: Նա և պատչաճ ինձ վարկայ ընդոստնուլ սովաւ, եթէ յաւեան մտանելոց եմ յանկաչառ և յանսողոքելի, ըստ որում ձեռամբ իսկ գծեմ զապագային նշանակ: Եւ արդ, մի՛ ոք պարսաւանս դիցէ աստղելոցս. զի եթէ ախմար ոք իցէ՝ ուսցի, և եթէ ամենակատար իմաստուն՝ զթերին լցցէ. երկաքանչիւրոցն պատրաստ եմք սիրով ընդառաջել:

1. Յիշուած է կաթողիկոս այս՝ յ'272 Յօգուածի:

Ընդանիք չափաւորապես զօրութեան առաջիկայ իրողութեանց, հանդերձ աղերսաբանութեամբ առ Տէր Յովհաննու Աղուանից կաթողիկոս.

Քանզի հարկաւոր է զինի այնոցիկ սակաւուք ցուցանել զզօրութիւն առաջիկայ ձեռնարկութեանն, զոր և ազաչեմ, ով պատուականդ գլուխ եկեղեցեաց սրբոց տանս Աղուանից, մի՛ վարկպարագի համարել զհարկս հոգեւորս զոր եդիր. զի և կանոնական ունի սահման Գիրս դատաստանի, զոր յարմարել յայնոսիկ պարտիմք, զի յայտ լիցի չափ նորին։...

. . . . . .

Եւ թէպէտ բնաւորական է ամենեցուն լսելի ցանկալ և անսխալ յիրս ամենայն լինել, սակայն ոչ է հնար՝ որ ի լինելութեան և յատկանութեան է բնութիւնս, և այդ յոյժ քաջարանից. սրչափ և մեզ իցէ՝ որ ամենայն ինչ գործ սխալեալն եղեւ, և զրեթէ յ՝սկզբանէ։ Վասն որոյ զամենեսեան զինի մեր եկեալսդ՝ զհարս և զեղբարսդ՝ ի զանազան ժամանակս, ազաչեմ մաղթանօք, զյոյզով և զոչ սակաւ սղալանսն ուղղեացիք, պատահեալք ընթերցման տապս. և զիրաւացի թերին լըցիք, որպէս վերագոյն ծանուցաւ. զի հաւասարակ և ի վերքան զհաւասարակ՝ սղալանացն անկիմ զպատճառ։ Նախ, զրիծս անձին, զոր զներգործութիւն խափանէ զհոգւոյն, և ապա զախտս մարմնոյս[1]։ Եւ զի յայտ անվարժութիւնս համօրէն է սեռի և յատկի. և զարձեալ անպարապութիւն, զի ընդ ըստեւմբք ախտաժետիս զմանկունս ունէի բանի. և զպանդխտութիւն և զանտեղեկութիւն գրչութեան, և զհակաւակութիւն՝ ներքնոց և արտաքնոց. ըզգայութեանց տկարութիւն, և զմարտս դիւաց, և

1. Խոնարհաբար ինք զինքն մեղաւոր կամ պակասաւոր ցուցընէ, նա և տկար մարմնով, և աչ զիտաւն, և շատ զբազաւած՝ աշակերտաց վրայ, և այլն։

զպակասութիւն գործեաց գծագրութեան, և գաղճատութիւն մատենից[1], յորոց զնիւթս հաւաքել ի դէպ էր բանից։ Ապա եթէ ընտանի ազգիս բարբառ[2] սխալանացն լինիք պարսաւիչ և ոչ ուղղիչ, գիտելով գործ Հայկազնեացս զայդոսիկ, միանգամայն զչափ անձին, անմեզապիր ձեզ յայդոսիկ լինիմք։ Ապա եթէ սիրով մերոց պատահիք բանից, և խնամիչ կամօք զթերին լնուսջիք, ի Տեառնէ զհատուցումն առջիք բարեաց. և զգանձս բանից ձերովք երկամբք յեկեղեցիս ամբարեալիք, յիշատակ բարեաց մնալ ձեզ ի նմա։

Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութեան եղեւ ի թուականին Հայոց ՈԼԴ, և շրջանին երթալոյ ի բաց՝ ՁԱ[3], որ կոչի փոքր. յամս (ան)իշխանութեան թագաւորութեան մերոյ ի վաղնջուց. ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանացն՝ ի կողմանս Խաչենոյ[4]. ընդ ժամանակս անուանելոյ Հասանա, որգւոյ Վահտանկայ, կրօնաւորեցելոյ, և

1. Հին ձեռագրաց աւերածութիւնն։

2. Այսպէս գրած է, փոխանակ գրելու բարբառք։

3. Այսինքն Յարկաւագ վարդապետի կարգադրած Հինգհարիւրեակ տօմարի շրջանն, որոյ առաջինն Հայոց մեծ թուականէն սկսելով, (յամի Տեառն 552) լրացաւ յամի 1083–4, և երկրորդն սկսաւ ի 1084. ուստի մինչեւ Մխ. Գուշի այս գրութեան ժամանակ՝ 101 տարի անցեր էր, այն է 1184։ Այս երկրորդ շրջանն՝ Հայոց նոր թուականի սկիզբն եղաւ, և կոչուեցաւ Փոքր թուական. երբ այս այլ լրացաւ, Գ շրջանն այլ նոր թուական մի համարեցաւ, և նոր կարգ դրաւին անուամբ Կ՚ըսուի Ազարիայի թուական, սկսեալ ի 1616 տարւոյ, և ի կողմանս Պարսկահայոց և Ընդկասատանի գործածուեր։

4. Մեծ Հայոց Արցախ կոչուած նահանգն՝ Աղուանից երկրին սահմանակից, երբեմն մերոց երբեմն անոնց իշխանութեան տակ էր, մեծ մասն կոչուեր Խաչէնք. ԺԲ–Դ դարուց մէջ այն կողմանց տէրերն յիշեալքդ, որ իրենց նախահարց անուամբք յաջորդաբար վախ-

որգւոյ նորա Վախտանգա, ի դղեկին որ անուա-
նեալ կոչի Հաթերք, գվեսաւորի այլոց իշխանացն.
և կոզմանցն Կիւղիկեա մեծի իշխանին Ռոբենի[1].
յամի յորում մեռաւ յաղթող թագաւորն Վրաց
Գեաւրգի, ի հայրապետութեան Տեառն Գրիգորի
Հայոց Մեծաց[2], և ի գիտապետութեան Տեառն
Ստեփանեհոսի տանն Աղուանից յաշխարհիս Աբա-
ևա[3], ի նահանգիս որ կոչի մայրաքաղաքին Գան-
ձակայ, յանապատ և յեղբայրանոց անուանեալ
Գասևոյ[4]. սկզբնաւորեալ ի լեռնակողմ մենաստա-
նին կոչելոյ Հոռոմաչհն, ընդ հովանեաւ սրբոց եկե-
ղեցեաց կուսաստանացն յիշեցելոց. ձեռնատուու-
թեամբ Հօր Յովսեփայ, և եղբաւր Պաղտոսի յոր-
դորմամբ յառաջարկութենեն: Բայց գծագրութիւն
յիշատակիս ի նախագրութիւն գրոցս գտաստանի
եղեւ, զի կատարած սորա ի ձեռն մեր միանգամ
ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն:

Եւ արդ, որքան է կար ի գործ անկանիմք, հիւ-
սել զկնի զիրս գտաստանի. ընդ որս զայս եւս
մաղթեմք, եթէ պատահի և հանդ ոմանց թուի՝
յօրինակէ աստի փոխել զգիրս գտաստանի, ընդ
նմին փոխեսջիք և յիշատակս զայսորիկ, յիշատա-
կել սաքօք զմեզ, որով և դուք համաւրէն յիշեալ
լինիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք
յաւիտեանս ամէն:

տանիգ և Հասան կոչուին. վերջի գարերումս այլ և
ինչուան մեր առեն գտուին անոնց սերունդքն, Հա-
սան–Ջալալեան կոչուելով:

1. Կիլիկիա, որոյ իշխողն էր Թուբէն Բ. եղբայր՝
Լեւոնի Մեծի:

2. Որ է Գ Գրիգոր՝ Տղայ մականուանեալն:

3. Այսպէս կոչուի չատ հեղ Աղուանից երկիրն
հին նահապետի մ'անուամբ, որոյ պայազատքն կո-
չուին Աբանիշահիկք ըստ Պարսից, որք և Աբանիէ
կոչած են այս կողմերս:

4. Գասևոյ անապատ կոչուած անուանի վանք մի:

*Տէր Աստուած վայելել տացէ աստուածասէր և
բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանկայ, որդ-
ւոյ Հասանայ, ի կամս իւր զԳիրքս գտաստանի,
անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին:

*Փառք Փրկչին մերոյ Յիսուսի, ընդ նմին Հօր
և Հոգւոյն, որ ետ զդպագարուին աստանօր տալ
Գրոցս Գտաստանի. զի թէ և յառաջագոյն ասա-
ցաք՝ գրելով զսակաւ Յիշատակարանն, եթէ, ա-
ւարտումն սորա ոչ է, սակայն այժմ մեք հանգու-
ցանել կամեցաք գրելով ըստ կարի, ոչ խափանել
զայլոց որք կամին գրել և յաւելուլ: Եւ թէպէտ
յամի յորում սկսաք՝ գրեցաք զեղեալ չափս Գա-
տաստանի[1], սակայն յազագս հալածանաց որ եհաս
մեզ, ընտանի և ոչ օտար[2], յապազեաց գրել դյի-
շատակս զայսոսիկ:

ՄԱՂԹ

ԱՌՈՒՄՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Ի ՍԱԼԱԱԷՏՏԻՆԷ, ԸՍՏ ՄԻԽԱՅԷԼԻ ԱՍՈՐԻՈՑ

Ի ՈՒԼ թուին (638=1189) զօրացաւ Սալահա-
տինն, ի յահախութենէ մեղաց մերոց, և ժողո-
վեաց զամենայն հնազանդեալսն իւր. զԵգիպտա-

1. Կարծածէն՝ չուտ հեղինակն Գտաստանագիրքը
գրել կամ չինել սկսած տարին՝ կըըցեր է և աւար-
տել, և ի վերջն յարել այս Յիշատակարանս:

2. Շատ հետաքննական է գիտնալ Մխիթարայ
կրած հալածանաց պատճառը. թուի թէ Վրաց և Հա-
յոց կրօնական վէճն ըլլայ, իւնէ ամբաէկին միջա-
մտութեամբ: Ջալալեան Սարգիս եպիսկոպոս՝ Աղուա-
նից տեղապետութեան մէջ՝ կ'ըսէ, թէ Խաւարպատ Ձորոյ
վանից մէջ, «Գտաւ աստ և Պատմութիւն անցից Գոշ
» Մխիթարայ »· անշուշտ այս մեր խնդրածն էր: Բայց
գտնուղն ինչ ըրաւ, կամ ո՞ւր մնաց գտածն:

ցիսն, և զներքին Լիբէացիս[1] և զՊտուղիս[2], և զՄ-
թռռացիս[3], և զՄիչագետս, և եղեւ բանակ մեծ և
ահագին. և արար պատրաստութիւն զինուց և
մեքենայից՝ որոյ ոչ էր թիւ: Եւ խաղաց գնաց
ամենայն բազմութեամբ լեգէոնին իւրոյ ի վերայ
Թագաւորին Երուսաղէմի, առնուլ զքէն վրիժուց
կորանաց իւրոց, զոր կրեաց ի նոցանէ յառաջին
ելանելն իւրում յԵգիպտոսէ՝ երեսուն և երկու
հազար սպառազինօքն՝ զոր կորոյսն, և տկարա-
ցաւ և գանձեաց ի սրտի իւրում զթիւնն սրտմու-
թեանց, մինչեւ եդիս օր Թափելոյ զնա, և զօրս՝
որում ցանկայր նա. եկն երեք սպառնոյն մեր հին
չարութիւնն, զոր սերմանեաց որոմանցն մշակ:

Արդ, գնաց երկրորդն Րօբովամ սատանն Սո-
զովմոնին մերոյ՝ Սալահատինն՝ և եհար զբանակն
իւր մօտ ի Տապարիա. և գնաց Թագաւորն Երուսա-
ղէմի ի վերայ և նորա: Ցիչատակեցաւ մեզքն քրիս-
տոնէից առաջի Տեառն, և քննեցան ի կանոնս ար-
դար իրաւանցն Աստուծոյ, և կշռեցաւ ի կշիռս,
և գտաւ պակասեալ: Քանզի կամն Տրապօլեայ
եղեալ էր յառաջագոյն բանս ընդ անօրէնն, և
ծարաւեցոյց զզօրսն, և տկարացոյց, և մտանեաց
ի ձեռս թշնամեացն և ինքն անցաւ գնաց ի կողմն
սատրացն: Եւ զօրացան ատելիքն ի վերայ ան-
դամոցն Քրիստոսի, և արկին զնոսա ի սուրն իւ-
րեանց անողորմն: Ո՜հ ահագին ժամուն և նսեմա-
ցեալ պահուն, և կորստեան աւուրն մերում. յո-
րում Հօտն դրոշմաւոր[4] և գառինքն երկնաւոր՝ գա-
զանաց մասնեցան՝ ընդ երեսս դիակոյտ դաշտին.
քանզի ծարաւեալ երիվարքն խնդրէին ջուր՝ դիմե-
լով ի ծովն, և թուլացուցանէին զրազուկս արիա-

1. Ափրիկէի ներսի կողմերը բնակողք:
2. Պէտէվի կոչուած Արաբացիք, Bedouins.
3. Ասորւոց երկրին բնակիչք:
4. Քրիստոսի դրոշմն կամ կնիքն ունեցող ուխտա-
նէրն, որ են քրիստոնեայք:

կան քաջացն, և գայլքն գիշատիչք ծարաւեալք ա-
րեան պարարտ զուարակացն՝ խնդրէին զնոսա, և-
ոչնդնոտ և սրեալ ժանեաւքն. և ի համառօտ ժամու՝
զաստեղագեղ բանակն ցուցանէին իրրեւ զկոյտս
դերբուկ քարանց, և զդրախտս աստուածատունկ՝
իրրեւ զմայրիս կոտրեալ ի փայտահարաց. և ար-
դարեւ սատակացաւ կոծ յԵրուսաղէմ, այսինքն
յամենայն եկեղեցիս իրրեւ զկոծ մանկանցն կո-
տորելոց ի դաշտի: Զի կալան զմատաղ Թագա-
ւորն[1], և զվառեալ գունդն Ֆրերացն գովելեաց[2].
և սպան ի նոցանէ կատաղին[3] Ջամբրի երեք հա-
րիւր անձինս և զբրինձն Ալնաքայ. և լուացաւ
արեամբ նոցա, և եհտ փառս Մահմէտի և աղօ-
թեաց: Եւ առ զՏապարիա, և կոտորեաց զնոսա.
և չոքաւ յԱքայ[4], և առ զնա եւս. և իշխանքն որ
կային անդ՝ փախեան նաւուս ի Սուր[5]: Իսկ Կե-
սարիա[6] և Նապարէթ և Ճափի[7] թողին զտեղիս
իւրեանց և փախեան. և դիւրաւ տիրեաց ի վերայ
նոցա որպէս և կամէրն: Եւ ո՞ է կարող ողբալ ըզ-
նախատինսն և զտմնհարուածիւն՝ զոր առնէր նա
մեզ, զպէսպէս կատականսն և զթուքն, զմեացորդս
կրիցն Քրիստոսի: Քանզի ոչ գիտեմ ըստ մասանց
զողպիսութիւնս անցիցն զորս գործեցին, և զոր ինչ
խօսեցան, զոր բերեն յինքեանս յոլով մատեանք
ըստ լեզուաց և ազգաց. այլ մեզ թեթեւաբա-
նութիւն է ցանկալի, և մանաւանդ ըղձանալի:

1. Կի կամ Գուիտան Լուզինեան, որ յետոյ Կի-
պրոսի թագաւոր եղաւ:
2. Երուսաղէմի առպետք կամ Զիաւորք կոչուածքն:
3. Խոսրայելացւոց անգութ թագաւոր մի, որուն նը-
մանցընէ զՄալահէտտինն:
4. Saint Jean d'Acre, ըստ Փռանկաց:
5. Այսինքն է Տիւրոս հին և անուանի ծովեզերեայ
քաղաքն:
6. Պաղեստինոյ կեսարիայն և ոչ Փոքր Հայոց:
7. Եաֆա, Յոպպէ հին և անուանի նաւահանգիստն:

Աղեսիոյն մերոց հանգամանք որոշեաց զդասս լաւեացն՝ ըստ ազգաց արուց և իգաց, հասակաց և արժանաւորութեանց։ Վասն զի յետ այսորիկ գնաց ի Ա[1]ղաղան[1]. և զի մի՛ աշխատս լիցի վասն ամրութեան տեղւոյն, և սակաւ մի հանգիցէ ի պանուխիւն հատից հաւատացելոց, խօսեցաւ կացութեամբ, և երդուաւ թագուլ զթագաւոր նոցա ազատս, ուր և կամիցի երթալ հանդերձ նոքօք. և եառն զքաղաքն ի ձեռն նորա. և առեալ զթագաւորն Երուսաղէմի գնացին ի Տիւրոս, որ է Սուր, անառիկ քաղաք, եթէ Տէր պահեսցէ, և թէ ոչ՝ ընդունայն տքնին չինողքն և զգուշանան պահապանքն։

Եւ Սալահատինն միաբան յաղթութեամբ իբրեւ զպղովատ՝ եկ խնդութեամբ ի Սուրբն Երուսաղէմ, և աւուրս ինչ պաշարեաց գնա. և զի ոչ զոյր նոցա ուստեք ակնկալութիւն, կամեցան տալ զքաղաքն, և մանաւանդ զանձինս անագորոյն հեթանոսաց. բայց նա անգթօքն եցոյց զանձն մեծախորհուրդ. և կարեաց նոցա գինս տանն գահակալանս ըստ գլուխս, տալ և գնալ ի խաղաղութիւն. և արարին այնպէս. և ելանէին կականեալք յարտասուացն, և իբրեւ զգաւինս ի մսէ զատէին բառաչելով՝ յաստուածընկալ քաղաքէն, չարժելով յարտասուս և զվիմեղէնս անգամ. և որ մնացին ի տեղն՝ էին քան հազար արք և կանայք. և ազատեաց ի նոցանէ չորեք հազար անձինս ծերս և պառաւունս, և եօթն հազար տղայք արու և էգ բաշխեաց զօրաց իւրոց, և հինգ հազար երիտասարդս առաքեաց յԵգիպտոս յաղիւսագործութիւն, ի չինութիւն պարսպաց և ապարանից։ Ազատածին որդիքն Սիոնի զարձան ի գործ հնոյն Իսրայէլի՝ ի մերոյն Փարաւոնէ. զօրս եհատ մեզ չարչարիչ՝ անմարմինն փարաւոն[2], և հինգ հազարս եթող անդէն

1. Ա.կալոնն, հին Ս. Գրոց մէջ շատ հեղ յիշուած։
2. Ա.յսինքն՝ սատանայ։

յԵրուսաղէմ, չինել զպարիսպն յամրութիւն իւրեամ անձինն սեփականեալ զնա[1]։

3

ՆՈՑՆ ԲԱՆ ԸՍՏ ՅԻՇԱՏԱԿԱԳՐԻ[2]

Յամի վեցհարիւրերորդի քառասներորդի երկրորդի Հայկականս տումարի, ի հայրապետութեան Տէառն Գրիգորի կաթողիկոսի Հայոց, և յիշխանութեան բարեպաշտ իշխանին Լեւոնի. իսկ ի բռնակալութեան Հաքարացւոց ուժեմն Սալահատին կոչեցեալ, ըստ իւրեանց առասպելաբանութեան, որ և ասէին Եգիպտացւոց և մինչեւ ի կոմանս արեւելից, և զրազումս յազգայնոց իւրոց արկեալ ընդ իշխանութեամբ իւրով, և զօրացեալ այսու՝ սկսաւ պատերազմել ընդ սուրբ քաղաքն Երուսաղէմ և ընդ զօրս նորա։ Զօրս թուլագոյնս գտանէր ի հաւատս՝ զնոսա կարասեաւ և խոստմամբ պատրէր, և որք քաջ ապառաժէնքն էին՝ բանիւք ողբանօք հաւանեցուցանէր. և գայր ի

1. Ժամանակակիցն այս մեծ պատահարիս Ս. Ներսէս Լամբրոնացին՝ իր Պատարագի Մեկնութեան զրոց Յիշատակարանին մէջ համառօտ կ'ըսէ. «Ի թուա-
» կանիս ՈԼԶին (1187) յափշտակեցաւ սուրբ քաղաքն
» Երուսաղէմ ի Թուրքաց ազգէ. և եկեղեցականքն
» և իշխանքն՝ որք սպառասւորէին սուրբ տեղւոյն՝
» գերեցան. և համբաւ հասեալ յարեւմտեայս, զնաւ
» ազգն թագաւորօք և իշխանօք՝ ըստ հրամանի
» Հռոմայ հայրապետին՝ շարժեաց գալ յայս աշ-
» խարհ»։

2. Գրած Յիշատակարանիս է ժամանակակից օրինակ մի Աւետարանի՝ ի Պօղոսական վանս՝ Կիլիկիոյ Կատեն կամ Կայտեն կոչեսած դղեկի։ Տես Սիսուան. 147. 334։

մեծամեծացն՝ երդմունս հաստատեր նոցա՝ ունել զտէրութիւն աշխարհացն։ Եւ այսպիսի խորամանկութեամբ քակեաց զամենեսին ի միմեանց և առ բար ի միում տան խռովութիւն. և զայս արարեալ ի բազում ամս՝ ոչ կարաց յաղթել նոցա. և ապա օրինակօք խնդրէր պատերազմել ընդ նոսա, զի գիտէր զթուլութիւն և զերկպառակութիւն պարացն և զյետս կացելոցն ի սուրբ ուխտէն։ Եւ պատերազմեալ ընդ նոսա՝ յաղթեաց, զի զօրքն ընդ չորս մասունս բաժանեալ էին. և ձերբակալ արարեալ զթագաւորն և զարս պատերազմողս՝ որ կոչին Փրէրք[1], և զայլ զարն կոտորեաց. և բռնացեալ առ զսուրբ քաղաքն Երուսաղէմ և զԱկառոնվի, և զամենայն սահմանս աշխարհին, և զայ ի սահմանս Անտիոքու, և քակեալ ատերեաց զաշխարհն և զամուրս նորա։

Եւ անարին այն Բրինձ կոչեցեալ՝[2] ոչ կարաց ելանել ընդդէմ նորա. իսկ նորա կատարեալ զկամս իւրոյ չարութեան՝ կամեցաւ մտանել յաշխարհն Կիլիկիոյ, նոյնպէս կարծելով գնոսա անարիս գոլ, քանզի գոռայր իրրեւ զառիւծ զօրաւոր, և զառնայր իրրեւ զաղուէս սակաւ։

Քանզի յառաջ ասացեալ հայրապետն Սուրբ Գրիգորիս, որ ունէր զաթոռ հայրապետութեան Սրբոյն Գրիգորի, որ և չառաւիղ գոլով նորին Լուսաւորչին Հայոց, պահպանեալ ընդ ամրածածուկ աջոյին Աստուծոյ՝ յամուր դղեկին կոչեցեալ Ռոմկլխի կայ, որ և սա բազում նեղութիւնս կրեալ ի չրջաբնակ այլազանիցն, ընդդէմ կացեալ ազօթիւք և զօրութեամբն Աստուծոյ, և ըստ տուեցելոյ նմա յԱստուծոյ ամենաչնորհ իմաստութեանն, խրատէր և զօրացուցանէր զթագաւորն

1. Ասպետքն կամ Ձիաւորքն (Chevaliers) իրենց մէջ մէկմէկու եղբարք կոչէին՝ Frères.

2. Գեմունդ Գ՝ որ իր անարի տակաւ ըլլալուն համար Le Bambe կոչուէր։

և զզօրս Կիլիկեցւոց, ընդդէմ կալ նորա չարութեանն, որ և ոչ կարաց ձեռն արկանել ի նոսա։ Այլ քանզի հայրապետն սուրբ տեսանելով զայսպիսի նեղութիւնս տարակուսանաց, զառումն սրբոյ քաղաքին և զաւերումն սրբոց տաճարացն, և զգեբութիւն ժողովրդեանն Աստուծոյ, և զայրանդակ գործ պղծութեան նոցա, զոր ոչ է պարտ ընդ գրով արկանել, զայսոսիկ տեսեալ սրբոյ հայրապետին, վշտացեալ ի հոգի իւր՝ միշտ ազօթից և արտասուաց պարապեալ խնդրէր փրկութիւն սրբոյ քաղաքին և ժողովրդեանն Աստուծոյ։ Գրէր և ցուցանէր զամենայն՝ թագաւորացն Ցունաց և Հռոմայեցւոց, զի եթէ իցեն ինչ ձեռնհաս՝ եկեսցեն յօգնականութիւն քրիստոնէից. և ինքն ազաւթից և սրբութեան պարապեալ։ Եւ ապա չարժեալ մի ումն ի թագաւորացն Հռոմայեցւոց Ալեման[1] կոչեցեալ, գայ մինչեւ ի սահմանս Կիլիկեցւոց. և ոչինչ արիութիւն ցուցեալ՝ կատարի մահուամբ գեւտասոյզ եղեալ. և զօրքն ցրուեալ բաժանեցան։

ՅՍ.

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ

Մխեալք Աստուծով ի սկիզբն մատենիս աշխարհավէպ հանդիսարանացս[2], այժ առեալ՝ սատար և նեցուկ զազօթս սրբոցդ, եւս և զպատճառաւ բա-

1. Այն է Փրեդերիկոս Ա կայսր Ալամանաց կամ Գերմանացւոց. ոչ էր անարի իբրեւ զԳեմունդ, և չատ քաջութեամբ եկաւ մինչեւ ի սահմանս Հայոց Իսաբրինացոյ, այլ անկարծելի ըրախեղդ մահուամբն ցըրուեցան քրիստոնեայք։

2. Պատմագրութեանն ցառաջաբանն է, որոյ մասանց սկզբնագրերն՝ իր անունը կազմեն Մխ–իթ–ար·

նիս, անսայթաք հաւատով կառուսցուք զչարսա-
զար[1] մտացս՝ ի յոյն անկարծելի և ի սէրն ան-
կեղծաւոր, և այնպէս զօրացեալք ի Քանէն՝ որ
բանիւ գոյացոյց զերեալքս ամենայն, ուղղեսցուք
զմակոյկ բանիս ի վերայ մկանաց անդնդահայեաց
ծովոյս խորութեան, ի ձեռն առեալ զայս մոյթս[2]
սրտի և ղար[3] պարանոցի. որում աւարան և նա-
ւահանգիստ յանձն է քալ և անմոլար նաւապետին:

Եւ արդ, ըստ կատարելոցն հրահանգից ի առ-
փեստական յեղանակն՝ պարտ է յամենայնում
յառաջարկութեանցն նախ քան զամենայն հարկա-
ւորութիւն ցուցանել, թէ յաղագս ո՞ր է բանս,
յորում և զրովանդակ մերս շահիցն և գհոյլս օգ-
տութեանց՝ յայտ ածել և առաջի դնել. և ապա
զի զմիտս ընթերցողաց և լսողացն առաւել յօժա-
րագոյն արասցէ, և ի վարժուն մատենիս փու-
թադոյնս և անյապաղս մղեսցէ:

Եւ արդ, է բանս սակս բացայայտութեան ան-
ցելոց իրաց, լաւաց և վատաց, արեաց և անա-
րեաց, խաղմից հինից և խաղաղութեանց, պէսպէս
և զանազան զրուցատրութեանց, որ ընդ ներքոյս
սղամանակ[4] տեղեկութեամբ թեւացեալ ՅԱդամայ
հետէ մինչեւ ի բնաւին վերջին ամանակս, յաւուրս
Յովհաննիսի թագաւորի[5]. և անտի լայն և տարած
բանիւք ընդարձակեալ մինչ ի ՈՒԹ թուականս:

տեսակ մի բանախաղութիւն, որպէս և լեզուի սճն
այլ բառախաղ է և իմաստակ:

1. Ուրիշ հեղինակի քով գրուած կայ Շարաւարար,
իբրեւ իմբաստ նշանակելով. այս տեղ գուցէ ա-
ւելի յարմար էր ըսել չար–սաղապ, իբրեւ ցնդած
միտք:

2. Հասս գերան կամ նեցուկ. թուի հաստատու-
թիւն ըսել ուզէ:

3. Անծանօթ է ինձ բառս:

4. Համառօտ, կարճ ի կարճոյ:

5. Բազրատունեաց վերջին Գագիկ թագաւորին հօր-
եղբայրն, յառաջին կէս ԺԱ. դարու:

Իսկ մթերքն չահիցն ի սմա ամրաւելոց, նախ
լուսաւորութեան ոգոյ՝ ի զանազան բանս և ի գի-
տութիւնս, նա և ի բարեացն զլաւն չտեմարանել,
և ի վատթարացն զհնարս զգուշանացն հայթայ-
թել, յորմէ և ճողոպրեալ լինին բազում ոգիք ի
չար սպրդոցս: Եւ երկրորդ, զկենցաղոյս ուսանել
զքանազան քաղաքավարութիւնս. ի թագաւորացն՝
զթագաւորական ընդոստութիւն, յիշխանաց՝ զիշ-
խանական ընթացս, ի զինուորաց՝ զմարզ մրցա-
կան հանդիսիցն, նմանապէս և յայլոցն և զայլոն,
ընդ հոգեւորին՝ զհոգեւորն, ընդ կենցաղոյս՝ զկ-
ժամանաւորն:

Զանգի յայսպիսի պատմութեանց ուսաք, թէ
յարարչէն ստեղծեալն մեք միայն եմք անիշխան[1]
ի սեռս կենդանեաց, որ յարարչապատում մատե-
նիս անդ. նա և զբարձրագոյնն ասելի է. քանզի
սոսկ ծանեաք զբնութիւն արարածոցս եղական
գոլ, յոչէից ածեալ ի գոյութիւն՝ արարչին. ի սմա-
նէ, թէ քաջ թողաք զվայրն վայելչական, և թէ
մերկացաք ի փառաց, կոզոպտեցաք յանմահութե-
նէն: Սա ուսոյց մեզ թէ բանարկուն պատառեաց
զդարդն մեր ցանկալի, և զխայտառականս մեր տե-
րեւոյն կարօտացոյց: Զամբարտակին սկսեալ կոր-
ծանումն, զՆոյի յայտնի պատիւն, թէ արդարք
այսպէս պատուով պատուին. զՄելքիսեդեկին, զԱ-
բրահամեան, զՂովտայն և զկնոջն, զերկնատեղոյ
հրացանութիւնս[2]. զրովանդակ Եգիպտոսին, զՄով-
սէսին և զանապատին, զերկրին աւետեաց, և զայլոն
ամենայն մինչեւ ցԳրիստոս. զամենատենչ լուսոյ
գալստեանն առ մարդիկ, և զանպայման ցնծու-
թեան գործս և զբանս և զարդիւնս, որ ինչ յօ-
րէնս և ի մարգարէս և յաւետարանս, պատմու-
թեամբն ուսաք և իմաստնացաք: Եւ եթէ ժամա-
նակագրութիւն ոչ էր՝ առասպելօք և այլանդակ

1. Անձնիշխան պէտք էր ըսել:

2. Սոդոմայ վրայ թափուած կրակն:

զրուցօք և անդէպ հերձուածով լի էր եկեղեցի[1]։ Կամ թէ զարդարն ասել, գոյին ոչ իակ և հետք հաւատոյ և ճշմարտութեան, եթէ ոչ էին կանոնք և տիպք պատմութեան, որ տուաւ մեզ ի սրբոց աւանդողացն. գալուստ Քանին և կամ գործք առաքելոցն, կամ այլք սոցին նման, որք ուսուցին մեզ զվիճաբանութիւն ուղղացն ընդ թիւրսն։ Եւ թէ ոչ ի պատմագրութենէ առնուաք զճանապարհ առաքինութեան և զգնացս որ ուղիղն է, ամենայն որ կործանէր անկանէր ի խորխորատս կորստեան, ոչ ոք ծանօթ հաւատի զրուցաց, և ոչ տեղեակ կարգաց առաջնորդաց և թագաւորաց. ոչ գիտաւ թեամբն թէ լաւքն այսու առաքինացան, և ոչ զըղջումն՝ թէ վասն այսպիսի կենաց վարքն պատժապարտեցան[2].

Զի թէ որ այսչափ մանրապատում եղեն հնոցն և նորոյս կարգօք՝ և կրօնք և գործք և բանք, և ցանկապատեցաւ այգիս քրիստոսատունկ, դեռ եւս մրտանեն ապականեն ազուէսք ժանտագործք և խառնափնթորեն զոմ ճշմարտութեան, զինչ ինչ արդեօք էր ի չարեաց՝ որ ոչ գործէր ի մէջ տգիտաց և անծանօթից գիտութեան։ Արդ, որպէս յայտնի է գիանոց յոյժ օգտութիւն սորա, ձեռն ի գործ առնացուք յուսով տալ զանձինս յաշխատութիւն հոգեւոր, ապաւինելով ի սուրբ չնորհս Հոգւոյն։

Արդ, ո՛ պատուական հայր Գրիգորիւ[3], գրեթէ զհարիւր և զքառասուն ամաց[4] մեծամեծ գործս՝

1. Թէ որ առաջ ժամանակագրութեամբ պատմութիւն չըլլար՝ եկեղեցական դիպուածոց այլ առուգութիւն չէր ըլլար։

2. Բուլոր գրածին միտքն այս է, թէ չատ հարկաւոր է պատմութիւն՝ անցեալները գիանալու համար. և եթէ այսչափ գրուածներէ վերջ այլ դեռ սուտ բաներ կ'ըսուին, եթէ գրուածք չըլլային՝ որչափ աւելի առութիւն և ապիրատութիւն կ'ըլլար։

3. Շիրակայ Հաւիճոց վանից առաջնորդն էր։

4. Յովհաննու թագաւորութեան վերջին կամ մա-

խանդրէ քո պատուականութիւնդ, ի ժամանակաց անտի Յովհաննիսի յետին և վերջնոյն Բագրատունեաց՝ մինչեւ ի ներկայս յայս՝ յորում եմքս դեռ եւս. իսկ ի վերայ այսոցիկ էր խնդիրն՝ ի գրի առ նախ սկսանել զառաջին գերեալն յԵրուսաղէմ[1], յոսոց և յարմատոց Գաւթի մարգարէի, զոր գերեալ Նաբուզոդոնոսոր, և խնդրեալ Հրաչեայ պարգեւ զՇամբատ՝ յարքայէ։ Արդ, հիմն բանիս պարտ է անդր ի վեր ընթանալ, և անտի կարգաւ առ առ մեզ կացուցանել. և այս ի յոլովս արտարերի և կազմէ աշխատութիւն, ընդ որ յոյժ համառօտիւ կամիմք անցանել, տալով միայն պատճառ իմաստութեան քո։

Եւ արդ, գումարեցի զայսոսիկ գումարուն յերիս պրակս. զի խոստովանութիւն մեր և հաւատ՝ է ի Սուրբ Երորդութիւն, որպէս Պօղոս ասէ, «Զաւձենայն զոր ինչ առնէք՝ յանուն տեառն և Աստուծոյ արասջիք»։ Ա. Պրակն սկսանի ի Պարոյրայ Հայկազնոյ առաջին թագաւորէ Հայոց՝ մինչեւ ցՅովհաննէս վերջին. իսկ Բ՝ ի Յովհաննիսէ մինչ ի քահանայապետն Տեառն Բարսղի[2]. և Գ՝ մինչեւ ի գերելն զերուսաղէմ[3] և յելս ազգայ Ֆրանգաց։ Զայս երիս Հատուածս բազմատարազ ճառիւք՝ ոչ դանդաղեցից գրել, քաղելով ի սրբոց և ի պիտանեաց պատմութեանց. զի և ազքատք և մուրացիք սովոր են ի վաճառաց և ի գրացեաց առնուլ փոխ

հատանէն մինչեւ ի ՈՖ թուականն պատմութեանն, (եթէ առաջ է այլ թուականդ՝) կ'ըլլայ 150 տարի իսկ եթէ ՈԼՔ 140 տարի։

1. Բագրատունեաց գերին պատմութիւնը գրել նշանակէ, որոց նախահայրն Շամբատ գերի եղած էր Նաբուզոդոնոսորի, որոյ օգնականն Հրաչէ թագաւոր Հայոց՝ խնդրեց և առաւ տարաւ զնա ի Հայս։

2. Եպիսկոպոս Անեայ, որ և ուղեց ըլլալ կաթողիկոս։

3. Սալահէտտինի համար է ըսածն։

և կերակրել զեկեալ հիւրս մեծատունս, թէպէտ և այնպէս ոչ իցեն զի հանցեն ի համբարաց և ի գանձուց գնորն և զհին. և որ բարեմիտ բազմեալք իցեն՝ զսակաւն լուրջ երեսօք գոհութեամբ ընդունին, պայծառացուցանեն զամօթալի դէմս մուրացին, և առնուն վարձս ի Տեառնէ։

ՅԲ

ԳՐԻԳՈՐ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՔԱՐԱՎԷԺ

(ՏԱՐԻԳԻՐՔ ԿԻԼԻԿԵԻՈՑ)

Ի սոյն ամի (1193) փոխեցաւ առ Քրիստոս՝ կաթողիկոսն Տէր Գրիգորիս (Դ) ի վիշտասան օրն մայիս ամսոյ, Հայոց յաչխարհն Կիլիկեցւոց, և թաղեցաւ ի Թրազարկն[1]. և նստաւ յաթոռն իւր որդի քեռն իւրոյ Տէր Գրիգորիս, որ կոչի Վահրամ, տղայ տիօք... Յորժամ եղեւ կաթողիկոս՝ ոչ տա-նէր զառաջին հնազանդութիւնն՝ ամենեցուն, որպէս յորժամ ընդ դաստիարակաւ էր. այլ ինքնիշխանութեամբ տանէր զհայրապետութիւնն, որպէս տեսեալն էր ի քեռին իւր։ Յայնժամ մախայեալ ընդ նա աւագագոյն մարգիկն՝ առաքեն առ Լեւոն և ասեն. Ոչ ունի սա իմաստութիւն՝ վարել զհայրապետութիւնն, որպէս արժան է։ Եւ յօդեցին որպէս կամեցան զնմանէ[2]. և զայս արարին միանգամ և երկիցս և երիցս, մինչեւ չարժեցին զԼեւոն ի կամս իւրեանց։ Եւ առաքեաց ի բերդն Հռոմկլայն[3] զարքեպիսկոպոսն՝ զՏէր Յոհաննէս[4], առ-

1. Այս Տարէգրոց հեղինակն միշտ Թ տառիւ գրէ այս վանաց անունը, զոր այլք գրեն Դ։ Դրազարկ։
2. Ուզածնուն պէս զրպարտեցին զկաթողիկոսն։
3. Այս տեղս Հաւռամկլայն գրուած էր յօրինակին։
4. Այն առեն Սսոյ արքեպիսկոպոս էր, յետոյ կաթողիկոս եղաւ։

նել ըստ իմաստութեան իւրում. և նա գնացեալ անդ և մտեալ առ կաթողիկոսն՝ պատուով և մեծարեալ որպէս զհիւր և զազգային. իսկ նա ձեռնտուութեամբ սպասաւորաց նորա, մինչդեռ էին նստեալ ի սեղանն ի ժամ ճաշոյն, ետ փակել զդրունս բերդին. և տարածեցաւ աղմուկն։ Եւ Հայրապետն զարհուրեցաւ, և ասէ ցՏէր Յովաննէս. Զի՞նչ է այս զոր լսեմ. և նա ասէ. Բռնած ես։ Եւ կալեալ զնա եդին արգելանի, և ամրացուցին պահապանօք։ Եւ իրրեւ տարածեցաւ համբաւն յարտաքին բերդն և ի ներքին չէնն, հասին ամենեքեան զինուք ի վերայ կլային, առ ի յօդնութիւն հայրապետին իւրեանց. և զաւուրս երիս պատերազմեցան նեաւթ, և ոչ ինչ կարացին առնել. և ապա խաղաղացան։ Եւ առեալ Տէր Յոհաննէս զդատաստարտեալ հայրապետն՝ երթեր առ Լեւոն. և եդին զնա ի պահեստի՝ ի բերդն Կոպիտարա, ժամանակս ինչ կալ անդ։ Իսկ բնակիչք Հռոմկլային աղէկկիզեալք ընդ անիրաւ դատապարտութիւն հայրապետին իւրեանց, առաքեն առ նա ծածկաբար, զի հնարեսցէ զելն իւր ի բերդէն, և մատուսցեն նմա երիվարս, և տարեալ արասցեն զնա տէր բերդին իւրոյ։ Որոյ անկեալ ի բանս նոցա մանկաբար, և առեալ կատա՛ կախեցաւ ի գիշերի՝ իջանել ի բերդէն. և կատուն անկն[1] բեկեալ պատառեցաւ, և անկաւ ի խոնարհ, բարձաւ մեռեալ։ Եւ առեալ տարան ի Թրազարկն, և անդ թաղեցին զնա, մերձ առ դամբարան քեռոյն[2] իւրոյ։ Եւ էր թուականն Հայոց ՈՒԹ։

1. Հիւսուածքն. արմատ անկանիլ բայի, հիւսելու նշանակութեամբ։
2. Յօրինակին՝ քեռն գրուած էր։

ՃԳ

ՀԵԹՄԵԱՆՔ ԿԱՄ ԼԱՄԲՐՈՒՆԱՑԻՔ, ՅՈՐՈՑ Ս· ՆԵՐՍԷՍ ՍԱՂՄՈՍԱՄԵԿՆԻՋ

(ՍԱՄՈՒԷԼ ՍԿԵՒՌԱՑԻ[1])

Ընդ նուաղել թագաւորութեան և իշխանութեան Հայոց, յորժամ յափշտակեցաւ յիսմայելացւոցն մայրաքաղաքն Անի[2], և տարագրեցան թագաւորքն մեր ի գաւառս և յիշխանութիւնս արքայիցն Յունաց, այր ոմն յիշխանացն Հայոց Պլխարիւք անուն՝ որ էր ի տանէն Վասպուրականի[3], իբրեւ զմտերիմ և զսիրեմ և զարի ի գործ պատերազմի՝ առաքեցաւ յինքնակալէն Ալեքսէ[4] ի գաւառս Կիլիկեցւոց՝ իշխել մայրաքաղաքին Տարսոնի և Մամեստիոյ· որ և եկեալ տիրէր սոցա հայրենի կարգօք, և ինայր ի հաւատարմութիւնն Յունաց: Եւ չինեալ տաճարք ազօթից ի լեռնային և ի դաշտային գաւառս, որ և բազումք կան ի մէջ Յունաց՝ հայասեռ ազգիս պաշտամամբք: Սա եգիտ ի տոհմս լերինն Տաւրոսի և ի գլուխ քաղաքին Տարսոնի երկու անմատոյց դղեակս, միոյն անուն Լամբրոն միւսոյն Պապեռոն[5]· որք և ունէին շուրջ

1· Գրողս թէ և զինքն աշակերտ ցուցանէ Ներսեսի՝ բայց վկայէ որ անկէ այլ աւելի տարւոջ էր· չատ լաւ ճանչցեր էր անոր գերազանց հանճարն ի մանկութենէն, և զարմանալով անոր ըրածներուն և գրածներուն, հաւակին տարիներն այլ նշանակէ խնամալ, որ չըլլայ թէ ապագային անծանօթ մնան այնպիսի անձն և գործքն, ինչպէս քանի մի հին հեղինակաց:

2· Տես գՅօդուածս 259 և 281:

3· Արծրունեաց ցեղէն:

4· Ալեքս Կոմնենոս Ա· յամս 1081–1118:

5· Այդ երկու դղեկաց այլ երկար տեղեկութիւնք տրուած են ի Սիսուան գիրս:

զինքեամբք գիւղս և աւանս· զՊապեռոնն՝ իբր սեփականեաց գանձուց չտեմարան, և չինեալ եկեղեցի մեծ՝ դամբարան հանգուցեան սահմանեաց իւր և իւրոցն· և զԼամբրոն ետ ի մտերիմ և ի սիրեցեալ իշխանն որ եկեալ էր ընդ իւր յաշխարհէն Հայոց[1], անուն Օշին· և աւանդեաց ի նա զման մեծի և գլխաւորի Աւաքելոյն Պետրոսի, զոր ունէին Հայք, ըստ նախագրեալ պատմութեանն[2]· և հրամայեաց հպատակութեամբ սպասաւորել յայսմ դղեկի՝ սրբոյ Աւաքելոյն, և իւր սեփական ունել զբերդս և զգաւառս:

Որ եկեալ ազգատոհմիւ իւրով և գտեալ զանառիկս ամայացեալ՝[3] չինէր ըստ կարի· և պատրաստեաց նախ ի ծայր բերդիս հանգուցարան սուրբ և գլխաւոր Աւաքելոյն նշխարաց: Իսկ Ապլխարպայ վախճանեալ եգաւ ի Պապեռոնն· և տիրեաց Տարսոնի մի յիշխանաց իւրոց՝ փեսայ Օշնին· յորոյ աւուրս յարձակեցաւ ազգն Իսմայելացւոց ի վերայ գաւառին Կիլիկիոյ, ի հինգ հարիւր թուականին Հայոց (1052), և զամենայն գաշտային գաւառն աւերեաց, էառ և զՏարսոն և սրով ճարակեաց զբրիստոնեայսն: Իսկ Օշին մնացեալ յանմատչելի ամուրս՝ անփորձ, և մտերմացեալ Յունաց արքային՝ առնոյր ի նմանէ անուն պատուոյ և տուրս գանձուց առատապէս: Յետ սորա վախճանին տիրեաց որդի իւր Հեթոռմ[4] հայրենի աթոռոյս, և պատուեցաւ ի Յունաց արքային Ալեքսէ

1· Մեծ Հայոց ամենէն արեւելեան հիւսիսային սահմաններէն:

2· Ուրիշէ պատմուած պիտի ըլլայ· այս նշխարքն չէ Մատն Պետրոսի պատմուկն յ'234 Յօդուածի, այլ թուի Լաւսաւորչի և Տրդատայ առեներն բերուած:

3· Այսինքն, այդ ամուր բերդերն՝ աւերուած երեսէ ձգուած գաւր է և նորոգեր է:

4· Հայ աւանդօքն Օշնի Հայրն այլ Հեթում կոչուէր, յորմէ բոլոր ցեղն Հեթմեանք:

Մեբաստացւս անուամբ. յորոյ ժամանակին եկն Փըռանգն և էառ զսուրբ քաղաքն Երուսաղէմ, և զԱնտիոք և զԿիլիկեցւոց քաղաքս, ի ՇԽէ (517=1098) թուականին։ Եւ յետ ժամանակաց անձուկ բազում նեղութեան կրեաց ի նոցանէ սերաստացւան Հեթում՝ վասն հայրենի բերդին. և զերծեալ յամենայնէ օգնութեամբն Աստուծոյ և սրբոյ Աստաքեղոյն Պետրոսի, փարթամացաւ և մեծացաւ օգնութեամբ թագաւորին Յունաց Յովհաննու[1]։ Եւ զի ունէր որդիս վայելուչս և դստերս՝ որք կատարեցան հասակաւ առաջի իւր, ամենայնցոյց զոմանս ի նոցանէ. և զաւագ որդին իւր որոյ անունն Օշին՝ եթող ընդ իւր միալ առանց ամենայնութեան. իսկ Մեբաստայ որ յետ նորա՝ ետ զՊապերօնն, և միոյ ի դստերացն փեսայացոյց զեղբայր կաթողիկոսին Հայոց Գրիգորի՝ զՎասիլ, որք էին թոռունք Գրիգորի մագիստրոսի Իվնեցւոյ։ Իսկ յետ վախճանին Հեթմայ պայազատեաց զհայրենի աթոռն՝ հարազատ որդին նորա Օշին, և պատուեցաւ յարքայէն Մանուէլէ սեբաստոս անուամբ. և փարթամացաւ բազում գանձիւք։ Յորոյ ժամանակս դարձեալ սիրեաց Յունաց արքայն Տարսոնի և այլ քաղաքաց Կիլիկիոյ[2]։ Սմա հարընացոյց փեսայն իւր Վասիլ ըզդուստր եղբօր իւրոյ Զօրավար անուն՝ զանխլաբար ի կաթողիկոսէն յեղբօրէն իւր, վասն խղճին որ կայր վասն խնամութեանն[3]. և լեալ սմա կին ժրա-

1. Կիս ժանն, յամս 1118–1143։
2. Ա. Լեւոն և Բ Թորոս Պարոնայք ժամանակ։
3. Վասիլ եղբայր Շնորհալւոյն՝ կին առեր էր զՄաթիլդիկ դուստր Հեթմայ որդւոյ Օշնի. ասոր համանուն որդւոյն՝ Օշնի՝ որդին Հեթումի՝ կին առաւ զՇահանադոխտ՝ դուստր Շահանի Զօրավարի եղբօր Վասլի և Ն. Շնորհալւոյ. որով այս Բ Օշնին առած է իր քեռւոյն դուստրը. այս է մերձաւոր խնամութիւնն, զոր հայր հարսինն Զօրավար՝ և փեսայն Հեթումի, խղճահարելով՝ առանց յայտնելու կաթողիկոսին (Գրիգորի՝

գլուխ և պսակ առն իւրոյ, իբրեւ զայգի վայելուչ զնորատունկս զաւակաց ծաղկեցուցանէր չուրջ ըզհայրենի սեղանովն, և միային յօրհնութիւն Աստուծոյ։ Յորոց ծնաւ յետ անդրանիկ դստերն՝ որդի՝ Հերոդէ անուանեալ ի Ո թուականին (600=1151). և երկրորդ՝ հայրս մեր (Ներսէս) վասն որոյ բանս է։

Որոյ ի սանդիւց հասակն պատահեաց ախտ ցաւոց. բերաւ ի հաւատարիմ ծնողացն և ընծայեցաւ ամենօրհնեալ և միշտ փառաւորեալ Աստուածածնին՝ ի տաճար անուան իւրոյ որ ի վանքս Մկեռռայ[1], առընթեր բերդին։ Եւ սկսեալ ի գեռատոյս հասակէն յուսումն դպրութեան, ըստ յօժարութեան ծնողացն ընդ այլ եղբարս. մանաւանդ ի քաջհաւատ մօրէն իւրմէ դաստիարակեալ յամենայն երկիւղ։ Իսկ բարեպաշտ իշխանն Օշին բերեալ ուստերս հինգ և դստերս երեք, և համբերեալ պէսպէս փորձանաց վասն առ Յունաց արքայն հաւատարմութեան[2], լի աւուրբք ի ծերութեան հասակն՝ յաթոռ

եղբօր Շնորհալւոյ). պսակը կատարել առին։ Այսպիսի պսակ մի ընծայեցաւ մեր եկեղեցւոյ և ազգի գերագոյն պսակաց մին, Ներսես Լամբրունացի, և իր հարապատքն, նշանաւորք հանճարով և բարեպաշտութեամբ, որպիսի էին և քաւերքն և անզուգական եղբայրն Հեթում–Հեղի։ Տես յետոյ և գՅօգուածն 304։

1. Այս մեծ վանաց սատարգրութիւնն այլ գտուի ի Սիսուան, նայնպէս և Կոստանդին կաթողիկոսի շինած և հօն դրած Սրբոց նշխարաց Պահարանին սատարագրութիւնն, որ և հրատարակուի այս դրոցս մէջ։

2. Գլխաւոր փորձանք բերդըդն էին Ռուբինեանք, զորանք կայսերքն Յունաց համարբէին իրենց երկիրն (Կիլիկիոյ) յափշտակող. Հեթմեանք այլ Հաւատարիմ Հպատակ ըլլալով կայսերաց՝ Ռուբինեանք նեղէին զանոնք և զանային սիրել Լամբրունի։ Զատնք Հաշատեցընելու համար Հարկ եղաւ Շնորհալւոյ գալ մինչ Նորգեղն, և խնամութեամբ կապել։ Թէպէտ յետոյ այս այլ բաւական չեղաւ Ռուբենի և իր եղբօր Մեծին Լեւոնի, որ Լամբրունի և բովանդակ Կիլիկիոյ սիրելով՝ միապետեց, և ամենքն լռեցին և հաւանեցան։

իւր և ի մէջ եղբարց և զաւակաց՝ օրհնութեամբ փոխեցաւ առ Քրիստոս, և եցոյց անդրանիկ որդւոյն Հեթմոյ՝ զտէրութիւն հայրենի աթոռոյն. իսկ նուիրելոյ որդւոյն որ Աստուծոյ՝ կալ ի գլուխ առ յինքենէ չինեալ եկեղեցւոյ սրբոյ վանիցս։ Եւ տուեալ Աստուծոյ չնորհ անդրանկին՝[1] խոհեմութեան և իմաստութեան՝ գնաց առ արքայն Յունաց Մանուէլ, և փարթամ տրօք էառ զհայրենի պատիւ սեբաստաւորութեան։

Իսկ այս որ ի կրօնաւորականս էր վիճակ՝ յետ դաստիարակելոյ մանկական ուսմամբք, ի վեցտասան ամ ընթացից հասակին ածաւ յերկիւղազարդ մօրէն իւրմէ առ կաթողիկոսն Սուրբն Ներսէս, որ յաջորդեալ էր զաթոռ եղբօրն՝ Գրիգորի, ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ զարդարեալ. և սա ըստ հաւատոյ հայցուածոց դստեր եղբօրն իւրոյ՝[2] զմանուկն ածեալ առաջի ձեռնադրեաց քահանայ ի կրօնաւորական ձեւ, և կոչեաց յանուն իւր Ներսէս. զոր թողեալ մօրն առ ոտս նորին ի վարժուսն՝ զնաց յերկրպագութիւն սուրբ տեղեացն Երուսաղէմի։ Այլ Ներսէս կացեալ ի հայրապետական աթոռն փոքր մի աւուրս՝ ի չնորհէ ձեռնադրութեան զօրացեալ հոգւով՝ տենչայր յանդրադարձ կեանս միաբանութեան և ընթերցման. և սուրբ հայրապետն ուրախացեալ ընդ յառաջադիմութիւն մանկանն՝ առաքեաց զնա ի վանսդայս Մեծն Յովհ. յորս շրջելով գործնական նիստութեամբն[3] և տեսողականին կրթութեամբ յառաջէր, և նկրտէր հասանել ի լրումն առաքինութեան ի սէրն Քրիստոսի։

Եւ յետ ամաց դարձեալ ի հայրենի աթոռոյն և

1. Որ է Սեբաստոնն Հեթում, յետոյ կրօնաւորեալ և Հեղի անուանեալ։

2. Որ է մայրն Ներսեհ՝ Շահանդուխտ. տես նախընթաց երեսի 72 ծանօթութիւնը։

3. Թերեւս աշխատութեամբ աղքատօրէն ապրելով՝ իմանալու է։

փափագանօք ի ծնողէն և յեղբարցն, ոչ հաւանեցաւ կալ ի գլուխ ուխտին՝ որ աւանդեալ էր նմա[1] ի հօրէն իւր. այլ ի մէջ լերինս յամայացեալ տեղիս, ընդ հոգեւոր դաստիարակին իւրում ճգնաւորեաց՝ եղեալ մնայր ի միայնութեան. և քաղցր էր նմա այն՝ քան զամենայն հեշտութիւն. և կոչէր անապատն իւր բնակութեան՝ Աստուածածին Սաղրոյի, ի հոսանս գետոյն Ձեռակրայ[2], և մերձ նմին տաճար Սրբոյն Գէորգայ. յորում յանձուկ սենեկի՝ ի գիշերի և ի տունկեան անհանգիստ յղութեացն, և միայն կատարէր զգործ սուրբ պատարագին պաշտամանն։

Իսկ ի ՈՒԲ թուին (622=1173) փոխեալ առ Քրիստոս հայրապետն Ս. Ներսէս և յաջորդեալ յաթոռն սուրբ՝ նորին եղբօր որդին Գրիգորիս՝ մականուն կոչեալն Տղայ, որ և քուերորդի հօր սորա, ձգէ յինքն զմանուկս Ներսէս հրամանաւ պրոյ. և սա վասն առ նա անանձրպետ սիրոյ, և վասն թերի ունելոյ զվարժուսն գրոց՝ փութացաւ առ հարազատն իւր հայրապետն սուրբ. և նորին խնամօքն ի ձեռն վարժապետաց սրբոց քննեալ տեղեկացաւ հին և նոր կտակարանաց իմաստից։ Զոր՝ քան և երից ամաց ձեռնադրեաց հայրապետն՝ եպիսկոպոս Տարսոնի նոյն և Լամբրունին և չրջնական գաւառաց, և առաքեաց առ իւրս պատուով։ Իսկ սորա եկեալ խուսափէր ի հովուութեան ըզբաղմանց, և ի տենչանս ընթերցման գրոց նկրտէր. և զի ոչ կարէր ըստ տափման իւրոյ ունել զանդրաղութիւն, փախստական լինէր այսր անդր ի հեռաւոր տեղիս։ Եւ զի վարժեալ էր ի մանկութեանն չանիւ մօր իւրոյ զհելլենական գիրն՝ տենչմամբ որ առ նոսին իմաստութեամբն, եմուտ ի կղզին Կի-

1. Ա.յսինքն, Սկեւռայ վանաց առաջնորդութիւնն, զոր յանձներ էր իրեն հայրն՝ Օշին։

2. Թէ վանքն Սաղրու և թէ գետն Ձեռակրի չատ ծանօթ չեն. տես ի Սիսուան։

պրոս աղքատապէս, մինչ անդ ի կատարեալ ուսումն նոցին հաւատոյ[1]։ Սակայն ոչ ետ թոյլ բաղձանք մօրն և սէր եղբարցն, յորժամ լուան՝ ածին վերստին անտի բանութեամբ։ Եւ ծանուցեալ թէ ոչ կարէ հեռանալ, ել դարձեալ յառաջին իւր անապատն՝ կոչեցեալ Սաղրու, յորում զանձուկն ունէր սեննեակ, և զգաստիարակ հոգեւոր հայր իւր Ցոհաննէս, բնակեալ ի տեղւոյն, և անդ հաւաքեալ զամենայն աստուածային գիրս, արգելեալ ի տեղւոյն ամաց ժամանակ, և կեայր ընդ մարմնոյ և բանիւ Աստուծոյ, որ քաղցր է ի քիմս ծամողացն՝ քան զմեղր բերանոյ. պաշտէր ի տերունական աւուրս զգոհութիւն սրբոյ պատարագին խորհրդոյ, և յայլ աւուրս մնայր յառանձնական սենեակն յընթերցումն և ի գրութեան, և յաղօթս զբաղեալ։ Իսկ հոգեւոր հայրն իւր և դաստիարակն Ցոհաննէս՝ ի նստելն երբեմն երբեմն առ նմա՝ քննէր զմիտս Սաղմոսացն, և ի լուծանելն՝ ազաչէր զրել զնոյն և թողուլ ի պէտս գկնի եկելոցն։ Ցայնժամ ըստ կամացն Աստուծոյ և ըստ հնազանդութեան խորհրդին՝ սկիզբն արարեալ գրել զքննութիւն երգոց Սաղմոսին, ի չրջանս աւուրց ամաց իւրոց քսան և վեց թուոյ և թուականիս վեց հարիւր քսան և եօթանց (1178), և կատարեալ ի քսան և ինն աւն[1]։

Ցետ այսր փութացաւ ի լեառն որ առ ընթեր մեծին Անտիոքու, ի վանօրեայն՝ որ ի Լատինացւոցն և ի Հելլենացւոցն պայծառանային անդ աստուածահաճոյ կարգօք և կրօնիւք, և բնակեալ անդ աւուրս ինչ՝ թարգմանէր զՄեկնութիւն Ցայտնու-

1. Երեք տարուան մէջ՝ իր տարիքին 26–9ին, Ն. Լամբրունացին քննէր, մեկնէր գրեր է բոլոր Սաղմոսաց գիրքն՝ երկար և լուսաւոր բացատրութեամբ որ մեծ գիրք մի եղած է և մեծագոյն գործ, մանաւանդ հեղինակին դեռ երիտասարդ հասակն այլ նկատելով։

թեան Ցոհաննու[1]։ Եւ բռնադատեալ դարձեալ ի սիրոյ հայրապետին սրբոյ Գրիգորի՝ որ կոչէր հրամայական աստուած, գնաց առաջի նորա. ողբանաք և աշարկութեամբ հաւանեցուցանէր կալ ի գլուխ ժողովոյն[2] որ հաւատացաւ նմին ձեռնադրութեան։ Եւ այսպէս զսլացաւն մտաց[3] ընդ իւրեւ նուաճեալ հոգեւոր հօրն, առաքեաց զսա ի նուաստ գձնութենէն յաթոռ իւր պատուով։

Ի նոյն ժամանակի և եղբայր իւր մեծապատիւ սերաստոս Հեթում, ամենապատիւ վայելչութեամբ չինեալ էր զտաճար ազօթից ի տուրբ ուխտս, և նկատրագրութեամբ պատկերաց զարդարեալ. ընկալեալ զելեալ յանապատ փեսայս գեղեցկացեալ աստուածային հանճարովն՝ որպէս լուսին, և պայծառացեալ գիտութեամբն որպէս զարեգակն և հիացուցանող վարուք, կացուցին յաջմէ սորա գդչխոյ սուրբ տաճարիս զարդարեալ և պաճուճեալ[4]. և բազմեալ ի քահանայական աթոռն, և ի տօնի խաչուհւոյն ետ զնազարզութիւն՝ ժողովոյս. և յարուցեալ կատարեաց զոքանչելի խորհուրդ սրբոյ պատարագի, յիշատակ վրկագործութեան Քրիստոսի և քաւութիւն ժողովրդեանս. որոյ հաղորդեալ տե-

1. Տես յետոյ Լամբրունացւոյն այս և ուրիշ գրոց Յիշատակներն ի յաղարդ 306 Յօդուածի։

2. Ժողովրդեան կամ թեմին հոգն։

3. Ներսիսի արգարեւ բարձրասլաց միտքն փափագէր ուսմանց և աստուածային մտածմանց՝ յառանձնութեան, բայց կաթողիկոսին հրամանաւ և վախմ՝ հարկ եղաւ զսպել իր մտաց և հոգւոյ բարձր սլացքը, և իջնել հոգալ իրեն յանձնուած ժողովուրդը։

4. Երկերգոցին ըսածը (գ. 6. 2. 9) յիշեցընէ, չատ յարմարապէս. «Ո՞վ է սա որ ելեալ գայ յանապատ » ահ... գեղեցիկ արպէս զլուսին, ընտիր արպէս զա- » րեգակն ». և Համարի զներսէս փեսայ՝ եկեալ առ Հարսն իւր՝ առ սուրբ եկեղեցին Ակեւսայ, որ և բազմելով յաթոռն քահանայապետական՝ տայ ժողովրդեան զաղջոյն խաղաղութեան (ի տօնի վերափոխման)։

սութեամբս և ճաշակմամբ, ուրախութեամբ մեծաւ մատուցաք փառս Աստուծոյ: Եւ յայնմ հետէ բուռն հարեալ ի վշտակցութիւն ժողովոյն՝ բարեկարգութեամբ տնօրինէր ի հօրէն իւրմէ աւանդեալ սուրբ ուխտիս. իջեալ օր ըստ օրէ ի ժողով քաղաքին Տարսոնի՝ մխիթարէր զնոսին վարդապետական բանիւ, և հանգուցանէր յինքն զամենայն տեսողս և զլսողս, ոչ միայն զոր ի Հայոց ժողովս, այլ և զՓռանգաց ազգ, եւս Ցունաց, իւրաքանչիւր ազգացն կարգաց և կրօնից տեղեակ գոլով, և յընտրողութիւնն հաւանեցուցանող կամ հաւանեալ:

Իսկ յետ ամաց ինչ անցելոց զօրանայր արեան հարազատ սոցա Ռուբէն[1], և յինքն նուաճէր յետ մահուան Մանուէլի արքային զՄամիստա և զՏարսոն, և ագահութեամբ որպէս զԱքայար զայդին Նարովքայ՝ բանադատէր զայս աստուածատուր ամբոցս ի սոցանէ, յորում մնացեալ զամ մի ողջ յարգելանի և կրեալ զնոցա թշնամութիւնն, դարձեալ այցելութիւն առնէր Աստուած և ուղղէր սոցա զթագաւորութիւն. և մանուկն Ռուբէն ի գլուխ երկրորդ ամին վճարէր մահուամբ, և խնդրէր ի սոցանէ ներումն թագաւորեան մանկական որ առ նոսին սխալման: Եւ յաջորդէր զիշխանութիւնն հարազատ եղբայր նորին բարեմիտն Լեւոն, և կապէր ընդ նոսա անանձնրպետ խաղաղութեամբ: Որ և ի տօնս տէրունականս առ իւր տանէր զհայրս մեր, և առ ի նմանէ վարդապետական խրատով և սրբոյ պատարագին նուիրագործութեամբ մխիթարէր, հանդերձ բազմութեամբ ժողովոյն:

Իսկ զի ի սոյն աւուրս առաւ վանս մեզաց մերոց սուրբ քաղաքն Երուսաղէմ, յայլասեռից, և ինքնակալն Հռոմայ՝ որ (է) Ալամանաց[2] թագաւոր՝

1. Ռուբէն Բ, որդի Սահֆանէի:

2. Փրեդրիկ Շիկամօրուս, Barberousse, անուանեալ. որ յառաջ քան զներսէսի գեղապանութեամբ իրեն հանձնէն. Սելեւկիայ գեղոյն մէջ լողանալու առեն խեղդամահ եղաւ:

լսէաք թէ յառաջէ յարեւելս՝ ի փրկութիւն սուրբ տեղեացն. խորհուրդ էառ մեծ իշխողս Լեւոն՝ զհայր մեր սուրբ առաքել ընդ առաջ նորին հրեշտակութեամբ. և վասն այսր մտածութեան գնայր առ սուրբ Հայրապետն Գրիգորիոս՝ ունել զնորին հրամանն և զկամս ընդ իւր: Եւ ի նոյն ձանապարհի խորանարնակ ազգն Իսմայէլի յարձակեցան ի վրայ, և զձանապարհակից եղբարս և զկրօնաւորս՝ սրով ճարակեցին առընթեր քաղաքին Մարաչայ, և զբեռնակիր զրաստան յափշտակեցին. մնացեալ խնամօքն Աստուծոյ միայն սա և եպիսկոպոսակից հարազատ իւր Ցոհաննիսեան[1] և վարժապետն Գէորգ[2]: Եւ զի ունէր ընդ իւր զայս գիրս սրբոյ Պատարագին քննութեանն և եկեղեցական կարգաց՝ յինքենէ ասացեալ չնորհիւ Ս. Հոգւոյն, յափշտակեցաւ յաւազակացն և չմնաց հաւատարն, տրամեցաւ յոյժ. և ի դառնալն առ մեզ վերստին՝ զգուշացեալ զի մի և այս Մեկնութիւն Սաղմոսիս յիրիք չիոթմանէ՝ որ իւրն է գիր՝ պակասեսցէ և հաւատարն ոչ մնասցէ, յորդորեաց զկրօնակից եղբայրս մեր զԳէորգ՝ սկսանել և գրել. և նա յօժարութեամբ յանձն էառ, պատրաստեաց զնիբն և սկիզբն արար: Իսկ ապա փութացեալ իշխանական հրամանն զձանապարհն որ առ ինքնակալն Հռոմայ թագաւորն Ալամնաց, ձանապարհակից էառ իւր զԳէորգ, և ինձ Յառուէլի նուաստի հրաման ետ զսկսեալն ի նմանէ՝ աւարտել. զոր յօժարութեամբ յանձն առի, և պինդ հաւատով ի փառս Աստուծոյ կատարեցի ի թուիս ՈԼՓ (639=1190): Այս ամք երեք են կործանման սուրբ տեղեացն Երուսաղեմի:

Եւ յիշանել հօրս մեր ի Տարսոն առ ի նաւար-

1. Թուի իր երբեմն գաւառիարակն:

2. Գէորգ Սկեւռացի կաշուած գիտնական վարդապետն, որ ներսիսի առաջնորդութեամբ Հարանց վարք գիրքը նորէն կարգաւորեց:

կել, ի ճանապարհին որ առաջի կայր՝ եհաս ինքնակալն յԻկոնիոն, և յետ փոքր ինչ աւուրց զօրք նոքին ի Տարսոն, և մնաց սոցին յառաջելն: Իսկ իմ ի գրելոյ զմատեանս ոչ թուլացեալ, քանզի առնուի ի սմանէ զլուսաւորութիւն հոգւոյ, առընթեր կացեալ միայնութեամբ սուրբ ուխտիս. այլ հրաժարեցի, և խնամօքն Քրիստոսի ի վերջին կէտս ժամանեցի. և սպասաւորեցի զկնի եկելոցդ մատուցանել զաստուածային իմաստից ի հոգեւոր մեր հօրէս, զմայլեցուցիչ հոգւոց և մխիթարութիւն և բժշկութիւն մարմնոց: Եւ յաւարտումն սորին փոքր ինչ թողի ձեզ պատմութիւն կենաց սորին ընթացից, զի մի մնասցէ տակաւին յառաջել ժամանակին՝ սորին քննողի ոմն և ոչ սան և վիպագրն. որպէս և մեք այսօր ունիմք զրազում հարց մերոց և վարդապետաց Հայոց, այսինքն զԳաւիթ Ներգինացի, զԳրիգոր Նարինկեցին և զՄովսէս Խորենացի և զայլս, որոց ի բանիցն պարարտութենէ զուարճանամք, և զգիտարուն կենաց և վարուց փափագելով գիտել՝ ոչ ունիմք, և ոչ մի բան վասն երանելեացն պատմութիւն: Ցաղագս այսր՝ զտորայս մինչեւ ցայս, որ է կենաց իւրոց ժամանակ ԼՀ (38) ամ. ցուցաք համառօտ. և մաղթեմք Քրիստոսի տալ զոյն մեզ՝ եւս երկարութեամբ աւուրց՝ ի գլուխ բարի հովուութեամբն, և հանճարեղ այցելութեամբն՝ խնամիչ սուրբ ուխտս և առաջնորդ ժողովոյս: Եւ զիմս աղքատութիւն դնել սորին օրհնութեամբ ի գամբարան հանգըստեան ընդ սրբոց իմոց հարցն, որ այժմ հուսք եմ սոցին ծերութեան ալեօք կոծեալ:...[1]

Ի թուականիս Հայոց ՈԼԹ (1190–1) գրեցաւ աստուածախոսմ մատենիս օրինակն՝ ձեռամբ Սամուէլի նուաստ և յետին գրչի, հրամանաւ սրբասքնեալ վարդապետի և արհի եպիսկոպոսի մեր

1. Քանի մի տող բան էքրեւ աւելորդ թողուած է այս տեղէն:

րոյ Տեառն Ներսիսի, ի նախայիշատակեալ սուրբ ուխտս Սկեւռայ, առ ընթեր հայրենատուր ամրոցի տերանց մերոց Լամբրունի. յիշխանութեան մեծահանճար աստուածասէր սեւաստօսի Հեթմոյ, և ի վերակացութեան Տեառն մերոյ Ներսեսի և եղբարց սոցին, Սպիրատի և Շահնշահի, զորս տացէ Քրիստոս ի հոգեւոր և ի մարմնաւոր իշխանութիւնս՝ բազում ժամանակս, և ի փոխելն յաշխարհէս՝ ի պարս սրբոց հայրապետացն և աստուածասէր իշխանացն գտանցէ ի ժողովս արքայութեան իւրոյ ընդ ամենայն Սուրբս:

Յիշեցէք բարեաւ և զբարի ծնողս սոցին զնախ փոխեալսն առ Քրիստոս, զմեծանունն Օշին, հանդերձ երէց դստերաւն Մարեմաւ և կրտսեր որդեկաւն Գրիգորիւ, զի հանգիցեն ի գոգն Աբրահամու և մխիթարիցին փառօքն Վաղարու. և մայր սոցին Շահանդուխտ ամենաբարի և ճգնազգեաց, այժմ կրօնաւորեալ ի ձեռաց որդւոյ իւր՝ սուրբ հօրս, երկու դստերօքն, Շուշանաւ և Ցալիթայիւ[1], որք նորին ճգնող չաւզայն հետեւին, զի մխիթարեսցին ի կեանս զաւակաց իւրեանց և եղբարց, և առքսք ընդ նախահանգուցեալսն փրկեսցին յիշխանութենէ խաւարի, և փոխեսցին յարքայութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ի մասն վիճակի Սրբոցն ի լոյս, և ի յարազարմ խնդութիւնն. ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

1. Թէ այս երկու քոյերքն և թէ մայրն Շահանդուխտ՝ հաւատաւորաց՝ այսինքն կրօնաւոր կանանց կարգ և ձեւ առին, իրենց Սուրբ որդւոյ, եղբօր և առաջնորդի Ներսիսի ձեռօք: Աքանչելի՛ հայրութիւն:

ՅԴ

Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՒՆԵՑԻ[1]

Սուրբ և երջանիկ հայրն մեր Ներսէս՝ էր ազնուական ծնողաց զաւակ, շառաւիղ գոլով ծննդոց սուրբ և մեծ Լուսաւորչին մերոյ Գրիգորի, և մեծաձաւր ազգական եղանելի կաթողիկոսացն Գրիգորիսի Վկայասիրի և Գրիգորիսի և Ներսեսի Կայեցւոյն[2], գոլով որդի Օշնոյ տեառն Լամբրունի: Զսա ի տղայութեանն խոստացան ծնողքն՝ տալ Աստուծոյ ընծայ, զի որպէս Սամուէլն ուխտեալ էր յորովայնէ. սակայն զի տեսին զնա կայտառ փայլմամբ տղագային չնորհացն, զղջացան զարձեալ՝ չտալ խոստացելոյ ուխտին. այլ կամէին առ իւրեանս պահելով՝ ժառանգ մարմնաւոր իշխանութեան առնել: Եւ նոյն ժամայն հիւանդացաւ մինչեւ ի մահ. յայնժամ մայր նորա առեալ ի գիրկս իւր և տարեալ ընկէց զնա յեկեղեցի Սրբուհւոյ Աստուա-

1. Ն. Լամբրունեցւոյ մահուանէն վեց տարի վերջը՝ իրեն ամենէն արժանաւոր հետեւողն և բարեկամն Գրիգոր Մկեռտչին՝ անոր երկար ներբողական վարքը գրած է, որ և տպագրուած ի ԺԵ հատոր Սոփերաց. իսկ այս տեղ հրատարակուածին, որ բաւական ընթերք և սրամտոց գրուած մ'է, անծանօթ է հեղինակն. վերնագիրն է. «Ներբողեան և յիշատակ սուրբ և երիցս » երանեալ սիեզերալոյս հօրն մերոյ Սրբոյն Ներսէսի » ամենիմաստ վարդապետին և արհի եպիսկոպոսին » Տարսոնի »: Գուշակուի որ այս գրուղն այլ ժամանակակից և ականատես ըլլայ Սրբոյն:

2. Լամբրոնացւոց կամ Հեթմեանց ցեղին և ազգաբանութեան վրայ զատ ի նախընթաց Յօդուածէն տես ի Սիսուան, 77–85: Գրոցս 414 երեսի 74 ծանօթութեան մէջ նշանակուեցաւ իր ազգակցութիւնն յիշեալ կաթողիկոսաց հետ:

ծածնին, ի մատակայ վանսն որ Մկեռտա[1] կոչի. և առ ժամայն չնչաբերեալ կենդանացաւ տղայն՝ և ոչ ել ի վանից, այլ անդէն մնաւ:

Եւ յայնմհետէ սկսաւ զպնդութիւն պահոց և զխոչորութիւն զգեստուց, զաքնութիւն ամենագիշեր հսկմանցն, և զհանապազորդ աչխատասիրութիւնն, մանաւանդ զանձատացութիւն և զաղքատասիրութիւնն առատ ողորմութեամբ: Ընթեռնոյր և ուսանէր միշտ և գրէր անհանգիստ գոյագ և զգեստիկ. մինչ զի ոչ երբէք մեկնեաց զոտս իւր յանկողինս՝ ի տուէ կամ ի գիշերի. այլ զգերեկն պատրաստէր աղօթից, ընթերցման սուրբ գրոց և վարդապետութեան և ամենայն բարի գործոց. և զգիշերն նստեալ գոլով յաթոռ ինչ, անդ վճարէր զքնոյն պէտս սակաւ մի, և վաղվաղակի զարթուցեալ կանխէր յաղօթս, յաչխոյն բղխելով աղբիւրս արտասուաց: Գոլով զգաստ, ժիր, խոնարհամիտ, հեզ, զգուչացեալ բանիւ բերանով, և առաքինի բոլոր չարժմամբ հոգւոյ և մարմնոյ, ընդ աստուածայինսն խօսելով, զունայնաբանութիւն ի բաց վտարէր, խոկալով միշտ զվերինսն՝ զանց զոտորայնովքս առնէր. և ի նուն ժամանակի քան զյոլով աստուածային վարժիցն ի չափ հասանէր. մեծութիւն և փառք երկրաւորիս՝ սարդիոստային կարովակի բրայն երեւէր:

Սա մինչ տղայն էր՝ տարեալ եղեւ առ կայսրն Յունաց. և նա ասէ. Է՛կ, մանուկ, զի արասցուք զքեզ որդեգիրս և ժառանգ մեծի իշխանութեան. իսկ նա տակաւին տղայ գոլով՝ իմաստուն պատմականաք[2] զարմացուցանէր զնոսա, ասելով, թէ, Ես երկնաւոր թագաւորին եմ զինուորեալ, մշտնջենաւոր բարեացն ակնկալութեամբ: Եւ այսպէս ի մանկութեան գոլով աստուածխմաստ և անբիծ և ա-

1. Կիլիկիոյ Հայոց ամենէն նշանաւոր վանաց մէկն. տես ի Սիսուան:

2. Պատասխանելով պէտք էր ըլլալ:

նարատ յամենայնի՝ գտաւ լցեալ բոլոր տեսակօք բարեաց։ Վասն զի ի մանկութենէ բնակեցաւ ի նա չնորհք Սուրբ Հոգւոյն, որով և սկսաւ մեկնել լուսաւոր մտօք դիւրալուր բանիւ զմատեան աստուածային գրոց. զոմէ ասեն, թէ մինչդեռ վեշտասանամեան էր, սկսաւ գրել զմեկնութիւնս և բանս իմաստասիրեցս. զի ի տան կաթողիկոսարանին վարժէր առ Սուրբն Ներսէս, որ էր նորա մօրն հօրեղբայր։ Մեկնեաց զդիրսն Սողոմոնի՝ զԴաւդովղն և զԻմաստասիրսն, այլ և զերկոտասան Մարգարէիցն, և զՅաղմոսն Դաւթի[1], ի խնդրոյ միանձանց որ բնակեալ էին ի լերինն, յորում ինքն առանձնացեալ ճգնէր. զոր բացայայտեաց՝ եթէ որով մտօք պարտ է մեզ զնոյն երգել։ Զորմէ պատմեն, եթէ ի մեկնելն՝ ապաստուր նորին տարեալ դնէր միանգամ յատուրն ընդ երեկս՝ զհացն և զբաժան ամանօք ի պատուհանն խցկանն, և ի միւսում աւուրն երթայր զմիւսն դնել, միշտ զնախ եգեալն անարատ ի տեղին գտանէր անթերի. քանզի ունդով չատանայր[2]։ Սա մեկնեաց զՊատարագին խորհուրդն[3], և զերբուսական Առակսն. թարգմանեաց և զՄեկնութիւն Յայտնութեան Յովհաննու. թարգմանեաց և զգիրս Գրիգորի Պապայն, որ Տիալոգոս[4] կոչի. և այլս բազումս. զի ուսաւ և ըզգալութիւն յունարէնն գրոցն, նոյնպէս և զլատինացւոցն. և յոլով թարգմանութիւնս արար, և

1. Ընգարձակ և հոգեվից գործ, և չատ զարմանալի, մանաւանդ իր գրած տեղն տարբերին նկատմամբ։

2. Միայն հաւնտի տեսակ (ինչպէս ոսպ, սիսեռ) կամ խաշելէն կ'ուտեր։

3. Որ իր վերագոյն գրուածներէն մէկն կամ գլխաւորն է։

4. Dialogues. Հայերէն ասոր Տրամախաւսութիւնք կ'ըսեն. Պապն իր աշկերտին հետ խօսելով, Սրբոց և ճգնաւորաց վարքեր պատմէ և խրատներ տայ. չորս գիրք բաժնուած է գործն։

Լուծուհուն գրոց գժուարագոյն բանից, և երգս պաշտամանց։

Սմա ետ հայրն իւր 30,000 դահեկան ոսկի, և նա յերիս մասունս արար զայն. միումն չինեաց անօթս և զգեստս եկեղեցւոյ, և զմիւսն բաշխեաց աղքատաց, և զերրորդն՝ գրել ետ աստուածաչունչս և զմեկնութիւնս սրբոցն հարցն. այլ և ինքն ձեռամբ իւրով գրեաց կրկին զԱստուածաչունչ սուրբ գիրս, և զամենայն բանս սրբոց հարցն։ Քանզի յամենայն երեկոյի մինչև այրելին մոմեղէնք՝ գրէր, և ապա անդէն յաթոռն իւր նստեալ՝ սակաւ մի ննջէր. և խակոյն յարուցեալ երթայր յեկեղեցին. ուր, սահմանեաց ի ներքս պաշտել զամենայն աղօթսն[1], և զառաջին կանոնն ի ձայն պաշտել տայր։

Սա բանագատեալ եղեւ ի Գրիգորիսէ որ Մեծն կոչէր[2], որ էր եղբօրորդի սրբոյն Ներսիսի, և յետ նորա կալաւ զաթոռն ի Կայսր–Հռոմէական, և ի նմանէ հարկեալ ձեռնադրեցաւ սարկաւագ, ապա քահանայ. և յետոյ եղեւ եպիսկոպոս մեծի մայրաքաղաքին Տարսոնի, որ և հովուէր բարւոք զեկեղեցին Աստուծոյ։

Սա յոյժ սիրեաց զմիաբնակեան վարս և ճգնէր անսուաղութեամբ պահոց առաւել յոյժ. զի զաւուրս եօթն անսուաղ կեայր, ոչ ձէթ և ոչ գինի, ոչ ձուկն և ոչ թռան, այլ միայն ընդօրէ չատանայր, և անձանձիր ընթեռնլով և գրելով և հակելով հանապազ յաղօթս և ի կանխելն առ Աստուած։ Սա յանապատի խոյս տուեալ՝ զանմահութեանն ողջունէր զկեանս, ըստ Յովհաննու և Եղիայի, յանապատի բնակել յօժարէր. ի մարմնի ընդ անմարմինս անմարմնական վարուք հանդիսանայր. և ապա

1. Եկեղեցւոյն մէջ. վասն զի ամանք եկեղեցիքն դուրս կ'ընէին ժամատուցութիւնը։

2. Ընդհակառակն՝ Տղայ կ'անուանուէր, իր ազգականաց մէջ իրմէ տարւօք Գրիգոր մ'այլ ըլլալուն համար։

զինու յաղթութեան սպառազինեալ՝ ախոյեան եղա-
նէր դիմամարտին[1] մենամարտիկ հանդիսիս. զի
մի՛ անփորձաբար յառպարիզին եղեալ՝ զէնրնկէց
յանդիմանեացի. յորում և բնակէրն բազում խո-
նարհութեամբ և հեզութեամբ ընդ եղբարս. բզ-
նուաստագոյն սպասաշարկութեան լցուցանելով բզ-
չափ՝ լռութեամբ բազմիս, ի դէպ ժամանակի զպատ-
չաճան խօսելով: Եւ ապա զի՞նչ ասէր. ըստ նմա-
նութեան զօրավարաց՝ որ ի տեղիս մարտին մատ-
չին, հանդէս առնեն զօրաց, նոյնպէս և սա զա-
ռաքինութեանցն զինուորս ի հանդիսի կացուցա-
նէր. զկառս մարմնոյն զգայութեամբք ընդ հոգե-
կանս լծեալ, ի վերայ խոհականն բազմէր կառա-
վար: Եւ յայսոսիկ յոլովք յառաքինութեանցն զի-
նուորացն՝ ինքնակամ յամայութեանն վայրի լինի,
և ներհակքն ենթադրեալք. որպէս բամբասանք,
հայհոյութիւնք, գաւտարկարանութիւնք, ստախօ-
սութիւնք, երդմնահարութիւն, կեղծաւորութիւն,
մարդահաճութիւն, չոմծգութիւն, երկբանութիւն,
ատելութիւն, չարախօսութիւն, ախակալութիւն,
զրպարտութիւն, յափշտակութիւն, նախանձ, թըշ-
նամութիւն, հարստահարութիւն, լուտանք, հակա-
ռակութիւնք, անհնազանդութիւն, կռիւ, սուտ
վկայութիւն, և այլն ամենայն: Նա և զկերակրոյն
զհարկ վճարէր՝ ոչինչ կարի հեռաւորութեամբ յան-
մարմնոյն անկարօտութենէ:

Սա երբէք ոչ լքաւ յ՝արութենէ[2], ոչ կասեցաւ
ի զգաստութենէ, ոչ թուլացաւ ի պնդութենէ, ոչ
յաղթեցաւ յագահութենէ, ոչ մեղկացաւ ի հեզ-
գութենէ, ոչ ի վայր քարչեցաւ ի ցանկութենէ.
ոչ ծառայեաց նախանձու, ոչ ի ներքոյ անկաւ որա-
վայնի, ոչ սարկացաւ յամպարտաւանութենէ, ոչ

1. Այսինքն, սառամանային հետ զիմագէմ կռուէր:
2. Երկարաբանութիւն է հեռուեալդ, բայց զեղ-
ցիկ համեմատութեամբք վայելուչ և արժանաւոր գո-
վեստին:

ողոքեաց զփառասիրութիւն, ոչ կերակրեաց զմա-
խանայն ճճի, ոչ տածեաց զսրտմտութենէն գա-
զան, ոչ աճեցոյց զբարկութենէն բոց, ոչ սրեաց
զհայհոյութենէն սուսեր, ոչ թեքեաց զնենգութեան
ուղիդ, ոչ մխեաց զչարախօսութեան նիզակ, ոչ ար-
ձակեաց զլուտանացն ըմբաքար, ոչ ձգեաց զնա-
խատանաց նետն. ոչ ցանեաց զթշնամանաց կայ-
ծակունս, ոչ խոցեաց բամբասանացն նրանաւն[1].
ոչ եհար ատելութեանն վաղակաւորաս, ոչ պար-
տեցաւ ի յիրդմանէ, ոչ ընկղմեցաւ յարբեցու-
թիւն, ոչ մոռացաւ յանդգնութենէ, ոչ գլորե-
ցաւ ի կեղծաւորութենէ, ոչ յողդողդեցաւ ի մար-
դահաճութենէ, ոչ անկաւ յերկպառակութենէ. ոչ
պատուեաց զքսութիւն, ոչ մեծարեաց զչոգմոգու-
թիւն, ոչ հաճեցաւ ընդ նորափառութիւն. ոչ կա-
մեցաւ ընդ ամպարշաւաճութիւն, ոչ փառաւորեաց
զհեշտախառութիւն, ոչ խոնարհեցաւ ընդ բարձրա-
մրտութիւն, ոչ թշնամանեցաւ ի հեզգութենէ, ոչ
անարգեցաւ ի ծուլութենէ, ոչ տիրացոյց յարծաթ-
սիրութիւն, ոչ հնազանդեցաւ գաւտարկութեան, ոչ
յաղթեցաւ ի խեղկատակութենէ, ոչ լծակցեցաւ
հերձուածոց, ոչ միաբանեաց հերեսիոտութեան, ոչ
ընկլաւ յանհայեցաբանութիւն, ոչ խօսեցաւ ի նան-
րութիւն, ոչ խորհեցաւ զանօրէնութիւն, ոչ կապե-
ցաւ ի սնոտեաց, ոչ պարաւանդեցաւ յանհայեցո-
թեանցս: Այլ սիրեաց զսրբութիւն, հետեւեցաւ
ճշմարտութեան, ողջունեաց զմաքրութիւն, բաղձա-
ցաւ անախտութեան, ընդգրկեաց զպարկեշտու-
թիւն, ցանկացաւ իմաստութեան, տենչաց արդա-
րութեան, փափագեաց խոնարհութեան, բուռն
եհար զզօրութենէն. ստացաւ զողջախոհութիւն, սե-
փականեաց զխոնարհութիւն. յերկիւղէ չարէ օտա-
րացաւ, և աստուածային երկիւղին ի ներքոյ ետ
զանձն. սիրոյ աստուածութեան զհետ ընթացաւ, զա-
տելութիւն յինքենէ ի բաց հեռացոյց. զմաղթա-

1. Նրաև, տեսակ մի թուր, սուր:

նացն ստացաւ գանձ[1], ի պաղատանաց ի բաց ոչ եկաց, զարտասուս աղբիւրաբար բղխեաց. փրկուեցան խորհրդոյ սպասաւորեաց, կենարարն բաշխման պաշտպանեաց[2]. ողորմութեամբ զարդարեցաւ, զօսարասիրութիւն ոչ մոռացաւ, զպարտ եթող պարտականին. հեզութեամբ ստացաւ զբարիս, զանձնախակալութեան ամբարեաց գտուցուածս: Ի վերին գիտանէ ոչ չինաւ՝ ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ. զնա ունէր նպատակ և նախադաշափար, առ որ ի սկզբնատիպն հայելով անչեզաբար՝ ի նոյն պատկեր նորոգէր փառաց ի փառս: Քանզի քաջարուեստն ամենից հայելի եղ զնա ի միջի, արձան հաստատուն կանգնեաց, զի յողղողդն կազդուրեացին. աշտարակ անպարտելի կառոյց, զի փախուցեալք պատսպարեացին. բժիշկ իմաստուն յայտնեաց, զի հիւանդացեալքն մեղաք՝ առողջացին. Չահ լուսոյ պայծառացոյց, զի կուրացեալք՝ նաւաւ լոյս տեսցեն. ծառ բազմպտուղ անկեաց, զի այնու ազգ մարդկան կերակրեացին. աղբիւր յորդահոս բղխեաց, զի որք տապացեալքն իցեն՝ զովացուին. խորան հովանոյ սփռեաց, զի անյարկքն տաղաւարեացին. քաղաք ամրագոյն փակեաց, զի ի գերողէն ապահովեացին. հովիւ իմաստուն կացոյց, զի պահպանեացին ի պատառողէն[3]. չտեմպան գանձու չնորհեաց, զի աղքատքն փարթամասցին: Ցայտուիկ՝ և զօրութեանցն խառնին հրաշք, այտոց հալածումն, և ախտից բուժումն: Ախտիսեացս յանձախութեամբ, և մանաւանդ խմաստիցն և վարուցն լուր համբաւոյ՝ ամենայն ուրեք տարածեր. որ և բազումք երթային և գային՝ զօգտակարն իւրեանց հայցելով: Իսկ Սրբոյն գժուարեալ ընդ լուր համբաւոյն՝ տարաշխարիկ լինել ախորժէր, զեգիպտական հարանց զվարան յարաժամ ընթեռ-

1. Ա.յսինքն, ազօթասիրութիւն:
2. Պատարագէն և հաղորդէն նշանակէ:
3. Գայլ նշանակէ, և անով մոլորեցուցիչ մարդ:

նըլով ի նոցին տեղիս փափաքէր. նա և զմեծի և առաքելաչնորհ հօրն մերոյ Լուսաւորչին զմենաստանացն լուեալ, ըղձայր լինել թերեւս ի նոյն տեղի. վասն որոյ երկիցս և երիցս անգամ միով արբանեկաւ յուղի անկեալ՝ զանխլաբար հետիոտս ընթացեալ և հեռացեալ բազում միջոցաւ, աչխատութեամբ մեծաւ և պատուամամբ ոտիցն, ոակայն ի գլուխ ոչ եկ, ի հետամտացն բռնաբար արգել լինելոյ. ապա գկայ առնու և դադարէ յակամայ: Եւ ի տարակուսանս անկանէր անհնարինս. քանզի անաեղուն լինել հօտին ոչ կամէր, և յանապատի առանձնականութենէ զրկիլն գժուարէր. կարեւոր զբազմացն չնորհել զիրկութիւն համարէր, և զանզբաղութիւն անապատին զլանալն՝ ոչ յօժարէր. զՊօղոսին ապա կրեր գկիրս, «Եկանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած փափաքեմ, և սիրել ասէն եւս կարեւոր վասն ձեր»: Եւ այնպէս յետ բազում անգամ բռնադատեալ լինելոյն, և յաղով անգամ հրաժարելոյն, աստուածային ընտրութեամբն զքահանայապետականն ընկալաւ գաստիճան և գչնորհս. և ձեռնադրեցաւ արքեպիսկոպոս Կիւլիկեանն Տարսոնի, զմեծ առաքելոյն[1] փոխաց նորոգելով գտեղի, և բերելով գնորին հոգի չնորհս և զմեծի սիրոյն որ առ Քրիստոս՝ առ ամենեսեան: Եւ այնուհետեւ նորոգէր զբրոց հարցն օրինադրութիւն, զոր ի վաղեմի խափանեալն էր. և նախ անդէն յիւրում քաղաքին հաստատէր և ուղղէր. յորում նամակելով ինքն՝ հանապազորդէր աստուածային վարդապետութեամբ զցայգ և զցերեկ. աչխատասիրաբար զհաւատացեալ հօտն արածէր միշտ և կերակրէր իրրու աստուզապէս հաւատարիմ և իմաստուն անտես, ի ժամու՝ ծառայակերացն զրանէն տալով կերակուր, և ի սեղանատոս սփռելով զտանուտեառն արծաթ: Եւ որպէս ճշմարիտ Յիսուսի պատկեր՝ առնէր և ուսուցանէր,

1. Պօղոս Առաքելոյ:

զանձն տալով աշակերտելոյն օրինակ, և հանապազորդ ժրութեամբ քահանայագործէր Աստուծոյ արժանաւորապէս. և ոչ այնու չատանայր, այլ և ընդ ամենայն վիճակեալսն միչտ անձանձիր չրջելով՝ խրատէր և ուսուցանէր, ի ժամու և ի տարաժամու հասանելով ի վերայ, յանդիմանական սաստական և մխիթարական մատակարարութեամբն. ձրի տալով զաւետարանն՝ ոչ ինչ առնոյր յաչակերտացն, և մանաւանդ ինքն ամենայն ուրեմն զկաթողեալսն կերակրէր հանապազորդ ողորմածութեամբ, հայր որբոց լինելով և խնամակալու այրեաց, հիւանդաց և բանտելոց այցելու. յորս՝ զամենայն զգոյսն իւր ծախէր: Բայց յայսցանէ, զի ի մեծի եկեղեցւոյն Տարսոնի յամենայն չորեքչաբաթին և ուրբաթին՝ բաչխէր հաց և բակլայ եփեալ՝ անձանց չորեքչարիւրից՝[1] անխափան հանապազ. ուղղէր և պայծառացուցանէր զամենայն եկեղեցւոյ ըզկարգս: Ձչմարտապէս երկրորդ Լուսաւորիչ երեւեցաւ, զորոյ հօրն պքրտունս և զերկունս ի միտ առնելով, զնշոյլս լուսոյ արձարծելով նորոգէր չինութեամբ վերստին. զցանկ խռովութեան և զատելութեան կրճիւն՝ որ եմուտ ի մէջ քրիստոնէից, քակել և բառնալ յօժարէր. զոր և արարն իսկ հանապազորդ աչխատութեամբ վարդապետելով զնոյն և զրելով. և ինքն զամենայն քրիստոնեայսն սիրելով յաղագս Ջերմն սիրոյն Քրիստոսի. վասն որոյ և յամենեցունց սիրեցեալ և ընկալեալ լինէր, և ի բոլոր հերձուածոց հեռանայր. զհարցն սրբոց զուղղափառ կանոնադրութիւնս յառաջնոյն մինչեւ ցեօթներորդ ժողովն որ եղեն, անչարժապէս յանձին ունելով, և միաբանեալ գոլով ի մի կամս, զիկէ և առաքելական եկեղեցի, յոր և զամենեսեանն փութայր և ուղղափառութեամբ ի խաղաղութիւնն, ի միաբանութիւն սիրոյ վերածել. զխոչ և զխութն հօրդելով, զոր յամայութենէ և անտե-

1. Սուրբն այլ գրէ զայս առ Լեւոն Ա. 300 ըսեչով:

բունչ գոլոյ, զինքնաբոյս փուչս ծերատուր աւանդութեանց և զեկամուտս սովորութիւնսն ի բաց խլելով և յատակելով, որ ի հեղգութենէն էր անտառացեալ, կամ ի քուն լինել մարգկան՝ որոմն թշնամւոյն ի վերայ ցանեալ: Քանզի եթարձ զոր հեղգութեամբ մտեալ էր ի ներքս. որպէս զհնձմանկունս առանց ընդ աստիճանս եկեղեցւոյ կարգաւ անցանելոյ, և զիւրաքանչիւրսն ըստ առաքելական օրինադրութեան պաչտելոյ՝ ի միում աւուր ածելն ի քահանայութիւն. և նորոգեաց ըստ սրբոց հարցն կանոնի զաստիճանս գրակարդացաց, կիսասարկաւագաց, և սարկաւագաց, որպէս նախնեաց էր սովորութիւն՝ անպակաս առնել[1]: Այլ և զպատարագն հաստատեաց՝ անծածուկ կատարել ի տեսիլ ամենայն ժողովրդեան. զարդարեաց զասուածային պատարագին և զեռնադրութեանցն և զամենայն խորհրդական գործառութեանցն եկեղեցւոյ կատարմունս. և զթերին ելից թարգմանութեամբ: Ուղղեաց զեօթն ժամս աղօթիցն, զառաջնում և զգիչերոյ, անխափան և անթերի կատարել ի մէջ եկեղեցւոյ: Պատուեաց զամենայն տեղուռնական տօնս, և զբոլոր Սրբոց յիչատակս, և կարգեաց յամենայն աւուր յիւրաքանչիւրսն յօրում աւուր և հանդիպին՝ անխափան կատարել զպարտական պաշիւ՝ տօնասիրաբար:

Ուսոյց բարեզարդապէս կրօնաւորացն հաստատել սահմանադրեալ օրհնութեամբ կրօնաւորութեանն, աքեմով և կնկղով, և պարկեշտանալ կերակրով, և կանոնաւոր բարեձեւութեամբ, զհարցն օրինակ բերելով: Թարգմանեաց զսուրբ Հարցն զվարանի[2], և

1. Փոխանակ այլեւայլ ժամանակ կամ մէկ մէկ քահանայական աստիճանները տալու, մէկ օրուան մէջ ձգաքը դպիր, սարկաւագ և քահանայ ձեռնադրեին, զոր խափանեց Սուրբն:

2. Թէպէտ և կար հին թարգմանութիւն Հարանց վարք կոչուած գրոց, որ է ճգնաւորաց վարք և

զՍրբոյն Բենեդիկտոսի կանոնաւորական սահմանադրութիւն[1]։ Շինէր և մեծապայծառ եկեղեցիս և վկայարանս մարտիրոսաց, և զարգարէր նկարագրելով զամենայն տեօրինական գործս Փրկչին մերոյ. և միշտ անյագ բաղձանօք զաստուածային պատարագն մատուցանէր ի տօնս տերունականս՝ հանդիսաւորապէս, ընդ քահանայից և սարկաւագացն. իսկ յայլ աւուրս մի կամ երկու պաշտօնէիս առանձին անխափան կատարէր։ Եւ ասի յոմանց, եթէ սովորութիւն էր կատարելոյ ի վերայ կրծից կապել ի ժամ աստուածային պատարագին, զի երկիցս և երիցս անգամ սարկաւագն քամէր[2]։ Այլ և ի ջերմութենէ սիրոյն որ առ Քրիստոս, յորում ազգի յեկեղեցւոջ հանդիպէր՝ հաղորդէր և պատարագէր մեծաւ հաւատով, բաց ի հերետիկոսացն. փախչէր ի բաժանմանէ Նեստորի, և հրաժարէր ի չարաչար միաւորութենէն Եւտիքոսի և Դիոսկորոսի. ուղղապէս զմիջինն և զարքունականն պողոտայն ընթանայր. ոչ չափթէր զմարդկութիւնն և ոչ բաժանէր զԱստուածութիւնն. և գնոյն զուղղափառ հաւատոյն զնչմարտութիւնս, զմաքուր և զբարի գործոց ուղղութիւնն՝ յանձին ունելով, անձանձիր միշտ վարդապետէր. զի զոր սիրոյն իւղով անչէնանելի ի նմա էր լուցեալ՝ զՍրբոյ Հոգւոյն զերապն, բարձրացուցանելով ի պատուոյ աստիճանին աչառնակն, և այնուհետեւ առհասարակ զամենեսեանն լուսաւորէր աստուածային պայծառութեամբ։

Եւ այնպէս զգուշանայր ամենայնիւ ի պահպանութեան հօտին՝ բազում չանիւք և վաստակօք. երբեմն հասարակօրէն վարդապետէր, և երբեմն առանձին ընդ իւրաքանչիւրսն խօսէր՝ բազում հմուտ ճարտարութեամբ, ըստ որում պէտքն պահանջէր. զիւրաքանչիւր ոք որսայր, զոմանս ատտիւ յանդիմանէր, և զկէսս մեղմով խրատէր, զոմանս ողբանօք դարձուցանէր, և զայլս ահարկու դիմօք նուաճէր. որք ապարատանք և ընդվզեալքն էին՝ զեհենին այրմամբ և տապարին հատմամբն կասէր. և որ դիւրալուրք էին՝ արքայութեանն յուսով յորդորէր. որք ի հեշտութեանն ցաւն էին ծնկեալք՝ արտաքին խաւարին խարանաւն կարէր. և որք զօրութեան բուռն հարեալք էին[1], հանգստեամբ դրախտին հրճուեցուցանէր. որք սովորութեան չարեաց անլուծիւ հանգուցիւք կապեալք՝ անքուն օրդանց խածանող ժանիւքն խզէր. և որք ի բարիս կրթեալք՝ ի հաւատոյն հօր գոգն գգուէր. որք յարութեան յուսով զօրացեալք էին՝ հաստատէր, և որք յանդոսիկ հիւանդք էին՝ ողջացուցիչ բանիւք բժշկէր. և ամենայն ուրեք ընդդիմակաւքն զներհակն քակտէր։ Անաչառութեամբ յանդիմաներ, և ոչ առնոյր ակն յումեքէ, ոչ բռնաւորի երկեղ նուաճէր, և ոչ տկարաց տայր համարձակել. այլ զութեամբ առ ամենեսեան վարէր. նպատակ առաջի աչաց ունելով որով և իւրէ օրինակաւ՝ զչհիլն մեղմով և կամ խոտութեամբ. որ և վամենեսեանն ուղղեալներ ի քարոզութիւն աւետարանին։

Այսոքիկ քահանայապետիս հանդէս. այս յառաջադիմութիւն, և եւս քան զայն, յոր անկարատնայ բանս ձկտել, իրր ի գերագոյնս ճառեղեաց, քանզի բնութեանս հարկ պահանջէ, և նախ հորդեալն անվրէպ ուղի՝ յինքն ձգէ, մանաւանդ եթէ յոդնամանակեայ բաղձանաց ընուն իցէ։

Արդ, հնաս որում ցանկայրն, ժամանեաց որում

---

[1] Բայ ի Ս. Բենեդիկտոսի ամենածանօթ կանոններէն, մեկ առանձին վանքի մի կանոններն այլ թարգմաներ է մեր Սուրբն, վրիպեր (Պեռանժէ) անուամբ աբբայի մի գրուած, որոյ յատկութիւնքն ընագիրն անծանօթ էր և մենք նորէն հայերէնէն ի լատին փոխեալով՝ հրատարակեցինք, յամի 1880, երկուքն ևս։

[2] Սիրաբուղխ և սրտաբուղխ արցունքներ. զորս յեռագոյ Ողբոյ մէջ՝ (Յօդուած 307) իր աչկերան Խաչատուր՝ ձեղեղ արցունք կ'ըսէ։

[1] Ուժով, առաքինութեամբ աշխատողք։

փափաքէրն. քանզի ոչ անգիտանայր զառաջիկայ կիտին կատարումն, ըստ աստուածային առ նա յայտնութեանն, որպէս թէ ասել. Զհաւատսն պահեցեր, զընթացսն կատարեցեր, զթշնամին ընկըղմեցեր, զյաղթութեան նշանն կանգնեցեր. արդ, արագեա ի պսակն, ժամանեա ի հանգիստն, փութա առ բրաբիոնն, և ընկալ զյաղթանակն: Այսմիկ իրագեկ եղեալ՝ ընայր անբերելի խնդութեամբ. և զգեստաւորեալ խորհրդական զգեստիւ՝ մատուցանէր զփրկագործ պատարագն. և հաղորդեալ ի կեն_արար և ի մեզաքաւիչ խորհրդոյն, յորմէ ոչ երբէք ի բաց եկաց, յետ այսորիկ յառաջ կոչէր զեզբարսն, և զելիցն խօսէր զբան[1]. սակաւուք երկրորդէր զխրատականն՝ սիրելի որդւոյն աւանդէր՝ անփախադրելի մնալ ի նոյն՝ հաստատէր. Սուրբ եմ յարենէ ձերմէ, ասելով. քանզի ոչ խորչեցայ ի պատմելոյ ձեզ զամենայն կամս Աստուծոյ[2]. և յանձն առնեմ զձեզ Աստուծոյ և բանի չնորհացն նորա. զամենայն ձեզ աւանդեալ աստուածային պատուիրանս՝ զգուշութեամբ պահեցէք, մշակ առանց ամօթոյ լինելով. և զուժանելի մարմինս իմ տուք հողոյ, ազօթիւք յուղարկաւորութեամբ: Եւ որք մերձաւորքն էին՝ իբրեւ լուան զհրաժարականն բան, ազգս առեալ կոծէին զանձինս մորմոքելի սգով՝ զրաժանելն ի նմանէ: Եւ ինքն ի վեր զակն կարկառեալ, յորմէ ոչ երբէք խոնարհեցոյց՝ ըստ ասելոյն, Աչք իմ յամենայն ժամ առ Տէր են, զուարճ դիմօք և արտասուալից խնդութեամբ՝ ասէ. Ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: Եւ իսկոյն փչեաց զմաքրական հոգին ի ձեռս Աստուծոյ, որում անձկացեալն էր. և թագաւորեաց յաւիտենական կենաց ընդ սուրբս և ընդ սիրելիսն նորա, և ընդ նոսին փառաւորէ զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1. Ինքն իր մահուանը վրայօք խօսէր:
2. Պօղոս Առաքելոյն հրաժարական խօսքը կրկնելով: Գործք Առաքելոց, Ի, 27:

ՅԵ

ԱՌԱՔՈՒՄՆ ՆԵՐՍ· ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ Ի Կ· ՊՕԼԻՍ ՎԻՃԵԼ ԸՆԴ ՅՈՑՆՍ

(ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՑԻ)

Ըստ թագաւորական հզօր հրամանի՝[1] եհաս ժամանել Սրբոյս՝ յարքայանիստ քաղաքն Կոստանդնուպօլիս. և զի նախ իմաստասիրութեանն և առաքինութեանն հասեալ համբաւ ի լսելիս ինքնակալին և պատրիարքին, յոլով պատուոյ և մեծարանաց ի նոցանէ լինէր ընդունակ. նա և ըստ բնաւոր նախնի իմաստասիրութեան և յարգանաց հանճարոյ՝ ի քննութեանն բանս արկանէին զաստուածային ի մէջ առեալ կտակարանաց, զի նոսա զանխուլ և զժուարաճառ բանս առաջի արկանէին[2]: Եւ զի յոքունց իմաստասիրաց էին ժողովք, ամենեքեան ի մի վայր գումարէին. և ըստ սեփհական իշխանութեան՝ զհարցականսն ինքեանց առնէին, ի նըմանէ զլուծմունսն պահանջեալ: Եւ էր տեսանել իբրեւ զաղաւնի ի մէջ բազմաց բազէից խուճապեալ գոլով[3], երկիւղ իմն զառաջինն ըստ առնին

1. Լեւոն Ա. թագաւոր մեր զրկէ զն· Լամբրունացին, իր հոգեկիր Ս· Շնորհալւոյ օրով սկսեալ Յունաց հետ կրօնական միաբանութեան խնդիրը քննելու. որոյ վրայօք ինքն իսկ Լամբրունացին յիշատակ թողած է, ոչ այնքան հաւանելով Յունաց դառնզութեան՝ որքան նոքա իր զգօնութեան:
2. Սուրբը զրոց և Ս. Հարց մէին խօսքերով չանային փորձել զներսէս յաղթահարել, և իրենց բազմաբեմութեամբն և փառօք՝ վախցընել զնա:
3. Գեղեցիկ նմանութիւն, այնքան մեծափառ և խրախճ մեծապետաց և աստուածաբանից մէջ՝ միակ գտուելով հեղհեղին Ներսէս:

առաջարկութեան բերեալ, սակայն ի Հոգւոյն չնորհ խրախուսեալ յառաջ մատուցեալ իմաստասիրդց հանճարով և հեզութեամբ առ պատասխանին, այնքան հաւանական տուեալ՝ որ և անակնկալն էր ի նոցանէ, մինչեւ հիացմամբ պակնուլ ի զարմացմանէն, եւս ընդ միայնակն այլաբարբառ և տաբաշխարհիկ գոլով՝ ի մէջ այնքան աթոռակալ իմաստասիրաց. և գովական բանս ի բարբառ իւրեանց առ ինքեանս հանրապէս նմա չնորհեցին. Ոչ որպէս լուաք միայն, ասեն, այլ գերազոյն եւս տեսաք:

Իշխանութիւն ապա հրաման առեալ՝ գրով զհարցականսն աւանդէր[1]. և ի բազում աւուրս հանուորացն ի մի վայր գումարեալ՝ խոկմամբ և առանձինն, էր ինչ զոր պատասխանեցին, և յոլովք այն՝ յոյս պարտեցան: Եւ այսպէս զարմանալի ի միմի նոցա երեւեալ, բազում պատուով և ձրիւք ի թագաւորէն և ի պարիսպքէն, անդրէն դառնայր: Եւ զանց զրազում արարեալ օթեւանօք՝ ի սեպհականն ժամանէր գաւառ, առ թագաւորն[2] և կաթողիկոսն, մեծաւ զՀանդիպումն արարեալ խնդութեամբ. և զովորականն ի վար արկեալ վարդապետական բանն՝ խրատէր և ուսուցանէր, յանդիմանէր և սաստէր, մխիթարէր և ողջոյներ: Եւ ի տունն մեծաշուք և ի ժողովն՝ զիշխանսն և որք ընդ իշխանութեամբ, զառաջնորդսն և որք ընդ ձեռամբ՝ անյաչաղատպէս զամենեսեան խնամարկելով:

1. Յունաց հարցմանց պատասխանները տալէն ետեւ, ինքն այլ անունդմէ պատասխան ուղեց, գրով տալով հարցմունքը և գրով պահանջելով պատասխանները. նոքա չկըրցան վինքը գոհացընել և գոհ դարձընել, թէպէտ և շատ մեծարեցին և ընծայեցին. բայց ինքն գոհ չըլլալը և հիմակուան ոճով ըսելով՝ յունախաւսութեամբ դառնալը՝ գրած է Շնորհալւոյ թղթոց օրինակի մի մէջ, որ է վերոյգրեալ վկայութիւնն:

2. Լեւոն Ա, որ դեռ մեծահանդէս չէր օծուած:

(Վկայութիւն նորին Ներսիսի Լամբրոնացւոյ վասն այսր իւնդրոյ).

Ներսէս նուաստ ստացող մատենիս գրչութեամբ որդւոյ իմոյ Գրիգորիսի, ածի զսուրբ տառս[1] ընդ իս ի Կոստանդնուպոլիս, ի թուականիս Հայոց ՈՒՂ (1197–8), և առաւ Նամակաբս արարեալ խոստակցութիւն, գտաք գոսա անծանօթ ի սոցանէ՝ թանձրաբարբառ և հրէական կամօք ընդ նիւթս կապեալք, որք ոչ ախորժեն ծառայել Աստուծոյ նորոգութեամբ Հոգւոյն՝ այլ հնութեամբ գրոյն. և սարկացեալ ի հոգեւոր կամս մեր՝ գարձաք յիմաստախորհ յուսոյ սոցա ամօթով:

Նամակքն այս են. Գիրքն Երեմիայ և Գերմանոսի, Թուղթքն փոտայ[2] որ ի Հայք վասն հաւատոյ, և Աբանասի և Մանեայ[3]:

1. Ներսէսի Շնորհալւոյ Թուղթերն են առ Մանուէլ կայսր գրած, Միաբանութեան խնդրոյն համար:

2. Յունաց Կոստանդնուպոլսի պատրիարքներն են, որ կրօնական խնդրոյ համար գրած են առ Հայս:

3. Լամբրոնացւոյ և Յունաց վիճաբանութեան գրուած մի կայ, բայց հարազատ չերեւիր. վերջաբանն կ'ըսէ, թէ յետ վճարելու վիճաբանութեանն՝ յաղթութեամբ Լամբրոնացւոյն, « եկն սին իմաստասէր կրօնաւոր առ Ներսէս, և ասէ, թէ, Առանձինն առեր զովութիւն ի մեծապատացն և ի կղերիկոսացն և ի յիշխանացն և առ հասարակ ժողովրդոյն. զի որ ի մարտ ելանէ՝ թէ և ինքն գիտէ զիւր ըմբռնիչն թոփ տալն, բայց հայհոյգքն առաւել եւս սեւանեն. այսպէս և մեք զքո յաղթութեանդ՝ հակառակամարտին: Նայնպէս և իշխանքն գային և ասէին զարմացմամբ, թէ, Մին մարդ զայսքան մեծ ժողովոյտին կացոյց. և ի հարցանելն և ի Սրբոյն Ներսէսի պատասխանելն՝ ամենեքեան ափ ի բերան եղեն. և շնորհիւն Աստուծոյ՝ Հայոց եկեղեցւոյն եղջիւրն բարձրացաւ. և զոր Հռոմ գառնէին՝ գառաւ անպատակ Հայ և ճշմարտութեանցն վարպետ. և եղիտ զնոսա անօսրացեալ ի գիտութենէ և թանձրացեալ ի հեշտութիւն մարմնոյ »:

ՃԶ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԻՆՔՆԱԳԻՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ, ԳՐՈՑ ՆԵՐՍԻՍԻ Ա. ԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Ա. Յիշատակարան Մեկնուրեան Խորհրդոյ Պատարագին.

Ա՛յս բանք և ատտուածային օրինագրութիւնք՝ սպասաւորութեան մատց և ձեռին իմոյ թշուառ Ներսեհի՝ ասացաւ ի Հոգւոյն Աստուծոյ, ի նահատակրեալ թուականիդ ՈԻԶին (1177), և ի ժամանակ կենաց մերոց մինչ էի քահանայ և չորս ամաց[1], և կայի ի լուսթեան և միայնութեան ի մէջ լերանցն Տաւրոսի[2]. իսկ յետ ամաց ինչ զարձեալ ածայ յեկեղեցական պաշտօն և ի մարմնական գործոյ զրաղանք. և զհուր տաչտրման սրտի իմոյ որ ի բանս ցուցաւ՝ հնարէի յայլս բորբոքել, և ըստ բանիս՝ գործ գլխաւորել. և անկարանայր այս: Քանզի միանգամ և երկիցս հանի զսոյն յատեան և ի ժողովս եպիսկոպոսաց և իշխանաց, և ոչ եղեւ պարապումն՝ գոնէ ընթերցման կամ ունկնդրութեան: Եւ ի սոյն ժամանակս ի թուականութեանս ՈԼԶին (636–1187) յաւիշատակեցաւ սուրբ քաղաքն

1. Կարծեմ ոչ աք ի մերոց մատենագրաց և հաշիւ ամանք յօտարաց՝ այսպիսի ծանր և խոհական հոգեւից գիրք մի գրած են իրենց 24 տարուան հասակին. զար և անհնար էր գրել՝ առանց երկու տաղ վիրը ըսած հրոյ տաչտրման սրտին, որ և անչուշտ Հոգւոյն Սրբոյ շնորհաց լոյսն և եռանդն էր: Ամեն բան նկատելով՝ աւագ գործ մ'է (Chef d'Oeuvre).

2. Թէպէտ և եպիսկոպոս ձեռնադրուած էր՝ բայց առանձնական կենաց փափագով՝ լերանց մէջ ճգներ, աղօթեր և գրեր. ակայն ստիպուելով ի կաթողիկոսէն և ի ժողովրդէն՝ դարձաւ ի Տարսոն՝ ի թեմ իւր:

Երուսաղէմ ի թուրքաց ազգէ[1], և եկեղեցականքն և իշխանքն որք սպասաւորէին սուրբ տեղեացն՝ գերեցան. և համբաւս այս հասեալ յարեւմուտս՝ զրնաւ ազգն թագաւորօք և իշխանօք՝ ըստ հրամանի Հռովմայ հայրապետին չարժեաց գալ յայս աշխարհ: Եւ մինչ նոքա հեղուին անթիւ բազմութիւնք նաւաք ի ծովէ անտի ի Պտղոմայիս[2], ի թուականութեան ի ՈԼ (638–1189–90), յղեաց իշխողս մեր մեծ Լեւոն[3] զմեզ՝ առ կաթողիկոսն սուրբ Տէր Գրիգոր յաթոռն հայրապետական՝ որ կոչի Հռոմի–կայ ի վերայ Եփրատայ: Եւ ի գնալս մեր յաւուրս Պենտակոստէից յայնկոյս Մարաշայ, յարձակեցան ի վերայ մեր Թուրք–Մարք[4]. և սրով ճարակեցին զորս ընդ մեզ կրօնաւորք և աշխարհականք՝ ոգիք իրրեւ քսան. յափշտակեցին ընդ այլ ինչսն և գրեանքս. ի վերայ որոյ ազգի անմխիթար, չունելով զհաւասարն[5]: Իսկ ապա ի տեսչութենէ գթութեանն Աստուծոյ՝ ի թուին ՈՂԱ (641–1192–3), քննեալ ուր վաճառեալ էին՝ գարձուցաք զայն ի գերութենէն. քանզի գտաւ ի գաւառն Ջահնայ[6], և ատտրութեամբ եպիսկոպոսի գաւառին Ղերսխի և վարդանայ կրօնաւորի՝ ածաւ զայն տա խս վերատին. և եղեն վշտագնեալ ոգւոյ իմոյ մեծ սիփափանք և մխիթարութիւն, և տա Աստուած երկրպագութեան գոհութիւն: Փառք Ամե-

1. Տես Յօդուած 298:

2. Թաչակրաց S. Jean d'Acre կոչած քաղաքն, ըստ արեւելեայց Աքքռա:

3. Այն տաեն Մեծ Պարոն կամ Պարոնաց Պարոն կոչուէր, տան տարի վերջն եղաւ առաջին թագաւոր մեր Կիլիկեցւոց:

4. Յայտնապէս Քուրդք կամ թափառիկ Թուրքմէնք:

5. Այսինքն, ուրիշ օրինակ չունի եղեր այդ անգին գրոց:

6. Կիլիկիոյ արեւելակողմն, Ճիհան գետոյն ա-նուամբ այդպէս կոչուած:

նաստուրբ Երրորդութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս:

Բ. Պատմաւոր Թղթոց Մխաբանուրեան (Հայոց և Յունաց[1]).

Այսմ ականատես և ականջալուր եղեալ նուաստս Ներսէս՝ համանուն որդի նորին Տեառն Ներսիսի Հայրապետի[2], ըստ փափագման քո, իշխան բարեպաշտ և հարազատ եղբայր իմ Հերոդէ, չարաչարեցի համառօտաբար գՊատճառս Եամակացն հանդերձ թղթովքն: Իսկ զբովանդակ վարս երանելոյ հօրն մերոյ և սուրբ կաթողիկոսին տեառն Ներսիսի, եթէ կամիցիս կարգաւորաբար ուսանել, նախ քան զայս է մեր աշխատասիրաբար գրեալ տապաւիկան բանիւ. զոր առեալ ի ձեռս ընթերցիս և մխիթարեսցիս հոգւով, ըստ առակախօս իմաստնոյն, եթէ, «Ցիշատակ արդարոց խնդութիւն ժողովրդոց»: Քանզի յայս փափագ միայն զքո բարեպաշտութիւնդ ի մերումս ժամանակի տեսաք՝ վար արկեալ առ ի խնդրել և յուսանել. զոր և իմ կամելով՝ ըստ կարի գրեցի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս:

Գ. Ցիշատակարան թարգմանուրեան գրոց Յայտնուրեան[3].

Այս Յայտնութիւն աստուածարան Ա՛ետարանչին Յովհաննու՝ սրբոց հարցն մերոց վարդապե-

1. Շատանց հրատարակուած են Թղթակցութիւնքն Յունաց Մանուէլ կայսեր և Ներս. Շնորհալւոյ և իր յաջորդին, Հայոց և Յունաց հաւատոյ վարդապետութեան միաբանութեան համար, որոյ համար յուսոյ և Ն. Լամբրոնացին զրկուեցաւ ի Կ. Պոլիս. (տես նախընթաց Յօդ. 305), բայց չկատարեցաւ գործն:
2. Տես 305 Յօդուածը:
3. Ոմանք վաւերական Ս. Գիրք չեին համարեր զայս:

տութեամբ պատուեալ՝ ի պէտս վկայութեանց, զերծաւ ի գայթակղութենէ կարծեաց ոմանց, որք այլանդակ իմացան զմանէ. Քանզի մեծն Դիոնէսիոս Յաստուածաբանական ճառն հիւսեաց զվկայութիւն սորա, և Երևինիոս Մեգադու[1] եպիսկոպոսն, Գրիգորիոս Աստուածաբան՝ ի Հրաժարական ճառն, Գրիգոր Նիւսացի Յեպիսկոպոսացն ժողովոյ, և մեծն Կիւրղ, Մերոտիոս[2] և Հիւպոդիտոս[3], նա և անփոյթն Իրենգիոս[4], զոր պատուեալ եկեղեցի՝ ըստ նոցին հաւանութեանն դասեաց ի կարգ աստուածաշունչ Նորոց Կտակարանաց: Որոց եղեալ և մեր ընթացակից՝ ի սուրբ եկեղեցւոյ մանկունս աւանդեցաք զսոյն, ի գաստակարգութիւն աւագելական մատենից, որպէս արդարեւ զառաքելական Յայտնութիւն. և ստուգապան արարաւ վերըստին երիւրեալ ի Հելլենացւոյն[5], իմով նուաստ Ներսիսի թարգմանութեամբ, ընդ որ և զքննութեամբ մեկնութիւն սորին ածի յեկեղեցիս Հայոց:

Արդ, որք յետ մեր լինիք սմին ընթերցողք և պայծառութեան աստուածապան մատենիս վայելողք, տացէ ձեզ Տէր շնորհք Սուրբ Հոգւոյն՝ քաղցրութեամբ առնուլ ի քէմս մտաց Հոգւոյ զբանս Աստուծոյ, որ ախորժ է քան զմեղր՝ բերանոյ: Քանզի արդարեւ յիմանալն ի սմանէ՝ թիկունս դարձուցա-

1. Մեզի ծանօթ Ս. Երինէոս կամ Իրենէոսն Լիոնի եպիսկոպոս էր:
2. Տիւրոսի եպիսկոպոս էր և մարտիրոսացաւ:
3. Ի կամ Գ դարու հեղինակ, եպիսկոպոս Հռոմայ սահմանաց, որոյ վարուց և վարդապետութեան վրայ տարակոյսք եղած են:
4. Սովորաբար Որոգինէս կոչուի. անիտրձ կ'անուանէ զսա՝ իր քանի մի սխալ և միամտական կարծեացն համար:
5. Լամբրոնացին այս Յայտնութեան զրոց հին հայերէն թարգմանութիւնը գտեր է՝ թերևս աչ ամբողջ, և նորէն յունարենէ թարգմաներ է բաղդատութեամբ կամ լրացընելով:

նէք ատելութեամբ, ըստ Երզողին, յամենայն ճանապարհս չարաց: Այլ թէ և առ մեզ ողորմութիւն ցուցանէք մաղթելով ի Տեառնէ քաւութիւն, և ձեզ լիցի ողորմութիւն, ըստ հրամանի իրաւախօսին. որ վարեցաք զաչխարհս ի ժամանակի յորում էանց սարին վայելչութիւն: Քանզի ակնարեւ աչաց մերոց սուրբ և աստուածակոխ քաղաքն Երուսաղէմ յափշտակեցաւ ի սպասաւորութենէ քրիստոնէիցն՝ սրով Իսմայէլացւոցն, ի ՈԼՉ (1187–8) թուին Հայոց. ի վերայ որոյ բազում արեանց հեղմունք Լատինացւոց բազմացեղ ազգաց, որք դաս դաս առագաստեալ նաւօք և քալապինդ հաւատով և սրտաչան արութեամբ հասին ի Պաղեստին. և անդ դիակնացեալք չուրջ զքաղաքաւն, ըստ երդոյն, և ոչ ոք էր որ թաղէր. և մեք մնացաք նախատինս գրացեաց մերոց, մինչեւ ի լրումն թուոյս ՈՒՀ (1198–9). յորում ամի վերապատուեցաւ թագաւոր Հայոց Լեւոն՝ որ յՈրբինեանց, բարեպաշտ և յաղթող Աստուծով. որոյ հռչակ արութեանն չարժեաց զմեծ ինքնակալն հին Հռոմայ զՀենրի[1], և նոր Հռոմայ զԱլեքս, որք պակեցին զամ քարամբ պատուականաւս, յեկեղեցի Տարսոնի՝ որ իմ անարժանութեամբս հովուեի[2]: Զսա Քրիստոս Աստուած մեր չնորհեսցէ մեզ երկայնութեամբ աւուրց և անվանելի յաղթութեամբ, և ի փոխելն աստի՝ սրբոց խաղաւորացն արասցէ պսակակից և խորանակից ի լուսեղէն յարկան: Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

1. Ենրիկոս Զ. որդի Ներկամօրաւս Փրեդերիկոսի:
2. Լեւոնի մեծահանդէս թագալ պսակութիւնն քէչ մի վերջն եղաւ, երբ Լամբրոնացին յերկինս էր:

Դ. Յիշատակարան թարգմանութեան Մեկնութեան գրոցն Յայտնութեան.

Յիշատակ տապխ գրոյդ Տեառն Ներսիսի գերաշխարհակ վարդապետի, զոր գտեալ ի մեծն Անտիոք, գրեաց զսա ի լուսաւորութիւն հոգւոց:

Ես Ներսէս նուաստս ի Քրիստոս, և տարտամս յուսամնասիրաց, վերջին և նուագեալ ժամանակի ծնունդ, յընթեռնուլն զՅայտնութիւնն Յովհաննէս՝ տագնապէի յանձն իմ առ ի յոչ գիտել զլուծումն բանից աքանչելեաց. և այսր անդր խուզելով զմեկնութիւն նորին ի մեր բարբառ՝ ոչ գտի: Յետ որոյ եհաս ինձ ընթանալ ի մեծն Անտիոք, և շրջելով յոր անդ վանորայք Հռոմոց և Փռանգաց, այս տենչումն բորբոքէր ի միտս իմ. ուստի և քննեալ գտի ի գրեանս հռչակաւոր ուխտին Սրբոյն Պաւղոսի՝ ի քաղաքի անդ[1], զմեկնութիւն Յայտնութեանս ի Լուսնպր[2] բարբառ, և ի նոյն գիր՝ որով վարին Փռանգք, երկու մեկնչաց արարեալ[3]. և փափագելով թարգմանել՝ ոչ գտի զոք որ յայն բարբառոյ ի հայս կարէր յեղաշրջել:

Ապա ելեալ արտաքոյ քաղաքին ի սուրբ լեառն[4] որ ի հիւսիսոյ կողմ անդր՝ ի մի վանորէիցն Հռոմոց՝ որում անուն էր Բեբիաս[5], առ ոմն արգելական միաբնակեաց՝ որոյ անուն Բասիլ, կնքեալ և քննեալ գտի զգանկալիս ի հելլենացի բարբառ և ի գիր,

1. Պօղոս Առաքելոյ նուիրուած էր Անտիոքայ մեծ եկեղեցին և վանք մի եւս Լատինաց:
2. Լամպարտացի լեզու, որ գերմաներէնի և լատինի խառնուրդ էր:
3. Գլխաւորն է Անդրեաս արքեպիսկոպոս Կեսարիոյ, ի վերջ ն կամ ի սկիզբն Զ դարուս:
4. Շատ վանքեր ըլլալով լերան վրայ՝ Սուրբ կոչուեր և լեռն:
5. Bedias, այս անուամբ գիւղ մի ծանօթ է, որ այն ատեն Տիւրոսի թեմին ներքեւ էր: Տես երես 433:

ուղղարան և վայելուչ, որ լեալ էր Աբրահամի պատրիարքի նորին քաղաքի: Եւ խնդրեալ աղաչանօք ի բարեմիտ առնէն՝ առեալ փութացայ գրովքն ի հայրապետական աթոռն առ Տէրն իմ և կաթողիկոս սուրբ Գրիգորիոս[1]. զոր ծանուցեալ ուրախ եղեւ յոյժ, և հրամայեաց թարգմանել ի ձեռն մեծապատիւն Յերապալսի[2] կոստանդեայ, որ անդ ի ներքոյ սրբոյ հայրապետին հովանեայ հանգչէր: Եւ սկսեալ օգնականութեամբ Աստուծոյ և սրբոյ Տեառն[3], նա ի թարգմանել և ես ի գրել, վերընծայեցաք եկեղեցւոյ Հայաստանեայց ուսումնասէր մանկանց՝ զայս աքանչելի և աստուածային Յայտնութեանս մեկնութիւնս: Աղաչեմ զընթերցողդ և իմաստութեան զսիրողդ, յիմանալ զսերս իմաստիցն Աստուծոյ քննութեամբ, զսուրբ հայրապետին Հայոց՝ զտէրն իմ զԳրիգոր զրարեմիտն և զբարեբէրն և զառիթն թարգմանութեանս և զհրամայող, մաղթեցէք ի Քրիստոսէ՝ յաստիս խաղաղութեամբ պահել, և ի հանդերձեալն սրբոց իւրոց յերկնից արքայութեան ժառանգակից ընդունել: Այլ և զԿոստանդին մեծապատիւն՝ որ թարգմանեաց և զԲասիլ կրօնաւոր որ զսրինակն եհան, Քրիստոս ողորմութեանն իւրոյ արժանացուսցէ աղօթիւք ձեր:

Թարգմանեցաւ աստուածային Յայտնութեանս մեկնութիւն ի թուին Հայոց ՈՒՀ, ի սուրբ և ի հայրապետական աթոռն, որ կոչի Հռոմկլա, շրջապատեալ յազգենական ազգիւրէն Եփրատայ, որ մատակարարէ բնակչացն զամենայն մարմնական պիտոյս՝ խնամօք Աստուծոյ, ընդ հովանեաւ աստուածընկալ նշանին վանիկոյ, և այլ աքանչելի սերբոցն որ հանգուցեալ են անդ, ի փառս Աստուծոյ: Իսկ սրբաբանեցաւ ի նշանագրութենէն քերթողական արհեստիւ, ի յապահով անապատս ի Սուրբ Գէորգ, ի մէջ լերինս Տօրոսի, որ է ի գահ Կիլիկիոյ և ի սկիզբն Պամիւլեայ, ձեռամբ նուաստ եպիսկոպոսի նորին մայրաքաղաքի Տարսոնի՝ տառապելոյս Ներսիսի, չնորհիւ և ողորմութեամբ Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Ե· Յիշատակարան թարգմանութեան Տրամախաոսութեանց[1] Մ· Գրիգորի Ա. Պապի·

... Բազում փոյթ եղեւ ի հնումն և ի նորումս զվարուց Սրբոցն գիտակ՝ թողուլ գրով, որք պատմեցին զեղեալսն և մարգարէացան զառ յապա լինելոցսն: Եւ ոչ միայն այս, այլ և վարք Սրբոցն և առաքինութիւնք սրանցն որք յարեալս և յԵգիպտոս ճգնութեամբ երեւեցան և չնորհօք Ս· Հոգւոյն՝ ամենայն գովութեամբ զերազանցեցին, պատմի ի մէջ մեր: Այսպէս և որ մեծ է ի Սուրբս՝ Հայրս մեր ամեներջանիկ Գրիգորիոս՝ մեծանուն քաղաքին Հռոմայ եղեալ Պապ, ընդ այլ գիրս բազումս՝ զորս պաճուճաբանս և խոր մտածութեամբ խօսեցաւ, երեւեցոյց և զվարս որք յիտալիա փայլեցին սուրբ արք, և գժամանակս յորում էին և զտեղիս յորում եղեն, և արար ի հռովմայեցի լեզուս՝ զոր վասն նոցին զգիրս. և անց ընդ մէջ ամս ճԿԵ (165), և ոչ ոք փոյթ արար յեղաշրջել զգիրսս զայս ի հռովմայեցւոց լեզուէն յելլադացի բարբառ:

1· Շատ անգամ յիշեալ Գրիգոր Տղայն:

2· Այլ և այլ քաղաքք կան այս կոչմամբ՝ որ Ս· քաղաք նշանակէ· սա թուի Մմբեճ կոչուածն յաբեւելեայց, և չատ հեռի չէ ի Հռոմկլայէ:

3· Այսինքն, Կաթողիկոսին:

1· Սրբութեամբ, գիտութեամբ և գործովք գերագոյն Հայրապետիս Հռովմայ չատ նշանաւոր գրուածք մի է, և ինչպէս իրեն արժանաւոր թարգմանիչն կ'ըսէ, իբրեւ Աբեւմտեան Հարանց վարք մի· գրուածքին կերպն այլ իբրեւ հարցընդդէմ և պատասխանողի ըլլալով՝ կոչուած է Տրամախաոսութիւն, Dialogue, որ պարզաբար խօսակցութիւն կ'ըսուի:

Իսկ Զաքարիա[1] երջանիկն և հրեշտականման՝ առաքելական աթոռոյն Հռոմայ պապն, որ ի վերուստ աստուածային վերակացուիւ եամբն վերակուչեցաւ հովիւ և հովուապետ և առաջնորդ ուղղափառ հաւատոյն, աստուածասէր և բարեսէր հոգին, յետ ամենայն առաքինութեան և ուղղութեան՝ եդ զանձն իւր և յաշխատութիւն յայս, և չանիւ պար(ապ)եաց աստուածային գրոց, ըստ պատուիրանին Տեառն՝ որ ասէ, «Քննեցէք զգիրս, զի նոքօք համարիք ունել զկեանս յաւիտենական»։...[2]

Չլրս գիրս՝ որպէս վերագոյն յիշեցաք[3] զոր ասացեալ է (սուրբ) հայրն մեր Գրիգորիոս ի Հռոմայեցի բառս... զսուրբ Հարցն առաքինութիւնս, և այսպէս... զանձ անկողոպտելի եթող... հաւատարմապէս և իմաստութեամբ ստացաւ։

Իսկ ապա և հուսկ յետին ժամանակս՝ ըստ թուոյ Հայոց ՈՒՀ (628=1179) յամի, իմոյ Ներսիսի Տարսոնի եպիսկոպոսի՝ ի մանկական հասակի[4] ուսումնասիրութեան և բարեկարգութեան տենչանօք չրջելով ի վանորայսն որ առընթեր մեծի քաղաքին Անտիոքայ, ի լեառն որ Ռասխաւնիր[5] կոչի՝ յափն ծովուն, հիանայի ի տեսանելն զառաքինազարդ միայնութիւնն և զճգնութիւն հռոմայեցի

1. Սա քահանայապետ եղած է 741–52 տարիներու մէջ. ազգաւ յոյն ըլլալով՝ իր հին նախորդին (Մեծին Գրիգորի) այս գործը թարգմաներ է յունարէնի, յորմէ և Ներսէս ի Հայերէն։

2. Հայերէն թարգմանութեան օրինակն տեղ տեղ մաշած էր, որով պակաս Զաքարիայի թարգմանելուն ամբողջ յիշատակն։

3. Յիշատակարանին սկիզբն յիշած էր որ այս Տրամախօսութիւնք չորս գիրք բաժնուած են։

4. Փոխանակ երիտասարդ ըսելու՝ մանկական հասակ կ'ըսէ Լամբրոնացին, երբ 25 կամ 26 տարուան էր։

5. Արաբերէն թազի դլուխ նշանակէ այս անունը, լերան ձեւին նմանցընելով։

միաբանակեաց վանորէիցն՝ որ այժմ կոչին Փըռանգք։ Եւ իրրեւ ընդ անընդել իրս սխրացեալ՝ հարցի ընդ ումն իմաստուն կրօնաւոր որ ի Յունաց՝ Բահիլ անուն. Ուստի՞ սոյա այսքան ուղղութեան կարգացս չնորհ, որով գերազանց գտանին այսօր ձեզ և մեզ։ Պատասխանեաց. Ի Բենեդիքտոսէ երանելոյ հօրէն[1], զորոյ զվարսն պատմէ Սուրբն Գրիգոր պապն։ — Եւ ունիս արդեօք զնոյն գիրս, ասացի։ Պատասխանեաց, Այո. և երեր առաջի իմ. և իմ փոքր մի վարժ գոլով հելլենացի գրոյն՝ ընթերցայ ատ անդ. և բորբոքեցաւ յիս ցանկութիւն ստուածային գրոցս թարգմանութեան։ Այլ զի ոչ կամէի անձին անձամբ վճարել զգործն՝ խափանեցաւ յայնժամ. և թարգմանեցի զնորին Բենեդիքտոսի կարգ և զօրինս կրօնաւորաց՝ նոյնժամայն ի լատին լեզուէն, ի փառանգ վանս Ս. Պաւղոսի՝ որ ի քաղաքն Անտիոք, ի ձեռն հասարակից կրօնաւորի միոյ ի նոցանէ Կիլամ[2] անուն։ Իսկ ապա եկեալ ի վանսն որ Միխաևլակա[3] կոչի՝ հուպ Անարզաբայ, յորում բազում գրեանք ի յունական գիրս ատանդեալ է, մանրամասնաբար խուզեալ՝ գտի զայս գիրս. և հրճուեալ ի վերայ անչափ խնդութեամբ, որպէս գիտեն փորձքն ուսումնասիրութեանն՝ որ է նոյն և աստուածասիրութիւն[4], առեալ գնացի ի հայրապետական աթոռն՝ որ է Հռոմկլայ՝ յափն Եփրատայ, և կամօք Տեառն իմոյ Հռոմայեցի՝ յետ կաթողիկոսին Գրիգորոյ թարգմանեցի զսա, և

1. Արեւմտեան միանձանց կամ կրօնաւորաց նահապետը, ինչպէս Ս. Անտոն՝ արեւելեայց։

2. Կիլլոմ պէտք էր ըսել, Guillaume, գուցէ թարգմանիչն գրած էր Կիլաւմ։

3. Անչուշտ Կլայ, բերդ բառով բարգած է անունն, բայց Միխաևլ կամ Միխոլ բերդաւերն ալ է։

4. Գեղեցիկ խորհրդածութիւն. կարեւոր գիտելեաց ուսումնասիրութիւնը՝ կերպ մի աստուածաբանութիւն համարել։

ՀՄԿԼՈՒՐԻԱՆ ՅԱՅՈՒԼՈՒՐԵԱՆԻՆ ՅՈՀԱՆՆՈՒ, Ի ՁԵՌՆ ԱՌԱՔԻՆԻ ՄԵՐԱՊՕՐԻՆ ՅԵՐԱՊՕԼԻՍ[1] ԿՈՍՏԱՆԴԱՅ, ԵՒ ԻՄՈՎԱՆՈՍ ՈՒԿԱՐՈՒԹԵԱՄԲ ՅԵՂՅԵՂԵԱԼ ԵՒ ՈՒՂՂԵԱԼ՝ ԹՈՂԻ ԶՈՅՆ ՅԵԿԵՂԵՑԻ ՀԱՅՈՑ, ԱՊԱՑՈՅՑ ԲԱՐԵԱՑ ԵՒ ՀՐՃՈՒԱԿԱՆՔ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ԶՐԱՂԼՈՑՆ Ի ՎԱՐՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ: ԱՐԴ, ՈՐՊԷՍ ԸՆԿԱԼԱՒ ԶԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՀՈՄԱՅԵՑԻ՝ Ի ՅԵՐՉԱՆԻԿ ՀՕՐՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ, ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՅՈՒՆԱՑ Ի ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵՆԷ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՋԱՔԱՐԻԱՅ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԴՈՒՔ ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՅ ԷՔ ՄԱՆԿՈՒՆՔ, ԸՆԿԱԼԱԲՈՒՔ Ի ՆՈՒԱՍՏ ՊԱՇՏՕՆԱԿԻՑ ՁԵՐՄԷ ԶՕՅՆ, ԵՒ ՀԱՒԱՏՈՎ ՊԱՏՈՒԱԿԱԼ ՄԽԻԹԱՐԵՑԷՔ ԶԱՆՁԻՆՍ Ի ՅՈՅՆ ՈՐ Ի ՔՐԻՍՏՈՍ:

* ՆԵՐԲԷՆ ՍԸՐՈՒԱԼ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ[2]
ՍՈՒՐԲ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ ՍԻՐՈՎ ԹԱՐԳՄԱՆ,
ՅՈՐՈՑ՝ ՍԱՒԱՒ ՀՈԳՒՈՎ ՅՆԴԱՆ՝
ՀԱՅՑԵՄ ՆԵՐՈՒՄՆ ԹՈՂՈՒԹԵԱՆ:

* ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱՅՍ ՎԸԿԱՅԻՍ[3] ԴՈՒ ՀԱՒԱՏԱ
ԵՒ ԸՂՁԱՆՔԸՍ ԶՈՐ ՊԱՏՄԷ՝ ՍԻՐՈՎ ԳԸՐԵԱ.
ԶԻ ԵՒ ԱՅՍՕՐ ՄԵՐՁ Ի ՅԱՍՏԱՒԱԾ ԶԱՅՍ ԸՂՁԵՍՏԵԱ
ՀԱՒԱՏՈՎՔ ԸՆԴ ՆԱ ԿԱՊԵԱԼ ՔԱՆ ԶԱԳԱՑ ՈՐ ԿԱՅ:
ՅԵՐԱՒԱՂԷՄ Ի ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔՆ ՅՈՐ ԸՆԹԱՑԱՅ՝
ՏԵՍԻ ՊԸՏՈՒՂ ՍԻՐԱՅ ՍՈՑԻՆ, ՅՈՐ ՈՉ ՀԱՍԱՅ.
ՈՐՈՎՔ ՉԵՌԵԱԼ ՈՐՔ ՅԱՐԵՒՄՈՒՏՔՍ ՍՈՒՐԲՔ ՆՈՑԱ՝
ԹԷ ՄԱՆ ՊԱՏՈՒՂ ՁԱՅՍ ԱՔԱՆՉԵԼԻԱՍ՝ ՈՉ ԶԱՐՄԱՑԱՅ[4]:

1. Գ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԱՅԼ ՅԻՇՈՒԵՑԱՒ ԱՍ. ԵՒ ԹՈՒԻ ՀԱԼԱԾԱՆՔ ՄԻ ԿՐԿՈՎ ԱՊԱՒԻՆԱԾ ՄԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔՈՎ:

2. Ա.ՅՍ ԵՒ ՆԵՐՔՈՅ ԳԼԵԱԼՆԵՐԸ ԳԻՐՔԸ ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ԱՄԵՆ՝ ԶԱՐԹՈՒԵԼՈՒԹԵԱՄԲ ԶՐԵՐ Է:

3. ԹՈՒԻ ԹԷ ՀԵՂԻՆԱԿԻՆ՝ ԳՐԻԳՈՐ ՊԱՊԻ՝ ՀԱՄԱՐ Կ'ԸՍԷ:

4. ՅԵՐԱՒԱՂԷՄ ԵՂԱԾ ԱՄԵՆ՝ ՏԵՂԱՅՆ ԿՐՕՆԱԱՒՐԱՅ ԱՍԱՒԱԾԱԲՐՈՒԹԻՒՆԸ ՏԵՒՆԵԼՈՎ, ԵՐԲ ԱՐԵՒՄԸ ՏԵՍԱՅՑՆ ԱՅԼ ՏԵՍԱԻ, ՉԶԱՐՄԱՑԱԻ ԹԷ ԱՆՈՆԳՄԷ ԱՒԵԼԻ ԷՐ ԱՍՈՒՆՑՆ:

Զ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԼՈՒԺՄԱՆՑ ԽՆԴՐՈՑ, ԱՌ ՄԻՒԿՈՒՆ ԱՇԱԿԵՐՏ ԻՐ.

ԱՅՍՔԱՆ ԱՌ Ի ՄԷՆՉ ԴԱՅՐԱՔԱՂ ՀԱՐՑՄԱՆՆ ԼՈՒԺՈՒՄՆ, ՈՉ ԸՍՏ ԻՆՔՆԱՅՕԺԱՐ ԿԱՄԱՑ, ԱՅԼ ԸՍՏ ՔՈՂԴ ԲՆԱԴԱՏԵԼՈՑ՝ ՈՐԴԻ ՍԻՐԵՑԵԱԼ ՍԻՄԷՈՆ, ՅՈՐՍ ՈՐՔԱՆ ԶՕՐԱՑԵԱԼ ՄՆԱՑ ՄԵՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ Ի ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ՅԼԱՑԱՒ՝ ԵՒ ՈՉ Ի ՊԱՀԱՆՋԱՒՈՐ ԲԱՆԻՑ: ԱՐԴ ԸՆԿԱԼ ԹԷՊԵՏ ԵՒ ԱՆԱՊԱՏ ՍԱԿԱՅՆ ԱՆԹԵՐԻ ԸՍՏ ԿԱՐԻ, ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԱԼ ԱՅՍՈՒ ՁՄԻՍՏ ԵՒ ՁՄԱՐՄԻՆ՝ ՓՈՒԹԱ ԶՐՂՎԱԽՈՀ ԽՈՐՀՈՒՐԴՍ ՅԱՄԱՔԵՑՈՒՑԱՆԵԼ ՃԱՌԱԳԱՅԹԻՒՔ ՍՏՈՒԱԾԱՅՆՈՑՍ ԲԱՆԻՑ. ԶԻ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԻՄԱՍՏՈՒԹԻԱՆ ՓԱԽԻ Ի ՄԱՐՄԻՆՈՅ՝ ՈՐ ՎԱՐԱԿԵԱԼ Է ՄԵՂՔ, ԱՍԱՑ ԻՄԱՍՏԱՒՆՆ...:

Է. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԿԼՈՒՐԵԱՆ ԱՂՕՐԻՑ ԿԱՄ ՀԱՆԳԱՍՏԵԱՆ Ի Ո. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՀԵՏԱՐԱՆՑԻՆ[1].

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՓԻՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԻՑ ԱՀԵՏԱՐԱՆՑԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ. Ի ԽՆԴՐՈՅ ՍՏԵՓԱՆԱՒՈՒՆԻ ՎԱՐԴԱ-

1. ՅՈՎՀ. ԱՀԵՏԱՐԱՆՑԻՆ ՅԱՏՈՒԿ ՍԻՐԵԼԻՆ ՅԻՍՈՒՍԻ՝ ՈՐ ԸՍՏ ՄԱՍՈՐ ՀԱՄԱՐ ԱՌ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ, ԹԷ «ԵԹԷ ԿԱՄԻՄ՝ ԿԵՑՑԷ ԳԱ՝ ՄԻՆՉԵՒ ԵՍ ԳԱՄ». ԱՅՍ ԽՕՍՔԷՍ ԿԱՐԾԵՑԻՆ ԱՄԱՆՔ, Կ'ԸՍԷ ՆՈՅՆ ԻՆՔՆ ԱՀԵՏԱՐԱՆՑԻՆ, ԹԷ ՊԻՏԻ ՉՄԵՌԱՆԻ ԻՆՔՆ ՄԻՆՉԵՒ Ի ՄԻԱՆԳԱՄ ԳԱԼՈՒԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ. ՍԱԿԱՅՆ ՆՈՐ ԿԱՏԱՐԱՆԻՔ ՎԵՐՋԸ ՅԱՐԵԼ ԶՐՈՒԱԾ ՄԻ, ԸՍՏ ԱՄԱՆՑ ՀԱՐԱՉԱՏ ՎԱՒԵՐԱԿԱՆ ՄԱՆՈՒ Ո. ԳՐՈՑ, ՊԱՏՄԷ, ԹԷ ԱՅԴ ԱՔԱՆՉԵԼԻ ԱՆՁՆ ԱՂՂ ԱՂՂ ՄԵՌԵՐ ԿԱՄ ՀԱՆԴՉԻՐ Է ԵՒ ԹԱՂԱՒԵՐ. ՍՈՒՐ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՍՏԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿՉՍՒԻ ԱՅԴ ԶՐՈՒԱԾՆ. ԿԱՄ, ՀԱՆԴՉԵԼԵՆ ԱՌԱՋ ԵՐԿԱՅՆ ԸՍՏ ԱՂՕԹՔԻՆ ՀԱՄԱՐ ԱՂՕՐՔ ՅՈՎՀ. ԱՀԵՏԱՐԱՆՑԻՆ. ԻՆՉՊԷՍ Լ.ՄԱՀԸՆԱՑԱԻ ԱՅԼ ԱՆՈՒՆԵՔ. ՉՍԱ ՀԵՂ ԱՅԼ ԶՐՈՒԱԾԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿԶԱՆ ԲԱՒԱԿԱՆՈՒԼ՝ ԻՐ ԸՆԴ ԼԵՂԲԱՐԱՆ ԿՍՏԱԻ: ԱՀԱ ԱՅՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՆՈՒ ԵՒ ԲՈԼՈՐ ԱՂՕԹՔԸ ՄԵԿՆԵՐ Է ՆԵՐՔԷՆ, ԿԱՄ ԻՆՉՊԷՍ ԻՆՔՆ Կ'ԸՍԷ՝ ՓԻԼԻՊՈՎ ՏԵՍՈՂԻՒՆ ՄԻ ԶՐԵՐ Է: ԻՐ ԵՐԿԱՐ ՍԱՂՄՈՍԱՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆ ԱՅԼ ԱՅՍՊԷՍ ՓԻԼԻՊՊԻԻՆ Կ'ԱՆՈՒԱՆԷՔ:

պետի Յակովբեցոյ[1], ի Ներսիսէ աշակերտէ իւր և հոգեւոր որդեկէ։

Գիր քո պատուականութեանդ՝ մի անգամ և երկիցս, Հայր սուրբ, եհաս առ իս, փութայուցանելով առ ի խնդիր քննութեան աստուածաբան Աբաքեղոյն Յովհաննու Աղօթիւն. և ես նախապատիւ վարկայ զհնազանդութեամբ աշխատութիւնն քան զհեղգութեամբ լռութիւնն. հաւատայեալ՝ թէ բան իմաստից յաստուածայինն՝ ոչ է մարդկային գիւտ արուեստի, և ոչ պճնութիւնն որ ի նոսա գովեցուցա[2], կամ նուագութիւնն պարսաւ, այլ իւրաքանչիւր ոք ունի զնոյն ըստ իւրում չափոյ հաւատոցն, յայնմանէ՝ որ զպանազանութիւն չնորհաց ի մարդիկ բաժանէ. առ որ և դովութիւնն ի լսազացն աւարտի։ Եւ մի մեք յայսմ երկիւղ խուսափեալ՝ զպարգեւ նորին ծածկեսցուք, և կամ ի պէտս նորին խնդրոյ յայտնեալ՝ աստուածայնոցն սեզանակապուտ և յափշտակող լիցուք. այլ չնայեցեալ միւտ ի մարդկային նուաստութիւնս մնալ, զԱստուծոյն նմա վերագրել՝ ի փառս նորին մատակարեալով պաշտպանօրէն խոնարհութեամբ։...

*[3] Որ ամենայնի ես ճշմարտասէր և իմաստասէր,

1. Ո՞վ է այս Ստեփանոս Վարդապետն՝ որոյ աշակերտ և որդեակ կոչէ զինքն Ներսէս, չեմ գիտեր. Վանայ կողմանց անուանի եպիսկոպոսն որ եհաս Լեւոն թագաւորի օծութեան ժամանակ և Լամբրոնացւոյ ծանօթացաւ, միթէ նա էր։ Տես Յօդ. 311։

2. Աստուածային բանից կամ գրոց մեկնելն քաջատարրէն, կ'ըսէ Հեղինակս, մարդկային գիւտ կամ գիտութիւն չէ, այլ Աստուծոյ տուրք մի, որ աւելի կամ պակաս կու տայ մեկնողաց. ասով իրենց աւելի լաւ կամ պակաս գրելն այլ՝ իրենց Համարելու չէ։

3. Այս կտոր բանս քաղեր մեկնութեան գործոյն վերջաբանն է առ խնդրողն Ստեփաննոս Վ. զոր իմաստասէր և ձշմարտասէր վկայէ, այլ և սիրոյ Աստուածածափան Յովհ. Աւետարանչի։ Գրութեան ժամանակն չէ նշանակած։

մինչ զի ոչ քոյոզդ բաւականացեալ այլ և զմեզ ձգեցեր հաւանութեամբս ի յանդգնութիւն, ո՞ Հայր պատուական Ստեփաննոս. զորոյ ի գլուխ ած չըննորհքն Աստուծոյ՝ զինդրելիս, ի ձեռն տատապելոյ գործարանի, ի փառս իւր և ի վայելս քումդ հաւատոյ՝ և ճշմարիտ որ առ Աստուածաբանս սիրոյ[1]։ Ոչ թէ ըստ որում պարտն էր կամ զրուանդակն ածել ի լոյս զսորա զօրութիւնն՝ որ անհնտն էր յինէն, այլ փութայեալ միայն հնազանդութեամբ որդիականս հպատակութեամբ պատճառ նիւթել իմաստնոյդ, առ ի եւս սորին իմաստութեամբ բարձրանալ, չնորհօքն Յիսուսի Աստուծոյ յուսոյն մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Ը. Ձիշատակարան թարգմանութեան գրոց Կարգաց Լատին Եկեղեցւոյ[2] — Առումն Երուսաղեմի. Գալուստ Խալպիրաց. — ÷ Ա. փրեդրիկ կայսեր.

Ի թուին Հայոց ՈԼԴ (1185) եկն Գրիգոր եպիսկոպոս[3] (փիլիպպոսեցի) ի հայրապետէն Հռո-

1. Յովհաննէս Աստուածաբան աւետարանիչը սիրելուդ համար։

2. Մեր Մաշտոցի նման գիրք մի Օրհնութեանց, որոյ ամբողջ թարգմանութիւնն Ն. Լամբրոնացւոյ անխոնջ գրչէն՝ գտաւ և մեր քով, իբրեւ դար մի իրմէ վերջ օրինակուած։

3. Մակեդոնիոյ կողմեր գաղթած Հայոց եպիսկոպոս, զոր թուի թէ և լեզուի գիտութեանն համար՝ կաթողիկոսն Գր. Տղայ նուիրակ խաւրեր է ի Հռոմ, առ Պասչ Լուսիոս կամ Լուկիոս Գ (1181–5). ասո՝ թէ պատմական գրած է առ կաթողիկոս մեր, թէ պալիտուն խաւրեր է ընծայ, և աւելի պատուոյ և սիրոյ նշան՝ իր հայրապետական գլխոյ Յոյրը կամ թագ մի. իր գրած թղթին թարգմանութեան օրինակն գտաւ առ մեզ, իսկ լատին բնագիրն չկայ. նոյնպես և Կլեմայ Գ (1187–91) թղթոց՝ հայերէն թարգմանութիւնք կան, բնագիրքն չկան. ի հակառակէն՝ մեր կաթողիկ-

մայ Լուսիոյ՝ առ կաթողիկոսն մեր Գրիգորիոս, որ էր ի սմանէ առաքեալ, և երեր զպատասխանի նամակի Տեառնս մերոյ և զԳիրս Կարգաց Եկեղեցւոյ՝ Հռովմայեցի գրով. և եգիտ զՏէր մեր ի քաղաքն Տարսոն, յամենեան հոգեմբերի: Եւ ընկալեալ կաթողիկոսին սրբոյ զպատուական պաիռնն և զխոյրն (գլխոյ Պապուն) ի լուսին պատուոյ իւրոյ՝ գոհացաւ զԱստուածոյ: Եւ ետ զնամակ հայրապետին և զԳիրս կարգաց եկեղեցւոյ՝ իմ նուաստութեանս՝ թարգմանել. զոր յեղաշրջեցի ի հայ բարբառ, միայն երիւրեալ[1] զբանն քերթողական արուեստիւ, առանց յաւելուածոյ և թերութեան: — Իսկ յետ այսր ի Թուին ՈԼԶ (1187–8) ըստ մեզոց մերոց առաւ Ս. քաղաքն Երուսաղէմ յիսմայելացւոց թագաւորէն Յովսեփայ[2]. և որ ի նմանէ սպասաւորք և զօրք՝ ցիր և ցան եղեն յայսկոյս ծովու և յայն: Իսկ հայրապետն (Հռովմայ) չարժեաց զթագաւորս և զիշխանս և զզօրս և զքաղաքացիս զանազան ազգաց՝ գալ յայսկոյս, ի փրկութիւն սուրբ տեղւոյն: Եւ ամենեքին յօժարութեամբ բարձին զխաչն Քրիստոսի, և եկին մեծաւ աշխատութեամբ. ընդ որս եկն և թագաւորն Ֆռանսացոց Փիլտրիք[3], որ էր ինքնակալ Հռոմայ և մեծ քան զամենայն թագաւորս. և սա ոչ ծովով՝ այլ ընդ ցամաքն արար ճանապարհ, անթիւ զօրօք եմուտ յՈռնկոս[4], և եկեալ

կասի Գրիգորի գրածն այլ հին՝ այ ոչ հայերէն ոչ լատինարէն, կամ ծանօթ չէ մեզ:

1. Այսինքն, հայերէն լեզուի սճայ յարմարցընելով լատին լեզուի սճը:

2. Սալահէտտինի բնիկ անունն՝ Եուսուֆ:

3. Ֆռանսացիք նոյն են. կայսեր անունն ըստ նոցա Ֆրետրիկ, մեք սովորաբար Փրեդերիկոս կ'ըսեմք. սա այդ անուամբ Ա էր, նշանաւոր ի պատմութեան՝ մականուամբ Շիկամօրուս կոչուած է, Barberousse, մօրուաց գունոյն համար, որ ընական է իր ազգին:

4. Ունդարիա կամ Մաճառստան:

ձմերեաց ի Մակեդոնիա՝ ի փիլիպպուպոլիս. և ի տօնի պասեքին անց ընդ ծովն Աշտուեաց[1], և ծանր տարմամբ[2] հերձեալ զբանակս անթիւս խորանաբնակ[3] Թուրքմանացն, էջ զօրօքն հուպ քաղաքին Սիւիֆկի Սաբաթսոց:

Զոր լուեալ կաթողիկոսն մեր Գրիգորիոս և իշխողն Լեւոն, (ընդ) որոյ տէրութեամբ էր Սիւիֆկիա, փութացան մեծաք հանդերձ ընդ առաջ նորա՝ մեծաւ ուրախութեամբ, իբրեւ փրկչի այս աշխարհաց: Այլ մեղաց մեր ծանրութիւն կարճեաց զընթացս արքային. զի յանցս գետոյն Սելեւկիայ[4] ախորժեաց լուանալ, և ծերութեամբն ոչ կարաց ընդդէմ կալ յորձանացն, հեղձաւ: Իսկ մեր տըրտմութեամբ պատահեալ եպիսկոպոսացն որք գային զկնի նորա և որդւոյ նորին և զօրացն, դարձաք ի Տարսոն: Եւ զի խոստումն էր ինքնակալին ոսկի կնքեալ գրով՝ Հայոց թագաւոր դնել[5], պահանջեաց ի նմանէ կաթողիկոսն սուրբ՝ զրուսն խոստմանն. և ինձ հրամայեաց ետ զոյն թարգմանել. զոր կատարեցի յօրինակէ՝ միոյ յեպիսկոպոսաց նոցին,

1. Մակեդոնիոյ ծովեզերքն, ուստի նաւած է կայսրն՝ Միջերկրական ծովու վերաբերին. ինչո՞ւ այդպէս կոչէ մեր հեղինակն՝ ինձ անյայտ է:

2. Բազմաթիւ լաւմբերով զօրացն. սովորաբար թուենոց բազմութիւնն ի՛ըսուի տարաւ:

3. Տուն չունեցող, տեղէ տեղ փոխադող և վրաններու (թր. չատըր) տակ բնակողք, որք ըստ թուրքաց կոչուին կիօչէրիէի, իբր չոչաբնակ:

4. Մատնիչ գետ մի, Մեծին Աղեքսանդրի այլ գրեթէ նոյն վտանգը հասուց:

5. Յանկալի էր գանել այդ խոստման ոսկեկնիք գրուածը, և անկէ առաջ Լեւոնի այլ խնդրածը, որ տասն տարի վերջ կատարեցաւ (1199) մեծ հանդիսիւ (տ. Յօդուած 309). տասն տարի վերջ Լեւոն գարձեալ Ալամանաց կայսերէն թագ բերել առաւ իր եղբօր Թոռնեն Անտիոքայ Բրինձին համար, Ներսեսի Լամբրունացւոյ եղբօր Պր. Հեթմոյ ձեռօք:

որ առ իս իջեւանէր՝ Մոռադեր[1] քաղաքի, որ ունէր ընդ իւր դաս ձիավարի զինի՝ հազար հեծեալ։ Եւ յորժամ թարգմանեցի՝ խորհեցան և ոչ կարացին յանձն առնուլ զգործն, յորժամ ինքնակալն բարձաւ ի միջոյ . այլ իջին յԱնտիոք և անտի ի Պաղեստին։ Իսկ ես զթարգմանեալ Օրինացն Թագաւորին[3] ոչ կամեցայ ազատազրել, եդի ընդ նախ թարգմանեալ կարգագ, վերստին յորմարմամբ։ Եւ ապաչեմ պիմասուն ընթերցողագ՝ ոչ աւելորդ համարել զմեր ի սոյն վաստակ, որ ծարաւի էաք Հռովմայ եկեղեցւոյն կարգաց՝ ընդ այլ գիտութեանց, և սովաւ զոլացաք և թաղաք զինի եկեղոցդ, ի փառս Քրիստոսի. որ է օրհնեալ յաւիտեանս։

1. Գերմանիոյ ամենեն մեծ քաղաքներէն մին՝ մինչեւ հիմայ, Münster, որոյ արքեպիսկոպոսն այլ նահապատիւ և իրրեւ իշխան և մեծ պաշտօնեայ էր կայսերական. հազար ձիաւորով կամ տասնեակներով եկեր էր. ամեն մեկ ձիաւոր քանի մի սպասաւոր կ'ունենար. սրբիշ իշխանք և եպիսկոպոսք այլ քիչ շատ իրենց զինուորներն ունէին. որով անտարակոյս կ'ըլլայ հեղինակիս ըսածն կայսեր համար, թէ եկաւ ամբիծ զօրօք և ծանր տարտարաձ։

2. Այսինքն, խորհեցան, թէ ինչպէս կըրնան զկնի դարձաւոր օծել. բայց կայսեր մահուան պատճառաւ չհամարձակեցան։

3. Լամբրոնացւոյ նախայիշեալ թարգմանած կարգաց գրոց մէջ չկար Թագաւոր—օրհնեքի կարգն, զոր և շատ զգուշաբեմբեմբ պահէին և չէին թողուր որ շատ օրինակ ըլլայ, վախնալով որ իշխանազուն մի ուզէ անով թագաւոր օծուիլ։ Այսպէս և մեր եկեղեցւոյ գլուխք՝ չէին թողուր որ Մաշտոցաց մէջ գրուի Կաթողիկոս—օրհնեքի կարգն։

Թ. Յիշատակ թարգմանութեան Օրինաց Գրոց[1].

Յամս քահանայապետութեան Հայոց Գրիգորի՝ որ երրորդ էր նախնեացն իւրոց՝[2] ի Հռոմկլայն, յամսոյն աթոռոյն, ի թուին ՈՒԲ (642=1193), յաթեւտասաներորդ ամի նորին հայրապետութեան, խնդիր եղեւ առ նոյն սրբազանն՝ ի քաղաքաց և ի գաւառաց բնակչաց՝ Քաղաքական օրինաց. զի որք Իսմայելացւոցն էին իշխանք ի քաղաքս գաւառսդ՝ զդատ Հայաստանեայցս ոչ դատէին, այլ զենգրոցս իրաւանց՝ առ իւրեանց օրէնս առաքէին. զի այս էր ի նախագլուխ մէլիքացն[3] հրաման առ դատաւորս քաղաքաց, յիւրեանց օրինացն դատ բազալ զնոսին։ Եւ եկեալ ոսոքք յեկեղեցին՝ հարցանէին օրէնս ի քահանայից և ի քահանայապետաց. (և նոքա) ոչ ունէին գիրս՝ որով ընտրեսցեն զիրաւունս. զոր և այլոց ազգաց տեսանէին՝ քրիստոնէից և մոլիմանաց. այսինքն, Հռոմայեցւոց, Հելլենացւոց, Ասորւոց, Եգիպտացւոց, Աբարացւոց, Պարսից, և այժմու իշխողացս Թուրքից[4]։

1. Քանի մի Յիշատակք կան Լամբրոնացւոյ թարգմանութեանց Օրինաց գրոց, որովք յայտնուի որ այլեւայլ առեն թարգմանած է այլեւայլ Օրէնքներ Յունաց կայսերաց, որպէս յետոյ և ի Լատինաց. և դուզէ զամենքն մէկ տեղ ի մէկ գիրք հաւաքելու ժամանակ չէ ունեցեր։ Այս տեղ յիշեալ Լէոնի և Կոստանդեայ կայսերաց Օրինաց հետ՝ կան խառն և Կոստանդիանոսի, Թէոդոսի, Եարինեայ, և այլոց օրէնք։

2. Գրիգոր Տղայն, որ ի Հռոմկլայ նստաղ կաթողիկոսաց երրորդն էր (յետ Գրիգորիսի և եղբօրն Ներսեսի). զարձեալ իր ցեղէն (Մամիսթրոսի) Գրիգոր կամքովիկոսաց երրորդն էր, յետ երկու Վկայասիրաց, իսկ Գրիգոր անուանելոց՝ հանդերձ Լաւասարդիւ՝ կ'ըլլայ Դ Գրիգոր։

3. Արաբացւոց իշխանութեան ներքեւ եղող մեծամեծ գաւառաց ոստիկաններն։

4. Սելճուկեան Թուրքաց, յորոց և Իկոնիոնի (Ղոնեայ), Դամասկոսի և այլ կողմանց սուլտանք։

Ի խնդիր եկին ապա առ հայրապետս ի Հայաստանեայց՝ արթուն[1] կղերիկոսք և աշխարհականք, խնդրելով յայլոց ազգաց և նախանձելք զբարւոքն։ Եւ խուզեալ ընդ նա մեր յարկեղս զրոց կաթողիկոսարանին՝ ոչ գտաք Օրէնս, բայց միայն գկանոնականս՝ որ ի Հարցն առաքն ժողովոց էր գտեալ, և որ ի նոյն յարեցաւ ի նոցանէ՝ Կանոնս զգուշաւորս եկեղեցւոյ. իսկ Քաղաքի Օրէնս ոչ գտաւ ի մէջ Հայոց, ոչ յեկեղեցիս և ոչ առ իշխանս։ Եւ կարի վշտացեալ հայրապետն՝ խնդիր առնէր առ այլ ազգս. և պատահեալ անդ յՍմբատոց թեոդոս անուն կիրթ յիմաստութեան քահանայ, յայտնեաց Տեառնս՝ զի գոյր առ ինքն այս համառօտ Քաղաքական Օրինադրութիւն. և հրաման տուեալ ինձ տառապեալ իւր ձեռնտասուն որդւոյ Ներսեսի, յեղաչրջեցաւ ի Հայս[2], նմին յիշատակ բարի, և զկնի եկելոցդ՝ ուղղութիւն ընթացից։ Ձեզ սրոյ ապա և ի Հելլենացւոց արարի թարգմանութիւն Մովսիսական Օրինացդ, և Լհռնի և կռատաւնդեայ սրինացդ. ի նմանէ թարգմանեցի և գՔինուորական Օրէնսդ[3]. և ընծայեցի սրոց սիրենն վարիլ սովաւ և հանոյ գտանիլ Աստուծոյ, և կառավարիչք քաղաքաց և գաւառաց։

Յ. Ցիշատակարան Օրինագրոց.

Զայս ծայրաքաղ Օրինադրութիւնքս՝ տառապեալ եպիսկոպոսս Տարսոնի թարգմանեցի ի ծերացեալ

1. Թուի զգաստ, զգօն, հոգացող, ուշիմ ընել սրունք խնդրելով, սահմանած կամ ամրացած մնալ, յիշեալ օտար ազգերէն։

2. Երեւի թէ առաջերէն գիտեր Ն. Լամբրոնացի, որպէս և երթայեցերէն։

3. Այս Քինուորական Օրինաց թարգմանութեանն համար այլ ուրիշ տեղ յիշատակ գրած է այսպէս. « Ներսէս տառապեալ թարգմանիչ և օրինադրիչ Քի- » նուորական Սահմանադրութեանս, զգուշացուցա- » նեմ սովաւ զչօրս »։

հելլենացի մատենիչ, թուին ՈԽԵ (1196–7), ի նոր բաչէն ամուրն Լուդուայ, որ է ի գլուխ Դրանն Կիւղիկոսի[1]. զոր ի բազմաժամանակեայ յամայութենէն մարդարենակ արար մի յեղբարց իմոց՝ Շահնշահ, և գկործանեալ չինուածն Յունաց յիմայելացւոց՝ չինեաց ամրագոյն. և ընդարձակեաց նովաւ գՀայաստանեայս՝ թագաւորի Լեւոնի ձեռն[2] որ ի Կիւլիկեայս և Աստրւոց գաւառացն տիրէ, և նովաւ կարողացաւ Երկրորդ կապադովկիոյ[3], յորում մայրաքաղաք Տիանա, արտահանեալ զնորաչէն ամուրն, ի փառս Քրիստոսի և ի զօրութիւն քրիստոնէից։ Դարձայ ի մեծ նկեղեցին Տարսոնի յղկեցի գմարգմանեալն աստ գրչութեամբ և աւանդեցի Հայոց։

Յ.Ա. Ցիշատակարան Մեկնութեան Առակաց գրոց.

Սկսեալ ի քննութիւն աստուածախօս իմաստից՝ երեք ամաւք յառաջ քան զայս, որ է ՈՒՀ թուականին (1197–8), ի հիւանդոտ մարմնոյ, ի ծանրութենէ հոգւոյ պանդղէր միաք նուաստութեան՝ քննել, և ձեռն՝ ի գրել։ Ցայս սէմ գնացեալ իմ ի Կոստանդնուպոլիս, և խնդրեալ ի նորին պատրիարգէն՝ զոր առ նոսին տեսութիւն Առակացս և Ցոբայ, և ընթերցեալ տեղեկացայ՝ զի զոր առ ի մէնջ պաղաբերէ չնորհք Սուրբ Հոգւոյն՝ ոչինչ նուազ էր

1. Հաչակաւոր Դրունք կամ կապան Կիլիկիոյ, ի հիւսիսակողմն. յիշեալ ամրոցն այլ (Լուլու) մատ էր ի Լամբրոն։

2. Կապադովկիա կամ Գամիրք՝ բաւական ընդարձակ ըլլալով՝ քանի մի մաս քաժնուած էր. Երկրորդն գլխաւոր քաղաքն էր յիշեալն Տիանա։

3. Պատուելով կամ պատկառելով իմն յիշէ զՄեծագործն Լեւոն, մինչ սա դեռ չէր մեծ հանդիսով թագաւոր օծուած, ոչ միայն ի Յունաց այլ և յարեւմտեան կայսերէն թագ ընդունելով։

յայնմանէ, և նախ քննեալն համաձայն էր և ոչ սատարանայր. եկեալ ի յարկս իմ երկրպագութեամբ գոհացայ զԱստուծոյ, և քաջալերեցայ ի քննութիւնս, հազս ներեալ՝ որ ի Տարսոն անուամբ այցելու, իսկ առ օթեւանաքս՝ բնակեալ ի հանգիստ։

ՁԼ

ՈՂՔԱՔ Ի ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՀԻՆ ՏԱՐՍՈՆԻ

Աստուածային խոնարհութեան պաշտօնեի ներսէս աշակերտի [1]

Ա՛մ. զահ թողում, զամօթ մոռանամ [2],
Զիմ լուսեղէն Տէրըն մեծարեմ.
Զիր անընդհատ պարտքըն վճարեմ,
Ածեմ գուչութ, ու դառնամ ի միտ։
Երբ զիմ ճարակ Տէրըն յիշեմ՝
Լայնայս գընաց, ուժըս պակասեաց,
Խելքս ու հոգիս իմ գումարեցաւ։
Յիշեմ զիմ Տէրն ի Շիքիրոնին [3].
Յիշեմ զիմ Տէրն ի Նարեկացին.
Յիշեմ զիմ Տէրն առջեւ կանթեղին.
Յիշեմ զիմ Տէրն ի յեկեղեցին,
Յիշեմ զիմ Տէրն ի տունն ի զգեստին [4].
Յիշեմ զիմ Տէրն ի բազմախաչին [5],

1. Ժամանակին աշխարհիկ լեզուով գրուած, չատ պարզաբանելու և անհրաժեշտ։
2. Զարհուրանքս վերջ համարձակիմ, ըսել կ'ուզէ։
3. Զկարեցայ առաւել զայս, ասիղ է թէ գիրք մի, ինչպէս ասկէ ետքը յիշած Նարեկացին, որոյ աղօթից մեկնութիւնը գրած էր Ներսէս։
4. Զգեստաւորութեան եկեղեցւոյ։
5. Բազմախաչ զարդով հիւսուած շուրջառն։

Յիշեմ զիմ Տէրն առջեւ խորանին.
Յիշեմ զիմ Տէրն ի պատարագին։
Ա՛ռ ձեզ խօսիմ, հին Կըտակարանք [1],
Եկէք որ լանք, զի անպիտացայ.
Ե՛կ Սաղմոսիլ, զի անպիտացար [2].
Ե՛կ Դանիէլ [3], որ խռպոնեցար.
Ե՛կ Աբրահամք [4], լաց, որ փակեցար.
Աբի եկ Դաւիթ, որ անպարտեցար [5]։
Ականաւմ լալով վայիս ձայնակից
ԸնդՅովհաննէս Որդին Որոտման.
Ե՛կ, ժողովէ զՏեսիլն ու պահէ [6],
Զի այլ չըկայ Տէրըն որ մեկնէ.
Բայց լաց ու վայ տուր ինձ գերելոյս,
Զի քո նըմանն՝ տէր եմ կորուսել։
Դառըն տեսար դու զՏէրն ի խաչին,
Ես դառն տեսայ զիմ տէրն ի տախտին [7].
Դառըն լըսար դու ըզծարաւին,
Ես դառն լուայ ես զօրն ազմըկին։
Լացողք Թղթոց Կաթողիկէից,
Եկէք ու լիք վայիս ձայնակից.
Զունինք այլ տէր՝ որ հասկըցընէ,
Ու ոչ այլ գրող որ նոր նորոգէ։
Ե՛կ Աստեւալըդ Տարսոնեցի,
Ու ան ամիսիլ գրանքս զոր լսեցի։
Ե՛կ Աթանաս, լալոյս ձայնակից [8],
Բաներըս քո են Պատարագի։

1. Իր ժողված և օրինակած գրքերն։
2. Որոյ գրոց մեկնութիւններ գրած էր։
3. Դանիէլի մարգարէութեան մեկնութիւն։
4. Ծննդոց գրոց մեկնութիւն։
5. Սաղմոսաց մեկնութիւն։
6. Յայտնութեան գրոց թարգմանութիւնն և մեկնութիւն։
7. Աթոռն կամ հանգստարանն, որոյ վրայ վախճաներ է։
8. Ս. Աթանասի ճառից և Պատարագի աղօթից այլ Լուծմունք գրած է։

Բայց իմ հսկող Տէրըն չերեւի.
Ոչ մեկնըւի ու ոչ բացայայտի.
Ոչ այլ պայծառ Քարոզն ասուի,
Ոչ այլ նըման քեզ տէր գըտանի:
Ոչ ի քո բանք այլ ոք առչորի.
Ոչ այլ հսկող թեւք քո տարածի.
Ոչ այն անքուն ակըն բոլորի.
Ոչ այլ հեղեղ արցունքն իջանի[1].
Անտանելի հեծն այլ չըլտուի:
Զայնեմ վանիցն[2] որ հովիւ չունի,
Կարօտ եղեւ արթուն հովըւի.
Ու, Աստուած, ու գայս բանս այլ գըրեցի,
Որ ով լինի՝ զերդ զինք չըլինի[3]:
Իմ Տէրն արթուն էր յամէն տեղի,
Կիրթ էր ու վարժ ամեն իմաստի.
Կենաքըն սուրբ էր ու ոչ քուպիտի[4].
Վարուքն ամբիծ նըման Մովսէսի.
Սրտիւն ողորմ նըման Պօղոսի.
Աղքատասէր նըման Յիսուսի:
Ներսէս՝ պըսակ էր յհկեղեցի,
Զարթուցանէր զամենն ի բարի.
Ներսէս՝ ոչ առ ծուլիցն ի տեղի.
Հեզ և հանդարտ արթնոցն ի բարի:
Ներսէս՝ արթուն էր դէմ դիշերի,
Հաներ ի գլուխ ըզցայգն ի կարգի.
Հետ սահմաներ ըզկարգն ի տեղի,

1. Տես ինչ որ յերես 423 ի Յօդուածին և ի ծանօթութիւնեան ըսուած է այդ արտասուաց համար. իսկ ինքն Ներսէս իր գրուածոց մէջ իրրեւ իր հոգիէն սփռուած չատ անգամ վկայած է իր սուրբ արտասուացն համար:
2. Սկեւռայ վանքն:
3. Այսինքն այսուհետեւ ով այլ գալու ըլլայ Ներսեսի տեղ, իրեն նըման կամ հաւասար չի կրնար ըլլալ:
4. Թուի անհոգ, անխնամ բան մի նշանակել:

Հետ խոկալով՝ գըրեր գրուի[1].
Երբ առաւօտ լինէր ցորեկի
Սկիզբն դնէր նա պատարագի:
Ներսէս՝ ցասումն էր ընդդէմ ախտից,
Զար խորհըրդոց չունէր նա տեղի.
Բայց գըւարթուն էր ի պատարագի,
Հեչտ և կամակ եղբարցն ամենի:
Ներսէս՝ աղերսն անցամաքելի
Ունէր ի գլուխն ի յիւր գովելի.
Հետ տաղորէր յաղագս ամենի,
Հետ արտասուէր ի պատարագի:
Ներսէս՝ վտահ էր ի սէրն Յիսուսի.
Մեղաւորաց տայր զեկեղեցի[2].
Յիշէր ըզբանըն մեծ տէրունի,
Թէ՝ Ես եկի վանց մեղաւորի:
Ներսէս՝ այրեաց էր խնամածու,
Որբոցըն հետ տեղի խօսելու.
Ունեւորացն օրինակ բարւոյ,
Զաւնեւորացն էր տուն կենալոյ:
Աւա՛ղ մըտացն՝ որ դադարեցաւ.
Աւա՛ղ գըրչին՝ որ խոպանացաւ.
Աւա՛ղ բանին՝ որ պակասեցաւ.
Աւա՛ղ տեսիլն[3] որ թառամեցաւ,
Աւա՛ղ բառին՝ որ նուազեցաւ.
Աւա՛ղ գերեացս՝ որ որբ մընացաք:
Դուռ, Տէր, գըտար որում ցանկացար.
Դուռ, Տէր, հասար ում կարօտացար.
Դուռ, Տէր, առեր որ վաստակեցեր.
Դուռ, Տէր, տեսար սրում չանացար.
Դուռ, Տէր, տուար ում անուանեցար.
Դուռ, Տէր, հանգեար՝ զի աչխատեցար:

1. Մատեղով գրքեր գրէր:
2. Մեղաւորները կ'ընդունէր յհկեղեցի, ապաշխարել տալով:
3. Երեսքն, կերպարանքն:

Ես աղաչեմ զիմ Տէրըդ բարի,
Զեռասընունդ ծառայս քո գերի,
Որ զայս լալոյ բանըս գըրեցի.
Գիտեմ որ մերձ կաս այժմ Ցիսուսի,
Ծունըր կրկնեա վասն իմ ցանկալի.
Տուր աղաչանս ինձ աղերսալի՝
Դառնալ ի հող. ինձ՝ կեանք չըպիտի[1]։

ՅԼ

ԼԵՒՈՆ Ա

ՌՈՒԲԻՆԵԱՆ, ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԹԱԳԱՒՈՐԵԼՆ[2]

Ի թուին ՈԼԶ (1187) մեռաւ Ռոմկէն (Բ) և էառ զիշխանութիւնն իւր եղբայրն իւր Լեւոն, բարեբարու և աննենգ. և ոչինչ պատճառի եղեւ վրէժխընդիր ումեք. այլ յԱստուած ապաւինեալ՝ յորմէ և յաղողեալ ուղղեցաւ իշխանութիւն նորա։ Եւ էր սա այր իմաստուն և հանճարեղ. ձիավարժ[3] հմուտ, և ի պինուորութիւնս քաջասիրտ, և արիագոյն յամենայն գործ բարութեան՝ ի մարդկայինսն և յաստուածայինսն, արագ և զուարթերես։...

1. Բայց այս Լալոյ բանիվդ՝ Տիրոջդ հետ գուա այլ պիտի ապրիս, մի խեղճ Թաչատուր։

2. Հեղինակ Յօդուածոյս է նման Միքաէլայ Գունդստապլի տարեգիրը մի, բայց աւելի ընարիր լեզուաւ և աւելի երկար գրող Կիլլիխոյ և Թուբինեանց պատմութեան, մինչեւ մօտ ի վերջ ԺԳ դարուս. ձեռագիրն այլ նոյն ատեն գրուած է· սկզբան և վերջին թղթերն պակաս ըլլալով՝ հեղինակին անունն այլ պակսի, վասն որոյ Պատմիչն Կիլիկիոյ անուանեմ։

3. Ժամանակին Լատին կամ Ֆռանդ Ասպետաց բարեկամ և կրթակից ըլլալով մեր Կիլիկեցի Հայ ազնուականաց, անոնց ասպետական վարժութիւնն ուսնելնին յայտնէ ձիավարժ կոչելն։

Ի թուին ՈԽԲ (1193), յորժամ դարձաւ Բրինձն[1] ի Սալահըտինէն, խորհեցաւ ընդ ազիկինն իւր՝ բռնել զԼեւոն. և նա ասէր, մի գործեր գայդ գործ անիրաւութեան, քանզի փեսայ է իմ, և յամենայն ժամ յօժարութեամբ գայ ի ծառայութիւն քո. և ձեռնտու է քեզ ի գործ պատերազմի։ Այլ նա ոչ գթձաւ ի չար խորհրդոցն, և առաքեաց կոչեաց զնա։ Եւ յարուցեալ Լեւոն գնաց ի Պաղրաս[2], և կինն Բրընձին ծանուցանէր Լեւոնի զբանն՝ զանխելլաբար. և առաքեաց Լեւոն առ Բրինձն՝ գալ ի Պաղրաս՝ ինքն և բրընձէսն (Princesse), զի անդ պատուհասցէ զնոսա, և ապա ելեալ նոքօք գնասցեն յԱնտիոք։ Եւ նոքա եկին յօժարութեամբ. և Լեւոն ել ընդ առաջ նոցա, և մեծարեալ երեր ի Պաղրաս, և անդ կալաւ զԲրինձն. և տարեալ եդ յարգելանս ի կղզի Սիսոյ, և պահէին զգուշութեամբ։...

Իսկ Լեւոն յորժամ բռնեաց զԲրինձն, կալաւ զնա յարգելանս աւուրս ինչ. և եկեալ յԱնքայոյ[3] թագաւորապարմ իշխանն Գուիդ Հէնրին[4], և խընդրեաց զնա պարգեւս ի Լեւոնէ. և նա չնորհեաց նմա։ Եւ հաստատեցին ուխտ սիրոյ խնամութեան ընդ միմեանս. և նա Լեւոն զդուստր եղբօրն իւրոյ Ռոմկլայի զԱլիծն, որ յառաջագոյն Հենրուէն ուներ, եղբայրն Շահենշահի[5], աւագ որդւոյն Բրընձ-

1. Bambe կոչուած Պեմունդ Գ, Անտիոքայ անարի իշխողն։

2. Բերդ մի՝ Անտիոքայ չատ մօտ, Պէյլանի լեռանցից վրայ, հին ատեն այլ նշանաւոր տեղ մ'էր, Pagre կոչուած. Հայոց տէրութեան այլ պահպանութեան ամրոց մի եղաւ։

3. Աքքա, St. Jean d'Acre.

4. Comte Henri de Flendres, որ յետոյ Ֆռանկաց երկրորդ կայսրն եղաւ ի Կոստանդնուպոլիս։

5. Հենրիոյ Սաբընցոյ կին էր· տես Յօդուած 295։

ծին՝ Ըռեմբերդին[1]. այս պայմանաւս[2], որ թէ լինէր ի նմանէ որդի արու՝ լինէր ժառանգ Լեւոնի և գկնի մահուան հօրն իւրոյ՝ Ըռեմբերդին լինէր տէր Անտիոքու. և հաստատեցին զայս գրով և երդմամբ: Եւ էր որդի բրընձին առ Լեւոն, և մոռնէր և ելանէր ընդ նմա. և կացեալ ժամանակս ինչ մեռաւ: Եւ կինն նորա մնաց յղի ի նմանէ. և ծնաւ որդի արու, վայելուչ և գեղեցիկ տեսլեամբ. ընդ որում ուրախացաւ Լեւոն մեծապէս. քանզի ոչ գոյր որդի Լեւոնի լինել ժառանգ հայրենեացս իւրոց. և տայր անուշանել զնա մեծաւ զգուշու. թեամբ. և մկրտեաց զնա և կոչեաց զանուն նորա Ռուվրեն[3]:

* [4] Ի սոյն ամի (1187) Թուրքման անն Ըռատում անուն՝ ժողովեաց անթիւ Թուրքման և եմուտ յաշխարհն Կիւլիկեցւոց, և խրոխտացեալ բառնալ զանուն քրիստոնէից. և գնաց մինչեւ ի Սիս, և բանակեցաւ առաջի քաղաքին յԱաւիևն (դաշտագետին). և ծածկեաց զերեսս երկրին անհամար բազմութեամբ: Եւ յայնժամ աստուածազօրն Լեւոն՝ երկուսն մարգով պատերազմեցաւ ընդ նմա. և ընկէց յաւազագոյն զգլխաւորսն նորա զՊատոմն, և զարձան ամենեքեան ի փախուստ. որոց զհետ մտեալ՝ կատրեաց զնոսա մինչեւ ի Քարն Ասրխանդաւի[5]: Բայց ասէին, թէ մարմնաւոր տեսլեամբ և զգալի աչօք երկու զօրականք ելին ի բերդէն Սիսոյ, և

1. Ալիծ՝ կին տուն Ռեմունդի՝ որ էր Պեմունդի մեծ որդին:
2. Խոստմունք, դաշն:
3. Որ և Ռեմոնդ կոչեցաւ հօրն անուամբ, և չատ զիպուածաւոր կեանք և ազգերգական վերջ ունեցաւ:
4. Այս երկու * Տատուածքս այլ մեր Կիլիկեցւոց ժամանակագիր պատմըչին են:
5. Տես ի Սիսուան, 209. 368. 393:

կատրեցին զնոսա. որ ասի Ուրբն Գէորգ և Ուրբն Թորոս[1]:

* Ի սոյն ամի (1193) առաքեաց Սալահատին սուլտանն առ Լեւոն, տալ զերկիրն Կիւլիկիոյ ի նա, և ինքն գնասցէ ազգ անձամբ: Եւ Լեւոն յերկիւղի եղեալ՝ թէ զինչ արասցէ և յԱստուած ապաւինեալ՝ ասէ ընդ առաքեալն առ նա. Ասա ցսուլտանն, թէ Երկիր ոչ ունիմ տալ քեզ. բայց եթէ գայցես յերկիրս իմում, տայ քեզ յերկայնից ընկերիս[2], որպէս հաւատացին քո Ըռատտուին[3]: Եւ սուլտանն լուեալ զայս՝ մտանէր որպէս զառիւծ, և պատրաստէր զզօրս իւր գալ յերկիրն Կիւլիկիոյ, զի բնաջինջ արասցէ զՀայաստանեացսն Քրիստոսի: Եւ եկն եմուտ մինչեւ ի գետն որ կոչի Սեհան[4]. և պատահեցաւ նմա ախտ հիւանդութեան, ... կեցաւ անդ:

* [5] Ի թուականութեանս Հայոց ի ՈԿՆ (1216–7), ի կաթողիկոսութեանն Տեառն Յովհաննիսի, և ի ժամանակս քրիստոսասպակ թագաւորին Հայոց Լեւոնի, ի ծովեզերս Ովկիանոսի, ի գաւառս որ Ճկներ անուանի, ի գետս որ Պայաս կոչի, ընդ հովանեաւ ամենօրհնեալ մօր լուսոյ Աստուածածնի, և այլ Սրբոցս. յամս յորում Տէրտմբ յաղթող թագաւորն Հայոց Լեւոն էառ զԱնտիոք զմեծ մայրաքաղաքն Ասորւոց:

1. Այս քաջ Զօրավարաց Սրբոց նուիրած էին Հայք եկեղեցի մի ի Սիս:
2. Սուրով համեմիք կաւ տամ. այսինքն, զօրքդ չարդեմ, արիւն թափեմ:
3. Յիշեալ զիպուածն այս է, ըստ նոյն հեղինակի Տարեգրացն:
4. Անտիոքայ կոզմերն:
5. Յիշեալ ՈԿՆ թուականին գրուած մաշտոցի մի Յիշատակարանի մասն է:

ՅԹ

ՀԱՆԴԷՍ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԼԵՒՈՆԻ

(ՊԱՏՄԻԶՆ ԿԻԼԻԿԻՈՑ)

Ի թուին ՈՒԽ (1199) յամենայն յունուար՝ ի յօր Յայտնութեան Տեառն, սծին զԼեւոն թագաւոր Հայոց, ի հնազանդութիւն եկեղեցւոյն Հռոմայ և ըմբրուրին Ալամնաց[1]. և եղեւ ուրախութիւն մեծ ազգիս Հայոց, զի տեսին վերըստին կանգնեալ և նորոգեալ գահերութիւն իւրեանց յերեսս Լեւոնի բարեբարոյ և աստուածասէր արքայի։... Եւ արդ պարտ է մեզ պատմել փոքր ի շատէ զոր ըստ նոքայն ժամանակի վայելչացեալ էր տունս Հայոց։ Քանզի էր արքայն Լեւոն այր իմաստուն և հանճարեղ, գուարթ տեսլեամբ, և տաստ սրտիւ առ հաստարակ առ եկեղեցականս և աշխարհականս, առ աղքատս և առ տկարս, ի վանօրեայս և յուխտեալ տեղիս, և ամենայն ուրեք տարածանէր ըզբարեաց իւրոց պարգեւս։ Զարդարեալ զաօնս զատկաց մեծաշանդէս ժողովով և մեծամեծ սեղանով։ Եւ ուր իմանայր թէ գոյ այր պիտանի ի գործ ինչ և աշխոյժ, առաքէր և կոչէր խոստմամբ, և բերեալ հանգուցանէր առատաձիր պարգեւօք։ Եւ ամենայն գաւազք եկեղեցականաք և պատուաւոր իշխանօք զարդարեալ և վայելչացեալ էր երկիրս Կիլիկիոյ. զոր և պատմեցից դանուանս մի ըստ միոջէ[2]։

1. Empreur, Գերմանացւոց կայսրն, վասն զի անկէ խնդրեց Լեւոն թագը։

2. Սկսուանայ տեղագրութեան մէջ այս ամեն վանաց ս բերդից առարագրութիւնք գաւուին, զոր այս տեղ կրկնել՝ ծանր համարիմ, բայց քանի մի։

Տէր Դաւիթ՝ արքեպիսկոպոս Մամուեստիոյ և առաջնորդ սուրբ ուխտին Ագրակաղնոյն.
Տէր Գրիգորիս՝ արքեպիսկոպոս Կապևռոյ[1], և առաջնորդ Աղիգնոյն[2].
Տէր Յոհաննէս արքեպիսկոպոս[3] Սիսոյ, և առաջնորդ Թրազրկոյն[4].
Տէր Մինաս՝ արքեպիսկոպոս աստուածաբնակ քաղաքին Երուսաղէմի.
Տէր Յոհաննէս՝ արքեպիսկոպոս Անտիոքու, և առաջնորդ Զիսռուացւոյն[5].
Տէր Կոստանդին՝ արքեպիսկոպոս Ալեքսանդրիոյ, և առաջնորդ Կատարաղացւոյն[6].
Տէր Վարդան՝ արքեպիսկոպոս Լամբրոնի, և առաջնորդ Սկևռայի.
Տէր Սահակ՝ արքեպիսկոպոս[7] Տարսոնի, և առաջնորդ Մլիձոյն.
Տէր Թորոս՝ եպիսկոպոս Սկևռկիոյ.
Տէր Սուտաճատուր եպիսկոպոս Մեծքրոնի[8].
Տէր Յոհաննէս՝ եպիսկոպոս Ալանիքացւոց.
Տէր Գէորգ՝ եպիսկոպոս Անդրխաստացւոց[9].
Տէր Կոստանդին եպիսկոպոս Քոռնացւոց.
Տէր Գրիգոր եպիսկոպոս փիլիպոսեանց.
Տէր Սահակ՝ եպիսկոպոս Բերդրոնի[10].
Տէր Մխիթար եպիսկոպոս Ընկոզտրի։

1. Կապան բերդն, ամենէն ամուր և իբր Կիլիկիոյ Հայոց պահպանիչն։
2. Արեգնի վանքն։
3. Յետոյ կաթողիկոս։
4. Յիշեցինք որ զոսցս հեղինակն միշտ Թ տառիւ գրէ այս անունը, անշուշտ աւանդութեան մի հետեւելով. զուցէ Թուրքաւ վարնուած ըլլայ անոր գաւառն։
5. Յետոյ վանք մնա, Յանտիոք։
6. Անուանի բերդաւան։
7. Թէև նոր յաջորդեր էր քիչ առաջ վախճանած Ս. Ղեւոնեան Լամբրունեցւոյ։
8. Մեծքար, բերդ և անկէ աւելի անուանի վանք։
9. Այս այլ մեծ վանք էր։
10. Այս վանաց կամ ամրոյ տեղն յայտնի չէ։

Իշխանն Պաղրատ՝ Աղուանի[1].
Իշխանն Ճկերոյ՝ Աւտն.
Իշխանն Հաւռուսիի՝ Արեւգոյնի.
Իշխանն Սարմաւնդաւի[2] Սիւնեաց.
Իշխանն Հարուրնոյն Լեռն.
Իշխանն Միհրանակայիի՝ Սիրուհի[3].
Իշխանն Ալնոյն՝ Հեռի.
Իշխանն Հոռոփոյն, Ապղաբիպ գունդուստապլն.
Իշխանն Ընկուզտիի՝ Պաղտիւնի.
Իշխանն Թոռնկայիի՝ Սուճի.
Իշխանն Բերդուսիի՝ Լեռն և Գրիգոր.
Իշխանն Կանչոյն՝ Աղուն.
Իշխանն Ֆաւռնաւսայ[4], Ապղաբիպ.
Իշխանն Կապնուռն՝ Տանկրի.
Իշխանն Ճանձոյն Կոստանդիի.
Իշխանն Շողականի՝ Ճաւֆրի.
Իշխանն Մազռո–խաչիի՝ Միհռնի.
Իշխանն Թլի՝ Ըռօպերտ.
Իշխանն Թլսապոյ՝ Թորոս.
Իշխանն Վանէրոյն՝ Վասիլ մարաջախտն.
Իշխանն Բարձրբերդոյ[5] Գէորգ.
Իշխանն Կոպիտաւոյ՝ Կոստանդիի.
Իշխանն Մօղովնիի[6] Աժառոն.
Իշխանն Կոշկկայ[7] Սիրաւ.
Իշխանն Լամբրունի՝ Հեռի[8].

1. Սիր Աւտն կոչուած, որ շատ ընդարձակ երկիր ունէր. թէ սա թէ յաջորդքն աւտաւական իշխանք էին Լեւոնի, ոչ ցեղով Հայք, արդէն և այլ շատք:
2. Որ և Մարուսաւնդի քար. յարեւելակողմն Կիլիկիոյ:
3. Իգական անուն է, բայց իշխանն այր է:
4. Ինչուան հիմայ ծանօթ Ֆրանուռս կոչմամբ:
5. Ոչ անծանօթ և սա, Պերապերդ կոչմամբ յայլ ազգաց:
6. Սովորաբար Մոնղեռոն կոչուի:
7. Կաւկլակ շատ ամուր բերդ՝ լեռնանցից մէջ:
8. Անդրանիկ եղբայր Ներսիսի Լամբրունեցւոյ:

Իշխանն Լոչչայոյ՝ Շահինշահն[1].
Իշխանն Պապկուաւնիի՝ Բակուրեան.
Իշխանն Ասկուռաոյ[2] Վասակ.
Իշխանն Մաւնաչոյ՝ Հերուռ.
Իշխանն Բերդկաւնի՝ Մխիթարիս.
Իշխանն Պաւկաւնոյ՝ Տիգրանի.
Իշխանն Միխոյ՝ Աչիւնի.
Իշխանն Կուռիկոսոյ[3] Իւռնի.
Իշխանն Միխիկիոյ և Պռնուաոյ՝ Կոստաւնի.
Իշխանն Միխիսուռ և Կովաւռ՝ Ռոմանոսն.
Իշխանն Վէտի և Վէռբակ՝ Ներիֆօնն.
Իշխանն Լաւզաւոյ և Տիմիսուռպաշոյ Թռուռֆօնն[4].
Իշխանն Մաւնիօնի, Լաւնօսոյ, Ժեռնաւնիկաւնի և Ա-նաւռուռեան՝ Հայկաւնի[5].
Իշխանն Ներքերդոյ և Կօնաւռտիաւսոյ[6] Սեւաստիաւսն Հեռի.
Իշխանն Անդօշժիի՝ և Կուպայիի՝ Պաղտիւնի.
Իշխանն Մաղվայոյ և Միկոյ և Պալապաշիի[7] Կիռ Իսակի[8].
Իշխանն Մաւնաչադաւի և Ալարոյ[9] Մխիթարիս.
Իշխանն Լակռաւնեւոյ՝ Կոստաւնիիւնի՝ և Ներիֆօնն.

1. Լաւզու ամուր բերդ մօտ ի Տարսոն, Լամբրունեցոց վիճակ, յորոց էր և այս նորագիւ տեղւոյն Շահինշահ, կրսեր եղբայր Ս. Ներսիսի:
2. Ուղիղն Ասկուռաս:
3. Շատ անուանի բերդ ծովեզերեայ և նաւահանգիստ, որ Հաւսարակօրէն Կուրիկոս կոչուի, և տեղն ծանօթ է հիմայ:
4. Ազգանունն Քրիստոփոր:
5. Անուամբ՝ նշանաւոր բերդ և նաւահանգիստ:
6. Կոմպրտիաս մականուամբ մեծապատիւ իշխանաց տեղ մի, որոց մեկը Լեւոն դեսպան խաւրեց առ Ինոսվկենտիոս Գ պապ:
7. Երեքն այլ ծովեզերեայ տեղիք:
8. Յոյն իշխան, ինչպէս ամանք այլ վերը և վարը յիշուածներուն:
9. Ասոնք այլ ծովեզերեայ են:

Իշխանն կաղաւիօնաւոյ, Աֆոռտապին, Սոռրբ Մոիէ և Հաղօնիի՝[1] կիս վարդն։

Արդ այս վերոյգրեալ բերդերս ժամանակ մի ծառայեցին թագաւորին Լեւոնի, և ապա զարձան ի սուլտանն[2]։ Եւ յետ Պեմոնտ Բրընճին մահուանն՝ բազում վինաւորք[3] եկին ի ծառայութիւն թագաւորին Լեւոնի և իշխանք ընդ նոսա, որոց անունքն են այսոքիկ. Ոչիվեր ջաւերպայի[4]. Ռոժէր (Տր) Մոռնէն[5]. Ջոշպտին[6]. Թոռնաս Մալբրպռռնի[7]. Բայեն Պօդէրն[8]. կիլամ Տչիլի[9]։ Եւ այսպիսի խոհեմ իշխանօք և քաջամարտիկ վինաւորօք՝ քաջապէս մղեր վհոյլս թշնամեացն։ Եւ զարդիսն Թլիճ Ասլան սուլտանին՝ որք տիրեցին տանն Հոռոմոց՝ նեղեալ վնասս յայժ, առնելով ի նոցանէ բերդօրայս և գերելով զերկիր նոցա աւերմամբ։ Եւ արիագոյն քաջութեամբ սպառազինեալ՝ կայր ի մէջ թշնամեաց իբրեւ զախոյան անպարտելի։

1. Առանց սմանք Կիլիկիոյ լեռնակղզին են, սմանք ի Ծովակղզին. իշխանքն այլ յաւնազգի։
2. Իկոնիոնի (Գօնեա) սուլտանն, որոյ ձեռքէն կորզեր էր Լեւոն, և նորէն անօր զարձան։
3. Ազգաւք և զօրապետք։
4. Olivier le Chambellan.
5. Roger de Montibus
6. Թերեւս Joubert.
7. Thomas Mallebrun.
8. Payen le Bouteiller.
9. Guillaume Delile.

ԾԺ

ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԼԵՒՈՆԻ[1]

(ՊԱՏՄԻՉՆ ԿԻԼԻԿԻՈՑ)

Մինչդեռ էր թուականն ՈԿՀ (1219) պատահեաց ախտ[2] հիւանդութեան թագաւորին Լեւոնի, ուստի և մեռաւն իսկ։ Եւ մինչդեռ կենդանի էր եկին առ նա իշխանքն իւր հանդերձ կաթողիկոսին Տէր Յոհաննիսիւ[3]. և իբրեւ ծանեաւ զինքն թէ փոխելոց է յաշխարհէս, հրամայէր[4] հանել զինքն ի Սիսոյ՝ և տանել ճանապարհաւ Ակներայն[5], զոր ինքն էր շինեալ, զի յորժամ մեռցի՝ անդ տարեալ թաղեսցեն զնա։ Եւ ի ճանապարհին կոչէր զամենեսեան և խրատէր զնոսա, անքակտելի մնալ ի սէր միմեանց, և արիագոյն՝ ի պահ աշխարհին, և անդրանիկ հաւատս պահել տալոյ գաւառն իւրոյ Զապէլի, զոր թողոյր ժառանգ տէրութեան իւրոյ։ Ինքեր և

1. Արդար քննագատութիւնն ունի կարեւոր նիւթեր քննութեան Լեւոնի վրայ, բայց որ և է արդարացուած անձն չի կըրնար ջնջանշնալ զնա բազում մարդմէ մեծ անձ մի, թերեւս մեծագոյն իր ժամանակին։ Մեծութիւնն համեմատ է և վեհմտան իր վախճանին, զոր յետ իր բազմակերպ գործոց յիշատակին՝ գրեթէ անհնար է առանց խոր զգացման նկատել, թէ կրօնական թէ քաղաքական գերագոյն տեսարանաւ։
2. Այս ախտն արդարացաւ կոչուի, որ է Podagre, Ոտքի ցաւ. զոր այդ յայն բառիս մեր հեղինակք Պուտագրոս կոչեր են։
3. Իբրեւ պարագլուխ իր յաւզարկաւորաց։
4. Շատ թշնամեաց դէմ եղեր էր Լեւոն, զարկեր և յաղթեր. նայնպէս և հիմայ կ'ուզէ արիաբար մահուան ընդ առաջ երթալ։
5. Անուանի եպիսկոպոսանիստ վանք։

դաստիարակս տղային իւրոյ՝ զմեծ իշխանն Միր Աւտաճ, որ էր տէր բազում բերդից և գաւառաց՝ ի Սելեւկիոյ մինչեւ մերձ ի Կալօնեսօս, որ անուամբ նորա կոչի մինչեւ յայսօր՝ Աշխարհ Միր Աւտաճայ։ Եւ էր սա աշտիճանաւ՝ սենեկակ[1] Հայոց, որում յանձն առնէր թագաւորն պղուստրն իւր, հանգերձ Պայլիւն, հայրապետին և իշխանացն ամենեցուն. և բանս խրատականս խօսէր ընդ նոսա։ Եւ հասեալ ի գեօղն Մրվանայ՝ անդ գտեղի կալաւ, զի տակաւին մնալմինն ի ցաւոյն։ Եւ էր անդ առաքինի վարդապետն Գրիգոր[2] որ և Սկեւռացի ասի, վասն սուրբ հաղորդութեան յեաին թռչակին։ Եւ որպէս յառաջագոյն պատմեցաք զորդւոյն Ռնգաւոց թագաւորին[3] որ հանգերձեալ էր գալ և փեսայանալ նմա, զոր պատուէր տայր իշխանաց իւրոց՝ կատարել զեգեալ պայմանս իւր, պահել զդուստրն իւր Զապել ընդ որդի թագաւորին՝ յորժամ գայցէ, և անյապաղ թագաւորեցուցանել զնա ի վերայ ինքեանց։

Եւ ապա սկսաւ զելից իւր ի կենցաղոյս՝ հոգալ ըստ պատշաճի, և զմարմինն հանգուցանել ի սուրբ ուխտն Սկևռաց։ Եւ կոչէր զսուրբ վարդապետն Գրիգոր, և խոստովանէր զյանցանս իւր, և դաւանէր զխոստովանութիւն ուղղափառ հաւատոյն. և ընկալեալ զհաղորդութիւն ի ձեռաց սուրբ վարդապետին՝ զոհանալով զՏեառնէ. և էր մայիս ամսոյ մին։

Եւ եղեւ հակառակութիւն թէ որ հանգուսցեն զմարմինն. զի կաթողիկոսն Տէր Յոհան բռնագատէր ի Թրազարկ տանել, և իշխանքն ՅԱկներն՝ ուր ինքն հրամայեաց։ Եւ իբրեւ փոխեցաւ ի Քրիստոս բարի խոստովանութեամբ՝ սահմանեցին այս-

1. Sénéchal.
2. Բարեկամն Ներսիսի Լամբրոնացւոյ, և յետ նորա արժանաւորագոյն եկեղեցական անձն ժամանակին։
3. Անդրէաս Բ Մահառաց թագաւորն։

պէս. զի հանցեն զփորոտին և տարցեն ՅԱկներն, և զմարմինն տարցեն ի Սիս, և տապանաւ հանգուցին յեկեղեցւոջ իւրում[1]։ Որոյ ողորմեացի Տէր Աստուած, և թողցէ զյանցանս նորա։

ՅԺԱ.

ՍՏԵՓԱՆՈՍ ՏԻՐԱՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՆԱՑ Ս. ԽԱՉԻՆ[2]

Զպարծանս բնաւին մանկանց նոր Սիոնի և գծաղիկ եկեղեցւոյ, և զպատկն ամենայն գիտնականն և վարժ վարդապետաց, զերեքերանեանն զՏէր Ստեփաննոս, մականուն Տիրացուն[3], մեծաւ թախանձանաւք և գովասանական նամակաւ, ի հզգեւոր Տեառն Գրիգորիսէ կոչեցեալ լինէր ի կղայն՝ զոր Հոռոմ կոչեն. և նորա հնազանդեալ հզգեւոր հրամանացն, ոչ դարձեալ ընդդէմ կամ պատճառեալ գծերութիւն կամ զինչ և իցէ, այլ որպէս վայելէր իւրում զուարթ և զուարճածաղիկ ալեացն, խոյս[4] և հպատակ եղեւ վեհին և սիրալիր կոչողին. յուղի անկեալ պատրաստեցաւ առաջիկայ ճանապարհին, ընդ իւր տարեալ և զիս։ Եւ զբազում օթեւանօք զանց արարեալ հասաք ի բաղձալին. և

1. Լեւոն՝ զգաստ մտաք հզգայ թէ ինչ որ կու թողու, թէ մանաւանդ ինչ որ պիտի պահէ միշտ։ զՀոգին։
2. Ներսես Շնորհալւոյ Թղթոց Կաթողիկեայց Մեկնութեան օրինակի մի Յիշատակարան է։
3. Անուանի էր գիտութեամբ, զոր և գովութեամբ յիշէ Ներսես Լամբրոնացի՝ իբրեւ իր վարպետը, ըսելով. «Զնուռանի արքն՝ Ստեփաննոս Տիրացուն՝ ոտուռ» ցիչև մեր և Գէորգ եղնաւորն», և այլն։
4. Ա յապէս գրուած էր՝ վանցի արտասանութեամբ, փոխանակ հլոռ գրելոյ։

ի տեսանելն զիրեարս մոռացաք զաչխատութիւն։ Եւ ի լինելն անդ ետես զգիրքս զայս և փութաքեաց, որպէս ընդդէմ ծաղկանցն՝ գործոցն քաղցր և անթոյժ ճաշակացն, ի սա պէս և հայրս իմ ըստ հոգւոյ, հրամայեաց շարայարել ի քարտիզի՝ զտեսիլ մաքրեցելոյն ի կրակեան ախտից որ ի մեզ, և զկաթողիկէիցն թուղթ, զոր բացայայտեալ էր իմաստունն և հանճարեղ[1], և զՊատմութիւն սրբոյ վկային Քրիստոսի Սարգսի Զօրավարի. և ի շարադրելն իմում անդ՝ գային առ իս այլք ոմանք, և հոգարարձու եղեալ առ իս, օգնել կամեցեալ՝ զրէին և նաբա որպէս երեւիզ։

Եւ զկնի աւուրց այլ հանապարհ առաջի եղաւ իմում տեառնս և կաթողիկոսին Հայոց, զի կոչեցեալ եղեն[2] ի Լեւոնէ, որ այժմ զվաղնջուցն ի մերմէ ազգէս և զընկեցեալն յերեսաց տեսողէն՝ զիագաւորականն անունն՝ զոր ունէին Հայք, սա միայն առացաւ զգոստական զծիրանաթափայլ պատմուճանն. և ընկալաւ օծումն որպէս զհեծն Տրդատ, կամակցութեամբ արիական ազգին Ցունաց[3], բերեալ նմա նշան զհաչանիչ թագն։ Եւ նորա պատուասիրաբար կոչեցեալ զհոգեւոր Տէր Գրիգորիոս, զի երթիցէ և օծցէ զնա սրբարար և մաքրագործակ մեռոնաւն, և պատկեցէ զգլուխն խաչանշան գրչմամբ։ Եւ հոգեւոր Տեառն ընդ իւր առեալ զիմ Տէրն՝ յաղագս անհաս գիտութեանն և կատարեալ իմաստութեան և անթարամ մաքրութեան, և հաչակաւոր բարի անուանն, որ ի տղայական տիոցն մինչ ի կատարեալ ծերութիւն առ գործս իմաստութեան դեգերեալ՝ ըստ առաւելածայնեայն Սողոմոնի խրատուն, թէ, Լաւ է իմաստութիւն քան զոսկի և քան զամենայն մեծութիւնս երկրաւորս. և գարձեալ յաճախ գասէն, թէ, ի բովանդակ կեանս քո ստացիր զնա. էր վասն. զի Աւ գրուեաց հզօրաց յաճախ և ի հրապարակս համարձակութիւն բերէ։ Որպէս արդիւնական վարդապետս և տէրս իմ՝ որպէս զարեգակն փայլեալ ի մէջ իւրոց նմանեցաւն. զի զոր օրինակ յաստեղս արեգակն՝ սպէս և ի բանաւոր իմաստունս երեւեալ. զի այս զգալի արեգակնս զտեսանելի աչխարհս լուսաւորէ, իսկ սա զհոգի և զմարմին առ հասարակ ճառագայթաձեւ յօրինէ. այս արեգակն զրոյս և զտունկ առաքացուցանէ, իսկ սա զմտաւոր և զիշխանականն առ երկնիւքն բարձրացուցանէ. այս արեգակն զժախահոտ[1] և զխոնաւուտ վայրս սաբաւառեալ չամաքեցուցանէ, իսկ սա զնեխութիւն և զապականութիւն հոգւոց և մարմնոց՝ հրացայթ և լուսառեակ գործէ. այս արեգակն առ երկրաւորս ճանապարհ անմոլար տանի, իսկ սա զմոլորեալս յուղիղ և ի բարի ճանապարհէն՝ անվհեր և անմոլար առ երկնային և խաղաղ նաւահանգիստն Քրիստոս հասուցանէ։ Զոր մաղթեմք յընթերցողացդ զի ի մաքուր և ի սրաթռիչ յաղօթս ձեր հանապազ հայցելով ի վերնաւոցդէն, զի չնորհեսցէ զսա մեզ և ամենայն Հայաստանեաց՝ առանց ամենայն փորձանաց՝ ընդ երկայն աւուրս, ամէն, յարամնաբար մնալ, մինչեւ ի խոր ծերութիւն. և յետ առնացս՝ յաթոռս առաքելոցն և ի տաղաւարս մարգարէիցն, և ի դասս սուրբ վարդապետացն. և ըզտուեալ տաղանդն լիապէս մատուսցէ իւրում տեառնէն, բազմապատիկ առաւելութեամբ, և զերանելոյն լսել զձայն, թէ, «Խարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ գտար՝ ի վերայ բազմաց կացուցից զքեզ». յաւելուլ ի հինգն այլ եւս հինգ, և յերկուսն այլ երկու. և զուարթացուցեալ ամենավայելուչ աչալրջութեամբ

1. Պակաս անուանն, որ է Ս. Ներսէս Շնորհալի. նոյն ինքն է և յիշեալ Ս. Սարգսի պատմութեան հեղինակն։

2 Ի Հռոմկլայէ կոչուեցան յարքունիս Լեւոնի Ա։

3. Սխալմամբ գրուած է, փոխանակ Յունաց։

1. Այս տեղ այլ ի փոխանակ ժահահոտ գրելու։

պայծառ փառօք ընկալցի զբրաբիոնն յաղթութեան ընդ ամենայն սուրբս, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. ընդ որում Հօր և Աստուածոյ Հոգւոյն:

Եւ զիս զառաքեալս Յակովբ՝ զակաւ աշխատողս և զամենաքարի զհարազատն իմ զՅովհաննէս, զընտիրն ի բեմբականս[1] և զանյաղթն յերաժշտականս և զանձանձրոյթն ի զրոյութեան անհոգն[2], զգովելին յամենայն բարեձեւութիւն, և զԳիորգ՝ և ծնողսն իմ՝ բարի մնասին արժանի արարէք յիշմամբ ի Քրիստոս. և դուք յիշեալ եղիցիք յողորմութիւն...: Ընդ նմին և զամեներջանիկ կրօնաւոր և զբարի հոգի զՀայր Յակոբ՝ որ հայր է վանից, և զՀաւատաբիմ եղբարս զԴաւիթ և զՍարգիս, հանդերձ (այլովք) յիշեալիք ի Քրիստոս զկազմող գրոցս:

Եւ գրեցաւ ի Ոխ թուին լուսերանդ և հրաշապատում տառս առաքելագիծ մատենիս, բազմազան բարութեամբ և իմաստութեամբ լցեալ. զոր Տէրն մեր և Աստուած վայելել տացէ Տէր Սուրբ Փիլիպոսի մականուն Տիրացուս, բազում ամաց խաղաղականաց, և առողջ մնալ հոգւով և մարմնով. և իւր ժառանգին՝ Տէր Սարգսին՝ նորընծայ եպիսկոպոսի, բարի և իմաստուն պատանեկի. զոր ընտրեաց և կառոյց[3] իւր փոխան և տեսուչ անապատիս Սուրբ Խաչի, ստացուածոց և ամենայն գոյից. բազում և պէսպէս գնդութեամբ կտակաւ... գրով, կամակցութեամբ և յօժարութեամբ եպիսկոպոսաց և վարդապետաց և համօրէն քահանայից և... անց, այլ և դատաւորաց և իշխանաց Շահիրաւանին[4] քաղաքի և այլ գեօղից. և... այ. եղեալ զօրհնութիւնն Աստուծոյ և զնորին հակառակն. զի որք կամակից և օգնական լինին՝ զօրհնութիւնն ժառանգեսցեն, իսկ որք դիմասցին և ի հակառակութիւնս հատանիցին, այնպիսիքն անիծիւք պատահասցին առաջի ահեղ աւետնին Քրիստոսի: Այլ զՏէր Սարգիս զօրացուսցէ Քրիստոս և հեծմուտս[1] արասցէ, զի զերն չահեսցէ և զնորին պատուական որդիացեալսն, նա և վինքն իսկ գլխովին և զՔրիստոս զտուիչ իմաստութեան. և նմա փառք այժմ և միշտ և յաւիտեանս...:

* Եւ ընդ աւանդել հոգւոյն տիւ եղեւ 2. այ վայ հազար բերանով գլետ մնացեալս, որ զրկեցաք ի քաղցրահոս աղբիւրէն և յողորմածաւալ ճառագայթիցն. զի ի մեծի երիչաթաթոլն[2] խաւարեցաւ (արեգակնս) մէտուզփեան... Տէր Աստփաննոս մականուն Տիրացու... ա թու[3]:

* Տէր Յիսուս ի քո սոսկալի գալստեանդ ի ծաւալումն ծիածան ձեմարանացն, պարծանաց պատկաւն զարդարեա ի չուք չնորհի անմարմնոցն տեսաւորեալ զՏէր Աստփաննոս:

* Զաստուածապսակեալ և զսուրբ գիտապետն Հայաստանեացս՝ զՏէր Գրիգորիս արժանապատիւ կաթողիկոս Հայոց, զմեծ գիտնական և զվսեմա-

1. Գարգեալ փոխանակ խեչամատի հնչական գրէ:
2. Անշուշտ չարունակած էր Աստփաննոսի վարքն, որ գրոց հնութեամբն կրնաւեր է, և միայն մահուան յիշատակն է մնացեր:
3. Անշուշտ մահուան թուականն է, որոյ միայն այդ ա վերջի թիւն սրուշ կ'երեւի, և գուշակուի որ առջի թիւերն էին ՈԾ կամ ՈԿ, որ է 1202 կամ 1212 թուականն Քրիստոսի, հաւանօրէն առաջինն: Կրնայ նկատուիլ որ Աստփաննոս չէ յիշուած Լեւոնի թագաւորութեան ներկայ եպիսկոպոսաց կարգին, (Յոդ. 309), բայց նոյնպէս այլ նկատելի է որ բոլոր յիշեալքն՝ նոյն թագաւորին աէրութեան վերաբերեալքն են:

փայլ առաջնորդ՝ յիշեալքէ ի Քրիստոս. յորոյ օրինակէ գրեցաւ գիրքս այս. զոր հաւաքեալ մեծաւ աշխատութեամբ՝ իբրեւ զգործասէր մեղուս՝ զթուղթս սրբոց Կաթողիկեայց. զոր և մեր եկեալ ատ տեսաք զսա ուղիւղ յարմարեալ ըստ պատշաճի դրուագութեամբ: Որում՝ ցանկացող եղեալ այսմ հոգեշահ առաքելական մատենիս՝ Տէր Սահակ Սեբաստացոյ արդիւնաւոր գիտնական, որ և Տիրացու յորջորջի, և ետ գրել հոգւոյ որդեկի իւրոյ Յակովբայ, ի վայելուչն անձին և ի յիշատակ հոգւոյն: Արդ որք ըստ պատահման հանդիպիք տեսութեան գրոյս, յիշեսջիք աղօթիւք ի Քրիստոս զՏէր Գրիգորիս կաթողիկոս Հայոց և զՏէր Սահակ վարդապետ. նա և ընդ արժանապատիւ յիշատակելոցս՝ և զգրողս Յակովբ մի՛ մոռանայք յաղօթից, որդիք լուսոյ:

ՅԺԲ

ԶԱՓԱՐԻԱ ՍՊԱՍԱԼԱՐ ԵՒ ԻՒԱՆԷ ԱԹԱԲԷԿ[1]

(ԿԻՐԱԿՈՍ· Բ.)

Յաւուրս ժամանակաց թագաւորութեանն Հայոց Լեւոնի (Ա.) արքայի[2] էին յԱրեւելս երկու եղբարք,

1· Լաւագոյն նկար կամ լուսատիպ պատկեր մի չունենալով՝ ներկայացնեմք (յերես 444) ինչ որ չատ տարի առաջ գտեր և հրատարակած եմք ի Շերակ (եր· 160), Հառիճայ (Պիչախճ) վանաց եկեղեցւոյն գմբեթին մէջ քանդակուած Զաքարէի և Իւանէի:

2· Շատ յարմարապէս Լեւոնի յիշատակին զուգե պատմիչս՝ այս հարազատները· վասն զի, ինչպէս Լեւոն ի Սիւիւիա հանգիստացաւ քաջութեամբ և ճարտարութեամբ, նոյն ժամանակ և քիչ մ՛այլ վերջն ատոնք՝ ի Հայս և ի Վիրս: Կիրակոսի ընկեր վարդան պատմիչ այլ համաձայնի իրեն և աւելի պարզ

որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարիայ, որ հատուածեալ ի Քրպայ, ի Բաբիլական թիկնէն[?], անուն առաջնոյն Զաքարէ և երկրորդին Իւանէ. արք քաջք և ճոխք իշխանութեամբ, պատուելք ի թագուհւոյն Վրաց՝ որ Թամարն կոչէր, դուստր Գէորգայ քաջի՝ որդւոյ Դեմետրէի: Եւ Զաքարէ էր զօրավար Վրաց և Հայոց զօրուն՝ որ ընդ ձեռամբ թագաւորին Վրաց. իսկ

կ՛ըսէ. «Փառաւորեալ իշխանքն Զաքարէ և Իւանէ » որդիք Սարգսի... ի Քաղդէ ազգէ հատուած եկեալ » առ թագաւորսն Զորագեայ՝ որ ի Բագրատունեաց » ազգէ, հաւատացին ի Քրիստոս և պատուեցան... » և յաւուրս Թամարայ առաւել փառաւորեցան, և » եւս նոցա վԼաւռէ», և այլն: Իր հետեւեալ խօսքն որպէս և Կիրակոսի՝ ինքնին յայտնէն որ իրենց փառասիրաբար աւելի փառաւորած են զթագուհին Թամար իրենց յաղթութեամբ և երկրակալութեամբ, և Վրաց շամփրամի համբաւ առած են անոր: – Վերջը ասոնց ցեղը Մխարգրցի կ՛անուանուին, որ նշանակէ երկայնաձեռն, վասն զի կարծեն թէ հին Պարսից երկայնաթաթակ Արտաշիսի գաւիլներէն առաջ եկած են:

Վարդան յիշէ Զաքարէի և Իւանէի պապուն պապն այլ, Աշագ Սարգիս. ասոր հայրն այլ կոչուի Խոսրով, որ է հնագոյն ծանօթն այդ երկայնաձեռն իշխանաց. իսկ իրենց որդիքն և թոռներն յիշուին ցկէս ԺԴ դարու, որոց ամենէն նշանաւորքն ի պատմութեան՝ են, Շահնշահ՝ որդին Զաքարէի, Աշագ՝ որդի Իւանէի, ինչպէս տեսնուի յԱզգացուցակին (եր· 447):

Այս երկու մեծազօր եղբարց նման իրենց մեծագի քոյրն Ռաւնա թագուհի՝ կին Աբասայ (Գ) Տաւուշոյ թագաւորին, (տես զԱզգացուցակ 292 Յօգուածի) իրեն արժանաւոր յիշատակ մի թողած է, Զորագեայ (Հիմայ Պոռչալու) անզուսպ սրտովար ալիքները կերպով մի սանձելով, վրան միակամար կամուրջ մի ձգելով, երը 18 կամ 20 չափ (մետր) բացուածքով, զոր եօթն դարէ աւելի ժամանակին՝ չէ կրցած կրծել, այլ գեռ լաբուած մնայ, բնական չէնքերն աւելի բանակոնին վնասմ չհնուածով, այսինքն արձանագրութեամբ Նանայի. որ ասով իր սիրած, սէրն ու սուգը և իր վաղամեռիկ

իւանէ աթաբէկութեան պատուով[1]: Սոքա բազում մարտս քաջութեան ցուցին. քանզի զբազում աշխարհս Հայոց՝ զոր ունէին Պարսիկք և Տաճկունք՝ առին ի նոցանէ յինքեանս, զգաւառն որ շուրջ զծովովն Գեղարքունեաց, զՑաշիր և զՄյրարատ, զԲջնի քաղաք և զԴուռին և զԱվերդ և զԱնի և զկարս և զՎայոց ձորն, և զաշխարհս Միւռնեաց, և որ շուրջ զնովաւ են բերդք և գաւառք, հարկատուս արարին և զսուլտանն կարնոյ քաղաքին: Ապերեցին և զբազում քաղաքս Պարսից և զԱտրպատականեայս,

Աքառ թագաւոր ամուսինը († 19 տարուան) կանգնեն և կենդանի թողուց. և է այսպէս, խաչքանգակի մի ներքեւ.

Ննջա՛ն Քրիստոսի, լեր բարեխաւս իշխանաց յազգէ Բագրատունեաց. — Ես Կանայ* դուստր իշխանաց իշխանի Սարգսի որդւոյ Զաքարէի, կին Աքասա Թագաւորին. որ կիսաւերայ վախճանեալ խաւարեցոյց զմեզ. Շինեցի զկամուրջս. կանգնեցի գեաչս յիշատակ նմա, մխիթարութիւն ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց իմոց. յիշեցէք ի Քրիստոս Յիսուս. Ամէն:

Ոչ պակաս վեհմական և արտառուչ է համառօտաբեմքն և իր տապանագիրն՝ ի մէջ բազմաթիւ իշխանազանց Հաղբատայ պատկառելի տապանատան, մօտ իր քերդն, այս չորս վանկով, ՀԱՆԳԻՍՏ ՆԱՆԱՅ **:

1. Կիլիկեցւոց առեն մեծ Պայլ կամ Թագաւորա. Հայր կոչուած պատուոյ յարմարի. Թագաւորին տան հազցող և նախանեաց բանիւն՝ Հազարապետ:

* Օրինակող արձանագրութեանս Նանայ գրած էր:

** Նանա Հաղբատայ միաբանից համար Աէլո մի հասարակ անուն էր, այսինքն իբր ի յիշատակ հանգուցելոց՝ սիրոյ և ողորմութեան կնքահայր. հօն ի Հաղբատ թաղուած են՝ մուրմինն՝ Թագաւորն Աքաս և անոր հայրն Կորիկէ. և իր քանի մի քոյրերն. չատ յարմար էր որ ինքն այլ անոնց քով ունենար իր վերջի հանգիստն՝ քան ի Սանահին, ուր գտուի այսպիսի արձանագիր մի. ՃԳՆԱՒՈՐ ՊԱՏՐԻՆՈՒՀԻ ՆԱՆԱՅ ԴՈՑՐ ՊԱՏՐՈՆԱՑՆ ՉԱՔԱՐԻՒ ԵՒ ԻՄԱՆԵՒ: Յառաջ քան զպակիչն ընդ Աքասայ՝ Նանա պատրոնուհի էր, բայց յետ զպակիչն հարկ էր որ ոչ եւս պատրոնուհի այլ թագուհի կոչուի:

և ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց[1]...

Եւ այսպէս յաղողեցաւ նոցա ի վերուստ յաղթութիւն նոցա. զի համբաւ քաջութեան նոցա եղ ընդ բազում գաւառս[2]. և բազում ազգք հարկս տային նոցա, որ սիրոյ ազագաւ և որ յերկիւղէ: Շինեցան և բազում վանորայք՝ որ ի վաղուց ժամանակէ անտի աւերեալ էին ի հինին Իսմայէլէ. վերստին նորոգեցան եկեղեցիք, և պայծառացան գաւք պաշտօնէից. շինեցան և նոր վանորայք և եկեղեցիք որ ի հնոց էին լեալք. ընդ որս և հռչակաւոր վանքն՝ որ Գետիկն կոչի[3] ի գաւառին Կայենի, զոր շինեաց սուրբ վարդապետն Մխիթար՝ զոր Գոչն կոչէին[4]. շինեալ հրաշազան եկեղեցի գմբեթայարկ երկնանման. և կնքեալ զեկեղեցին և օծեալ յանուն Ս. Աստուածածնին, տաճար փառաց Տեառն և բնակարան բանաւոր հօտին Քրիստոսի:

Եւ իբրեւ այսպէս յաղողեցաւ նոցա իշխանութիւնն, հարին զսուլտանն որ Շահի Արմէն կոչիւր. ապա կամեցան առնուլ և զՀոյակապ քաղաքն Բզնունեաց՝ որ կոչի Խլաթ[5]. և զօրս գումարեալ պաշարեցին զնա, և մերձ էին առնուլ: Ապա ելեալ իշխանն Իւանէ՝ եղբայր զօրավարին՝ զբօսանաց ինչ ազագաւ ի զնին պարսպին, և յանիմաստ չքնելն՝ գիեաց ոսք երիվարին ի խարխարան՝ որ

1. Վարդան իբրեւց երկրակալութեան տարեթիւերն այլ նշանակէ. «ի 640 թուին (Քրիստոսի 1191–2) ա» ռին վերկիրն Շիրակայ, և ի 645 (1196–7) զԱնբերդ » և ի 648 թուին (1199) առին զԱնի և ի 650 թուին » (1200–1) առին զԲջնի, և ի 652 թուին (1203–4) » առին զԴուին, և ի 655 թուին (1206–7) առին զկարս » (աթոռ) թագաւորին, և ապա զԹեսաբակա և զԶա» րեբն »:

2. Ուրիշ 00. գրեն ընդ աւելեալն տիեզերս:

3. Տես յաղագաւածս 297:

4. Տես զյաղագաւածս 282. 292. 297:

5. Որ նոյն Շահի Արմէնին նստոց քաղաքն էր:


թաքուցեալ էր[1], և ընկէց զնա յերկիր. և տեսեալ արանց քաղաքին՝ յարեան ի վերայ նորա և ձերբակալ արարեալ՝ տարան զնա ի քաղաքն. և եղեւ քաղաքին ուրախութիւն մեծ. և իսկոյն ազդեցուցին զըմբռնումն նորա. ընդ որ կարի յոյժ ուրախացեալ հրամայեաց առ ինքն ածել։ Եւ լուեալ զոբաւարին Ջաքարիայ՝ յղեաց առ քաղաքացիսն բանս սպառնալեաց, և ասէ. Եթէ հանէք զեղբայրն իմ ի քաղաքէդ յայդմանէ կամ կորուսանէք, զհոդս երկրիդ ի կողմանս վրաց տանիմ, և անմարդ արարից զձեզ ի մարդկանէ[2]։ Եւ երկուցեալ նոցա ոչ հառուն տանել առ սուլտանան՝ որք էին ի կողմանս Դաւառակոսի. որոց անուանք էին Կուզ[3] և Մհիթք Փհմ[4] և Աշրաֆ՝ յազդէն Սալահատնին որ առ զԵրուսաղէմ։ Ապա արարեալ սէր ընդ միմեանս, խնդրեցին զդուստր Իւանէի ի կնութիւն, և արձակեցին զիւանէ. և նորա երթեալ ի տուն իւր առաքէ զդուստրն իւր, որ եղեւ կին Կըզոյն, և յետ նորա Աշրաֆի։ Բազում օգուտ եղեւ գալ կնոջն ի տունս սուլտանացս. զի դիւրեցին քրիստոնէիցն որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին, եւս առաւել երկրին Տարօնոյ. զի վանորայքն որ

1. Արաբացի պատմիչ մի՝ փոխանակ խորխորատի՝ կամուրջ կ'ըսէ, որպ մէկ մասը խախտեր էին այլազգիք, որ Իւանէի ձիուն կոխելէն փլաւ, և նա ինկաւ։

2. Ոչ վայրապոյտ՝ այլ առատ քաջ մարդուս խոսք, որմէ վախնալով՝ Հաչուռթիւնն ըրին զերդաքն գիւանէ, և նոյն ինքն թագաւոր Հայոց (Շահի Արմէն) կոչուածքն, փեսայացեալը Իւանէի։


3. Կուզն՝ Թերեւս Խլոնխոնի Քէյ Քաուս կոչուած սուլտանն է, կամ Նախճաւանի կողմանց իշխող Ելկուզ ամիրայն քայց Կիրակոս գԹոմմիմա՝ Կըզոյ կին որուած ըսելով՝ զնոյն Շահի–արմէնն Համարի, որ այն տաեն Ախռատ կոչուածն էր, և տարի մի չանցած մեռնելով՝ իր յաջորդն Աշրաֆ առաւ զԹոմմիմա։ Տես գ'7 ծանօթութիւն Ազգացուցակին՝ ի վերջ Յօդուածիս։

4. Պարզապէս Մէլիք Քեամիլ կոչուէր։



ԱԶԳԱՑՈՒՑԱԿ

ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ ՉԱՔԱՐԵԱՆՑ



1. Կամ Սահակդուխտ, քոյր Քուրդ իշխանի:

2. Կին Աքաւայ Թագաւորի Կորիկեանց: Տես վԱղզացուցակ ազգս յերես հտ. Բ. 333:

3. Սա եղաւ կին Գրիգորի Խաչենեցւոյ:

4. Կին եղաւ Վահտանդայ Սակեանց:

5. Կամ Խորիշահ:

6. Ոչ ի Գոնցայէ, այլ յայլմէ կնոջէ Աւագայ:

7. Կին արուեցաւ Մէլիք Աչրաֆի Խլաթայ տիրոջ՝ որ Շահի-Արմէն կոչուէր: Շատ արուեստիւն պատմիչք յիշեն զայս, բայց այնքան այլայլութեամբ՝ որ տան կարծել թէ Իւանէի թոռն՝ Աւագայ դուստր մի եւս Թամթա կոչուած ըլլայ և ուրիշ Շահի-արմէնի մի կին, որ և յետ անոր մահուան՝ երթալով առ զանն Թամթարաց՝ Խլաթայ տիրացած ըլլայ, երբ ԺԳ դարու կիսուն:

8. Դուստր էր Սադունի որդւոյ Քուրդ իշխանի:

9. Սորա կինն էր դուստր Սարգսի տեառն Ոհանեաց՝ որ է Օլթի գաւառն:

10. Սորա հայրն էր Շամշադին Սահիպ-տիվան:

11. Սա տէր էր Թալինի վիճակի Այրարատայ. կինն կոչուէր Սիթի խաթուն:

12. Սորա հայրն կոչուէր Բուղատա իշխան:

13. Դուստր Սադունի Ամիրեկի:

* Ասոր արդիք և որդւոց արդիք չորս ազգ յիշուին, որ են, Պէռա Չաքար. Վահրամ. Աղբուղա. Վահրամ:

անդ էին՝ ընդ հարկաւ էին. թեթեւացուցին զսակ հարկին, և կիսոցն զամէնն իսկ թողին. և հրամայեցին այնոցիկ որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին՝ ոչ զրկել կամ նեղել զճանապարհորդս, որք աղօթիւ աղագաւ երթային յԵրուսաղէմ. և առաւել ընդարձակեցին ազգին վրայ. վասն այնորիկ առաւել մեծարէին զվիրս, զի անհարկ էին նոքա յամենայն քաղաքս նոցա և յԵրուսաղէմ եւս: Եւ էր անուն կնոջն Թամթա: Եւ այսպէս եղեւ սէր և միաբանութիւն ընդ թագաւորին վրայ և ընդ իշխանութեան Սուլտանայ:

ՑԺԳ

ԳՐՈՒԹԻՒՆ, ԳԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱԳՆՈՒԹԻՒՆ ՄԵԾ ՏՕՆԱԿԱՆ ԳՐՈՑ[1]. ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԴԷՊՔ Ի ՍԿԶԲԱՆ ԺԳ ԴԱՐՈՒ. ԱԼԱՏԻՆ ՍՈՒԼՏԱՆ ՍԵԲԱՍՏԻՈՅ ԵՒ ԶԱՓԱՐԵԱՆՔ

... Թէ զիարդ և ուստի գայս առտուածային գանձս առացաւ այր մի պատուաւոր ասիս[2] Բայբերդոյ[3], որոյ անուն յորջորջի Ա.ատուածատուր, յայժ

1. Մշոյ Ս. Առաքելոց կամ Վաղարս վանաց ձառընտրի Յիշատակարան է, սակ իբրեւ սրբազան և համբաւաբեր ինչ պահուէր այս մեծագործ գիրքս, Տօնական կամ Տօնական կամ Ճառընտիր կոչուելի, ի գարս վերջն և յաջորդին սկիզբն գրուած և գերուած յայլազգեաց: Ի՛նչ խնամքով գրել տուեր և մանաւանդ գերբաղներէն գներ են՝ առատ անտի առակ հանգանակելով, կ՛արժէ գիտնալ և յարգել գրոց յարգողներն եւս, և ծանօթանալ ժամանակի քանի մի նշանաւոր անձանց:

2. Գիւղապետ կամ գլխաւորն ազգայնոց տեղւոյն. յայտնի է բառն արաբացի:

3. Թերեւս ոչ Բաբերդ քաղաքն՝ այլ գիւղ մի:

աղքատասէր, մանաւանդ թէ և աստուածասէր, որ և սա իսկ ցանկացող եղեալ այսմ սուրբ մատենիս և պատուական մարգարտիս, ապա այսուհետեւ չաղկապեցաւ ի սէր այսմ սուրբ բուրաստանիս, և ապա հոգ տանելով թէ ով արդեօք կարող իցէ հասուցանել գիս ի փափագ բաղձանացս. զի Մովսէսն այն աստուածային պատգամաբն արժանացաւ հայել առ Աստուած: Եւ ապա խնդիր արարեալ յոգնահմատ գրչի, և գտեալ քահանայ մի ի գաւառէն կարնոյ, որումն Վարդան կոչեցեալ, հմուտ և վարժ ամենայն արհեստի գրչութեան, և նա յանձին կալեալ և օգնականութեամբն Աստուծոյ սկիզբն արարեալ, և ապա զկնի երից ամաց եհաս յաւարտ բանիս: Եւ ի կատարման գրոցս՝ սուլտանն Մհաստոյ[1] ժողով արարեալ անհուն բազմութեամբ՝ նմանեալ ամբարշտին Յուլիանեայ, փքացեալ լեռնացեալ եհաս ի Թիւդուպաղիս[2], և անտի կամեցեալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց. և ամենեւին մոռացաւ զԱստուած և յուսացաւ ի նանրութիւն իւր, կամէր յաւարի առնուլ զաշխարհս ամենայն: Իսկ օգնականութեամբն Աստուծոյ եկին հասին զօրքն Վրաց, և մեծն Զաքարէ հանդերձ իւրանիւ[3] հարազատաւն իւր, և այլ աստուածասէր իշխանօք և նախարարօք և յոգնախառն խառնիճախանջ բազմութեամբ՝ հասին ի վերայ անօրէնն զօրացն և յանխնայ կոտորեցին զնոսա, զամենս ձերբակալ արարին, և ամենք ի փախուստ դարձան, բայց սուլտանն անվրէպ մնաց[4]: Սակայն զաւարայն զթիւս ո՞

1. Սէլճուկեան սուլտանաց մնացորդներէն, որոնք յԻկոնիոն և ի Սեբաստիա ինքնագլուխ իշխէին:
2. Որ է Կարնոյ քաղաքն, հին յունարէն:
3. Ժամանակին արեւելեան քրիստոնէից կսղմանց՝ վեհազուն և յալխազ պաշտպանք և ազատարարք, ինչպէս տեսնուեցաւ ի նախընթաց Յօդուածին:
4. Անվնաս ազատ պրծաւ:

կարէ գիտել՝ զոսկւոյ և զարծաթոյ և զմետաքսի, զերամակս ուղտուց, ձիոց և ջորւոց:

Եւ յայսմ ամի ի սադրելոյ չարին ըմբռնեցաւ այրն Աստուածատուր ի ձեռն ամիրային իւրոյ Ա-ղադիի[1] կոչեցեալ, որ և ի ձեռն այնմ գազանի Աստուածատուրն այն ընկալաւ զվախճան, և յափշըտակեցին զտացուածս նորա. և ոչ մնաց և ոչ մի ինչ՝ բայց այս գիրքս: Այսպա դատաւոր քաղաքին ձեռն յառաջ տարեալ՝ զուր պատճառանօք բանս ի վերայ եղեալ թէ հինգհարիւր պահառար[2] մնաց ինձ առ Աստուածատուրն: Եւ իրրեւ այսպէս եղեւ, ապա այնուհետեւ չու արարեալ գաւառին՝ եկն բնակեցաւ ի հռչակաւոր քաղաքն Թալար, և երկու ամ կայր ի պահեստի[3], և ոչ ոք գիտաց. և ապա կամեցաւ վաճառել, և ոչ ոք կարէր գամագիւտ լինել[4], զի բազմագին կամէր վաճառել:

Այսպա հարազատ եղբարք անձինք՝ երեք քահանայք գեղջն Դանձկան կոչեցեալ, որ է առ դուրս քաղաքին, և են անուանք նոցա՝ միւսոն Յոհաննէս, իսկ միւսոյն Վարդապետ, և երրորդին Յովաննէս, որ և նոքա ազգ արարին մեզ, զի էին միաբանք Սուրբ Աստուածոյ, նամակ արձակելով՝ թէ գանձ պատուական կայ ի քաղաքին. և մեր լուեալ զայս՝ եռափափաք սիրով չաղկապեցաք ի սէր սմին. ապա հոգելից եպիսկոպոսապետս մեր Տէր Եսայի[5] զմով-

1. Վերոյիշեալ (Ծան. 4) սուլտանաց մին, Սեբաստիոյ կողման իշխողն:
2. Ինձ անծանօթ՝ տառիկ մի անուն գուշակութ:
3. Գիրքն է պահուած մնացածն:
4. Ոչ ոք համաձակեր գնելոյ, վասն զի շատ սուղ ծախել կ'ուզէր:
5. Ն. Լամբրունացի ի թղթին առ Մեծն Լեւոն (Ա թագաւոր) իր գործը հաւնողներուն մէջ գովութեամբ յիշէ զսա. « Բալոր գաւառն Տարօնոյ և որ ի նմա » իմաստուն եպիսկոպոսն Եսայի և վարդապետ Թեո- » դորոս, որ զմերս հռչակեն բարեկարգութիւն, և » երանեն զհաղորդեալսն »...:

սիսականն ստացեալ սէր՝ ելեալ չորս քահանայիւք փոյթ ընդ փոյթ գնաց ի Խլաթ՝ յաղագս խնդրոյս այսորիկ, և ոչ կարաց հասանել ի փափագ բաղձանացն. քանզի ժամանակն ձմեռային (էր). և այլ եւս ապաւաւորք սուրբ ուխտին որ կոչի Աբծկեոյ վանք, և նոքա եւս քան զեւս վառեցան բորբոքեցան ի սէր սուրբ կաւակիս: Իսկ բոժորն[1] այն զոր յառաջագոյն կանխեցաք ասացաք՝ իրրեւ եռեաս ըզչերմեռանդ սէր մեր, եւս առաւել զԱբծկեցի սուրբ քահանայիցն՝ ապա զդինն եւս առաւել աճեցույց: Եւ իրրեւ այս այսպէս եղեւ՝ յայնժամ սուրբ եպիսկոպոսս մեր Թոյլ տուեալ վայր մի և եկն ի վանքս, ապա նոյնպէս և Աբծկեցի քահանաքն գարձեալ գնացին: Մի ամ այլ ինաց գիրքս առ բոժորն այն. ապա ի գալ միւս ամին խնդիր արարեալ թէ գիրքս Ղազարոս վանիցն է, զի առաջի գնոյ այն մեծ եպիսկոպոսն է, ապա յառաջ ասացեալ երիք քահանայքն որ ի Դանձկան՝ գարձեալ գրով ազդ արարին մեզ: Սակայն թէպէտ և սէր ամին ստիպէր զմեզ, բայց գնոյն անկարող էաք. ապա քահանայ ոմն անուն նորա Յովաննէս ի Միջնաղբերաց[2] էր և միաբանեցեալ սուրբ Աստիկոյս, և իրրեւ լուաւ զերկիւղս բարս մեր, ապա յառաջ կացեալ քաջալերեաց զմեզ և հաստատեաց ասելով, թէ, ես օգնական եմ որչափ իմ կարն է: Ապա ըստ բանից նորա այժ առաք ի գօրութենէն Աստուծոյ. յայնժամ Սարգիս վարդապետն հինգ փիլիսոփայիւք[3] որոց անուանքն գրեալ են ի դպրութեան կենաց, Յոհսիկ և Յատա-

1. Հին Բաղիրք՝ այղազգի թարգմանեն զԲոժոր, անշուշտ յանուն Բոստրա քաղաքի Եդեմացւոց և Մովաբացւոց, ըստ նոցա Բոժրա, ծաղկած քաղաք Հռոմայեցւոց իշխանութեան առեն, որոյ եպիսկոպոսքն յիշուին Դ և Ե դարու ժողովոց մէջ. հիմայ Հաւրան կոչուած Արաբիոյ կողման վերաբերի:
2. Տարօնոյ կամ Մշոյ գիւղ մի:
3. Երգողք կամ ժամասացք:

գեա, Աշտիխ և Ստեփաննոս և Ներսես, յարուցեալ ուղեկից առնլով զսուրբ Աստիսոն Բրխատոսի, և մեծաւ ցանկութեամբ հասին ուր գտնեն աստուածային, և յոյժ աշխատեցան, զի ժամանակն ձմեռային էր և սոյն գառնաչունչ և ձիւն բազում. և իրրեւ մերձեցան ի մեծահռչակն խոտաք, և մտին կացին ի մէջ մեծահարկի տանուտերացն, և Աստուած ահ արկ ի վերայ քահանայիցն Խլաթայ և Դանձկայ, և նոքա մեծաւ ուրախութեամբ յանձին կալան և օգնական եղեն բանիւք և արդեամբք. որոց անուանքն գրեալ են ի դպրութիւն կենաց. և զօրութեամբ Բրխատոսի առաք զրզձալիս մեր և դարձաք, ըստ իմաստուն վճռաւականին՝ որ եգիտ մի պատեւական մարգարիտ. նոյն և մեք առեալ զսա դարձաք յերկնագումար եղբայրանոցս մեր, որ յորջորջի Ղազարոս վանս, և եղաք զսա առ գրունս սուրբ Աստիսոյս, և ոչ եւս կարէաք գնել, զի եւ (5000) գրամ[4] խնդրեր բոժորն այն՝ որ է տաճիկ. և գարձեալ մեծաւ հազիւ կարացաք գնել ի Թ (4000) գրամ. և փառք, փառք Քրիստոսի (Աստուծոյ):

Արդ, նախ առաջին զամենագովելի եպիսկոպոսս մեր Տէր Եսայի, և որ իւրն գեղեցիկ բարի արգասիքն երեւեալ՝ համակք գովելիք, որոց անուանք Յակովբ և Ստեփաննոս եպիսկոպոսք՝ չնորհիւն Աստուծոյ և արդարապէս ուղիղք, յիշեսջիք զՏէր Եսայի ի սուրբ աղօթս և ընդ նմին զիւրսն: Եւ որ յիւր հալալ արդեանցն ընծաուսեր եղեւ մեծանուն Տէր Բարսեղ, չնորհելով ընծայ ի սուրբ պատուիրանս՝[2] տասն դահեկան[3], յիշեսցի ի Տէր: Եւ

1. Հաւանօրէն Արաբացւոց փութը արծաթի զրամ է, ըստ նիւթոյն նուազ քան զքառնդ մի, ըստ արժէից ժամանակին քառապատիկ արժոյր:
2. Սուրբ գիրք՝ այսինքն Աստուածաշունչն սովորաբար կոչուի Սուրբ Պատուիրան, բայց այս տեղ այդ Ձեռագրին համար ըսուած է:
3. Ոսկի զրամ է, ըստ չափուն նուազ քան զոսկին

թէպէտ և այս անուն կամացն ջատագով եղեն մեզ, սակայն հայր մեր Աբրահամ[1] առաւել քան զառաւելս հնարէր փոյթ[2]. և դաստիարակ նորին Տէր Բարսղի, հեզն և անարատն և պարկեշտն Թալատուր փիլիսոփայն, որ լատ կարի և նա ետ Ծ (50) դրամ. յիշեսցի: Եւ զՅովհաննիկս Միջնադբերցի՝ որ ազբիւրացոյց առատապէս զընծայս ի սուրբ պատուիրանս Աստուծոյ, յիշեսցի: Եւ որ սուրբ քահանայիւք և յորդորիչք են աստուածունակ անձինք՝ Արապիոն և Թալատուր՝ յիշեսցին. որ ոչ զսա միայն յորդորեցին՝ այլ և զբազումս՝ չնորհատու լինել ի գինս զրոցս: Եւ որ ի մեր սուրբ ուխտէս յօժարամիտք եղեն ի գիրս՝ տալ պարգեւս, և նոքա յիշեսցին յողորմութիւնն Աստուծոյ և ի մաքուր աղօթս քրիստոսասիրացդ. և են անուանք՝ Ստեփաննոս՝ որ յորկորչի ձոնի, և միւս՝ Աշոտիս Յրօնցի[3]. սոքա ետուն ի սուրբ պատուիրանս Աստուծոյ դրամ Ն (400), յիշեսցին: Եւ որ այլ ըստ կարի, Պօղոս՝ դրամ Ճ (100) յիշեսցի. Ներսէհ՝ դրամ Ճ (100) յիշել. և Վարդան և իւր եղբայրն Ստեփաննոս՝ ետուն և նոքա ընծայ ի սուրբ Պատուիրանն՝ հինգ դահեկան, յիշեսցին և նոքա: Հայրապետն և իւր եղբայրն Դաւարն չատ աշխատեցան ի քաղաքաւանն Մոզն, և էր զոր անձամբ լիապէս չնորհեցին ընծայ ի գինն, յիշ: Տիրատուր երէց ընծայատրեց ի սուրբ Պատուիրանս Աստուծոյ՝ դրամ Ճ. յիշեսցի: Եւ որ փակակալն էր Կիւրակոս՝ ի վեր քան զիւր կարն եցոյց զպնդութիւն: Այդ են և այլ այլք բազումք՝ որ մեծ յուսով օգնական

Փոանկաց, ըստ արժէից ժամանակին՝ նոյն համեմատութեամբ նախայիշեալ փոքր դրամոյն:

1. Առաջնորդ Ղազարոս վանացն:

2. Այսպէս գրուած է. նշանակութիւնը չգիտեմ:

3. Ծանօթ գիւղ Տարօնոյ. ըստ ռամկական աւանդութեան՝ մարդկան այս տեղէն ցրուելուն համար այսպէս կոչուած:

եղեն. և զի յոլով են և անկար է գրոչմել զանուանս նոցա, միայն գիտողին Աստուծոյ թողցուք, որ յառաջ քան զմեր օգնականելն՝ գրեաց զանուանս նոցա ի գիրն կենաց: Գիւղն անուանի Մոկուռնք, իւր քահանայիւքն չերմն սիրով փափագողք եղեն, և ետուն լի սիրով ընծայ ի գինս: Կին ոմն ետ գրամ ձ ի նոյն գեղջէ, յիշեսցի: Եւ այլ որ յաւանիս Մշոյ աստուածասէր քահանայքն և տանուտէրքն օգնական եղեն, յիշեսցին: Եւ որ ի մեծ քաղաքին Խլաթ պարոնայքն օգնեցին, առաւել Խոցադեղն և Աստուածատուր և Վարդիկ, Քրիստոս Աստուած յիշէ զնոսա յարքայութեան իւրում: Եւ որ ի Դանջնայ երկք հարազատ եղբարքն և իւրեանց հօրեղբայրն Խայիկ կրօնաւոր և աղօթասէր, սա չատ բազձաց մինչև եհաս սուրբ Պատուիրանիս. յիշեսցին և սոքա ամենեքեան: Յովհաննիկ փիլիսոփայ՝ որ անհատ խոնարհութեամբ սպասաւորեց մեզ, և սա յիշեսցի և գրեսցի ի գիրս կենաց: Այսպէսս որ աշխատեցաւ գնալ ի Խլաթ՝ յիշեսցի ի Քրիստոս: Պատուական տանուտէր ոմն Ծամիկ անուն, գրամ երեսուն ընծայ ի գինն, յիշ: Կին ոմն Ոզիկ անուն՝ գրամ երեսուն ի սուրբ Պատուիրանս ընծայ, յիշեսցի: Խապազ[1] ոմն Աղտաւազ անուն՝ գրամ երեսուն ետ ընծայ յաստուածային Պատուիրանս, յիշեսցի և նա:

Շնորհիւն Աստուծոյ Հօր և Աստուծոյ Որդւոյ և Աստուծոյ Սուրբ Հոգւոյն, ի թուականութեան արարչութեանն՝ որ լինի յիսկզբան լինելութենէն մինչեւ ցայժմ ամք վեցհազարերորդ վեցհարիւրերորդ երեսներորդ. և ի ծննդենէ Բանին Աստուծոյ լինի ամք ՌՄՏ (1204). և ըստ հայկազեան տոմարի որ լինի վեցհարիւրերորդ յիսներորդ և չորրորդ. Սկսայ կազմել զբազմերանեան չտեմարանս աստուածային գանձուց, ի նահանգիս որ կոչի

1. Հայագործ նշանակէ, Աղտաւազդ անուանն այլ յիշեցընէ նախնի Մամիկոնեան պայազատանները:

Վազարու վանս, ընդ հովանեաւ Սուրբ Աստ-
ւածածնայ քեզոցս, ի մէջ աստուածատես աստուածախօս սրբ-
բեցելոց և մաքրազարդից արանց: Որք վայելէք և
զմայլիք ի սմանէ՝ զորս չարադասեցաք ընդ գրով՝
յիշեսջիք ի Քրիստոս, և զորս ոչ կարացաք գրով
յիշատակել՝ առհասարակ զմիեզէն եղբայրութիւնս՝
որք այժմ բնակեալ են առաջի դրան Սուրբ Աստ-
ւածածնայ քեզոցս, առհասարակ ողջմեսցի մարգասէրն Աս-
տուած՝ որ ողջմածն է յամենայնի, և զրեսցէ ի
գիր կենացն յաբիտենից:

Արդ ի գրեցելոյնն ամին չինեցաւ ժամատունն.
իսկ յայսմ ամի որ գիրքս կազմեցաւ՝ կաւնեցաւ
գումբէթն Աստուածածնի. և տէր Աստուած ողոր-
մեսցի աշխատողացն՝ որք անդ և առ աշխատե-
ցան: Վասիլ հիւրատեսն յիշեսցի ի Քրիստոս:

Արդ, Յովաննէս Միխնազրերցի ետ ի գինս գրոցս
ՌՃ (1100) դրամ. իսկ ի կատարման Յայտնութեան
ուխտէիցն ի Տնօրինեցաւ[1] աւուր գրեցաք երկրորդ
պատարագ Յովաննիսի, հրամանաւ տէր Եսայեայ
և փիլիսովփայիցս և համօրէն ուխտիս, և գերա-
պայծառ առաջնորդիս մերոյ Աբրահամայ, և սուրբ
բեմբականաց[2], երկրորդ պատարագ անխափան մի
յամէ կատարել. իսկ որ անփոյթ առնէ՝ տացէ
համարս յաւուրն դատաստանի: Յրաւնցի Աս-
տեացն՝ միւն մատուցաք պատարագ, յաւուր տոնի
Սուրբ Աստքելոցն Յոհաննու և Յակովբայ:

Զկազմողս[3] զեղկելիս և զեղբայրիկն իմ զՄան-
փաւնիս յիշեսջիք ի սուրբ յաղօթսդ ձեր:

1. Յայտնութեան կամ Մինդեան տոնի ուխտերորդ
օրն, որ ըստ ամանց յաւուրկ Մկրտութեան տոնի օր
համարուի, Տնօրինեցաւ բառով սկսուած չարականին
անուամբ: Երկրորդ պատարագ ըսելով յայտնէ՝ որ
առաջին պատարագ մ'այլ առհմաներ էին իրեն հա-
մար, հաւանօրէն ի Զատկին, զոր եւ Յիշատակարա-
նիս օրինակողին աչքէն փախեր է այս:

2. Իբր քարոզիչ վարդապետ:

3. Աւետիսի մեծ և պատուական գրոց՝ արժանա-

ՅԺԴ

ԹԱԹԱՐՔ ԵՒ ԱՐՇԱԻԱՆՔ ՆՈՑԱ Ի ՀԱՅՏ

(ԿԻՐԱԿՈՍ, Լ.)

Վասն ցուցմանն կերպարանացս Թաթարին, բացատրութիւն ասելոյ.

Վասն զի յօժարեցաք մեք յիշատակ թողուլ
յազգս՝ որ գալոց են, քանզի ակն ունիմք մեք յա-
ւետ փրկութեան՝ ի նեղութենէ ատոր որ պաշա-
րեալս է զմեզ, սակաւիկ մի դուցցուք քննասիրացդ՝
կերպարանս և գնացս նոցա: Էին տեսլեամբ կեր-
պարանաց՝ գժոխատես և ահագնալուր. մօրուս ոչ
ունելով՝ բայց սակաւուց ոմանց կամ ի կլափն կամ
ի շուրթն. ակն՝ նեղ և արագատես, ձայնն՝ նուրբ
և սուր[1]. բազմակեացք և տեւողք: Յորժամ ան-
կանէր՝ յառաջ ուտէին և ըմպէին անյագ, և յոր-
ժամ ոչ անկանէր՝ ժուժկալք էին[2]. ուտէին գա-
ժեներայն կենդանիս, գուրբս և զանսուրբս, և զմիսն

ւոր եղած պիտի ըլլայ կազմն այլ, զոր երկու անգամ
յիշէ կազմողն և անունը չի յայտներ, թուի՝ խոնար-
հութեամբ, այլ իր եղբօր անունը յիշէ: Իսկ գիրքն՝
արդեօք պրծաւ այս եռաքի տարիներուս հանդիպած
վտանգներէն, ինչպէս տարակուսելով ըսած եմք ու-
բիշ անգամ երես. (2 ծանօթ. 294 Յօդուածի): Այս մեծ
գրոց մէկ երեսի կազմին վրայ գծուած էր այս ձեւով,
գունով և մեծութեամբ այս զարդս (տես եր. 449). չատ
ուրիշ գունագոյն և ոսկեգոյն զարդեր այլ ունի եղեր:

1. Ձիշդ և ճարտար նկարագրութիւն մարգաբա-
նական:

2. Եթէ ձեռնըներն ուտելիք չընկնար՝ երկայն ա-
տեն համբերէին. իսկ եթէ գտնէին՝ առանց կշտա-
նալու լափէին:

ձիոյն առաւել մեծարէին, անդամ անդամ յօշեալ և կամ եփեալ և խորովեալ առանց աղի, և ապա մանր կտրատեալ և թացեալ յաղողուրն՝ այնպէս ուտէին. ոմանք ի գուճ ըստ նմանութեան ուղտուց, կէաք նատելով ուտէին: Եւ յուտելն հասարակ բաշխէին տերանց և ծառայից. և յըմպելն զ'ղմռզ[1] կամ զգինի, առեալ մի ոմն մեծ ամանով ի ձեռն իւր, և փոքր բաժակաւ առեալ ի նմանէ՝ ցանէին ընդ երկինս, և ապա յարեւելս, յարեւմուտս, ի հիւսիս և ի հարաւ. և ապա իւր իսկ ցրոյին զայն սակաւ մի ըմպել ի նմանէ, մատուցանէր աւագագունին: Եւ թէ ոք բերէր նոցա կերակուրս կամ ըմպելիս, նախ բերողին տային ուտել և ըմպել և ապա ինքեանք ուտէին և ըմպէին, զի մի ի մահացու դեղոց ինչ զրժիցին: Որչափ և կամէին կանայս առնէին. բայց պատուականքն ամենեւին ոչ ապրեցուցանէին ընդ իւրեանց կանայս. բայց ինքեանք ուր և հանդիպէին այլազգեաց՝ անխիղճ խառնակէին: Եւ գողութեան առելիք էին, մինչ զի չափաչար մահուամբ սատակէին:

Եւ պաշօն ինչ ոչ գոյր առ նոսա կամ երկրապագութիւն, բայց ամէն զանունն Աստուծոյ յիշէին յամենայն իրս. զայս թէ զի՞ն Աստուծոյ գոհանային և կամ թէ զայլ ոմն Աստուած կոչէին[2], մեք ոչ գիտեմք, և ոչ ինքեանք եւս: Բայց սովորաբար զայս ասէին, զարքայն իւրեանց՝ ազգակից Աստուծոյ, զերկինս առեալ իւր բաժին, և զերկիրս տուեալ խաղանին[3]. զի ասէին զՉանկղ խանն՝[4] զհայր խաղանին՝ ոչ ծնեալ ի սերմանէ առն, այլ լոյս իմն եկեալ յանեղեւսութիւն և մտեալ

1. Ջամուած նիւթի մի ջուր, պաղոյ կամ կաթին:
2. Արդեօք ճշմարիտ Աստուծոյ անունը յիշէին, թէ իրենք այլ ըստածնին չէին գիտեր:
3. Խաքան կամ Խաղան, զանից զան, թագաւոր թագաւորաց:
4. Սովորաբար ձիննիզ կոչուի ի մերոցս:

ընդ երդս տանն, և ասացեալ մօրն՝ թէ յղասջիր և ծնցես որդի ինքնակալ երկրի. և յայնմանէ աւէին ծնեալ զնա: Զայս պատմեաց մեզ Գրիգոր իչխանն՝ որդի Մարզպանին, եղբայր Ալպան–պեկին, Սարգսի և Ամիրային, յազգէ Մամիկոնէից, զոր իբր իսկ լուեալ էր յառնէ միոջէ մեծէ և ի կարի աւագացն, որում անուն էր Ղոռթռի–նոռիի[1], յաւուր միում յուսուցանել նորա զմանկագոյնս: Եւ յորժամ ոք մեռանէր ի նոցանէ՝ կամ սպանանէին, էր որ բազում աւուրս չըլեցուցանէին ընդ իւրեանս, քանզի մեռեալ զիւի խօսէր անդուստ բազում բարբաջմունս[2]. և էր զոր այրէին, և կէսն թաղէին յերկրի խորափոսիւք, և ընդ նմին դնէին զղէնս իւր և զհանդերձն և զոսկին և զարծաթն, որ ինչ բաժին իւր էր. և թէ ի մեծաց ոք լինէր՝ ի ծառայից և յաղախնեաց եւս դնէին ընդ նմա ի գերեզմանի, զի ապաս կալցի ասէին նմա. այլ և զձի եւս, զի ասէին անդ պատերազմ սաստիկ լինել. զոր յիշատակ կամէին առնելոյ մեռելոց, ճեղքէին զփոր ձիոյն և քարշէին ընդ այն զամենայն միսն առանց ոսկեր, և ապա զփորոտին և զոսկերս այրէին հրով. և կարեալ զմօրթն ձիոյ իբր թէ զամենայն մարմինն ունիցի, սրեալ փայտ մի մեծ՝ հարեալ յորովայնն և հանեալ ընդ բերանն՝ այնպէս վերացուցանէին ի ծառ կամ ի բարձրաւանդակ տեղի ինչ: Այլ և կանայք նոցա կախարգք էին, և զամենայն ինչ հմայէին, և առանց հրամանի կախարդաց և դիւթից՝ ոչ երթային ի ճանապարհ ուրեք, բայց նոքա հրամայէին:

Այլ և խօսք նոցա խժականք անծանօթք ի մէնջ[3].

1. Նոռին և յոգնաբար Նոյան նշանակեն աւագ մարդիկ, իշխանք:
2. Իրենց քուրմերն կամ կախարդքն էին խօսողքն:
3. Մռղալ կամ Մոնկոլ թաթարաց բարբառով են այս անուանքս, որոց չիտակն կամ ծուռը յանձնեմք գիտողաց:

քանզի կոչէին զանունն Աստուծոյ՝ թաւիկրի, և զմարդն՝ էրէ, և զկին՝ եմէ ուիձի. և զանուն հօր՝ էջբա, և զմօրն՝ աբա, և զեղբայրն աղա, և զքոյր՝ աբաձի. և զգլուխ՝ թիրօն. և զաչս՝ նիտռոն. և զականջս՝ ջիքիւն. և զմօրուս՝ սախալ. և զերեսս՝ յիռզնիռուր, և զբերանն՝ առնան. և զատամն՝ սիդռոն–սիռուր. զհացն՝ օրմաք. և զեզն՝ օքար. և զկով՝ ռուեկն. զոչխար՝ ղօյնա, և զգառն՝ ղոչղոպան, և զայծ՝ իմաւ. և զձի՝ մօրի. զէրկ՝ լռտաս. զուղտ՝ թաւնա. և զշուն՝ նօխա. և զգայլ՝ գիւա. և զարջն՝ այդքոռ (այծ). և զագուէս՝ հռնքաւն. և զնապաստակն՝ թօշղա–թռշա. և զհաւ՝ թախեա. և զաղաւնին՝ քօքռչիւն. և զարծիւ՝ բռշրքռէ–ղռշ. և զկուրն՝ ռշռուն. զգինի՝ տարա-սռռ. և զծով՝ նաուշր-տաւնղզ. և զգետ՝ մօքաւն–ռշաւն–սռռ. և զթուր՝ խօղռռ. և զաղեղն՝ նռնռ. և զնետն՝ ուռռ. և զթագաւորն՝ մէկիր. և զպարոն՝ նուռիւն. և զմեծ պարոն՝ էքս–նուռիւն. և զերկիր՝ էղ իրկան. և զերկինք՝ գօգ. զարեգակն՝ նարաւն և զլուսին՝ սարա. զաստեղս՝ ռնշռռշռ–սարղա. զլոյս՝ օտռր և զգիշեր՝ սոյնի. և զգրագիր՝ բիբիքչի. և զատանայ՝ բառահռռ–էիեպ։ Եւ զայլ այսպիսի խժական անուանս, զոր ի բազում ամաց մեզ անծանօթ՝ իսկ այժմ ակամայ ծանուցեալ։

Եւ զլեառոքք երեւելիք, որք յառաջադէմք էին՝ այսոքիկ են. առաջին մեծ՝ որ գլուխ և հրամանատուն էր ամենայն զօրուն՝ Զարմադաւն նուիրն, այլ իբաւարար և դատաւոր. և որ աթոռակիցք էին նորա՝ Իսդար–նուիրն, Զռռթռուն–նուիրն, Ցռռթռուն–նուիրն՝ և Զաղատայն՝ որ զօրագլուխն էր զօրուն, զոր սպանին Մռղկռքն[1]. և այլ բազում գլխաւորք էին և անթիւ զօրք։

1. Մռղկռքդ, արաբերէն՝ մելիքիւտ. կառապաշաք կամ ազանգաւսքն էին։

ՅԺԵ

ԹԱԹԱՐՔ ԸՍՏ ՎԱՐԴԱՆԱՅ ՊԱՏՄԱԶԻ[1]

Շնչեաց բարկութիւն Տեառն՝ ճանճուն[2] արեւելեան հիւսիսայնոյ, օտար և անընտել ազգին որպէս ասեն՝ Թորգոմազանք[3] զարմին Հագարու. և հոգմով անօրէնութեան մերոյ ած զնոսա մինչեւ առ մեզ, ըստ նախատես մարգարէութեան նախնի սուրբ հօրն մերոյ Ներսէսի արտաստւապատում ողբոցն, զոր լալով նախաձայնեաց՝ զկորուստ հոգեւոր երկանցն իւրոց ծննդոցս, զոր ինչ կրեցաքս յազգէն Եւոռազ, զորոց զանուանն կոչէ Սոռր և թերեւս, զի թերեւս Թաթարն սար և թերեւս ասի ըստ լծորդաց փոփոխման, և կամ տոռր և տար, որ է Տաթար. քանզի հարին անյապաղելի և տաբան աներկիւղապէս զորդիսն Սիոնի՝ ի սարկութիւն գերութեան. և ասէ զնոսա Սուրբն Ներսէս ի մեացորդացն Հագարու. և Աստրիք ասեն զնոսա Թորգոմեանս, յայտ է՝ խառնեալ ազգին Գովգայ որ ի Թորգոմայ՝ ընդ զարմն Հագարու, որք ունին զԱկիւթեայ մասն աշխարհի, որ սկսանի յԱԹել գետոյ և ձգի առ Եմաւոն լերամբն, ուր բնակեալ են ազգք քառասուն և երեք, որք խուժական անուամբ

1. Հաւանօրէն հռչակաւոր վարդան պատմիչն է գրոյ բանիս, ի վերջաբանի թարգմանութեան Մխոյեցւոյն Աստուածատուրեանն։

2. Մարգարէից ըստ ձի է, որ ճանճիւն՝ այսինքն մեծ կամ խայթող ճանճ կ'անուանէին զՀրեայս նեղացնող ազգերը։

3. Թուրք և Թորգոմ անուանց նմանութիւնէն ամանք ի Թորգոմայ համարին զԹուրքս, ամանք այլ Աբրահամ նահապետի Ագար կնոջ որդիէն, որ է Իսմայէլ, յորմէ Հագարացիք. բայց չեն սոյդ։

կոչին յիւրեանց լեզուս՝ և գլխաւոր նոցա՝ փռնչիա[1] անուանի. և անուն միոյ ազգին Թոռղարք ասի, զոր կարծեմք այս են Թաթարքս. և որպէս լուաք յամանց ի նոցանէ, եթէ ելին առաջինք նոցա ի Թոռղրատանք աշխարհէ, և մեկնեցան ի կողմ ինչ արեւելեայ, և կային ազքատութեամբ ի գործս աւազակութեան և յափշտակութեան, և պաշտօն ինչ ոչ ունէին, բայց ընդ արեգական զարմանային, և ի պատճառս հմայութեան ունէին պատկերս ինչ Թաղեայ, զոր տակաւին կրեն ընդ ինքեանս. և զկնի ժամանակաց անցելոց՝ ոմանց ի նոցանէ զգայուն արանց՝ նեղեալ ի թշուառական կենաց իւրեանց, կոչեցին վերկնաւորն Աստուած, որ զամենայն ինչ արար՝ յօգնականութիւն անձանց, և ուխտեցին նմա ուխտ և ելին ի վերայ քաղաքի միոյ փոքու, և յափշտակեցին զնա ի տերանցն, և բնակեցան անդ. և յայնմանէ ուժ առեալ տիրացան երկրին, կոչեցին և յերկրէ իւրեանց Թիկունս. և զօրացան ի վերայ Պարսից, և առին զիշխանութիւն նոցա. ուստի և ի մոգուց անտի կախարդութիւնս, և տուեալ հրամանս ի դիւթաց անտի, եթէ տուեալ է նոցա յԱստուծոյ զաշխարհ ամենայն, ելցեն վստահութեամբ և ժառանգեսցեն զնա: Եւ չէ ինչ զարմանալի, զի Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելացւոց հմայիւք ել յԵրուսաղէմ, և մատնեաց Տէր ի ձեռս նորա, և զկիւրոս Պարսից արքայ՝ օծեալ իւր կոչէր Աստուած, և հրաւիրէր ի վերայ Բաբելոնի. նա և ինքեանք խոստովանին զամենայն ինչ Աստուծոյ առնել, և զինքեանս սորին հրամանաւ ասեն եկեալ:

Արդ, հաւատացեալ նոցա հրամանի իւրեանց երեւմանն՝ եղեն նոքա երիք բաժին ընտրութեամբ իւրեանց թագաւորին՝ զոր Ղանն կոչին. առաջին մասն գնաց ի կողմն Հնդկաց, և մասն երկրորդ չոգան առ անապատօք հիւսիսի. և երրորդ բա-

1. Գրուբ և Բ տառիւ, Բռչիա:

ժինն ընդ մէջ Պարսից աշխարհին՝ եկն մինչեւ առ մեզ: Եւ ասեն թէ երեք էին գլխաւորք, և մինն բարեբարոյ քան զերկուսն, զոր Զարմադաւեն կոչէին. որք զկնի բազում աշխարհաց աւերման և կոտորման՝ նստեալ ի խորհուրդ, զոր դուռ ղրայ[1] կոչեն, և ասացեալ Զրմըզանին թէ բաւական է աւերս և կոտորուածս, յայսմ հետէ զհնազանդեալսն մեր մի՛ ջնջեսցուք իսպառ, զի մի՛ բարկասցի Աստուած: Իսկ երկրորդ գլխաւորքն հակառակեալք ընդ նմա՝ ասացին, թէ ոչ է պարտ մեզ ապրեցուցանել և ոչ զոք, որովհետեւ չայրղէ մեզ Աստուած: Եւ արտմութեամբ ննջեցին զդիշերն այն. և յայնմ դիշերի մեռան երկոքինն որ զանազորմութիւն կային, և զարմացան զօրքն և հասուցին զբանն առ զանն. և առաքեաց հաստատեաց զկամս Զարզրմանին, օրինօք խնայել ի հնազանդեալսն, և դնել ի ներքոյ հարկի. և զնա միայն հաստատեաց ի գլխաւորութիւն, զի այն է ասէ կամք Աստուծոյ. վասն որոյ և կան ի նոյն մինչեւ ցայսօր: Իսկ զժամանակ ելանելոյ նոցա ասէ մեծն Ներսէս, եթէ զկնի իմոյ վախճանիս յորժամ անցանէ հարիւր[2] ամ սկսանի այս լինել. և արդ, է ըստ վճռի Սրբոյն՝ յիսուն ամ զօրանալոյն նոցա յաղթութեան. և յորմէ հետէ մտանել են ի յարեւելեան աշխարհն Հայոց՝ քան և ութ ամ է. և զոր ինչ գործեցին ապականութիւն երկրին և տապալումն քաղաքաց և դղեկաց և աւեր եկեղեցեաց, և մահս ազգի ազգիս և գերութիւնս, և թէ որպէս յետ այնորիկ հաչտեցան ընդ մեծաւորսն ի ձեռն իշխանաց աշխարհին, և արարին խնամութիւնս,

1. Մէկ տեղ գալով խորհուրդ ընելն:

2. Եթէ սոյդ ըլլար գուշակութիւնն՝ ոչ 700 այլ 900ի չափ տարի պէտք էր Ս. Ներսեսի մահուանէն (373) մինչեւ Թաթարաց մտնելն ի Հայս. առաջին թիւն (700) աւելի յարմարի Սէլճուկեանց արշաւանաց ի ԺԱ դարս:

և միացեալ եկեղեցեացն և եկեղեցականացն դիւրութիւնս, և ազատ կամաք կալ ի կրօնս իւրեանց. սակայն անաչառապէս պահանջումն հարկաց ճշմարիտ և անխնայապէս, ըստ գլխոց արանց և անասնոց, բայց ի մանկանց եկեղեցւոյ և ամենայնի որք զձեւ աղօթականութեան և զկարգ ունիցին: Զայսոսիկ զամենեսեան գրեալ է լիով ի տեղիս տեղիս. և մեք մի՛ չփոթեսցուք զոմ չարագրոցն կարգի, որ յատուկ խնդրէ հատածս և պարզումն ժամանակաց և հաւատոյ ութիւն ի տեսիլ աչաց գործելոցն: Սակայն գյոլովս տեսաք աչօք մերովք ի նախաձայնեալ ազեաց սուրբ նահատակին Ներսէսի. և մեր իսկ տեսեալ գյոլովութիւն չարեաց նոցա; և կացեալ ի գերութեան զաւուրս ինչ. զեկեղեցիս մեր նսեմացեալ, զեղեռնան սուրբ կործանեալ, զմատեանս աստուածայինս այրեցեալ և առ ոտն կոխեալ, զսպասն սրբութեան և զքրիստոսական նշանն անարժանիցս ձեռամբ չօշափեալ և նախատեալ, և յանարգ պէսս վարեալ. զաշխարհս մեր անպատացեալ, զքաղաքս բնակութիւն լեալ գազանաց: Քանզի լցան լերինք և անապատք մեր անկերծ փախստի՛ւք, և գաշաք՝ դիակոյտք ոսկերօք կոտորելոցն. անդաստանք մեր և հովիտք ոռոգեցան արեամբք, և կերաք միացորդքս գՀայկ անընդեհան այնպիսի արատապիղ: Ազատքն մեր ի ծառայութիւն իջին, և փափուկքն մեր անբմբերելի չարշարանս. բարձունք մեր խանարհեցան, և փառաւորքն մեր յանարգութիւնս ընկճեցան. անուղղքն հովտաւս լերանց՝ խոշակահարք եղեն յարեւմտեան կուսանքն մեր՝ օտարաց եղեն, և երիտասարդքն մեր՝ հովիւք և կուսապանք[1] այլասեռից. կարօտացաք ողբոցն Երեմիայի, և կրեցաք զպատուհասն հնոյն Իսրայէլի. տագնապ մեր որքք եղեն, և մարք նոցա այրիք, որդիքն վերնոյն Սիոնի զուգակշիռք ոսկոյ՝ զքարի հարան իբրեւ զանօթ անպիտան. ցրուեցաւ

1. Գրաւոր պահպանք:

հօտն Տեառն, հալածեցան գառինք արօտի նորա. վհատակուռ եղեն յազգս հեռաւորս գնեալքն արեամբն Քրիստոսի. բաժանեցան ծնունդք ի ծնողաց, մեկնեցան հարազատքն ի միմեանց, հեռացան բարեկամք ի սիրելեացն. գարձաւ ատեն մեր ի սուգ, և ուրախութիւն մեր յարտասուս, և ոչ գոյ թիւ աղաղակի մերում, զի չիք համար չարեաց մերոց:

ՅԺԶ

ԹԱԹԱՐՔ ԸՍՏ ՄԱՂԱՔԻԱՅ ԱԲԵՂԱՑԻ

Խառնեալ ի միմեանս երեք ազգս այս, Հայապետ և կենդանեայ[1] և եաւետ, և ծնաւ ի սոցանէ ծնունդ այլազեմ ազգեցութեամբ չարին[2], և անուանեցաւ Տաթար, որ ասի սուր և բերէ: Իսկ սուրբն Ներսէս[3] ասէ գոա ի միացորդացն Հայապետ, խառնեալ ընդ ազգին Գողգայ՝ որ ի Թորգոմայ, որք ունին գՄիհրեայ մասն երկրի, որ սկսանի Մարդ գեաղ ած Իսրաւոն լերամբն ձգեալ մինչեւ ի ծովն Կապիից. սուր բնակեալ են ազգք քառասուն և երեք[4], որ խժական անուամբ կոչին խառժ և դոժ, այսինքն՝ ազգ առանձնականաց. և գլխաւորին ամենեցուն ասի Բուշխ. և յազգացն այնոցիկ միւսոյն ասի Բուղարք, զոր կարծեմք՝ թէ այս է որ ասին Թաթարք[5], եւ որպէս յամանոյ ի նոցանէ

1. Կին Աբրահամու, յետ մահուան Սառայի:
2. Ըստ ռամկաց աւանդութեան ասէ Մաղաքիա. աբքան տարբեր ի միբակոսէ:
3. Մեծին Ներսիսի Պարթեւի ընծայեալ անվաւեր տեսիլն կամ զրոյցք:
4. Ըստ Խորենացւոյ կոչեալ աշխարհագրութեան:
5. Վարգանայ գրածին հետեւեալ է Մաղաքիա:

լուաք, եկին ի Թուրքաստան աշխարհէն իւրեանց ազգն այն, և մեկնեցան ի կողմ ինչ մասին յա-րեւելեաց, և կային անդ աւազակութեամբ, վայ-րաբնակք և յոյժ աղքատք. և բազում ժամանակս պաշտօն ինչ ոչ ունէին, բայց միայն պատկերս թաղեայ[1], զոր տակաւին կրեն ընդ ինքեանս ի պէտս կախարդութեան: Այլ ընդ արեգակն զար-մանային՝ որպէս ընդ զօրութիւն ինչ աստուա-ծային. և ապա յանկարծակի ուշադրեալ, յոյժ նեղեալք ի թշուառական և աղքատ կենացն, կոչե-ցին յօգնութիւն զԱստուած՝ զարարիչն երկնի և երկրի, և ուխտեցին նմա յուխտ մեծ՝ կալ ի հրա-մանս նորա: Որոց երեւեալ հրեշտակ հրամանաւն Աստուծոյ, ի կերպարանս ոսկեփետուր արծուոյ, և կոչեալ ի ձայն և ի բարբառ նոցին լեզուի՝ զլեռ-ւորն նոցա, որոյ անունն ասիւր Զանկրզ, և նա երթեալ կացեալ հանդէպ արծուակերպ հրեշտակին հեռագոյնս և ի բացեայ իրրեւ նետընկէց մի, և ապա արծիւն ըստ նոցա լեզուի ասաց զամենայն հրամայեալսն յԱստուծոյ:

Եւ այս էր օրէնքն Աստուծոյ, որ եդեալ է ի նո-սա, զոր անուանեալ են իւրեանքն՝ Եասահ[2]: Ա-դա-ջին այս, որ սիրեն զմիմեանս. երկրորդ, մի չնալ. մի գողանալ. մի սուտ վկայել. մի զոք մատնել. պատուել զծերս և զաղքատս. և թէ գտանի ի նոսա յայսպիսի մեղանաց՝ սպանցին գործողն մեղացն: Եւ մինչ զայս ուսոյց հրեշտակն, ապա կոչեաց զա-նուն զլեռւորին Ղայաս, որ և ասացաւ նմա Զան-կրզ զայան. և ասաց հրեշտակն՝ տիրել ի վերայ բա-զում աշխարհաց և գաւառաց, և բազմանալ նոցա անթիւ և անհամար բազմութեամբ. որ եղեւն իսկ. և կատարեցաւ ասացեալն ի Տեառնէ, որպէս ի ձեռն մարգարէին սպասնայր Աստուած ասելով. թէ, «Բաժակ է ի ձեռին իմում Նաբուզոդոնոսոր,

1. Թուրք. քէչէ. Փռ. Feutre.
2. Օրէնք, մանաւանդ արգելք:

և ում կամիմ արբուցանեմ զնա»: Այսպէս և այ-լազգեմ և գազանաբարոյ ազգս այս, ոչ միայն բա-ժակ, այլ և մրուր դառնութեան հասեալ ի վերայ մեր, վասն բազում և ազգի ազգի մեղաց, զոր հա-նապազ բարկացուցանեմք զարարիչն Աստուած ի գործս մեր. վասն որոյ զարթոյց զնոսա Տէր բար-կութեամբ՝ առ ի խրատել զմեզ, վասն ոչ պահե-լոյ (մեր) զպատուիրանս նորա:

Իսկ յորժամ իմացան այլազգեմ և գազանաբա-րոյ ազգն այն, թէ կամք է Աստուծոյ տիրել մեզ ի վերայ երկրի, ապա այնուհետեւ զօրաժողով լեալ գնացին ի վերայ Պարսկաց, և առին ի նոցանէ փոքր քաղաք մի. և Պարսիկքն զօրացեալ առին դարձեալ զիւրեանցն և զնոցայն: Եւ ապա դար-ձեալ ձայն ձգեցին ի յազգն իւրեանց՝ ուր և կային բնակեալ ազգն Նետողաց[1], և այլ եւս գարձեալ յարձակեցան ի վերայ Պարսից և յաղթեցին, և առին զքաղաքն և զամենայն ինչս նոցա: Եւ ի վե-րայ այսր ամենայնի դարձեալ հրաման առին ի զա-նէն իւրեանց՝ որ կոչեցաւ Զանկըզ զան, և յար-ձակեցան ի վերայ աշխարհին Աղուանից և Վրաց. և զայս լուեալ թագաւորն Վրաց՝ զհամբաւ գալոյ Տաթարին, եկ ընդդէմ նոցա վաթսուն հազար հե-ծելով, ի գաշան մեծ՝ որ կոչի կոտաման[2], որ կայ առաջի Տէրունական բերդին. և յորժամ խմբեցաւ պատերազմն, ազգեցութեամբն սատանայի՝ որ հա-նապազ հակառակ է նա ճշմարտութեանն, տէրն Մահասագոմոյ՝ Համիդոյա անուն, յաղագս քինու-ինչ՝ Ջլատեաց զձին Աթաբակ Իւանէի[3]. զի յայնմ ժամանակի մեռեալ էր թագաւորն Վրաց Լաշեն[4],

1. Ըստ վերոյիշեալ Ս. Ներսեսի ղբուղիոյ՝ Նետողք կոչուեցան Թախտարք, իբրեւ զլեռւոր զենքն ազեղ և նետս ըմպաւուն:
2. Հայ–Աղուանից կամ Արցախ նահանգի մէջ:
3. Որ էր սպարապետ Վրաց, յետ մահուան իր եղ-բօր Սարգսի:
4. Սովորաբար Լաշա կոչուի:

և մնացեալ էր որդի մի նորա Գաւիթ անուն, և դուստր մի Որդզուբան[1] անուն. և անկեալ էր Գաւիթն ի ձեռս Հռոմոց[2] սուլտանին, և կայր ի բանտի, և քոյր նորա Որդզուբան ունէր զթագաւորութիւնն, վերակացութեամբ Իւանէի՝ որ Աթաբակ անուանեցաւ. իսկ յորժամ եհաս համբաւ գալոյ Տաթարին՝ ըստ վերագոյն ասացելոցդ, յայնժամ առեալ ի տանէ գհեծել թագաւորութեանն Վրաց, և եկն ի Գագ[3], առ մեծ և իմաստուն իշխանն վարհամ որդի Պռւ Զաքարէին, և առեալ գնա զօրօք իւրովք՝ գնաց ընդդէմ Տաթարին. և առեալ կորովի և մեծ իշխանն վարհամ զալոյ թեւն և Իւանէ զձախոյ. և յորժամ յարձակեցան ի միմեանս, այս ոհիրս գործեցաւ՝ որ գրեցաւ, ի ձեռն անիծելոյն Հաւիդոյ: Իսկ յորժամ եառնս ազգն Նետոցց գայնպիսի երկպառակութիւն ի նոսա՝ յայնժամ զօրացեալ յարձակեցան ի վերայ Վրաց հեծելոյն, և յանխնայ կոտորեցին զնոսա: Իսկ մեծ իշխանն վարհամ՝ տէրն Գագայ առեալ զալոյ թեւն, և մինչ յերեկոյ գնաց կոտորելով զՏաթարն յանխնայ յարձակմամբ, մինչեւ առ հասարակ լցաւ գաշտն Սագամայ[4] կոտորեալ Տաթարովն. և ինքն վարհամ իշխանն Գագայ՝ իբրեւ լուաւ զկոտորումն զօրաց թագաւորութեանն, յայնժամ մեծապէս արամեալ և թողեալ զգործ պատերազմին՝ գարձաւ յամուրս բերդին իւրոյ, որ կոչի Քարհերձ: Եւ այս եղեւ ի թվականութեան Հայոց վեց հարիւր վաթսուն և երեք[5]: Եւ երից ամաց

1. Ոմանք Որզոզդան գրեն:
2. Հռոմք իմանալու է զՓոքր Ասիա:
3. Դաշտ և բերդ հիւսիսակողման Արցախոյ՝ յիշեալն ի շարականի Ս. Սարգսի: Տես, երես 391. ծանօթ 1:
4. Սագամ կամ Ջակամ գետ մի է, օժանդակ Կուր մեծ գետոյ, և նոյն անուամբ գաւառ:
5. Թուականն պէտք էր ըլլալ աւելի ուշ, նա և քան զ'673 (1224):

անցելոց գարձեալ եկն Տաթարն, և էառ զԳանձակ Շահատատն, և յանխնայ կոտորեաց և գեբեաց, և դարձաւ յերկիրն իւր բազում աւարաւ և գանձիւք:

Իսկ եթէ զինչ նմանութիւն ունէր առաջի Տաթարն[1], ասացուք և զայն եւս. զի ոչ էին իբրեւ զմարդ առաջինքն՝ որ եկին ի վերին երկիրն[2], այլ էին ահագինք տեսողաց և անպատմելիք. զի գլուխն մեծ էր իբրեւ զգոմիշու, աչքերն նեղ իբրեւ զձագս[3], քիթն կարճ իբրեւ զկատուի, դունչն մազուց[4] իբրեւ զշան, մէջքն բարակ մինչ մրջման, ոտքերն կարճ վերդ գնոցի. մօրուս բնաւ իսկի չունէին, տօղաք[5] ունէին վերդ առիւծի, ձայնն ճիչող քան զարծուի. ուր չի պատմիր՝ անդ գանուիր[6]: Կանայքն իւրեանց ունէին գգականն առղուղ[7] ի վերայ նալի ծածկեալ չարագուրով դիպակի. երեսքն զայն սեռիքի, սպանմամբ դեղով ծեփէին[8]. իբր նման ծնանէին, և գայլապէս կերակրէին. մահն ի նոսա իսկի չերեւիր, վասն այնոր երիք հարիւր տարի ապրէին[9]: Այս ցեղ էին առաջինքն՝ որ եկին յաշխարհն վերին. և հաց ամենեւին չուտէին:

1. Առաջին եկող Թաթարքն, ինչպէս վերինք առաջին անգամ տեսողաց երեւէին:
2. Հայաստանի հիւսիս–արեւելեան կողմն:
3. Շատ կամ թռչնոյ ձագ:
4. Ի տեսագիրս կայ և մառղ գրուած. բայց թուի մառղ, զի բուսոց բարակ մասերն՝ մազիկք կոչուած գտուի.
5. Տկլիկ. թուրք. տաւիծի բաշ կամ մազ նշանակէ:
6. Առակաւոր խօսք մի է, իբր անդման:
7. Սուր երկայն գլխանոց, վրան այլ վարագուրի պէս ձգուած դիպակէ (ալենի լաթէ) ծածկոց կամ քող:
8. Երեսքն... ծեփէին. այս երկու բառից միջոց գրուածն անտասդ կամ սխալ գրուած է. գայլ թերեւս չայն ըլլայ: Պեռիքի ի՞նչ է:
9. Կիրակոս այլ երկարակեաց ըսաւ զանոնք, բայց ոչ այդչափ նահապետական կեանք:

ՅԺԼ

ԹԱԹԱՐՔ. ԸՍՏ ՍՏԵՓ. ՕՐՊԵԼԵԱՆ (ԿԶ)

Յետ մեռանիլն Ամի (ՈՀԴ թուին, այսինքն ի ՈՉԵ, 1236) զարթոյց Տէր յարեւելից զազգն Նեստողաց՝ որ Մողոլք կոչէին, և ըստ գեղկացն՝ Թաթարք, որ ի Չին և ի Մաչին աշխարհէ, անգր քան զԹաթաստան[1]. անաստուածք և անօրէնք, բայց բնութեամբ օրինացն զարդարեալք. առեցողք աղաւեղի զիմաստութեանց և ամենայն վնասակար գործոց. արդարամիտք առ միմեանս, միամիտք և հնազանդք առաքինորդի իւրեանց, իրաւարարք և իրաւադատք. իսկ բարուք՝ աղքատք և ընչաքաղցք, նենգիչք և կեղեքիչք մարդկան. պատկերով յոյժ գեղեցիկք[2] և լերկք ըստ կանացի դիմաց. և ծանօթք քրիստոսեան հաւատոյ, և յոյժ սիրողք քրիստոնէից. յաղեղունս՝ կորովիք[3], և յամենայն պատերազմունս յոյժ հնարաւորք: Բայց յետոյ Թողին զբնական բարս իւրեանց, և եկին ի հայրենի սահմանէն զոր ունէին, մտին ընդ մահմետի օրինօքն, և ուսան զամենայն պղծութիւնս և անկարգութիւնս, և անառակ կեանս վարէին:

Ահա սոքա բաժանեալ յերիս առաջս՝ գնաց միոնն ընդ արեւելից հիւսիսով յաշխարհն Խազրաց և Սուտաղաց[4], Ըռուսաց և Զերքեզաց և Բուղղարաց. և սիրեցին նոցա մինչ ի սահմանս Ալանաւի և Ան-

1. Թաթայի կոչուէր այն ժամանակ գլխաւոր քաղաք մի Չինաց, հիմակուան Փէքինի մօտ:
2. Շատ տարբեր նկարագրեն ուրիշ պատմիչք անոնց կերպարանքը. տեսանք ինչ ըսին Կիրակոս և Մաղաքիա:
3. Ճարպ ազեղնաւորք, սաստիկ նետ արձակող:
4. Ղրիմաս Սուտաղ լեռը և քաղաքը յիշեցընէ անունս:

կրաց՝ որք են Փռանգք[1]. որոց գլխաւորին անունն Բաթու ղան: Իսկ միւս կողմն գնաց առ Հնդկաստանօք, որք սիրեցին մեծ մասին Հնդկաց և հնազանդեցին զՈղուրս և զՈղուզս[2] և զԹորազմիկս և զԴելհիկս, և առին զԱլաւաղեխ և զԲէչպալեխ[3], և զամենայն կողմանն զայն. որոց գլխաւոր՝ Հոքաթար ղան[4]: Իսկ միւս կողմն եկին ընդ մէջ աշխարհիս, անցեալ ընդ մեծ գետն Ջահան և ընդ Լուբն՝ զոր ինքեանք Ամու մաւրան կոչեն. և պատուհասեալ փոթորկեալ հասին յաշխարհս մեր, և առ հասարակ տիրեալ հնազանդեցին զամենայն տիեզերս. կոխեցին կոթծանեցին զամենայն Թագաւորութիւնս: Առին զԹորազան և կոթծանեցին զմայրաքաղաքն նոցա զԲալխ[5] և Հրէ, զՄարվ և զՆշապուհ, զՏուսն և զԴամղանն[6]. առին զԹուռժաստան, զԼաւռաստան, զՊարսկաստան, զԿրդստան, զԱրաբստան. առին զԴիարպաքր՝[7] որ է Ասորեստան, զՇուշտար[8] և զԲրման, զԲաղդադ և զԲասր[9] մինչ ի Խրմզ քաղաք[10]: Առին և զԱտրպատական, զԱրան

1. Յայտնի է Գերմանացւոց Ալեման կոչուին, Մահառաց այլ Ռուզար կամ Հունգարացի, որոց ծագումն չատ օտար է ի Փռանգաց:
2. Սովորաբար նոյն (Մաղուլաց կամ) Թաթարաց ցեղէն համարուին այդ երկուքն:
3. Հեթում Ա. թագաւորին Հայոց ճանապարհագրութեան մէջ յիշէ Կիրակոս այս քաղաքներս. տես յետոյ ՁԺ. դլուխ 320:
4. Կամ Ուխադա, որդի և յաջորդ Ձինկիզ ղանի՝ ազգապետին Մաղուլաց:
5. Բնավայրն Պահլաւկաց:
6. Պարսից անուանի քաղաքներ, երկրորդն Նիշապուհ անուամբ չատ ծանօթ է մեր հին պատմչաց:
7. Տիարպէքիր, Ամիդ քաղաքի կողմերն:
8. Կամ Շուշտր:
9. Ծանօթ Պասրա մեծ քաղաքն:
10. Որմոս, Հիւրմիւզ, Պարսից ծոցոյն վրայ բանուկ նաւահանգիստ վաճառաշահ:

և զՀայաստան, զՎիրս և զՀոռոմս, մինչեւ ի յԱԼեկիւրիա և ի Գաւիգրա[1] և ի Զմիւռնիա Եփեսացոց, և զԿիլիկիա, մինչ ի ծովն Ովկիանոս և ի ծովն Պոնտոսի՝ ի Տրապիզոն քաղաք։ Աւրն և զտունն Շամայ[2], զՈռհա և զԽոտռան՝ մինչ ի Հաւս և ի Համայ[3]։

Բայց զառաջինն եկն յաշխարհս Զաբդևանի[4] և Զաղատայի[5], Ապլանն և Ապատուրն և Դատադանն. և առին զաշխարհս ի ՈՀԵ (1236) թուականին։ Եւ յետոյ եկն Հուլաւու դանն՝ թոռն մեծի Չանկզ դանին. և զմնացեալսն յառաջնոցն էառ, զԲաղդադ քաղաք, յորում և եսպան զխալիփային ի ՉԽ (1258) թուին, զամ մի պաշարեալ, և զնաց մինչ յԵրուսաղէմ. էառ զՀալպ որ է Բերիա և զԴիմիշխ՝ որ է Դամասկոս, և զՊալպակ որ է Աբեգ[6]. էառ և զմեծն Անտիոք, որք կամաւ հնազանդեցան. էառ և զԵրուսաղէմ ի Մարացւոյն[7]. և այնպէս բազում և անհուն քաղաքութիւնս եցոյց։ Եւ զի յոյժ սիրող էր քրիստոնէից՝ վասն որոյ ամենայն ազգք հաւատացելոց կամաւ հնազանդէին նմա և յոյժ ձեռնտու և օգնական լինէին։ Եւ արդ այսքան առ այս։

1. Փոքր Ասիոյ ծանօթ քաղաք, որ հիմայ Զանկրը կոչուի։
2. Այսինքն Դամասկոսի սահմաններն։
3. Ամենն այլ ծանօթ քաղաքք Ասորւոց երկրի։
4. Կերպ կերպ ծռմռկելով այս անունս գրուի Զաբմաղան, Զուբմաղան Զաղբման, և այլն։
5. Զաղադա անդրանիկ որդին էր Ճինկիզ դանի, և իր անուամբ կոչուեցաւ իր տիրած ցեղն և երկիրն։
6. Արեգ նշանակէ Արեւու քաղաք, յունարէն Հելիոպոլիս. տեղւոյն արեւապաշտին համար այսպէս կոչուէր։
7. Եգիպտոսի սուլտանէն։

ՑԺԸ

ԹԱԹԱՐՔ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՑԻՇԱՏԱԿԱԳՐԱՑ

Ա

Ցամս հայկազեան թուարերութեան տումարին՝ յորում էր թիւ համարոյ թուականին ՈՀԵ (1236), որ եղեւ աստուածատաստ բարկութիւնն յաշխարհն արեւելից, և յարեաւ ազգ մի գազանաբարոյ և անողորմ, և եհղեղ բազում արիւն։ Եւ կերպարանն այսպէս. լայնաթիկունք և հաստաբազուկ, և գլուխն մեծ և հեր գլխոյն ուղղորդ և ձարր[1], և աչքն նեղ, և ճակատն լայն, և քիթն տափակ, և մուրուքն քոտակ[2]։ Բարք մարդոյ, և քան զգազան անողորմ էին ի վերայ մարդոյ. և բնական անուն նորա Խաթա–Թաթար. թէ կերակուր գտանէր՝ ուտէր, և թէ չգտանէր՝ ոչ քննէր և ոչ խնդրէր կերակուր. և այնչափ անողորմ էր՝ որ թէ հրեղէն լերամբ սատնամ՝ ոչ կարեմ պատմել զանցս չարչարանացն, որ եառ ըմպել զբաժակն բարկութեան՝ Աւրարատեան գաւառին և Անոյ[3] եւս առաւել. զոր իմ է տեսեալ զանհնարին ողբն և զաղէտ տարակուսանացն. զի զրազում քաղաքս և զբերդերս էառ և հիմն ի վեր տապալեաց. զայր և զկին գերեաց և զտղայս նոցա առաջի նոցա զբարի հարոյր[4]. զմանս ի գիրկս մօրն սրախողխող սպանանէին, և զերդայրն հղբօր սպանանել տային. զմանս քարկոծէին, զո-

1. Կարծր և ցցուած մազ։
2. Թուրքերէն քէօսէ, կարճ. յորմէ և Հայերէն Գոշ, որպէս կոչուի Մխիթար։
3. Անի քաղաքին առաւելն յիշէ։
4. Փոխանակ ըսելու հարկանէր, զարնէր։

մանն ի հուր ընկեցեալ այրէին. զաղափար[1] գանինքն յոտս երիւարացն ընկեցեալ ի գրկաց մարցն՝ կոխան արարին։

Բ.

Յամի վեցհարիւրերորդի ութներորդի երկրորդի Հայոց տոհմիս տումարի՝ գրեցաւ անուշահամ և աստուածախօս կենաց կտակս, որ է Աւետարանութիւն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ձեռամբ Յակոբայ սուտանուն կրաւնաւորի և անարհեստ գրչի, ի խնդրոյ սրբասէր քահանայիս կարապետի. յաշխարհիս Կիլիկեցւոց, ի նահանգիս Տարսոնի, առ ստորոտով լերինն Տորոսի, յանմատոյց դղեակս Լամբրոնի, ի փոքրիկ ագարակիս որ Քոռնաձի[2] կոչի. վայրաբնակ լինելով ինձ գրչիս ըստ նախնեացն ձայնի, թէ Օտարք և պանդուխտք եմք[3] յերկրի. ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ, և ի թագաւորութեան քրիստոսապսակ և բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ։ Արդ, որք օգտիք ի սմանէ կամ գաղափար առնոյք, յիշեսջիք ի Քրիստոս զտացող զրոցս զկարապետս աստուածաբնակ քահանայ. զի ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ի վայելս և ի ժառանգութիւն սրբասնունդ պատանւոյն Աստուայ եղբօրորդւոյ իւրոյ։ Զի և սոքա օտար գոլով յայսմ գաւառէ, զի էին ի Միջագե-

1. Թուի աղ նշանակել, որ ախորժելի է գառանց, և անուշիկ սիրուն[ի]կ ըսել կ'ուզէ, կամ իբրեւ ազեօք՝ իրար զիրար գրկած. գէթ զգաբար ձեռագրին վերջի թուղթն ընկած է։

2. Այս ժամանակ քանի մի անգամ յիշուած է այս տեղս, սակայն ճգնաւորաց վանք մի եղած է։

3. Գրողին և յիշածներուն պանդխտութեան պատճառն՝ Թաթարաց արշաւանքն եղած է ի Մեծ կամ ի Վերին Հայս։

տաց աշխարհէն. և վասն աստուածատատ ցասմանն՝ որ բարկութեամբ չարժեալ զմարդակերպ գազանսն որ տապալեցին զամենայն աշխարհն Հայոց, և զրազում ազգս մաշեցին ի սուր սուսերի. և սա թողեալ զհայրենի ժառանգութիւն իւր վասն բարբարոսացն երկիւղի, եկեալ պանդխտանայ յաշխարհս Կիլիկեցւոց՝ իւրովք հարազատովքն։

Ընդ նմին ազաչեմ յիշել աղօթիւք ի Տէր զյոգնամեզ և զեղկելի զգրիչս և զծնողսն իմ, և զաստուածատէր զրարի զտորատեղատն զպարոն Քուշչապն[1], զի հոգւոյ չափ օժանդակ եղեւ ինձ ի պանդխտութեանս իմում, զի պահեսցէ զնա Տէր Աստուած խաղաղութեամբ ի կեանս իւր, և զկնի ելիցն իւր՝ ընդ սրոց զինուորացն զնա դասեսցէ։

Գ.

Ի թուիս ՈՁԷ (1238) գրեցաւ գիրքս Դատաստանաց[2] առ ափն մեծ գետոյն որ կոչի Եփրատէս, առ ստորոտ աստուածապահ գղեկիս Հռոմկլայ կոչեցեալ, ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ. ի չար և ի դառն ժամանակի՝ յորում նշանք երեւելիք եղեն. քանզի մեռաւ երիս սուլտանս, Հռոմոցն և Շամբին և Մսրայն[3]։ Եւ արդ գրեցաւ սա ձեռամբ Բարդի մեղապարտի և փցուն գրչի, հրամանաւ աստուածապատիւ և առաքելաշնորհ Տէր Մարիոսի արհեպիսկոպոսի, ի վայելումն անձին իւրոյ, և զկնի ելից իւրոց յաշխարհէս՝ անպինդ յիշատակ իւր և ծնողաց իւրոց և եղբարց և ազգականաց իւրոց։

1. Նորալսար անուն, բայց աւելի գործածական այս առն այդ յոյն զօրավարի կամ մարտիկ Ստրատեղատ կոչումն։

2. Մխիթար Գոշի, տես Յօդուած 297։

3. Ղանիոյ, Դամասկոսի և Եգիպտոսի։

Եւ արդ, էր սա ի գաւառէն Մոկաց Մարդ[1], և ըստ խոստովելոյ մեր ի պատուիրանացն Տեառն՝ մատնեցաւ աչխարհն Հայոց ի ձեռն խուժադուժ ազգացն որ կոչի Գադար[2]։ Քանզի յաւարի էառ զաչխարհն ամենայն առ հասարակ, բաղում քաղաքս և առանս. և բազում եպիսկոպոսաց և վարդապետաց և քահանայից և սարկաւագունք և իշխանայք և ազատք և չինականք, և բազում այլ եւս կանայք և մանկտիք՝ զոր ոչ կարէ ոք ընդ գրով արկանել, զոր ըմբռնեցին ընդ ձեռամբ իւրեանց։ Եւ արդ, եպիսկոպոսս այս զոր յառաջ ասացաք զաՀնունն՝ մատնեալ եղեւ ի ձեռս անօրինաց, նա և եղբարքն իւր և ազգատոհմ իւր. և ոչ ուստեք կայր օգնական գերելոցն, բայց միայն այն որ ազատեացն զմեզ արեամբ իւրով, զի ամենեքեան ի մեծ վտանգի կային առ հասարակ։ Եւ արդ, զեպիսկոպոսս զայս իշխան ումն ի գերելոցն, որ անունն Քոռդի[3] ասի, յիշատակ նորա օրհնութեամբ, ազատեալ յանօրինացն, և սա ցաւագին սրտիւ և բեկեալ անձամբ դիմեալ յայս աթոռս Հայրապետական, ուստի և արբանեալ կաթողիկոսս Հայոց՝ զոր յառաջ յիշատակեցաք զանունն, սիրով ընկալաւ զսա ըստ արժանոյն իւրոյ։

Եւ արդ, ցանկացող այսմ տոհմիս՝ զոր է հաստատած յաչխարհս կայեցոյ[4] ի մեհենատանին Գևտիկ[5], ի սուրբ վարդապետաց սահմանած, որոյ ա-

1. Սովորաբար Մոկրնարի, կոչի Այրարատայ ձախակաց գաւառի մէջ։

2. Յիշեցինք որ այս ազգին նոր երեւցած տաճն՝ անունը պէտպէս լսելի և գրելի մերոնք, մինչեւ հաստատեցաւ թ տառիւ գրել Թաթար։

3. Անուանի Հայ իշխանազանց ցեղէ մի, որոց ծագումն հաւանօրէն կըմնայ ի Քրդաց ըլլալ, որպէս Ջաքարեանցն ի Պարսից (Յոփ. 212)։

4. Արցախ նահանգի մէջ, Հայոց և Աղուանից միջեւ։

5. Երբեմն Մխիթար Գոշի և իր աչակերտ վանական վարդապետաց ընակարան։

նունն Մխիթար յորջորջի։ Եւ արդ, ես մեղապարտ ծառայս ձեր մոխրաթաւալ երեսօք և արտասուագոչ սրտիւ ազաչեմ զամենեսեան որք կարդայք կամ եղանակեք, զսուրբ եպիսկոպոսն Տէր Մարկոս և զծնողսն իւր և հարազատ եղբարսն իւր, և զիս զանարժանս և զծնողսն իմ յիշեսջիք։

ՑԺԹ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՌՆԵՑԻ

(ԿԻՐԱԿՈՍ, ԾԲ)

Այր ումն առաքինի և զարմանալի վարիւք, գործող պատուիրանաց Աստուծոյ և լծարարձ ի մանկութենէ, արժանացեալ քահանայական պատուոյ, կուսակրօն, Յովհաննէս անուն, ի գիւղաքաղաքէն Գառնոյ՝ ուր զարմանալի սարաւոյրն է Տրդատայ[1], ի սուրբ ուխտէն Այրիվանաց։ Սա ի մանկտիգն տիոցն արհամարհաց զամենայն ինչս կենցաղոյս, լքեալ զազգս և զտուն, յանապատ տեղիս բնակեր, սիրէր առանձին լինել և անդրադարձս խոսել ընդ Աստուծոյ. տուեալ զինքն ազդի ազդի ճգնութեան, պահոց և աղօթից, գեռնատարած անկողնոց և անհանգիստ աչխատութեամբ չրջելով տեղւոյէ ի տեղի և լուսաւորելով զպատահեալսն։ Տուաւ նմա և չնորհք բժչկութեանց, զի ձեռն դնելով բժչկէր զերազում ախտաժէտս։ Խնդրէին ի նմանէ և գիր պահպան անձանց իւրեանց, և նա անչափ տայր ամենայն

1. Տեսին սահմաններ Թագուհի Տրդատայ կոչէին, իսկ Խորենացի Հովանից կոչէ, և վասն Խոսրովիվանայ՝ քեռն Համար չիներ է, կ'ըսէ, Տրդատ։ Ինչուան հիմայ մնան աւերակաց մեծ մասն, յատնական հարստութեամբ չինուած։ Տես երես 87։

խնդրողաց. և զայս ոչ միայն հաւատացեալքն առնէին այլ և բազումք յանհաւատից. և նա գրելով զանուն Սրբոյ Երրորդութեան և խորհրդական քանս աղօթից՝ տայր նոցա. և նոքա առեալ հաւատով՝ կապէին յանձինս իւրեանց[1]: Վասն սորա բազումք բազում ինչ պատմէին, բայց առաւել հարապատն մեր և աքանչելին վարդան վարդապետն, որոյ բանքն արժանի էին ընդ միմեանս. զի մեք մարմնով զնա ոչ տեսաք վասն հեռաւորութեանն:...

Ձեռ այսորիկ չրջեալ նա ընդ բազում գաւառս և ընդ քաղաքս՝ եհաս ի քաղաքն Կողոնիա[2]. և բազումք ի Թուրքացն և ի Տաճկաց գային առ նա և մկրտէին, վասն աքանչելի վարուց նորա և բժշկութեանցն զոր առնէր: Ապա նախանձեցան ընդ նա Պարսիկքն, և իշխան քաղաքին Կողոնիայ ըմբռնեաց զնա և զերէց մի. և կատեալ փայտ չար՝ եդեալ զնոսա ի միջի՝ վառեաց հրով. և լայր երէցն

1. Անչուշտ միամտութեամբ ըրած և գրած է Գառնեցին և իրմէ ընդունողքն. յայտնի է որ այս սովորութիւնս ինչուան հիմայ կայ պարզամտաց մէջ, ինչպէս և չատ այսպիսի գրուածք՝ Գրապաձևակք կամ Պահպանակք կոչուած, ընդունելի և անընդունելի խօսքերով, սուրբ գրոց հետ սուտ և անտիսվ, որով ամենքն ալ անընդունելիք սղջմտաց: Ասոնց պէս գաւեզի են և աքանչելիքն զոր պատմէ Կիրակոս՝ լսած ի Վարդանայ, և սա զնոյնս գրած է և առ Հեթում թագաւոր: Որչափ որ ասոնց գովութիւնն և նոյն իսկ Գառնեցւոյ հոգեւոր գրուածքն և Աղօթքն՝ վկայեն իր բարեպաշտութեանն, դեռ չատ տարակուսելի են հրաշքն և անընդունելի տեսիլքն: Գառնեցւոյ պիտառնեցին գործ մեզ համար՝ է Սաղմոսաց առոյգ օրինակ և ընթերցուած գանելն և քննել, իրմէ երկու հարիւր տարի առաջ Սարկաւագ վարդապետի ըրածը յայտնեալով և նորոգելով, որպէս պատմէ ինքնին հեռուհեռ գրուածով:

2. Տես 2 Յանօթութիւն 37 երեսի:

ար ընդ նմա. և քաջալերէր զնա և ասէր. եթէ, Մի երկնչիր, կարող է ապրեցուցանել զմեզ Աստուած ի հրոյս, որպէս զերիս մանկունսն: Եւ մինչդեռ բորբոքէր բոցն՝ մանուկ իշխանին անկաւ ընդ պարիսպն բերդին, և յարեաւ անվնաս. և ի հարցանելն՝ թէ, Որպէս կաս կենդանի. պատասխանի ետ, թէ Աստն այն զոր ընկեցիք ի հուրն՝ նա եբարձ զիս ձեռօք իւրովք, և ոչ ետ ինձ անկանել յերկիր: Եւ առժամայն առաքեաց իշխանն, և հրամայեաց հանել զնոսա ի հրոյն. և թոյլ ետ գնալ ուր և կամեցի: Եւ նորա չրջեալ ընդ բազում գաւառս՝ գնաց ի Հռոմկլայն, առ մեծ կաթողիկոսն Հայոց Տէր Կոստանդին. և նա ուրախութեամբ ընկալաւ զնա մեծաւ պատուով, և ոչ ետ թոյլ երթալ այլ ուրեք[1], և անդ եկաց մինչեւ փոխեցաւ ի Քրիստոս, և թաղեցաւ ի նմին:...

Վկայութիւն Յովհաննիսու Գառնեցւոյ վասն Սաղմոսաց առուգագրութեան.

ԶՍաղմոս Դաւթի՝ մանաւանդ թէ զերգս Հոգւոյն Սրբոյ, այլեւայլ աւելի և պակաս նուագեն մանկունք եկեղեցւոյ, ոչ ուսեալ զնշմարիտն և ոչ իմացեալ զնշգրիտն. և այս եղեւ յանհոգութենէ ոմանց և ի սղալագիր գրչաց. իրահամարձակք ոմանք մտացոյզ իմացմամբ՝ տարագրեցին զուղիղն և զուղղորդն. նա և բազում անգամ վիճեն ոմանք՝ ի նուագելն զՍաղմոս, և այլ ոմանք ծայրաքաղ առնելով՝ բարբառնէն անգեղջ սրտիւ և անխմաստ բայիւք. և ոչ յիշեն զասացեալն ի Դաւթայ, եթէ, Սաղմոս ասացից և ի միտ առից. և զհրամայեալսն ի Պաւղոսէ, Սաղմոս ասացից հոգւով և մտօք: Այնուհետեւ զայդ գրօք երգեն զՍաղմոսն, և զաւանդութիւն սուրբ Հարցն և զանեղծութիւն Սաղմո-

1. Շատ խոհեմութեամբ ըրեր է Կաթողիկոսն:

սացն, և Հայք ի բերան առեալ սակն վայրապար[1], քահանայք և ռամիկք և մանկունք և կոգեք, և հաւատաւոր կանայք: Եւ երանի թէ ամենայն ոք հրճուեալ նուագէր զհատատան և զսոյգն:

Այլ ես նուաստ Յովանէս Գառնեցի՝ ծառայակից ձեր ի Քրիստոս Յիսուս, իրրեւ զայս տեսանէի՝ յոյժ վշտանայի տարակուսանօք. ապա ճանապարհ արարեալ գնացի ի մայրաքաղաք մեհենատանն ի Հաղբատ, և գտի ի թարգմանչացն գրած Սաղմոս. զոր առեալ սուրբ վարդապետն Սարկաւագ կոչեցեալ, այն որ զՅուդասն երեւեցոյց զհին Հային[2], և նա սերմանեաց զայս՝ զուղիղ և զուղ-

1. Ուրիշ ազգեր՝ գրուածին վրայ նայելով կ'ըսեն կամ կ'երգեն Սաղմոսները, իսկ Հայք բերնուց առ վրած ըլլալով՝ առանց գրքի վրայ նայելու. անով չատ հեղ սպալին, այլայլելով նախնեաց գրածը, և երբեմն օրինակողք այլ լսածնուն պէս գրեն սղալը. այս է վայրապար ըսելն:

2. Շատ Սաղմոսաց յիշատակարանաց մէջ պատմի այս. մէկն գրէ այսպէս. «Սա է գազափարն գերուս» նակ սուրբ վարդապետին և մեծ ասիեասէսին սուրբ» ուխտին Հաղբատայ՝ Սարկաւագին: Այս Սարկա» ւագս այր սուրբ և տեսող և զսարքեղս և լի» Հոգւով... սա վշտացեալ էր ի բազում ժամանակս» վան այլեւայլմանց Սաղմոսիս, և սչ գիտէր զկա» իրացն, թէ ուստ ուստեք ճշդութեացն: Եւ ապա» մտեալ ի յարկեղս գրեանցն որ ի Հաղբատ, զամե» նայն սրանեաց, և ապա հուսկ քան զամենայն» գրեանսն ի ներքոյ՝ եգիտ թարգմանչացիր Սաղմո» սարան ջինջ և նուագ գրով. և առեալ զայն խնդու» թեամբ Համբուրեաց և եդ ի վերայ աչաց իւրոց. և» ապա արկեալ ձեռն ի գործ՝ բազայայանեաց անսի» գծածկեալ զանձն և վկոյեալ աղբիւրն. և գրուեաց» ընդ ամենայն սահմանս Հայաստանեայց զայս օրի» նակ: Եւ այդ նշմար սեւակի որ ծրի յառաջիկայդ» յայնմ օրինակէն է: Սկրեալ եղբայր, ընթեռնուս» դու զայդ, քալ իմա և հասատատ ուսիր, և յիշեա» զմեզ ազօթիւք, և Աստուած զքեզ. ամէն»: — Տես և Յօդուած 280:

զորդ Սաղմոս, որ ամանց այլեւայլ երեւի սա: Բայց դու սիրելի, ընկալ զայս գազափար՝ իրրեւ բազում երդմամբ ստուգեալ. այլ ես զայն բանք որ կատկածաւոր թուին քեզ՝ բացէ ի բաց եմ գրել, դու մի կարծեր թէ պակաս է բանն, այլ չանօք չանապինչ որ գրած է՝ զայն ուսանիս, և զայն գրեացես հաստատութեամբ. դի թէ ի վերայ հասանես՝ խիստ օգտիս և լուսաւորիս Հոգւովն Սրբով. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ՅԻ

ԵՐԹԱԼՆ ՀԵԹՄՈՑ Ա ԹԱԳԱՒՈՐԻ ԱՌ ՄԱՆԳՈՒ ՂԱՆ

(ԿԻՐԱԿՈՍ, ԻԶ)·

Մեծահաւատ և քրիստոսասէր արքայն Հայոց Հեթում՝ որ ի կողմանս Կիլիկեցւոց նստէր ի քաղաքն Սիս, նա յառաջագոյն առաքեաց զեղբայր իւր զՄամբատ, որ զօրավարն էր նորին՝ առ զանն Գիհռկ, ընծայիւք և պատարագօք, և գարձաւ ի նմանէ ընծայիւ և հրովարտակաւ ընդունելութեան[1]: Իսկ յորժամ թագաւորեաց Մանգու զանն՝ առաքեաց մեծ թագաւորահայրն և զօրապետն Պաթու՝ որ ի կողմանս հիւսիսոյ գեղ առեալ կայր անթիւ բազմութեամբ որ ընդ նմա, առ սին մեծ և անհուն գեռոյն՝ զոր Լքիլ կոչեն, որ մտանէ ի ծովն

1. Սմբատ՝ Գունդստապէլ երեց եղբայրն Հեթմոյ՝ անշուշտ իր խորագէտ հօր Կոստանդին Պայլի թելադրութեամբ գնացեր է ի Թաթարս, յամի 1246–7. իր առաջին և ուղեւորութեան վրայօք փառաւկերէն թուղթ մի գրած է (որ և հրատարակուած) առ քեռայր իւր եՆրիկ թագաւոր Կիպրոսի:

Կասբից, առ թագաւորն Հեթում, գալ տեսանել զնա[1] և զՄանգու զանն: Եւ նա երկուցեալ ի նմանէ գայ գաղտագողի այլակերպեալ դինքն՝ վասն ահին Թուրքաց՝ որք սահմանակիցք նորա էին, զոր Հոռոմոց[2] սուլդան անուանեն, որում անուն էր Ազատին, զի ոխ մխերեալ ունէին ընդ նմա՝ վասն ձեռն տալոյ նորա ի Թաթարն[3]: Եւ փութով անցեալ ընդ երկիր նորա՝ յաւուրս երկոտասան՝ եկն ի Ղարս քաղաք[4], և տեսեալ զԲալդու–նուրինն՝ որ զօրապետ էր թաթար զօրուն որ յարեւելս, և առ այլ մեծամեծան, և պատուեալ ի նոցունց՝ զտեղի առ յոտն Աբագածու, հանդէպ լերին Աղթայի, ի գիւղն որ կոչի Վարդենիս, ի տանն իշխանին՝ զոր Քռոդդ անուանէին, Հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ, և որդիք իւր Վաչէ և Հասան, և կին նորա Խորիշահ յազգէ Մամիկոնէից, դուստր Մարզպանայ, քոյր Ապահա–պկիհի և Գրիգորոյ[5]. մինչեւ բերան նմա ինքն ի տանէ իւրմէ՝ ի պէտս ընծայից և պատարագաց, զոր առաքեաց հայր նորա իշխանաց իշխանին կոստանդիւի, յայնժամ ծեր գոլով, և որդիք նորա[6] Լեւոն և Թորոս՝ զոր եթող փոխա-

1. Զինքն, Պաթու:

2. Իկոնիոնի (Ղոնիա) սուլտան, Աղվեսաին կամ Իզզէտտին Քեյքաուս:

3. Հեթում զաշնակիցս կամ միաբանս էր Թաթարաց հետ, իր եղբօր անանց քով երթալուն առեն, և Վանին հրամանաւ ատիպաւեր էր սուլտանն՝ դարձընել Հայոց՝ անոնցմէ գրաւած երկիրը:

4. Ծանօթ մեծ քաղաք (Կարս) ի վանանդ գաւառի Մեծ Հայոց, և հիմայ ամբոր քաղաք Ռուսաց ի սահմանի Թուրքաց:

5. Քռոդդ և իր ցեղն չատ ծանօթ են ԺԳ–Ի դարուց մէջ, թէ այս կողմերս և թէ Աբցախոյ, չատ շէնքեր շինած և արձանագրած են: Բայց երկու անձինք եղած են անուանի իշխանք այդ կոչմամբ, և ոչ հեռիք ժամանակաւ, զորս երբեմն դժուար է որոշել իրարմէ:

6. Հեթմոյ թագաւորգրիքն:

նորդ իւր. զի փոխեալ էր առ Քրիստոս բարեպաշտ թագուհին նորա Ջապել անուն[1], որ թարգմանի Եղիսաբէթ, այս է Աստուծոյ եօթնեկ. զի արդարեւ ըստ անուանն և հանգիստ էր նա կամացն Աստուծոյ, բարեգործ, ողորմած և աղքատասէր, դուստր մեծ թագաւորին Լեւոնի՝ առաջին պսակաւորին: Եւ իրրեւ գիտաց մեծ կաթողիկոսն Կոստանդին՝ եթէ գնաց նա խաղաղութեամբ և դադարեալ է ի Մեծն Հայք, առաքեաց զմեծ վարդապետն Յակովբ[2] զայր բանաւոր և իմաստուն, զոր առաքեալ էին յառաջագոյն վասն սիրոյ և միաբանութեան՝ առ թագաւորն Յունաց Յովհաննէս՝ որ ունէր զկողմանս Ասիոյ[3], և մեծացեալ էր յաւուրսն... Եւ զեպիսկոպոսն Տէր Ստեփաննոս. եկն և Միխթար վարդապետն, որ լինէր ի Սկեւռայն[4], գնացեալ անդ ի կողմանց արեւելից, և բարեղ քահանայ որ գեղեան էր Բաթուին. ընդ նմա իսկ եկեալ էր և Թորոս քահանայ կուսակրօն, և կապետ որ գրան երէց էր արքային, հեզ բարուք և գիտնական. այլ և իշխանք յոլովք[5]: Զորս ընդ իւր առեալ արքային՝ չոգաւ ընդ աշխարհս Աղուանից, և ընդ գաւառն Դարբանդայ՝ որ է Պահակն Ճորայ, առ Բաթուն, և առ Սարբահան՝ որդի (Նոր բա), որ էր քրիստոնեայ հաւատով. և մեծ արեալ

1. Դուստր մեծին Լեւոնի, զոր նոր վախճանած՝ Հեթմոյ համբարձութենէն քիչ առաջ: Անունն համառօտութիւն է Եկիսաբեթի, որոյ հրէարէն նշանակութիւնը բացատրէ Կիրակոս:

2. Թուի թէ Հռոմոց անուանեալ Սահդի վարդապետն էր:

3. Եփեսոսի կողմերն:

4. Կիլիկիոյ ամենէն անուանի վանքն, յետ կամ ղայդ Դրազարկի: Միխթար վարդապետն այլ ժամանակին գիտնականաց մէկն էր:

5. Կ'արժէր առանց վրայ աւելի տեղեկութիւն առնելու, զի գուշակուի թէ արժանաւոր անձինք էին:

ի նոցունց բազում պատուասիրութեամբ, ապա առաքեցին առ դանն Մանգու՝ ընդ երկայնաձիգ ճանապարհն, յայնկայս ծովուն Կասբից: Եւ եղեալք ի նմանէ ի վեց մարերի ամսոյ և յերեքտասան մայիսի, անցեալ ընդ Ալդեխ գետն՝ եկին յՈրն[1], որ է մէջ ճանապարհին ընդ Բաթուն և ընդ Մանգու դանն. և անցեալ ընդ Երրիձ գետ՝ մտին յաշխարհ Նայիմանաիւն[2]. և եկեալ ի Խարախարտայն[3], և անցեալ ի Թաթարիստան՝ ի չորս հոգի ամսոյ և յերեքտասան սեպտեմբերի, ի տանի նաւակատեաց Թաչի, տեսին զՄանգու դանն երեւելի փառօք նստեալ, և մատուցեալ զընծայս՝ մեծարեցաւ անունն ի նմանէ, ըստ արժանւոյն: Եւ կացեալ յօրդուն[4] աւուրս յիսուն, և տուեալ նմա հրովարտակ նշանաւոր, զի մի ոք իշխեսցէ նեղել զնոսա, և զաշխարհս նոցա. և ետ դիր ազատութեան եկեղեցեաց՝ ընդ ամենայն տեղիս: Եւ ել ի նմանէ յաւուրն յիսներորդի՝ ի քսան և երեք սահմի և ի մի նոյեմբերի. և յերեսուն օրն հասին ի Վռուանդոզրն, և եկեալ ի Պերպալեխն և ի Պէշպալեխն[5], և յաւազուտ երկիրն, յորում կային մարդիկ վայրենիք, մերկք, մազ ունելով միայն ի գլուխն. և սոքունք կանանց՝ մեծ յոյժ և երկայն, և էին անբանք. յորում կան և ձիք վայրենիք, դեղին և սեւ

1. Կիրակոս չատ անուններ յիշէ այս Հեթմայ երկար ճամբորդութեան մէջ, որոց ոմանք ծանօթ ոմանք անծանօթ են, ինչպէս և այս Որ ըսածն, և երկար քննութեան կարօտ են, որոյ համար դուրս թողուցինք զանունք:

2. Թաթարաց մեծ ցեղի մի անուամբ կոչուած երկիր:

3. Ընդարձակ երկիր մի, Գարա-Խիդայի կոչուած ի Թաթարաց:

4. Յարքունի բանակին:

5. Առաջինն անծանօթ, իսկ երկրորդն՝ Պիշպալիք, մեծ քաղաք էր Ույղուր Թաթարաց:

գունով, և ջորիք՝ սպիտակ և սեաւ գունով, և մեծ քան զձի և քան զեշ. և ուղտք վայրենիք՝ որք ունէին երկուս կուզեկունս[1]: Եւ անտի եկին յՈղեխան, և ապա մտին ի Թուրքաստան, ի Ճանպալեխի[2]... և եկեալ ի Տաղղան[3], և յԱխ[4] մեծ քաղաքն, և խզոհիլն[5], և անտի յԱխր և ի Զաւիգեան, և ի Մխանա[6], յերկուտասան օրն ի Թավրէժ[7]: Եւ յետ քան և վեց աւուր անցեալ ընդ գետն Երասխ, և եկեալ ի Սիսական[8] առ Բաչու-նոյնն, որ գլխաւոր էր Թաթար զօրուն. և նա յուղարկեաց զնա առ Խօձա-նուրհն, զոր թողեալ էր փոխանորդ իւր գլխաւոր զօրուն. և ինքն առեալ զգլխաւորս զօրուն՝ գնաց ընդ առաջ Հօլաւուրհի՝ եղբօր Մանգու դանին, որ գայր յարեւելս:

Իսկ թագաւորն բարեպաշտ Հեթում եկեալ ի տուն իշխանին Քրդին՝ ի գիւղն Վարդենիս, ուր թողեալ էր զաղխ իւր և զկարասի, և մնայր գալըստեան Բարսղի քահանային, զոր յուղարկեալ էր առ Բաթուն վերատին, զի ցուցցէ նմա զդիրան և զհրամանն Մանգու դանին, զի և նա ըստ նմին օրինակի գրեսցէ հրամանս: Ապա եկին առ նա վարդապետք իւր, Յակոբ՝ զոր եթող աստէն ի պէտս գործոյ եկեղեցւոյ, և Մխիթար՝ զոր դարձոյց ի Բաթուէն՝

1. Ուղտաւ կուզն, կռնակի ուռածն. Հատարակ ուղտքն՝ մէկ կուզ ունի, Թաթարաստանին երկու՝ ըստ հնդկենակիս:

2. Այս այլ մեծ քաղաք էր, և տեղն յայտնի է:

3. Հիմայ այլ չէն քաղաք է Պարսից Մազանդարան գաւառին հարաւակողմը:

4. Ըստ նախնեաց՝ Հռագաւ, մայր հիմնական Պահլաւան մեծ քաղաքին:

5. Հիմայ այլ կոչուի Գազուհին, ծանօթ քաղաք:

6. Երեքն այլ ծանօթ և չէն հիմայ, և ոչ շատ հեռի մէկմէկէ և ի Գազպինէ:

7. Մայրաքաղաք Ադրպատականի, որ սովորաբար Թաւրէզ գրուի:

8. Մեծ Հայոց Սիւնեաց աշխարհին գաւառ մի:

մինչեւ երթեալ էր առ Մանգու դան. այլ և եպիս-
կոպոսք և քահանայք և իշխանք քրիստոնէից՝ որք
գային առ նա, սիրով ընդունէր զամենեսին, զի
այր քաղցր էր և իմաստուն և գիտնաւոր գրովք, և
տայր պարգեւս և ուրախ արձակէր. տայր պար-
գեւս և հանդերձս քահանայականս ի զարդ եկե-
ղեցեաց, զի յոյժ սիրող էր պատարագի և եկե-
ղեցւոյ. և ընդունէր զամենայն ազգաց քրիստո-
նեայս, և աղաչէր սիրով կալ առ միմեանս, իբրեւ
զեղբարս և զանդամս Քրիստոսի. որպէս պատուի-
րեաց Տէր, թէ, «Ձայս ծանիցեն թէ իմ աշա-
կերտք էք՝ եթէ սիրէք զմիմեանս»:...

Բազում և այլ ինչ պատմէր թագաւորն իմաս-
տասէր՝ ի խաժական ազգացն, զոր թողաք մեք, զի
մի յաւելորդ համարեսցի[1]: Յութ ամիսն ապա եհաս
յերկիրս Հայոց, յետ եւանելոյ ի Մանկու դանէն. և
էր թուին Հայոց եօթն հարիւր և չորս (1255–6)[2]:

1. Մենք այլ թագաւորիս քանի մի բան՝ որ անհա-
ւատալիք էին. և թուի թէ այդ կողմանց տգէղ և տգ-
եղի մարդիկ՝ կէս անբան և անբանից խառնակից
երեւցեր են:

2. Կիլիկիոյ պատմիչն իր սեամ համառօտ գրէ այս
Հեթմոյ ճամբորդութիւնն, այսպէս. «Փախեաց զինքն
»ի կերպս սպասաւորի, և եղ յերկրէ իւրմէ Կիլիկիոյ՝
»առաւ արամբք. և գէմ եղեալ գնայր յարեւելս՝ առ
»ազգն Նեստուղաց, առ խանն որ կոչէր Մանգաւ: Եւ
»գազուամ ահիւ անցեալ գնայր ի մէջ Իսմայելացւոց
»ցեղիցն՝ որ բնակեալ էին յերկիրն Գամրոց, և առաջ-
»նորդէր նմա աբեղայ մի՝ Բարսեղ անուն, որ և քա-
»զում անգամ ճանապարհ արարեալ էր ընդ նոյն
»պողոսայ: Եւ հասին մինչ ի սահմանս Թեոդոռայո-
»ղեայ, ի տեղի ուրեմն որ կոչի Վարդենիւ. և իջե-
»ւանեցան ի տուն որուն իշխանի Քուրդ անուն. և
»ութային ընծայիցն՝ զոր պատրաստեալ էին խանին, զի
»հաճեսցին յերկրէն Կիլիկիոյ՝ տանել զինն իւրեանց:
»Եւ թագաւորահայրն Կոստանդին պատրաստեալ զկա-
»րասին՝ յղեաց առ թագաւորն Հեթում՝ հաւատարիմ

ՅԻԱ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(1253–1256)

Էր նա յաշխարհէն Աղուանից ի Տաուշ[1] գաւա-
ռէն, ազգաւ Հայ. և ծնողքն նորա նուիրեցին զնա
Աստուծոյ, և սրբութեամբ անաւ ի վանս Գեղակայ[2],
առ երէց եղբօրն իւրում որում անուն էր Պօղոս,
կուսան և սուրբ սքեղայ: Եւ էր մանուկն Վանա-
կան յոյժ ուսումնասէր և երկիւղած Աստուծոյ և
ամօթխած ի մարդկանէ: Եւ ձեռնադրեցին զնա
քահանայ ի տիս մանկութեան քառամեայ. և
եմուտ յաշակերտութիւն մեծափառ վարդապետին
Գաշին Մխիթարայ. և ուսաւ ի նմանէ զամենայն
մեկնութիւնս հին և նոր կտակարանաց աստուա-
ծային գրոց. և եղեալ գիտնական՝ արժանացաւ
մեծագոյն աստիճանի վարդապետութեան: Գնաց
յԱղուանս, չինեաց փառաւոր վանք մի սրբոյ առ-
ժիմք, բազմախորան գմբեթաւոր, և հրաշազարդ
եկեղեցիս, և անուանեաց զվանքն այն Խորանա-

»արամբք: Եւ յայնժամ թագաւորն Հեթում առեալ
»զամենայն ցանկալի տեսողաց ընծայսն՝ գնաց առ
»խանն Մանգաւ և մատոյց նմա. և խանն ուրախու-
»թիւամբ ընկալաւ զթագաւորն Հեթում, և վինչ և
»խնդրեաց ի նմանէ՝ չնարհեաց նմա. և եղ ի սպասա-
»ւորսդ իւրոց ընդ թագաւորին՝ գալ յաշխարհ իւր Կի-
»լիկիա, զՄարկաւանս, որ էր միականի և զՊայլաս»:

1. Կուր գետոյ օժանդակ փոքր գետոյ մի անուամբ
կոչուած է այս գաւառս. գետակն կոչուի և Տոռս,
Տաուս:

2. Մխիթար Գոշի չինած անուանի վանքն. տես
Յօդուած 297:

չատ[1]։ Եւ համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ յամենայն աշխարհս. և գային առ նա յամենայն կողմանց և ուսանէին ի նմանէ զվարս պարկեշտութեան և սրբութեան և մանաւանդ զդիտութիւն աստուածային գրոց. և լուսաւորեալք գիտութեամբ գնային յիւրաքանչիւր տեղիս և լինէին լոյսք աշխարհաց[2]։

Յորում ժամանակի եկեալ Զաքարատին սուլտան[3] Խորասանայ՝ և աւերեաց զքաղաքս տեղիս Հայոց և Աղուանից. յորմէ փախուցեալ վարդապետն Վանական յանապատ տեղի մի, յորում էր մեծ քար մի, և փորեաց ի նմա եկեղեցիս և ժամատունս, խուցս և տնտեսատունս, և բնակեցաւ անդէն աշակերտօքն՝ չատ տարիք, մինչեւ ելին զօրք Թաթարին ի ՈՁԲ (1235) թուականին, որոց առաջնորդէր Զաքարատան Նուիին[4] հրամանաւ խորտա[5] խանին, և աւերեաց զքաղաքս թուրքաց, զՀոռոց, զՊարսից, զԲրդաց, զՀայոց և զՎրաց և զԱղուանից. և գերեաց բազում մարդիկ յամենայն ազգաց։ Գերեցաւ և վարդապետն Վանական աշակերտօքն իւրովք, և ողորմութեամբն Աստուծոյ ազատեալ ի նոցանէ՝ եկն դարձեալ յառաջին ի վանս իւր ի Խորանաշատ. և անդ բացեալ զդրոց ուսուցանէր բազում աշակերտաց զբանս վարդապետութեան իւրոյ, որովք լուսաւորէր և մխիթարէր զբազումս։ Չի էր այր զուարթամիտ անձան-

1. Յայտ է թէ չատ խօսրանները կամ մատուռները ունենալուն համար՝ այդպէս անուաներ է։

2. Յետ Մխիթարայ Գոշի գերազոյն գիտնական և հռչակեալ վարդապետն է այն ժամանակին. իր չատ աշակերտաց մէջ ծանօթագոյնք են երկու պատմիչքն Վարդան և Կիրակոս, մանաւանդ առաջինն այլեւայլ գրուածովք։

3. Որ է ձէլալէտտին, ըստ արեւելեայց։

4. Նուիին կամ Նոյին, յայնակի՝ Նոյեան, իշխան նշանակէ թաթարաց լեզուաւ։

5. Որ և Օխդայի կամ Ոգեդա գրուի ըստ այլոց։

ձիր և համբերող, որպէս և էր առաքեալն Բառնաբաս։ Եւ էր անձամբն չափահասակ, մեծերես և փոքրաքիթ, լայնամօրուս և փառահեղ, մեծաչուք և ահարկու, քաղցրատես և չնորհալից. միտքն ծննդական և առատաբան, ժուժկալ և անձանձիր ուսուցանող. ուղիղ ատենակաց և խրատիչ անզգամաց. յանդիմանիչ հերձուածողաց և գարձուցիչ մեղաւորաց, սփոփիչ տխրութեանց և յորդորիչ ապաչխարութեանց. յուսադրող անյուսից և մխիթարիչ վշտացելոց. պահակաց[1] և աղօթաբար, սուրբ և սրբասէր, պարկեշտ և արի հոգւով և մարմնով. յայժ արդիւնաբար և վաստակաւոր եկեղեցւոյ։ Որով գրագրեալ որպիսի ի փառս ածեալ ընծայեաց Աստուծոյ։

Եւ հասեալ ի բարւոք ծերութիւն՝ ալեւորեալ և լի աւուրբք հանգեաւ ի Քրիստոս, հօթանասան ամաց, ի մարտի ամսոյ ուխտեւտան և յարեգի տան։

Իսկագիր Յիշատակարան մի վանական վարդապետի.

Ես Վանականս գրեցի իմով ձեռամբս ի Ցփխախ քաղաքի՝ ի գրան Ս. Քառասնիցս. զի գերեալ էր սուրբ Աչեստարանս ի Տավրոյ՝ ի Մոռղանի թագաւորէն. և յետ երից ամաց աստ բերեալ անվնաս՝ վառուեցին ի ՈՁԵ (1236) թուին. զոր փառաւոր ուսուցեալ Մարգիս՝ հասարակ պատուական քահանայիւք և աստուածասէր ժողովրդական տանուտէրօք՝ բազում ծախօք և աշխատութեամբ գնեալ եւտուն ի մեզ։ Որոց տայէ Քրիստոս փոխադարձ զսուրբ արքայութիւն և զդրախտն, արձակել ի կապանաց մեղաց, և հանել ի խաւարէ ի լոյս անմահութեան, աստէն պահելով ի չինութեան և ի խաղաղութեան, բարեխօսութեամբ Սուրբ Աչեստարանիս և ամենայն Սրբոց իւրոց. ամէն։

1. Շատ կամ երկար պահք պահող։

ՅԻԲ

ԳԵՐՈՒԹԻՒՆ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԱՑՆ Ի ԹԱԹԱՐԱՑ

(ԿԻՐԱԿՈՍ· ԻԲ·)

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ մեծ վարդապետն որ կոչէր Վանական իւրովք աշխատութեամբք փոքեալ էր քարայրս ի կատարս բարձրագոյն քարի միոյ, որ կայ հանդէպ գեղջն որ Լորուտն[1] կոչի, ի հարաւոյ կողմանէ Ցաւոյ բերդի. և չինեալ էր յայրի անդ եկեղեցի մի փոքրիկ, և անդ դագաղեր գաղտուբեամբ. իբրեւ աւերեցաւ առաջին վանք նորա, որ կայ հանդէպ բերդին Երգեվանից՝ ի Ջալալատին սուլտանին հինից: Եւ անդ կայր զետեղեալ, ժողովեալ բազում զբեանս. զի յոյժ ուսումնասէր էր այրն այն, մանաւանդ թէ աստուածասէր. և բազումք գային առ նա և ուսանէին բան վարդապետական ի նմանէ: Եւ իբրեւ չատացան մարդիկն՝ հարկ եղեւ նմա իջանել յայրէ անտի, և առ աստրոյս քարին չինեաց եկեղեցի և անեակս, և անդ գադարեալ էր: Իբրեւ եղեւ այս կործանումն ի Թաթարէն, և եկն Մոլար–նուիւին[2] յայն սահմանս, բնակիչք գեղջն այնորիկ անդր դիմեցին, և լցաւ արամբք և կանամբք և մանկտով այրն. և եկեալ Թաթարն պաշարեաց զնա յայրի անդ. և նոքա ոչ ամբարս ունէին և ոչ ջուր. և էր եղանակն ամառնային և տօթ յոյժ, և սկսան տապիլ յայրի անդ իբր ի բանտի, և մանկունքն պա-

1. Եթէ բառին նշանակութիւնը քննենք, չատ լաւ թուչուն (Caille, պըլտըրձին) ունող տեղ կարծուի:

2. Մեծ կաղնակալ Չարմաղանին ձեռաց տակ եղած զօրավարներէն մէկն:

պակէին ի ծարաւոյ, և մերձ էին ի մեռանել. և թշնամիքն ձայնէին արտաքուստ, թէ ընդէ՞ր մեռանիք, ելէք առ մեզ, և տացուք ձեզ վերակացուս, և թողցուք զձեզ ի տեղւոջ ձերում. և կըրկնէին երիցս երդմամբ: Ապա որք էին յայրի անդ՝ անկանէին առ ոտս վարդապետին, ազաչէին և ասէին. Գնենա զարիւն մեր ամենեցուն, և էլ առ նոսա և արա սէր ընդ նոսա: Իսկ նա ասէ ցնոսա. Ես զանձն իմ ոչ խնայեցից վասն ձեր, թէ գոյ հնար փրկութեան, զի և Քրիստոս զանձն իւր ի մահ ետ վասն մեր և փրկեաց զմեզ ի բանտութենէ սատանայի. ապա պարտիմք և մեք ի վերայ եղբարց մերոց զնոյն սէր ցուցանել: Ապա առեալ վարդապետն երկուս քահանայս ընդ իւր, անուն միոյն Մարկոս, և երկրորդին Յոսեփեանս, որք ապա յետ այնորիկ սուին զպատիւ վարդապետական ի նմանէ, զի անդ էաք մեք[1] ի վարժս կրթութեան գրոց սրբոց ընդ ուսուցան ընդ այնոսիկ, և էլ առ նոսա: Եւ գլխաւորն կայր հանդէպ այրին՝ ի վերայ բլրակի միոջ, և հովանի ունէին ի վերայ գլխոյ նորա վասն տօթոյն, զի ի տանի վարդավառին արգելին զմեզ: Իբրեւ մօտ եղեն ի զօրագլուխն՝ որք տանէին զնոսա երիցս անգամ հրամայեցին երկիր պագանել ի վերայ ծնկաց իւրեանց՝ իբրեւ ուղտուց՝ ի ժամ գնելոյն[2], զի այնպէս էր սովորութիւն նոցա: Իբրեւ եկին առաջի նորա՝ հրամայեաց յարուցեալս կայս երկրպագել խաղանիին՝ արքային իւրեանց. և ապա մեզադիր եղեւ, թէ, Իմ լսեալ է զքէն՝ թէ այր իմաստուն և երեւելի ես, և կերպարանք քո յայտ իսկ առնեն զքէն, զի այր բարի ես տեսլեամբ, հանգարտ օրինակաւ, փառաւոր մօրուօք, ծաղկեալ ալեօք. գու իբրեւ լաւ գհմտաբար գալոյ մերոյ՝ ի սահմանս մեր, ընդէ՞ր ոչ եկիր ընդ առաջ մեր սիրով և խաղաղութեամբ, եւ ես

1. Ինքն պատմիչն Կիրակոս այլ չորն է եղեր:

2. Ուղտերուն ճկիլն կամ ծունկերնին ծալելն:

հրամայեալ էի՝ զամենայն որ ինչ քո է անվնաս պահել ի մեծէ մինչեւ ցփոքր: Պատասխանի եւս վարդապետն և ասէ. Մեք զրաբեմուԹիւնն ձեր ոչ գիտէաք, այլ երկիւղիւ և դողմամբ պաշարեալ էաք յահէն ձերմէ, և լեզուիդ անտեղեակ դոլով, և ի ձէնջ ոչ ոք եկն առ մեզ կոչել զմեզ առ ձեզ. վասն այսր էր դանդաղուԹիւն մեր. և արդ իրրեւ կոչեցիք՝ եկաք առաջի ձեր. մեք ոչ գինաւորք եմք և ոչ ընչից տեարք, այլ արք պանդուխտք և օտարականք. ժողովեալք յայլ և այլ աշխարհաց՝ վասն ուսման ինչ մերոյ պաշտամանն. արդ ահաւասիկ առաջի ձեր եմք, զոր ինչ կամ է ձեր արարէք ընդ մեզ, Թէ կենաք և Թէ մահու:

Ցայնժամ ասէ ցնա իշխանն. Մի երկնչիր. և հրամայեաց նոցա նստել առաջի իւր, և բազում ինչ հարցեալ ի նա վասն բերդիցն և իշխանին Վահրաւայ, Թէ ո՞ւր իցէ, զի կարծէր զնա Թէ մարմնական ինչ իշխան էր ի վերայ երկրի: Իրրեւ ասաց զոր ինչ գիտէրն, և զայն եւս՝ Թէ ոչ է մարմնական ինչ գործակալ, ապա հրամայեաց նմա զի իջուսցէ զմարգիկն յամրոցէ անտի՝ յաներկիւղս, և խոստացաւ իւրաքանչիւր յիւրում տեղոջ կալ՝ իւրովք վերակացուաք, և յանուն նորա չինել ըզգիւղան և զագարակն: Ապա ձայնեցին առ մեզ երիցուներն որք էին ղհետ վարդապետին, Թէ, Իջէք վաղվաղակի, և զոր ինչ ձեր է բերէք ընդ ձեզ: Եւ մեր իջեալ գողուԹեամբ առ նոսա որպէս գառիւն ի մէջ գայլոց՝ երկուցեալք և զարհուրեալք, ակն ունելով մահու. իւրաքանչիւր ի մեր իւրում առեալով զհատասս խոստովանուԹեան՝ որ ի Սուրբ ԵրրորդուԹիւն. զի յառաջ քան զիջանելն մեր յայրէ անտի՝ հաղորդեալ էաք պատուական մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ: Եւ տարան զմեզ ի փոքրագոյն աղբիւր մի որ կայր ի մէջ վանիցն՝ և եառն մեզ ջուր, զի յոյժ ծարաւի էաք զաւուրս երիս. և ապա տարան զմեզ ի տեղի ինչ արգելանի, և զաչխարհականան ի դաւիԹս եկեղեցւոյն. և ինքեանք չուրջ զմեզ պահէին զմեզ զգիշերն, զի ընդ երեկս էր օրն: Եւ ի վաղիւ անդր հանին զմեզ ի գլուխ վանիցն ի բարձրաւանդակ տեղի ինչ, և խուզեալ առին որ ինչ կայր առ ուսմեք՝ որ պիտոյ էր նոցա. և որ ինչ յայրի անդ էր, և որ ինչ ապաւք էր եկեղեցւոյն, կամ չուրջառ կամ այլ անօթ ինչ կամ խաչ արծաԹի, և երկուս աւետարանս ընդելուզեալ արծաԹով, զայն եառն վարդապետին, զոր յետոյ առին ի մէնջ. և ընտրեալ ի մէնջ զարս՝ որ կարող էին չրջել ընդ նոսա, և զայլսն հրաման եառն տանել ի վանսն և ի գիւղ անդր, և վերակացուս թողին յինքեանց, զի մի այլ խուճապն զնոսա: Հրամայեաց և վարդապետին ի վանս կալ. և եղբօրորդի մի էր նորա քահանայ Պօղոս անուն, հրամայեաց գալ ընդ մեզ զկնի նորա: Իսկ վարդապետն առաքն խնայեաց յեղբօրորդին իւր՝ զի մանուկ տիւք էր, ինքն եկն զկնի նորա, յուսացեալ Թէ հնար իցէ և զմեզ զերծուցանել: Եւ չրջեցուցանէր զմեզ զկնի իւր աւուրս բազումս նեղուԹեամբ և տառապանաք, հետի և բոկոտն. և որ կարպետ էին պահել զմեզ՝ արք պարսիկք էին, ծարաւիք արեան քրիստոնէից. նաքա առաւել նեղէին զմեզ ամենայն տառապանաք ուղեգնացուԹեամբ, այնքան տիպով առնէին զմեզ, որպէս երիվարս յոտպատակի. և Թէ գէպ լինէր ումեք վասն տկարուԹեան մարմնոյ կամ խեղուԹեան տակաւ մի կասել ի գնացից, անխնայ զարդէին զկատաւիտնս, և ծեծէին զմարմինն գանալից, մինչ զի զիտաչս անգամ ոչ կարէին հանել յոտից՝ Թէ ելանէր ընդ նա. և ոչ չուր ըմպել ոք կարէր յատիպտպացն: Իրրեւ իջանէին՝ առնէին ընուին զմեզ ի տաւնս նոցա, և ինքեանք չուրջ նստեալ պահէին զմեզ. և ոչ տային ուժաք ելանել արտաքս ի պէտս կարեաց մարմնոյ, այլ ի նոյն տաւնն անցուցանէին զպէտսն, և ի նմին ագանէին զյոլով աւուրս. վասն որոյ ոչ կարեմ ընդ գրով արկանել զամենայն նեղուԹիւնս՝ որ անցին ընդ

մեզ. և զվարդապետն ոչ թողին առ մեզ, այլ ուրոյն հեռի ի մէնջ՝ յայլս ոմանս յանձնեցին զգուշութեամբ պահել։ Ապա առին և զիս[1] յընկերաց իմոց զկնի իւրեանց ի պէտս գպրութեան՝ գրել թուղթ և ընթեռնուլ. զոմն զկնի իւրեանց չրջեցուցանէին, և յերեկոյն տանէին զմեզ առ վարդապետն՝ երաչխաւորութեամբ, և դարձեալ գային առնուին հեռի կամ մերկ՝ ի վերայ կրմուղ գրասուս. և այսպէս առնէին զաւուրս բազումս։ Իսկ իբրեւ անցին աւուրքն ամառնային և եկն եղանակ աշնանային, և հեռացեալ էին նոքա ի ծանօթ յաչխարհէ մերմէ յօտարութիւն, ապա զանձինս ի մահ եդին ամենեքեան, և սկսան առ առաջս տակաւ փախչել ի գիշերի՝ ուր և կարացեն զերծանել. և այսպէս եղեւ չնորհքն Քրիստոսի ամենեցուն զերծանել՝ բայց յերկուց երիցանց, որք ի սուղկեան կամեցան գաղտ երթալ և ոչ կարացին. զոր ըմբռնեալ ածին ի բանակն և սպանին առաջի մեր՝ յերկիւղ և ի զարմացումն. զի այսպէս առնէին ամենայն փախուցելոց։

Ապա յաւուր միում ասէ ցիս վարդապետն աքանչելի. Կիրակոս, և ասեմ. Չինչ հրամայես, վարդապետ. ասէ ցիս. Որդեակ, գրեալ է թէ յորժամ ի նեղութիւնս անկանիցիք՝ համբերեցէք. արդ պարտ է մեզ զքան գրոյն ցուցանել յանձինս. զի ոչ լաւ եմք մեք քան զառաջին սուրբսն՝ Դանիէլ և զՍնանեանսն, զԵզեկիէլ և զԵրեմիա, որք ի գերութեանն իւրեանց զարթեպաչտութենէ լուսն հարին, մինչեւ Աստուած այլ արարել փառաւորեաց ըզնոսա ի գերութեանն։ Արդ, և մեք կացցուք և ձեռացուք խնամոցն Աստուծոյ, մինչեւ ինքն այլ արասցէ մեզ, որպէս և կամի։ Եւ ասեմ. Սուրբ հայր, որպէս հրամայես՝ այնպէս արասցուք։

Դէպ եղեւ ապա յաւուր միում գալ իշխանին

1. Ինքն պատմիչն Կիրակոս է, որ խօսի թէ հմուտ էր օտար լեզուաց և գրութեան։

այնմիկ որ գերեացն զմեզ՝ ի տեղին՝ ուր էաք մեք ի պահեստի. և տեսեալ զմեզ՝ խոտորեցաւ առ մեզ, և մեր ընթացեալ ընդ առաջ նորա, ասէ ցմեզ. Չինչ պիտոյ է ձեզ, մինթէ քաղցեալ էք. ասացէ ձեզ մին ձիոյ. զի ինքեանք անխտիր ուտէին զամենայն անսուրբ անասունս, այլ և զմուկն և զամենայն սողունս։ Աւե ցնա վարդապետն. Մեք ձիոյ մին ոչ ուտեմք, և ոչ զայլ կերակուրս ձեր. թէ կամիս չնորհս առնել մեզ, արձակեա զմեզ ի տեղիս մեր, որպէս խոստացար. զի այր ծեր և հիւանդագեմ եմ, և ոչ եմ քեզ պիտանի ի գործս ինչ զինուորութեան և հովուութեան կամ այլ ինչ ի պէտս ձեր։ Աւե ցնա զօրագլուխն. Յորժամ եկեսցէ Զուչուրզան՝ հոգայցիս զձեզ վասն այդորիկ. և էր Զուչուրզանն այն վերակացու ասան նորա, և երթեալ ընդ զօրս նորա յաւար։ Այսպէս կացաք առաջի նորա երկիցս և երիցս, և նա զնոյն պատասխանէր։ Եւ ապա եկն այրն ի ճանապարհէն, և կոչեցին զմեզ ի դուռն իշխանին, և յղեաց զնոյն այրն առ մեզ թարգմանաւ, և ասէ. Ո՞չ ապաքէն ասէք դուք թէ ինչո տալ մեռելոյն՝ օգուտ է հոգւոյ նորա, արդ եթէ մեռելոցն օգնէ՝ գկենդանիս ընդէր ոչ փրկէ. տաւր զոր ինչ ունիս և գնաս գհոգի քո, և երթ նեռա ի տան քո։ Պատասխանի ետ վարդապետն և ասէ. Մեր ինչք այն էին զոր գուք առիք, խաչքն և աւետարանքն, բայց յայնմանէ մեր այլ ինչ ոչ գոյ։ Աւե ցնա այրն. Եթէ ոչ ունիս ինչ՝ անհնար է քեզ երթալ ասատի։ Աւե վարդապետն. Ձչմարտութեամբ ասեմ քեզ, մեր ոչ ինչ կայ, ոչ գին աւուր միոյ կերակրոյ. բայց եթէ կամք իցեն ձեր, առաքեցէք զմեզ ի մի ի բերդիցս յայսցանէ՝ որ չուրջ կան զմեզ, և քրիստոնեայքն որ կան ի նոսա՝ գնեն զմեզ։ Իսկ նոցա հատեալ գինս ծանուսն ի վերայ նոցա, և գարձեալ թեթեացուցին յայնմանէ, և առաքեցին զնա ի բերդն որ կոչի Գագ. իսկ նա խնդրեաց զմեզ գնոյ, զի ընդ իւրն և զմերն տացէ, և ոչ հաւան։ Աւե. Սա

ի պէտք են մեզ թուղթ գրելոյ և ընթերցման, թէպէտ բազում գինս տայք՝ ոչ տամք զսա։ Եւ բաժանեցաք ի միմեանց արտասուօք. և ասէ ցիս Որդեակ, ես երթամ անկանիմ առ ոտս սուրբ Նշանին՝ որ յանուն սուրբ Սարգսի, խնդրել նովաւ ի Տեառնէ վասն քո և այլ եղբարցն՝ որ կան ի ձեռս անօրինին, զի թերեւս զերծուսցէ և զձեզ Աստուած գթութեամբ իւրով։ Չի էր ի Գադն[1] խաչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, մանաւանդ առ գերիս. զի որք ապաւինէին ի նա բոլորով սրտիւ՝ ինքն իսկ Սարգիս բանայր զդրանս բանտից և արձկլոցն լուծանէր զերկաթս և առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ ի տեղիս իւրեանց. և համբաւ սքանչելեացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս. զոր կանգնեալ ասեն զնա Սրբոյն Մեսրոբայ վարդապետին մերոյ։ Եւ եղեւ որպէս առաց վարդապետն. գնեցին զնա ուխտուն դահեկանի. և իբրեւ տարան զնա՝ ի նմին աւուր ասէ ցմեզ Մոլարն. Մի՛ սրամիր ընդ գնալ մեծ երիցուն. զքեզ վասն այնորիկ ոչ թողաք ընդ նմա՝ զի պիտանի ես մեզ. մեծայուցիցդ զքեզ ի մեծամեծաց իմոց, և թէ կայ քո կին՝ բերից զնա առ քեզ, և թէ ոչ՝ տայ քեզ կին ի մէնջ։ Եւ առ ժամայն ետ մեզ վրան մի և երկուս պատանիս ոսպասաւոր մեզ. և ասէ. Ի վաղիւն տայ քեզ ձի, և ուրախ արարից զքեզ. միամիտ կացջիր. և գնաց ի մէնջ։ Խնամոքն Աստուծոյ պատահեաց մեզ ի նմին գիշերի գաղտագնաց լինել ի նոցանէ և զերծանել. և եկաք ի տեղի անդեան մերոյ՝ ի վանքն որ կոչի Գեսիկ, և նա աւերեալ էր ի նոցանէ և այրեալ զչինուածս որ ի նմա. և անդ դադարեցաք։

1. Այս է յիշատակն ի շարականի Ս. Սարգսի. բայց մի է ի հիւսիսակողմն երկրին Աղուանից, ուր Ս. Մեսրովպ խաչ մի օրհնեալ և կանգնեալ էր, ինչպէս յիշէ և պատմիչս՝ քանի մի տող վերջը։

ՑԻԳ

ՎԱԽՃԱՆ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

(ԿԻՐԱԿՈՍ. ԾԱ.)

Աստուածահաճոյ և մեծ վարդապետն Վանական հասեալ ի բարիոք ծերութիւն, ալեւորեալ և լի աւուրբք, ըստ օրինակի նահապետին Աբրահամու՝ առ Տէր փոխեցաւ, զընթացսն կատարեալ և զհաւատս պահեալ ուղղափառ խոստովանութեամբ՝ որ ի Սուրբ Երրորդութիւնն և ի անօրէնութիւնն Քրիստոսի. ի տղայական տիոցն աստուածազործ ծառայութեամբ կացեալ, բազում քրտունս և աշխատութիւնս ցուցեալ ի բան վարդապետական, և բազում արդիս ի փառս ածեալ, և ազգի ազգի ճգնութիւնս կրեալ և սպանեալ զանդամս երկրաւորս, ըստ խրատուս Առաքելոյն, և զմարմինն ի խաչ հանեալ կարեօք և ցանկութեամբ հանդերձ։ Չի նման էր սուրբն Աստուծոյ՝ սրաթռիչ թռչնոյն մեղուի, որ թռչելով ի վերայ բազում և ազգի ազգի ծաղկանց, ժողովէ ի նոցանէ զպիտանին և զօգտակարն՝ ի պէտս ինքեանց և ի կերակուր, և ի բժշկութիւն թագաւորաց և ռամկաց. նոյնպէս և սա յանձն իւր հաւաքեալ զամենայն սրբոց զվարս և զառաքինութիւնս, և նոքօք արկանէր զգործ խորհրդին՝ ի պէտս անձին իւրոյ և յայլոց օգուտ։

Այր, նա որ զայս ամենայն բարիս ստացեալ ուներ յանձին՝ ինքն առնէր և այլոց ուսուցանէր, առ Տէր փոխեցաւ, զընթացքն զպատուական հատուցեալ. և եղեւ վաղճան նորա այսպիսի օրինակաւ ի վանքն՝ զոր իւր իսկ էր շինեալ, որ կոչի Խորակաշատ, և վասն յոլով եկեղեցեացն որ ի նմա ընկալաւ զանունն, որ կայ հանդէպ Երգեվանից բեր-

դին և ի թիկանց Գարդմանոյ[1]. առնէր նա չինուածս երեւելիս, գաւիթ չինելով ի կոփածոյ վիմաց, ի գուռն մեծ եկեղեցւոյն զոր իւր իսկ շինեալ էր. և զբան վարդապետութեան ուսուցանէր այնոցիկ՝ որ ժողովեալ էին առ նա յամենայն գաւառաց: Յաւուրս աղուհացիին Հիւանդացաւ նա Հիւանդութիւն՝ որ և մեռաւ իսկ. և նախ քան զաւանդել սուրբ Հոգւոյն ի ձեռս Աստուծոյ՝ ըստ գրեցելոյսն, կոչեցեալ զեղբարսն՝ քաղցր և ախորժ բանիւ մխիթարէր զնոսա, ազաչէր հաստատուն կալ ի կարգս և ի կրօնս ուղղափառութեան և աստուածպաշտութեան: Եւ ապա քաղցր չնչմամբ մաքուր հոգին արձակեցաւ ի կապանաց մարմնոյն, յարեգ ամսոյ տասն, ըստ նոր եղանակի ճշմարտութեան[2], և յութեւտասն մարտի ըստ Հռոմայեցւոց, երկու սրով յառաջ քան զպարզնամուտս, յաւուր չարաթու, յորում աւուր յիշատակ էր Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին, որ զԸնթերցուածսն կարգեաց և լուսաւորչական[3] պիրսն գրեաց. և վկայութիւն Սրբոյն Օրէնդի և վեց եղբարց իւրոց, որք նահատակեցան ի Մաքսիմիանոսէ ամբարչէ[4]. նոցին վարուց լեալ հետեւող, վասն այնորիկ և յիշատակի նոցունց արժանացաւ: Եւ ժողովեցան անթիւ բազմութիւնք ի թաղումն նորա, և մեծաւ սգով և տրտմութեամբ ողբային յոյժ, զի զրկեցան ի լուսաւոր վարդապետութենէ երանելւոյն և ի հոգեշահ բանիցն: Եւ տարեալ թաղեցին զնա ի գլուխ վանիցն. յարեւելից կուսէ, մօտ ի փաքրագոյն եկեղեցին՝ ուր էին գերեզմանքն ազքատաց. զի ինքն այսպէս հրա-

1. Հնագոյն և նշանաւոր էր քան զամա բերդաքաղաքս կազմանցս:

2. Այսինքն, առայգ առմարի կարգաւորութեան:

3. Այն է կոչումն ընծայուրեան անուանեալ գիրքն, որ է քրիստոնէական վարդապետութիւն և կրթութիւն երեխայից յառաջ քան զմկրտութիւն:

4. Տես 307 Յոգուածը:

մայեաց: Այդ էր և եպիսկոպոսն գաւառին Տէր Մարգիս, բազում վարդապետօք և երիցամբք. չոգաւ և կաթողիկոսն Աղուանից Տէր Ներսէս, և եպիսկոպոսն Տէր Յովհաննէս. յեա միոյ աւուր յիշատակի նորա, ողբացեալ և լացեալ յոյժ ի վերայ գերեզմանի նորա, և մխիթարեալ զեղբարս որ անդ՝ դարձան յիւրաքանչիւր տեղիս: Եւ կալաւ զաջակցորդութիւնն վանիցն եղբօրորդի նորա Պօղոս քահանայ, և զվարդապետական ուսումն՝ Գրիգորիս վարդապետ՝ նորին աշակերտ և ազգական: Եւ այս եղեւ յեօթն հարիւր թուին: Այդ, աղօթիւք նորա տացէ Աստուած խաղաղութիւն աշխարհի և մեզ մանն ի յարութեան նորա և ի պսակին:

ՅԻԴ

ՀՈՒԼԱՂՈՒՆ

(ՄԱՂԱԳԻԱ ԱՌԵՂԱՅ)

Էր Հուլաւունն զանն յոյժ բարի, սիրող քրիստոնէից և եկեղեցւոյ և քահանայից. նոյնպէս և օրհնեալ կինն իւր Ցաւխուռա[1] խաթունն, զի յամենայնի բարի էր և ողորմած առ աղքատս և կարօտեալս. և յոյժ սիրող ամենայն քրիստոնէից՝ Հայոց և Ասորոց, մինչ զի վրանէ եկեղեցի[2] և ժամահար չրկեցուցանէր ընդ ինքեան, և բազում քահանայս հայ և ասորի: Իսկ լուեալ զայս բարեպաշտ թագաւորն Հերուէ, թէ Հուլաւունն՝ զան նոտաւ և այնպէս բարեաէր է և քրիստոնեասէր, ապա և ինքն Հայոց թագաւորն գնաց յարեւելք բազում

1. Սիրամարգ հաւն այսպէս կոչուի թուրքաբէնն:

2. Կառուց չինած շարժական եկեղեցի. ժամահարն այլ կոչնակ՝ յեկեղեցի հրաւիրող:

ընծայիւք և եաես զՀուլաւուն զանն. և տեսեալ զանն զՀայոց թագաւորն՝ յոյժ սիրեաց և պատուեաց զնա, և կրկին ազատութիւն գրեաց թագաւորութեան նորա, եւս առաւել եկեղեցեաց և եկեղեցականաց և ամենայն քրիստոնէից երկրիս. և այսպիսի պատուով և մեծաւ հարկօք առաքեաց զթագաւորն Հայոց յաշխարհն իւր: Այլ և բազում թագաւորք և սուլտանք եկին նմա ի հնազանդութիւն, բազում ընծայիւք. և մեծացաւ Հուլաւուն զանն և հարըստացաւ այնքան՝ որ ոչ գոյր թիւ հեծելոց և զօրաց նորա. նոյնպէս և ամենայն իրօք, զի պատուական ակն և մարգարիտ իբրեւ զաւազ ծովու էր առաջի նորա, թող զայլ ցեղ մեծութիւն և զբազմութիւն ոսկոյ և արծաթոյ, և ձիոց և հօտից, որոց ոչ գոյր չափ և թիւ: Իբրեւ գիտաց Հուլաւուն զանն թէ եա նմա Աստուած զանութիւն և մեծութիւն և բազմութիւն զօրաց և հեծելոց և զամենայն ընչից, յայնժամ հրամայեաց գարպաս չինել իւր մեծ ծախսք ի Դաւռաև դաշտին[1], զոր կոչեցին իւր ինքեան զանուն տեղւոյն Ղլատաղ, որ էր զառաջն տեղին այն նատոց ամարան մեծ թագաւորացն Հայոց՝ այսինքն Աբլականեացն: Եւ էր ինքն Հուլաւուն զանն մեծախելք, մեծամիտ զատաւոր, ամենեւին գիտուն, և յոյժ արենհեղ. բայց զչարն և զթշնամին սպանանէր և ոչ զրարիսն և զրարեսէրն: Սիրեր առաւել զազգ քրիստոնէից քան զայլազգեաց. և այնչափ սիրեաց զքրիստոնեայն՝ որ զմի տարեան հարկն՝ խոզ էառ ի Հայոց, գռնէվայր[2] 100,000, և յամէն տաճիկ քաղաք 2000 խոզ առաքեաց, և հրամայեաց դնել տաճիկ խոզարածս, և յամէն չարաթ դիր[3] մի ապռնով

1. Աղուանից և Հայոց միջոց՝ հարաւակողմն, Կազբից ծովու մօտերն:
2. Մատակ խոզ. փոխանակ ատակի զասունք կ'առնու ի քրիստոնէից, տաճկաց տալու համար:
3. Կարգ ապռնի սովորական ձեւով:

լուանալ, և զատ ի յարօտայն ամէն վազ և երեկոյ տալ նուչ և արմաւ խոզին՝ ուտելոյ. և տաճիկ մարդ՝ եթէ մեծ և եթէ փոքր՝ որ ոչ ուտէր միս խոզի՝ զլուխն կտրէր. և այսպէս պատուէր զտաճկունք:... Յոյժ սիրեր Հուլաւու զանն զզօրքն Հայոց և Վրաց՝ վասն արի քաջութեան իւրեանց, զոր առնէին առաջի նորա յամենայն պատերազմունս: Վասն որոյ բահադուրս[1] անուանեաց զնոսա, զի զգեղեցիկ և զերիտասարդ օրդիս մեծ իշխանացն Հայոց և Վրաց՝ ընտրեաց և կացոյց զնոսա իւր, և անուանեաց զնոսա քհսիկթուղք[2] որ են զբռնապանք՝ արտ և աղեղամբ: Սկսաւ և զաւեր տեղիան չինել, և յամէն չէն գեղ մէկ տնաւոր հանէին, և ի փոքրէն՝ մէկ, ի մեծէն՝ երկու կամ երիք, և անուանեաց զնոսա ևամա[3]. և առաքեր ըզնոսա յամէն աւեր տեղիան՝ առնել չինութիւն, և ամենեւին հարկ ոչ տալ, բայց միայն հաց և թան ճանապարհորդ Տաթարի: Այսպիսի կարգօք հաստատեաց զիւր զանուածն աթոռն, և ինքն նստաւ յօտել և յըմպել բազում ուրախութեամբ:

---

1. Ըմբիշ, ախոյեան:
2. Ո՛ղիղ թէ սխալ՝ ինձ անծանօթ բառ:
3. Եթէ առյգ է գրուածն ևամ՝ պարսկերէն ձի կամ ձիարած նշանակէ:

ՅԻԵ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՀՈՒԼԱՂՈՒ ՂԱՆԻ ԸՆԴ ՎԱՐԴԱՆԱՅ ՊԱՏՄԸՃԻ

(Վ. ԱՐԴԱՆ, Դ.)

Ի յեօթն հարիւր երեքտասան թուին կոչեաց զմեզ մեծն Հուլաւու էլղանն ի ձեռն Շեոռնաւոր[1] կոչեցեալ փառաւորելոյ առն յայնմ ժամանակի՝ յամենեցունց, և աւելի յաշխարհակալացն, ի Բաթու[2] կուսակալէն հիւսիսոյ, ուր չոքաւն և պատուեցաւ նախ, ապա ի Հուլաւու էլղանէն. որ տարաւ իւրով ծախիւք և զրաստիւք զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք՝ եղբարք մեր Յարգիս և Գրիգոր, և աւագ երէցն Տփխոց սէրտէրն: Եւ տեսաք զմեծն զայն ի մեծի աւուրսն ամառամի և տարեմտի իւրեանց, ի յամսեանն յուլիս ըստ Հռոմայեցւոց, և ըստ մեզ ՅԱրաց: Եւ էր նոցա աւուրք ուրախութեան իբր լուսին մի. և կոչէին զաւուրսն զայնոսիկ Խոռռուղթայ, իբր խորհրդատունս, յորս խորհէին այլղանքն՝[3] ազգայինքն Ջանկզ զանին՝ առ մեծն եկեալ, զոր ինչ պատչաճն տեսանէին, հանդերձ ամենայն աւագանօքն իւրեանց. ամենեքեան նոր զգեցեալ՝ յամէն աւուր ուրիշ գունով փոփոխս: Անդ լինէին ամենայն հնազանդեալքն իւրեանց, չատ և երեւելի նաւիրօք. թագաւորք և սուլտանք. որպէս և ի մեր տեսն[4] թագաւորն Հայոց Հեթում,

1. Բուն անունն էր Շահրատին, ինչպէս վերջը յիշուի, և ուրիշ պատմիչ մի վկայէ, « Սարվանին որ- » դին Շահպատինն զվարդան վարդապետն տարաւ » ի մօտ Հուլայուն », և այլն:
2. Բաթու՝ ձինկիզղանի թոռն էր:
3. Էլ–զանքն, մեծ զանք:
4. Մեր տեսած տեսին:

և թագաւորն Վրաց Դաւիթ և Երինձն Անտաքու, և սուլտանք ի Պարսից կողմանց յոլով:

Եւ ի տեսանելն զմեզ՝ ծունր ոչ եաուն կրկնել և ոչ չոքել ըստ իւրեանց սովորութեան. իբր թէ արքաւունքն՝[1] Աստուծոյ միայն երկրպագեն. գինի եաուն օրհնել և ի մեր ձեռաց առնուլ: Եւ խօսք զոր ինչ հրամայեաց՝ առաջին այս. Կոչել եմ զքեզ որ տեսանես դիս և ճանաչես, և ի սրտից ազօթես վասն իմ: Եւ աւելորդ է թերեւս զամենայնն գրել (զի) չատ խօսեցաւ, և մեք տուաք պատասխանի: Եւ նստուցին զմեզ, և գինի եաուն. և չարականն պաշտեցին եղբարքն որ ընդ մեզ, և Վրացիք զիւրեանց պաշտօնն, և Աստրիք և Հռոմք զիւրեանցն: Զի յայնմ աւուր տեսին զկեանսն յամենայն կողմանց, մինչ ասել Անղլտերին, թէ, Ես զքեզ միայն եմ կոչեալ, ինձ է այս նշանս, որ ոչ յառաջ և ոչ եաուս, մի աւուրբ յամենայն կողմանց եկին ընդ քեզ, տեսանել և օրհնել դիս: Եւ յառաջեաց հրամայեաց ինքն[2]. Թուի եթէ նշան է՝ որ Աստուծոյ սիրոն լաւ է ինձ: Ասացաք. Զմեզ այլ կալաւ զարմանք, և պատճառ՝ զոր դուք հրամայեցիք[3]: Այսպա հրամայեաց, թէ, Ծածուկ բան ունիմ առ քեզ: Եւ յաւուր միւմ արար անապատ յոյժ[4], և հեռի կացուցեալ զամենայն բանակն, և երկու արամբ միայն խօսեցաւ ընդ մեզ յերկար, յիւր ծննդենէ հեաէ և ի մարէ՝ որ քրիստոնեայ էր, ասէ. և թէպէտ գայեակ անուցանէ զաղգն, երբ ի հաւատ գայ՝ դիւր մայրն սիրէ. չենք օտարք ի սիրոյ քրիստոնէից. զոր ինչ ունիս ասելոյ՝ ասա: Եւ բռնեալ էր դիմ ձեռքս. և մեք ասացաք զինչ Աստուած

1. Քրիստոնեայ նշանակէ:
2. Ինքն իր հարցմանը փութաց պատասխանել:
3. Ձեր ըսածն է այս բանիս (ամէն կողմէ գալուն) պատճառն:
4. Ջամենքը հեռացընելով իր քովէն՝ տեղն անապատ դարձաւ:

երեւ ասել բան. թէ, Որչափ ի վեր ես դու քան զայլ մարդիկ՝ մօտ ես յԱստուած. Աստուծոյ ա-ԹՈՌՆ արդար դատաստանաւ է հաստատ: Ամէն ազգի տուեալ է Աստուած տէրութիւն աշխարհի. մինչ ի ձեզ՝ աշխարհաւեր են լեալ, և աղքատաց անողորմ՝ ծանր չալակ[1] են դրել. նաքան[2] յոգոց են հանել և լացեալ առաջի Աստուծոյ. Աստուած առեալ է զիշխանութիւնն և յայլ ազգ տուեալ. թէ դուք աշխարհաչէն լինիք և աղքատաց ողորմած, ի ձեզանէ չառնու Աստուած, զոր տուեալ է՝ թողու առ ձեզ, և զոր տալ կամի՝ զայն այլ տայ: Ի քո դրանս հէնց մարդ կացո՝ որ յԱստուծոյ երկնչի և զձեզ սիրէ. որ զլալով եկած տառապեալն՝ որ աղերս[3] չունի և կաշառք՝ ուրախ ի տունս ազատկէ, քեզ յիշեցնէ. և զաչխարհս տեսանել[4] տուր հէնց մարդոյ՝ որ յոտակ տեսանէ, կուրանայ ոչ՝ կաշառօք, և քեզ ասէ զիրաւն:

Եւ յայս կարգիս չատ խօսեցաք: Հրամայեաց թէ, Ի սրտումն դրի զքո խօսքդ. ո՞նց է որ զամէն գայն ասացեր որ յիմ սիրտս կայր՝ որ ինձ դիւր թուեաց. Աստուած խօսեցեալ է քեզ, երեւեալ է քեզ: Ասացաք, թէ Ձէ. մեք մեղաւոր մարդ ենք, ապա զաստուածախօս մարդկանց գիրքն կարդացել ենք, և սիրտք թագաւորաց ի ձեռն Աստուծոյ են. Աստուած յայտնեալ է քեզ առանց գրոց: Ապա ասացաք, թէ, Առաջի Աստուծոյ խօսք մի եմ յասել, որ Աստուած լսէ և ապա դու, որ առտ չկայ ի ներս: Հրամայեաց, թէ առ. ասցի. թէ, Զինչ քրիստոնեայ կայ և արքաւուն ընդ ծով և ընդ ցամաք, ամինոյ սիրտ հետ քեզ լաւ է, և քեզ աղօթք են առնում: Հրամայեաց, թէ Հաւատալ եմ որ հէնց է. ապա յԱստուծոյ ձանապարհն չեն ար-

1. Բեռն:
2. Ն՞ք. անունք:
3. Ընծայ չուների տալու:
4. Հոգալ, դառել:

քաւունքն, ինձ ի՞նչ աղօթք առնեն. և թէ առնեն՝ Աստուած երբ լսէ. մեհրամ[1] արքաւունն զԱստուած յերկնից յերկիրս բերէ. չբերէ: Ասցէք որ յԱստուծոյ ձանապարհն կենան, և աղօթք առնեն: Մեր եղբարքն հետ մեզ վասն այն են ի կռւել, որ մեք քրիստոնեաէր ենք և քրիստոնէութիւն կայ ի մեր տանս. նաքա տանկասէր են և տանկութիւն կայ ի նոցա տանն:

Ապա ասէ ցմեզ. Ոչխարենի էր ես զգեցեալ և ոչ ոսկի. և իմացեալ թէ մեք մեծ մարդ և աստիճանի տէր չենք, լուր[2] արեզայ մի եմք. և հրամայեաց թէ Մեծացանեմ զքեզ ոսկի զգեստիւ, և չատ ոսկի տամ: Եւ մեք ասեմք. Ոսկին մեզ և հողն մի է. մեք այլ մեծ ուզենք, որ վայել է քո մեծութեանդ. ողորմութիւն ի վերայ աշխարհի: Եւ հրամայեաց, թէ մէշում քթեթ[3] կարեմ խիստ գէշ, և խիստ փոքր իրք, լուր այնչափ որ խունկ գնես նկզեցույն, թէ չէ՝ երկիր ի՞նչ ասեն, թէ Աղդանն գնա ո՞նց տեսաւ: Եւ զայդ զոր ասացիր՝ առնեմ, և մարդիկ յղարկեմ՝ որ տեսանեն զաչխարհ:

Իսկ երբ հրաման ուզեցաք գնալոյ, այլ կոչեաց զմեզ և խօսեցաւ. և ունէր ի ձեռաքն բաղիչ[4] մի, և երկու հանդերձ էր տուեր կարել: Ցիշեցուցաք, թէ, Աղդան, այդ զրամդ հատանի և հանդերձդ մաշի. մեք անհատանելի և անմաշելի խնդրեցաք պարգեւք: Եւ հրամայեաց թէ, Առաջի օրն զքո խօսքդ լմնեցի[5], առնեմ[6] եմ տուել զրել. կարգալ տուր և զինչ քո սրտիդ պիտի տալի՝ զայն ալ զրել

1. Թշնամի քրիստոնեայն:
2. Ոսկի, մէյն:
3. Հատարակ քթանէ զգեստ մի:
4. Ոսկիէ կամ արծաթէ տախտակ մի ձեռքի մեծութեամբ, զոր իբրեւ գուդաս մի զրամայ՝ պարգեւէին զանքն:
5. Կատարեցի:
6. Հրովարտակ:

տուր: Եւ ի Սահապրու և ի Շահապատինն եմ յանձնել զերկիրդ և զքեզ, որ զինչ ասես առնեն: Եւ մեք չնորհ կալաք և ելաք: Թերեւս աւելորդ թուիմք գրելով զայս, այլ վասն բարեսէր և քաղցրաբարոյ մեծի Հուլաւունին յիշատակի՝ գրեցաք յօգուտ կամ յսրինակ այլոց՝ որ գալոց են յետ մեր. ո՞ գիտէ:

ՅԻԶ

ՎԱՐԴԱՆԱՅ (ՊԱՏՄԶԻ) ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՆՔ ԵԻ ԼՈՒԾՄՈՒՆՔ ԳՐՈՑ ԱՌ ՀԵԹՈՒՄ Ա[1]:

Այժմ հայեց արա, իմ Պարոն, սակաւ մի աշխատեա. զո սակաւ աշխատելն առաւել է քան զայլոց շատն. զի որպէս լուաք ի Քրիստոսէ, ամէն մարդոյ հրեշտակ կայ պահապան, և ձեզ՝ որ ազգի գլուխ և թագաւոր էք՝ ինքն գլուխն Քրիստոս է պահապան անմեկնելի:

Մի պաշտել զնա որպէս հեթանոսք՝ այլ որպէս առ քեզ, ի սրտիդ և յոգոյդ. ուր կամիս զգլուխդ և զերեսդ դնել ի պատիւ նմա՝ ի գիրկն դնես, և յԱստուած միանաս: Եւ զոգի իմ առաւպեակ և սակար յիշեսցես, որ զքեզ սիրէ առաւել քան զասել: Վասն որոյ զայս աշխատութիւն՝ սակար մարմնով կատարեցի, սիրով ձեր զօրացեալ և օժանդակեալ. և յիշեա զոր ի ձեռն Թորոսի հրամայեցիք վասն իւղաբերիցն կանանց գրել ձեզ՝ և ի

1. Փերականական և սրբիչ գրոց մուխ բանից Լուծմունք կամ բացատրութիւնք են, զոր ռամկօրէն լեզուով գրեր է Վարդան առ Հեթում Թագաւոր՝ ասոր երիտասարդութեան առեն, և խնդրէ որ այս գրած գրքոյկը պահէ Ջապել Թագուհի կինն Հեթմոյ:

խորհուրդ պատարագին. և ապա երեսաք ՅԱնդրէաս[1] հրամայեցիք, որ գրէաք ձեզ ժղանք[2] ի մեկնութենէն Քերականին. և ես այլ աւելի սիրով (կամեցայ) գրել ձեզ ձեռամբ Լուծմունս յաւետարանէն և ՅԱբրահամոցն[3]: Ուստի տեսէք թէ շատ էք ի հարցանել և սիրէք սրտիւ, է որ հանգուցանէ զձեր միաքդ, և է որ պատճառ լինի ձեզ բանասիրութեան զայս հարցանելոյ և զտոյգն գտանել: Բայց աղաչեմ, զպարզմիտ մարդ և զառաքինի մի՛ հարցանել՝ որ չամաչին, զի ես նախահոգութեամբ[4] գրեցի, և թէ առժամայն զնս հարցանեն և ես գտանիմ տկարացեալ[5]. վասն որոյ մի՛ մեղադիր լինիր՝ ժամն[6] չգտանողացն զտեսութիւն բանին: Եւ ես պիտեմ որ այս չէ թագաւորական իրք, այլ ոսկերիր պիտէր և ճարտար գրչի, և ես շատ պատճառ ունէի որ խափանէր զնս յայս ձեռնարկութենէս. տկարութիւն և մոլթն խրճթիս, և հոդմ պարխրցու[7] փոչեխառն փչելով ընդ պատուհանն և պաղ օդոյս, բայց սիրոյն հրաշագործին յաղթահարեալ եղեն պատճառքն. և որպէս տեսանէք՝ եղեւ, թէ կամիս դիւրին է տալ փոխել յաղէկն՝ որ հնչա կարդայք, և թող Գրիգորեան փոխէ՝ որ բան չկորնչի. բայց իմ կամ է որ իմ մատանց

1. Ակլիկիոյ վանքերէն մեկն է ոչ շատ ծանօթ:
2. Ջբօսանաց բանք կամ զուարճալի դիտելիք:
3. Ծննդոց գրոց:
4. Ես առաջ շատ մտածելով քննելով իմացայ այս խնդիրները, և այնպէս գրեցի. սուրբ մի առջի անգամ լսելով՝ դժար է որ կարենայ շիտակ հասկընալ և մեկնել:
5. Խրթին բաներու մեկնութիւնը շատ հոգով քններ գտեր է. եթէ սուրբի հարցընեն՝ չկարնալով մեկնել՝ կըրնայ ամչնալ. ինքն իսկ գրողն կըրնայ մեկնել չյիշել իր գտած մեկնութիւնը:
6. Մեկէն ի մեկ, շուտով չգտնողք կամ չհասկըցողք:
7. Հիւսիսային հով:

ստատարն[1] մնայ առ ձեզ. ո՞ գիտէ թէ աւելի չնոհ-
ւոր լինի ձեզ վասն յուսոյն իմոյ որ առ Տէր, և
սիրոյն՝ որ առ ձեզ. զի այն[2] ճառ և պատմութիւն
չէ՝ որ չատ աշխատանք տանին և ապա բան գտա-
նեն. թէ թուղթ մի կարդաս ժմուն կամ երկու,
գտանես յոլով խորհուրդս. և Աստուծով՝ տղայա-
հասակ և մտօք և աչօք զօրաւոր էք, և ի մի ան-
գամ կարդալն սակաւ ինչ աշխատիք, և յայլն ան-
հոգ լինիք: Եւ զի արքայ և արքայուհի[3] ի միում
մարմնի տեսանի, և հաստարակ է հոգեւորն և մար-
մնաւորն, թէ Աստուծով իրք մի օգուտ լինի ի գրե-
լոցդ կամ մխիթարութիւն՝ երկուցդ լիցի. և զակնդ
բազմագոյն և պայծառ՝ որ պահէ զձեզ յաւիտեան՝
թող թագուհի պահէ, և ի պիտոյ ժամն առնոյք
ի նմանէ[4]. և նմա հրամայէ Պօղոս հարցանել զձեզ
և զպատիճն ծանուցանել. և պարտական են ասէ
ապրեցուցանել զիրեարս՝ առն և կնոջ: Եւ զերկու-
սինդ ապրեցուսցէ Տէր Յիսուս. կենդանութիւնն
ձեր ի խնամս Հօր և ի գութ Հոգւոյն Սրբոյ, յո-
ւորոյմն աննդեան զալարարձակ անկարօղջոյ չա-
ռաւիղեալ ոստոցդ, ծիրանածին տղայոցդ ի գիրկս
Միանի սրբոյ, ի կատարումն պսակման հայակոյտ
աղնուական ազգաց և ազանց, տոհմից ազատաց
ազատացուցիչք արեանաւաւ զարմից, լծակիրք և
բեռնաբարձողք, կորացուցիչք օտար ազգաց. ի
փառս փառաւոր և պաշտեցեալ Աստուածութեանն,
որ է օրհնեալ:

1. Աչխատութիւնն:

2. Այն տեսակ. սովարաբար հասից կամ հայից գրութ:

3. Ակնարկէ ի Զապել թագուհի՝ կին Հերմոյ:

4. Առաքեալն Պօղոս՝ որ գրէ, թէ, երբ եկեղեցւոյ մէջ կանայք բան մի լսեն և չհասկանան, երբ դառնան ի տուն՝ իրենց երկան հարցընեն:

ՅԻԼ

ՎԱՐԴԱՆ Վ. ՊԱՏՄԻՉ ԱՌ ԿԻՐԱԿՈՍ Վ. ՊԱՏՄԻՉ[1] ՈՒՍՈՒՄՆԱԿԻՑ ԻՒՐ

Նման է արքայութիւնն Աստուծոյ՝ գանձի ծած-
կելոյ յագարակի, ասէ Տէրն գանձուն և արքայու-
թեանն. զոր գտանէ խնդրողն, և տալով զոր ունի
և գնէ զագարակն, զոր պսակի է և ընդ այլ ինչ զա-
մենայն առակաւոր իմաստս, որ յամենայն ստուեա-
ծաչունչ գիրս՝ որ է տէրունի, յորմէ ցանկացողն
գնէ զիւրն, տալով զբոլոր գոյն, որ է հաւատն.
զի այն է մերն ամենայն: Յորոյ և դու ճանաչիս
տէրունական[2] իր և անուն, հարազատ եղբայր
մեր Կիւրակոս, բարեւնեաց պետ և քաղցուցմնի
կիրք մեր, և մեծ մտան յուսոյն ի սուրբ եկեղեցի:
Որ և քում ըղձիցն կցորդել հրամայեցեր ի բան
և ի գիր՝ չատս, զհաւատն Տեառն տալով, ընդրկօք
նորա կարել մեզ զմնացեալն յերգոյ երգոյն ի
Գրիգորէ Նիւսացւոյ, որ մեծն է ազբիւր եկեղեց-
ւոյ, ընդ՝ առաքնորդութեամբ Որոգինեայ, համա-
ռօտել և զԳրիգորին ի սկզբանէ. որ ի վեր գտանի
քան զկար մեր յոյժ. Աստուծոյ միայն կարելի և
քումդ աղօթից և յուսոյ, որ ի փչոյ և յապառաժ
անապատէ, ի ծերունոյ և յանապատ մտաց՝ խնդրես
պատուղ, ի ձեռն ոչ սակաւ վաստակաց զոր առաք
յանձն, ի մեծն յոյս վստահութեամբ, չարչարիլ
մարմնով և արդարանալ հոգւով. ի քեզ տալ գիրք
պարտուցն մեր, կրել միշտ առաջի Աստուծոյ, և

1. Վարդան իր երգերգոց գրոց մեկնութեան Յա-
ռաջաբանին մէջ գրած է զայս ընտանեբար՝ առ ա-
ռաւմնակից իւր:

2. Կիրակոս անուանը՝ տէրունական թարգմանէ, ըստ
յոյն լեզուի:

ջնջել անապիսպէս[1]: Եւ զու նմանեալ տանուտեառն, ճոխասցիս աշակերտութեամբ արքայութեան, հանելով ի գանձէն հին ճաշակ որ քաղցրագոյն է, ո՞ գիտէ և նոր ինչ[2]. ընդ մեզ զոլ հաւատալ և զՀոգին Սուրբ Հարր և Որդւով՝ ըստ խոստմանն, օրհնեալն յաւիտեան:...

[3] Իսկ զու մշակդ մօրենեաց և ազատաց անբուսաբեր վայրաց, անսյլ մեզ ճաշակ յարաժամ, և յայս յԱստուած, վարդապետդ Կիրակոս. որ հարկեցուցիչ հրամանաւ և գործիւն մահու քեզ՝ ասել զմեր մերձակայ, մուծեր զմեզ ի տուն գինոյ և իւղոյ, խնձորոյ և նռնենեաց գրախտի[4], չղթայիւ արժանաւոր ոտիւք՝ հայել, լսել և խօսել, հոտոտել և չօշափել զկեանս և զանմահութիւն, զգայարանօք բիւր քանքարոյ պարտականօք իւրաքանչիւր մասամբ, որ անախտժելեացն էին արժանաւորք քան զիմանալ և զասել, մեծ էր ինձ և սոսկալի: Սակայն ընդոստաւք և առաք յայս մեծագոյն, եթէ և արդ եւս եկն Տէրն և կոչէ, և ոչ զարժանաւոր ոք՝ այլ զմեղաւորս գիս, ոչ յապաշաւ միայն յանցեալ կենացն, այլ յանբաւ և յանճառ ուրախութիւն հարանեաց[5], գի զարմացուցէ զերկինս և զերկիր. զոր առաւր է միշտ առնել, որք և գառանին ի գիրս յայս, Ռահաբ և Բաբել և Եթովպիա[6]. ի բաց եդեալ բնաւին զառաջին կերպարանն և առ-

1. Սպի՝ վէրքի նշան է. այս տեղ ըսել է՝ առանց արատի կամ պակաս մնալու՝ ջնջել պարտքը:

2. Քրիստոսի խօսքը յիշեցընէ, թէ. «Տանուտէրն» հանէ ի գանձէ իւրմէ զնորն և զհին»:

3. Այս բանս գրոց վերջաբանն է:

4. Երգ երգոցի մէջ յիշուած բաներ են:

5. Պետպէս Ս. Գրոց և առաքնոց յիշատակօք՝ գինքն անարժան՝ բայց Աստուծոյ ազգրմութեամբ արդարանալ՝ բացատրէ:

6. Ինչպէս այս օտարներն և անուերն ընտանի և եղբարկ եղեն, այսպէս Աստուծով՝ ազգեան այլ գիտնայ:

տուածագգեաց եղեալ. զոր և զու միշտ ազօթեցեր զայս լինել ի կարող և ի կամեցող Տեառնէն: Եւ մեք քեզ չնորհ ունելով չատ գոհութեամբ ձեռնարկեցաք ի յիշձս բազմանաց հարցմանն քո, ըզձեռն յուսոյն ի Քրիստոս տալով մտաք յանհուն խորս և ելաք. եթէ բերաք ինչ ի վեր քեզ ցանկալի իրս որ գառանին յայսպիսի ծովուս, չունիմ ինչ ասել, Տէր գիտէ տուողն՝ որում երկրպագեսցես յաւետն ինչ, և զխնայանն՝ ինձ համարեալ՝ ուղղեսցես, օժանդակդ ինձ յամենայնի: Սակայն զՀնազանդութիւնս հատուսցես, զայդ և ըզկերեկ անմոռաց յաղթս. և զդա նուէր տացես Սիոնի մօրն վերնոյ, ի գաւիթս նորա ընկենլով իրրեւ զոստ մի ձիթենեաց: Ո՞ գիտէ, թէ մանգուկք նորա ի մտանելն առցեն և յուցցեն նմա ի խնդութիւնս ինքեանց և ի քաւութիւն մեզ, բացերես զնա և բերկրեալ տեսանելով յարգիս իւր, միակցելով զմեզ ի չնորհս փեսային իւրոյ Յիսուսի և Հօրն գԹագի և Հոգւոյն Սրբոյ ազօրմածին. որում ամենայն խնդութիւն և ցնծութիւն և սէր ի սուրբս իւր և յարարածս, և ի քեզ և ի մեզ և ի մեր երախտաւորս, յամենայն յաւիտեանս և յաւիտենից յաւիտեան. ամէն:

Ի թուիս ՉԺԴ եղեւ Մկնութիւն երգոց երգոյ ի Վարդանայ ի գիտնական և ի տիեզերալոյս[1] վարդապետէ, յաստուածամերձ սուրբ ուխտն Հաղբատայ, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս[3] փրկութեան մերոյ արեգականն, և Հօր և Հաւաքզոլի սրբութեանս մերոյ. ի պատրիարքութեանն Հայոց Կոստանդեայ և Հերմոյ պատկառելոյն մերոյ, և յարհիեպիսկոպոսութեանն Տեառն Յովաննիսի. զոր

1. Այս մասն եւս Վարդանայ գրածն է, բայց հին օրինակաղ գրոցն աւելցուցեր է անոր գովեստի անուններ, որոց մեկն այլ չէ գրուած:

2. Հռչակաւոր Հաղբատի եպիսկոպոսանիստ վանաց եկեղեցւոյ անունն է՝ Ս. Նշան:

ի կամս իւր խնամեսցէ և ի սէրն իւր մածուսցէ Յիսուս Քրիստոս Աստուածն մեր, ընդ որում փառաց ցեալ և հարանազգեցեալ: Եւ նմա փառք:

ՅԻԸ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ ԳՐՈՑ ԿԻՐԱԿՈՍԻ ԱՐԵՒԵԼՑՈՑ[1]

Յուսովն Աստուծոյ և սիրով սրբոց նորա, նուաստս ոգի կիրակոս վարդապետ Արեւելցի, ի միաբին հաւաքեցի զսօն Սրբոցս Աստուծոյ՝ ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց: Գրեցի և պատմեթիւնս նոցա որոց ոչ էր եղեալ ի գիրս Տայամաւուրցն[2] և խառնեցի ընդ նախակարգն: Եւ ազաչեմ զսօնողսդ և զդրողսդ՝ գրել և զայս յիշատակ բանի, զի և դուք գրեսջիք ի գիրն կենաց. և որ բառնայ զմերս՝ չնչեսցի և ինքն ի գպրութենէ կենաց: Եւ եղեւ իրակութիւնս այս ի թուիս ՉԺԸ, յաշխարհիս Կիլիկեցւոց ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ, և յառաջին ամի իշխանութեան որդւոյ նորին Լեւոնի. ԿՋ (66) ամի կենաց պանդըխտութեան մերոյ, յորում աւարան եղեւ ի փառս Աստուծոյ, յաւիտեանս. ամէն:

1. Կիրակոս՝ համշիրակն կամ աշակերտակից Վարդանայ Պատմչի, հայրենեօք էր ի Գանձակայ, որ հիմայ ի Թեւսաց Ելիսաբեթուպոլ կոչուի, հին քաղաք Աղուանից, յարեւելակողմն երկրին Հայոց, վանս որոյ Արեւելցի կոչուեր է Կիրակոս: Մեր այս գրոց մէջ չատ հեզ յիշուեցաւ իր հայրենիքն՝ Գանձակ, որոյ մեկ տեսարանն է այս պատկերս, և չենքն իսուի թաղարաց տաճկէն ինացած:

2. Իրմէ առաջ գրուած Տայամաւուրաց մէջ:

Եւ ճառք որ յաւելաք մեք ընդ հինն խառնեալ՝ հարիւր և եօթանասուն. անուամբն և չնորհօքն Աստուծոյ. ամէն[1]:

ՅԻԹ

ԱՐՇԱԻԱՆՔ ԵԳԻՊՏԱՑԻՈՑ Ի ԿԻԼԻԿԻԱ· ՎՏԱՆԳ ՈՐԴԻՈՑ ՀԵԹՄՈՑ

(Ս. ԱՐԴԱՆ. Գ.Գ.)

Ի նոյն թուին (1267) մերձ յաշնան յեղանակի՝ բացաւ մեզ աման դառն քացախուն և մրուր բարկութեանն Աստուծոյ՝ հայկազարմ ազգիս. քանզի սուլտանն Մարայ փնտռտար անուն՝ խնդրէր զերդսըն՝ զոր Թաթարի ուժովն առեալ էր Հայոց թագաւորն Հեթում: Եւ ի չտալն, աւելի վասն երկեղի Թաթարին[2], բարկանայր յոյժ և զօրս գումարէր բազում յոյժ, և առաքէ ի ձեռն զօրագլխի ուրումն Ամրնօր անուն՝ յերկիրն Կիլիկեցւոց: Որ և յանպատրաստից մտեալ յաշխարհն՝ առնու զԱիս մայր քաղաքաց՝ զարքայանիստն, այրէ զնա եկեղեցիքն որ ի նմա, և գտանէ զտունն գեներտոր գանձուցն, և առնու յոյժ բազում. զոր ի միում ամանի լինել ասէին վեց հարիւր հապար կարմիր[3]:

1. Ուրիշ Յիշատակարանէ մի կ'իմանանք որ իբր 17 տարի առաջ աւելցուցեր է Կիրակոս հին Տայամաւուրաց վրայ 112 նոր բան, ի վանքն Կողայ, Մեծ Հայոց Տայք գաւառի մէջ, և իրեն օգներ են Վահրամ և Ստեփաննոս անուամբ քահանայքն:

2. Հեթում վախնար՝ որ եթէ փնտռտարի բարեկամ երեւնայ՝ Թաթարք իրեն թշնամանան:

3. Ոսկի դրամ. եթէ հիմայ քանի մի հատ Հեթմայ և Լեւոնի գտուած ոսկի դրամոց հաւասար էին:

Եւ գնայ աւերմամբ մինչեւ Յ[Ա]տանա. և ապա լսէ համբաւ երկիւղի և դառնայ աւարաւ և գերու-թեամբ քառասուն հազարաւ, բայց ի կատարելոցն, որ գլուխ և խոց անողնանալի կատարելոցն՝ Թորոս արքայորդին, գեղեցիկ ծաղիկ ի մատաղ հասակի, մերձ ի փթիթս մաւրուաց, վկայեալ յամենայն բարեաց, անպակաս ի բովանդակ բարւոյ, և կատուածամբ չեմարանեալ ի ծարաւ չնորհացն Յ[Ա]տուծոյ: Որ յօժարութեամբ եւս դիմեալ ի պատկն արեան. քանզի հարցեալ զ'այլն[1] ոչ եւս զանուն հօրն, զի կենաքն գերեալ՝ մի լիցի աւելի բեռն հօրն և աշխարհին, ընդ անդրանիկ եղբօրն Լեւոնի, պատկելոյ և հրաւիրելոյ յաթոռ թագաւորութեանն՝ առ կենաք հօրն: Քանզի նա եղեւ գլուխ գերելոցն մեր, և հուր ազկկզ լերդաչարչար և սրատակուր աշխարհիս մեր և ազգիս, որ կամք չընչարգել և յերերմանն: Հասանէ ձեռն վերին, որ եհարն ցաւմամբ՝ նոյն բժշկէ ողորմութեամբ, ածելով[2] զմեծաբաց խոցն, առնելով գերէդարձ՝ զոր տարան ընդ այլսն. հնգետասան օր յամելով յաշխարհն և լնլով ազեաւիւք, գնաց՝ իրաք, և զմեզ՝ խոցոտիչ համբաւովն[3]:

Նոյն բան ըստ Յիշատակագրի.

Վասն թշուառութեան ժամանակիս զինչ պիտոյ է մեզ գրել, որ երեմիայի մարգարէի ողբոցն կա-

փառնկաց նաբղէնի Հաւասարին, և այդ թիւն՝ եթէ ասոյգ է՝ չատ մեծ գումար կ'ըլլայ, մէլիոն և միլիարդ, որ չէ հաւանելի:

1. Թարս չէ ուզած իմացընել ով ըլլալը, որպէս զի վինքը ազգ պահելով՝ իր հօրմէ չատ բան չպահանջեն՝ ազատ թողլու համար:

2. Պատելով ազգիս հասած մեծ վերքը:

3. Շատ փափուկ սրտի միանգամայն և ազնիւ և կերթ մտաց խօսքեր:

բօտանամք, զի աչխարհացուք զգերեալն մեր յանօրէն զօրացն Փարաւոնի, նմանեալք գերութեանն Երուսաղեմի: Եւս առաւել աւաղեմք զթագաժառանգն թագաւորութեանս մերոյ, զխոզխոզեալն սրով անօրինացն, զքաջ զօրականն Քրիստոսի զՊարոն Թորոս, և զգերեալն յԵգիպտացւոցն՝ զՊարոն Լեւոն: Վասն որոյ հայցեմք յՅ[Ա]տուծոյ՝ միոյն հանգիստ յարքայութեանն երկնից և պակ մարթիրոսական արեամբն նահատակին, և ազատութիւն ազատեցելոյն արեամբն Քրիստոսի՝ պայազատին Լեւոնի Պարոնին մերոյ, զի ազատութեամբ նորին վերատին ուրախացուք մեք, որպէս Իսրայէլ ի դարձին ի Բաբելոնէ՝ ի ձեռն Զօրաբաբելի: Որում չնորհիս պարգեւողին Քրիստոսի՝ օրհնութիւն և փառք. և այլն:

Այլ Յիշատակագիր.

Ի չրջագայութեան ամանակաց թուաբերութեան հայկականս ազին տումարի, յարաբարդեալ ամաց ԺՒ յիսնեկաց հանգերձ առաջին կատարեալ թուով վեցեկան ընդ տասնեկի[1] չարամանելոյ. ի բռնակալութեան կոզմանցն արեւելից բաժնին Ա[ս]իոյ, ի վերայ յոլովից տիրեալ ազգաց՝ խուժադուժ և բարբարոս ազգին Նետողաց. որոց զրաւեալ ծառայութեամբ ծանրագոյն լծոյ հարկապահանջութեան, եւս առաւել տանս Հայոց, որպէս երբեմն Իսրայէլ ի ժամանակս անիշխանութեանն. յորում ժամանակի վարէր զառաջնորդութիւն թագաւորութեան Կիլիկիոյ՝ Հեթում բարեպաշտ, որ էր և նա մտեալ ընդ վերատացեալս հարկաւ: Այլ բռնագատէ զիս ատտնօր թախիծ սրտիս՝ յողոմակիս յամել պատմութիւն. զի յանցկալում ամի ներգրութեան այսր

1. Տասն և չորս անգամ 50 լինի 700, աւելցընելով 16 կ'ըլլայ 716 թուականն Հայոց, որ է Քրիստոսին 1267:

մաեանի, յաղագս ծովացեալ մեզաց մերոց սուլ-
տանն Մուրայ՝ բազմաձեռն զօրու պատրաստու-
թեամբ մահմետական սպայիւ, իբր ի ցասմանէ
Աստուծոյ ածեալ եմուտ յերկիրն Կիլիկիոյ: Որում
ոչ կարացեալ զդէմ ունել զօրն Հայոց՝ անդէն
վաղվաղակի թիկունս դարձուցին, պարտեալ յաղ-
թեալ լքեալ վայրավատեալ ցրուեալ լինէին: Ուրա-
նօր երկու որդիք թագաւորին ձերբակալ եղեալ՝
թշնամեացն ի բուռն անկանէին. կրսերոյն սրա-
խողխող եղեալ, վերէցն գերի վարէին[1]: Եւ ընդ
ցրուել զօրացն, զի և թագաւորն եւս ոչ եղեւ պա-
տահեալ յերկրին, այնուհետեւ առանց կասկածի
եղեալ, բազում նախճիրս և ոճիրս արարեալ, հըր-
պեհեալ գյոլովս ի քաղաքաց և գաւառս նոցին, և
տապալեալ զեկեղեցիս և զգիրս սուրբս հրոյ մատ-
նեալ. ընդ որս և գարքայանիստ քաղաքն Սիս՝ գե-
զեցկաշէնն ապարանօք և մեծափառ եկեղեցեաւն
Սրբոյն Սոփեայ՝ հրձիգ արարեալ, զրազումս ի
սուր սուսերի մաշեալ, և զեւս բազումս գերի վա-
րեալ՝ հանդերձ յոլով աւարաւ:

ՃԼ

ՍՈՒԳ ՀԵԹՄՈՑ Ի ՎԵՐԱՑ ՈՐԴԻՈՑՆ

(ՄԱՂԱԹԻԱ)

Մինչ հոգաց (Հեթում երթալով) առ գլխաւորս
Տաթարին՝ գալ և օգնել զօրաց նորա, և ինքն
երեկ երկու աւուրբ յառաջ, ապա լսեաց[2] զգալն

1. Կրսերն (փոքր) էր Թորոս, երէցն (մեծն) Լեւոն:
2. Հեթում Թաթարաց գլխաւորէն գառնալով՝ իր
երկիրը մանալէն երկու օր առաջ լսէ որդւոցը պա-
տահարը:

Թուրքին և զբեկումն զօրացն, երկմտեց, որ եաուն[1]
զթագաժառանգ որդիսն իւր ի ձեռս անօրէն գայ-
լոյն, և ինքեանք փախեան յամուրս իւրեանց: Զի
զդեղեցիկ որդի թագաւորին՝ զպարոն Թորոս՝ ի
պատերազմին սրախողխող արարին յիւրում երի-
վարին, և զպարոն Լեւոն ըմբռնեալ՝ բազում զօրօք
Թուրքացն, և տարան ի ծառայ ի Սիս: Եւ զայս
լուեալ մեծապետք թագաւորն Հեթում՝ բեկաւ սիրտ-
ն ի կարի և յանհնարին տրտմութենէ, որ յան-
կարծահաս դիպեցաւ, և ոչ կարէր կանգնել զսիրտ
իւր, մինչ եկն ի սուրբ և ի գերապատիւ ուխտն
Միանձանց ի ՅԱկանց անապատն. և առաջ մխիթա-
րեալ սակաւ մի ի միեղէն եղբարց[2] սուրբ ուխտիս,
կեցեալ աւուրս ինչ մինչ ելաւ Թուրքն յերկրէս:...

Իսկ բարեպաշտ թագաւորն Հեթում առ ոչինչ
համարեալ զայս ամենայն անցս ազետից, առ ժա-
մանակ մի՝ վասն ներկայիս աղաւթից և երկմտի իշխա-
նացն, չհեղգով զբարս նոցա ուրախութեամբ սրտի.
առ իբր ունելով զայլ մանր ուսառեր և զգաստեր-
սն՝ մխիթարիւր ի նոցանէ սուտ մխիթարութեամբ,
վասն չհեղգոյ զբարս իշխանացն, և գիտենալոյ
զխորամանգ միտս նոցա՝ սիրով. զի որ զբեր գիր
յիշխանացն՝ վասն պակասութեան որգւոյն և սեւօք
կապէր և առ թագաւորն առաքէր[3], թագաւորն գբեր
պատասխան և կարմիր կապեալ ի թուղթն այնպէս
առաքէր. և զայս ձեռքն միայն գծէին և չար-
ժէին, բայց զսիրտն՝ ինքն և Աստուած միայն գի-
տէին, թէ որպէսի կրակով լցեալ էր, զի ոչ տեսա-
նէր զայնպիսի գեղեցկապատակեր և զծաղկալից որ-
դիսն իւր առաջի իւր, ոչ երեկոյ և ոչ ի վաղիւն,

1. Կասկածեց Հեթում թէ սմանք յիշխանացն վա-
տութեամբ կամ նախանձով իր որդիքը մատնեցին:
2. Միաբան եղբարքն, կրօնաւորքն:
3. Ի նշան սըգոյ սեւ գրով և կնքով գրկէին թուղ-
թը՝ որպէս սովորութիւն է, կնիքն այլ սեւ կապով
կախէին թղթէն:

և ոչ ի ժամ ճաշոյն յուտել և յըմսխել. և ընդ միտ ածեալ զանմխիթար ազէաս գեղեցիկ որդւոցն, զԹորոսի գեղեցիկ պատկերն և զվայելուչ հասակն՝ որ ի սրոյ բաժանեցաւ յանողոմ՝ և սրեանարբուն անօրինացն, նմանպէս և զԼեւոնի ահիւ և անգոհիւ լինելն ի մէջ այլազգեացն՝ ի ծառայութիւն. զայս ամենայն զմտաւ ածեալ բարեպաշտ թագաւորն Հայոց, այրէր անհնարին կրակով, և գալարէր աղիքն յաղագս սիրոյ որդւոցն որ ոչ տեսանէր, և թաւալէր ընդ երկիր՝ անմխիթար սգով, բայց գազատ և ի ծածուկ, զի մի գիտասցեն նախանձոտ և տիրասպան իշխանքն և ուրախասցին ընդ սրտմտութիւն թագաւորին: Եւ այս գործեցաւ յաւուրս ամառնային եղանակին յետին ամսին և տօնի Սրբոյ Աստուածածնին[1]: Եւ թագաւորն Հռիփսիմ համբեր տուեալ կրակով լցեալ սրտին՝ եկաց մինչեւ ի տօն Սրբոց Առաքելոցն, ծածկելով զտրտմութիւն իւր յաներկեղ իշխանացն. և ապա հրամայեաց կոչել զամենայն իշխանսն՝ զոր ի հեռի և զոր ի մօտ, վասն պատճառի Լուր օրհնելոյ[2] ի քաղաքն Մսիս. և ժողովեցան ամենայն իշխանքն որք կային ընդ թագաւորութեամբ նորա՝ ի քաղաքն Մսիս: Եւ յորժամ գիտաց թագաւորն զգալուստ ամենայն իշխանացն, ապա հրամայեաց գալ առաջի իւր և նստել. և յորժամ ամենեքեան եկին և նստան, հրամայեաց սպասաւորացն՝ թագաւորն, թէ, այլ են պակաս, կոչեցէք. և նոքա ասացին. Սուրբ թագաւոր[3], ամենեքեան այս են՝ որ քեզ առաջի կան: Եւ թագաւորն սոխակ կոչել զպակաս իշխանսն և զպարոնայսն. իսկ սպասաւորք թագաւորին ոչ կարէին իմանալ զմիտս թագաւորին. ապա իշխանքն ասացին ցթագաւորն, թէ, Զոր դուք հրամայել էք և կոչել՝ ամենեքեան աստ են, և չէ ոք պակաս: Իսկ թագաւորին զայրագին սրտիւ հայեցեալ յայսկոյս և յայնկոյս, և ապա հրամայեաց կիսաձայն և արտասուալից աչօք. Թէ, Երբ ամենեքեան աստ են, ապա ո՞ւր են Լեւոնն և Թորոսն: Յայնժամ սկսան իշխանքն անմխիթար և ծանր սգով ծեծել և վայ և եղուկ տալ, յիշելով զգեղեցիկ որդիքն թագաւորին իբրեւանց, զմիւսն ի ծառայութիւն ի մէջ այլազգեաց, և զմիւսն սրախողխող եղեալ ի ձեռաց անօրինաց. և այսպիսի ազիողորմ արտասուօք լային, և ոչ միայն իշխանքն այլ և քահանայք և վարդապետք եկեղեցոյ, յերդ արկեալ զողն Երեմիայ մարգարէին՝ որ ասէ. «Ո՞ տայր զգլուխս իմ չեռմարանս լուրց, և զաչս իմ աղբիւրս արտասուաց, զի նստեալ լայի զբեկումն ժողովրդեան իմոյ»: Եւ այսպէս վարդապետքն և քահանայքն և իշխանքն լային, և ոչ ոք կայր ի միջի նոցա՝ որ մխիթարէր զնոսա, այլ կային տարակուսեալ ի ծանր սուգն՝ բեկեալ սրտիւք: Իսկ մեծախելք և մեծահոգի թագաւորն Հռիփսիմ՝ ինքն յինքեան կանգնեաց զբեկեալ և զտրտմեալ սիրտն իւր, և ապա խօսեցաւ բանս մխիթարականս ի սիրտս իշխանացն և քահանայիցն և վարդապետացն, այսպէս ասելով. Գիտէք ամենի իշխանքդ, վարդապետքդ և քահանայքդ, որ Վարդանանց պատերազմ վասն քրիստոնէից եղեւ, այնչափ բազմութիւն հեծելոցն վասն քրիստոնէից նահատակեցան և երկնաւոր պսակացն արժանի եղեն. նոյնպէս և որդիքն իմ. Թորոս վասն քրիստոնէից պատերազմեցաւ և վասն քրիստոնէից նահատակեցաւ, և խառնեցաւ ի գունդս Սրբոց Վարդանանցն, և նոցին պսակացն արժանի եղեւ. զնա՝ այլ մի լայք, այլ երանեցէք զնա, զի սիրեաց զնա Քրիստոս և իւր Սրբոցն պսակացն արժանի արար, և զարիւն նորա ընդ արեան մարտիրոսացն խառնեաց, ժառանգելով ընդ նոսա զերկնից արքայութիւնն որ ի Քրիստոս Յիսուս: Իսկ Լեւոն երէց

1. Ս. Աստուածածնի Վերափոխման տօնն:
2. Ի մեծահանդէս տօնի Յայտնութեան և Մկրտութեան Տեառն մերոյ:
3. Այսպէս կոչէին Կիլիկեցիք իրենց թագաւորը, Կ. Պոլսի արքունեաց սովորութեամբ:

որդին եմ ի Մսըր է ի ծառայութիւն, ի մէջ այլազգեացն. ինձ լաւ է Լեւոնի ծառայութիւն, և Թորոս իւր արեամբն ի վերայ քրիստոնէից սպանած, քան ես այս ամեն երկրիս ձեր արեանդ և խղճիդ տիրացած. վասն զի դուք ոչ գիտէիք թէ այս ցեղ չէր հանդիպեալ ինչ՝ կայր Հայոց երկիրս առաջի[1]:

Զայս և այլ բազում բանս մխիթարականս խօսեցաւ թագաւորն, և դադարեցոյց զիչխանսն ի լալոյ և ի սգոյ: Իսկ բարեմիտ և բարեկամ իշխանք թագաւորին, նա և քահանայք և վարդապետք և եպիսկոպոսք՝ որ էին ժողովեալք առ թագաւորն վասն ոծնի սրբոյ Յայտնութեան, մխիթարեցան ի թագաւորէն վասն սգոյ թագաւորորդեացն. նոյն և նոքա խօսեցան մխիթարական բանս բազումս, և կանգնեցին զսիրտ թագաւորին, և արարին զոծն սրբոյ Յայտնութեան ի միասին ուրախութեամբ, մխիթարելով զթագաւորն: Իսկ թագաւորն ոչ կարէր դադարեցուցանել զսիրտն ի թառանչելոյ և յոգոց հանելոյ վասն Լեւոնի որդւոյ իւրոյ, որ էր ի Մսըր ծառայ, և ոչ գտանէր հնարս, թէ որպիսի հնարիւք կարէ զերծուցանել զնա[2]:

1. Շփոթի է գրուածն, թէ չէ և պակաս. թերեւս ինչն պիտի ըլլար մնալ:

2. Յետոյ գտաւ հնարք. Սուլտանին մէկ սիրելի պաշտօնեային ազատելով ի թաթարաց, իր որդին Լեւոնն այլ ազատեց ի գերութենէն:

ՑԼ.

ԺԱ. Ժ ԿԻԼԻԿԻՈՑ

(ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ)

Շարժեալ սասանեցաւ երկիրս մեր առ հասարակ, նա և բազում գաւառք այլազգեաց. և այս ոչ ի մի ժամ այլ գրեթէ ամաօրեայ ժամանակս, մինչ զի անապատացան բազում շինանիստք. քանզի դժնակն կոչեցեալ Սարաւանի-քար[1] ընդ մէջ հերձեալ՝ յերկիր կործանեցաւ, զամենայն բնակիչսն ծածկելով բաց ի սակաւուց. նա և Չաւնուն անուանեալ (բերդ) զմայր սիրելի որդւովք և որ մերձ էին կորոյս տարաժամ վախճանօք: Տաց բանիս, և որ կարի վշտալին է, քանզի գերահռչակն ուխտ Աղբակաղիճն անուանեալ, և որ ընդ վիճակաւ նորա՝ բազում աղօթանոցք և մենաստանք առ հասարակ ի վայր խաղացին: Եւ անդ էր տեսանել արժանի ողբոց պատահումն, և լսել ականջաց՝ դառնութիւն. վասն զի ամանք ի հեծիւն և այլք ի հառաչ, կէսք ի հիչ այլք յողբս. և ոմ ոք կարասցէ պատմել զանպատմելի վիշտն՝ որ եհաս նահանգիս Կիւլիկեայ. աւերումն եկեղեցեաց, քահանայից կորուստ, ժողովրդոց սպառումն, և ամենայն հասակի սուգ անմխիթար: Եւ զայսոսիկ մեք իսկ տեսաք աչօք մերովք. իսկ առաջնոյն՝ Տեառն գթութեան և ողորմութեան յանձին. վասն զի յոյժ զարհուրեալ եմք: Բայց եղեւ այս ի ժամանակս գարնանոյն՝ յամսեանն մայիս, ի թագաւորութեան բարեպաշտ արքային Հեթմոյ[2] և իշխանութեան որդւոյ իւրոյ

1. Որ և Սարուհանդի քար, յարեւելակողման Կիլիկիոյ: Տես ի Սիսուան, 209. 368. 392:

2. Վերջին տարի թագաւորութեան Հեթմոյ, որ զԼեւոն դրաւ յաթոռն և ինքն հրաժարեցաւ:

Լեւոնի, այն ինչ նորընծայ ի պարոնութիւն, և ի հայրապետութեան Տեառն Յակոբայ. յորում էր թիւ տումարին ՉԺՀ (1269):

Նոյն, ըստ Պատմչին Կիլիկիոյ.

Ի թուին ՉԺՀ (1269) եղեւ չարժ սաստիկ՝ և յաշխարհին Կիլիկեայ՝ ի տեղիս տեղիս բազում չէնս յաւեր դարձոյց, և առաւել առ լերամբն որ Ամանոս կոչի. և դանաւիկ դղեակն Սարվանդաւ՝ յաւեր դարձոյց, և զբնակիչսն առ հասարակ մահացոյց: Եւ ի սուրբ ուխտն Աբրահաղնիի՝ քահանայս և կրօնաւորս վախճանեցան ի տանց ընկղմելոց. և ընդ լեռնակոզմն ընդ այն բազում չէնս. և ըզբերդն Դեղնքարն և այլ բազում տեղիս խարխափելով հերձեաց:

ԺԱԺԽԱԹԱՑ[1]

(ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ)

Տրամալի աղէտս որ ի յԱստուածոյ եղեւ վասն մեղաց իմոց. քանզի ի սոյն ամի (1275–6) չարժեաց Աստուած մասն ինչ ի յերկրէ և անդնդատոյզ արար զխոյր և զԱրձէշ, և ոչ գիտեմք որչափ մարդոց վախճան եղեւ. և բաւանդակ ամ մի չարժի երկիր, և զկատարածն Աստուած գիտէ, որ զամենայն չարժէ և ինքն յաւիտեան ոչ չարժի. և թէ չարժի՝ ինքն ըստ ինքեան չարժի ի խնամս մարդկան: Քանզի այր մի էր բարեսէր և երկիւղած յԱրճէշ քաղաք՝ անուն Թաւիկ, ինքն և որդին իւր Կոստանդին տարաժամ մեռան մահուամբ ընդ չարժեալ վիմացն. որով և յանցանք նոցա ջնջեցին, և նահատակութիւն նոցա ընդ Սրբոյն Ստեփաննոսի խառնեցան:

1. Ժամանակին մօտաւորութեան համար յարեցինք Խլաթայ պատահարն, որոյ տիրոջը տես ի §օդ. 512:

ՃԼԲ

ՍԱԴՈՒՆ ԱՐՏՐՈՒՆԻ ՅԱՂԹՈՂ ՀՍԿԱՅԻՑ

(ՄԱՂԱԹԻԱ)

Երեկ այր մի ի Մանկու զանէն, Մուղալ ազգաւ, և էր այրն այն յոյժ ահագին տեսողացն. երկայն հասակաւ, թիկնեղ, չինքն[1] վերդ զգուշիւղ, ձեռներն[2] անճռանի՝ իրրեւ զարջու, և ամէն օրէն ուտէր ոչխար մի: Եւ ունէր ի Մանկու զանէն ի հետ՝ գիր և անգին կապայ մի. և գրեալ էր ի գիրն այսպէս. «Այս անուն բաւթայ[3] երեկ առ իմ եղբայր Հուլաւու զանդ. թէ լինի որ բաւթայ որ զդա ձգէ, զայդ կապէդ[4] նման հագո, ապա թէ իմ բաւքէդ զքոյն ձգէ, յայնժամ գկապէտ զմա հագո և մեծ հլլով[5] յիս յղարկէ»: Յայնժամ կոչեաց Հուլաւու զանն զամենայն գլխաւորս զօրաց Հայոց և հրամայեաց, թէ Գիտէք մարդ Ցաթար կամ Հայ կամ Վրացի՝ որ զդա ձգէ: Եւ որոնեցին, և Ցաթար ոչ գտին. զի ով տեսանէր զայրն զայն՝ ամենն վախէին յահագին հասակէն և ի տեսոյ նորայ: Իսկ Հայոց և Վրաց իշխանքն ասացին՝ թէ մեք գիտեմք մարդ, որ միթէ ի նմանէ լինի ճար: Եւ հրամայեաց զանն փութով բերել. և ասացին, թէ չէ ի տեղս, այլ կայ ի տուն իւր. և հրամայեաց առ ժամայն հլլեաց չուտով հասուցանել, բայց ոչ ձիով՝ այլ սայլով: Եւ էր այրն այն զոր ասացին Հայոց և Վրաց իշխանքն՝ յազ-

1. Վիզն:
2. Թեւերս կեռներն, այսինքն ակռաներն:
3. Թուի ըմբիշ, գօտեկռուղ, մենամարտիկ:
4. Կապայ, վրայի զգեստ:
5. Հլլի, դեսպան, լուր տուղ:

դէն ի բարձր Աբծրունեաց, Թոռն Ամիր Ֆրդին, Սադուն անուն[1]. երկայն և վայելուչ հասակաւ, յոյժ ուժեղ ի մանկութենէ, և փորձ և կիրթ ի գործն յայն. բայց առալի զանին այլ չէր բռնել մարդ: Յայնժամ իբրեւ գնացին էլխքն և ասացին զհրամանքն զանին, արտմեցաւ սա դառն, մի՝ զի առալի խանին այլ ոչ էր բռնել մարդ. և մի այս՝ որ ահագին և ուժով լսեաց զհաչուակիցն իւր[2]: Եւ ապա յանձնեաց զինքն վանորէիցն՝ աղօթել վասն նորա. և ինքն երթեալ ի Գագ առ Աստեհաս Սուրբ Սարգիսն, զոր օրհնեաց երանելի և սուրբ վարդապետն Մեսրոպ, և արարեալ անդ ուխտ և մատաղ սրբոյ Նշանին, և ապա առեալ զէլչիքն գնաց առ Հուլաւու զանն: Իսկ յորժամ եհաս Հուլաղու զանն զԱգաւունն և զկորովի և զերկայն հասակ նորա՝ յոյժ ուրախացաւ, և հրամայեաց ինն օր՝ երկու բաւքային կալ ի միասին. և ամէն օրէն ուտեցոյց ոչխար մի և սիկ մի գինի: Եւ յորժամ վճարեցաւ ինն օրն այն, ապա հրամայեաց ժողովել ամենայն զլխաւորացն առալի իւր, և կոչել զերկու բաւքային, և հրամայեաց բռնել զմիմեանս: Եւ յորժամ ըմբռնեցին զմիմեանս՝ էր աւուրն երեք ժամ, և երեք ժամ աւուրն մինչեւ ցվեց ժամն զիբեար կային առել երկուսն, և ոչ կարէին մէկ մէկի յաղթել. և ապա Սադունն զօրացեալ անուամբն Աստուծոյ, յանկարծակի ուժգին բախմամբ ըզգեանեաց զթօքա Մանկու զանին առալի Հօլաւու զանէն: Եւ մեծացաւ Սադունն առալի զանին. և նման նմա ոչ գտաւ յամենայն երկիր՝ հարկօք և

1. Կիրակոս պատմիչ այս ըմբիշին հայրը Շերպաբըք կոչէ, պապը Սադուն. նոյնն վաթսուն տարի առալ յիշէ Սադուն մի եղբայր Դաւթի և Արզու խաթունի՝ արդիք Քուրդ իշխանի, որք օգնեցին Մխիթարայ Գոշի՝ Նոր Գեղիկ վանքը չինելու: Տես Յօդ. 291: Սադուն վախճանած է ընդ մէջ 1280–90 ամաց:
2. Որու հետ որ պիտի կռուէր՝ կռուակից:

մեծութեամբ և ուժով՝ ի ժամանակս Տաթարին: Եւ հրամայեաց Հուլաւու զանն գրել հառպախ[1], թողուլ նմա մինչ ի յինն կռւհաճի[2]:

ՑԼԴ

ՑԱՑՏՆՈՒԹԻՒՆ

ՆՇԽԱՐԱՑ Ս. ՆԵՐՍԻՍԻ ՊԱՐԹԵԻ

Ուսանիմք ի պատմութենէն[3], թէ ինքն թագաւորն և իշխանքն տարեալ թաղեցին ի Թիլն աւան ի մեծ եկեղեցւոյն, և կացեալ սիւն լուսոյ ի վերայ գերեզմանին զաւուրս քառասուն. և բազումք զտանէին զբժշկութիւն ի չնորհս գերեզմանի նորա: Եւ յայսմ պատճառի խնամով ի պատմութենէ. քանզի Հերակլ արքայն Յունաց յետ ութսուն ամի թուականին Հայոց (632 Քրիստոսի) ելանէ ի պատերազմ ընդ խոսրով արքային Պարսից և սպանանէ զնա. և յետ ութ ամի այսմ լինելոյ՝ Աբդահիմ քեռորդին Մահմետի՝ ելանէ ութեւտասն հազարաւ ի Հայս, խնդրել հարկս և կոտորել զզօրս քրիստոնէիցն որ ի Տարօն գաւառի. և անցանէր ի Հարք և ի Բասէն, ի Վիրք և ի Ջաւախս[4] և ի Վանանդ. և առեալ հարկս գառնայ ի Տաճկաստան: Ի սոյն ամի քակին երեք մեծամեծ եկեղեցիքն, որ հիմնարկեալ էին ի Սրբոյն Գրիգորէ. եկեղեցին որ Ցաչոից վանան[5], և որ յանուն Սուրբ Կարապե-

1. Հրովարտակ, հրամանագիր:
2. Եթէ ինչուան եօթն անգամ յանցաւոր գաւառ՝ ներուի, թագաւորին տուած իր յանցանացն:
3. Թերեւս Յովհաննէս Եզնկացին ըլլայ հեղինակ գրուածիս, նշխարաց գաւառած առնն:
4. Գաւառ մի Գուգարաց, Ջաւախեթի ըսած վրաց:
5. Այն է Աշտիշատու մայր եկեղեցին ի Տարօն:

սին որ յիննակնեանն[1], և կաթողիկէն որ ի Թիլն[2]: Եւ ի փոխոխմանէ չինուածոյ եկեղեցւոյն այլ և ի սրոյ սպասիլոյ ծանօթից սպասաւորացն՝ ի բազում հինահարութեանց այլազգեացն, անյայտացաւ գերեզման Սրբոյն[3]. որ և այժմ չնորհօքն Աստուծոյ յայտնեցաւ ի ժամանակս վերջին. յորում էին ի ծննդենէն Քրիստոսի ամք հազար երկերիւր եւթանասուն և հինգ, և ի Սրբոյն Գրիգորէ ինն հարիւր վաթսուն և ութ ամ[4], և ի մահուանէ սրբոյն Ներսեսի՝ ութ հարիւր եւթանասուն և երկու ամ, և թուականին Հայոց որ յաւուրս Մովսեսի Հայոց կաթողիկոսի եղեալ ի պատճառս պատճենի մերոյ տումարիս՝ եւթն հարիւր քսան և մի, ի հայրապետութեանն Հայոց Տեառն Յակովբայ հոգեշնորհ վարդապետի, ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի որդւոյ Հեթմոյ և Թոռին քաջին Լեւոնի, որդւոյ Ստեփանեայ, որդւոյ Լեւոնի, որդւոյ Ռուբենի մեծի իշխանին, որ էր ի զօրացն Բագրատունեաց և յազգէ նոցին, և ի տանէ և ի տոհմէ Աբծրունեաց. որ և մեր պատկառն Լեւոն զերկուցն ունի թագաժառանգ ազգաց զազգականութիւն. ի յարքեպիսկոպոսութեան մայրաքաղաքին Եզնկայ և գաւառիս Եկեղեաց՝ Տեառն Սարգսի. յորում տունկ քաղաքս երե-

1. Մշոյ Սուրբ Կարապետն:
2. Մօտ յԵղընկա քաղաք Բարձր Հայոց:
3. Սրբոյն Ներսեսի, որ էր այդ յիշեալ Թիլ աւանին մէջ:
4. Ըստ այսմ՝ Ս. Գրիգորի լուսաւորութեան կամ հայրապետութեան թուականն կ'ելլայ 307 Քրիստոսի, բայց հաւաքակօրէն վեց կամ եօթն տարի առաջ գրուի: Ս. Ներսիսի մահուան և նշխարաց գիւտին թուականք այլ չեն յարմարիր, զի նա վախճանեցաւ ի 373, եթէ նշխարքն յայտնուեր են յամի 1275, ապա միջոցն է 902 տարի և ոչ 872. յիշեալ Հայոց թուականն այլ 721՝ պատշաճի Քրիստոսի 1273 տարւոյ:

ւեալ ի վիճակիս յայս, որ և է տեղի չարչարանաց և նահատակութեան Լուսաւորչին մերոյ Սրբոյն Գրիգորի, պատուեալ յԱստուծոյ, մեծարեալ յազգաց և յազանց և ի թագաւորաց մեծաց, բարեխնդան չառաւիղ մերում ժամանակիս և սկիզբն նորոգման եկեղեցւոյ պայծառութեան. որ և չինեաց զհրաշագեղ խորանն Աստուծոյ զգեղեցկայարմարն եկեղեցի, որ յանուն փրկչին մերոյ և Տեառն Յիսուսի. բարեխէր և աստուածապարգեւ զաւակսն Յովհաննիսիս[1]. վասն որոյ և այս նշան ակնկալութեան յուսոյ փրկութեան Հայաստանեայց՝ յաւուրս սոցա երեւեցաւ. զոր և պատուիրէ ձեզ հաւատացեալ հօտիդ Քրիստոսի, զյայտնութիւն նշխարաց սուրբ և երջանիկ հայրապետին Հայոց Տեառն Ներսիսի, որ է որդի որդւոյ Յուսկանն, որդւոյ Վրթանեսի, որդւոյ մեծին Գրիգորի Հայոց Լուսաւորչին:

Եւ է օրինակ երեւմանն այսպէս. ի Թիւին աւան՝ յեկեղեցւոջն որ յանուն սուրբ Հայրապետացն, էր անդ սարկաւագ մի ի գործ սպասաւորութեան վանիցն, հեզ և հանգարտ վարուք, պատուական կոչեցեալ անուն, թէ ըստ պատահման և թէ ըստ յուսոյ ի ծնողացն եղեալ, այլ ճշմարտապէս ըստ յուսոյ՝ ի վերայ նորա կատարեցաւ. զի զայս մեծագոյն պատիւ ի Տեառնէ ընկալաւ, նմա յայտնել զնշխարս փառաւորեալ Սրբոյն Ներսեսի: Զոր և պատմեաց այսպէս զտեսիլն առաջին՝ զոր առես յամսեանն յունուարի ի քսան և վեց, և ի հինգշաբաթիւոջ գիշեր. Տեսանէի, ասէ, այր մի ծերունի զգեցեալ ի կերպարանս քահանայական ձեւոյ, նստեալ ի ջրւոջ փառաւորապէս, և մտանէր ի դուռն վանիցն, և ասէ ցիս. Եղբայր, ուր է հանգուցեալ եկեղեցին որ ասա կայ: Եւ կալեալ իմ

1. Սարգիս արքեպիսկոպոսն և որդին Պարսն Յովհաննէս՝ ժամանակին աշխարհաշէնն նշանաւոր անձինքներէն էին, և մեկ տեղ սպանուեցան Թաթարաց աէրութեան առեն:

զանձս ՚որ՚ուոյն՝ իմուցի զնա և առաքնորդեցի մինչեւ ի հանգուցեալ եկեղեցին. և եկեալ ասէ. Աստ է գերեզման Սրբոյն Ներսիսի. և գաւազանաւն զոր ի ձեռին ունէր՝ նշանակէր զտեղին ի կողմն գլխոյն. և ի հարկանել գաւազանին՝ լոյս հրախառն փայլատակէր ի տեղւոյն. և ասէ. Տեղիս զոր ցուցի՝ ստուգապէս է գերեզմանն Սրբոյն Ներսիսի, յորում կան նշխարք սուրբ ոսկերաց նորա. ասասջիք առաքնորդի տեղւոյդ, և եկեալ հանջիք. և չէ խոթադոյն, այլ սակաւ հողով ծածկեալ: Եւ այս չորս անգամ ասացին ինձ գալ և ցուցանել զտեղիս, և ես պատճառէի զծերութիւն. և ետուն զՈրիս զայս, զի բարձցէ զծերութիւնս իմ, և ես եկեալ ցուցի: Եւ իրրեւ զարթեայ ի քնոյ ի զարմացման եղեալ կայի ահիւ պակուցեալ, և պատմեցի զտեսիլն եղբարցն որ ի վանն. և ասեն, ազօթեա զի երկրորդեսցի տեսիլդ: Եւ ի միւսում գիշերի յորում ուրբաթ լուսանայր՝ տեսանէի երիտասարդ մի ի ձեւ զինուորի, և հանդերձ ի գոյն ծիրանւոյ. այն ինչ բոլորեալ զծնօտիսն թխագոյն մորուացն չուրջանակի. և ասէ ցիս. Հանիք զնշխար Սրբոյն Ներսեսի՝ և ասեմ. Ոչ, վասն զի չհաւատան ինձ. և նորա իրրեւ կնիք մատանւոյ ունելով ի ձեռինն՝ դրոշմէր ի վերայ տեղւոյն, և ասէ. Աստ է գերեզմանն յորում կան նշխարք Սրբոյն Ներսեսի. փութապէս հանջիք զնա: Եւ իմ զարթուցեալ պատմեցի զտեսիլն: Եւ ասեն եղբարքն. Ազօթեա, զի երրորդ անգամ երեւեսցի քեզ տեսիլն, զի անհնարին է այդ թէ կարասցուք գտանել զգերեզման Սրբոյն: Եւ ապա ի միւս գիշերի երեւեցաւ ինձ նոյն երիտասարդ, և ասէ իրրեւ սաստիւ. Ընդէր յապաղէք և ոչ հանէք զնշխարս Սրբոյն Ներսիսի: Եւ ես զարթուցեալ պատմեցի զնոյն տեսիլ. և ասեն ցիս. Մի անգամ այլ երեւեսցի քեզ և ճշմարիտ է բանդ: Ապա ի միւս գիշերի յորում միաշաբաթի լուսանայր, երեւեալ նոյն երիտասարդ և ասէ. Ընդէր ոչ փութայք հանել զփառաւորեալ նշխարս Սրբոյն

Ներսիսի. զի ահա այս երեք անգամ եկեալ ցուցի քեզ և հասեալ է ժամանակ յայտնելոյ Սրբոյն, որ մինչեւ ցայսօր եկաց անյայտ և կոխան ոտից, վասն ազգին իւրոյ կոխան լինելոյ ի բազում ազգաց. այլ այժմ փութասջիք հանել. զի զենգուկ՝ որքան ի ձեռին ունիս՝ զգուշասջիր պահել, ապա թէ զերծեալ թափիցէ՝ դժուարին է ըմբռնել: Որ է այս ինչ տեսութիւն բանին, թէ անձն սուրբ՝ որ իրրեւ զենգուկ ապրեալ եղեւ յորոգայթից որսողին, հրեշտակակրօն վարուք ի մարմնի ազատ մնացեալ ի հոգեկան և ի մարմնական ախտից, և զայսքան ժամանակս անյայտ լեալ ի մարդկանէ, այժմ որ իւր իսկ է կամք յայտնել՝ հոգ տարջիք գտանել. ապա թէ անփոյթ առնէք՝ դարձեալ ծածկէ զինքն, և յայնժամ ոչ ինչ կարասջիք առնել:

Եւ իմ յարուցեալ պատմեցի զվերջինս զայս տեսիլ, և հաւատարիմ եղեւ ամենեցուն, և ետուն փառս Աստուծոյ ի վերայ գթութեան չնորհաց նորա և ողորմութեան: Ապա վաղվաղակի վարդապետն Ներսես առաքնորդ տեղւոյն՝ ի քաղաքն հասանէր առ մեծապատիւ արքեպիսկոպոսն Տէր Սարգիս, և պատմէր նմա զհանգամանս տեսլեանն, և առեալս տայր բարեաց և փրկութեան լինել նշան զեբուսմն Սրբոյն Ներսեսի, որ յաւուրս նորա առաքնորդութեան յայտնեցաւ. և նա զոհանայր զԱստուծոյ՝ լցեալ մեծաւ խնդութեամբ: Եւ ապա ասէ. Գնասջիք, զգիշերս զայս եղբայրական դասիւն հսկումն արասջիք, և ի վաղիւն բրեկէք զտեղին մինչեւ երեւեսցի գերեզմանն, և ինձ ազդ արարէք, զի եկեալ հանցուք զուարթաբար գանձ Հայաստանեայց: Եւ նոքա գնացեալ այնպէս արարին: Եւ ի վաղիւն որ էր մուտ փետրուարի ամսոյ, աստուածապատիւ արքեպիսկոպոսն Տէր Սարգիս և բարեսէր իշխանն պարոն Յովհաննէս որդի նորա՝ առին ընդ ինքեանս զպաշտօնեայս եկեղեցւոյն և ի պատուական արանց քաղաքին. և այլ բազմամբոխ ժողովուրդ քաղաքին ելին զհետ նոցա՝ իբ-

րեւ զեղչերուս ծարաւի ի լուր փափագեալ. զի վկայէր ի միտս ամենեցուն մեծի և փոքու, թէ եհաս ժամանակ փրկութեան և ազատութեան Հայաստանեայց: Եւ իրրեւ եկին ի տեղին, անկեալ երկրպագեցին գերեզմանին հրեշտականման մարմնոյն օծարանի և յարկին սրբոյ՝ ծածկոյի զգանձն լուսոյ: Իսկ զնշխարս Սրբոյն հանեալ էին յառաջագոյն բնակիչք վանիցն, երկուցեալ ի բազմութենէ ամբոխին, գուցէ ոչ կարիցեն հանել պատրաստութեամբ: Եւ էր կազմեալ գերեզմանն ըստ երկայնութեան չափ երից կանգնոյ, և լայնութեամբ իբր կանգուն մի՝ ի կողմ ներքին, և խորութեամբ չորս աստիճանօք մարդաչափ մի, կազմեալ կրամած քարիւ. և յարեւմտից կողմ գերեզմանին էին նշխարք Սրբոյն Ներսիսի՝ բազմեալ յաթոռ, և այնպէս եղեալ ի գերեզմանն հանդիպ արեւելից. որ և նոյնպէս կային ամենայն յօրինուածք մաքուր ոսկերացն՝ յիւրում տեղւոջն, և գլխոյն՝ գեր ի վերայ ամենայն անդամոցն որպէս կենդանւոյ: Եւ էին առաջի նորա ի մէջ գերեզմանին այլ նշխարք, ոչ բազանգակ մարմին՝ այլ մասն ինչ եղեալ ի մեծամեծ անդամոցն, և սակաւ ինչ հողով ծածկեալ էին սուրբ նշխարքն. և ապա ի վերոյ երեք կրկին կամարք կապեալ ի կրոյ և ի քարանց ի վերայ գերեզմանին: Եւ հրամայեալ եպիսկոպոսն սպասաւորաց եկեղեցւոյն բերել զնշխարս Սրբոյն մերձ ի գերեզմանն, զի անդ տեսցէ ինքն և բազմութիւն ժողովրդեանն: Եւ իրրեւ եռես զաստուածային հոգւով կենդանի նշխարս ոսկերաց սրբոյ հայրապետին մերոյ Ներսիսի և երկրորդ Լուսաւորչին Հայոց, յարտասուս եղեալ սկսաւ լալ, և ողբական ձայնիւ՝ իրրեւ ընդ կենդանւոյ խօսելով զութ արկանէր Սրբոյն:...

Յայնժամ առեալ եպիսկոպոսին զսուրբ նըշխարսն և մտանէր յեկեղեցւոջն, եդեալ ի սպիտակ և ի սուրբ կտաւս, և առանձին գնէր յերկուս արկեզս՝ և կնքէր իւրով մատանեաւ. և երկու մասն

մեծ տայր ի սպասաւորս եկեղեցւոյն՝ ի համբոյր և ի տես ուխտականաց ժողովրդեանն՝ որ գային յամենայն կողմանց. և այլն կայր յեկեղեցին, կնքեալ մատանեաւ և պահեալ զգուշութեամբ. և ինքն եպիսկոպոսն գնայր ի քաղաքն, և որ ընդ նմա բազմութիւն քաղաքին, մնալով տեսչութեանն Աստուծոյ թէ գինչ արասցէ: Եւ վասն զի հնչեաց համբաւն յաշխարհ, և զուարճացան որ յամենայն տեղիս ազգ Հայաստանեայց, և զիմեալ գային բազմութիւնք հաւատացելոց յերկրպագութիւն և ի տեսութիւն սուրբ գերեզմանին. յայտնէին ընդոստուցեալ և զարմացեալ ազգն Տաճկաց, և եմուտ խորհուրդ ի նոսա եթէ ինչ կամի աւարտել վախճան բանին. քանզի է գրեալ առ նոսա իբրեանց գրոցն հրաշալի տեսիլ Սրբոյն Ներսիսի[1] որ վասն հանդերձելոյ ժամանակացն որ ինչ եղեալ է և որ լինելոցն. և տագնապէին խորհրդով զսկիզբն իրին վախճան իւրեանց իշխանութեանն համարելով. և բազումք ի նոցանէ ի նախանձ մտաբերեալ՝ խորհեցան ժողով լինել ի բնակչաց քաղաքին, գնալ գիշերի ի վանսն, յարձակել զնշխարս Սրբոյն, թերեւս կարասցեն ծածկել զհամբաւն աշխարհալուր: Այդ եղեալ այս եպիսկոպոսին և գնաց քահանայական զգեստիւք և պատուական արամբք, և առեալ զսուրբ նշխարսն բերէր ի քաղաքն մեծապէս փառօք և բերկրալից ցնծութեամբ. որում ընդ առաջ ելեալ բազմութեան քաղաքին՝ լցեալք անպատում խնդութեամբ, տարեալ եդին ի մեծարեալ և ի զեղեցկաչէն եկեղեցին: Իսկ պատուականն ի Տեառնէ արքեպիսկոպոսն Տէր Սարգիս զայն և զմիւս բազուկն տայր յօրինել խնամուռն ոսկեգործաց, և զմանր մասունս մատանեցն առ մի-

1. Անհաւանելի երեւի Ս. Ներսեսի տեսլեան թարգմանութիւնն յարաբերէն. բայց իրենց յատուկ աւանդութեամբ կըրնան ըլլալ գրուածք՝ աշխարհիս կատարածին նկատմամբ:

մեանս միաբանեալ յարծաթոյ և յոսկւոյ պատեալ մանրամասն յօրինուածով՝ տեղի երեւման ի ցոյցս տեսլեան արարեալ պահպանիչ աջոյն և բազկին չնորհաբաշխ։ Նոյնպէս և տայր յօրինել ղլուխ արծաթեղէն յարմար մեծահասակ անձինն, պահարան գլխոյն նշխարաց, և ի բաց առնելով զդիրս երեսացն և զբերանոյն, և յերիս տեղիս հանգէպ ճակատոյն խաչաձեւ հատուածս արարեալ յարծաթոյն, յորում երեւէին նշխարքն փառաւոր։ Եւ զայլ բովանդակ նշխարս առնըր ոսկերացն՝ լուանայր զհողն մածեալ՝ անապակ և անուշահամ գինով յանուշահոտ ծաղկանց խառնելոց, և օծեալ խնկահոտ իւղով կազմեալ արուեստաւորապէս։ Եւ պահէին ըզգուշութեամբ մինչեւ չինեացի եկեղեցին ի վերայ գերեզմանին, զի անդ եդեալ ի տեղւոյն գերեզմանն յօրինեսցեն գեղեցկագործ կազմեալ և մեծածախ զարդիւք, և զանկողոպտելի գանձն զոր չնորհեաց Աստուած գաւառին եկեղեաց՝ անդէն ծածկեալ ունելով գերեզմանին։ Իսկ զայն առաքելաշնորհ եդեալ արքեպիսկոպոսն Տէր Սարգիս յիւրաչէն եկեղեցին որ ի քաղաքն, ի նորոգապէս շինեալն հրաչատես և զարմանալի փառօք և մեծածախ զարդուք, երից թուով խորանաց, յանուն փրկչին մեր Յիսուսի գաւազդ խորանն, և միւսն Կաթուղիկէ և մինն յանուն Սրբոց Առաքելոցն. և եդեալ անդ զայն Սրբոյն Ներսէսի ի զարդ և ի պահպանութիւն սրբոյ տաճարին, մնալ մշտնջենաւոր կայիւք։ Եւ զմիւս բազուկ ձեռինն կազմեալ մատամբքն մաքուր՝ տարեալ ի հռչակաւոր և ի գեղեցկաչէն սուրբ ուխտն Տիրամօրին՝ անդէն մնալ յեկեղեցւոյն փառաւորապէս, զոր և յառաջն իսկ չինեալ էր։ Որ և ընդ մէջ լինելով եդեմական բուխ գետոյն Եփրատայ՝ բարեզարդ և վայելուչ վիճակին և ամենագով գաւառին եկեղեաց, զոր իմաստասէր և մեծ յուսով արարեալ խոհեմականն Տէր Սարգիս, զի զերկոսեան բազուկսն և զձեռն առատաձիր չնորհիւ լցեալ Սրբոյն Ներսեսի՝ զեր-

կրորդ մեր Լուսաւորչին, սահմանէր յերկուս կողմանս գետոյն, որպէս թէ տարածեալ ունելով ըզթեւսն հովանի գաւառին և զբազուկսն աղաչող բարեխօս առ Բարձրեալն, և զձեռնն՝ յառնուլ յանդուլ բարեաց և բաշխել եկեղեցւոյ մանկանց, ի փարթամութիւն փառաց հայրենի գանձուք. և տայր հաւաքել նիւթ չինուածոյ եկեղեցւոյն։...



1784

2013